Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

Գրքի տպագրությունը հովանավորել է
«Строусервис» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն,
Մոսկվայում բնակվող ջավախքահայ
Ստեփան Ալեքսանի Հակոբյանը

WOLFGANG GUST (Hg.)

DER VÖLKERMORD AN DEN ARMENIERN 1915-1916

Dokumente aus dem Politischen Archiv des deutschen Auswärtigen Amts

JEREWAN
2005

ՎՈԼՖԳԱՆԳ ԳՈՒՍՏ (Հր.)

ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1915-1916

Գերմանիայի արտաքին գործերի նախարարության քաղաքական արխիվի փաստաթղթերից

ԵՐԵՎԱՆ
2005

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)
Վ 798

Գերմաներենից թարգմանեց և հրատարակության նախապատրաստեց՝ Ռուզան Բորիսի Յորդանյանը

Վ 798 Վոլֆգանգ Գուստ.
Հայերի ցեղասպանությունը 1915-1916 (Գերմանիայի արտաքին գործերի նախարարության քաղաքական արխիվի փաստաթղթերից). Եր. «Գրական հայրենիք» («Հայաստան»), 2005թ., 488 էջ:

Գրքում զետեղված են Գերմանիայի արտգործնախարարության քաղաքական արխիվի հայերի ցեղասպանությանը վերաբերող փաստաթղթեր, որոնք հայերեն տպագրվում են առաջին անգամ: Փաստաթղթերի գերմաներեն ժողովածուն, որը հայերենի համեմատ կրկնակի ծավալ ունի, կազմել և հրատարակել են Վոլֆգանգ Գուստը և նրա կինը՝ Զիգրիդ Գուստը:

Փաստաթղթերի սույն ժողովածուն կարող է մեծապես հետաքրքրել ոչ միայն գիտնականներին, այլև ընթերցողների լայն շրջանակներին:

Գ $\frac{0503020913}{701(01)2005}$ արտ. ԳՄԴ 63.3 (2Հ)

ISBN 5-540-01996-2

© Վոլֆգանգ Գուստ, 2005թ.:
© Ռուզան Յորդանյան, թարգմ, 2005թ.:

2813-2005

ԱՌԱՋԱԲԱՆ

Ապրիլի սկզբին՝ հայոց ցեղասպանության 90-ամյակի կապակցությամբ, կանադահայ հայտնի պատմաբան Վահագն Դադրյանի նախաբանով Գերմանիայում լույս տեսավ Վոլֆգանգ Գուստի փաստագրական մեծածավալ գիրքը, որն ավելի քան տասը տարվա տքնաջան աշխատանքի արդյունք էր: Այն ունեցավ քաղաքական մեծ հաջողություն և նոր ու հզոր ազդակ դարձավ հայերի ցեղասպանության թեմայով լուրջ քննարկումների համար: Հուսանք, որ գրքի պարունակած բազում անաչառ փաստաթղթերը կկարդան ոչ միայն գերմանացիները, այլև Գերմանիայում ապրող միլիոնավոր թուրքերի գոնե մի մասը:

Գիրքը նվիրված է կնոջը՝ Զիգրիդ Գուստին, առանց որի աջակցության, ինչպես խոստովանում է հեղինակը, հնարավոր չէր լինի այդ գրքի հրատարակումը: Կինը վերականգնել, ավելի ճիշտ՝վերծանել է բոլոր փաստաթղթերը՝ գրված հին գոթական ձեռագրով, որն անհասկանալի է ոչ միայն օտարերկրացիներին, այլև ժամանակակից շատ գերմանացիների, ուստի դրանք առայսօր չեն մեջբերվել: Բոլոր առումներով ծանր ու խրթին տեքստերի վրա աշխատանքի արդյունքում, մասնագետ դառնալուց բացի, կինը «վաստակել» է նաև ծանր հիվանդություն: (Ի դեպ, գրքի հրատարակումից որոշ ժամանակ անց սրտի բարդ վիրահատության ենթարկվեց նաև ինքը՝ Վոլֆգանգ Գուստը:)

Գերմանիայում հայերի ցեղասպանությամբ զբաղվող մի քանի գիտնականների մեջ, որոնցից, ի դեպ, ոչ մեկը պատմաբան չէ, Գուստն այսօր ծանրակշիռ և ուրույն տեղ ունի ոչ միայն իր երկրում: Հայերի ցեղասպանության թեմայով զբաղվելը Գուստի համար եղել է շատ պատահական: Նա պատմեց, որ 1992թ. պատահաբար կարդացել է „Le ciel tatit noir sur l'Euphrate" վերնագրով ֆրանսերեն մի գիրք, որտեղ նկարագրվում է ջարդերից մազապուրծ փախած մի տղայի ճակատագիրը: Գուստը խիստ զարմացել է, որ այդ պատմությունն այս անգամ ոչ թե հրեայի, այլ հայի մասին է և առաջին անգամ իմացել է, որ մինչև հրեաների ողջակիզումը եղել է հայերի ցեղասպանությունը: Մի քանի ամիս անց նա արդեն հոդվածաշարով հանդես եկավ տեղեկատվական հայտնի «Շպիգել» շաբաթաթերթում, որի առնչությամբ ծավալված թուրքական հիստերիային մենք այն ժամանակ տեղեկացանք լրատվամիջոցներից: Իսկ մեկ տարի անց (1993թ.) լույս տեսավ նրա առաջին հրապարակախոսական-փաստագրական գիրքը, որն իմ թարգմանությամբ և Արմեն Զարյանի առաջաբանով լույս տեսավ սկզբում «Հայություն» թերթում (1994թ.), ապա՝ առանձին գրքով (2002թ.):

Հայերի ցեղասպանությունը Գերմանիայի հասարակությանը գրեթե հայտնի չէ նաև այսօր, ինչպես դա ևս մեկ անգամ ապացուցվեց վերջին գրքի գերմաներեն հրատարակման և ցեղասպանության 90-ամյակի վերաբերյալ տարբեր հրապարակումներով: Ուստի՝ Գուստը միշտ ստիպված է եղել սկզբում նկարագրել պատմական փաստերը, հետո միայն ընդհանրացումներ անել: Այս անգամ էլ DER VÖLKERMORD AN DEN ARMENIERN 1915-1916 (Hamburg, 2005)գիրքը հատկապես գերմանացի ընթերցողի համար շատ կարևոր 100 էջանոց վերլուծական նախաբան ունի, որը հայերեն տարբերակում հեղինակի համաձայնությամբ առայժմ չկա: Բացի այդ՝ պատմաբանների որոշ տարաձայնությունների արդյունքում հանվել են նաև այն փաստաթղթերը, որոնք թեկուզ խմբագրված կամ կրճատված երբևէ տպագրվել են ռուսերեն կամ հայերեն, ուստի այս գրքի հայերեն (նաև ռուսերեն) թարգմանությունը գերմաներեն տարբերակի գրեթե կեսն է, բայց քանի որ այս ծավալով ռուսերենն արդեն լույս է տեսել, իսկ հայերենն էլ նույն ժամանակ արդեն պատրաստ էր տպագրության, բայց կազմակերպական բնույթի պատճառներով ձգձգվեց մինչև հիմա, ուստի որոշեցինք հրատարակել գրքի այս տարբերակը՝ հուսալով, որ առաջիկայում հնարավոր կդառնա նաև գրքի ամբողջականացումը:

Այս գրքի հրատարակումը չափազանց կարևոր է, քանի որ այն պարունակում է հենց Գերմանիայի՝ Թուրքիայի կարևորագույն դաշնակցի, արտգործնախարարության քաղաքական արխիվի փաստաթղթերը՝ առանց խմբագրման ու կրճատման, որոնցում չէին կարող լինել կեղծիքներ ու չափազանցումներ, մի բան, որ նրանք հաճախ մեղադրականով վերագրել են Անտանտի կողմի հրապարակումներին: Ոչ մի այլ երկիր այնքան մոտ չէր այդ իրադարձություններին, որքան Գերմանիան: Նրա միսիոներները, ուսուցիչները, սպաները, հյուպատոսներն ու դեսպանները փաստագրել են եղեռնի մանրամասները: Գիրքը ևս մեկ անգամ ապացուցում է ոչ միայն ցեղասպանության անառարկելիությունը, այլև Գերմանիայի մեղսակցության չափը: «Süddeutsche Zeitung» օրաթերթում գրքի վերաբերյալ հոդվածում Գուստի կարծիքը հնչում է այսպես՝ «մեղավոր են հավանություն տալով», որն ըստ նրա՝ ճշգրիտ արտահայտում է նաև գերմանական ասպեկտը: Այդ ասպեկտը Յոհ. Լեփսիուսի 1919թ հրատարակած «Գերմանիան ու Հայաստանը» գրքում՝ Գերմանիայի արտգործնախարարության պատվիրմամբ կամ միգուցե հեղինակի նախաձեռնությամբ, գիտակցաբար մեղմացված է, քանի որ Գերմանիան երկնչել է Փարիզի հաշտության բանակցություններից:Այդ նպատակով ոչ միայն ընտրվել են նպաստավոր վավերագրերը, այլև դրանք հաճախ խմբագրվել կամ կրճատվել են (դրա վերաբերյալ փաստաթղթերում կան համապատասխան նշումներ): Այս գրքով առաջին անգամ հրապարակվող Գերմանիայի արտգործնախարարության բնագիր փաստաթղթերը ևս մեկ անգամ հաստատում են այդ մեղսակցությունը: Դա նոր թեմա է գերմանական հասարակության համար: Գրքում հստակորեն երևում է թե՛ գերմանացի տարբեր հյուպատոսների վերաբերմունքն ու մտահոգությունը և թե՛ պաշտոնական ատյանների արձագանքը: Տասնյակ վավերագրերով հաստատվում է նաև պատմական այն ճշմարտությունը, որ թուրքերը պատերազմի առիթն օգտագործել են հայերին իսպառ վերացնելու համար՝ հաճախ իրենց գործելակերպն ու ոճիրները վերագրելով գերմանացիների պահանջին, որից խիստ սրտնեղել են Թուրքիայում ապրող ու աշխատող գերմանացիները: Բայց նրանց բազում ահազանգերը եղել են ապարդյուն, քանի որ Գերմանիայի վերին ատյանները փորձել են մինչև պատերազմի վերջը Թուրքիային ամեն կերպ պահել իրենց կողմում անտեսելով հայերի զանգվածային կոտորածները: Մինչդեռ միայն նրանք էին ի զորու կանխել այդ արհավիրքը:

Հյուպատոսներին ու միսիոներներին մտահոգել է ոչ միայն իրենց հավատակից հայ քրիստոնյաների բնաջնջումը, այլև Գերմանիայի վարկանիշը, նրանք հաճախ սարսափով ու ամաչելով են խոսում կատարվածի մասին, նրանք չէին կարող կարծել, որ մոտ քառորդ դար հետո Գերմանիան ինքը կդառնա մեկ այլ հսկայածավալ ցեղասպանության հեղինակ, որի իրականացումը բացատրելի և կանխատեսելի էր արդեն իսկ Թուրքիայում կատարվածով: Գերմանացի մի լրագրողի դիպուկ բնորոշմամբ այն հոլոքոստ էր մինչ հոլոքոստը:

Այսօր Գերմանիան դեռ հեռու է հայերի ցեղասպանությունը ճանաչելու մտքից, բայց Վոլֆգանգ Գուստի անկողմնակալ ու օբյեկտիվ գիրքը կարող է լուրջ ու անվիճելի հող նախապատրաստել այդ հարցի ընդգրկուն քննարկումների և հետագա քայլերի համար: Հայկական համայնքը Գերմանիայում փոքր է և թույլ, առանց դրսի զգալի աջակցության ու այդպիսի ազդակների անհնար կլինի այնտեղ որևէ շոշափելի արդյունքի հասնել: Գուստը խորհուրդ է տալիս նաև հետևել հրեաների օրինակին և համախմբել ուժերը:

Ես չեմ հավակնում հայ պատմաբանների փոխարեն վերլուծել կամ մեկնաբանել գիրքը, բայց նաև համոզված եմ, որ այն բավականին հիմնավոր նյութ կմատակարարի նոր քննարկումների համար և կնպաստի, որպեսզի չարվեն հապճեպ ընդհանրացումներ և անհիմն մեղադրանքներ:

Վ. Գուստի կողմից ինտերնետում ստեղծված է կայք՝ www.armenocid.net, որտեղ տեղադրված և անընդհատ լրացվող բազում փաստաթղթերը նպաստում են հայերի ցեղասպանությունը ճանաչելի դարձնելու և դատապարտելու խնդրին:

Ռուզան Յորդանյան

1914 – 01 – 15 – DE – 001

Սկզբնաղբյուրը՝ PA-AA/R14083[1]

Կոստանդնուպոլսի դեսպանությանը՝ արտգործնախարարության պետքարտուղար Յագովից

Հրաման № 19

Բեռլին, 15 հունիսի 1914

Ռուս դեսպանի հաղորդման համաձայն, Պետերբուրգում լուրեր կան Էրզրումից, որ այնտեղ ժողովներ են անցկացվում, որտեղ բացահայտ խոսվում է կոտորածների մասին: Մոլլաների ցուցումով բնակչությանը հագցրել են սպիտակ չալմաներ: Ամեն ինչ պատրաստ է ջարդի համար, որը կսկսվի Կոսպոլիից տրվող ազդանշանով: Իթիհադը ստորագրություններ է հավաքում՝ որպես բողոք որևէ հսկողության դեմ՝ ընդգծելով, որ ջարդերի պատասխանատվությունը կրում են իշխանությունները, որոնք ուզում են միջամտել բարեփոխումներին: Կոստանդնուպոլսի ռուս դեսպանն ստիպված է սահմանափակվել ուշադրությունը լրջորեն իրադարձությունների վրա հրավիրելով: Խնդրում եմ ձեռնարկել համարժեք քայլեր և Էրզրումի հյուպատոսի հետ հեռագրային կապ ստեղծել:

Յ[ագով]

1914 – 10 – 16 – DE – 001

Սկզբնաղբյուրը՝ PA-AA/ R14085
Տպագրված՝ Գ և Հ[2] *փաստ. 011/կրճ./*

Ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին՝ Հալեպի հյուպատոս Ռյոսլերից

1. PA-AA - արտգործնախարարության քաղաքական արխիվ:
2. Յոհ. Լեփսիուսի «Գերմանիան և Հայաստանը» գիրքը, դիվան. փաստ. ժողովածու, 1919թ., Պոտսդամ:

Մ. 2480

Պատճեն

Հալեպ, 16 հոկտեմբերի, 1914

Ինչպես ինձ պատմում են Մարաշի գերմանացի միսիոներուհիները, թուրքերը ճնշել են Զեյթունի բնակիչների՝ այդ քաղաքի զինապարտներին բանակ զորակոչելու դեմ մինչև այժմ շարունակվող ակտիվ և պասիվ դիմադրությունը: Նրանց առաջնորդ Նազար Չաուշին՝ արդեն մի քանի ամիս լեռներում թափառող դասալիքների ղեկավարին, որը ժամանակին դարձել է ավազակախմբի ղեկավարը և իր կամայականությունների պատճառով նույն հայերից ընկալվում է որպես պատուհաս, մոտավորապես հոկտեմբերի սկզբին թուրքական ջոկատները նենգությամբ բռնեցին և տրված խոսքը դրժելով ամենադաժան ձևով տանջամահ արին:

Զեյթունի բնակիչները գերմանացի սպաներին են վերագրում նաև այն, որ իրենց քաղաքում լրջորեն անցկացվեց համընդհանուր զորակոչ և լուտանք են թափում նրանց հասցեին: Գերմանիայի հանդեպ խիստ հակակրանք սերմանելու համար, ինչն արտահայտում է Մարաշի բնակչության գերակշռող մասը, ֆրանսիական փոխհյուպատոսն իր կողմից այնտեղ արել է ամեն հնարավոր բան: Նաև ամերիկյան միսիան, մեզ ընդունելով որպես անհարմար մրցակից, չի ձգտում բնակչության շրջանում մեր հանդեպ բարյացակամ տրամադրություն սերմանել: Գերմանական միսիայում մնացել են միայն կանայք: Այս պարագայում ես երախտապարտ կլինեի, եթե հնարավոր լիներ կայզերական դեսպանատնից ինձ տրամադրել պատերազմի վերաբերյալ բրոշյուրներ և պարզաբանող թուրքերեն հոդվածներ՝ Մարաշում բաժանելու համար: Հյուպատոսությունը Հալեպում լուսաբանման այդ աշխատանքն անում է արաբերեն, որը Մարաշում արդեն այլևս չեն հասկանում:

[Ռյոսլեր]

1914-12-30-DE-001

Սկզբնաղբյուրը՝ PA-AA/R14085
Տպագրված՝ Գ և Հ փաստ. 014 /կրճ./

Ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին՝ Կոստանդնուպոլսի դեսպան Վանգենհայմից

Պերա, 30 դեկտեմբերի 1914

№ 342

1. հավելված

Էրզրումի տարածքում հայկական բնակչության դեմ թուրքերի օրինազանցությունների մասին կից զեկուցագիրը հաստատում է այն տեղեկությունները, որոնք դրա վերաբերյալ ստացել եմ հայ պատրիարքից, այս ամենը ինձ մղեց իրավիճակը քննարկել Բարձր Դռանը և հրատապ խորհուրդ տալ՝ ջանալ այդպիսի միջադեպերը վերացնելու համար: Մեծ վեզիրն, իհարկե, այն կարծիքին է, որ այդ միջադեպերը եղել են ոչ առանց հայկական կողմի սադրանքի, դրա համար որպես փաստարկ նա վկայակոչեց այն, որ պատերազմում հայերը բացահայտորեն հանդես են գալիս ընդդեմ թուրքական շահերի և իմիջիայլոց հիշեցրեց, որ Բուլղարիայի հայերը Ռուսաստանին տրամադրել են կամավորների ջոկատ:

Վանգենհայմ

Հավելված

Էրզրում, 5.12.1914

Վերաբերում է Էրզրումի տարածքում հայերի դեմ կատարվող օրինազանցություններին:

Էրզրումի վիլայեթի բնակչությունը, հատկապես գյուղականը, խիստ անհանգստացած է որոշ գործողություններով, որոնք ընկալում է որպես նոր ջարդի նախանշաններ:

Էրզրումի սարահարթի Օզնի գյուղում այս ամսվա 1-ին հայերից շատ հարգված մի քահանայի այցելել են երեք թուրք դասալիք, նրա մոտ հյուրասիրվել են, քնել և հաջորդ օրը ստիպել են իրենց ուղեկցել մինչև գյուղի վերջը, որտեղ նրան սպանել են հրացանի կրակոցներով:

Թենիկ գյուղում՝ նույնպես Էրզրումի սարահարթում, 12 հոգուց բաղկացած մի ավազակախումբ գյուղի բոլոր տղամարդկանց դուրս է քշել, կապոտել և որպես փրկագին պահանջել է 100 թուրքական ֆունտ: Այդ

գումարը հնարավոր չի եղել գյուղում հավաքել: Տղամարդիկ մնացել են բռնված: Այդ գյուղի մի քանի կանայք լացելով եկել են Էրզրում՝ հայ եպիսկոպոսի մոտ և օգնություն են խնդրել:

Մյուս գյուղերից էլ կան այդօրինակ լուրեր:

Էրզրումի հայ եպիսկոպոսը դիմել է վալիին, որը խոստացել է Էրզրումի հարթավայրն ազատել այդ հրոսակախմբերից:

Այս տեղեկությունները հաղորդում են հեղինակավոր հայերը:

Հայկական բնակչությունը հաստատում է, որ խոսքը թուրքական «Իթթիհադ» կուսակցության հրահրած շարժման մասին է:

Փաստ է, որ թուրք սպաները լավ չեն խոսում հայերի մասին և նրանց հանդիմանում են, թե նրանք ռուսների հանդեպ բարեկամաբար են տրամադրված և հեշտացրել են ռուսական զորքերի ներխուժումը թուրքական շրջաններ: Ինչպես երևում է տարբեր նախանշաններից, կարծես թե նորովի է ժայթքել նաև հայերի հանդեպ թուրք բնակչության վաղեմի ատելությունը:

Ինձ հաղորդած միջադեպերի մասին ես տեղեկացրել եմ Էրզրումի ամրոցի պարետին՝ գեներալ Փոսելդին, գերմանական ռազմական միսիայի անդամին:

Շվարց

1915 – 03 – 07 – DE – 001

Սկզբնաղբյուրը՝ PA-AA/ Կոստ. դեսպ./
Տպագրված՝ Գ և Հ փաստ. 018 /կրճ./

Կոստանդնուպոլսի դեսպան Վանգենհայմին՝ Ալեքսանդրետի փոխհյուպատոս Հոֆմանից

Մ. № 226

Ալեքսանդրետ, 7 մարտի 1915

Վերջին օրերին գերագույն հրամանով (ըստ լուրերի՝ Կոստանդնուպոլսից) այստեղի բոլոր քրիստոնյա հպատակների՝ հայերի, սիրիացիների, հույների տնային խուզարկումներ եղան: Որոշ տներում բռնագրավեցին միայն փաստաթղթեր, թերևս միայն նրա համար, որ դրանք օտար

լեզվով էին: Նույն ճակատագրին արժանացան նաև գրքերը, հատկապես անգլերեն: Այդ արդյունքների հիման վրա դեռևս ձերբակալություն չի եղել: Որքանով ես ծանոթ եմ այստեղի ոչ մեծաթիվ բնակչության բնույթին ու գործունեությանը, չեմ կարծում, թե զբաղված լինի երկրի դավաճանությամբ: Այդ իսկ պատճառով այդ ձեռնարկը հարուցեց դրանից չտուժած այստեղի օտարերկրյա քաղաքացիների զարմանքը: Համենայնդեպս, դա անցկացվեց տանելի ձևերով:

Այդ միջոցառումը պայմանավորված է, ինչպես ես դա լսել եմ զինվորականներից, վերջին շրջանում կառավարական օղակներում քրիստոնյա բնակչության հանդեպ նորովի ուժգնացող անվստահությամբ՝ հատկապես Սիրիայի և Կիլիկիայի, հավանաբար նաև այլ վայրերի հայ բնակչության հանդեպ, ինչին օժանդակեցին այստեղ և մերձակա վայրերում տեղի ունեցած մանր միջադեպերը: Օրինակ, ինչպես հայտնել են, «Դորիս» հածանավի երկու անգամ խարիսխ գցելու ընթացքում անգլիացիների գերած ժանդարմների մեջ երկու հայ է եղել: Մեկ ուրիշ անգամ, ասում են, յոթ հոգուց բաղկացած ջոկատի ենթասպան (զինված չգործող հրացաններով) պաշտպանական ոչ մեծ խրամատից (որը դեպի թիկունք ելք չուներ) իր թաշկինակով հանձնվելու նշան է արել: Դա ավելի շուտ կարելի է բացատրել հայերի պահվածքում զինվորական որակների բացակայությամբ, մինչդեռ այստեղի զինվորական իշխանությունները դրանում տեսել են դավաճանություն: Առավել ևս հասարակ մարդը կարող էր այդպիսի տպավորություն ունենալ: Այդ երկու դեպքի հետևանքով էլ սկսվեց այստեղի հայերի խուճապային տրամադրությունը:

Այն առավել սրվեց այստեղից 30 կմ հեռու Ադանայի վիլայեթին պատկանող Դյորթյոլ գյուղի վրա զինվորական ուժերի հարձակումով: Թե իրականում ինչ է այդտեղ կատարվել, առայժմ չեմ կարողանում ճշտել: Ըստ այստեղի ռազմական ղեկավարության տվյալների, խոսքը մեկ շաբաթ առաջ այնտեղ կազմակերպված շուրջկալի մասին է՝ իբրև դասալիքների, ավազակների ու սադրիչների ապաստան: Ըստ այլ տվյալների՝ բոլոր աշխատունակ մարդկանց ճանապարհաշինության նպատակով բռնի քշել են Օսմանիե: Փաստն այն է, որ այդ բնակավայրը շրջափակված է զինվորներով և ելումուտը թույլատրվում է միայն զինվորական անցաթղթով:

Գերմանիայի հանդեպ հայերի տրամադրվածության համար բնութագրիչ է Դյորթյոլի վրա թուրքերի հարձակման պատճառի՝ այստեղ

տարածված մեկնաբանությունը: Ասում են, որ մի գերմանացի՝ ներկայանալով որպես անգլիացի, այցելել է այդ տարածքի գյուղերը և բնակիչներին հայտնել, թե իրենք՝ անգլիացիները, մտադիր են գրավել այդ վայրերը: Իսկ ի՞նչ են մտածում հայերն այդ մասին: Այդ ձևով հարցման ենթարկված մարդիկ պատասխանել են.«Իհարկե», իրենց համար ավելի լավ բան չի էլ կարող լինել: Դրանից հետո գերմանացին այդ մասին հայտնել է թուրքական իշխանություններին:

Եթե նույնիսկ հայերի մեջ համեմատաբար լավ տրամադրված որոշ մարդիկ այդ մեկնաբանությունը քիչ հավանական են համարում, ապա ժողովուրդն անկասկած դրան հավատում է: Դա ևս մեկ անգամ ապացուցում է, թե որքան խորն է արմատացած հայերի անվստահությունը Գերմանիայի հանդեպ, որի բարեկամությունը Թուրքիայի հետ միանշանակ թշնամանք է նշանակում հայերի համար: Հայերի հանդեպ նոր գերմանական «համակրանքի» շատ ապացույցներ, ինչը ես կարողացա պարզել այստեղի հայերի հետ ունեցած անկեղծ զրույցներից, մնացին առանց «ցանկալի տպավորության»: Անվստահությամբ չընդունվելու համար մասամբ, թերևս, մտադրությունն էր շատ ակնհայտ կամ կիրառված միջոցն էր խիստ շրջադարձային:

Իմ այստեղ լինելուց ի վեր ես ձգտել եմ ցրել հայերի անվստահությունը, լինի դա մտերիմ հարաբերություններում, թե առանձին զրույցներում՝ օգտագործելով հրապարակային խոսքի ամեն մի առիթ՝ հայկական կողմի հաղթանակը նշելիս կամ անգլիական նռնակների զոհ դարձած հայ բնակիչների առիթով եկեղեցական արարողությունների ժամանակ և այլն: Ես փորձել եմ իմ համակրանքն արտահայտել նվիրատվության միջոցով, վիրավորներին հիվանդանոցում կամ տանը այցելելով և այլն: Այնուամենայնիվ, ես գիտակցում եմ, որ այդ ամենն ընդամենը մի կաթիլ է անվստահության ծովում:

Այլ հարց է, թե Գերմանիան ընդհանրապես կարիք ունի ջանքեր թափելու հայերի համակրանքը վաստակելու համար:

Հալեպի հյուպատոսության համար կցվում է պատճեն:

Հոֆման

1915 – 03 – 18 – DE – 001

Սկզբնաղբյուրը՝ PA-AA/ Կոստ.դեսպ./ 168

Կոստանդնուպոլսի դեսպան Վանգենհայմին՝ Ադանայի հյուպատոս Բյուգեից

A53a /1833 Մ № 250 / 1 հավելված

Ադանա, 18 մարտի 1915

Պատիվ ունեմ Ձերդ գերազանցությանը կից հավելվածով խոնարհաբար ուղարկելու Զեյթունի իրադարձությունների մասին զեկուցագիրը՝ այս ամսվա 15-ին իմ ուղարկած հեռագրի կապակցությամբ:

Ես կարող եմ խոնարհաբար կրկնել, որ հայերի ապստամբության հնարավորության համար բացակայում են բոլոր նախապայմանները: Այն, ինչ արտահայտվում է որպես թշնամանք թուրքական կառավարության հանդեպ, ըստ էության ոչ ավելին է, քան դառնացած տրամադրության դրսևորում, որ այս պահին և հավանաբար նաև ապագայում բացառված է հայերի օգտին քրիստոնյա ուժերի միջամտությունը:

1896թ. Զեյթունը որոշակի իմաստով հայտնի դարձավ, քանի որ այնտեղի բնակչությանը հաջողվեց իրենց ոչնչացնելու նպատակով ուղարկված զորքերին՝ դրանց հրամանատարով հանդերձ, գերեվարել:

Բյուգե

Հավելված

Զեկուցագիր Զեյթունի իրադարձությունների մասին

Ադանա, 16 մարտի 1915

Բացառապես հայերով բնակեցված և Զեյթունի բարձրավանդակն զբաղեցնող Զեյթուն բնակավայրը պաշտոնապես պատկանում է Հալեպի վիլայեթին: Նրա բարձր՝ հատկապես ձմռանը դժվարամատչելի լեռնային դիրքը, բարդացնում է թուրքական իշխանությունների գործը: Քաղաքի և նրա շրջակա 30 գյուղերի բնակիչները, որոնց կեսը հայկական են, զբաղվում են հողագործությամբ և անասնապահությամբ: Նրանցից շատերը ջորեպան են և ապահովում են շրջակա վիլայեթների լեռնային մասերի երթևեկը: Հայկական համայնքի խնամակալությամբ պահվող մի քանի խղճուկ տարրական դպրոցները ոչինչ չեն կարող անել ժողովրդի հոգևոր ու մշակութային բարձրացման համար, այնպես որ

անգիտության ու հոգևոր հետամնացության մեջ գտնվող ժողովուրդն ապրում է արտաքին աշխարհից գրեթե կտրված:

Հարկերի բարձրացման և զինապարտների հավաքին ուղղված կառավարական միջոցառումները հանդիպում են բնիկների համառ դիմադրությանը, որոնք անում են ամեն ինչ՝ իրենց պարտականություններից խուսափելու համար: Հատկապես զինծառայությունը նրանց թվում է չափազանց դժվար, ուստի դասալքությունն այստեղ սովորական երևույթ է: Դասալիքները փախչում են լեռները և ապրում են ուղևորների և քարավանների վրա հարձակվելով: Նրանք իրենց ավազակային արարքներն իրագործում են՝ առանց տարբերակելու հարձակման ենթարկվածի ազգությունն ու կրոնը: Նրանց բռնելու կառավարության ջանքերը հիմնականում ապարդյուն են, քանի որ նրանց ձերբակալությունը նպաստում է վրիժառու նոր դասալիքների ի հայտ գալուն:

Մոտ վեց ամիս առաջ՝ երկրի համընդհանուր զորահավաքի ժամանակ, Զեյթունի բնակիչները կրկին չենթարկվեցին իշխանությունների՝ ըստ կանչի ներկայանալու պահանջներին, ուստի նրանք ստիպված եղան կոշտ միջոցներ ձեռնարկել: Շատերին տարան Հալեպ՝ վիլայեթի կենտրոն, և այնտեղ ձերբակալեցին:

Այդ առիթով Հալեպ գնաց նաև հայերի կաթողիկոսը, որպեսզի կառավարության վրա գործադրի իր ազդեցությունը՝ հանուն նրանց մեջ եղած անմեղների: Կառավարությունն այնքան դաժան էր վարվում ձերբակալվածների հետ, որ նրանցից մեկը իր մահը գտավ ճիպոտահարումից:

Այնուհանդերձ զեյթունցիները չվախեցան և, ինչպես նախկինում, հեռու մնացին զինծառայությունից: Մի քանի օր առաջ նրանք նույնիսկ մի քանի կրակոց են արձակել այնտեղի զինվորական հրամանատարի վրա՝առանց նրան սպանելու լուրջ մտադրության: Ասում են, որ նրանք միայն նրան վախեցնելու նպատակ են ունեցել: Այդ վերջին օրերին Զեյթունում սպանվել է մի ժանդարմ: Ինչ առիթով և ով է կատարել այդ արարքը, հիմա հնարավոր չէ ճշգրիտ պարզել թերի կապի պատճառով: Բայց կարելի է հստակ ասել, որ գլխավոր դրդապատճառը կրկին զորահավաքն էր, որ տեղի բնակիչներին մղեց իշխանության հետ ընդհարման:

Զեյթուն քաղաքի բնակիչները՝ մոտ 1200-1500 տուն, ապրում են իրար հետ վիճաբանություններով, նրանց մեջ բացակայում է համերաշխության ոգին: Միայն համընդհանուր կարիքն ու վտանգն է առանձին մարդկանց միավորում ընդհանուր գործողությունների: Նրանք միայն մասամբ են զինված՝ հին ու վատորակ հրացաններով, որպեսզի դրանք օգտագոր-

ծեն պաշտպանության համար: Հարձակման համար նրանց պակասում է անհրաժեշտ կազմակերպվածությունն ու ղեկավարումը:

Հարկեր վճարելուց և զինծառայությունից հրաժարվելը եզակի երևույթ չէ մեծ Օսմանյան կայսրության մեջ: Դա հանդիպում է ամենուր և կարելի է ասել՝ յուրաքանչյուր վիլայեթում: Լազիստանի ու Քրդստանի որոշ ցեղեր և այն վայրերում, որտեղ իրենց համար մեկուսի ապրում են արաբները ու չերքեզները, հարկեր հիմնականում չեն վճարում և զինծառայության չեն գնում:

Զեյթունի հայերը ցանկացել են կառավարության հետ ինչ-որ չափով փոխզիջման հասնել և զինծառայությունն անցնել տեղում, բայց կառավարությունը դա չի ընդունել: Հայերը՝ որպես արդարացում, վկայակոչում են այն, որ անապահով են զգում իրենց հարևանությամբ ապրող մահմեդական բնակչության առկայությամբ, ուստի չեն կարող թողնել, որ զինծառայության համար պիտանի տղամարդիկ հեռանան: Նրանք հավաստիացնում են, որ չպետք է մտավախություն ունենալ իրենց որևէ ագրեսիվ գործողության առնչությամբ, հատկապես հիմա, երբ զենքերը հանձնել են կառավարությանը և գրեթե անպաշտպան են:

Զինծառայության հանդեպ վախն այստեղ համընդհանուր է, այնպես որ, քրիստոնյաները, ինչպես նաև մահմեդականները ինչ-որ կերպ փորձում են դրանից ազատվել: Մեկը «բեդել» է վճարում, մյուսն էլ դառնում է դասալիք: Մի խոսքով՝ բնակչության մեջ, լինի այն քրիստոնյա թե մահմեդական, զինծառայության հանդեպ ոչ մի ոգևորություն չկա:

Վերջին շրջանում ավելի է ուժգնացել քրիստոնյաների մերժողական վերաբերմունքը, քանի որ նրանց, գրեթե առանց բացառության, օգտագործում են որպես սովորական շինարար-բանվորներ և զենք չեն տալիս:

Ս. Աղաբալյան

1915 – 03 – 26 –DE -001

Մկզբնաղբյուր՝ PA-AA/R14085, (Կոստ. դեսպ.)168
Տպագրված՝ Գ և Հ փաստ. 020 (խմբ. կրճ.)

Ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին՝ Կոստանդնուպոլսի դեսպան Վանգենհայմից

№ 191

Պերա, 26 մարտի 1915

Սույն ամսվա 12-ին Հալեպի կայզերական հյուպատոսը հայտնել է, որ Զեյթունում՝ հին ժամանակներից հայտնի այդ մեկուսի անկյունում, ապստամբություն է բռնկել, որի ծավալները դեռևս հայտնի չեն: Չնայած վալիի նախազգուշացմանը, զինվորական պարետն այստեղ ոչ մի ջոկատ չի թողել: Այդ առնչությամբ հարցաքննված Ադանայի հյուպատոսը հայտնել է, որ ոչ մի խոսք չկա հայերի նախապատրաստած ապստամբության մասին, այլ խոսքը, հավանաբար, զորահավաքի առիթով առանձին օրինազանցությունների մասին է: Այստեղի հայ պատրիարքը հաստատում է այդ տեղեկությունները և հատկապես նշում է, որ կառավարությունը Զեյթունի բնակիչներից վերջերս հավաքել է բացարձակապես ամբողջ զենքը:

Իսկ հիմա **Ռյոսլերի** երեկվա հեռագիրը:

«Զեյթունում հայ դասալիքները, որոնց պետք է ձերբակալեին, գնդակահարել են մի քանի թուրք ժանդարմի: Մարաշի մահմեդական բնակչությունն ակնհայտորեն ծրագրել է այդ առիթն օգտագործել ջարդի համար, բայց հանգստացել է, երբ հայտնել են, որ գործը մտնելու է ռազմական դատարան: Մարաշից Զեյթուն, որպես միջնորդ, ուղարկվել է մի գերմանացի միսիոներ եղբայր: Եթե բնակիչները չհանձնեն սաղրիչներին, ապա կձեռնարկվեն ռազմական միջոցներ: Այդ դեպքում դժվար կլինի զսպել Մարաշի մահմեդական ստորին խավի բնակչությանը: Խնդրում եմ խստագույն հրամաններով կանխել օրինազանցությունները: Մարաշի հայ բնակչությունը լրիվ խաղաղ է: Զեյթունի վրա հարձակումը պետք է լինի կարճատև և ուժերի զգալի գերակշռությամբ, որպեսզի կանխվի խռովության տարածումը: Միսիան, որի մեջ ութ քույր է, ինձ մոտ էր ուղարկել քույրերից մեկին՝ խնդրելու մեկնել Մարաշ՝ գերմանացիներին պաշտպանելու համար: Ես խնդրում եմ մեկնման թույլտվություն: Ուղևորությունը միայն այնտեղ տևում է երեք օր: Պատասխանը՝ հեռագրով»:

Ես այստեղ ձեռնարկեցի անհրաժեշտ միջոցներ և կայզերական հյուպատոսին լիազորեցի մեկնել Մարաշ այն պայմանով, որպեսզի նա Հալեպում հարմար փոխարինող գտնի, նաև Ալեքսանդրետի հյուպատոսության ներկայացուցչին տեղյակ պահի իր ժամանակավոր բացակայության մասին:

Վանգենհայմ

[Վանգենհայմի պատասխանը, 26.3]

Մարաշ ուղևորվելուն համաձայն եմ: Հետևեր վերցրեք շիֆրերը: Խնդրում եմ՝ հոգացեք արժանի փոխարինող ունենալու համար և տեղյակ պահեք Ալեքսանդրետի հյուպատոսին:

[Մորդմանի նշումը, 26.3]

Հայ պատրիարքի հաղորդածները (այսօրվա զրույցը նրա հետ)

1. Զեյթուն: Մի քանի ամիս առաջ հայ «դասալիքները», այսինքն՝ զինակոչից փախած առանձին անձինք, թափառում էին լեռներում, զբաղվում թալանով և ուղևորների վրա հարձակվելով: Դրան ի պատասխան, Մարաշի մութասարիֆը՝ Մարաշի մի քանի հայ երևելիների ուղեկցությամբ, գնաց Զեյթուն: Զեյթունի մի քանի հեղինակավոր բնակիչներ հանդես եկան որպես միջնորդ և այդ փախստական դարձած մարդկանց համոզեցին հանձնվել իշխանություններին՝ այն բանից հետո, երբ իշխանությունները անպատժելիության երաշխիքներ տվեցին: Չնայած տրված խոսքին, նրանք և որպես միջնորդ հանդես եկած զեյթունցիները բանտ նետվեցին և մինչև հիմա ձերբակալված են: Նրանք 70-80 հոգի են: Այս օրերին Աբդուլլա անունով մի թուրք ժանդարմի, պարզ չէ, թե ինչ առիթով, զեյթունցիները զինաթափել և **վիրավորել են**: Մյուս ժանդարմներին էլ դիմավորել են քարկոծությամբ:

Դրան հետևել է այն, որ Մարաշից Զեյթուն է եկել ռազմական դատարանը, և զորքերը շրջապատել են տարածքը:

Թեպետ զեյթունցիները վաղուց հայտնի են որպես անկախ ու համառ մարդիկ, բայց հիմա խոսք չկա նախապատրաստված համընդհանուր ապստամբության մասին, դրա համար, նախևառաջ, նրանք զենք չունեն, նրանցից խլել են նույնիսկ դանակներն ու այդպիսի պարագաները:

Սիսի կաթողիկոսը, որի թեմին է պատկանում Զեյթունի համայնքը, բազմիցս փորձել է իր ազդեցությունը, որպեսզի հանգստացնի զեյթունցիներին: Նա հիմա էլ, թեկուզ մենակ, կուղևորվեր այնտեղ, բաց մտահոգ է, որ միջնորդի դերը իրեն էլ կվնասի, ինչպես զեյթունցիներին, որոնք հիմա էլ նստած են բանտում՝ որպես դասալիքների հանցակիցներ:

2. Դյորթյոլ: Պատրիարքի տեղեկությունները ոչինչ չեն ավելացնում

Ադանայի հյուպատոսությունից եկած կից զեկույցին (1712):

3. Ադանա: Այս օրերին պատրիարքն այնտեղից հեռագրեր է ստացել, որոնք հայերի համար մտահոգություն են պարունակում: Պատրիարքը նաև ավելացրել է, որ 14 օրից ավելի է, ինչ հայ զինվորներին, նաև այնպիսիներին, ովքեր նախկինում ծառայել են, զինաթափել են և ինչպես նրանց, այնպես էլ նորակոչիկներին օգտագործում են ճանապարհաշինության և այդպիսի այլ ծառայությունների համար, թեպետ Էնվեր փաշան Կովկասում ռազմական գործողությունների ժամանակ հայ զինվորների պահվածքի մասին գովասանքով է խոսել:

1915 – 03 – 30 – DE – 001

Սկզբնաղբյուրը՝ PA-AA /Կոստ.դեսպ./ 168

Կոստանդնուպոլսի դեսպանությանը՝ Դամասկոսի հյուպատոս Փաղելից

1959. A53a

Դամասկոս, 30 մարտի 1915

Հրատապ

Կոմս Վոլֆսքելը հայտնում է, որ Հալեպի հյուպատոսը Զեյթունի դեպքերի առիթով, որոնք այդ ժամանակ գոհացուցիչ ընթացք են ստացել, ուզում է մեկնել Զեյթուն: Զինվորական ղեկավարությունն այդ ուղևորությունը չափազանց վտանգավոր է համարում և խնդրում է հրաժարվել այդ մտքից: Համապատասխան հեռագիր եմ ուղարկել Ռյոսլերին: Խնդրում եմ կոմս Վոլֆսքելի անունով այնտեղից համապատասխան հրահանգներ ուղարկել Հալեպ:

[Վանգենհայմի պատասխանը, 30.3]

1. Հալեպի հյուպ.

Հյուպատոս Ռյոսլերի համար՝ հյուպատոս Փաղելի հեռագրի կապակցությամբ: Խնդրում եմ չմեկնել Զեյթուն: Սահմանափակվեք առավե-

լագույնը Մարաշ այցելելով: Փաղելի հետ էլ ըստ այդմ պայմանավորվել:

2. Դամասկոսի հյուպ.

30.3 հեռագրի պատ. հյուպատոս Ռյոսլերը կմեկնի միայն Մարաշ, ուր նրան թախանձագին խնդրել են մեկնել գերմանացի քույրերը: Նրան ցուցում է տրված Զեյթուն չգնալ:

1915 – 04 – 12 – D –00

Սկզբնաղբյուրը՝ PA-AA/ R 14085 Կոստ.դեսպ./168
Տպագրված՝ Գ և Հ փաստ.025 (կրճ.)

Ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին՝ Հալեպի հյուպատոս Ռյոսլերից

K № 39/ U. № 764

Հալեպ, 12 ապրիլի 1915

Զեյթունում ծավալված իրադարձությունները հանգեցնում են այն հարցին, թե արդյոք դրանք դրսից չե՞ն հրահրվել: Սակայն մարտի 28-ից մինչև ապրիլի 10-ը Մարաշում իմ գործուղման ընթացքում ես այդպիսի ոչ մի հետք չեմ կարողացել հայտաբերել: Ռազմական դատարանի նախագահն այնուամենայնիվ պնդում էր, թե առկա է օտար ազդեցությունը, բայց դրա վերաբերյալ ոչ մի տվյալ չտվեց: Հենց տեղում, Թուրքիայի ներքին թշվառությունից բխող պատճառներն արդեն իսկ բավարար են հուզումները բացատրելու համար:

Զեյթունի մերձակայքում ոմն Նազարեթ Չաուշի գլխավորությամբ հայերը ծավալել են ավազակային գործունեություն: Անցյալ տարվա հոկտեմբերին Մարաշի մութասարիֆ Հայդար փաշան դրա դեմ միջոցներ է ձեռնարկել: Նա Զեյթունի բնակիչներին խոստացել է, որ ոչինչ չի անի նրանց, ովքեր իրեն կհանձնեն ավազակներին, և փաստորեն հասել է իր նպատակին: Բայց դատական գործ հարուցելու և մեղավորներին պատժելու փոխարեն, նա Նազարեթ Չաուշին բանտում ծեծել է տվել մինչև մահանալը (համեմ. անցյալ տարվա հոկտեմբերի 16-ի №2480 զեկույցի հետ), նրա հետ եղած բանտարկյալներից 30-ին հրամայել է տանել Օսմանիեի բանտ, որտեղ նրանք առայսօր նստած են առանց դատ ու դատաստանի, մյուսներին թողել է, որ փախչեն, որպեսզի ստիպված

չլինի պատժել միաժամանակ բռնված մահմեդական ավազակներին: Հակառակ իր հանդիսավոր խոստմանը, նա կարգադրել է ձերբակալել նաև այն մարդկանց, ովքեր ավազակներին բռնելու համար հայտնել են հիմնական տվյալները:

Պատերազմն սկսվելուն պես, հակառակ Հալեպի վալի Զելալ բեյի խորհրդի, Ֆահրի փաշան հեռացրեց Զեյթունում տեղաբաշխված զորամասը և փոխարինեց ժանդարմներով, ընդ որում՝ մարաշցի մահմեդական ժանդարմներով, որոնք եղել են զեյթունցիների անձնական թշնամիները: Հենց նրանց կամայականությանն են հանձնում վերջիններին: Զեյթունը բացառապես քրիստոնյա քաղաք է: Ժանդարմերիայի հրամանատարի և կայմակամի լուռ համաձայնությամբ ու աջակցությամբ նրանք հաճախ են տանջել հայ տղամարդկանց և անարգել կանանց: Զեյթուն ճշված ժողովուրդը դիմեց Մարաշի մութասարիֆին՝ խնդրելով իրենց ազատել այդ երկու պաշտոնյաներից: Հեյդար փաշան, վալիի առաջարկով նոյեմբերին փոխարինվեց մութասարիֆ Մումթազ բեյով, որը համարվում էր արդար ու հավասարակշռված և ձգտում էր իրավիճակի մասին ճշմարտացի պատկերացում կազմել: Նա պահանջեց երկու պաշտոնյաների մեղքի ապացույցներ: Բայց բնակիչները չեն համարձակվում պաշտոնյայի դեմ ցուցմունքներ տալ: Ցանկացած վկա վաղ թե ուշ ստիպված կլինի դրա համար անխնա հատուցել: Այդպիսով ժանդարմները շարունակեցին տնօրինել ու սերմանել դառնացած տրամադրություն:

Հուզումների համար կար նաև այլ դրդապատճառ: Մարաշում հայ զինվորների, մի մասը, որոնց վատ էին կերակրում, և քանի որ զեյթունցիներ էին, նաև վատ էին վարվում ու տանջում էին, դասալիք դարձավ: Այս շրջանի հետ ոչ մի կապ չունեցող պատճառներով, մոտավորապես մարտի սկզբին կառավարությունը քրիստոնյա զինվորներից վերցրեց համազգեստը և զենքը: Քանի որ անտեղյակ շարքայինները դա ընկալեցին որպես քրիստոնյաների հանդեպ հետագա ավելի դաժան միջոցառումների նախասկիզբ, ուստի դասալիք դարձան նաև մյուս քրիստոնյա զինվորները և միացան Զեյթունի մերձակայքում գտնվող ավազակներին: Երբ ժանդարմներին ուղարկեցին նրանց բռնելու, նրանք պաշտպանվեցին և մոտավորապես մարտի 9-ին գնդակահարեցին նրանցից 6-ին: Նրանք սպանեցին նաև մի մահմեդական ջորեպանի, որը Զեյթուն էր գնում: Զեյթունի բնակչությունը, երկյուղելով, որ ավազակները կարող են հարձակվել նաև քաղաքի վրա, խնդրեցին պաշտպանել, ինչը երաշ-

խավորվեց: Երբ քաղաքի տարբեր մասերում շրջում էին ժանդարմ-հսկիչները, քաղաքի Յենի Դունյա թաղամասում, որտեղ ժամանակին բնակարան է ունեցել Նազարեթ Չաուշը, մի տնից կրակել էին պարեկի վրա: Սակայն այդ տունը շրջապատելու և մեղավորներին բռնելու փոխարեն, ժանդարմերիայի պետը, որը նախկինում ճնշել էր տեղի բնակչությանը, նախընտրեց այլևս քաղաք չգնալ, այլ մնաց դրանից վերև գտնվող զորանոցում: Այնուհետև հուզումները տարածվեցին: Ավազակներն ու դասալիքները տեղավորվեցին քաղաքից դուրս գտնվող և որպես ուխտատեղի ծառայող նախկին մի վանքում (թեքե): Քաղաքի բնակիչների միջոցով նրանց հանձնումը պահանջելու փորձերը տապալվեցին, քանի որ բնակիչներն ալևս չէին հավատում կառավարության խոստումներին: Այս դեպքում մեծ դեր խաղաց այն, որ Հեյդար փաշան հոկտեմբերին դրժել էր իր խոսքը և պատժել էր նաև մատնողներին: Գերմանական օգնության միության՝ միսիոներ Բլանկի Զեյթուն մեկնելու և կամավոր հանձնումը փորձելու առաջարկությունը մութասարիֆ Մումթազ բեյն ընդունեց ըմբռնումով: Մարտի 23-ին Բլանկն ուղևորվեց Զեյթուն, բայց նրա ջանքերը ձախողվեցին, քանի որ պաշարվածներն այլևս ոչ մեկին չէին թողնում վանքին մոտենալ, իսկ Բլանկի ուղարկած տեղաբնակին սպառնացել էին զենքով, երբ խոսք էր բացվել հանձնվելու մասին: Նրանք հայտարարել են. միևնույն է՝ մեռնելու են, այդ դեպքում ավելի լավ է՝ զենքը ձեռքերին, քան թե հանձնվել իշխանություններին: Դրան ի պատասխան, Զեյթունի պարետը հրամայեց շրջապատել վանքը, բայց անբավարար զորքով: Եթե նա ռազմական տեսակետից ճիշտ գործեր, ապա կբռներ ամբողջ ավազակախմբին: Նա պետք է պարզապես սպասեր գնդացրորդների ժամանմանը կամ ավազակներին սովի մատներ: Բայց դրա փոխարեն նա հրամայեց գրոհել, որի ընթացքում ժանդարմերիայի մարաշցի մայորը ձիով սլացավ դեպի վանքի գլխավոր դարպասները և մի քանի զինվորների հետ սպանվեց: Ավազակները, որոնց թիվը մոտ 150 էր, դուրս պրծան քաղաք, թողնելով մի քանի սպանվածների և վիրավորների, որոնք ընկան զորքի ձեռքը, և այնտեղից էլ՝ սարերը: Արժե նշել, որ նրանք իրենց սպանվածներից երկուսի գլուխը կտրել էին՝ ակնհայտորեն թուրքերից նրանց ճանաչվելն անհնար դարձնելու համար: Այնուհետև վանքն ավերվել է գնդացիրների կրակոցներից: Ավազակներին սարերում բռնելը շատ բարդ էր: Մումթազ բեյը, որն այդ ընթացքում շտապ ժամանել էր Զեյթուն, անմիջապես պաշ-

տոնանկ արեց ժանդարմերիայի պետին, քանի որ նա պարեկին կրակելուց հետո ճիշտ միջոցներ չէր ձեռնարկել, և կայմակամին, քանի որ վերջինս մութասարիֆի ժամանումից հետո էլ հրաժարվել էր իջնել զորանոցից՝ իր պարտականությունները կատարելու:

Զեյթունի իրադարձությունները միշտ ավելի մեծ նշանակություն են ստանում նրանով, որ դրանք հետադարձ ազդեցությամբ անդրադառնում են Մարաշի վրա՝ որպես ամենամոտիկ գտնվող առավել մեծ քաղաք: Այն ունի մոտավորապես 50-60.000 բնակիչ, որոնցից 36.000-ը պետք է որ մուսուլմաններ լինեն, իսկ 24.000-ը՝ քրիստոնյաներ: Մասամբ նրանք ապրում են արդյունաբերությամբ և առևտրով, բայց հիմնականում՝ գյուղատնտեսությամբ (չամիչ և խաղողի մուրաբա պատրաստելով), բամբակագործությամբ, մետաքսագործությամբ և այլն: Չնայած նրան, որ հողը բարեբեր է, և ջուրն առավել քան բավարար, հացահատիկային կուլտուրաները կարելի է մի քանի անգամ ջրել, այնուամենայնիվ, բնակչությունն աղքատ է և այժմ մոտ է ծայրահեղ աղքատությանը, մասամբ տևական քաղաքական անկայունության, մասամբ էլ երթևեկության հնարավորությունների խիստ անբավարար պայմանների պատճառով: Մարաշն արտաքին աշխարհի հետ կապող Այնթապ տանող միակ ճանապարհը կառուցվում է արդեն 18 տարի, և չնայած դրան՝ հազիվ կեսն է պատրաստ: Աքսու գետի վրա, որը վարարելիս խանգարում է երթևեկությանը, հազիվ մի քանի տարի առաջ կամուրջ կառուցեցին, երբ մի մութասարիֆի կին քիչ մնաց խեղդվեր: Այնուհետև փայտից կառուցված կամուրջը հրկիզեցին այն մարդիկ, ովքեր հուսով էին կտրվածության պայմաններում առավել ուղղակի ազդեցություն ստանալ և ուզում էին խաղ խաղալ առաջադեմ տրամադրված մութասարիֆի գլխին, մինչև որ մի տարի անց այն կրկին կառուցվեց: Բնակչությունը խաղաղաեր է և չի էլ մտածում կառավարության դեմ դուրս գալ: Համընդհանուր զորահավաքի ազդեցությունը, շարունակվող առգրավումները բացասաբար անդրադարձան և փոխադրամիջոցները դարձրին չափազանց սուղ: Ֆուրգոնը, որով ես Հալեպ եկա, միակն էր ամբողջ քաղաքում: Ընդհանուր առմամբ մինչև մարտի վերջը 2000 ձի և ջորի է առգրավվել, ապրիլի 5-ին պահանջվել է նաև 500 ավանակ: Զորեպան քրիստոնյաներն ստիպված եղան 4 շաբաթ շարունակ ձրի աշխատել ռազմական նպատակներով՝ առանց աշխատավարձի և առգրավման վերաբերյալ որևէ տեղեկանքի, մինչդեռ մահմեդականներին բաց թողին

մի քանի օր անց: Եթե նրանց այն ժամանակ բաց թողնեին որևէ տեղեկանքով, որ կատարել են իրենց պարտականությունները, միևնույն է՝ նրանց կրկին կբռնեին այլ վայրերում: Իրավիճակն արդեն շատ լարված էր, երբ ծավալվեցին Զեյթունի իրադարձությունները: Հիմա նաև քաղաքացիական բնակչությունից խլեցին զենքը, ընդ որում՝ նախընտրելով գիշերային տնային խուզարկումները: Զինվորները ծեծում էին քրիստոնյաներին, զենք փնտրելու պատրվակով անարգում էին կանանց, քարկոծում երեխաներին: Տարածվեցին լուրեր, թե իբր քրիստոնյա զինվորները թունավորել են իրենց մահմեդական ընկերների հացը, մահմեդական կանայք բացահայտ սպառնում էին, որ կրկին ջարդեր կլինեն, մի մահմեդական իր քրիստոնյա բարեկամին առաջարկեց թաքնվել իր տանը, ազդեցիկ մուսուլմանները որոշեցին հեռագիր ուղարկել կենտրոնական կառավարությանը՝ իբր հայերը գրավել են մզկիթները: Որքան էլ անմիտ լինի այդ մեղադրանքը, այն լիովին համապատասխանում է այնտեղի մահմեդականների ցածր կրթական մակարդակին: Հեռագիրն սկզբում ուղարկեցին Զեյթուն՝ մութասարիֆին, որը խանգարեց ուղարկելուն և այդ մասին տեղյակ պահեց ռազմական դատարանին, որն էլ նախաձեռնողների դեմ ոչինչ չձեռնարկեց: Ռազմական դատարանի նախագահ գնդապետ Շյուքրի բեյն իմ ներկայությամբ հերքեց, այդպիսի հեռագրի ծրագրված լինելը, բայց խոստովանեց, որ մահմեդական կողմը պահանջում է մութասարիֆի պաշտոնանկությունը: Այդ պահանջի հեղինակ Համդի բեյին ռազմական դատարանը ձերբակալեց՝ կառավարական գործերին խառնվելու համար:

Մինչ հայերից կրկին կխլեին զենքը, մուսուլմանները հնարավորություն ստացան ձեռք բերել վառոդ ու փամփուշտ: Մարաշի մերձակայքում գտնվող Թեքերեք գյուղի բնակիչներն այնտեղ լուր ուղարկեցին, որ իրենք պետք է կամ իսլամ ընդունեն, կամ կորցնեն իրենց կյանքը: Մի խոսքով՝ Մարաշի գերմանական միսիային ամբողջ իրադրությունը ներկայացավ այնպես, որ հարաբերությունների հետագա սրման պայմաններում, հատկապես, եթե Զեյթունում կռիվները շարունակվեն և շարունակվի հեղվել մահմեդական զինվորների արյունը, կասկածելի է, թե արդյոք կառավարությանը կհաջողվի՞ Մարաշի ժողովրդին սանձած պահել, նաև կասկածելի է, թե Մարաշի իշխանությունների մոտ ո՞ր ուղղությունը կհաղթի՝ մութասարիֆի հավասարակշռված տարբերա՞կը, թե՞ ավելի կոշտը, որի կողմնակիցներն են, բացի մի քանի երևելի մարդկանցից, առաջին հերթին

քաղաքացիական քրեական գործերի դատարանի նախագահ Մուհամեդ-ի-Ջեմալը, դեղագործ Լուֆթի էֆենդին, մահմեդական պատգամավոր Քադիր բեյը և ղեկավար պաշտոն ունեցող սպաներից մեկը:

Քանի որ գրավոր հաղորդակցությունը խիստ գրաքննչության էր ենթարկվում ոչ միայն փոստում, այլև սուրհանդակների միջոցով փոխանցելիս, և 4-5 շաբաթ առաջ միսիայից ինձ ուղարկված նամակը չէր ստացվել, ուստի օգնության միությունը որոշել էր քույրերից մեկին Մարաշից Հալեպ ուղարկել, որպեսզի խնդրեն, որ ես այցելեմ իրենց: Վերջինս ինձ փոխանցեց նաև դպրոցի տնօրեն Հելենե Շթոքմանի[3] նամակը, որը խոնարհաբար կցում եմ այստեղ հատվածաբար, որից արժե ընդգծել, թե ինչպիսի անմարդկային դաժանությամբ են գործադրվում մարմնական պատիժները: Ամերիկյան միսիան նույնպես դիմել է Հալեպի իր հյուպատոսին՝ խնդրելով այցելել: Պատիվ ունեմ կցել դրա մասին Այնթապից դոկտոր Շիփարդի[4] նամակի պատճենը: Ընդհանուր առմամբ հյուպատոսի այցելությունից շատ բան էին ակնկալում ինչպես բնակչությունը, այնպես էլ միսիան: Երկրի խորքի հեռավոր վայրերում, որոնց թվին պետք է դասել նաև Մարաշը, այդպիսի մարդը հատուկ տպավորություն է թողնում նույնիսկ ղեկավարության վրա: Արդեն իսկ նրա մասին տեղեկացնելը, որը ես ձեռնարկեցի մարտի 27-ին մութասարիֆին ուղղված ու շատ շուտ հայտնի դարձած թուրքերեն հեռագրով, ունեցավ խաղաղեցնող ու մեղմացնող ազդեցություն: Ակնհայտորեն հետո էլ նպաստեց բնակչության հանգստացմանը և, թերևս, տպավորություն թողեց նաև զինվորականության վրա: Իմ ժամանումից ի վեր փողոցներում մարդկանց այլևս չեն ծեծում: Պատիվ ունեմ դրա ազդեցության վերաբերյալ կից ուղարկել ամերիկյան միսիայի անցած ամսվա 31-ի մի նամակ[5]: Մարաշի ամբողջ բնակչությունը շատ շնորհակալ էր այցելության համար և այն ընդունեց, ընդհանուր առմամբ, որպես իրավիճակի թեթևացում: Կարելի է համարել, որ այն զգալիորեն նպաստեց այդ վայրում գերմանացիների հեղինակության բարձրացմանը: Հազիվ մարտի 31-ին հայտարարվեց Ջեմալ փաշայի՝ հավելվածում խոնարհաբար իմ կցած հրամանը[6], որը բնակչությանը կոչ էր անում հանգիստ մնալ: Իմիջիայլոց, դրանով չհաջողվեց կանխել քաղաքի մահմեդական թաղամասում առանձին ապ-

3. Հավելված 1:
4. Հավելված 2 (անգլ.):
5. Հավելված 3 (անգլ.):
6. Հավելված 4 (ֆր.), (նմանատիպ հրաման կա 1915-08-29-DE փաստ. հավելվածում):

ղող հայի՝ ապրիլի 3-ին բռնի իսլամացնելը, այն բանից հետո, երբ պարեկը մահակով ջարդել էր նրա դուռը: Զեյթունի գործը դեռ ավարտված չէ և շարունակում է զարգանալ: Զորքերի հրամանատարությունը հանձնարարվել է մայոր Խուրշիդ բեյին, որը, ինչպես ասում են, եռանդուն է և ավազակներին հետապնդելու փորձ ունի: Կառավարությունը պահանջել է, որպեսզի բոլոր դասալիքները ըստ կանչի ներկայանան: Մինչև մարտի վերջը ներկայացան 450 հոգի՝ Մարաշից և 125 հոգի՝ Զեյթունից: Նրանց մի մասին օգտագործում են ուղղիչ հաստատությունների աշխատանքներում, իսկ մի մասը դեռևս սպասում է ռազմական դատարանի դատավճռին: Իմիջիայլոց, ռազմական դատարանը հետաքննություն է ձեռնարկել բոլոր հեղինակավոր և ունևոր հայերի դեմ, որոնցից շատերն ակնհայտորեն ոչ մի կերպ չեն առնչվել Զեյթունի դեպքերին և ոչ պակաս ցանկանում են, որ ավազակների վերջը տան և Մարաշն ի վերջո հանգիստ ձեռք բերի: Մարաշից պատգամավոր Հովսեփ էֆենդի Կիրլակյանի որդուն ձերբակալել են, սկզբում այն մեղադրանքով, որ իբր նա գաղտնաբար զենք է փոխադրել, իսկ հետո, երբ դրա համար ոչ մի ապացույց չի գտնվել, իբր նա կաշառել է մի մարդու, որը պետք է փողոցում կրակեր և այդ ձևով անկարգություններ հրահրեր: Ի վերջո ստիպված եղան նրան ազատ արձակել: Խուզարկել են հայ բողոքական քահանաների, հայ կաթոլիկ հոգևորականների, գերմանական արական դպրոցի հայ տնօրենի, գերմանական հիվանդանոցի հայ բժշկի տները: Այդ ամենը հիմնված էր կարծեցյալ փաստի վրա, որ իբր բոլոր նշված անձինք համարվում են Հայկական բարեգործական ընկերության անդամ (թուրքերեն՝ ermeni djemiet kherie umumiyesi), որի ցուցակն իբր գտել են Զեյթունում: Այդ միությունը, որի նստավայրը Եգիպտոսում է, գոյություն ունի և ճանաչված է՝ սկզբում Աբդուլ Համիդի, իսկ 1910 թվականին՝ նաև սահմանադրական կառավարության օրոք: Այն զբաղվում է հայկական դպրոցներին օգնելով և գյուղատնտեսական օրինակելի հիմնարկներ հիմնելով: Նրա անդամներին պարզելու համար կարիք չկար այդ ցուցակը գտնել նախ Զեյթունում, այլ կարելի էր Մարաշից կանչել տալ նախագահին: Եթե կասկածելի է համարվում այն փաստը, որ միության նստավայրը Եգիպտոսում է, և եթե կասկածվի, որ այդ կազմակերպությունը հիմա՝ պատերազմի ժամանակ, կօգտագործվի հանցավոր քաղաքական նպատակներով, ապա դա կլիներ ընդունելի հիմք: Այդ հիմնավորմամբ անկողմնակալ հետախուզումների դեմ ոչ մի հակաճառություն չէր լինի: Բայց այն հավանականությունը, թե հետաքննությունները ռազմական դատարանը կանցկացնի անկողմնակալ, ես համարում եմ չնչին: Նրա ամբողջ գործելակերպը թողնում է այն տպավորությունը, կարծես թե բացակայում է որևէ նպատակաուղղված գործունեություն, նա զբաղվում է միայն շինծու գործունեությամբ և քանի որ չի կարող գտնել իսկական մեղավորների, կարծես ամբողջ հայ բնակչությանն է համարում կասկածելի և նրա մեջ փնտրում է իր հարստացման համար թեկնածուների:

Որպես դրվագ կարող եմ հիշատակել, որ հենց դպրոցի շենքում ապրող գերմանական արական դպրոցի տնօրենի տունը խուզարկվեց անխնա, բիրտ և առանց ինձ կամ միսիայի ղեկավարությանը նախապես տեղյակ պահելու: Այդ առնչությամբ ես բողոքեցի ռազմական դատարանի նախագահին՝ նշելով, որ լինելով դաշնակից պետության քաղաքացիներ, գերմանացիներն ակնկալում էին ավելի լավ վերաբերմունք և հարցրի, թե որքանո՞վ է հավանական, որ գերմանացիներն իրենց տներում հանդուրժեն հակապետական գործունեություն: Նա հավաստիացրեց, թե չի իմացել, որ տնօրենը հենց դպրոցի շենքում է ապրում և ներողություն խնդրեց: Բռնագրավված տպագիր նյութերով և նամակներով պարկը, որը ես՝ շտապելով տուն, միայն կնքել տվեցի՝ առանց ոստիկանությանը փոխանցելու, նա ինձ խնդրեց տալ (ինչը և կատարվեց) և հյուպատոսության մի ծառայողի ներկայությամբ բացել: Դրանից հետո նա հրաժարվեց տնօրենին ձերբակալելու մտքից: Հոսպիտալի բժշկից բռնագրավված թղթերը նույնպես բացեցին հյուպատոսության աշխատակցի ներկայությամբ:

Ավելի հասկանալի կլիներ, եթե ռազմական դատարանը միջոցներ ձեռնարկեր դաշնակցություն կուսակցության դեմ, որը չի խորշում և բաց չի թողնում զենք փոխադրելու որևէ առիթ, նաև՝ հնչակների դեմ: Բայց հիմա այդ դեպքը չէ: Պետք է նշել, որ բարեգործական միությունը վաղուց է հրաժարվել զենքի առևտրից ու չի զբաղվում քաղաքական գործունեությամբ և չի ընդունում դաշնակցության անդամներին:

Իրադրությունը հիմա շարունակում է ազդել տնտեսական վիճակի վրա: Սահմանված է պաշարողական դրություն: Մութն ընկնելուն պես ոչ ոք չի համարձակվում փողոցում երևալ: Մի քանի օր շարունակ Մարաշի բնակիչներին արգելված էր քաղաքը լքել: Թեպետ այդ հրամանը հանված է, բայց քրիստոնյա բնակիչները զինվորների հանդեպ վախից չեն

համարձակվում գնալ քաղաքից դուրս գտնվող իրենց խաղողի այգիները, որոնք մոտակա օրերին հրատապ մշակելու կարիք ունեն՝ այս տարվա բերքի ակնկալիքով: Դա է բնակչության սննդի հիմնական աղբյուրը:

Կոտորածի վտանգն առայժմ անցել է, թեպետ մուսուլման հրահրողները դեռևս չեն հրաժարվում այդ մտքից: Նրանք մարտի 31-ին կենտրոնական կառավարությանն ուղղված մի հեռագիր են կազմել, ըստ որի՝ Զեյթունի բնակիչներին (մոտ 10 000 հոգի) պետք է տարհանել, իսկ քաղաքը՝ հողին հավասարեցնել: Պարզ է, որ այդպիսի ծրագրի իրականացումը երկար ժամանակով հուզումներ կառաջացներ: Հեղինակները ճնշում են գործադրել Մարաշի ունևոր հայերի վրա, որպեսզի նրանց ստիպեն ստորագրել այդ փաստաթուղթը: Նրանք հրաժարվել են՝ պահանջելով այն նախ ներկայացնել մութասարիֆին: Վերջինս հավանություն չի տվել դրան, ինչպես նաև՝ Մարաշի մուֆթին: Նույն հայերի մոտ հետո՝ ապրիլի 3-ին, ձեռնարկել են տնային խուզարկումներ:

Ապրիլի 5-ից կարծես թե տարաձայնություններ են սկսվել Մարաշի ղեկավար կազմի մահմեդական շրջանակներում: Մի մասը խաղաղության կոչ էր անում, ինչպես պատվելի Քադիր փաշան (չշփոթել պատգամավոր Քադիր բեյի հետ) և Շյուքրի բեյը՝ նախկին պատգամավորը (չշփոթել ռազմական դատարանի նախագահի հետ): Մյուսները կողմ են հետագա սադրանքներին:

Քանի որ Մարաշի գերմանացիների համար անմիջական վտանգ չկար, և ես էլ այլևս չէի կարող տեղում սպասել հետագա զարգացումներին, 9 օր մնալուց հետո լքեցի Մարաշը: Ինձ հաջողվեց ղեկավարության հետ լեզու գտնել: Մութասարիֆն առայժմ Զեյթունում է: Ես չեմ խառնվել Թուրքիայի ներքին գործերին: Միայն մի դեպք, երբ զինվորները մի հայ կնոջ, որն ուզում էր իր որդու համար ուտելիք տանել բանտ (բանտարկյալներին պետք է կերակրեն իրենց մերձավորները), նրա հագած շորերի մեջ շիկացած ածուխ էին գցել, ես ոչ պաշտոնական բողոք ներկայացրի՝ ի դեպ առանց հանդիպելու որևէ հակաճառության, թե միջամտելու իրավունք չունեմ:

Սկզբից ի վեր ես Զեյթուն մեկնելու մտադրություն չունեի, քանի որ այնտեղ գերմանացիների շահերը ոչ մի կերպ պաշտպանված չեն, իսկ ռազմական ղեկավարությունն, անշուշտ, ենթադրում էր, որ ես կուզենայի գնալ և արեցին ամեն հնարավոր բան՝ այն խափանելու համար: Ըստ միսիոներ Բլանկի, արդեն այսօր կհանձնվեին լեռներում թաքնված ա-

վազակներն ու դասալիքները, եթե նրանց մոտ գար որևէ պաշտոնյա, որի հանդեպ նրանք վստահություն ունեն, թե հանձնվելու պայմանները կկատարվեն: Բայց իշխանությունները չեն ցանկանա, որպեսզի օտարերկրացուն հաջողվի այն, ինչը չի հաջողվում իրենց՝ նկատի առնելով նաև Թուրքիայի ներքին գործերին որևէ օտար միջամտության հանդեպ հասկանալի համընդհանուր մերժողական վերաբերմունքը:

Ավազակներին վնասազերծելն առայժմ չի հաջողվում: Ապրիլի սկզբին Մարաշի ու Զեյթունի միջակայքում ճանապարհի գրեթե կեսին գտնվող Ալա Քայա կոնաձև լեռը, որը, ինչպես նաև ամբողջ տեղանքը, խիստ կտրված է ու դժվարամատչելի, դարձել է ավազակների փախստատեղի: Այստեղ պետք էր նրանց դեմ կրկնական միջոցներ ձեռնարկել: Մարաշում խոսում են, որ զորքերի մոտենալուն պես մի գյուղի բնակիչները, նրանց հանդեպ վախից, լքել են իրենց գյուղը և անցել են ավազակների կողմը: Եթե այդ լուրը ճշմարտացի է, ապա այն կարող է լինել մտահոգիչ նախանշան, որ հուզումներն այդ կերպ կարող են տարածվել:

Ապրիլի 8-ի երեկոյան Ֆախրի փաշան ժամանել է Այնթապ, որպեսզի այս ամսվա 10-ին ուղևորվի Մարաշ ու Զեյթուն: Թե նրա տեսչական այցը լավ կամ վատ պտուղներ կքաղի, դրա մասին տեղյակ կլինի նրան ուղեկցող խմբում գտնվող կոմս Վոլֆսքելը:

Իմ վերադարձից հետո Ջելալ բեյը՝ Հալեպի վալին, ինձ հայտնեց, որ ռուսական սահմանի մոտ՝ թուրքական տարածքում, ռուսների գրաված մի քանի բնակավայրերում հայերը համակրանք են դրսևորել ռուսների հանդեպ, հայկական մի քանի գյուղերի բնակիչների մահմեդականները կոտորվել են, և թուրքական կառավարության մեջ կարծե գլուխ է բարձրացնում այն ուղղությունը, որը հակված է ամբողջ հայ բնակչությանը համարել անհուսալի կամ լրիվ թշնամական: Այդ շրջադարձը նա դիտարկում է որպես դժբախտություն իր երկրի համար և ինձ խնդրեց հորդորել Նորին մեծությունն կայզերական դեսպանին՝ աշխատել ընդդեմ այդ ուղղության:

Նույն զեկուցագիրը կուղարկվի նաև կայզերական դեսպանին:

Ռյոսլեր

Հավելված 1

Հատվածներ նամակից

Մարաշ, 21 մարտի 1915

...Իհարկե, մենք համաձայն ենք կառավարության հետ, այն բանում, թե դիմադրությունը պետք է պատժվի, բայց նաև գիտեմ, որ մեր գերմանական կառավարությունը խիստ կպատժեր այդպիսի գործերի համար, բայց այստեղ ըստ էության պատիժ չի իրականացվում: Տառապանքները կրում են նաև անմեղները, և մինչև հոգու խորքը զայրանում ես այստեղ կատարվող դաժանությունների համար: Իհարկե, ճշմարտացի է, որ զեյթունցիները շատ ծանր բնավորություն ունեն և բոլոր ժամանակներում էլ նրանց մեջ եղել են մարդիկ, ովքեր շեշտակի հակադրվել են ամեն ինչին, բայց կառավարության ոչ խելամիտ քայլերի հետևանքով նրանք ավելի են շեղվել ճանապարհից: Երբ մի քանի ամիս առաջ դրությունը բարդացավ, Հեյդար փաշան ուղևորվեց այնտեղ և նրան հաջողվեց, նաև բնակիչների աջակցությամբ, բռնել վատթարագույն մարդկանց՝ ավազակներին: Բայց ինչպիսի՞ միջոցներով: Այդ վայրագությունները անպատմելի են, ծեծում էին նույնիսկ կանանց: Այսպիսով, ավազակներին բռնել էին, բայց նրանց գլխավոր մեղավորին, որը շատ վատ մարդ էր և շատերն էին տուժել նրանից, հրապարակավ կախելու փոխարեն, որպես ամբողջ բնակչության համար սարսափազդու օրինակ, բանտում նրան գաղտնի տանջամահ արեցին, այնպես որ ժողովրդի աչքերում նա նահատակ է, իսկ բռնված մյուս ավազակնե՞րը: Այո, նրանք բոլորը փախան բանտից, և բնակիչները պետք է կրկին նրանց հանձնեն: Բայց չէ՞ որ նրանք դա արդեն մի անգամ արել են, ինչո՞ւ կառավարությունն ավելի լավ չի հսկել նրանց...

... Որքան ավելի խորանում ես դեպի երկրի խորքը, այնքան ամեն ինչ ավելի վատ պատկեր է ներկայանում, և ես կարծում եմ, որ Կոստանդնուպոլսում հիմնականում ոչ մի պատկերացում չունեն, թե ինչ է կատարվում երկրի խորքում: Օրինակ, այնտեղ՝ այստեղից մի քանի օրվա ճանապարհ հեռու սպանություն կատարվեց: Սպանության համար կասկածվող մեկին բանտ են բերում: Քննում են մի վկայի, և քանի որ նա ոչինչ չգիտի, նրան էլ են բանտ խցկում և ահավոր ձևով այնքան են ծեծում, մինչև որ նա վախից ամեն ինչին «այո» է ասում: Հիմա առաջինին մահապատժի կենթարկեն, իսկ երկրորդը կիսախելագար կդառնա այն մտքից, որ անմեղ մարդուն մահվան է մատնել: Դուք գիտե՞ք, թե ինչ է նշանակում ծեծվել: Մի քանի ամիս առաջ հարկ եղավ կտրել-հեռացնել մեզ մոտ գտնվող մարդկանց ոտքերի մատները, որովհետև ջնջված էին Հեյդար փաշայի կազմակերպած հետաքննությունների ժամանակ:

Ըստ էության երբեմն նրանք բորիկ ոտնաթաթերին ստանում են հարյուրից ավելի մահակի հարվածներ:

[Քույր Հելենե Շթոքման]

1915 – 04 – 15 – DE – 002

Սկզբնաղբյուրը՝ PA-AA/R14085
Տպագրված՝ Գ և Հ փաստ. 026 /խմբ. և կրճ./

Ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին՝ Կոստանդնուպոլսի դեսպան Վանգենհայմից

№ 228

Պերա, 15 ապրիլի 1915

Արևելյան Անատոլիայից հասնող լուրերը հիմք են տալիս խոստովանել, որ թուրք մահմեդականների և հայերի միջև դեռ նախկինում եղած լարված հարաբերությունները վերջին ամիսներին ավելի են վատթարացել: Փոխադարձ անվստահությունը գնալով աճում է բնակչության ու պաշտոնական շրջանակներում՝ ինչպես ծայրամասերում, այնպես էլ մայրաքաղաքում:

Թվացյալ ու իրական հետապնդումների վերաբերյալ բողոքները, որոնց ենթարկվում են հայերը, պատերազմի ընթացքում ավելի մեծ թիվ են կազմում ու աղմկահարույց դառնում, և հակառակը՝ հայերը մեղադրվում են, որ համակրանքով են վերաբերվում կայսրության թշնամիներին, նրանց հետ դավաճանական կապեր ունեն և առանձին վայրերում բացահայտորեն դեմ են դուրս են գալիս տեղի իշխանություններին: Հայերի հանդեպ վատ տրամադրվածությունը մեծանում է՝ արտասահմանում հայերի պահվածքի վերաբերյալ լուրերով: Ասում են, թե նրանցից հազարավորները կամովին մտել են ռուսական բանակ՝ ոչ միայն Կովկասից, այլև Ամերիկայից, Բուլղարիայից և այլ երկրներից, ու հաստատում են, թե դաշնակցական կուսակցության ռուսական բաժանմունքը՝ Թուրքիայի համար պատերազմի անբարենպաստ ելքի դեպքում, կպահանջի Թուրքիայի նահանջած շրջանների մասերում մահմեդական բնակչության բնաջնջում: Ի վերջո, հատկապես ծանրակշիռ են հնչում Կովկասում ռազ-

մական գործողությունների ժամանակ թուրքական բանակի շարքային հայ զինվորների պահվածքի մասին տեղեկությունները, ըստ որի՝ իբր նրանք իրենց զենքը բազմիցս ուղղել են թուրքերի դեմ, փաստ, որը հաստատում են նաև այդ կռիվներին մասնակցած գերմանացի սպաները:

Յուրաքանչյուր կողմ մյուս կողմի մեղադրանքները հերքում է իբրև անհիմն կամ էլ իրադարձությունների մեղքը բարդում է մյուս կողմի վրա: Երևի թե միայն մի կետում կա համաձայնություն, որ սահմանադրության հաստատումից հետո հայերը հրաժարվել են հեղափոխության մտքից, և որ դրա համար ոչ մի կազմակերպություն չկա:

Անկասկած հիմա Արևելյան Անատոլիայում առկա են հայերի դեմ օրինազանցություններ ու բռնություններ, և ընդհանուր առմամբ իրադարձությունները հայերը նկարագրել են ճշմարտացի, թեպետ ինչ-որ տեղ չափազանցրել են: Խոսքն ավելի շատ զրկանքների ու տառապանքների մասին է, որոնցից զերծ չի կարող մնալ ոչ մի պետություն՝ նույնիսկ քաղաքակիրթ երկրներում, բայց մյուս դեպքերում մեղքն ընկնում է հայերի վրա, իսկ իշխանություններին վերաբերում է այն հանդիմանությունը, որ նրանք ժամանակին նախազգուշական միջոցներ չեն ձեռնարկել և ուշացումով միջամտել են անտեղի խստությամբ:

Հայկական աղբյուրից ինձ հասած նյութը (պատրիարքարան և դոկտոր Լիպարիտ Նազարյանցի հաղորդագրությունները) հիմնականում վերաբերում է ուղղակի պատերազմական շրջանին (Էրզրումի վիլայեթ) և նրան հարակից շրջաններին (Վանի և Բիթլիսի վիլայեթներ):

Այդ տարածքներում իրադարձությունների համար հայկական կողմը մեղադրում է.

1. Որպես աշխարհազոր նշվող ռազմականորեն կազմակերպված թուրքական անկանոն խմբավորումներին ու ավարառուների հրոսակախմբերին: Նրանց մեղադրում են բազմաթիվ գործողությունների, թալանի նպատակով սպանությունների և հայկական գյուղական բնակչության դեմ նմանօրինակ այլ օրինազանցությունների համար:

2. «Union et Progres» («Միություն և առաջադիմություն») կոմիտեին առընթեր ակումբներին, որոնցում, ըստ երևույթին, կան շատ մեծ թվով անմաքուր տարրեր: Հաստատում են, որ այդ ակումբների՝ հատկապես Էրզրումի մասնաճյուղի, գործունեությանն են վերագրվում պրոսկրիպցիոն ցուցակների[7] կազմումն ու անցյալ տարվա դեկտեմբերից իրականացված հեղինակավոր հայերի մի ամբողջ շարք քաղաքական տարբեր սպանությունների ծրագրումը: Ավելացնում են, որ որոշ ժամանակ առաջ հայերը ներքին գործերի նախարարությանը զգուշացրել են այդ ակումբների գործունեության առնչությամբ, որոնք 1909թ. Ադանայի իրադարձությունների ժամանակ ճակատագրական դեր են խաղացել:

3. Տարբեր քաղաքացիական ծառայողների՝ հատկապես Մուշի նահանգապետին (Բիթլիսի վիլայեթ) և Վանի վալիին: Իմիջիայլոց նշում են, որ Ալաշկերտում ռուսների բռնագրված շրջանից մոտ 2000 մահմեդական ընտանիքներ բնակեցվել են Մուշի հայկական գյուղերում, որոնք հազիվ ի վիճակի են սեփական գոյությունը քարշ տալու. հայ գյուղացիներին օգտագործել են որպես բանող անասուն՝ զինամթերքի և սննդամթերքի տեղափոխման համար, որոնցից շատերը զոհ են դարձել վայրագ վերաբերմունքի և քչերին է հաջողվել, ըստ երևույթին՝ հազիվ մեկ քառորդին, վերադառնալ իրենց գյուղերը: Վանի երկու շրջաններում՝ կայմակամների իրավասությամբ, իսկական սպանդ է եղել:

Ռազմական գործողություններից հեռու գավառներում հայ բնակչության վիճակը ինչ-որ չափով թվում է տանելի, թեպետ այնտեղից էլ առանձին բողոքներ եղել են, բայց խոսքը ընդհանուր առմամբ առավել նվազ նշանակություն ունեցող միջադեպերի մասին է, ինչպիսիք են արգելված զենք կամ դասալիքներ հայտնաբերելու նպատակով տնային խուզարկումները, որոնց ընթացքում, ըստ երևույթին, եղել են օրինազանցություններ և նմանօրինակ շատ այլ բռնություններ:

Ավելի մեծ ուշադրության են արժանի երկու միջադեպ Ադանայի վիլայեթում, որոնց մասին լավատեղյակ է կայզերական դեսպանությունը՝ նաև հյուպատոսական զեկուցագրերից:

Մարտի սկզբին հայկական Դյորթյոլ բնակավայրում, այն բանից հետո, երբ անգլիացիները մինչ այդ մի քանի անգամ նավատորմից ցամաք էին իջել և առանց արգելքի գնումներ էին կատարել, թուրքերը բռնել էին երկու տեղաբնակ հայի, որոնք քարոզելիս են եղել անգլիացիների օգտին: Այդ էմիսարներից մեկն ընկել է թուրքական իշխանությունների ձեռքը և Ադանայում մահապատժի ենթարկվել: Դրա հետևանքը եղել է այն, որ Դյորթյոլի արական սեռի ամբողջ բնակչությանը զորակոչով հավաքել և տեղափոխել են Հալեպի վիլայեթ, որտեղ նրանց օգտագործում են ճանապարհաշինության համար, երեք հոգու գնդակահարել են փախուստի փորձ կատարելիս: Ի դեպ, այդ միջադեպերի ժամանակ բազմաթիվ դասալիքներ թաքնվել էին Դյորթյոլում, չի մոռացվել նաև այն, որ 1909թ. կոտորածի ժա-

7. Պրոսկրիպցիոն (սև) ցուցակ: (Ծան. թարգմ.):

մանակ բնակիչները՝ զենքը ձեռքներին, պաշտպանվել են թուրքերից:

Զեյթունի իրադարձությունների մասին, որոնք սկսվել են զորակոչին հայերի ընդդիմանալով, արդեն հայտնել են, այս դեպքում էլ իշխանություններին այլ հանդիմանություն չի արվել, քան այն, որ ճիշտ ժամանակին չեն միջամտել:

Նկատի ունենալով վերևում նկարագրված հարաբերությունները՝ հայկական կողմից արտահայտվել է խնդրանք, որպեսզի կայզերական դեսպանությունն ու մեր հյուպատոսությունները թուրքական կառավարության մարմիններում գործադրեն իրենց ազդեցությունը՝ հիշյալ երկրամասերում հայերի հետապնդումները դադարեցնելու համար: Որպես հատուկ կարևորության հարց նշվում է փորձառու, հայկական խնդիրներին լավատեղյակ վալիների և մութասարիֆների նշանակումը հիշյալ գավառներում: Նաև կարծում են, որ գերմանական հյուպատոսների առկայությունը Վանում, Բիթլիսում և այլուր բավական կլիներ ամենադաժան բռնությունները կանխելու համար:

Այստեղ, ինչպես նաև երկրի ծայրամասերում, իրենց օգտին մեր ազդեցության այդօրինակ կիրառումը, հայերը համարում են մեզ համար որպես եվրոպական քրիստոնյա մեծ տերության mobile offisium և ակնկալվում է որպես Թուրքիայի հետ դաշնակցային մեր հարաբերության բնական հետևանք, որովհետև հենց Թուրքիայի շահերից է բխում, ուստի նաև մեր՝ հայկական տարրի պաշտպանումն ու մեզ համար նրանց համակրանքի ապահովումը: Ընդգծվում է նաև (ինչը նկատել ենք, հերքում են թուրքերը), որ հայերը, չնայած բոլոր այն տառապանքներին, որոնց ենթարկվել են, իրենց պահում են լոյալ ու հավասարակշռված, առնվազն՝ պասիվ: Բայց շարունակվող և հետևողական հետապնդումների դեպքում պետք է, հավանաբար, զգուշանալ, որ այդ խաղաղ տրամադրությունը կտրուկ չփոխվի ճիշտ հակառակը: Կառավարամետ կուսակցությունները, ինչպիսին է դաշնակցությունը, այլևս չեն կարողանա զսպել զանգվածներին և վտանգ կառաջանա, որ ռուսների առաջխաղացման ժամանակ գրավված գոտում հայերը ոչ միայն կանցնեն ռուսների կողմը, այլև թուրքական բանակի թիկունքում ևս կստեղծեն ապստամբության օջախներ:

Թուրքիայում գերմանական mobile offisium-ի կոչը ընկալելի է՝ ըստ Հայկական հարցի զարգացման, հատկապես հիմա, երբ պատերազմի արդյունքում Եռյակ միության տերություններն այստեղ անջատված են,

և որպես պաշտպանվող տերությունների հարց չի ծագում: Բայց այդ կոչին ընթացք տալու փորձը և այնպիսի մի դերի ստանձնումը, ինչպիսին խաղացին Անգլիան՝ Բեռլինի կոնգրեսից հետո և վերջին շրջանում՝ Ռուսաստանը, որպես հայերի պաշտպան, ապա դրանք Բարձր Դուռը կընկալեր իբրև անարդարացի ու կոպիտ միջամտություն իր քաղաքական գործերին: Առավել ևս, որ պահն էլ դրա համար այդքան բարենպաստ չէ, երբ Բարձր Դուռը հենց հիմա հակված է վերացնելու այն պաշտպանական իրավունքները, որոնք այլ օտար տերություններ իրականացրել են թուրքահպատակների համար: Նա պետք է նկատառի նաև վերջին տարիների իրադարձություններով պայմանավորված թուրքական տարրի ցայտուն ընդգծված ազգային գիտակցությունը:

Իսկ ինչ վերաբերում է հայկական կողմից բերվող դատողություններին, ապա դրանք արժանի էին լուրջ ուշադրության, և ես դրա համար արդեն նախկինում ինչպես Բարձր Դռանը, այնպես էլ պատրիարքարանում, առիթը բաց չեմ թողել հորդորելու՝ վարել խաղաղարար քաղաքականություն և իրար հանդեպ պահպանել լավ հարաբերություններ: Այս դեպքում վճռորոշ էր նաև այն դատողությունը, որ մեր թշնամիները առիթը բաց չեն թողնի՝ հայերի հանդեպ դրսևորված անարդարությունների համար պատասխանատու դարձնել մեզ և նրանց լարել մեր դեմ: Բայց հիմա, կառավարական օղակներում հայերի հանդեպ այդքան անբարենպաստ տրամադրվածությունը ավելի է սահմանափակում հայերի օգտին արվող մեր միջամտությունը և հիշեցնում է լինել առավել ուշադիր: Հակառակ դեպքում՝ հանդես գալով անհեռանկար գործի համար, մենք կվտանգենք առավել կարևոր և մեզ համար ավելի մոտ շահերը: Ուստի ես կարծում եմ, որ այդ առնչությամբ գերմանական հյուպատոսությունների աշխույժ ավելացումը՝ այսպես կոչված գերմանական գավառներում, չէր կարողանա իրականացնել իր նպատակը: Դրանում Բարձր Դուռը ավելի շուտ կտեսնի մեր կողմից իր իշխանություններին հսկելու փորձ, ինչպես ժամանակին Անգլիան, իսկ վերջերս Ռուսաստանը հյուպատոսության ներկայացուցիչներին ուղարկելով՝ փորձում էին երկրի այդ մասերում հսկել հայկական բարեփոխումները: Այդպիսի միջոցառումը պիտանի կլիներ իշխանություններին հայերի դեմ հանելու և հակառակ արդյունքի հասնելու համար:

Վանգենհայմ

1915 – 04 – 26 – DE – 011

Սկզբնաղբյուրը՝ PA-AA /Կոստ.դեսպ./ հատոր 168
Տպագրված՝ Գ և Հ փաստ. 031 (կրճ.)

Կոստանդնուպոլսի գլխավոր հյուպատոս Մորդմանի գրառումը

Պերա, 28 ապրիլի 1915

Քննարկում

Ա. Զրույց պատրիարքի հետ (24.4):

1. Ըստ երկու օր առաջ Էրզրումից հղված հեռագրի, այնտեղ փողոցում սպանել են հայ երևելի Արատուս Չիլուսգիրյանին: Չեն գտնվել նաև փետրվարի 29-ին Էրզրումում սպանված Պաստերմաջյան էֆենդուն սպանողները:

2. Թալեաթ բեյը հերքում է կառավարության հակահայկական քաղաքականությունը, բայց պատրիարքն այն կարծիքին է, որ Թալեաթն անկեղծ չէ, նա առաջ է մղում Էնվեր փաշային, որն իր կարծիքը հայտնում է բացահայտ:

3. Այս ամսվա 23-ին պատրիարքարանում կայացած մի խորհրդակցության ժամանակ հարց է առաջադրվել, որ առանձին հեղինակավոր մարդիկ այցելեն նախարարներին և համառորեն հավաստիացնեն, որ հայերը տրամադրված են լինել լոյալ և որևէ խռովություն չեն մտահղանում: Պատրիարքին դուր եկավ դեպի երկրի ծայրամասեր՝ հանգստացնելու նպատակով հանձնաժողով ուղարկելու միտքը: Պատգամավոր Զոհրապ էֆենդին կզբաղվի դրանով:

Բ. Նույնը՝ պարոն գեներալ Փոսելդթի հետ այս ամսվա 26-ին:

1.Կարծում է, որ հայերն իրենց հանգիստ կպահեին, եթե թուրքերը նրանց չճնշեին և չզրգռեին, հաճախ այդ ամենում առկա է եղել նաև մրցակցային նախանձը: Հայերի պահվածքը անթերի կլիներ:

Ճշմարիտ է, որ թուրքահայերը դեպի Էրզրում ռուսների առաջխաղացման ժամանակ բազմիցս մատուցել են առաջնորդելու ծառայություն, այդպիսիք եղել են նաև ռուսներից վերցրած գերիների մեջ: Դրան

հակառակ նա բացառում է, որ հայ շարքային զինվորները կրակեին իրենց թուրք ընկերների վրա: Հայերին միշտ օգտագործել են ռազմաճակատի թիկունքում:

2. Հաստատում է ակումբի գործունեությունը Էրզրումում: Դատապարտման ցուցակը պարունակում է 22 հայի անուն: Թահսին բեյը՝ վալին, հնարավորության սահմաններում խոչընդոտել է ջարդի կազմակերպումը: Հակահայկական շարժում հրահրողներն իբր հանդիմանում են ոմն Շաքիր բեյի (իմիջիայլոց Արդվինի մոտ նա ղեկավարել է կամավորների մի հրոսակախմբի), նրա օգնական Հալիլին ու Էրզրումի ոստիկանության պետին:

Պաստերմաջյանին սպանել են, որովհետև նրա եղբայրը՝ նախկին պատգամավոր, Վանի վիլայեթում սաղրիչ գործողություններ է կազմակերպել ռուսների օգտին: Նրան սպանել են երկու զինվոր, սպանողների անունները անստորագիր հայտնել են իշխանություններին, բայց չնայած այն բանին, որ Փոսելդթն այդ գործով հետաքրքրվել է, նրանց չեն բռնել:

1915 – 04 – 27 – DE – 002

Սկզբնաղբյուրը՝ PA/AA/R14085

Ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին՝ Կոստանդնուպոլսի դեսպան Վանգենհայմից

№ 258

Պերա, 27 ապրիլի 1915

Այս ամսվա 12-ին՝ Չերդ գերազանցությանն ուղղված զեկուցագրից հետո, հյուպատոս Ռյոսլերն այս ամսվա 20-ին հեռագրով հայտնեց, որ ըստ դոկտոր Մերիլի՝ Այնթապի ամերիկյան քոլեջի ղեկավարի հաղորդագրությունների, որոնք պարոն Ռյոսլերը համարում է վստահելի, Մարաշի, Զեյթունի և դեպի ներքև՝ մինչև Հասանբեյլիի բոլոր գյուղերի հայկական բնակչությանը, ովքեր ունևոր ու ազդեցիկ են, իշխանությունները տեղահանում են: Զեյթունից արդեն հեռացրել են 15 ընտանիք, մյուս երկուսն էլ ճանապարհին են: Ընդ որում՝ տղամարդկանց առանձնացնում են, կանանց ուղեկցում են զինվորները:

Պարոն Ռյոսլերը նաև նշում է.«Կենտրոնական կառավարության այդ միջոցառումներն ակնհայտորեն հիմնված են Մարաշից հասնող թյուր տեղեկությունների վրա, դա դժբախտություն է երկրի համար և ուղղված է բնակչության մի մասի կործանմանը: Դրանք հիմնականում բխում են այն սխալ ըմբռնումից, որն ամբողջ հայ բնակչությանը համարում է որպես կակածելի կամ ամբողջովին թշնամական»:

Այստեղի հայկական պատրիարքարանում միայն հայտնի էր, որ հայերին տեղահանել են Անթաքիեից և Սուեդիեից, ընդ որում՝ ըստ երևույթին, արդեն որոշ ժամանակ առաջ:

Վանգենհայմ

1915 – 04 – 28 – DE – 012

Սկզբնաղբյուրը՝ PA-AA /Կոստ.դեսպ./հատոր 168
Տպագրված՝ Գ և Հ փաստ. 036 (խմբ.)

Էրզրումի հյուպատոսությանը՝ Կոստանդնուպոլսի դեսպան Վանգենհայմից

Պերա, 28 ապրիլի 1915

Ապրիլի 26-ի հեռագրի կապակցությամբ՝ վերջին նախադասությունը:

Հայերի օգտին Ձեր միջնորդության ժամանակ պետք է խոսվի այն մասին, որ կանխվեն ամբոխի բոլոր բռնությունները, ինչպիսիք են ջարդն ու թալանը և ներազդել՝ քաղաքական տեսակետից կասկածելի համարվող մարդկանց հանդեպ օրինավոր վարվելու համար: Ընդ որում՝ պետք է խուսափել այն տպավորությունից, թե իբր մենք ուզում ենք օգտվել հայերի իրավունքները պաշտպանելու իրավունքից և միջամտել իշխանությունների գործունեությանն ու հարկ եղած դեպքում դա շեշտել իշխանությունների ներկայությամբ: Ձեր սեփական տեղյակության համար. տեղական իշխանությունները վերջին օրերին ձերբակալել են շատ երևելի հայերի և ուղարկել են Անատոլիա, որովհետև կարծես թե կան հեղափոխական շարժման նշաններ:

Վանգենհայմ

1915 – 04 – 30 – DE – 002

Սկզբնաղբյուրը՝ PA-AA/R14085
Տպագրված՝ Գ և Հ փաստ. 038

Ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին՝ Կոստանդնուպոլսի դեսպան Վանգենհայմից

№ 267

Պերա, 30 ապրիլի 1915

Այս ամսվա 25-ի շաբաթ՝ լույս կիրակի գիշերը և այս ամսվա կիրակի՝ լույս երկուշաբթի գիշերը այստեղ իրականացվել են հայերի բազմաթիվ ձերբակալություններ: Ընդհանուր առմամբ նրանց թիվը պետք է որ լինի 500 հոգի՝ հասարակության բոլոր դասերից, այն է՝ բժիշկներ, լրագրողներ, գրողներ, հոգևորականներ և մի քանի պատգամավոր: Դաշնակցության կուսակության, որի անդամ էր ձերբակալվածների մեծ մասը, օրգան «Ազատամարտ» թերթի գրասենյակը պաշտոնապես փակվել է: Հաջորդ օրերին նրանցից շատերին ուղարկել են Փոքր Ասիայի խորքերը:

Այդ միջոցառումների պատճառների մասին հասարակության մեջ տարածվել են ամենատարբեր անհսկելի ասեկոսեներ: Իմիջիայլոց ասում էին, իբր թե հայկական տներում և եկեղեցիներում հայտնաբերել են պայթուցիկ նյութեր, ռումբեր ու զենք, և իբր գահակալման տոնակատարության օրը (այս ամսվա 27-ին) հայերը ծրագրել են հարձակումներ Բարձր Դռան և այլ պետական շենքերի վրա:

Երբ հայ պատրիարքը Մեծ վեզիրին և ներքին գործերի նախարարին հարցրել է զանգվածային ձերբակալությունների պատճառների մասին, նրան պատասխանել են, որ քաղաքական կուսակցությունների ազդեցիկ անձինք հայ բնակչության այդ կազմակերպությունը ներկայումս կարող են օգտագործել հասարակական կարգը խանգարելու համար, ուստի պետության շահերի նկատառումով, այդպիսի հնարավորությունը կանխելու համար տեղին է ղեկավար անձանց հեռացնել մայրաքաղաքից:

Ներքին գործերի նախարարը առաջին քարտուղարի ներկայությամբ ասաց հետևյալը.

Կառավարությունը հիմա ոչնչացել է վերջ տալ մինչ այժմյան վիճակին, երբ յուրաքանչյուր կրոնական համայնք վարում է իր հատուկ «քաղա-

քականությունը» և դեռ կարող է հիմնել ու պահել հատուկ քաղաքական միություններ: Թուրքիայում այսուհետ պետք է վարել միայն **«օսմանյան քաղաքականություն»**:

Այստեղի հայերի մեջ իբր կան քաղաքականապես ոչ այնքան հուսալի անձինք, իհարկե, նրանց պետք է փնտրել հենց ակումբների ու խմբագրությունների աշխատակիցների մեջ: Չպետք է անտեսել այն մտավախությունը, որ պատերազմի ոչ բարենպաստ շրջադարձի դեպքում այդ տարրերը կօգտվեն հարմար առիթից՝ անկարգություններ հրահրելու համար: Պահը բարենպաստ թվաց՝ մայրաքաղաքից բոլոր այդ կասկածելիներին քշելու համար: Աքսորյալների մեջ, անշուշտ, կային շատերը, ովքեր ոչ մի կերպ մեղավոր չէին: Դա չի ժխտում կառավարությունը, և նա՝ Թալեաթը, սեփական նախաձեռնությամբ, թեպետ այդտեղ միջամտելու կարիք չի լինի, նրանց վերադառնալու թույլտվություն կտա:

Այն պնդումը, թե իբր կան գահակալման տոնակատարության օրը ապստամբելու մտադրության ապացույցներ, Թալեաթ բեյը համարեց թյուրիմացություն:

Վանի իրադարձությունները և դրանց հաջորդող օրերին ռուսների հարձակումը Բոսֆորի վրա և ֆրանսիացիների ու անգլիացիների համատեղ հարձակումը Դարդանելի վրա, ըստ էության, չէին կարող չազդել կառավարության որոշումների վրա:

Վանգենհայմ

1915 – 05 – 08 – DE – 001

Սկզբնաղբյուրը՝ PA-AA/R14085
Տպագրված՝ Գ և Հ փաստ. 044 (կրճ.)

Ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին՝ Կոստանդնուպոլսի դեսպան Վանգենհայմից

№ 286

Պերա, 8 մայիսի 1915

Չնայած հայկական շրջանակների՝ վերջին շաբաթներին տարբեր վայրերում բռնկած հուզումների նշանակությունը նվազեցնելու կամ մեղքը թուրքական իշխանությունների ձեռնարկած միջոցների վրա

բարդելու ջանքերին, համենայնդեպս շատանում են այն նշանները, որ այդ շարժումը տարածվել է ավելի հեռու, քան մինչև հիմա ենթադրվում էր, և որ դրան նպաստում է հայկական հեղափոխական կոմիտեի օգնությունն արտասահմանից:

Արդեն հայտնի կռիվները Վանում, որի ընթացքում ապստամբներին նույնիսկ հաջողվել է ժամանակավոր հաղթանակի հասնել, հուշում են, որ այնտեղի հայկական բնակչությունը բավականաչափ մատակարարված է եղել զենքով ու պայթուցիկ նյութերով: Մեռածների մեջ, ըստ թուրքական իշխանությունների տեղեկությունների, հաճախ եղել են առանձին անձինք՝ ռուսական հագուստով, և հայերն իրենք էլ չեն հերքում, որ իրենց հայրենակիցներից մեկը՝ ոմն Պաստերմաջյան, ռուսների շահերին ծառայելով, զբաղվել է սաղրիչ գործողություններով: Այդ վտանգավոր քարոզիչը լայն շրջանակներում հայտնի էր դարձել նաև ժամանակին նրա ղեկավարությամբ Օտոմանյան բանկի վրա հարձակումով, այնուհետև վերադարձել է այստեղ՝ երկրորդ սահմանադրության վերահաստատումից հետո, դարձել է պատգամավոր և ավելի ուշ՝ քանի որ չի վերընտրվել, մեկնել է Ռուսաստան: Ըստ վերջին լուրերի (այս ամսվա 8-ին)՝ հայ պարտիզաններին բազմիցս հաջողվել է Վանից միավորվել ռուսների հետ:

Կեսարիայում գտնված ռումբերի մասին հայկական պատրիարքարանը նշում է, որ Ամերիկայից վերադարձած մի հայ, որը բնակություն է հաստատել Կեսարիայի մոտերքում գտնվող Էվերեքում, զբաղվել է դրանց պատրաստմամբ, երեք հատ պատրաստելուց հետո, չորրորդը պատրաստելիս զոհվել է: Արդեն պատրաստ երեք ռումբերը նրա հայրենակիցները թաքցրել են, բայց ոստիկանությունը, որը պատահաբար իմացել է այդ մասին, դրանք հայտնաբերել է: Հետագա որոնումների ժամանակ հայտնաբերվել են 24 դատարկ, դեռևս չլիցքավորված հրազենափողեր՝ այնտեղի հայկական եկեղեցու աղյուսե տանիքի տակ: Դա եղել է փետրվարի սկզբին: Այն ժամանակվանից ի վեր, ըստ երևույթին, էլի են ռումբեր գտնվել: Ներքին գործերի նախարարը վերջերս Կեսարիայում գտնված ռումբերի թիվը նշել է մոտ 400: Բացի այդ, իբր Դիարբեքիրում էլ են հայտնաբերել ռումբեր և ուղարկել են Վան, որպեսզի այնտեղ օգտագործեն ապստամբների դեմ կռիվներում:

Հայերը խոստովանում են, որ արևելյան գավառներում հայերի տրամադրության տակ զենք կա, իբր այդ զենքը պետք է օգտագործվի ինքնա-

պաշտպանական նպատակներով՝ քրդերի և այլ խառնամբոխի հարձակումների դեմ: Կարելի է ենթադրել, որ այն արդեն վաղուցվանից կուտակել են հիմնականում հայկական հեղափոխական կոմիտեները:

Իշխանությունները միանշանակ ենթադրում են, որ Զեյթունի հայերին էլ են օտար միջամտությամբ հրահրել կառավարության դեմ զինված դիմադրության:

Չի կարելի հերքել, որ հայկական շարժումը վերջին շաբաթներին ընդունել է մտահոգիչ բնույթ, ինչը կառավարությանը դրդել է դիմել խիստ ճնշամիջոցների:

Զանգվածային ձերբակալություններն այստեղ և այլ վայրերում, ինչպես օր. Էրզրումում, որտեղ իբր վալին ձեռքին հայկական խռովության վերաբերյալ ապացույցներ ունի, Այնթապում և այլուր ուղղված են կոմիտեների դեմ, ովքեր այդ կերպ զրկվում են իրենց ղեկավարներից, առաջին հերթին՝ դաշնակցություն կուսակցության դեմ:

Զեյթունում բնակչության մի մասին տարագրել են, հիմնականում՝ Կոնիա, նմանաօրինակ միջոցառում նախատեսվել և ընթանում է Սվազի և մի քանի հյուսիս-սիրիական վայրերում:

Այստեղ՝ մայրաքաղաքում, մի քանի օր առաջ ամբողջ բնակչությանը կոչ են արել հանձնել իրենց մոտ եղած բոլոր տեսակի զենքերը:

Հուզումների ժամանակ, որը տիրել էր նաև մահմեդական բնակչությանը, հնարավոր չի լինի խուսափել խաղաղ տարրերի ճնշումից և ստորին օղակների չինովնիկների օրինազանցություններից: Բայց, չնայած տիրող բազմաթիվ մտահոգություններին, առայժմ գործը կոտորածների չի հասել ո՛չ Մարաշում, ո՛չ Այնթապում, ո՛չ էլ Էրզրումում, և կառավարությանը, թերևս, կհաջողվի նաև ապագայում կանխել դրանք:

Վանգենհայմ

1915 – 05 – 15 – DE – 012

Սկզբնաղբյուրը՝ PA-AA/ Կոստ. դեսպ./ 168
Տպագրված՝ Գ և Հ փաստ. 051 (խմբ. կրճ.)

Կոստանդնուպոլսի դեսպան Վանգենհայմին՝ Էրզրումում ռեգենտ Շոյքներ Ռիխտերից

Գաղտնի № 9

Էրզրում, 15 մայիսի 1915

Ձերդ գերազանցություն,

ապրիլի 26-ի և 29-ի, մայիսի 5-ի և 8-ի ու հաջորդ հեռագրերում ինքս ինձ իրավունք վերապահեցի հայտնել Վանում հայերի անկարգությունների և այս տարածքում հուզումների մասին:

Ես տեղին եմ համարում հեռագրային իմ զեկույցներին ավելացնել հետևյալը.

Վանի հուզումների համար արտաքուստ առիթ է ծառայել, ինչպես ես արդեն հայտնել եմ, մի քանի երևելիների, հատկապես իշխանների և Վանից հայ պատգամավոր Վռամյանի, ձերբակալությունն ու սպանությունը, ովքեր հայերի մեջ մեծ հարգանք ունեին:

Թե արդյո՞ք այդ միջադեպը պատահել է տեղի իշխանությունների համաձայնությամբ, այդ հարցն ինձ համար անորոշ է: Համենայնդեպս, կառավարությունը պետք է հստակ պատկերացներ, որ դրանով վերջին խթանն է ապահովել, որպեսզի բռնկեն դեռևս վաղուց, հատկապես պատերազմի սկզբից ի վեր խմորվող հուզումները, որոնք առաջնորդները դեռևս կարող էին ճնշել:

Ոչ միայն Վանում ու նրա շրջակայքում, այսինքն՝ Ռուսաստանին հարակից սահմանային շրջաններում և այստեղ՝ հատկապես առգրավումներից ու զորքերի կուտակումներից տուժած հայկական շրջաններում, այլև ավելի խորքում գտնվող հայկական բնակավայրերում նկատելի է դառնում սաստիկ դժգոհությունը: Շատ վայրերում արդեն վաղուց հավաքել են զենք՝ սկզբում, թերևս, հավանական ջարդերի դեպքում զուտ ինքնապաշտպանության նպատակով, իսկ ավելի ուշ՝ երևի թե նաև զինված ապստամբության համար:

Այն, որ Հայկական հարցը քննարկելիս թուրքական կողմն անընդհատ սխալներ է ունեցել, Ձերդ գերազանցությանը բավականաչափ հայտնի է, այնպիսիք, որոնք ռուսական կողմը դեռ պատերազմի սկզբից շատ առաջ օգտագործել է ծրագրված սադրանքների համար:

Հատկապես Վանը և այնտեղի ռուսական հյուպատոսությունը հնուց ի վեր եղել է ռուսների սադրիչ կենտրոնը, որը կարողացել է առավել անարգել գործել, երբ այնտեղ չկար հակակշիռ կազմող գերմանական ներկայացուցչություն: Էրզրումի նորահաստատ հյուպատոսությունը, արդեն հեռավորության պատճառով, չկարողացավ այնտեղ իր ազդեցությունը բավականաչափ տարածել, իսկ հիմա գրեթե բացառված է

թվում որևէ ներազդեցություն, որն այստեղ պահանջում է ամբողջ ուշադրությունը: Ի դեպ, հիմա կտրված է նաև Վանի հետ կապը:

Մինչ այստեղի հայկական շրջանակները փոստային ավելի լավ կապի ու այստեղի հյուպատոսության գործունեության շնորհիվ (լուրերի սրահ, ընթերցասրահ, թերթի հոդվածներ, ռազմական իրավիճակի վերաբերյալ հայտարարություններ) իրազեկված են համաշխարհային իրադրության և եվրոպական ռազմադաշտերում ռուսների անհաջողությունների մասին, Վանում կարծես թե այդ կողմնորոշումը բացակայում է: Այնտեղի հայերը, որոնք թուրքական հրապարակումներին վերաբերում են բնական անվստահությամբ, իրենց որոշ լուրերն ստանում են բոլորովին պղտոր միայն ռուսական աղբյուրներից՝ դրանով, ինչպես աշխարհի ցանկացած այլ ժողովուրդ, Եվրոպայի իրավիճակի մասին կազմելով լրիվ թյուր պատկերացում: Եվս մեկ հիմք՝Ռուսաստանի հանդեպ արդեն նախկինում եղած հակվածությունը ապստամբությամբ արտահայտելու համար:

Ինչպես հայտնի է Ձերդ գերազանցությանը, Թուրքիայի հայերը վաղեմի ժամանակներից ի դեմ Ռուսաստանի տեսնում են իրենց իսկական պաշտպանին, Ռուսաստանն էլ միշտ օգտվել է պաշտպանական այդ իրավունքից և ծառայացրել է իր նպատակին: Այն փաստը, որ Ռուսաստանի հայերը, չխոսելով իրենց կյանքի առավել մեծ ապահովության մասին, առավել լավ տնտեսական պայմաններում են, մի մեծ զանգվածի վրա նույնպես ազդում է որպես զգալի ձգողական ուժ: Դրան հակառակ, այն դատողությունը, թե Ռուսաստանի առավել ուժեղ ներազդեցությունը իր հետ կբերեր ապազգայնացման վտանգ, սահմանափակվում էր միայն հայերի հոգևոր առաջնորդներով: Վերջինների մեջ էլ ձևավորվել է երկու ուղղություն. մեկն առաջին տեղ է մղում ազգային ինքնատիպության պահպանումը, որը հնարավոր է միայն Թուրքիայում, մյուսը՝ տնտեսական շահերն ու ռուսների հետ կրոնական ընդհանրությունը:

Գերմանացիների ազդեցությունը հայերի վրա մինչև հիմա եղել է չնչին: Գերմանիայի և գերմանացիների մասին գիտեին միայն սակավաթիվ ուսյալ մարդիկ, կրթված հայ երիտասարդության առավել մեծ մասն ուսումնառել է ֆրանսիական դպրոցներում, իսկ ավելի ուշ՝ նաև Ֆրանսիայում և Ռուսաստանում: Պատերազմի սկզբում ժողովրդի մեջ նույնիսկ կասկած կար, թե արդյո՞ք գերմանացիները «քրիստոնյաներ» են, քանի որ նրանք դաշնակցում էին թուրքերի հետ: Այն փաստը, որ Գերմանիան բացարձակ միապետական Թուրքիայի դաշնակիցն է, որի տիրապետության ներքո հայերն այնքան շատ տառապել են, դեռ մինչև հիմա հայերին անվստահություն է ներշնչում: Պատերազմի մեղքը նույնպես վերագրվում է Գերմանիայի ազդեցությանը, և դրա հետևանքով իր կրած տնտեսական վնասները հատկապես տհաճ է ընկալում մի ժողովուրդ, որը խիստ մտահոգ է ունեցվածքը պահպանելու և ավելացնելու հարցում: Որպես տարօրինակ, բայց նաև այլ երկրներում ի հայտ եկող փաստ, պետք է նշել նաև այն, որ Գերմանիայում կամ գերմանական միսիաների դաստիարակած հայերի մեջ էլ մենք քիչ բարեկամներ ունենք: Որքան ինձ հայտնի է, այդ առումով բացառություն են միայն Սանասարյան դպրոցի նախկին սաները, այդ դպրոցը մի քանի տարի առաջ տեղափոխել են Սվազ՝ Էրզրումը Ռուսաստանի կողմից բռնագրավելու մտավախությունից: Եվ դա միայն այնքանով, եթե նրանք իրենց կրթությունն ստանում էին Գերմանիայում:

Գերմանացիների հանդեպ համընդհանուր տրամադրությունը պատերազմի սկզբում նվազ բարեկամական էր, բայց վերջին ամիսների ընթացքում նկատելիորեն փոխվել է: Դրան, հավանաբար, մասամբ նպաստել են գերմանացիների ռազմական հաջողությունները բոլոր ռազմաճակատներում և գերմանական սպաների առկայությունը Էրզրումում: Բայց այդ շրջադարձը հատկապես նկատելի դարձավ, երբ այստեղի հայերը վստահորեն հավատացին (դա մոտավորապես մարտի կեսին էր), որ ջարդի բռնկումը հնարավոր եղավ կանխել միայն այստեղի հյուպատոսության առկայության ու գործունեության շնորհիվ: Հայ եպիսկոպոսն այդ առնչությամբ քանիցս շնորհակալություն հայտնեց գեներալ Փոսելդթին և ինձ՝ հայերին պաշտպանելու համար:

Այստեղի իրավիճակի վերաբերյալ, ինչպես այն պատկերանում է հիմա, կարող եմ նշել, որ Էրզրումում և նրան հարակից տարածքներում ապստամբություն չի ենթադրվում, չնայած այստեղ եղած փոքրաքանակ թուրքական զինված ուժերին: Ավելի հեռու՝ ռուսական սահմանին մոտ գտնվող վայրերը վաղուց դատարկվել են իրենց բնակիչներից: Նրանց մի մասը փախել է Ռուսաստան, որտեղ նրանք կկռվեն թուրքերի դեմ ռուսական զորաջոկատների կազմում (ինչպես նաև Վանի մոտ), մասամբ էլ եկել են Էրզրում: Առանձին միջադեպերը, ինչպես հեռավոր գյուղերում զինված դիմադրությունը առգրավումների ժամանակ, այն թուրքերի սպանությունը, ովքեր պահանջել են հանձնել հայ աղջիկներին ու կանանց, հեռագրային ու հեռախոսային գծերի վնասումը, լրտեսությունը, դրանք երևույթներ են, որոնք արտառոց ոչինչ չեն ներկայացնում պատերազմի ժամանակ խառը բնակչությամբ բնակեցված սահմանամերձ շրջանում:

Այստեղի հայերի հանգիստ պահվածքը, ըստ իս, պայմանավորված է.

1. Աշխարհի համընդհանուր իրավիճակի մասին արդեն հիշատակված ավելի լավ կողմնորոշմամբ, որն այլևս չի թողնում հույսը դնել «ռուսների արագ հաղթանակի վրա»:

2. Այստեղի իշխանությունների բանական դիրքորոշմամբ, որն առայժմ խուսափել է ճնշման անընդունելի դեպքերից:

Բացի Պաստերմաջյանի՝ Օտոմանյան բանկի տնօրենի սպանությունից, այստեղ փետրվարին քաղաքական դրդապատճառներով սպանություններ չեն եղել: Վալին՝ Թաքսիմ բեյը, Վանում իր նախկին գործունեությամբ Հայկական հարցի ըմբռնման առումով մեծ փորձ էր ձեռք բերել և չափավոր տեսակետի կողմնակից է՝ հակառակ որոշ ռազմական օղակների, որոնք համարում են, որ եկել է հայերին հաշվեհարդարի ենթարկելու պահը: Կառավարության միջոցառումները նույնպես առայժմ սահմանափակվել են միայն տնային խուզարկումներով և ձերբակալություններով: Ձերբակալվածների մեծ մասին կրկին բաց են թողել, ոմանց կաքսորեն երկրի խորքը: Տնային խուզարկումներով, որքան ինձ հայտնի է, ծանրացուցիչ որևէ նյութ չեն գտնվել: Կառավարության այդպիսի դիրքորոշումը զգալիորեն նպաստում է հայերի հանգստացմանը: Ջարդի բռնկում էլ այստեղ հազիվ թե լինի, քանի որ ռազմաճակատի անհաջողությունները թուրքական զորքերին կստիպեն նահանջել Էրզրում:

Ինչ վերաբերում է Հայկական հարցի վերաբերյալ այստեղի հյուպատոսության դիրքորոշմանը, ապա ես խուսափել եմ ուղղակիորեն միջամտել հայերի օգտին՝ համաձայն Ձերդ գերազանցության հրահանգի: Մերժել եմ նաև դրա վերաբերյալ հայերի՝ ինձ ուղղված բոլոր խնդրանքները: Մյուս կողմից՝ առիթը բաց չի թողել ամենուրեք եռանդագին հանդես գալ «հատուցման» գաղափարի դեմ և մատնանշել եմ ներկա պահին Թուրքիայում ներքին խժդժությունների վատ հետևանքները:

Հյուպատոսության ներկայությունն ու գործունեությունը՝ կապված նրա լրատվական լավ ծառայության հետ, ըստ էության, քիչ բան չի արել այստեղի հայերի ու թուրքերի միջև խաղաղ համակեցության համար:

Շոյքներ-Ռիխտեր

1915 – 05 – 18 – DE – 003

Սկզբնաղբյուրը՝ PA-AA/ Կոստ. դեսպ./169/

Կոնստանդնուպոլսի դեսպան Վանգենհայմին՝ Մամուրեթ ուլ Ազիզի որբանոցի վարիչ Յոհաննես Էհմանից

Մամուրեթ ուլ Ազիզ, 18 մայիսի 1915

Ձերդ գերազանցություն,

Ներքոստորագրյալը ներողություն է խնդրում Ձերդ գերազանցությունից, որ նա մայիսի 5-ի իր զեկուցագրից հետո նորն է ուղարկում: Վիճակի լրջությունն է դա պահանջում:

Եթե հավասարակշռված և մարդասեր գեներալ-նահանգապետը մայիսի 5-ի ելույթից հետո շատ գովելի քայլեր է արել բնակչությանը հանգստացնելու ուղղությամբ, ապա վերջին օրերի տնային խուզարկումներն ու ձերբակալությունները կրկին ստանում են առավել լուրջ բնույթ: Մինչև հիմա Մամ. Ազիզում և շրջակայքում արդեն ձերբակալել են 70-80 հոգի, մինչդեռ վիլայեթի ավելի հեռու շրջաններից ներքոստորագրյալներին ոչ մի ճշգրիտ տեղեկություն չի հասել: Վիճակը **Էգինում և Արաբկիրում** պետք է որ ավելի լուրջ լինի:

Թուրքերն ասում են, ինչ-որ չափով՝ թերևս ճշմարիտ, որ հայերը ռազմաճակատում մասամբ անցել են ռուսների կողմը, որ հայ ժողովուրդը թուրքերի դեմ է, որ հայ պարտիզանները Վանի տարածքում և Պարսկաստանում կռվել են թուրքերի դեմ, որ Դերսիմում հայերը ոգլբաշներին քարոզել են միանալ ռուսներին, որ Դիարբեքիրում ռումբեր են գտել, իսկ **Էգինում**՝ դինամիտ, որ ռուսների ներխուժման դեպքում հայերը երկրի խորքում կանցնեն թշնամու կողմը:

Ըստ այս ամենի, կարելի է հասկանալ քրիստոնյաներին լրիվ զինաթափելու կառավարության խիստ միջոցառումները, մինչդեռ չնայած հանձնելու ձևական հրամանին, թուրքերի ու քրդերի զենքը թողնում են:

Այստեղի քրիստոնյաները՝ առանց ազգության ու դավանական տարբերակման (ձերբակալվածների մեջ կան հայեր և սիրիացիներ, հայ գրիգորյաններ, հռոմեական կաթոլիկներ և բողոքականներ) կրկին շատ ծանր վիճակում են: Որքան էլ նրանք շատ զոջան Վանի հավանական իրադարձությունների համար և ընդունեն ու քաղաքական հանցագործներին խստագույնս պատժելու կառավարության իրավունքն ու պարտա-

կանությունը, այնուամենայնիվ մտածում են, որ չի կարելի իրենց պատասխանատու դարձնել Վանի քրիստոնյաների և այստեղի վիլայեթի մի քանի մեղավորների համար: Տղամարդիկ, կանայք և երեխաները դողում են ձերբակալվածների հարցաքննության ժամանակ երբեմն կիրառվող ծեծի մտքից և հայերի համար հասկանալի եզրակացությունից, որ բոլոր այդ միջոցառումների վերջը համընդհանուր ջարդն է լինելու, առավել ևս՝ այստեղ արդեն լուրեր են շրջանառվում Վանի բնակչության գլխին կախված դաժան հաշվեհարդարի մասին: Մահմեդականների և քրիստոնյաների միջև փոխադարձ վստահությունը գրեթե լիովին չքացել է:

Մեր քաղաքում և շրջակայքում մինչև ցայժմ չի գտնվել շատ քրիստոնյաների անհավատարմության վերաբերյալ որևէ ծանրացուցիչ նյութ: Բայց հնարավոր է, որ ձերբակալվածների մեջ լինեն բազմաթիվ մեղավորներ: Արդյոք համապատասխանո՞ւմ են ճշմարտությանը, թե՞ չափազանցված են Դերսիմի քրդերի մեջ հայերի սադրանքների մասին լուրերը, ներքոստորագրյալն այստեղ չի կարող հաստատել: Համենայնդեպս, նյարդերի գերգրգռման և փոխադարձ վստահության բացակայության պայմաններում շատ հեշտ հնարավոր են չափազանցումները: Էգինում դինամիտ գտնելու մասին տեղեկությունների մեջ էլ, թերևս, կարելի է ինչ-որ բան նվազեցնել, քանի որ տարբեր անձինք մի քիչ տարբեր կերպ են ներկայացնում եղածը:

Կառավարությունը հատկապես խիստ միջոցներ է ձեռնարկում «**Դաշնակ**» և «**Հնչակ**» միությունների անդամների դեմ, որոնք համենայնդեպս ո՛չ թուրքական պետության, ո՛չ էլ հայ ժողովրդի համար պարգև չեն եղել և որոնք՝ սահմանադրական պետության համար ծայրամասերի բնավ ոչ հասուն պայմաններում, թերևս ավելի լավ կլիներ՝ չճանաչեր թուրքական պետության կողմից, և դրանց լուծարումը ուրախությամբ կընդուներ նույնիսկ հայ ժողովրդի մեծ մասը: Բայցևայնպես, երբ նշված միությունները ճանաչվել են պետականորեն, ապա այժմ չէր կարելի այդպիսի մի կուսակցության պատկանելը դրոշմել որպես հանցագործություն, կարծես կարելի է առանձին միությանը կամ առանձին անձին վերագրել պետության համար վտանգավոր կամ խռովարարական միտումներ ու խարդավանքներ:

Նույնիսկ օրենքով արգելված, արդեն տարիներ առաջ ձեռք բերված զենքը, որ հազվադեպ չէ ծայրամասերում ապրող մահմեդականների և քրիստոնյաների մոտ, չէր կարող լինել խռովարարական մտադրությունների նախանշան, քանի որ թուրքական բնակչությունն այդպիսի

զենքի ավելի մեծ քանակություն ունի: Ըստ քրիստոնյաների բավականին հավաստի խոսքերի՝ իրենց զենքը պետք է ծառայեր զուտ ինքնապաշտպանության համար՝ մահմեդական բնակչության հարձակման դեպքում: Բայց, չնայած այդ ամենին, ստացվեց օրենքով թույլատրված կամ արգելված զենքի կուտակում, մասամբ մեծ կարճատեսությունից, կամ էլ գրեթե ուղղակի աններելի հիմարությունից, քանի որ դրանով գրգռեցին մահմեդականներին և վտանգեցին իշխանությունների վստահությունը քրիստոնյաների հանդեպ, առավել ևս, որ ինչպես կառավարությունը, այնպես էլ մահմեդական բնակչությունը կարծես թե հակված են զենք կուտակելու առնչությամբ հայերին վերագրել այլ մտադրություններ: Արդեն 3-4 տարի է, ինչ զենք առնելու եռանդը, իմիջիայլոց, խիստ թուլացել է, եթե ոչ լրիվ դադարել:

Տարբեր քրիստոնեական ուղղությունների ներկայացուցիչներ 3 օր առաջ գեներալ-նահանգապետին հավաստիացրել են իրենց հավատարմությունն ու նվիրվածությունը և խնդրել են երկարաձգել զենք հանձնելու ժամկետը, ինչը նրանց ամենասիրալիր ձևով տրամադրվել է հետագա 8 օրերի համար:

Գեներալ-նահանգապետը, որի բարեհաճության և արդարամտության մեջ ընդհանուր առմամբ համոզված են, հայտնվել է դժվարին կացության մեջ, քանի որ ուժեղ հակահայկական տարրերը հաճույքով ուռճացնում են քրիստոնյաների մեղքը, և, ըստ երևույթին, կողմ են կառավարության ամենավճռական միջոցառումներին: Վալիին պաշտոնից ազատելը, որի հնարավորության մասին բավականին շատ խոսվում էր մոտ մեկ շաբաթ առաջ, թերևս ավելի կվատթարացնի վիճակ. նկատի ունենալով նրա մեծ գործիմացությունն ու գերմանացիների հանդեպ անկեղծ համակրանքը՝ կարելի է ափսոսալ և համառորեն ցանկանալ, որ նա մնա:

Այն, որ այս տարածքի արտասովոր խաղաղ տրամադրված քրիստոնյա բնակչությունը պատերազմն սկսվելուց ի վեր կառավարության դեմ ոչ մի խարդավանք չի մտահղացել, երևում է նաև այն փաստից, որ չնայած կառավարության կոշտ միջոցառումներին (տների ու եկեղեցիների հատակները քանդելը), ոչ մի տեղ չեն եղել մարդկային կուտակումներ կամ բախումներ ոստիկանության կամ թուրք բնակչության հետ և ոչ մի տեղ՝ քաղաքում և նրա մերձակայքում, քրիստոնյաների կողմից զենք չի օգտագործվել:

Համենայնդեպս, վիճակը շատ լուրջ է: Բարձր պաշտոնյաները՝ հատկապես գեներալ-նահանգապետը, հավաստիացնում են, որ մտա-

դիր են պատժել միայն մեղավորներին, և քրիստոնյա հանրության համար ոչ մի վտանգ չկա:

Բայց քանի որ հնարավոր չէ կանխատեսել, թե հետո ինչպես կզարգանան հանգամանքները, խնդրում եմ Ձերդ գերազանցությանը՝ կրկին քայլեր անել թուրքական կենտրոնական կառավարությանն այստեղի իրավիճակը լավագույնս ներկայացնելու համար:

Խորին հարգանքներով՝

Յոհաննես Էհման

1915 – 05 – 18 – DE – 011

Սկզբնաղբյուրը՝ PA-AA/ Կոստ. դեսպ./169
Տպարկած՝ Գ և Հ փաստ. 058 (խմբ.)

Կոստանդնուպոլսի դեսպանությանը՝ Ադանայի հյուպատոս Բյուգեից

Ադանա, 18 մայիսի 1915

Ադանայի վիլայեթի ամբողջ հայ բնակչությունը չափազանց վախեցած է կառավարության ձեռնարկած միջոցառումներից: Հարյուրավոր ընտանիքներ աքսորվում են, բանտերը լեփ-լեցուն են, իսկ այսօր առավոտյան կրկին շատերին մահապատժի ենթարկեցին:

Կառավարությունն իր բարբարոս գործողություններով ակնհայտորեն վնասում է երկրի շահերը: Հատկապես զգալի տուժել է Գերմանական Արևելյան բանկը և ինձ խնդրել է՝ դադարեցնել տալ հայերի տեղահանումը:

[Բյուգե]

[Վանգենհայմի պատասխանը 21.5 հեռագրով]

Որքան էլ ցավալի և ինչ-որ առումով նաև մեր շահերի համար վնասաբեր են հայ բնակչության հալածանքները, այնուամենայնիվ, կառավարության կոշտ միջոցառումներն արդարացվում են սահմանամերձ գավառների վերջին իրադարձություններով, ինչպես օրինակ Վանի ապստամբությունը, և երկրի խորքի այլ միջադեպերով: Եվ դրա համար կայզերական դեսպանությունն առայժմ ի վիճակի չէ արգելել այդ միջոցառումները:

1915 – 05 – 19 – DE – 015

Սկզբնաղբյուրը՝ PA-AA/ Կոստ.դեսպ./168
Տպագրված՝ Գ և Հ փաստ. 060 (խմբ.կրճ.)

Էրզրումի հյուպատոսությանը՝ Կոստանդնուպոլսի դեսպան Վանգենհայմից

Պերա, 19 մայիսի 1915

Պատասխան այս ամսվա 18-ի հեռագրին:

Ներկայացված հանգամանքներում Դուք իրավասու եք այնտեղի գերագույն հրամանատարությանը բողոքել տեղահանված հայերի առնչությամբ, և եթե ռազմական նկատառումներով հնարավոր չէ արգելել այդ միջոցառումները, ապա ազդեք՝ տեղահանված ու անպաշտպան բնակչության հանդեպ մարդասիրական վերաբերմունքի համար:

Բայցևայնպես Ձեր ազդեցությունը պետք է պահել բարեկամական խորհրդի սահմաններում՝ խուսափելով պաշտոնական դեմարշի բնույթից:

[Վանգենհայմ]

1915 – 05 – 20 – DE – 001

Սկզբնաղբյուրը՝ PA-AA/Կոստ. դեսպ./169

Կոստանդնուպոլսի դեսպան Վանգենհայմին՝ Էրզրումում ռեգենտ Շոյբներ-Ռիխտերից

№ 12/ Գաղտնի

Էրզրում, 20 մայիսի, 1915

1.

Հազիվ էի ուղարկել մայիսի 15-ի իմ զեկուցագիրը[8] Վանում հայերի հուզումների և այստեղի իրավիճակի մասին, երբ լուր ստացվեց, որ հրա-

8. Նոյոաթի նշումը. Զեկուցագիրը ներկայացրել է գեներալ ֆոն Բրոնսարտը (Բրոնսարտ ֆոն Շելենդորֆը):

մայված է հայերից ազատել ամբողջ Փասինի դաշտը՝ Էրզրումից դեպի հյուսիս, և նրանց տանել Դերջանի շրջան: Ես անմիջապես տեղեկացա վալիից, թե արդյո՞ք դա ճիշտ է: Վալին հաստատեց լուրը և ավելացրեց, որ նաև ինքն այդ միջոցառմանն այնքան էլ համաձայն չէ, բայց դրա հեղինակը բանակն է, և ինքը պարտավոր է ենթարկվել: Նա խոստացավ կարգադրել, որ տվյալ հրամանն իրականացնելիս հնարավորին չափ մեղմ վարվեն և պաշտպանեն հայերի սեփականությունը: Եղել է նաև հրաման՝ նույնիսկ Էրզրումը դատարկել հայերից, բայց այդ հրամանը չեղյալ համարվեց՝ մինչև հատուկ հրահանգ լինելը: Անձնական տեղեկությունների համաձայն, Փասինի հովիտը դատարկելու վերաբերյալ հրամանը չեղյալ համարելու համար վալին հեռագրել է Կոստանդնուպոլիս, բայց պատասխան է ստացել, որ ինքը պարտավոր է ենթարկվել ռազմական կարգադրություններին:

Ինչպես նշել եմ դրա վերաբերյալ Ձեզ ուղղված իմ հեռագրում, ամբողջ այդ ձեռնարկն ինձ թվում է անիմաստ և անհիմն: Այստեղի հայերից ապստամբության վտանգ չկա: Այդ առումով այստեղի հայերն էապես տարբերվում են Վանի և նրա շրջակայքի հայերից: Նրանք կազմակերպված չեն, նաև զենք չունեն: Բացի այդ՝ 17-48 տարեկան արական սեռի հայ բնակչությունը զորակոչվել է: Նրանք, ովքեր համակրում էին Ռուսաստանին, վաղուց արդեն սահմանի այն կողմում են: Ըստ այդմ՝ այդ միջոցառումը առավելապես վերաբերում է կանանց ու երեխաներին, որոնք հիմա՝ անձրևային շրջանի սկզբում, ստիպված են թողնել իրենց գյուղերը և փոխադրամիջոցների սղության պայմաններում, հիմնականում հետիոտն հասնել 6-8 օրվա ճամփա հեռավորությամբ Դերջանի դաշտավայր: Անասուններին տարել են հետները, բայց նրանց կերապաշարներն ստիպված էին թողնել, ինչն անմիջապես բռնագրավեց կառավարությունը: Իրենց հետ տարած անասունի մի մասը՝ կերի բացակայության պատճառով, անշուշտ կսատկի:

Այսպիսով, եթե տեղահանման միջոցառումն աննպատակ է, ապա իրականացման ձևը՝ անիմաստ: Տեղահանված հայերի զանգվածները՝ սակավաթիվ ժանդարմների ուղեկցությամբ, լայն հոսքով շարժվում են տքնաջանորեն թարմ մշակված դաշտերի միջով կամ էլ ճամբարում են դրանց վրա: Անասուններն արածում են ցանքսերը: Ցանքսի մեծ մասը Էրզրումի շրջակայքում ոչնչացավ այդպես: Դրանից տուժում են ոչ միայն հայերը, այլև թուրքերը: Այստեղի խոշոր կալվածատերերի մեծ

մասը թուրքեր են: Նրանց աշխատողները հայեր են: Նրանց դաշտերը մշակում են հայերը, հիմա՝ հիմնականում կանայք: Արդեն արված ցանքսի մեծ մասը կկորչի աշխատուժի բացակայության պատճառով: Դրա հետևանքը կլինի սովի սպառնալիքը բանակի ու բնակչության համար:

Այսպիսով, տնտեսական պատճառներով, հայերի տեղահանման համար շատ դժգոհ են նաև այստեղի թուրք վաճառականներն ու հողատերերը:

Ես անձամբ ուղևորվեցի քաղաքի շուրջը տեղավորված տարագիրների մոտ: Թշվառությունը, հուսահատությունն ու դառնությունը մեծ է: Կանայք ու երեխաները նետվում էին իմ ձիու առջև ու օգնություն էին հայցում: Այդ մոկտացող թշվառների տեսքը կարեկցանք շարժող ու սահմոկեցուցիչ էր, բայց շատ ավելի սարսափելի էր այն զգացումը, որ չեմ կարող օգնել[9]: Հայ բնակչությունը Գերմանական կայսրության ներկայացուցիչների մեջ տեսնում է իր միակ պաշտպանին և նրանից օգնություն է ակնկալում[10]:

Միակ բանը, որ ես կարողացա անել, դրդեցի եպիսկոպոսին և Էրզրումի բնակիչներին հաց հավաքել տեղահանվածների համար, ովքեր սնունդ չունեն: Դա արվեց և դեռ կշարունակվի: Բայց արգելք կա, որ ոչ ոք առանց թույլտվության, ինչը հայերին չի տրվում, իրավունք չունի քաղաքից դուրս գալ: Դրա հետևանքով, քանի որ այդ արգելքն ինձ և իմ ծառայողների համար համարում եմ որպես գոյություն չունեցող, հյուպատոսության ֆուրգոններով այդ հացն ամեն օր ուղարկում եմ 10 կմ հեռու, որտեղ այն բաժանում են տարագիրներից ամենաթշվառներին[11]:

Հենց նոր տեղեկություն ստացա, որ քաղաքում լուրեր են տարածում (թուրքերը), թե հայերի տեղահանման միջոցառումները ձեռնարկել է թուրքական կառավարությունը՝ **գերմանացիների խորհրդով**: Ես անմիջապես նամակագրի հանդես կգամ այդ ասեկոսեների դեմ:

Ինձ թվում է՝ բացառված չէ, որ այս տեղահանումն ու կառավարության միջոցառումները, որոնց հետևանքը պետք է լինի տնտեսական անկումն ու հայերի մի մասի բնաջնջումը, հայերին կարող է մղել, թեկուզ

9. Բրոնսարտ ֆոն Շելենդորֆի նշումը լուսանցքում: Առավել սարսափելի էր հայերի կողմից ավելի քան 1000 թուրքերի սպանությունը Զեյթունի մերձակայքում:

10. Բրոնսարտ ֆոն Շելենդորֆի նշումը լուսանցքում: Մենք չենք կարող օգնել ընդդեմ թուրքական կառավարության վտանգավոր խողովության ներքաշված բնակչությանը:

11. Բրոնսարտ ֆոն Շելենդորֆի նշումը լուսանցքում: Ավելի լավ կլիներ՝ հյուպատոսը հացն ուղարկեր թուրք աղքատներին:

անհեռանկար, հուսահատական քայլերի, որոնք էլ իրենց հերթին, իհարկե, պատճառ կդառնան համընդհանուր կոտորածի:

Եթե այդպիսի քայլ չհաջորդի, ապա դրանով այստեղի հայերը կապացուցեն, որ իրենք Թուրքիայի ամենահնազանդ ու ամենախաղաղասեր հպատակներն են:

Շոյբներ-Ռիխտեր

1915 – 05 – 22 – DE – 001

Սկզբնաղբյուրը՝ PA-AA/Կոստ.դեսպ./169

Կոստանդնուպոլսի դեսպան Վանգենհայմին՝ Էրզրումում ռեգենտ Շոյբներ-Ռիխտերից

№ 13

Էրզրում, 22 մայիսի 1915

Գաղտնի

Ձերդ գերազանցություն,

Մայիսի 20-ի № 12 իմ զեկուցման վերաբերյալ հայտնում եմ նաև հետևյալը.

Հայերի լքած գյուղերը գրավում են մուհաջիրները (ռազմաճակատի գյուղերից եկած թուրք վտարանդիները): Հենց նրանք էլ շատ տեղերում թալանում են հայերի սեփականությունը:

Կարելի է ենթադրել, որ ի սկզբանե տեղահանման նպատակը երևի թե դա է եղել՝ տեղ ճարել այդ վտարանդիների համար:

Արտաքսված հայերին ուղեկցող ժանդարմների պահվածքը, չխոսելով հայ կանանց անարգման ու բռնաբարման մասին, որոնք այստեղի համար ոչ մի արտառոց երևույթ չեն, այլ դեպքերում էլ չ նպաստում տարագիրների տառապանքները թեթևացնելուն: Ժանդարմների պահվածքը թշնամական պետությունների հպատակների հանդեպ էլ չէր կարող լինել ավելի դաժան:

Կցում եմ վեց գյուղերի քահանաների ստորագրած և եպիսկոպոսին հղած նամակներից մեկի թարգմանությունը, որին էլ հենց նա տեղյակ է պահել նաև վալիին:

Հյուպատոսության միջոցով հայ տարագիրներին հաց բաժանելը,

հակառակ սպասման, մեծ և լավ տպավորություն թողեց հայ բնակչության վրա: Կարծում եմ, որ դրանով էլ, թեպետ չկար այդպիսի մտադրություն, ձեռք է բերվել քաղաքական բարենպաստ արդյունք: Իշխանություններն ինձ համար ոչ մի արգելք չեն ստեղծել:

Շոյբներ-Ռիխտեր

Հավելված

Էրզրումի սրբազան եպիսկոպոս Սմբատին

Սուրբ հայր,

Դարեր շարունակ մենք հավատարմորեն ծառայել ենք Օսմանյան հզոր կայսրության հովանու ներքո: Նաև վերջին զորակոչի ժամանակ մենք հնազանդորեն հետևել ենք նրա հրամաններին՝ տալով զինվորներ, իսկ առգրավման ժամանակ՝ ամեն բան, ինչ ունեցել ենք՝ հացահատիկ, գարի, եզներ, ոչխարներ, կարագ, պանիր և այլն: Պատահել է նաև այնպես, որ ստանձնել ենք մեր թուրք հարևանների առգրավման հարկերը և ինքներս ենք ապաստան տվել նրանց հյուրերին՝ ռազմական գոտուց եկած թուրք վտարանդիներին, որոնք որոշ ժամանակ տեղավորվել են հայերի մոտ և սրտանց ընդունվել: Բոլոր այդ գոհաբերությունների համար մենք ոչինչ չենք պահանջել: Թուրք սպաները գովասանքով էին արտահայտվում մեր՝ հայերիս ցուցաբերած հյուրասիրության մասին և չէին ուզում մնալ թուրքերի տանը: Այդ ամենը մենք արել ենք սիրով և կամովին՝ հանուն այդ վաթանի (հայրենիքի) սիրո, իսկ ի՞նչ ենք շահել դրանով: Գաղթ, հալածանք, թալան, ահա թե ինչն է խոցում մեզ՝ մինչև մեր հոգու խորքը: Մայիսյան մի երեկո՝ մայրամուտին, եկան գուժկանները և հայտնեցին մեր տեղահանման հրամանը: Երկու ժամ անց մենք բոլորս՝ ծերունիներ ու երեխաներ, հարսներ ու աղջիկներ, աղքատներ ու հաշմանդամներ արդեն դրսում էինք՝ բաց երկնքի տակ և ողբում էինք մեր դառը ճակատագիրը: Վաղ առավոտյան մենք տեսանք մեր տները գյուղում գտնվող զինվորներից ու մեր հարևաններից թալանված: Նրանք դեռ ճամբարել էին իրենց գյուղերի մոտերքում: Մենք չէինք համարձակվում կրկին մտնել մեր տները, մեզնից հազիվ մի քանի ընտանիքի հաջողվեց մի քիչ ուտելիք և ծածկոցներ բերել, և այդպես մենք հեռացանք մեր գյուղերից՝ ժանդարմների նողկալի անեծքների, հայհոյանք-

ների և հարվածների տակ: Ինչպես արդեն ասվեց, մեզ լրիվ անսպասելի քշեցին մեր տներից, թթված խմորը դեռ տաշտերի մեջ էր, իսկ մենք ահա մնացինք առանց հացի, քանի որ մեզ արգելված էր ճանապարհին մտնել գյուղերը: Մենք սոված ենք, սոված են նաև մեր անասունները, մեր հանգուցյալները ճանապարհներին գրեթե անթաղ են մնում, իսկ մեզ անընդհատ առաջ են քշում ու դեռ ճանապարհին էլ մենք մատնված ենք թալանի: Ո՞վ գիտե, թե ուր ենք մենք գնում, երևի թե՝ սև գերեզման: Սուրբ հայր, մենք չգիտենք՝ ինչ անել, ընդունե՞նք թուրք դառնալու ժանդարմների առաջարկը, որպեսզի այդպիսով, ինչպես նրանք են ուզում հավատացնել, փրկենք մեզ այս տառապանքից:

Դրանից զերծ չեն մնացել նաև նրանք, ովքեր դիմել են այդ քայլին, ինչի մասին Դուք կարող եք լսել Հինքիք գյուղում: Մենք լսել ենք, որ ուզում են մեզանից բաժանել 16-55 տարեկան զինապարտներին, այդ դեպքում ո՞վ կպաշտպանի մեր պատիվը Օտար վայրեր, օտար տեղեր: Ի՞նչ է լինելու մեզ: Հաց բաժանող գերմանացիների միջոցով սույն նամակն ուղարկում ենք Ձերդ Սրբությանը, որպեսզի Դուք կարողանաք դառնալ մեր տառապանքների թարգմանը: Համբուրելով Ձեր սուրբ ձեռքը, մնում ենք Ձեր հնազանդ որդիները:

7 մայիսի 1915

(Ստորագրվածների չթարգմանված անունները)

Հինքիքի համար, Կզլքիլիսի համար, Ձիթողի համար, Թրանջի համար, Դինարիկոմի համար[12], կաթոլիկ հայերի համար:

Դաշտավայրի գյուղերի բոլոր հայերին աքսորել են: Պատահող անցորդներն ու թուրք գյուղացիները մեզնից խլում են վերջին մնացորդները: Եղան նաև կանանց ու աղջիկների բռնաբարման դեպքեր:

Ստորագրություն. նույն անձանց

[Վանգենհայմի պատասխանը 6.6]

Մայիսի 21-ի և 23-ի №12 և №13 զեկուցագրերի կապակցությամբ:

Ինչպես այլ առիթով Բարձր Դուռը հայտնել է այստեղ, հաստատվել է, որ հայերի խռովարարական շարժումը Անատոլիայի սահմանամերձ գավառներում, որոնք ի վերջո հասցրին Վանի հայտնի դեպքերին, հայ հեղափոխականների գործն է, որոնց նստավայրը հիմա Փարիզում է,

12. Թվարկվում է 5 գյուղի անուն (6-ի փոխարեն) (ծան. թարգմ.):

Լոնդոնում ու Թիֆլիսում, ընդ որում նրանց աջակցում է Ռուսաստանը: Ի դեպ վկայակոչվում է հետևյալը.

Պատերազմն սկսվելուց հետո թուրքական նախկին պատգամավոր Գարեգին Պաստերմաջյանն ստանձնել է մի հրոսակախմբի ղեկավարումը, որը կազմավորել էին հայկական կուսակցությունների առաջնորդներ Դրոն ու Խեչոն, իսկ ռուսները մատակարարել են զենքը: Բայազետի գրավումից հետո այն ավերել է բոլոր մահմեդական գյուղերը, որոնց միջով անցել է իր ռազմարշավի ժամանակ և կոտորել է նրանց բնակիչներին: Այդ վայրերից ռուսների նահանջի ժամանակ նա վիրավորվել է, իսկ ոմն Սուրեն՝ դաշնակների պատգամավորը Էրզրումից, զոհվել է: Ներկա պահին նա իր հրոսակախմբի հետ կովկասյան սահմանի մոտ է: «Ասպարեզ» թերթը՝ դաշնակների օրգանը Ամերիկայում, ներկայացրել է նրա լուսանկարը, որտեղ նա պատկերված է Դրոյի ու Խեչոյի հետ, թե ինչպես նրանք պատերազմ գնալուց առաջ հանդիսավորությամբ երդվում են:

Այս և այլ իրադարձություններ, ինչպես օր. Էվերեքում (Կայզերիի մոտ), Դիարբեքիրում, Էգինում և այլուր գտնված ռումբերն ու զենքերը արդարացնում են հայերի դեմ ուղղված իշխանությունների կոշտ քայլերը, հատկապես Էրզրումում և ներում են մահմեդական քաղաքացիական բնակչության պատահական օրինազանցությունները: Պետք է ավելացնեմ նաև, որ այս օրերին երկու պատգամավոր էլ ձերբակալված են, Վարդգես (Էրզրում) և Զոհրապ էֆենդին (Ստամբուլ): Նրանց համարում են խիստ կասկածելի՝ կապված Վանի ապստամբության հետ:

Վերոնշյալ տեղեկությունները բացառապես Ձեր անձնական տեղյակության համար են: Ձերդ բարձրություն, այս ամենից Դուք կարող եք եզրակացնել, որ հայերի պահվածքը գնալով ավելի է դժվարացնում մեր գործը՝ նրանց օգտին հանդես գալու համար, չնայած մեր շահերին և նրանց հանդեպ մեր կարեկցանքին, ովքեր անմեղ լինելով հանդերձ, ստիպված են տառապել:

1915 – 05 – 27 – DE – 001

Սկզբնաղբյուրը՝ PA-AA/R14086
Տպագրված՝ Գ և Հ փաստ. 047 (խմբ. կրճ.)

Ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին՝ Կոստանդնուպոլսի դեսպան Վանգենհայմից

Նամակին կից 3 հավելված

№ 324

Պերա, 27 մայիսի 1915

Հավելված 1

Հալեպ, 10 մայիսի 1915

K №55/Մ № 1000

Ապրիլի 12-ի №39 (№764) իմ զեկուցագրի կապակցությամբ կից հավելվածում խոնարհաբար Ձերդ գերազանցությանն եմ փոխանցում հազիվ այսօր ինձ հասած միսիոներ Բլանկի (Մարաշից) ապրիլի 14-ին պարոն Շուխարդին՝ Մայնի Ֆրանկֆուրտի՝«Արևելքում հանուն քրիստոնեական բարեսիրության» գերմանական օգնության միության ղեկավարին, գրած նամակի պատճենը, ինչպես նաև ապրիլի 15-ին ինձ գրված և միաժամանակ ստացված նամակից մի հատված: Ես Մարաշից դուրս էի եկել ապրիլի 8-ին: Նամակները պարզ պատկերացում են տալիս, թե ինչպես են դեպքերը զարգացել դրան հաջորդած շաբաթում: Այն ժամանակվանից ի վեր, ըստ այլ աղբյուրի տվյալների, տեղահանումները Զեյթունից և հարակից գյուղերից ավելի մեծ չափեր են ընդունել: Բացի այդ, ըստ Բլանկի՝ այս ամսվա 9-ի հեռագրի, տեղահանումներն սկսվել են նաև Մարաշում: Աքսորյալների անշարժ գույքը գնահատում է հատուկ այդ նպատակով ստեղծված հանձնաժողովը և պետք է նրանց հատուցեն: Բայց պետք է սպասել, թե արդյոք կառավարության այդ մտահղացումը կիրականացվի՞: Վերաբնակեցումը կլինի Կոնիայի վիլայեթում, ըստ երևույթին՝ Տուրուզում: Բայց եթե շարունակեն վարվել այնպես, ինչպես նկարագրում է Բլանկը, ապա տարագիրները, եթե չզրկվեն իրենց կյանքից, ապա տեղ կհասնեն թշվառ ու հիվանդ և այլևս ի վիճակի չեն լինի տնտեսապես ոտքի կանգնելու: Տեղահանվածների փոխարեն Զեյթունում և շրջակայքում կբնակեցվեն Բալկաններից եկած մահմեդական փախստականները:

Այդ ընթացքում ես շարունակեցի տեղեկություններ հավաքել, թե ինչի վրա է հիմնված հայերի խռովության վերաբերյալ կառավարության տեսակետը: Բայց ինձ միայն **մեկ** փաստ հայտնի դարձավ: Այսինքն՝ հայերի հետ սերտ կապ ունեցող և նրանց գործերին լավատեղյակ մի չեզոք անձ ինձ պատմեց. Դյորթյոլի բնակիչները սկզբում նամակներ են ուղարկել Զեյթուն, որ ապստամբության համար հարմար պահ է ստեղծվել: Կապ է ստեղծվել անգլիական ռազմանավերի հետ: Թե արդյոք նամակները հասել են նշանակված վայր, իմ երաշխավորին հայտնի չէ: Ուրեմն դրանով կարող էր ապացուցվել ապստամբության կոչը, եթե ընդհանրապես նրա երաշխավորը լավատեղյակ է: Թե ինչպես են հասցեատերերը վերաբերվել այդ կոչին, հայտնի չէ: Եթե անգլիական բարեգործական միության անդամների ուղերձները, որոնք պետք է լինեին Եգիպտոսում, ծառայել են անգլիացիների նպատակներին, ապա արդարացի կլիներ, եթե թուրքական կողմը մինչև հասցեատերերին պատժելը ներկայացներ նրանց անհավատարիմ պահվածքին և անհավատարիմ գործողություններին վերաբերող ապացույցներ: Բայց դա բացարձակ անհրաժեշտ չեն համարել: Այլ դեպքերում էլ կարծես թե կառավարությունը խռովությունը դիտել է խոշոր ապացույցով: Ես համոզված եմ, որ տեղահանվածների գերակշռող մասը տառապում է՝ լինելով անմեղ: Բարեգործական միության անդամները միշտ բացահայտ են գործել կառավարության դեմ: Դրա համար նրանք պետք է հիմա մեղքերը քավեն: Կառավարությունն էլ կարծես սևեռվել է միջնադարյան տեսակետին, երբ առանձին մարդու կամ մարդակային խմբի արարքի համար պատասխանատու է դառնում մի ամբողջ ազգ: Քանի որ նրանց միջոցառումները նպատակաուղղված են բոլոր շրջանների հայերի բնաջնջմանը: Բոլոր այն հայերը, ովքեր ունեն կարողություն, կրթություն կամ ազդեցություն, պետք է վերացվեն, որպեսզի մնա միայն առանց առաջնորդի հոտը: Դա վտանգ է պարունակում թաղել այն վստահությունը, որ հայերի համար ապագայում հնարավոր կլինի համակերպվել նման իրավիճակին և դրանով իսկ կստեղծվի խառնաշփոթության համար հիմք:

Կոստանդնուպոլսի կայզերական դեսպանությանն եմ ուղարկում Բլանկի՝ Շուխարդին ուղղված նամակի բնօրինակը և խոնարհաբար Ձեր հայեցողությանն եմ թողնում որոշել, թե արդյոք հնարավոր է և ինչ պայմաններում այն հանձնել հասցեատիրոջը:

Նույն զեկուցագիրը կուղարկվի նաև այնտեղ[13]:

Ռյոսլեր

Հավելված 2

Հատված Մարաշում միսիոներ Բլանկի՝ պարոն հյուպատոս Ռյոսլերին ուղղված ապրիլի 15-ի նամակից:

13. Փաստաթղթերում կա միայն Ռյոսլերի զեկուցագիրը՝ ուղղված Հոլվեգին

...Եթե Դուք կարողանայիք տեսնել, թե ի՜նչ վիճակում են Զեյթունից եկող մարդիկ. հնարավոր չէ նայել այդ թշվառությանը, և դեռ հետո տեսնում ես, թե ինչ սատանայական ուրախություն են դրսևորում թուրքերը, ու դեռ գոհ չեն կատարվածից և ավելի շատ կուզենային տեսնել, թե ինչպես է մարդկային արյուն հեղվում: Մարդիկ, ովքեր եկել են, վերածվել են մուրացիկների և, ինչպես երևում է, նրանք զրկվել են իրենց ունեցվածքից, ամեն դեպքում ամեն ինչ բռնագրավել է կառավարությունը: Արդյոք հնարավոր չէ՞ դեսպանության միջոցով ինչ-որ բան անել դրա դեմ: Քանի որ, լինելով Թուրքիայի դաշնակիցը, չի կարելի խրախուսել այդպիսի գործելակերպը: Ինչպես վերջերս ասել եմ Ձեզ, կառավարությունն էլ է ինչ-որ չափով մեղավոր, որ Զեյթունում հաճախ այդպիսի անկարգություններ են լինում: Եթե տրված խոստումները կատարվեին, ապա մեծ քայլ արված կլիներ մարդկանց վստահությունը շահելու համար: Այս անգամ էլ կարծես ճշմարտությունը չի ասվել նրանց, ում տեղահանել են Զեյթունից, և ինչպես իմացա հենց այդ մարդկանցից, նրանց ասվել է, թե իրենց Մարաշ են տանելու և այն հույսով, որ այստեղ են մնալու, նրանք լուռումունջ կրել են ամեն ինչ: Երբ նրանք հասան այստեղ, նրանց խցկեցին մի իջևանատուն և մեկ օր հանգստանալուց հետո նրանց կրկին քշեցին դուրս: Երբ նրանք ճամփա ընկան, սեփական աչքերով տեսա, թե ինչպես էին զինվորներն առաջ քշում այդ մարդկանց՝ խփելով կողերին, թեպետ այնքան խիտ էին գնում, որ հնարավոր չէր ավելի կիպ քայլել, ընդ որում՝ զինվորներն իրար քաջալերում էին: Ստեղծվում էր ճիշտ այնպիսի տպավորություն, կարծես հոտ էին քշում: Համենայնդեպս ես ուրախ էի այդ մարդկանց համար, ովքեր կարողանում էին լուռ ու համբերատար տանել այդ ամենը...

[Բլանկ]

Հավելված 3

«Արևելքում հանուն քրիստոնեական բարեսիրության» գերմանական օգնության միություն (գրանցված միություն)

Կայան Մարաշ, 14 ապրիլի 1915

Շատ հարգելի պարոն Շուխարդ,

Այսօր ես ուզում եմ Ձեզ կրկին հայտնել ապրիլի 9-ից մինչև 13-ը կատարվածի մասին և հուսով եմ, որ կհաջողվի նամակը Ձեզ ուղարկել հյուպատոսի և դեսպանության միջնորդությամբ:

Պարոն հյուպատոսի մեզ լքելուց հետո այստեղ կատարվել են որոշ դեպքեր, որոնք իսկապես դժվար է նկարագրել: Մենք միշտ հուսով էինք, որ Զեյթունի դեպքերը և դրանց հետ կապված դաժանությունները շուտով կավարտվեն, բայց առայսօր դա այդպես չէ:

Ապրիլի 10-ին մեզ կրկին այցելեց պարոն մայոր կոմս Վոլֆսքելը: Նա Ֆահրի փաշայի հետ ժամանեց Դամասկոսից: Պարոն մայորն ապրում է մեզ մոտ՝ հիվանդանոցում: Ամսի 11-ին Ֆահրի փաշային հրավիրեցինք ճաշի, որի շնորհիվ ես ավելի շատ հնարավորություն ստացա իմ մտահոգությունները նրան ներկայացնելու համար, հատկապես Զեյթունի առնչությամբ: Պարոն մայորը նույնպես մանրամասնորեն տեղեկացավ այդ գործին և հետո ներկայացրեց Ֆահրի փաշային: Երեկ՝ ապրիլի 12-ին[14], նրանք երկուսով ուղևորվեցին Զեյթուն, և մենք վաղը սպասում ենք նրանց վերադարձին: Փաշան, ըստ երևույթին, այնքան էլ գոհ չէ ներկայացված փաստերից: Համենայնդեպս, ես կսպասեմ նրա վերադարձին, հետո միայն կորոշեմ:

Այս օրերին շատ բաներ են կատարվել, որոնք այլևս չեն կարող մարդկային համարվել: Ապրիլի 7-ից լույս 8-ի գիշերը Հակոբ աղա Քեհոլաքյանին չորս զինվորներ գիշերը ժամը 10.30-ին հանել են տեղաշորից այն պատրվակով, իբր ռազմական դատարանի նախագահն ուզում է նրա տեսնել: Տեսել են, որ չի շտապում, սպառնացել են գնդակահարել նրան: Նույն մարդկանց հետ նա ի վերջո գնացել է, բայց նրան ոչ թե ռազմական դատարան են տարել, այլ քաղաքից դուրս: Այնտեղ նրան շրջապատել են և պահանջել են 300 լիրա, այլապես նրան կսպանեն: Տեսնելով, որ ոչինչ չի օգնում, նրանք կանչել են այն սպային, ով, ըստ երևույթին, նրանց ուղարկել է: Երբ վերջինս եկել է, սկսել է զինվորներին հայհոյել իր իմացած «ամենագեղեցիկ» բառերով և ասել է. «Մի՞թե իմ ուզածը սա էր, ես նրա հարազատներից մեկին էի ուզում», որին զինվորները, բնականաբար, ոչինչ չեն հակաճառել, բայց ինքնըստինքյան պարզ է եղել, թե ում պետք է նրանք բերեին: Երբ Հակոբ աղան ասել է, որ այդ գործը, որպես պառլամենտի պատգամավոր, անհետևանք չի թողնի, նա սկսել է ներողություն խնդրել և համբուրել, որքան կարող էր, իբր դա թյուրիմացություն է և իր ուզածը նա չի եղել, որ նրան սխալմամբ

14. Պետք է որ 13-ին լինի (ծան. թարգմ.):

են այստեղ բերել և հիմա կուզենար բոլոր հնարավոր պատիվները մատուցել, նույնիսկ հրամայում է բերել իր ձին և դրանով ու զինվորների ուղեկցությամբ, որոնք նրան մինչ այդ բերել էին, տուն է ուղարկում: Ճանապարհին մի զինվորը մյուսին ասել է. «Մենք գործել ենք ըստ հրամանի, բայց եթե հիմա ինչ-որ բան պատահի, ամեն ինչ մեր գլխին կկոտրվի»: Այդ գործը ձեռնարկած սպան եղել է կապիտան: Դա նրա համար վերջին գիշերն էր Մարաշում, քանի որ հաջորդ օրը առավոտյան, մինչև այդ դեպքի հայտնի դառնալը նա իր զինվորների հետ ուղևորվել է Այնթապ: Հակոբ աղան դիմել է ռազմական դատարան, բայց առայսօր ոչինչ հնարավոր չէ պարզել այդ մասին: Ակնհայտ է, որ դա եղել է փող շորթելու փորձ, ինչը սակայն չի հաջողվել:

Վերջին օրերին ուրիշ դեպքեր էլ եղան: Ապրիլի 11-ին Զեյթունից Մարաշ ժամանեց 25 ընտանիք՝ ողբալի վիճակում: Երբ նրանք մոտեցան քաղաքին, իսլամականները Մարաշից գնացին ընդառաջ, և նրանց համար սատանայական խրախճանք էր՝ ատելի զեյթունցիներին տեսնել բռնված. չզլացան նրանց բաժին ընկած տառապանքներին հավելել վիրավորանքներ ու հայհոյանքներ, իսկ նրանք ստիպված էին այդ ամենը լուռումունջ տանել: Բոլոր կողմերից քշելով՝ նրանց բերեցին մի իջևանատուն, որտեղ պահում էին խիստ հսկողությամբ: Ոչ ոք իրավունք չուներ նրանց մոտենալ՝ գոնե մի քիչ սննդամթերք տալու, եթե նույնիսկ մերձավոր հարազատներ էին: Նրանք իսկապես ոչինչ չունեին իրենց մոտ, իսկ թուրքերի համար ոչինչ չարժեին: Երբ մինչ այդ կառավարության հրամանով պետք է կրակեին փողոցային շների մի մասի վրա, շատ թուրքեր այդ շներից արագորեն տարան իրենց տները, որովհետև մեղք էին համարում, իսկ մարդ սպանելը՝ դրան հակառակ, ոչ թե մեղք է, այլ վաստակ: Քրիստոնյաները շատ թուրքերի համար ավելի քիչ արժեն, քան շները: Այդ իջևանատանը իրար սեղմված նրանք անցկացրին մի ցերեկ ու մի գիշեր: Նրանց սնունդը հիմնականում թուրքերի ծաղրն էր: Նրանք ստիպված էին իրենց ունեցվածքը թողնել Զեյթունում, և ես հաստատ գիտեմ, որ նրանց տները իշխանությունը կողպել է: Ինձ թվում է, որ այդ գործով զբաղված չինովնիկներն այնքան էլ վստահ չեն իրենց արածին և երևի նրանք, ում աքսորում են, մեկ ուրիշի միջոցով կարող են կրկին իրենց տները վերադառնալ, կամ էլ դա անում են, որպեսզի այդ գործից հետո հարստանան: Ըստ իմ փորձի, դրանք են պատճառները: Մեր քույրերը՝ Բեթելից, փորձել են այդ թշվառներին մի քիչ ուտելիք տալ, ինչը նրանց հաջողվել է միայն մեծ ջանքերի շնորհիվ: Ժամանածների մեջ չկար ոչ մեկը նրանցից, ովքեր ապստամբել են կառավարության դեմ, այլ բոլորը լավագույն ու ազդեցիկ մարդիկ էին: Երկրորդ գիշերը, մինչև նրանց ճամփա ընկնելը, մի կին ծննդաբերեց, և չնայած շատ խնդրանքներին, նրան չթույլատրվեց գոնե մեկ օր մնալ, և հաջորդ օրը առանց խնայվելու, նա պետք է գնար բոլորի հետ: Թուրքերը սատանայական խրախճանք են ապրում, երբ այդ թշվառներին տեսնում են ոչխարի հոտի նման իրար սեղմված՝ քիրտ զինվորների հարվածների տակ: Որպես հրաժեշտ Մարաշին, Բիմբաշի Սաիդ բեյն այնուհետև ևս մեկ հատուկ հաղթանակ ավելացրեց: Նա ասաց զինվորներին, ովքեր պետք է տեղափոխեին տարագիրներին, որ նրանք պարտավոր են գիտակցել, թե ինչպիսի վատ մարդիկ են իրենց առջև, քանի որ յուրաքանչյուրը կուզենար, թե դա հնարավոր լիներ, սպանել գոնե ևս մեկ իսլամականի, և եթե որևէ մեկը դիմադրի կամ ուզենա փախչել, ապա պետք է անմիջապես գնդակահարեն, այլապես նրանք իրենց հետ այդպես կվարվեն, իսկ վերջում զինվորներին տվեց այդ թշվառների կանանց տնօրինելու իրավունք՝ ասելով, որ կարող են նրանց հետ վարվել, ինչպես որ կամենան: Նա իր կատաղությունը թափեց այդ խեղճերի վրա, և նրա շուրջը կանգնած իսլամականները բավականին ուրախացան դրա վրա և նա հպարտացավ այն հերոսությամբ, որն իր կարծիքով, գործեց: Այդ 25 ընտանիքին, ինչպես ինձ հասկացրին կառավարությունից, կտեղափոխեն Կոնիայի տարածք և այնտեղ կբնակեցնեն:

Ապրիլի 13-ին նոր թափոր եկավ Զեյթունից: Այս անգամ իսլամականներն ավելի զուսպ էին, քանի որ առաջին թափորի ժամանման ընթացքում նրանց պահվածքը որոշ թուրքերի հավանությանը չարժանացավ: Ոմանք ինձ ուղղակի ասացին, որ այդ խեղճերի հետ այդպես վարվելն անարդարացի է, բայց նաև ասում էին, որ իրենք դրա դեմ ոչինչ չեն կարող անել: Սրանց էլ տարան իջևանատուն: Այս անգամ նրանց համար որոշ ուտելիք ճարելը մի քիչ հեշտ էր, հսկիչներն այդքան դաժան չէին: Երբ լսեցի, թե ում են այսօր բերել, դա ինձ ցավ պատճառեց, քանի որ նրանց մեջ կային մարդիկ, ովքեր ամեն ինչ արել էին, որպեսզի կատարեն կառավարության կամքը, և չնայած դրան՝ պետք է աքսորվեն, իսկ ինչո՞ւ: Քանի որ նրանք ունևոր են: Դա իմ համոզմունքն է: Նրանց մեջ էլ չկային էշքիներներ[15]: Այսօր առավոտյան ես այլևս չդիմացա և ցան-կացա նայել, թե արդյոք պարետը էլի կգործածի է այնպիսի արտահայտություններ, երբ արդեն նրանց կհանձնի հետագա տեղափոխման: Ես նրան բավա-

15. Մի պատճենում էշքիները թարգմանված է «ավազակ» բառով:

կան մոտ կանգնեցի՝ ներկայացած թուրքերի մեջ, ովքեր եկել էին որպես դիտողներ: Երբ նա ինձ տեսավ, հայացքով ինձ չափեց ոտից գլուխ, և ես հասկացա, որ չէր ցանկանա ինձ այդտեղ տեսնել: Նա կանգ առավ և իմ ներկայության շնորհիվ այս անգամ չկարողացավ ասել իր անաստված բարեմաղթանքները: Նա միայն մի սպայի հաղորդեց իր ասելիքը և հեռացավ: Բայց կարելի էր նկատել, որ ոչ մի լավ բան չի ասել, համենայնդեպս այն բանի համար, որ չկարողացավ ուզածն ասել: Նա ուղղակի վախկոտ է, երբ ինչ-որ մեկին տեսնելով մտածում է, թե կարող է իր խոսքերը փոխանցվեն:

Ապրիլի 14-ին նաև Ֆուտնուսից մարդկանց մի թափոր բերեցին, որոնց նույնպես պետք է աքսորեն: Պատճառն այսպիսին է: Ֆուտնուսից Չուխուր-Հիսար տանող ճանապարհին ֆուտնուսցի 3 հոգի մի թուրք էին սպանել: Ֆուտնուսցիներն անմիջապես իշխանություններին էին հանձնել սպանողներին, բայց դրանով նրանց չեն խնայել և հիմա անմեղ մարդկանց աքսորում են ինչպես պատանդների: Չկա ո՛չ իրավունք, ո՛չ էլ արդարություն:

15.04.15: Այսօր էլ շատ մարդիկ եկան Զեյթունից: Շատերը ոտքով՝ երեխաներին շալակած: Ողբալի պատկեր է, բայց Մարաշի թուրքերին մեջ անհնար է կարեկցանք գտնել: Շատերն առանց կոշիկի են: Ի՞նչ ասես դրա համար: Պետք է լռել և ամեն ինչ խեղդել ներսում, քանի որ չկա որևէ մեկը, որ քեզ լսի: Ե՞րբ կգա այն ժամանակը, երբ այստեղ կդատեն ըստ արդարության:

Ջերմ ողջույններով՝ [Կարլ Բլանկ]

1915 – 05 – 29 – DE – 001

Սկզբնաղբյուրը՝ PA-AA/ Կոստ. դեսպ./ 169

Կոստանդնուպոլսի դեսպանությանը՝ Ալեքսանդրետի հյուպատոս Հոֆմանից

№ 551

Ալեքսանդրետ, 29 մայիսի 1915

Պատճեն

Հայ բնակչության մի մասն արդեն նախօրոք տեղափոխվել է այստեղից, երբ լուր է տարածվել մոտերքում գտնվող Դյորթյոլ բնակավայրի ամբողջ հայ բնակչությանն աքսորելու մասն, ըստ լուրերի՝ Հալեպից դեպի հարավ մի տարածք (!): Հայերը պարզորոշ հասկանում են, որ կառավարությունն ուզում է, քանի դեռ չկան նախկին պաշտպանները, առիթն օգտագործել իրենց հետ դաժան հաշվեհարդարի համար: Ես հենց Ֆահրի փաշայի բերանից եմ լսել, որ այս անգամ չպետք է խորշեն ոչ դաժանությունից, ոչ էլ անարդարությունից: Նպատակը կարծես թե այս անգամ արդարացնում է միջոցները: Թե ինչպիսին է այս պարագայում հայերի վերաբերմունքը Գերմանիայի հանդեպ, կարիք չկա ընդգծելու:

[Հոֆման]

1915 – 06 – 02 – DE – 001

Սկզբնաղբյուրը՝ PA-AA/ Կոստ. դեսպ. / 168

Կոստանդնուպոլսի դեսպանությանը՝ Էրզրումում ռեգենտ Շոյբներ-Ռիխտերից

№ 6

Էրզրում, 2 հունիսի 1915

№ 1 և № 5 հեռագրերի կապակցությամբ

Հայկական բնակչությունն, իմ անձում, որպես քրիստոնեական տերության միակ ներկայացուցչի, տեսնում է իր իսկական պաշտպանին: Դրությունը բարդ է ու ծանր:

Ձերդ գերազանցությանը կխնդրեի՝ Բարձր Դռանը համապատասխան քայլերով ըստ հնարավորին աջակցել ինձ:

[Շոյբներ]

[Վանգենհայմի պատասխանը 3.6. հեռագրով]

Հաստատում եմ մայիսի 30-ի և 31-ի իմ հեռագրերը և ցավում եմ, որ պետք է հրաժարվեմ հայերի համար ևս մեկ անգամ Բարձր Դռանը միջնորդելուց: Ձերդ Գերազանցությանը և այլոց խնդրում եմ այնտեղի զինվորական իշխանությունների մոտ այս հարցով հետագա ոչ մի քայլ չձեռնարկել:

1915 – 06 – 04 – DE – 001

Սկզբնաղբյուրը՝ PA-AA/ R14086

Ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին՝ Կոստանդնուպոլսի դեսպան Վանգենհայմից

№ 342

Պերա, 4 հունիսի 1915

Քահանա Յոհաննես Էհմանը Մամուրեթ ուլ Ազիզում (Հարպուտ) վերջերս (մայիսի 5-ին ու 18-ին) կայզերական դեսպանությանը մանրամասն զեկուցել է այդ վայրերում հայերի վիճակի մասին:

Նրա նկարագրություններից բխում է, որ այնտեղի վալիին, որին նա ներկայացնում է որպես հավասարակշռված ու մարդկային անձնավորություն, հաջողվել է Մամուրեթ ուլ Ազիզում անձամբ ապահովել հանգիստ վիճակ: Վերջին շաբաթներին ձեռնարկված տնային խուզարկումներն ու ձերբակալությունները կարծես առանձնապես ծանրացուցիչ նյութ չեն հայտնաբերել: Դրան հակառակ Էհմանը ներկայացնում է, ըստ թուրքական աղբյուրների, որ իբր Էգինում գտել են դինամիտ, իսկ Դերսիմի շրջանում էլ հայերը ղզլբաշ-քրդերին քարոզել են միանալ ռուսներին: Կարծես թե նա թուրքերի հետ համակարծիք է, թե «հայ ժողովուրդը թուրքերի դեմ է», ինչպես նաև «ռուսների ներխուժման դեպքում երկրի խորքում անմիջապես կանցնեն թշնամու կողմը»:

Պարոն Էհմանի, որը թողնում է հավասարակշռված ու լավատեղյակ դիտորդի տպավորություն, այլ դատողություններից կուզենայի ընդգծել հետևյալ հատվածը, որ վերաբերում է հայերի քաղաքական կուսակցություններին: Նա գրում է. «Կառավարությունը հատկապես խիստ միջոցներ է ձեռնարկում «Դաշնակ» և «Հնչակ» միությունների անդամների դեմ, որոնք համենայնդեպս ոչ թուրքական պետության, ոչ էլ հայ ժողովրդի համար պարգև չեն եղել և որոնց՝ սահմանադրական պետության համար ծայրամասերի բոլորովին ո՛չ հասուն պայմաններում, թերևս, ավելի լավ կլիներ թուրքական պետությունը ճանաչած չլիներ և որոնց լուծարումը ուրախությամբ կընդուներ նույնիսկ հայ ժողովրդի մեծ մասի կողմից: Բայցևայնպես, երբ նշված միությունները ճանաչվել են պետականորեն, ապա այժմ չէր կարելի այդպիսի մի կուսակցության պատկանելը դրոշ-

մել որպես հանցագործություն, կարծես կարելի է առանձին միությանը կամ առանձին անձին վերագրել պետության համար վտանգավոր կամ խռովարարական միտումներ ու խարդավանքներ[16]»:

Նույնքան ճիշտ դատողություններ է անում Էհմանը նաև զենքի վերաբերյալ, որ գտել են հայերի մոտ, որը դեռ տարիներ առաջ է ձեռք բերված և ըստ երևույթին ծառայել է մահմեդականների հարձակումներից պաշտպանվելու համար: Նա այդ մասին գրում է.

«Չնայած դրան, թույլատրված կամ արգելված զենքի կուտակումը եղել է մեծ կարճատեսության, ուղղակի գրեթե աններելի հիմարության հետևանք, քանի որ դրանով արթնացրել են մահմեդականների ու կառավարության անվստահությունը, որոնք հայերի զենք հայթայթելուն այլ մտադրություններ են վերագրել: Ի դեպ, արդեն 3-4 տարի է, ինչ զենք գնելու եռանդը խիստ թուլացել է, եթե ոչ ամբողջովին վերացել»:

Վանգենհայմ

1915 – 06 – 04 – DE – 002

Սկզբնաղբյուրը՝ PA-AA/ Կոստ.դեսպ. /169

Կոստանդնուպոլսի դեսպանությանը՝ Էրզրումում ռեգենտ Շոյբեր-Ռիտերից

№ 10

Էրզրում, 4 հունիսի 1915

Գաղտնի

Այստեղի եպիսկոպոսը խնդրում է հաղորդել հետևյալ հեռագիրը:

Էրզրում, 3-ը հունիսի, 1915, Կոստանդնուպոլսի սրբազան հայ պատրիարք Զավենին:

Ձերդ սրբազնությանը պետք է որ հայտնի լինի՝ Էրզրումի դաշտավայրի բոլոր հայ բնակիչները մայիսի 1-ին (հին տոմարով), առանց հիմնավոր պատճառների, անսպասելի ու բռնի, թողնելով իրենց ունեցվածքն ու տները և առանց սննդի աքսորվել են Թերջան ու երևի թե հետո ավելի հեռու՝ երկրի խորքը: Դրան հաջորդեց քրդերից բոլոր հայկական գյուղերի ջարդը: Շարունակությունը հետևում է:

16. 1915-05-18-DE-003 Էհմանի բնագիր փաստաթղթի մի քիչ այլ ձևակերպումն է:

№10 հեռագրի 1-ին շարունակությունը:

Այնուհետև ինձ վալիի անունից հայտնել են, որ 15 օրում Էրզրում քաղաքի 160 ունևոր ու երևելի հայերի իրենց ընտանիքների հետ արտաքսելու են Մոսուլ, ըստ երևույթին՝ Վանի դեպքերի հետևանքով: Հավանաբար տեղահանումը կշարունակվի: Նկատի ունենալով փոխադրամիջոցների իսպառ բացակայությունը, ճանապարհների անապահովությունն ու տեղահանմանն ուղեկցող դաժանություններն ու վայրագությունը, ապա այս տեղահանումը կնշանակի բացարձակ բնաջնջում: Շարունակությունը հետևում է:

№10 հեռագրի 2-րդ շարունակությունը:

Ցավալի դեպքերի բնույթն ու պատճառները առաջին հերթին անհայտ են մեզ: Բայց փաստ է, որ այստեղի հայերը միշտ հնազանդորեն կատարել են կառավարության բոլոր հրամանները, ամեն ինչ ներդրել հանուն հայրենիքի պաշտպանության՝ հետագայում էլ նույն հավատարմությամբ ծառայելու մղումով: Այս պարզաբանմամբ՝ դառը անարդարություն է Վանի դեպքերի համար այստեղի հայերի տեղահանումը իրենց հնամենի բնակավայրերից: Շարունակությունը հետևում է:

№10 հեռագրի 3-րդ շարունակությունը:

Այդ միջոցառումը վերաբերում է տարեց մարդկանց, կանանց ու երեխաներին, քանի որ զենք կրելու ունակները զինծառայության են: Ժողովրդի անունից արցունքներով թախանձագին խնդրում եմ համապատասխան քայլերով դիմել վերին ատյաններին, հենց Նորին մեծություն սուլթանին և գերմանական կայսրին՝ կանխել բռնի տեղահանումը, քանի դեռ ուշ չէ: Շարունակությունը հետևում է:

№10 հեռագրի 4-րդ շարունակությունը:

Այս ճանապարհով խնդրում եմ հայտնել նաև Ձեր ջանքերի արդյունքների մասին: Ապա նաև խնդրում եմ հարգելի գերմանական դեսպանին հայտնել մեր խորին երախտագիտությունը՝ այստեղի հյուպատոս Շոյբներ- Ռիխտերի մարդասիրական անգնահատելի օգնության համար:

[Սմբատ, Էրզրումի եպիսկոպոս]

[Շոյբներ]

[Վանգենհայմի հեռագրային պատասխանը 4.6]

Այնտեղի եպիսկոպոսի հեռագիրն այսօրվա պայմաններում, որպես այդպիսին, չեմ կարող փոխանցել այստեղի պատրիարքին՝ առանց գերմանական դեսպանությանը թուրքական կառավարության առջև վարկաբեկելու և պետք է Ձեզ էլ խնդրեմ առաջիկայում բարեկրթորեն հրաժարվել հայկական եկեղեցական ղեկավարների միջև այդպիսի հաղորդագրությունների ուղղակի փոխանցումներից՝ այն տեղին պատրվակով, որ ծառայողական կանոնակարգի համաձայն դրա համար չի կարող օգտագործվել ծառայողական շիֆրը:

Ձեր անձնական տեղյակության համար. որպես առաջնորդ Էրզրումից թուրքական նախկին մի պատգամավոր է հայտնաբերվել՝ հիմնականում նրանց կողմն անցած հայերից բաղկացած ռուսական զորաջոկատում, որը գրավել էր Վանը: Այդ փաստն անառարկելիորեն հաստատել է թուրքական կառավարությունը, և հայերն իրենք են մեղավոր, եթե նաև անմեղներն են տառապում այդ միջոցառումներից, որոնք թուրքական կառավարությունը ստիպված է կիրառել խռովարար տարրի դեմ, ինչպես հիմա ամենուրեք, եթե դրանք սպառնում են երկրի անվտանգությանը:

Հարմար առիթի դեպքում տեղի հայկական շրջանակներին հաղորդեցեք, որ մենք՝ իրենց հանդեպ մեր ամբողջ բարեհաճությամբ հանդերձ, լիազորված չենք պաշտպանել իրենց շահերը՝ համընդհանուր պետա-իրավական սկզբունքներով՝ հակառակ իրենց իսկ կառավարության: Բայց ես կփորձեմ պատրիարքին տեղյակ պահել եպիսկոպոսի հեռագրի բովանդակությանը՝ առանց սկզբնաղբյուրը նշելու:

Պարոն գլխավոր հյուպատոս դ-ր Մորդմանին՝ համապատասխան զգուշավոր կիրառման համար:

[Մորդմանի նշումը, 11.6.]

Հունիսի №10-ին պատրիարքին տեղեկացրել եմ .

1. Էրզրումից բնակչության տեղահանման մասին, որոշ մանրամասներով հանդերձ, հատկապես հյուպատոս Շոյբների տեղահանվածների օգտին միջնորդության մասին և այնտեղի հայ եպիսկոպոսի (մուրաքազայի) շնորհակալությունը դրա համար:

2. Խինիսի դեպքերի մասին, որտեղ, ասում են՝ որոշ գյուղեր ենթարկվել են քրդերի հարձակմանը:

Հայ եպիսկոպոսի (մուրաքազայի) հեռագրի մասին չեմ հիշատակել:

1915 – 06 – 05 – DE – 001

Սկզբնաղբյուրը՝ PA-AA/R14086

Ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին՝ Կոստանդնուպոլսի դեսպան Վանգենհայմից

№ 349

Պերա, 5 հունիսի 1915

2 հավելված [17]

Ինչպես արդեն հաղորդվել է հեռագրով, Բարձր Դուռը Agence Havas-ի միջոցով մանրամասնորեն պատասխանել է Թուրքիայում հայերի հալածանքների վերաբերյալ Եոյակ միության հրապարակային հայտարարությանը և իր այդ պատասխանը հաղորդել է Բեռլինի ու Վիեննայի իր դեսպանություններին: Դրան հակառակ՝ այստեղի պաշտոնական ու ոչ պաշտոնական մամուլում մինչև հիմա չի հետևել դրա վերաբերյալ որևէ հրապարակում, և ես կարծում եմ, որ Բարձր Դուռը հիմա առնվազն հրաժարվում է դրանից, որպեսզի բնակչության ուշադրությունը չհրավիրի այդ հանգամանքի վրա:

Բարձր Դռան պատասխանը, որին կցում եմ Մեծ վեզիրի ինձ ուղարկած պատճենը, պարզվեց, որ ավելի մանրամասն է, քան հակիրճ նախագիծը, որը ես նրան տրամադրել էի այդ նպատակի համար, և որի մտքի ընթացքին նա հետևել է:

Իմիջիայլոց, այդ փաստաթուղթը պարունակում է հայկական շարժման վերաբերյալ տարբեր մանրամասներ, որոնք մինչև հիմա այստեղ շատ հայտնի չէին, օրինակ այն, ինչ ասվում է նախկին պատգամավոր Պաստերմաջյանի և դաշնակների ղեկավար Սուրենի (Էրզրումից) գոր-

17. Հավելվածները եղել են ֆրանսերեն, որոնց գերմաներեն թարգմանությունները Վ. Գուստի նոր լույս տեսած գրքում արդեն կան (ծան. թարգմ.):

ծունեության վերաբերյալ, դա հայերին Էրզրումից արտաքսելու կառավարության կարգադրության բանալին է:

Կոստանդնուպոլսում ձերբակալված (և Անատոլիա աքսորված) հայերի թիվը տրվում է հավելվածի 6-րդ էջում՝ մոտ 235, իրականում նրանց թիվը պետք է որ շատ ավելի մեծ լինի՝ ավելի քան 400: Այնուամենայնիվ առաջին թիվը վերաբերում է, թերևս, միայն այն հայերին, ովքեր հեղափոխական կուսակցություններից որևէ մեկի անդամ են ու ձերբակալված են նաև իրենց աքսորավայրում, մինչդեռ մյուսների ազատությունը սահմանափակված չէ: Այդ վերջիններից մոտ 20 հոգի այս ընթացքում թույլտվություն են ստացել վերադառնալ այստեղ:

Վանգենհայմ

1915 – 06 – 06 – DE – 012

Սկզբնաղբյուրը՝ PA-AA/ Կոստ. դեսպ./ 169
Տպագրված՝ Գ և Հ փաստ. 076 (խմբ.) 077

Կոստանդնուպոլսի դեսպանությանը՝ Հալեպի հյուպատոս Ռյոսլերից

Հալեպ, 6 հունիսի 1915

Հունիսի 4-ի հեռագրի պատասխանը

Խորին հարգանքով խնդրում եմ թույլատրել ևս մեկ անգամ առարկել: Հայ աքսորյալների գերակշռող մասը կանայք են: Տեղափոխման ժամանակ և գյուղերում նրանք անպաշտպան են ու մատնվել են անարգանքի: Մի՞թե հնարավոր չէր միայն տղամարդկանց ցրել, իսկ կանանց ու երեխաներին թողնել Հալեպում: Մինչև հիմա բազմաթիվ երեխաներ տեղափոխման զոհ են դարձել:

[Ռյոսլեր]

[Վանգենհայմի հեռագրային պատասխանը 7.6.]

Ներքին գործերի նախարարը տվել է իր համաձայնությունը՝ այնտեղի վիլայեթից աքսորված հայերի պայմանների մասին տեղեկանալու համար:

[Մորդմանի նշումը]

N.B. Ես առիթ գտա գործը Թալեաթ բեյին այնպես ներկայացնելու, որը բացառեր դեմարշի որևէ թյուրիմացություն:

Ընդ որում՝ նա հիշատակեց, որ ամերիկյան դեսպանը վերջերս Agence Havas-ին է ներկայացրել հայտնի նոտան և ուղղակի խոստովանել է իր կառավարության մտադրությունների մասին, որը համաշխարհային պատերազմն օգտագործում է իր ներքին թշնամիներից՝ բոլոր դավանանքների բնիկ քրիստոնյաներից հիմնավորապես մաքրելու համար՝ առանց օտարերկրյա դիվանագիտական միջամտության արգելքների հանդիպելու:

1915 – 06 – 13 – DE – 001

Սկզբնաղբյուրը՝ PA-AA/ R14086 /Կոստ.դեսպ/ 169

Կոստանդնուպոլսի դեսպան Վանգենհայմին՝ արտգործնախարարության ունտերշտատսքարտուղար Ցիմերմանից

№ 461

Բեռլին, 13 հունիսի 1915

Դ-ր Լեփսիուսը, որի մոտ Ձերդ գերազանցության այս ամսվա 9-ի բարեհաճ հեռագիրը համապատասխան մտերմական ձևով արժեվորվել է՝ Գերմանիայի արևելյան միսիայի և գերմանա-հայկական միության ղեկավարների դիմումներով հանդերձ[18], իր ցանկությամբ անձնական այցով կվերադառնա Կոստանդնուպոլիս:

Պարոն Լեփսիուսը հեռու է Բարձր Դռանը ինչ-ինչ դժվարություններ հարուցելու ցանկությունից: Բայց նա այն կարծիքին է, որ Կոստանդնուպոլսում նրա հայտնվելը, եթե նույնիսկ գործնականորեն ոչինչ չփոխի, ապա կմեղմի Գերմանիայում հայամետ ուժերի մտահոգությունները, իսկ նույն հայերը դա կմեկնաբանեն իբրև ապացույց այն բանի, որ Գերմանիան մտադիր չէ իր գործը զոհաբերել քաղաքական իրավիճակին: Ցավալի կլիներ, եթե Թուրքիայի հետ մեր դաշինքը, որը շահել է ժողովրդի լայն շրջանակների համակրանքը, տուժեր Հայկական հարցից: Մենք

18. Երկու նամակների պատճենները տես 1915-06-17-DE-001 փաստաթղթում:

պետք է նաև ջանանք՝ նկատառելով ինչպես մեր, այնպես էլ Թուրքիայի շահերը և վերջնականապես չկորցնել հայերի վստահությունը:

Այդ իսկ պատճառով էլ ես կողջունեի, եթե Ձերդ գերազանցությանը հաջողվեր հաղթահարել Բարձր Դռան՝ Լեփսիուսի այցելությանն ընդդիմանալը: Հեշտ ղեկավարվող պարոնի անհատականությունը կարող էր ծառայել երաշխիք այն բանի, որ նա Կոստանդնուպոլսում չի ձեռնարկի ոչինչ, ինչը չի արժանանա Ձերդ գերազանցության և թուրք պետական այրերի հավանությանը: Այն անվստահությունը, որն առաջացրել է դ-ր Լեփսիուսի գործունեությունը Սոֆիայում, այստեղ բերված նրա բացատրություններով հիմնավորված չեն:

Ես շնորհակալ կլինեի Ձերդ գերազանցությանը՝ գործը ևս մեկ անգամ ստուգելու և հեռագրով շտապ պատասխան տալու համար:

Ց[իմերման]

1915 – 06 – 17 – DE – 001

Սկզբնաղբյուրը՝ PA-AA/R14086

Արտգործնախարարության խորհրդական Ռոզենբերգին՝ Յոհաննես Լեփսիուսից

Պոտսդամ, 17 հունիսի 1915

Պարոն Թիդեմանի կարգադրությամբ կից հավելվածով ուղարկում եմ հունիսի 11-ին պարոն Վանգենհայմին ուղղված երկու նամակների պատճենները՝ արտգործնախարարության փաստաթղթերին կցելու համար:

Ձեզ հավատարիմ՝ Յոհաննես Լեփսիուս

Հավելված 1

Պոտսդամ, 11 հունիսի 1915

Ձերդ գերազանցություն,

Խնդրում եմ թույլատրել ինձ ներկայացնելու արտգործնախարարության հետ հեռագրերի փոխանակմանն առնչվող այն պատճառները, որոնք ինձ հնարավորություն կտան Կոստանդնուպոլսի իմ այցելությունը տվյալ պահին օգտակար համարել գերմանական և թուրքական շահերի համար:

Հայ հպատակների դեմ ուղղված կոշտ միջոցառումները, որոնք անհրաժեշտ էին թվում լրտեսության ու տեղային հուզումների ճնշման համար, միայն դրվագային նշանակություն ունեն և չեն շոշափում գերմանական շահերը, եթե միաժամանակ հոգ տարվի այն մասին, որ կանոնավոր հարաբերություններ պահպանվեն հայկական ղեկավար շրջանակների և Բարձր Դռան միջև, առավել ևս՝ ամրապնդվեն դրանք:

Հայերի վիճակն սթափորեն գնահատելու համար չպետք է մոռանալ, որ հայ ժողովրդի միայն կեսն է ապրում Թուրքիայում, ամբողջ մյուս կեսն ապրում է Ռուսաստանում: Չի կարող բարենպաստ ներգործել այն, որ մի կեսը՝ ռուսականը, միշտ խնամված ու սիրաշահված է, իսկ մյուսը՝ թուրքականը, միշտ ենթարկվում է ճնշումների: Հայ ազգը՝ որպես ամբողջություն, ի վերջո կպատկանի այն կողմին, որը պարանը քաշելիս շատ ուժ կներդնի, որպեսզի իրեն ձգի մյուս կողմին: Անհնար է կտրել պարանը: Լեզուն, գրականությունը, եկեղեցին, սովորույթներն անքակտելի շղթա են: Աբդուլ Համիդի վարած բնաջնջման քաղաքականությունն ավելի ամուր ձգեց այդ պարանը: Չորս միլիոնանոց ազգի հետ չի կարելի վարվել ինչպես quantité négligeable: Եթե այդպես են վարվում, ապա Ալբանիայի պատմությունը սովորեցնում է, թե ուր կտանի այդ ուղին: Թուրքիայի և Ռուսաստանի միջև վեճը հո չի՞ ավարտվի այժմյան պատերազմով:

Մինչև 1895թ. ռուսահայերի ճակատագիրը Կովկասում այնպիսին էր, ինչպես թուրքահայերինը՝ Բարձր Հայքում: Ինչպես այստեղ էին նրանք մատնված քրդերի կամայականություններին, այնպես էլ նրանք՝ թաթարների:

Երբ 1905թ. Վորոնցով-Դաշկովը նշանակվեց Կովկասի փոխարքա, նրա պաշտոնն ստանձնելու պայմանը դարձավ հայերի հանդեպ քաղաքականության փոփոխումը: Նա անմիջապես սկսեց հայկական պարանը փաթաթել ռուսական պտուտակի վրա այնպիսի հաջողությամբ, որ կովկասյան հայերը խանդավառությամբ կռվի գնացին Ռուսաստանի համար, ինչից նրանք մոլեռանդորեն կհրաժարվեին 1895-ին: Պետք է բարձր գնահատել Կոստանդնուպոլսի հայկական ղեկավար օղակներին, որ չնայած վատթարագույն միջադեպերին, ինչպես Ադանայում 1908-ին, և փոխադարձ սիրո զգալի պակասին, նրանք անընկճելի պահեցին կոմիտեի կողմը և առանց վերապահության աջակցեցին Թալեաթի ու Էնվերի քաղաքականությանը: Նրանց սկզբունքային տեսակետը կա ու մնում է այն, որ հայ ժողովուրդն իր ազգային բնույթը կարող է պահպանել լեզվի, եկեղեցու և սովորույթների մեջ՝ միայն որպես Օսմանյան

կայսրության անդամ, եթե, իհարկե, այն չնետվի որպես կեր ռուսական ժողովրդական սովին: Այդ հիմնարար տեսակետն ուժեղացնելը և ինչպես դրոշ բարձրացնելը բոլոր հայերի համար պետք է լինի Թուրքիայի ներքին քաղաքականության նպատակներից մեկը:

Արդի պատերազմն Անտանտին ստիպեց քողազերծել Թուրքիայի մասնատման նրանց մտադրությունները, դա անգնահատելի հաղթանակ է Թուրքիայի պահպանմանը նպատակաուղղված Գերմանիայի քաղաքականության համար: Նաև Հայկական հարցը ապագայում այլևս չի օգտագործվի ցուցադրական հնարքների համար: Դեռ ավելին, այն պահանջում է դրական լուծում՝ հօգուտ Թուրքիայի:

Հայկական բարեփոխումների համար Ձերդ գերազանցության հաջող հանդես գալը թուրք-ռուսական պարանը ձգելու ժամանակ ուժեղ ազդակ եղավ թուրքական կողմի համար: Արևմուտքի հույսից ու սնուցումից հրաժարվելը նույնքան ուժեղ բացթողում էր ռուսական կողմում: Տեսուչների ներկայությունը բավական էր, որպեսզի ռուսների խարդավանքները զրկվեին հիմքից: Ճանապարհը Կոստանդնուպոլսից Էրզրում ու Վան հեռու է, Թիֆլիսից՝ մոտ: Անհարմարություն, որը խանգարող հանգամանք է Կոստանդնուպոլսի հայ ղեկավար օղակների ազդեցության համար: Նրանք հաճախ չեն կարողանում գործել, ինչպես կուզենային, որովհետև ռուսներն ավելի շուտ են տեղում լինում և նրանց զրկում են այդ հնարավորությունից: Որտեղ որ կարգուկանոնը պահպանելու համար կա թուրքական կանոնավոր զորքերի պակաս, հայկական գյուղերը ռուսական և քրդական սալաքարերի արանքում վերածվում են փոշու: Այդ իսկ պատճառով նրանց չպետք է մեղադրել ինքնապաշտպանության համար: Քրդերն ու ռուսները հաճախ բավական ընդհանուր բանուգործ ունեն:

Այդ ներքին գործերը պատերազմի ընթացքում կարելի էր թողնել ինքնահոսի, եթե մնացածում Բարձր Դուռը հայերի թիկունքն ամրացներ ընդդեմ ռուսների և նրանց վստահություն ներշնչեր, որ պատերազմից հետո ամեն ինչ կկարգավորվի:

Այն առավելությունը, որին Ռուսաստանը 10 տարուց ի վեր հասել է հայերին բացահայտորեն սիրաշահելով, պատերազմն սկսվելուն պես ամբողջ թափով օգտագործվեց անգլիական, ֆրանսիական և ռուսական հայամետ (պրո-հայկական) կոմիտեների միջոցով (թեպետ հայերը դրանց անդամ էլ չեն): Գործակալները երթևեկում էին Փարիզի, Լոնդոնի և Պետերբուրգի միջև՝ այս ու այն կողմ, որպեսզի Անտանտի տերություններից հայերի համար ազատագրման մեծ ծրագրեր կորզեն: Ընդ

որում, այստեղ էլ ռուսների և անգլիացիների շահերը չհամընկան: Ռուսաստանն ուզում էր ավարի իր մասը տարածել մինչև Ալեքսանդրետ, բայց չէր երաշխավորում ինքնավարություն, Անգլիան ամբողջ ռուսական ավարի համար պահանջում էր ինքնավարություն (այն հետին մտքով, որ ավելի ուշ ռուսներից կրկին կխլեն Մեծ Հայաստանը):

Հիմա ոչ մի բանական հայ ձեռքի ճնճղուկը չի փոխի տանիքի աղավնու հետ: Բայց ճնճղուկը (հայկական բարեփոխումների ծրագիրը), ցավոք, արդեն աղավնուց էլ առաջ էր թռել:

Թե իրոք առանձին թուրքահայերի կամ հայկական ավազակախմբերի Ռուսաստանն ու Անգլիան փողով կամ գեղեցիկ խոսքերով հավաքագրում են, նույնքան քիչ է փոխում իրավիճակը, որքան նաև առանձին թուրքերի ծախվածությունն ու լիբերալ միությունների հեղաշրջման փորձերը: Վերջիններին հայերից մասնակցել են հնչակները, որոնք Թուրքիայում գրեթե կողմնակիցներ չունեն: Դաշնակցականներն էլ ոչ մի կապ չունեն թուրքական ընդդիմության հետ և հեղաշրջման ծրագրերին չեն առնչվել:

Հայկական ղեկավար օղակները՝ պատրիարքարանը, Ազգային ժողովը, դաշնակցականները, հիմա էլ են պատրաստ լծվել Թուրքիայի սայլին և իրենց կողմը քաշել նաև ռուսահայերին: Դ-ր Լիպարիտը՝ Սոֆիայից նույնպես այդ իմաստով հակազդեց բալկանյան հայկական կոմիտեների վրա և գործեց ռուսական համակրանքների խրախուսման դեմ: Կարծես թե Կովկասում էլ է սկսում մարել ռուսամետ շարժումը, որովհետև, ըստ էության, շատ բան խոստանում են, բայց տվյալ դեպքում ոչինչ չեն անում:

Հայկական դպրոցների, մամուլի և այլնի դեմ ռազմական նախարարի միջոցառումները ես ողբերգական չեմ համարում: Ամերիկյան քոլեջների փակմանը պատրիարքարանը ամենից քիչ կընդդիմանա: Նույնիսկ տեղահանումներն կասկած չէին հարուցի, եթե թուրքական կառավարման տեխնիկան (ինչպես ապացուցում են չերքեզները) հաճախ չունենար այն հաջողությունը, որ տարագիրները զոհվեն:

Դեռ ավելին, պետք էր հոգ տանել, որ այդ միջոցառումներով, որոնց ռազմական նշանակությունը ես չեմ կարող գնահատել, չտապալվեր կառավարության հանդեպ թուրքահայերի վստահությունը: Թուրքիան պատերազմից հետո էլ է ապրելու հայերի հետ, և Գերմանիայի տնտեսական քաղաքականությունը չպետք է զրկել նրանցից: Հայտնի ասացվածքը կարելի նաև շուռ տալ. Si vis bellum, para pacem:

Եզրակացությունները, որոնք, ըստ իս, կարելի է արդեն հիմա անել, հետևյալն են.

1. Անգլո-ամերիկյան և ֆրանսիական դպրոցները փակելով ոչնչի չեն հասել, պետք է նույնչափ գերմանական դպրոցներ բացել կամ գոնե չփակել գերմանական դպրոցական քաղաքականության ուղիները: Եթե հայերը, հույները, սիրիացիները և մյուսները այսուհետ չսովորեն գերմաներեն, ապա նրանք կշարունակեն խոսել ու մտածել ֆրանսերեն ու անգլերեն:

2. Եթե ուզում են թուլացնել ֆրանս-անգլո-ռուսական հայամետ կոմիտեների ազդեցությունը, ապա պետք է աջակցել գերմանա-հայկական կազմակերպությունների ու միությունների ջանքերին: Նրանք աշխատում են թուրքական շահերի դեմ, սրանք՝ հանուն: Մենք վտանգում ենք կորցնել մեզ հետ կապված հայ առաջնորդների և ժողովրդական զանգվածների համակրանքը, եթե ճգնաժամային իրադրություններում, որոնք տենդագին օգտագործում են Անտանտի կոմիտեները, մենք ստիպված ենք անմասն ու անգործունյա կողքի քաշվել և հրաժարվել ազդեցություն գործադրելու մեր իրավունքից: Արդեն այն փաստը, որ ես առիթ կունենայի Կոստանդնուպոլսի պատրիարքարանում և ղեկավար այրերի մոտ հանդարտեցնող ազդեցություն թողնել, բավական կլիներ ապահովել մեր մինչայժմյան ազդեցությունը և կամուրջ գցել մեր հետագա փոխըմբռնման համար:

3. Եթե Անտանտն իր հայ բարեկամներին մերձեցնում է թուրքական ընդդիմությանը, ինչպես դա հիմա կատարվում է Շերիֆ փաշայի հետ՝ Փարիզում, ապա մենք առավել ևս պետք է խրախուսենք մեզ ականջալուր հայերին՝ Թուրքիայի հանդեպ հավատարմությունն ուժեղացնելու համար և նպաստենք Բարձր Դռան հետ փոխհամաձայնության գալուն: Պետք է, որ լիովին հնարավոր լինի կանխել, որպեսզի մեր թուրք բարեկամները չսրտնեղեն հայերի հանդեպ համակրանքից, որոնց ջուրն ուզում ենք ուղղել իրենց իսկ ջրաղացին:

4. Չպետք է սահմանափակվել թուրքահայերին Բարձր Դռան հետ հաշտեցնելով: Թուրքիան պետք է շահի նաև կովկասյան հայերի համակրանքը: Դա տասնապատիկ ավելի արդարացված է՝ Կովկասը կամ առնվազն Կարսը, Էրիվանը և Արաքսի հովիտը դիտարկել որպես Թուրքահայաստանի իռեդենտա, քան թե հակառակը՝ Բարձր Հայքը տալ որպես ռուսական իռեդենտա[19]:

19. Իռեդենտա-անկախության համար շարժում կամ բռնի անջատված տարածքների վերամիավորում (ծամ. թարգմ.):

5. Պակաս կարևոր չէ այն, որ մենք ի սկզբանե Հայաստանի հանդեպ Գերմանիայի համակրանքներն ուղղեցինք դեպի թուրքական հուն: Գերմանիան հիմա էլ տարեկան մոտ 3/4 միլիոն է տրամադրում որբանոցների, հիվանդանոցների, դպրոցների ու արհեստանոցների համար, որոնք հիմնադրվել են 90-ական թվականներին՝ համիդյան սարսափելի ժամանակաշրջանի զոհերի համար: Մինչև հիմա էլ Գերմանիայի յուրաքանչյուր գյուղ ու քաղաք իր ներդրումն է անում այդ հիմնարկների համար: Այդ շրջանակներին պետք է զերծ պահել խղճի խայթից, որ գերմանա-թուրքական մեր դաշինքը կարող էր մեզ ստիպել Արևելքի քրիստոնյաներին մատնել բախտի քմահաճույքին և զլանալ նրանց ցուցաբերել օգնություն, որը նրանք ակնկալում են մեզնից՝ որպես իրենց հավատակիցներ:

Նաև այդ առումով հանգստացուցիչ կազդեր, եթե խեղաթյուրումների դեմ, որոնցով Անտանտի մամուլն արդեն հիմա հեղեղված է գերմանական քրիստոնյաների մասին նյութերով, ես կկարողանայի սեփական դիտարկումների հիման վրա բացատրել, որ Թուրքիան չի անցնում ռազմական միջոցառումների սահմանը և բացի այդ՝ մեծ նշանակություն է տալիս իր քրիստոնյա հպատակների հետ լավ հարաբերությունների պահպանմանը: Ձերդ գերազանցությանը հավատարիմ՝

[Դ-ր Յոհաննես Լեփսիուս]

Հավելված 2

Պատճեն

Պոտսդամ, 11 հունիսի 1915

Գերմանիայի արևելյան միսիայի և գերմանա-հայկական միության ղեկավարությունը, որոնք այսօր հավաքվել են, Ձերդ գերազանցությանն արտահայտում են իրենց երախտագիտությունը՝ իրենց ջանքերին համախ ցուցաբերած աջակցության համար և հուսով են, որ այժմյան ճգնաժամային իրավիճակում նույնպես Ձերդ գերազանցությունը կազդի խառնաշփոթին ներքաշված քրիստոնյա բնակչության տարրերի հանդեպ արդարացի ու չափավոր վերաբերմունքի համար: Մեր հարաբերությունները պատրիարքարանի և հայկական ղեկավար շրջանակների հետ լավ պահելու և նրանց հավատարիմ կեցվածքը Բարձր դռան հանդեպ ամրապնդելու համար, մեզ ցանկալի է թվում, որ մեր նախագահ դ-ր Լեփսիուսը մեկնի Կոստանդնուպոլիս և Ձերդ գերազանցության համաձայնությամբ խորհուրդներով օգնի մեր հայ բարեկամներին:

Ստորագրել են. Դ-ր Պաուլ Ռոհրբախ
Ռյոդենբեք, սուպերինդենտանտ
Պրոֆ. Դ. Դայսման Լյուրսեն
Պ. Վինկլեր
Դ-ր Յոհաննես Լեփսիուս
Դ-ր Ջեյմս Գրինֆիլդ

1915 – 06 – 17 – DE – 003

Սկզբնաղբյուրը՝ PA-AA/R14086
Տպագրված՝ Գ և Հ 081 (կրճ.)

Ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին՝ Կոստանդնուպոլսի դեսպան Վանգենհայմից

№ 372

Պերա, 17 հունիսի 1915

Արևելյան Անատոլիայի գավառներից հայկական բնակչության տեղահանումն ու այլ վայրերում բնակեցումն իրականացվում է անխնա:

Սիսի կաթողիկոսի հավաստի տվյալներով, միայն իր թեմից մինչև հիմա տեղահանվել է 30 000 հայ: Զեյթունն իր շրջակայքով, Էլբիստանը, Դյորթյոլը, Ալաբաշը, Հասանբեյլին և նույնիսկ ավելի փոքր բնակավայրերը լրիվ դատարկվել են: Այստեղ, ինչպես նաև այլ վայրերում, բնակիչներին ցրել են երկրի խորքերը և բնակեցրել են մահմեդականների մեջ, մասամբ՝ իրարից հեռու վայրերում, ինչպես օրինակ՝ Զեյթունի բնակիչներին տեղափոխել են Կոնիայի մերձակայք, մասամբ՝ Դեր Զոր՝ Եփրատի ափ: Զեյթունի հայերին հասցրել են Թերջան (Մամա Հաթուն):

Տեղահանվողներն ստիպված են անմիջապես կամ մի քանի օրում լքել իրենց բնակավայրերը, այնպես որ պետք է բախտի քմահաճույքին թողնեն իրենց տներն ու շարժական գույքի մեծ մասը և չեն կարող տեղափոխման համար անհրաժեշտ քանակով սննդամթերք վերցնել: Նշանակված վայր հասնելուն պես, նրանք հայտնվում են իրենց հանդեպ թշնամաբար

տրամադրված բնակչության մեջ՝ անօգնական ու անպաշտպան: Առանձին վայրերում արդեն իսկ տեղափոխման ընթացքում եղել են օրինազանցություններ: Ըստ լուրերի՝ Դիարբեքիրից Մոսուլ տարվող բոլոր հայերին ճանապարհին սպանել են: Բացառված է, որ կառավարությունը տեղահանվածներին օգնած լինի փողով, սննդամթերքով կամ այլ կերպ: Էրզրումում օգնության են հասել կայզերական հյուպատոսը և ամերիկյան միսիոներները, մյուս վայրերում՝ այստեղի հայկական պատրիարքարանը:

Ակնհայտ է, որ հայերի տեղահանման դրդապատճառը միայն ռազմական նկատառումները չեն: Ներքին գործերի նախարար Թալեաթ բեյը վերջերս առանց թաքցնելու այդ մասին իր կարծիքն է արտահայտել կայզերական դեսպանության ծառայող դ-ր Մորդտմանի ներկայությամբ՝ այն առումով, որ «Բարձր Դուռը կուզենար համաշխարհային պատերազմն օգտագործել այն նպատակով, որպեսզի հիմնավորապես ազատվի իր ներքին թշնամիներից՝ բնիկ քրիստոնյաներից, ընդ որում՝ առանց արտասահմանից դիվանագիտական միջամտության հանդիպելու, դա կբխի նաև Թուրքիային դաշնակից գերմանացիների շահերից, քանի որ այդ կերպ Թուրքիան ավելի ուժեղանա»:

Հայ պատրիարքն այդ նույն չինովնիկի մոտ մի քանի օր անց արտահայտվել է, որ Բարձր Դռան միջոցառումներն նպատակաուղղված են ոչ միայն հայ բնակչության ժամանակավոր վնասազերծմանը, այլև Թուրքիայից քշելուն, կամ ավելի շուտ՝ նրա բնաջնջմանը: Տեղահանումը նույնքան սարսափելի է, որքան և կոտորածը, և զարմանալի չէր լինի, որ հայերն ի վերջո սկսեին պաշտպանվել, թեկուզ առանց հաջողության հույսի, «ինչպես տանջահար կենդանին, որ քացի է տալիս իրեն տանջողներին»: Նա կարծես թե կորցրել է թուրքական կառավարության հանդեպ կատարվող քայլերով դեպի ավելի լավը որևէ փոփոխության հասնելու հույսը: Հայերի օգտին մեր միջամտությանը նա այլևս չանդրադարձավ: Ինչպես նախկինում, նա համոզված է (թերևս նաև՝ բոլոր հայերը, որքանով տեղյակ են իրադարձություններին), որ կառավարության կողմից հայերին վերագրվող օրինազանցությունները հրահրվել են հենց իշխանությունների գործողություններով:

Վանգենհայմ

1915 – 06 – 21 – DE – 012

Սկզբնաղբյուրը՝ PA-AA/ Կոստ. դեսպ./ 169
Տպագրված՝ Գ և Հ 088 (կրճ.)

Էրզրումում ռեգենտ Շոյբներ Ռիխտերին՝ Կոստանդնուպոլսի դեսպան Վանգենհայմից

№ 12

Պերա, 21 հունիսի 1915

№ 33 հեռագրի պատասխանը

Ձեր գերազանցություն և այլք, խնդրում եմ վալիին սիրալիր ձևով և համառորեն ներկայացնել, որ այդպիսի խայտառակ միջոցառումները վնասում են երկրի հեղինակությանը՝ չեզոք երկրներում և Թուրքիայի բարեկամների շրջանում, իսկ երկրի ներսում կործանում է իշխանությունների հեղինակությունը: Անխուսափելի են ռուսների և հայերի ճնշումներն ու վրեժխնդրության գործողությունները իրենց գրաված տարածքներում: Դրա հետևանքով կրկին հիմք է ստեղծվում հայկական գործերին օտարերկրյա միջամտության համար և իզուր դժվարանում է Թուրքիայի դիրքը հաշտության գալիք բանակցություններում: Եթե նույնիսկ մենք չենք կարող առարկել հայերի տեղահանման դեմ, որքանով որ դա արդարացված է ռազմական իրավիճակով, ապա մենք պետք է ավելի եռանդագին՝ նաև մեր իսկ շահերի նկատառմամբ, հորդորենք, որպեսզի բացառվեն անպաշտպան բնակչության ջարդերը, և տեղի իշխանությունների պարտավորությունն է՝ բոլոր միջոցներով արգելել այդպիսի միջադեպերը, եթե չեն ուզում իրենք ստանձնել ծանր պատասխանատվություն:

Ձեր անձնական տեղեկատվության համար նույնիմաստ առարկություններ եմ անելու նաև Բարձր Դռանը:

Վ[անգենհայմ]

1915 – 06 – 22 – DE – 002

Սկզբնաղբյուրը՝ PA-AA/R14086; /Կոստ. դեսպ./169

Արտգործնախարարության խորհրդական Ռոզենբերգին՝ Յոհաննես Լեփսիուսից

Պոտսդամ, 22 հունիսի 1915

Ռուսահայերի առաջնորդների հետ բանակցությունների ուղիները

բաց են, որպեսզի նրանցից ձեռք բերվի թուրքահայերի դեմ կիրառվող միջոցառումները դադարեցնելու փոխհատուցում: Որպես հնարավոր նշվում են հետևյալ առաջարկները: Մոտ 120 ձերբակալված հայ առաջնորդների և մտավորականների ազատ արձակման և հետագա տեղահանումներից հրաժարվելու դիմաց ռուսահայերը պարտավոր են դադարեցնել գործողությունները Վանի տարածքում և իրենց գործը սահմանազատել Ռուսաստանի գործից:

Վտանգ կա, որ ռուսների օգնությամբ ռուսահայերը կգրավեն նաև Բիթլիսի ու Մուշի շրջանը (Ուրմիան և Սաուչբուլաքը ռուսները գրավել էին մայիսի կեսին): Վանի տարածքի հայերը սկզբունքորեն պատրաստ են իրենց հարցը սահմանազատել ռուսների հարցից, քանի որ նրանք թուրքական գերիշխանությունը գերադասում են ռուսականից: Նրանք կռվում են ոչ թե ռուսների, այլ իրենց հայրենակիցներին քրդերի հարձակումներից պաշտպանելու համար: Նաև ռուսահայերի առաջնորդներն են այդ տեսակետին, ինչպես հավաստիացնում են ինձ, և ապագայում կարող են հակվել գերմանա-թուրքական շահերին:

Բոլոր բանակցությունների հաջողության պայմանը հայ առաջնորդների և մտավորականների հանդեպ արյունալի դատավճիռների բացառումն է:

Թողնում եմ Ձեր հայեցողությանը, թե արդյոք ցանկա՞լի է այս նկատառումները հեռագրով փոխանցել Կոստանդնուպոլիս:

Յոհաննես Լեփսիուս

[Ցիմերմանը՝ Պերա (№ 1209) 23.6.]

Դ-ր Լեփսիուսը կարծում է, որ ձերբակալված մոտ 120 հայ առաջնորդների և մտավորականների ազատ արձակման և հետագա տեղահանումներից հրաժարվելու դիմաց ռուսահայերը կդադարեցնեն գործողությունները Վանի տարածքում և կբաժանվեն Ռուսաստանից: Նա հաստատում է, որ գիտե ռուսահայերի առաջնորդների հետ բանակցելու ուղին:

[Մորդմանի նշումը, 24. 6.]

Առիթի դեպքում ես կօգտագործեմ բովանդակությունը, եթե դ-ր Լեփսիուսն առաջիկայում գա այստեղ, բայց անհավանական եմ համարում, թե Բարձր Դուռը գործի այժմյան փուլում որևէ հետաքրքրություն կցուցաբերի այդ առաջարկին:

1915 – 06 – 27 – DE – 013

Սկզբնաղբյուրը՝ PA-AA /Կոստ. դեսպ./ 169
Հրապարակված՝ Գ և Հ փաստ. 100 (խմբ. կրճ.)

Կոստանդնուպոլսի դեսպանությանը՝ Տրապիզոնի հյուպատոս Բերգֆելդից

№ 5

Տրապիզոն, 27 հունիսի 1915

Հունիսի 26-ի հեռագրի կապակցությամբ

Միայն Տրապիզոնի տեղահանումից տուժել են ստույգ երեսուն հազար մարդ: Այդպիսի զանգվածային տեղափոխումը հարյուրավոր կիլոմետրերով հեռավոր ճանապարհներին, որտեղ չկա պատսպարվելու տեղ և սննդամթերք, իսկ 300 կիլոմետր հեռու նրանք բոլորը վարակված կլինեն բծավոր տիֆի համաճարակով, և հսկայական զոհեր կլինեն հատկապես կանանցից ու երեխաներից, ապա դրանից կտուժի ոչ միայն Թուրքիայի, այլև նրա դաշնակիցների վարկը: Ես բացարձակապես հայերի բարեկամը չեմ, բայց իմ պարտքն եմ համարում Ձերդ գերազանցությանը մատնացույց անել զանգվածային տեղահանումների վտանգը մարդասիրության ու վարկի տեսակետից: Այստեղի վալին վկայակոչում է Կոստանդնուպոլսի ցուցումները:

Ավստրիացի իմ գործընկերը նույնպիսի հեռագիր է ուղարկում իր դեսպանությանը: Բացի այդ՝ բծավոր տիֆի տարածման վտանգ կա տարագիրների միջոցով: Միգուցե Բարձր Դուռը կհրաժարվի կանանց ու երեխաներին տեղահանելու մտքից կամ կսահմանափակվի նրանց մերձակայքում բնակեցնելով, եթե նրանք կամովին չեն ուզում հետևել իրենց տղամարդկանց:

[Բերգֆելդ]

1915 – 06 – 29 – DE – 002

Սկզբնաղբյուրը՝ PA-AA/R 14086 /Կոստ. դեսպ./169

Ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին՝ Հալեպի հյուպատոս Ռյոսլերից

№ 1382 K № 67

Հալեպ, 29 հունիսի 1915

Ձերդ գերազանցությանը կից հավելվածով խոնարհաբար փոխանցում եմ սարկավագ Քյունցլերի այս ամսվա 20-ի նամակի պատճենը և Գերմանիայի արևելյան միսիայի միսիոներուհի Կարեն Եպպեի՝ այս ամսվա 18-ին իմ կնոջն ուղարկած նամակը: Երկուսում էլ մեկնաբանվում է Ուրֆայի և հեռավոր գավառների իրավիճակը, և երկուսն էլ ինձ փոխանցված են սուրհանդակների միջոցով:

Պարոն Քյունցլերը, որը ծանր հիվանդությունից հետո որոշ ժամանակ մնացել է Ուրֆա քաղաքից դուրս գտնվող խաղողի այգիներում և միայն անցողակի է մտել քաղաք, իր ուշադրությունն այնտեղ սևեռել է հիմնականում հայկական խնդիրների վրա:

Ուրֆայի հյուսիսում քրդերի ապստամբության մասին լուր կա միայն օրիորդ Եպպեի նամակում: Դրա մասին կարելի է գլխի ընկնել նախևառաջ նրանով, որ չերքեզ կամավորները, որոնք համարվում են կառավարական միավորումներ, իրենց կազմակերպած թալանի դիմաց պահանջել են քրդերի հետմղումը, այնպես որ քրդերը համոզված են, որ պաշտպանվում են կառավարական զորքերից: Պարոն Քյունցլերը չի նկատել չերքեզ կամավորների անցումը, որը տևել է հազիվ 2 օր:

Այն, որ Դիարբեքիրում, ինչպես գրում է պարոն Քյունցլերը, սարսափելի բաներ են կատարվում հայերի դեմ, ի դեպ, վալիի պահվածքի հետևանքով, այստեղ լուրեր կային դեռևս հունիսի սկզբից: Դրա վերաբերյալ զեկուցագիրը ես հետաձգեցի, քանի որ Դիարբեքիրից նամակ ստանալու հույս ունեի: Բայց դա չստացվեց: Պետք է, որ շատ վատ բան կատարված լինի, ինչը զգացվում է այստեղի վալի Ջելալ բեյի իմ ներկայությամբ արած պատահական արտահայտությունից, որը կշտամբանք էր պարունակում Դիարբեքիրի վալիի հասցեին: Դիարբեքիրի ապստամբությունը, ինչի մասին այս ընթացքում խոսվում է, հավանաբար հայերի հանդեպ դաժան վերաբերմունքի հետևանք է:

Նաև այլ վայրերում են եղել դաժանություններ, ինչպես ինձ հայտնում են հավաստի աղբյուրներից: Այստեղ լավ հայտնի մի շվեյցարացի, որն ուղևորվեց Բաղդադի երկաթուղու համար վառելափայտ գնելու, Ռումքալեհից վերև տեսել է 6 զույգ հայերի դիակներ՝ մեջք մեջքի կապած, Եփրատով դեպի ներքև լողալիս: Ինչպես գրում է նա, շատ սարսափելի այլ բաներ է տեսել: Բանտերը լեփ-լեցուն են եղել, բայց գիշերվա ընթացքում ձերբակալվածներին վերացրել են: Այս անգամ խոսքը Մալաթիայի մութասարիֆլիկի մասին է (Խարպուտի վիլայեթ): Ռումքալեհը պատկանում է Հալեպի վիլայեթին, որտեղ հիմա լրիվ հանգստություն է տիրում:

Այստեղի վալին նույնիսկ հասավ այն բանին, որ հայերի բնակեցման ժամանակ, որքանով որ այն իրականացվում է Հալեպի վիլայեթի գյուղերում, քսանական ընտանիք մնան իրար մոտ:

Նույն զեկուցագիրը կուղարկվի Կոստանդնուպոլսի կայզերական դեսպանություն:

Ռյոսլեր

Հավելված 2

Պատճեն

Ուրֆա, 18 հունիսի 1915

Հալեպի հյուպատոս Ռյոսլերի կնոջը

Կամավոր զինվորները՝ չերքեզները, որոնք ներկայումս անցնում են այստեղով, իրենց պահում են կազակների նման և ամենևին չեն հարգում կառավարությանը: Հուսալի աղբյուրներից պատմում են, որ նրանք նույնիսկ ապտակել են կանոնավոր զորքերի հրամանատարին: Ես բոլորովին չեմ ուզում հիշատակել այն ամենի մասին, թե էլ ինչեր են կատարվել: Դուք դա ինքներդ էլ կարող եք պատկերացնել: Իմ իմացածից վատթարագույնը, թեպետ ոչ պաշտոնական, բայց ըստ իս՝ հիմնավորված, այն է, որ այդ հրոսակախմբերը նպաստում են քրդական ապստամբությանը: Ամեն դեպքում այստեղից ոչ հեռու քրդերը մեկին սպանել են, և մեզ վատ լուրեր են հասնում: Համենայնդեպս՝ դա կլինի երգի վերջը: Եթե քրդերի ապստամբությունը Վանից տարածվի այստեղ, ապա ռուսներն էլ շուտով այստեղ կլինեն: Քուրդը չի հասկանում, որ կառավարությունն էլ է հուսահատված այս մարդկանց պահվածքից, ինչպես և ինքը: Նա կարծում է, թե հրամանը տրված է դրա համար: Այս տարածքի հայերը, ընդհակառակը, շատ լավ հասկանում են, նրանք միշտ պահել են կառավարության կողմը և մեծ սխալ է, որ նրանց հետ վարվեցին այնպես, ինչպես եղավ այս շաբաթներին: Այստեղի առավել լավ թուրքերի եռանդուն բողոքը բավականին պարզորոշ ապացուցում է, և

Կոստանդնուպոլսի կենտրոնական կառավարությունը, ըստ իս, դա պետք է ավելի շատ հաշվի առներ: Քանի որ նրանք հիմա դառնացել են և ով գիտի, թե արդյոք դա չի դրսևորվի, եթե քրդերի ապստամբությունը հասնի մինչև այստեղ: Համենայնդեպս, կարծում եմ, որ խիստ անհրաժեշտ կլինի անպայման խուսափել, որպեսզի այդ խաժամուժը այստեղով չանցնի: Այլապես մենք ստիպված կլինենք սպասել վատթարագույնին: Մեր մութասարիֆը, իմ կարծիքով, բարեմիտ մարդ է, բայց թե արդյո՞ք նա ի զորու կլինի դուրս գալ այս իրավիճակից, մնում է որպես բաց հարց: Համենայնդեպս, այստեղի բնակչությունը՝ ո՛չ քրիստոնյաները, ո՛չ էլ մահմեդականները, ըստ իս, մեղավոր չէ, որ գործը ծուռ է ընթանում: Պատճառը թյուր ղեկավարումն է վերևից: Օրինակ, ինչո՞ւ են քրիստոնյա բնակչությանը հալածանքներով հրահրում, երբ բացարձակապես ոչինչ չի կատարվել, և բոլորը միասին շատ խաղաղ ապրում են, և ինչո՞ւ այդպիսի անկարգ հրոսակախմբեր են ուղարկում քրդական տարածքներով, երբ մյուս ծայրում կրակում են: Իսկապես դա հիմարություն է:

Այսպիսով ես Ձեր առջև դատարկեցի սիրտս: Ախր հնարավոր է, որ պարոն հյուպատոսը ինչ-որ կերպ համապատասխան տեղում խոսք բացի: Նրան էլ կզայրացնի, որ աջակցում են ռուսներին: Ինձ պարոն Էքարտն է պատմել, որ պարետին ապտակել են, իսկ նա, որպես կանոն, դատարկաբանությամբ չի զբաղվում: Բայց շուրջն այնքան կեղծիք կա, որ մարդ չգիտե՝ ինչին հավատալ: Ժամանակից շուտ դա հաստատելուց ես դեռ ձեռնպահ կմնամ, քանի որ դա ինչ-որ առումով ամենակոպիտ բանն է, որ կարող է կատարվել: Ավելորդ է դրա մասին ավելին պատմել: Ինքնին հասկանալի է, որ նրանք ներխուժում են տները, թալանում են խանութները, անարգում են կանանց: Իսկապես, ամենազարմանալին այն է, որ նրանք մինչև հիմա հարգել են մեր ունեցվածը: Մութասարիֆը չի կարողացել նրանցից մի ձի ետ ստանալ, որը անարդարացիորեն են բռնագրավել, նրանք դա չեն վերադարձրել, իսկ մեր ձիուն մինչև մերոնցից որևէ մեկի մոտենալը, կրկին ախոռ վերադարձրին, միայն հայերի հավաստմամբ, որ այն գերմանացիներին է պատկանում:

Պարետի հետ կատարվածը բավականաչափ հաստատված է, սեփական աչքերով տեսած ոստիկանը հենց հիմա պատմում է այդ մասին:

Մութասարիֆը զինվորական օգնություն է խնդրել, և այսօր պետք է ժամանեն 3 ջոկատ:

[Կ.Եպպե]

1915 – 06 – 29 – DE – 005

Սկզբնաղբյուրը՝ PA-AA/ Կոստ.դեսպ./ 96

Էրզինջանի Կարմիր Խաչի գերմանական լազարեթի բժշկի զեկուցագիրը[20]

Պատճեն

Մոտավորապես հունիսի 1-ին պարզվեց, որ առանձին հայ ընտանիքներ պետք է աքսորվեն, սկզբում ասվեց 5, հետո՝150, ի վերջո՝ բոլոր հայերը: Միաժամանակ այս շրջանում տեսել են Էրզրումի տարածքից եկած հայ ընտանիքների ճամբարներ, որոնք տեղավորվել էին բաց դաշտում, և նրանց հսկում էին ժանդարմները: Մեր սանիտարներից մեկը՝ Գեհլսենը, կամեցել է խոսել մարդկանց հետ, բայց նրան արգելել են: Հաջորդ օրերին վիճակն ավելի պարզ դարձավ: Ամեն տեղ հայուհիները՝ տան առջև նստած, վաճառքի էին հանել իրենց տան ամբողջ ունեցածքը: Ամեն ինչ տրվում էր ծիծաղելի գներով: Գյուղացիներն ու քրդերը հավաքվել էին հայկական թաղամասում և հրմշտոցով տանում էին էշերին բարձած տան կահ-կարասիով լիքը բեռը, ժամանակ առ ժամանակ անցնում էին լիքը բարձած եզան սայլեր: Ակնհայտ էր, որ գնորդները եկել էին քաղաքի ամենահեռավոր շրջակայքից: Հունիսի 10-ին պատկերը փոխվեց: Քաղաքը դատարկվեց: Հայկական թաղամասում ամենուրեք կանգնած էին զինված պահակներ: Հայուհիները տներից դուրս էին գալիս ու էշերով, տնային իրերով ու երեխաների հետ փոքր քարավաններով հեռանում էին: Քանի որ տղամարդիկ զորակոչված էին հիմնականում որպես աշխատուժ, ուստի գերակշռող մասը կանայք էին: Կարելի էր տեսնել նաև քարշ եկող հիվանդների ու շատ ծեր կանանց: Բացառություններ չէին արվել: Մեր զինվորներից մեկի կնոջը, որը բծավոր տիֆով գրեթե անգիտակից վիճակում պառկած էր այստեղ, հունիսի 11-ին ձի նստեցրին, թեպետ ես խստորեն ասացի իմ եզրակացությունը, որ տեղափոխումը կնոջ համար մահ կնշանակի: Հունիսի 12-ին գնաց երկրորդ կեսը, և այդ օրվանից հայկական թաղամասը դատարկվեց,

20. Հավանաբար Նոյքիրխի՝ եղբորը գրած մի նամակն է:

գնացին ամբողջ 10-20.000 բնակիչները (չհաշված հայկական գյուղերի բնակիչներին): Ընդհանուր առմամբ ամեն ինչ ընթացավ կանոնավոր, որքանով կարելի էր դատել արտաքուստ: Աչքի էր զարնում միայն այն, որ ոչ մի ճշգրիտ բան չէր ասվում ուղևորության նպատակի մասին, նշվում էին Արաբիան, Քրդստանը և այլն: Բայց մենք հիմա գիտենք, որ ուղևորությունը Անատոլիայով նույնիսկ ուներ մարդկանց համար՝ ձիով, հեշտ չէ և պահանջում է ուժեղ կազմվածք, որ հետո հաճախ դժվար է լինելու ճանապարհի ոչ մեծ գյուղերում 20 հոգու համար սնունդ ճարելը: Հետևաբար, ինչպես են կերակրելու 20.000 կամ ավելի կանանց, երեխաներին, ծերունիներին՝ շաբաթներ շարունակ կիզիչ արևի տակ, դեռ չխոսելով ծածկի մասին: Ես երբեք լրջորեն չեմ հավատացել կառավարության մտադրությանը, որ դա կանի: Հետևյալը երևի լույս կսփռի, թե որն էր իրականում անցած ուղին: Դեռևս տեղահանման սկզբում մի թուրք բժիշկ մեզ ասաց, որ քրդերը հաստատ բաց չեն թողնի թալանի առիթը: Արդեն հունիսի 11-ին խոսում էին, որ առանձին կանայք հետ են վերադարձել և հայտնել, որ գիշերը հարձակվել են իրենց վրա: Հունիսի 12-ին, վաղ առավոտյան դեղագործ Գեհլսենը, որը տիրապետում է թուրքերենին, տեսել է, թե ինչպես է 20 զինվորից բաղկացած ուղեկալը հեռանում: Նա հարցրել է իրեն ծանոթ մի զինվորի՝ հեռարշավի նպատակի մասին: Նա բացատրել է, որ պետք է գնան Քեմախի կիրճը: Նրանք պետք է հարձակվեն այնտեղ քշված հայերի վրա: Երեկ երեկոյան պահակախումբը վերադարձավ, և Գեհլսենը փորձեց իմանալ, թե ինչ է եղել: Նա ձևացել է հայատյաց և այդպես իմացել է, որ կիրճում շրջապատել են հայ կանանց ու երեխաների մի խմբի և հրամանի համաձայն բոլորին սպանել են: Նրանք ափսոսացել են կրակել գեղեցիկ երիտասարդ կանանց վրա, բայց հրամանն այդպիսին է եղել: Շատ կանայք իրենց երեխաներին նետել են գետը, մյուս երեխաներին թուրքերը վերցրել են իրենց հետ, որպեսզի նրանց դաստիարակեն իսլամով: Կանայք չեն փախել, նրանք բոլորը ծնկի են եկել: Գեհլսենը հանկարծակի հանել է «դիմակը» և սպառնացել է զինվորին մատնել, եթե նրա յուրաքանչյուր բառը ճիշտ չէ: Զինվորն, այնուամենայնիվ, բոլոր տեղեկությունները ճշմարտացի է համարել: Իր ներկայությամբ սպանվածների թիվը նա նշել է մոտ 3000 և ասել է, որ քչերն են փախել, բայց քրդերն արդեն տեղյակ էին գործին: Տեղանքը, որտեղ դա արվել է, շատ հարմար է այդպիսի գործերի համար: Դա այն կիրճն է, որտեղով Եփրատը հոսում է դեպի

արևմուտք՝ Էրզինջանի դաշտավայրով: Այնտեղ ճանապարհը կիլոմետրերով ձգվում է անընդհատ գետի երկայնքով, ուղղահայաց կախված ժայռերն անհնար են դարձնում կողքի փախչելը: Եփրատի ձախ ափին ամայի, ավազակային լեռնային քրդերով բնակեցված շրջան է (Դերսիմը): Եթե այնտեղ ինչ-որ բան կատարվի, ապա միշտ կարելի է մեղադրել քրդերին:

Պատահեց այնպես, որ գերմանական Կարմիր Խաչի միսիայի նստավայրից երկու ժամվա հեռավորությամբ իրականացվեց ջարդ, թեպետ վերջինս էլ չէր կարող դրա դեմ որևէ բան ձեռնարկել:

Կառավարությունն ստիպված է խոստովանել, որ ջարդ է իրականացվել, բայց նա մեղքը գցում է քրդերի վրա և հայտարարում է, որ նույնիսկ զորաջոկատներ է ուղարկել հայերին պաշտպանելու համար: Դրան հակասում են զինվորի ասածները: Կարիք չկա հիշատակելու, որ առանց այդ էլ քաղաքում կոտորածի մասին լուրեր կան: Եթե կոտորածից զերծ է մնացել տարագիրների քարավանի մի մասը, ապա համաճարակը, տապը և քրդերը կհոգան, որպեսզի շատ քչերը կենդանի մնան:

Մեր հոգեվիճակն ահավոր է: Դաշնակցային հարաբերությունների հետևանքով մենք ստիպված ենք դիտել այդ ամենը՝ չկարողանալով որևէ բան անել, բան զեկուցագրեր հնարելը:

Պետք է ասել՝ իմ տեսակետը ճշգրիտ հաստատելու համար, որ ես էլ եմ անհրաժեշտ համարում հայերի դեմ խիստ միջոցների կիրառումը՝ ըստ Գերմանիայի, ինչպես նաև Թուրքիայի ռազմական շահերի: Իրքնին հասկանալի է, որ յուրաքանչյուր հայ տվյալ պայմաններում առաջին իսկ հնարավորության դեպքում կանցնի ռուսների կողմը: Բանակի թիկունքը պետք է ապահով լինի: Ասում են, որ նաև ապստամբող Վանի տարածքում և այլ փոքր վայրերում (Գարահիսար) նրանք կատաղի ըմբոստացել են մուսուլմանների դեմ:

Այնուամենայնիվ, հայերի դեմ թուրքերի այժմյան կատաղությունն այն կարգի է, որ հարց է ծագում, թե որքանո՞վ է հարմար գերմանական Կարմիր Խաչի տեղաբաշխումը մի վայրում, որտեղ ամեն մի հումանիտար օգնություն ծաղր է: Օրինակ, ինչի համար պետք է մենք բուժենք մեզ մոտ պառկած հայ զինվորական բանվորներին, եթե դուրս գրելուց հետո նրանք կարող են սպանվել:

Այս պարագայում ավելի ճիշտ չէ՞ր լինի էքսպեդիցիան տեղափոխել Դարդանել:

Եթե ես շատ եմ կողմ էքսպեդիցիայի տեղափոխմանը, ապա այդ տե-

սակետի պատճառը ոչ թե այն է, որ աշխատակազմի վիճակը՝ 7 կին անդամներով, վտանգավոր կլինի, այլ այն մտահոգությունը, որ անկարող գերմանական պատվիրակության աչքի առաջ կատարվող իրադարձությունները, ինչպիսիք են նկարագրվածները, չեն նպաստի գերմանացիների հեղինակության բարձրացմանը: Հուսով եմ, որ մենք հետ կկանչվենք: Բայց ես կարող եմ դրա օգտին միայն անհատապես հանդես գալ:

Հնարավոր է, որ այս ամենը անհետանա համաշխարհային պատերազմի ընդհանուր զոհերի հետ, հնարավոր է, որ հայերի բազում բարեկամներն աշխարհով մեկ իմ նկարագրած իրադարձություններից ժամանակին մեծ շարժում սկսեն: Իմ անձնական համոզմունքն այն է, որ կանանց ու երեխաների հանդեպ վերաբերմունքն ավելի վատ է, քան այն ամենը, ինչ մինչև այժմ փորձել են ներկայացնել պատերազմի երկու կողմի ջարդերի գրանցման մատյանները: Կոստանդնուպոլսի մեր ներկայացուցչությունը, անկասկած, ընդհանուր առմամբ տեղեկացված է տեղահանման միջոցառումներին, բայց այն մինչև հիմա տեղյակ չէ մանրամասներին, իսկ եթե գիտենա էլ, միևնույն՝ չէր կարողանա ազդել տեղի թուրքական իշխանությունների վրա: Ինչ վերաբերում է մեր էքսպեդիցիային, ապա կար մի լուծում. Հարմար պատրվակով այս վարկաբեկված վայրից մեզ տեղափոխել այլ ռազմաբեմ: Բայց մեր աշխատակազմը միակարծիք չէ այս հարցում, նաև լազարեթի տեղափոխումն ահավոր դժվար կլինի, այնպես որ, մենք ստիպված կլինենք դիմանալ:

Որպես լրացում իմ զեկուցագրերին, հանուն արդարության կավելացնեմ այն ամենը, ինչ ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ թուրքական իշխանությունները տեղեկացրել են մեզ: Նախապես հայտարարում եմ, որ այդ նյութը չի վերաբերում գլխավոր հարցին: Ոչ ոք չի կասկածում, որ հայերի դեմ տեղին էին նույնիսկ անսովոր ծանր միջոցները: Ես վերարտադրում եմ մութասարիֆի տեղեկությունները՝ առանց մեկնաբանության:

1. Վանի գավառը՝ հայերի ահավոր արյունալի ապստամբության հետևանքով հանձնվել է ռուսներին: Բոլոր թուրքերին՝ առանց խնայելու տարիք ու սեռ, սպանել են, նաև ավստրիական բանկի տնօրենին (այլ աղբյուրից):

2. Գարահիսարում էլ է տեղի ունեցել որքան արյունալի, այնքան էլ նենգ ապստամբություն: Այժմյան պահին հայերն ընդդեմ զորքերի ու հրետանու պաշտպանում են քաղաքը:

3. Գտնվել են հրահանգներ՝ նույն կերպ, ինչպես Գարահիսարում,

այստեղ էլ հունիսի 28-ին (երեկ) ապստամբություն է կազմակերպվել: Որպես առաջնային նպատակ նշվել են քաղաքի շուրջը գտնվող մեր զորանոցները, հետևաբար նաև մեր լազարեթը: Հրահանգները եղել են հայկական կոմիտեներից:

4. Գտել են մոտ 300՝ հիմնականում նոր կարաբիններ և այն կարծիքին են, որ կհայտնաբերեն դեռ ավելի շատ զինապահեստներ:

5. Հայտնաբերել են, որ հայկական ամբողջ թաղամասի տակ կան ստորգետնյա ուղիներ, որոնք իրար հետ կապում են տները և տանում են մինչև կառավարական շենքի տարածք: **Մենք գնեցինք շատ տների գետնանցքերը և համոզվեցինք ստորգետնյա ուղիների առկայության մասին**: Այդ համակարգը քանդում են, քանի որ այնտեղ դեռևս կան զինված հայեր, ովքեր կրակել են շատ մարդկանց վրա: (**Մեկ վիրավոր և մեկ սպանված մեզ մոտ): Դժվար է որոշել այդ գետնուղիների վաղեմությունը, համենայնդեպս, այնքան էլ նոր չեն**:

6. Խոհանոցի նկուղում ռումբ են հայտնաբերել, դրանք հեռացնելու փորձ անելիս (կամ, թերևս, դրանք հեռացնելու վախից) պայթել են: **Մենք ինքներս հստակորեն տեսել ենք, որ խոհանոցն ամբողջովին ավերվել է ուժեղ պայթյունից**:

Եթե Դու փոխանցել ես իմ առաջին զեկուցագրերը, ապա հանուն արդարության նույն տեղն ուղարկիր նաև այսօրվա լրացումները:

1915 – 06 – 30 – DE – 001

Սկզբնաղբյուրը՝ PA-AA /Կոստ.դեսպ./169

[Մորդմանի գրառումը]

Ներկայացված նախագծի վերաբերյալ կարող եմ ասել հետևյալը.

1. Ինչպես պարզվում է Սամսունից, Տրապիզոնից ու Հարպուտից (վերջինները՝ քահանա Էհմանից) եկած հեռագրերից և ինչը մի քանի օր առաջ ինձ մոտ բանավոր հաստատեց Ջանբուլատ բեյը՝ Անատոլիայի քարտեզը ձեռքին, թուրքական կառավարությունը որոշել է ավելի հեռուն տարածել հայերի տեղահանման միջոցառումները, այսուհետ նաև Ջանիկ, Տրապիզոն, Սվազ և Մամուրեթ ուլ Ազիզ գավառների հայերին պետք է աքսորեն Միջագետք:

Դա այլևս հնարավոր չէ արդարացնել ռազմական նկատառումներով, խոսքն ավելի շատ, ինչպես մի քանի շաբաթ առաջ ինձ ասաց Թալեաթ բեյը, հայերի ոչնչացման մասին է:

Նոր նախագիծը կիրարկելիս ես կարծում էի, թե պետք է անուղղակիորեն մատնանշենք, որ մենք չենք կարող համաձայնել այդպիսի զանգվածային տեղահանումներին:

2. Պետք է ակնկալել, որ Գերմանիայի հայամետ շրջանակներում մեծ հուզումներ կառաջացնի գերմանա-հայկական հաստատությունների փակումը: Մարաշում գտնվող օգնության միության հայկական անձնակազմի համար (խոսքը հատկապես գյուղական աշխատողների մասին է) ես ոչինչ չկարողացա անել: Հարպուտի համար (Էհմանի միսիոներական հաստատությունը), ըստ երևույթին, մեր խնդրանքի առնչությամբ դեռ երեկ հեռագրել են այնտեղ:

Անհրաժեշտ եմ համարում Բարձր Դռան ուշադրությունը հրավիրել հատկապես այդ հաստատությունների վրա, ինչի համար էլ նոր նախագծում դրա վերաբերյալ մի պարբերություն եմ ավելացրել:

Առաջին նախագիծը (ֆրանսերեն)

[Ի վերջո Բարձր Դռանը փոխանցված հուշագիրը, տե՛ս 1915-07-07-DE-001 փաստաթղթերի հավելվածը:]

1915 – 06 – 30 – DE – 002

Սկզբնաղբյուրը՝ PA-AA / Կոստ. դեսպ. / 170

Կոստանդնուպոլսի դեսպան Վանգենհայմին՝ Կիլիկիայի հայերի կաթողիկոս Սահակ 2-ից

Հալեպ, 30 հունիսի 1915

Շատ հարգելի պարոն դեսպան,

Իմ կյանքի 66 տարիների ընթացքում առաջին անգամ է, որ ես գրում եմ դեսպանի՝ ոչ թե որպես օտարի, այլ որպես թուրքական կայսրության հետ բարեկամացած ու դաշնակցող գերմանական կայսրության հարգելի ներկայացուցչի:

Իմ նամակը ոչ բողոք է, ոչ էլ խնդրանք, քանի որ իմ պարտքն եմ համարում բողոքներն ու խնդրանքները ուղղել միայն մեր բարի օսմանյան կառավարությանը, քանի որ որպես թուրքահպատակներ մեր դժվարությունների մասին կարող ենք դիմել միայն օսմանյան կառավարությանը:

Անձնական դժվարությունները չէ, որ ինձ ճնշում են: Ընդհակառակը՝ ես վայելում եմ կառավարության վստահությունը և իմ հավատարմությունը հաստատված է երկու գերագույն շքանշաններով՝ մեջիդիեով և օսմանիեով, նաև կրոնական իմ բարձր դիրքով՝ որպես Կիլիկիայի կաթողիկոս: Այստեղ-այնտեղ տարածված թյուր դատողությունները, թե իբր հայերը չեն ցանկանում գերմանական տերության հաջողությունը, հարուցում է իմ տխրությունն ու զարմանքը:

Ի՞նչ ազդեցություն պետք է ունենար այդ ցանկությունը, եթե նույնիսկ դա իսկապես լիներ, գերմանացիների ուժեղ ու անպարտելի իշխանության վրա, որով հիանում են ամբողջ աշխարհում, նույնիսկ՝ թշնամիները:

Ի՞նչ արժեք կունենար գերմանացիների այնքան առաջադեմ կրթության ու գիտության վերաբերյալ հայերի գովասանքը:

Հայը, որ դարեր շարունակ ապրել է օսմանների բարձր հովանու ներքո, միայն նրան է պարտական ցայժմ գոյատևող իր կրոնի ու լեզվի համար: Նա օտարներից ոչ մի հույս չի ունեցել, որպեսզի դաշնակցեր նրանց հետ կամ հակառակ դեպքում՝ հակադրվեր: Դա յուրաքանչյուր քաղաքակիրթ հայի անկեղծ կարծիքն է:

Եթե կրոնը կապ է ազգությունների և ժողովուրդների միջև, ապա գերմանացիները նույնպիսի քրիստոնյաներ են, ինչպես և հայերը: Գերմանացիները հիմնականում գերազանցում են մյուս ժողովուրդներին, քանի որ գործում են ոչ թե մթության մեջ, այլ թողնում են ազատ սփռելու իրենց կրոնի լույսը:

Քանի որ մարդասիրությունը թույլ ժողովուրդներին միացնում է ուժեղների հետ, կարող եմ ասել, որ ինչպես Անատոլիայում, այնպես էլ Կիլիկիայում կան հայեր, ովքեր օգտվում են հիմնականում գերմանացիների բարեգործական ու դաստիարակչական հաստատություններից: Գերմանիայի համալսարանները նույնպես հաճույքով են ընդունում երիտասարդ հայերին, ովքեր ուսման ծարավով գնում են այնտեղ: Հայերն անմասն չեն Բաղդադի երկաթուղու օգուտից:

Երբ Նորին մեծություն Վիլհելմ 2-ը կայսրը՝ Պրուսիայի թագավորը, այցելեց Պաղեստին, ես այնտեղ եպիսկոպոս էի և պատիվ ունեցա մեր պատրիարքի շնորհիվ գերմանական հյուպատոսությունում ներկայացվելու Նորին մեծությանը: Եվս մեկ անգամ պատիվ ունեցա Նորին մեծու-

թյանը իր շքախմբի հետ մեր Սուրբ Հակոբ վանքը այցելելի ցույց տալ այնտեղ գտնվող հնագույն քրիստոնեական գրքերն ու անտիկ արվեստի նմուշները: Ամբողջ հայ ժողովուրդը երախտապարտ է Նորին մեծությանը՝ այդ այցելության համար: Ինչպես իմ հոգում է դրոշմվել այդ այցելությունը, այդպես էլ յուրաքանչյուր հայի սրտում: Գերմանիայի մայրաքաղաք Բեռլինը հայերի համար ավելի սիրելի է, քան իր ծննդավայրը: Հայերը, ովքեր գերմանացիների հետ կապված են գերմանական ժողովրդի մարդասիրությամբ, քաղաքակրթությամբ, դաստիարակությամբ, կրոնով ու բարեգործությամբ, այնքան ստոր չեն, որպեսզի լինեն երախտամոռ:

Ինչպես արդեն նշվեց վերևում, հայերի լավ ու վատ դատողությունները ոչ մի ազդեցություն չունեն հաղթանակներով պսակված գերմանական ժողովրդի հզորության ու փառահեղության վրա: Բայց լայնորեն տարածված կասկածը, որ ընկնում է մեր ժողովրդի վրա, ամենամեծ ցավերից մեկն է պատճառում մեր դժբախտ ու մեռնող ժողովրդին:

Հուսալով, որ Ձերդ գերազանցությունը հավատ կընծայի իմ նամակի ճշմարտացիությանը, խնդրում եմ Ձերդ գերազանցության ազդեցությամբ մեր վրայից հանել այդ կասկածը, որն ամենամեծ տառապանքն է մեր բազում ցավերի մեջ:

Մենք խնդրում ենք Ձերդ գերազանցությանը, ինչպես մինչև հիմա, այնպես էլ այսուհետ շարունակել միջամտել մեր օգտին: Մենք աղոթում ենք Ձերդ գերազանցության և Ձեր տիկնոջ թանկ կյանքի համար, օսմանյան կառավարության և նրա դաշնակից հզոր կայզերական տերության համար:

Կիլիկիայի կաթողիկոս Սահակ 2-րդ

[Դեսպանության նշումը 14.7]

Վերադարձնելու պայմանով: Հալեպի կայզերական հյուպատոսությանը՝ որպես ի գիտություն և խնդրանքով, որ կաթողիկոսին բանավոր շնորհակալություն հայտնեն իր մտորումներն արտահայտելու համար:

[Ռյոսլերի նշումը 10.8]

Հանձնարարությունը կատարելուց հետո խոնարհաբար վերադարձնում եմ Կոստանդնուպոլսի դեսպանությանը:

1915 – 07 – 09 – DE – 003

Սկզբնաղբյուրը՝ PA-AA. /Կոստ. դեսպ./ 169

Կոստանդնուպոլսի դեսպան Վանգենհայմին՝ Էրզրումում ռեգենտ Շոյբներ-Ռիխտերից

Էրզրում, 9 հուլիսի 1915

№ 20[21]

№ 19 իմ զեկուցագրի կապակցությամբ ինձ իրավունք եմ վերապահում Ձերդ գերազանցությանը խոնարհաբար հայտնելու հետևյալը՝ այստեղի իրավիճակում կողմնորոշվելու համար:

Սոլիդյանի և Էլյարյանի գործում այստեղի իշխանությունների կոշտ գործելակերպը, իմ կարծիքով, պետք է վերագրել հատկապես ոստիկանության պետ Խլուզի բեյին:

Նրա Էրզրում վերադառնալուց հետո (մոտ 5 ամիս նա եղել է Թերջանում և Էրզինջանում) տեղահանման եղանակը ցավալի ընթացք է ընդունել:

Այնուհետև այստեղ համընդհանուր՝ այսինքն թուրքական ու հայկական շրջանակներում, իշխում է տեսակետ (իմ տվյալներն էլ են հաստատում նույնը), որ հենց նա է Թերջանի և այլ ողբալի ջարդերի գլխավոր հեղինակը:

Ըստ թուրքական աղբյուրների տվյալների, բացի այդ, այստեղ կազմակերպվել է կոմիտե՝ բաղկացած հետևյալ անդամներից.

Խլուզի բեյ[22]՝ ոստիկանության պետ
Զեյֆուլահ էֆենդի՝ պատգամավոր Էրզրումից
Բեյադին Շաքիր[23]՝ հրոսակախմբի առաջնորդ
Մյուրդար[24] Զադե Ահմեդ
Յունոս Խինազի

21. Դեսպանության նշումը՝ «Խիստ գաղտնի»:
22. Դեսպանության ուղղումը՝ Հալուսի:
23. Դեսպանության ուղղումը՝ Բեհաեդդին:
24. Դեսպանության ուղղումը՝ Մուհուրդար:

Դրանց թվում են հավանաբար նաև

Հիլմին՝ «Միություն ու առաջադիմություն» կոմիտեի այստեղի նախագահը:

Այդ կոմիտեն զուգընթաց զբաղվում է ճակատագրական կողմնակի ղեկավարմամբ ու թերևս հաճախ տապալում է կառավարության բարեմիտ մտադրությունները, ինչպես օրինակ հայերին տեղահանելիս: Դրա ընթացքում եղած դաժանությունները և ջարդերը հավանաբար պետք է վերագրել կոմիտեի այդ անդամների գործունեությանը, որոնց ազդեցությունը, ըստ երևույթին, քիչ չէր:

Վերոնշյալ առաջին երկու պարոնները չեն խորշում նաև այլ բռնություններից:

Շոյքներ-Ռիխտեր

1915 – 07 – 10 – DE – 011

Սկզբնաղբյուրը՝ PA-AA / Կոստ. դեսպ./169
Տպագրված՝ Գ և Հ փաստ. 110 /խմբ./, 111

Կոստանդնուպոլսի դեսպանությանը՝ Մոսուլի փոխհյուպատոս Հոլշթայնից

№ 8

Մոսուլ, 10 հուլիսի 1915

Մարդինի նախկին մութասարիֆը (հիմա նա այստեղ է) ինձ հայտնում է հետևյալը.

Դիարբեքիրի վալին՝ Ռեշիդ բեյը, իր վիլայեթի քրիստոնյաների մեջ մոլեգնում է ինչպես արյունարբու գազան: Վերջերս նա հրահանգել է նաև Մարդինում Դիարբեքիրից հատուկ այդ նպատակով ուղարկված ժանդարմերիայի միջոցով, մի գիշերում հավաքել յոթ հարյուր քրիստոնյաների (հիմնականում հայերի), նրանց հետ նաև հայ եպիսկոպոսին, և քաղաքի մերձակայքում մորթել է տվել, ինչպես ոչխարների: Ռեշիդ բեյը շարունակում է իր արյունալի գործը անմեղների մեջ, որոնց թիվը, ինչպես հավաստիացրեց մութասարիֆը, անցնում է երկու հազարից:

Եթե կառավարությունը Ռեշիդ բեյի դեմ անմիջապես չձեռնարկի ա-

մենախիստ միջոցներ, ապա այստեղի վիլայեթի ստորին խավի մահմեդական բնակչությունը նույնպես կսկսի քրիստոնյաների սպանդ: Այդ առումով վիճակն այստեղ օրեցօր դառնում է ավելի սպառնալի:

Ռեշիդ բեյն անմիջապես պետք է հեռացվի, պաշտոնանկ արվի, որով կհաստատվեր, որ կառավարությունը չի խրախուսում նրա խայտառակ արարքները և ինչի շնորհիվ համընդհանուր հուզումներն այստեղ կարող էին հանդարտվել:

Խնդրում եմ հեռագրով հաստատել սույն հեռագրի ստանալը:

[Հոլշտայն]

[Վանգենհայմի հեռագրային պատասխանը 11.7]

№8 հեռագիրն ստացա, բովանդակությունը կհայտնեմ Բարձր Դռանը:

1915 – 07 – 11 – DE – 002

Սկզբնաղբյուրը՝ PA-AA / Կոստ.դեսպ./

Կոստանդնուպոլսի դեսպանությանը՝ Ադանայի հյուպատոս Բյուգեից

Մ. № 623

Ադանա, 11 հուլիսի 1915

1 հավելված

Պատիվ ունեմ Ձերդ Գերազանցությանը խորնարհաբար ներկայացնել հայերի հալածանքների վերաբերյալ Հարունիեի գերմանական որբանոցի տնօրեն Բ. ֆոն Դոբելերի կից դիմումը:

Պարոն Դոբելլերին ես կասկած չեմ թողել, որ դրա վերաբերյալ Ձերդ գերազանցությանը ներկայացված տեղեկությունների համաձայն, ես անհավանական եմ համարում կայզերական դեսպանության միջնորդավորված միջամտությունը: Նույն պատճառով էլ ձեռնպահ եմ մնում մանրամասնել հայկական տարրի դեմ անիմաստ պատժիչ միջոցների տխուր հետևանքները, ընդհանուր առմամբ՝ երկրի և մասնավորապես այստեղ գոյություն ունեցող գերմանական շահերի համար՝ չխոսելով հեղինակության կորստի մասին:

Բյուգե

Հավելված

Հարուցիչ՝ Ադանայի վիլայեթում, 10 հուլիսի 1915

Ձերդ գերազանցություն,

խորին հավատարմությամբ խնդրում եմ սույնն ընդունել որպես ի գիտություն:

Թուրքիայում՝ հեռու, ավելի ճիշտ կլինի ասել՝ հեռու մարդկային օգնությունից, մենք գտնվում ենք մի ժողովրդի՝ հայերի մեջ, և ստիպված ենք նայել, թե ինչպես են ոտնահարում այդ ժողովրդին:

Մենք՝ արտասահմանում գտնվող գերմանացիներս, հիացմունքով հետևում ենք, թե ինչպես է մեր հիասքանչ Գերմանիան՝ իր ուժեղ ու անզուգական կայսեր գլխավորությամբ, քայլում հաղթանակից հաղթանակ, և մեր սիրտը ցնծում է յուրաքանչյուր հաղթանակի վերաբերյալ այստեղ հասած լուրից: Ի վերջո, ըստ էության, սա լույսի պայքարն է ընդդեմ խավարի, ճշմարտության պայքարն՝ ընդդեմ ստի, և մենք ուրախանում ենք, որ ժողովուրդների միջից Գերմանիան է ընտրվել այդ պայքարը վարելու համար:

Ճշմարտությունն ու իրավունքը այս հողի ամենամեծ ուժն են, և եթե Գերմանիան ձգտում է տևական ազդեցություն ձեռք բերել ազգերի մեջ, եթե ամբողջ գերմանական ազգը պետք է հասնի ճանաչման ու խրախուսվի, ապա Գերմանիան, առանց որևէ վերապահության, պետք է իր գործունեության ղեկավար սկզբունքը դարձնի ճշմարտությունն ու օրենքը: Թող Աստված մեզ ազատի անգլիական նշանաբանից. «Right or wrong my country»[25]: Ոչ մի հաջողություն չենք ունենա, եթե մեր զինանշանին պետք է ստվեր ընկնի, բայց յուրաքանչյուր իրադրությունից կարող ենք շահ ունենալ, եթե հաշվի առնենք ոչ թե շահը, այլ աչքի առաջ նպատակ ունենանք ճշմարտության համար տեղ ազատելու: Մի՞թե դա հնարավոր չէ: Օրինակ, Թուրքիայում տասնամյակներ շարունակ գերմանացիների ազդեցություն ձեռք բերելուն ոչինչ այնքան լավ չէր կարող նպաստել, որքան հանուն հայերի հանդես գալը: Անհեթեթ է հնչում, բայց դա այդպես է, քանի որ չեմ կարծում, թե պետք է միջամտել, որպեսզի հայերը խախտեն օրենքները, կամ չպատժվեն նրանց միջի

25. Ճիշտ է թե սխալ՝ իմ երկիրն է (անգլ.) (ծան. թարգմ.):

մեղավորները, կամ կառավարությանը խանգարել ձեռնարկել միջոցներ, որոնք անհրաժեշտ են երկրի անվտանգությունն ապահովելու համար, ամենևին ոչ, նման բան պահանջողը չպետք է դուրս եկած լիներ գերմանական պահապանողական շրջանակներից: Խոսքը ոչ թե միջամտության մասին է, այլ, ինչպես յուրաքանչյուր ոք կհամաձայնի, դեռևս զարգացման նախնական փուլում գտնվող կառավարության արդարացի դրվածքի: Դա կլիներ իսկական բարեկամական ծառայություն թուրքերին և կգնահատվեր որպես այդպիսին, իսկ հետևանքները կլինեին պարզապես անկանխատեսելի, քանի որ դրանք ավելի շատ կօգնեին, քան ցանկացած քարոզչություն:

Ես կարող եմ միանշանակ ասել, որ հայերի տեղահանումը չափազանց շատ կլինի հենց իրենց՝ անատոլիական թուրքերի համար, նրանց, ում հարմար առիթ է ընձեռվել հարստանալու, թեպետ այն եղանակը, թե ինչպես է դա կատարվում՝ հարուցում է իրենց իսկ նողկանքը: Ավելի հաճույքով նրանք չէին ցանկանա ապականվել, նրանք էլ պակաս չեն զարմանում իրենց համար անըմբռնելի միջոցառումներից և կարծում են, որ գերմանական կառավարությունն էլ այդ ամենում իր բաժինն ունի: Այն, որ Գերմանիան ներկայացնում է քաղաքակրթության ավելի բարձր աստիճան, բոլորին պարզ է, բայց նրանք սխալվում են, քանի որ ասում են, թե Գերմանիան լռության է մատնում այն, ինչին ոչ մեկը հավանություն չի տալիս, ինչը նաև իրենց չինովնիկներն են անում ստիպողաբար ու նողկանքով, թեպետ դրանում նրանք միայն դրամական շահ ունեն: Այո, նրանք մի քայլ առաջ են գնում և ասում են, որ դա իրենց կառավարության գործը չէ, այլ նա կատարում է գերմանական իշխանավորների կամքը: Ըստ մտքերի այդպիսի ընթացքի, թուրքերը երկրի խորքում սփոփում են հայերին, ասելով, որ հիմա ձեզ են քշում, հետո էլ կգա մեր հերթը, քանի որ դա է գերմանացիների գործելակերպը, նրանք ուզում են երկիրը գրավել: Իսկ մենք կանգնում ու ամաչում ենք: Մի՞թե դա ցավալի չէ: Այն հպարտ խոսքը՝ «Civis germanus sum» հզոր ժամանակներում կդառնա գրեթե ներողություն խնդրելու պատճառ: Մի անգամ չէ, որ գերմանացու բերանից իմ ականջին է հասել «մենք ամաչում ենք լինել գերմանացի», շատ ավելի հաճախ ինձ էլ է համակել այդ զգացումը: Առաջին անգամ, երբ ես դա լսեցի, ափերից դուրս եկա, զայրացա ու մտածեցի, թե ինչպե՞ս կարելի, հետո տեսա, որ ոչ միայն կարելի է, այլև պետք է: Հայերին ընդհանրապես հաշվի չեն առնում, նրանք ստիպված են թողնել տունուտեղ՝ ինչպես կա, ու տարագրվել, ուր՝ ոչ ոք չգիտի, դեպի անհայտ ապագա: Այդպես նրանք հազարներով քարշ են գալիս Անատո-

լիայի սայլուղիներով՝ ամենուրեք առաջացնելով մեծագույն կարեկցանք, քանի որ նրանց մեջ կան շատ հղի կանայք, ծծկեր երեխաներ, շատ երեխաներ, շատ հիվանդներ ու թշվառներ, նաև կույրեր կան նրանց մեջ, շատերը գրեթե մերկ են, բոբիկ ու վիրավոր ոտքերով մեռնում են այրող ու հաճախ քարքարոտ ճանապարհներին: Նրանցից շատերը հարուստ են եղել, նրանք ջանասիրությամբ մշակել են դաշտերն ու այգիները, մեծ նախիրներ են ունեցել ու ամեն տեսակ տնային գույք, նրանք նաև կապիտալ են ներդրել, հանկարծ ամեն ինչ պետք է թողնեն, երբ դաշտերում բերքը սպասում է հնձվորներին, նրանք պետք է հեռանան, որպեսզի ամիսներով անգործ պառկեն ու նայեն, թե ինչպես են տապալվում կին ու երեխա: Բոլորովին անտեսելով զուտ մարդկային տեսակետը, յուրաքանչյուր ոք պետք է խոստովանի, որ այստեղ հանցագործություն է կատարվում նաև ժողովրդական տնտեսության մեջ, որ այստեղ պետությունը լավագույն ուղու վրա է՝ հենց իրեն ծանր ու տևական հարված հասցնելու համար:

Քաղաքներում գործն ընթանում էր մի քիչ այլ կերպ, քան գյուղերում: Ի՞նչ հսկայական արժեքներ են ներդրված տարբեր առևտրական հիմնարկներում ու ձեռնարկություններում և որքա՞ն իսկապես անփոխարինելի ծառայողներ կան: Ինչպես գործարանները, այնպես էլ Բաղդադի երկաթուղին, մեծ ու փոքր բանկային հիմնակներն ստիպված եղան փակվել հայերի տեղահանման՝ կառավարության միջոցառումներից հետո: Թուրքական կառավարությունն ի վիճակի չէ այդ աշխատատեղերի համար փոխարինողներ գտնել, և այն ուժերը, որոնց նա անփութորեն շպրտում է իրենից, պոկում է իր իսկ պետական մարմնից: Բայց դա նրա գործն է, մենք բողոքում ենք այն միջոցառումների դեմ, որոնցով ծաղրում են ամբողջ քաղաքակիրթ միտքն ու մարդկությանը: Թե՞ անբարոյություն չէ՝ քաղաքի կրթված բնակչությանը շպրտել գյուղական ճամփաներին, կանանցով ու երեխաներով հանդերձ, կիզիչ արևի տակ ու տապին, քամուն ու վատ եղանակին, առանց հանգրվանի հույսի, մատնված ամբողջովին անհայտ ապագային: Ազգերի պարտքն է՝ բողոքել այդպիսի անարդարության դեմ, և քանի որ այժմյան պահին միայն Գերմանիան է խնդրո առարկան, ուրեմն դա պետք է գերմանական կառավարության վրա բարդել: Եթե կհակաճառեն, որ այն, ինչ կատարվում է, Թուրքիայի ներքին գործն է, որին ոչ ոք չպետք է միջամտի, որ դա Թուրքիայի ներքին գործն է, թե ինչ կանի իր երկրի հետ, ապա այդ հակաճառությունները նույնքան հին են, որքան և մաշված: Այդ դեպքում Գերմանիան է դառնում

պատասխանատու այստեղի քրիստոնյաների ողբալի վիճակի համար, երկրորդ հերթին խոսքը Գերմանիայի վարկի պահպանման ու գերմանացիների ազդեցության ավելացման մասին է: Ինքնին հասկանալի է, որ արդար միջոցառումների եռանդուն միջամտության համար, թերևս լավ կլիներ ինչ-որ կերպ կասկած հարուցած հայ տղամարդկանց պատերազմի ժամանակ ներկալել, առանց սեփականազրկելու, լավագույն տպավորությունը կթողներ թուրքերի վրա, դրանով բոլոր ժամանակների համար կշահեին հայերի համակրանքը, որը մեծ նշանակություն կունենար, եթե նկատառվի, որ հայերի գերակշռող մասը մտավորականներ են:

Ի՞նչն է ինձ մղել այդպիսի դատողությունների. առաջին հերթին ճնշվածների հանդեպ սերն է, որ բոլորը սրիկա չեն, ինչպես պատրաստ են հեշտությամբ մտածելու ընկածների մասին, նրանց մեջ կան անհատներ, որոնք մեզանում հարգանք են ներշնչում: Նրանց մեծ մասը ըմբռնումով ու հանգիստ, վստահությամբ լի կրում է այդ ծանր բեռը, ինչը վրա է հասել, առանց բողոքի ու մեղադրանքի, առանց դառնության որևէ խոսքի նրանք նայում են, թե ինչպես են իրենցից խլում ամեն ինչ և ինքնատիրապետմամբ իրենց յուրայինների հետ վերցնում են պանդխտության ցուպը: Բայցևայնպես, գիշերներն ու հանգիստ ժամերին արցունքներ կհոսեն, ակնհայտ կդառնա ու կգիտակցեն կորստի մեծությունը: Ի՞նչն է ինձ մղել այսպիսի մտորումների, ապա երկրորդ պատճառը՝ դա սերն է գերմանական հայրենիքի հանդեպ և այն համոզվածությունը, որ ոչ մի ժողովրդի հետ չէր կարող պատահել ավելի լավը, քան այն, որ ներծծված է գերմանական էությամբ և որ գերմանական ազդեցությունը պետք է գերակշռի նաև այս երկրում, իր իսկ բարեկեցության համար, քանի որ գերմանական էությամբ աշխարհը դեռ մեկ անգամ էլ կառողջանա:

Եզրափակելով՝ Ձերդ գերազանցությանը կխնդրեի, նկատի ունենալով վերևում ասվածը, միջոցներ ձեռնարկել, որոնք թուրքական կառավարությանը կմղեն փոփոխություններ մտցնելու այժմյան իրավիճակում և մեղմացնել դաժանությունները:

Խորին ակնածանքով և Ձերդ գերազանցության
ամենախոնարհ ծառան՝
Բ. ֆոն Դոբելեր
Ադանայի վիլայեթում Հարունիեի գերմանական որբանոցի վարիչ

1915 – 07 – 12 – DE – 001

Սկզբնաղբյուրը՝ PA-AA /Կոստ.դեսպ./ 169

Կոստանդնուպոլսի դեսպանի կնոջը՝ երկու հայուհիներից

Պերա, ...Հունիսի 1915[26]

Ձերդ գերազանցություն դեսպան- բարոնուհի ֆոն Վանգենհայմ,

Մենք՝ ներքոստորագրյալներս, պատիվ ունենք Ձերդ գերազանցությանը խնդրարկելու՝ բարեհաճել մի քանի րոպե հատկացնել մեզ զրույցի համար, որպեսզի Ձերդ գերազանցությանը բացատրենք մեր գործելակերպի նպատակը:

Հուսալով, որ կարժանանք Ձեր ընդունելության պատվին, խնդրում ենք Ձեզ՝ գթասիրտ տիկին դեսպանուհի, ընդունել մեր խորին հարգանքի հավաստիքները:

Ա. Դագավարյան

[Մորդմանի գրառումը 12.7]

3967- ի կապակցությամբ

Դեսպանության պարոն խորհրդականի համաձայնությամբ այսօր ընդունեցի երկու հայ տիկնանց, որոնք վերջերս ընդունելություն էին խնդրում տիկին դեսպանուհու մոտ: Նրանք էին՝ տիկին Դագավարյանն ու տիկին Զաքարյանը, որոնք հետևյալ հայերի կանանց ու հարազատների անունից խնդրում էին կայզերական դեսպանության պաշտպանությունը:

1.Դ-ր Դագավարյան, Սվազի նախկին պատգամավոր ու քաղաքային պրեֆեկտուրայի հրահանգիչ,

2. Վարդգես Է. Երզրումի նախկին պատգամավոր,

3.Զարդարյան, «Ազատամարտի» գլխավոր խմբագիր,

4. Սարգիս Մինարյան, ուսուցիչ և հրապարակախոս,

5. Զանգիրյան, պատրիարքարանի եկեղեցական խորհրդի անդամ,

6. Հայկ, ուսուցիչ, ռուսահպատակ,

7. Դ-ր Ակնունի, նույնպես ռուսատանյան հայ:

Արդեն մի քանի շաբաթ առաջ նրանց մի մասին այստեղից, մի մասին էլ Այաշից տարել էին Դիարբեքիր, որպեսզի դատեն այնտեղի ռազմական դատարանում, նրանց մասին ավելի հավաստի լուրեր չկան:

Ներկայացածներին բացատրեցի՝

1. որ տիկին դեսպանուհին շատ կարեկցում է այդ տղամարդկանց ընտանիքներին վրա հասած հոգսի ու տառապանքի համար,

2. որ բացառված է պաշտոնական միջամտություն վերոնշյալ անձանց համար,

3. որ կայզերական դեսպանությունը շատ է ցանկանում, որպեսզի ռազմական դատարանը մահապատիժ չորոշի, կամ դատավճիռը ի կատար չածվի,

4. որ ես վստահաբար կարծում եմ, թե մեր այս տեսակետը հայտնի է Բարձր Դռանը, և ես հուսով եմ, որ Բարձր Դուռը դա նկատի կունենա:

Այսօր հարևանցիորեն պատմեցի նաև Ազիզ բեյին՝ Զանբուլատ բեյի օգնականին (ինքը բյուրոյում չէր) և հարցրի նրան, թե արդյոք վերոնշյալ հայերի հարազատները, ինքնին հասկանալի է՝ ընդունված սահմանափակումներով, նամակագրական կամ հեռագրային կապի իրավունք ունե՞ն:

Նա հարցին դրական պատասխանեց, Հայկ էֆենդուն մենք հանձնարարեցինք այդ մասին հայտնել մտահոգ կանանց:

Ես կցանկանայի խոնարհաբար բարեխոսել, եթե պարոն դեսպանը Բարձր Դռան մոտ կանդրադառնա հայկական հարցին, ապա ուշադրություն դարձնել նաև Դիարբեքիրում ռազմական դատարանին հանձնած հայերին:

[Նոյոռաքի նշումը]

Ես համաձայն չեմ դրան, այս պահին մենք չենք կարող անել ավելին, քան մինչև այժմ արածը:

[Մորդմանի նշումը]

Ընդունված է որպես ի գիտություն:

1915 – 07 – 13 – DE – 001

Սկզբնաղբյուրը՝ PA-AA / R14086; /Կոստ.դեսպ./169

Ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին՝ Կոստանդնուպոլսի դեսպան Վանգենհայմից

26. Քանի որ նամակը ճշգրիտ չի թարգմանված, ուստի Մորդմանի գրառման ամսաթիվը համարվում է մուտքի ամսաթիվ:

№ 443

Պերա, 13 հուլիսի 1915

1 հավելված.

Ֆրոյլայն Ֆրիդա Վոլֆ Հունեքեն՝Ռիշենաուից (Լիփե-Դեթմոլդ), մինչև այս տարվա ապրիլի 28-ն աշխատել է Կեսարիայի մոտ գտնվող Էվերեքի նախկին անգլիական միսիոներական կայանում, հետո տեղի իշխանությունները նրան արտաքսել են, որովհետև թաքցրել է հայերի արգելված զենքը, ապա տեղափոխվել է սկզբում Թալաթի մոտ գտնվող Զինջիդերեի գերմանա-ամերիկյան որբանոց, որտեղից էլ հուլիսի սկզբին եկել է այստեղ, երբ արդեն կայզերական դեսպանության միջամտությամբ Կեսարիայի մութասարիֆը նրան թույլատրել է մեկնել, այնուհետև նա այստեղից մի քանի օր առաջ վերադարձել է հայրենիք:

Իր մեկնումից ոչ շատ առաջ նա կայզերական դեսպանությանն է հանձնել Էվերեքում իր վերապրածի՝ բնագրով կցված նկարագրությունը, իսկ դրա մի պատճենը ինչպես վկայում է երեսի նշումը, նա տվել է այստեղի ամերիկյան դեսպանատուն: Հետագայում պարզվել է, որ հայ պատրիարքն արդեն տեղյակ է այդ զեկուցագրի առանձին մասերին, ըստ այդմ՝ կարելի է կանխատեսել, որ ֆրոյլայն Հունեքեի պատմությունները կտարածվեն ավելի հեռու[27]:

Էվերեքում ռումբ գտնելու մասին հիշատակվել է դրա վերաբերյալ մայիսի 8-ի №286[28] զեկուցագրում: Ակնհայտ է, որ այս գործն այնքան էլ անմեղ չէ, ինչպես այն նկարագրում է ֆրոյլայն Հունեքեն: Այն, որ նա հայերի խնդրանքով իր մոտ թաքցրել է մի մաուզեր ատրճանակ և մի հրացան, ըստ երևույթին՝ որսորդական, հետո էլ օգնել է այդ երկու զենքը վերացնելիս, նա բացահայտորեն խոստովանել է ավելի վաղ կայզերական դեսպանությանն ուղղված իր նամակում:

Վանգենհայմ

Հավելված

Ինչ է վերապրվել[29]:

Դա եղել է 1915թ. փետրվարի 11-ին, երբ Ամերիկայից վերադարձած

27. Ռոզենբերգի նշումը. «Հուսանք, ոչ մամուլի միջոցով»:
28. R 15877:
29. Վոլֆ Հունեքեի նշումը (ծանոթ.): Դրա մի պատճենն ստացել է ամերիկյան դեսպանը՝ բաց թողնելով Գերմանիային վերաբերող վերջին օրերը:

մի անպիտան մարդու ձեռքում, եթե չեմ սխալվում 1914-ի ամռանը՝ պատերազմի սկզբից մի քիչ առաջ, ռումբ էր պայթել: Ինչպես ես իմացա համապատասխան վայրում իշխանության պատկան մարմիններից և ուրիշներից, նա մտադիր է եղել պատրաստել հիշյալ ռումբը, քանի որ եթե այն պատրաստ լիներ, ապա նրա հին խրճիթը, որում ապրում էր, հոդս կցներ, և եթե նա վարպետ լիներ, ապա այն չէր պայթի ձեռքում: Այդ երիտասարդը տղամարդը մահացել է վերքերից՝ մոտ 6 ժամ անց:

Հիմա, իհարկե, իշխանությունների պարտականությունն է հետաքննել գործը, իսկ ժամանակի հետ պարզվեց, որ դա նրա պատրաստած 4-րդ ռումբն էր: Բացի այդ, Էվերեքում գտան ևս 70 ռումբ՝ դեռ Աբդուլ Համիդի ժամանակներից, մոտ 23 բաղման[30] (6 օքքա) արճիճ, նավթ (*ընթեռնելի չէ*) փոշու հետ և երևի թե 60-100 մաուզեր տիպի հրազեն և ատրճանակ: Բայց բոլոր այդ ռումբերը գտնվել են միայն հնչակյանների և դաշնակցականների մոտ: Իսկ չինովնիկները փորձում են, ինչպես արվեց նաև իմ դեպքում, մեծացնել 70 անգամ և ստացվեց, իբր Էվերեքում գտել են 5000 մաուզեր հրացան ու ատրճանակ, ինչպես նաև երիտասարդ տղամարդը սարքել է 95 ռումբ և այլն: Այդ մասին ինչ-որ առիթով իշխանությունից ինձ ասացին մոտ 3 ամիս առաջ (գործն սկսելուց 4 շաբաթ անց), բայց դրանից հետո այդ մասին այլևս խոսք չի եղել: Երբ ես Կեսարիայում մութասարիֆի հետ խոսում էի այստեղ ուղևորվելու թույլտվություն (թեսքերե) ստանալու համար, նա ինձ ասաց վերոնշյալ տվյալները, այսինքն, թե Էվերեքում գտել են 80 ռումբ, իսկ Կեսարիայում՝ 200: Նա ինձ ցույց տվեց նաև Էվերեքում գտած զենքի մի լուսանկար, ևս մեկը՝ Կեսարիայում, և ես գնահատեցի նշված զենքի քվաքանակը[31]:

Ինչպե՞ս են գտել այդ ամենը:

Ըստ 1896թ. փորձի, երբ ժողովրդին սկզբում զինաթափեցին, հետո մորթեցին, ինքնին հասկանալի է, որ մարդիկ ժխտում էին այլ ռումբերի գոյությունը: Բայցևայնպես հենց առաջին շաբաթում փողոցում բռնեցին մի մարդու, որը պատրաստվում էր թաղել 24 ռումբ, որոնք պատրաստվել են, ըստ երևույթին, Աբդուլ Համիդի օրոք, բայց մասամբ լիցքավորվել են միայն վերջին ժամանակներում, իսկ մասամբ էլ լրիվ դատարկ էին: Տների ինտենսիվ խուզարկումների ժամանակ երկու տներում գտել են 3-ական ռումբ: Այնուհետև կայմակամ Աղիլ բեյին՝ մի հրաշալի մար-

30. Ուղղված է՝ բաթման:
31. Մորդմանի նշումը. այդ լուսանկարները կարծես թե վերարտադրված են (վերծանված չէ):

դու, որը վճռականորեն պայքարում էր ժողովրդի հանդեպ կոշտ ժանդարմների դաժան վերաբերմունքի դեմ, փոխարինեց արյունախում մի չերքեզ, որը ուր էլ լիներ, չէր հանգստանա, մինչև արյուն չտեսներ:

Մի անգամ ինձ կանչեցին ինչ-որ մի տուն և ցույց տվեցին լվալու համար բանտից ուղարկված մգդակած մի վերմակ, որը մի կողմից ամբողջովին թաթախված էր արյան մեջ, ընդ որում՝ երկար շերտերով, բացի այդ՝ նաև ամբողջովին թաց ու կեղտոտված հագուստ: Ինձ համար հանելուկ էր, թե բանտում ի՞նչ կարող էին արած լինել ձերբակալվածին: Բայց հետո հասկացա գործի էությունը, ի դեպ, երկու վստահելի մարդկանց միջոցով, ովքեր հենց իրենք էին մասամբ դա վերապրել:

Բանտարկյալին պառկեցնում են տախտակի վրա, ինչպես հռոմեացիների ժամանակ, երկու կողմում կանգնում են երկուական ժանդարմ և երկուսն էլ՝ ոտքերի մոտ, ովքեր փոխնիփոխ, քանի դեռ ուժ ունեն, մահակներով «մշակում են» պառկածի ոտնաթաթերը: Հռոմեացիների ժամանակ ամենաշատը 40 հարված էր, իսկ այստեղ հետևել են 200, 300, 500, նույնիսկ 800 հարված: Ոտքն սկսում է ուռչել, հետո կրկնվող հարվածներից պայթում է, և ցայտում է արյունը, որից հետո բանտարկյալին կրկին քարշ են տալիս բանտ, իսկ մյուս բանտարկյալները նրան պառկեցնում են: Սրանից էլ արյունոտ մգդակած վերմակը: Քանի որ նրանք, ըստ երևույթին, տնական հարվածներից կորցնում են գիտակցությունը, ուշքի բերելու համար գլխներին սառը ջուր են լցնում, սրանից էլ թրջված ու կեղտոտ հագուստը: Հաջորդ օրը կամ ավելի ճիշտ՝ գիշերը, քանի որ կտտանքները, ինչպես Կեսարիայում, այնպես էլ Էվերեքում իրականացվում են գիշերները, ամեն ինչ նորից է կրկնվում՝ չնայած ուռուցքներին ու վերքերին: Երբ ֆրոյլայն Գերբերի տեղակալուհին Զինդգիդերի որբանոցում (ֆրոյլայն Գերբերը ներկայումս Ամերիկայում է) մառզեր հրացանի պատճառով, որն օր. Գերբերի սեփականությունն էր՝ որբանոցը այդտեղի կողոպտիչ հարձակումներից պաշտպանելու համար, եղել է Կեսարիայի բանտում (մինչ ես Զինդգիդերում էի), այնտեղ եղել են 30 բանտարկյալ՝ ամբողջովին ջնջխված ոտքերով, որոնց մասամբ սպառնում էր գանգրենան, որի հետևանքով մի մասին արդեն անդամահատել էին կամ էլ դեռ պետք է անդամահատեին:

Նրանց մի մասին տանջել էին Էվերեքում և եթե ռազմական դատարանն ուղարկել էր Կեսարիա, ուրեմն մի մասին էլ տանջել էր Կեսարիայի դաժան մութասարիֆը: Վերջինիս պաշտոնը, երբ ես 3 շաբաթ Զինդգիդերում էի, ըստ երևույթին որպես պատիժ իջեցրել էին:

Նոր մութասարիֆի օրոք, ինչպես արդեն ասվեց, ամեն ինչ շարունակվեց գաղտնի, հենց մութասարիֆը հայտնվում էր, այն բանտարկյալներին, ում պատրաստվում էին տանջել, ուղարկում էին այլ տեղ: Այնուամենայնիվ, ինձ թվում էր, թե նա գիտեր այդ մասին, բայց ձևացնում էր՝ իբր չգիտի: Համենայնդեպս, երկու շաբաթ անց մի երիտասարդ տղամարդու այնպես էին ծեծել, որ նա 5 րոպե անց մեռել էր: (Դրանից 6 շաբաթ առաջ Տոմարայում՝ Էվերեքից 6 ժամվա ճանապարհ հեռու վայրում նույնպես մի տղամարդ մահացել էր կտտանքների հետևանքով): Առաջինը պառկած էր ինձ ծանոթ, հարգարժան մի քահանայի՝ Կեսարիայի եպիսկոպոսի տեղակալի կողքին, գոմում, գոմաղբի վրա, որտեղ էլ հենց իրականացվել էին կտտանքները, քահանան, ըստ իր վկայության, ևս 3 օր պառկած մնացել է գոմաղբի վրա: Այդ դեպքից հետո, ըստ ականատեսների վկայության, Կեսարիայում մահակն այլևս չի գործածվել: Մինչդեռ Էվերեքում դա շարունակել է գործադրել դաժան ու արագ բռնկվող կայմակամը (Զեքի բեյը):

Բացի ոտքերի տանջանքներից, տարբեր մարդկանց կուրծքը ձեռքի ափի չափ վառել են շիկացած երկաթով: Մի դարբնի, որին կասկածել են ռումբերի պարկուճ պատրաստելու առնչությամբ, բայց հետո բաց են թողել, ոտքերի մատները վառել են ծծմբաթթվով (կերաբ կոչված), որի վերքերը հետո ինքս տեսել եմ: Վերջին շրջանում էլ ներքևից ուռեցնում են փորը, հետո ոտքերով կոխկրտում են, բերանները թրիք են խցկում, ասում են, որ նաև քաշում են եղունգները կամ էլ ասեղներ են խցկում դրանց տակ: Վերջին 3 տեսակ տանջանքների ճշմարտացիությունը ես այլևս չեմ կարողացել ստուգել, բայց դրանք անհավանական չեն:

Մոտ 4 շաբաթ առաջ լուր տարածվեց՝ որպես տեղի պարետների լիազորության արդյունք, թե Էվերեքի կայմակամը՝ Էվերեքի և 2 ժամվա հեռավորությամբ Ինջերն բնակավայրի միջակայքում գնդակահարել է 10-18 հոգու, որոնց պետք է Էվերեք հասցնեին հետաքննության նպատակով՝ պատրվակելով, որ իբր նրանք ուզեցել են փախչել, ի դեպ՝ այդ մարդիկ եղել են անզեն ու էշերով, մինչդեռ կայմակամը զինված է եղել՝ ձի հեծած և ժանդարմների հետ: Դրանից կարճ ժամանակ անց նա Ինջերնի բոլոր քրիստոնյաներին՝ առանց բացառության, աքսորել է 3-4 ժամվա ընթացքում, նրանց մեջ նաև հղիության վերջին ամիսներով կանանց, ովքեր հետո ծննդաբերել են ճանապարհին և հուսահատությունից իրենց նորածիններին շպրտել են ջուրը: Դրանից հետո քշվածների մի-

ջից հրամայել է հետ բերել տղամարդկանց, թե նրանցից քանիսին են գաղտնի սպանել և սպանում, հնարավոր չէ ապացուցել: Իմիջիայլոց, պետք է նշել, որ Ինջերնի բնակիչները **շատ** անտեղյակ են, այնքան անգետ, ինչպիսի գյուղ ես երբևէ չեմ տեսել և չեմ հավատա, թե նրանցից գոնե մեկը դիմադրած լինի: Դրան ավելացրած՝ ես երբեք չեմ լսել ո՛չ քրիստոնյաներից, ո՛չ էլ թուրքերից, որ այս 4-5 ամիսների ընթացքում որևէ մեկը դիմադրած լինի, բացի կայմակամից, որն այդ մասին հիմա է հայտնում՝ իր արածները կոծկելու համար: Բայց, ի դեպ, այդ մասին ինքն էլ ասում է. «Ոչ ոք չի կարող ինձ դիմադրել»: Երբ ես նրան հանգիստ դիտողություն արեցի արյունոտ ծածկոցի վերաբերյալ, նա ինձ ասաց. «Եթե օրենքն էլ դա արգելի, եթե փաղիշահն էլ արգելի, միևնույն է՝ ես շարունակելու եմ անել այն, ինչ ուզում եմ»:

Երբ ես 3 շաբաթ առաջ Էվերեքում հավաքում էի իմ իրերը, երկու ժանդարմ՝ արտաքսված ու հետ բերված ինջերնցի մարդկանցից մեկի հետ շտապում էին լեռները, իբր ինչ-որ ատրճանակ փնտրելու համար: Ժանդարմները վերադարձան մենակ և հայտնեցին, որ իբր այդ երիտասարդ տղամարդը փախել է: Ի դեպ այդ տղամարդու ոտքերն ահավոր ուռած էին և էշով է եղել, իսկ ժանդարմները՝ ձիով:

Իմ մեկնումից մի քանի օր առաջ թաղում էին բանտից բերված մի երիտասարդ տղամարդու, թե ինչպես է նա մահացել, պարզ չէ: Ժանդարմներն այնտեղ կայմակամի «շնորհիվ» ժամանակի հետ վերածվել են արյունարբու գազանների, որոնք կարծես ամբողջովին կորցրել են զգացմունքը:

Մինչև ապրիլի կեսը այն կարծիքին էի, ես դա ասել եմ նաև շատ մարդկանց ներկայությամբ, որ ինքնապաշտպանության համար մի ատրճանակն, իսկապես բավական է, բայց երբ ես հետո ականատեսներից իմացա Կեսարիայում 1896թ. ջարդերի մասին տարբեր բաներ, հասկացա, որ այսպիսի ժամանակներում մի ատրճանակը ոչնչի չի օգնի: Տուն են ներխուժում ոչ թե 2-3 արյունախում, այլ մոտ 300 հոգուց բաղկացած հրոսակախումբ: Եթե նույնիսկ դրա մեկ քառորդ մասը լիներ, միևնույն է՝ մի ատրճանակը չէր հերիքի: Երկու ջարդերից՝ 1896թ. և 1909թ., մեկի ժամանակ ռումբեր են եղել: Մի տուն անվնաս է մնացել միայն այն բանի շնորհիվ, որ տանտերը պատրաստի մի քանի ռումբերով կանգնած է եղել տանիքին և դրանք ցույց է տվել արյունախում ամբոխին, որից հետո նրանք ցրվել են: Մի ամերիկացի միսիոներ, որը ժամանակին եղել է Կեսարիայում, նույնպես հաստատում է, որ ինքն արդեն այն ժամանակ լսել է ռումբերի գոյության մասին:

Իմ մեկնումից **հետո** Էվերեքում երևի թե տեղահանումներ են եղել: Կոնիայում ես հանդիպեցի Խարպուտի նախկին աշխատակցուհուն՝ քույր Լաուրա Մյոհրինգին, որը Բաղդադից էր եկել և ինձ պատմեց անապատում տարագիրների անասելի տառապանքների մասին, որտեղ նրանք մնացել էին առանց հացի ու ջրի: Մի իջևանատնում նա հանդիպել է մի քարոզչի՝ իր համագյուղացիների հետ, որոնք մեծաթիվ շատ հիվանդների պատճառով մի քանի օրով մնացել էին այնտեղ: Նա պատմեց, որ իր մարդկանցից օրական միջին թվով հինգը մեռնում են: Առաջին օրերին, քանի դեռ հերիքում էր հետները վերցրած սննդի պաշարը, կարելի էր գոյատևել, բայց հետո օրեցօր վիճակը դարձավ անհուսալի, հատկապես անապատի խորքում, որտեղ էլ հենց պետք է կործանվեր այդ ժողովուրդը: Մարաշի գերմանական որբանոցի մի քանի աղջիկ եղել են նրա շուրջը և հուսահատորեն ասել են քույր Լաուրային. «Ինչո՞ւ է Աստված թողնում այսպիսի բան»: Հալեպի գերմանական հյուպատոսը տեղահանվածների թիվը գնահատում է 30.000-ից ավելի: 5000 զեյթունցիների տարել են անառողջ Սուլթանի՝ Կոնիայի տարածք: Իշխանությունն այնտեղ սկզբում մի քիչ հաց է տվել, դրա վերջանալուց հետո պետք է որ թշվառությունն այնտեղ ահավոր լինի: Այնուհետև, ըստ դ-ր Դաղի վկայության, Կոնիայի հարուստներին այնտեղից նույնպես Սուլթանի են արտաքսել, որոնք հետո որոշ ժամանակ, քանի դեռ նրանց փողը հերիքում էր, աղքատների հետ կիսում էին իրենց հացը: Դա, իհարկե տևել է որոշ ժամանակ: Ապա դ-ր Դաղը իշխանությունից սովյալներին հաց տալու թույլտվություն է խնդրել, ինչին վալին պատասխանել է, որ կառավարությունը կհոգա դրա համար և մարդիկ դրա կարիքը չունեն:

Չինովնիկների և նրանց ենթակաների կողմից՝ կաշառքների շորթումը բնակչությունից կարծես թե ավելի մեծ թափ է առել, քան Աբդուլ Համիդի ժամանակներում: Չինովնիկների վերաբերյալ ձեռքիս չունեմ ուղղակի ապացույցներ, բայց դա հաստատեց մի ազնիվ թուրք պաշտոնյա, որը հակառակվել է բոլոր վայրագություններին և արտահայտվեց հետևյալ կերպ. «Nä san adersin, ben birlirim, happisir tejidschi dirler»: Ավելի բարձր պաշտոնյաները այդքան բացահայտ չեն անում, այլ գաղտնի՝ միջնորդ անձանց միջոցով: Քանի որ օրենքի համաձայն, ինչպես ինձ ասացին, անմտորեն երկու կողմն էլ՝ այսինքն, և՛ վերցնողը, և՛ տվողը, պատժվում են, ուստի դա չի բացահայտվում: Ես էլ երկար ժամանակ

չէի ուզում հավատալ, որովհետև Էվերեքում այդ մասին ոչինչ չէինք լսել: Երբ 3 շաբաթ ես կրկին այնտեղ էի, ուղղակի տեղեկացա այդ մասին, ինձ կարողացան միայն մեկ օրինակ ասել, երբ 5 լիրա են վերցրել, բայց շարունակել են տանջել: Չինդիդերում որբանոցի մի թուրք բանվորի միջոցով ես ավելի հիմնավոր պարզեցի գործի էությունը: Երբ ես այնտեղ էի, Խարանը պետք է բանակ գնար, բայց նա հաճույքով կազատվեր, ենթակա չինովնիկները՝ օնբարեբը և մյուսները նրան առաջարկություն են արել, որի համար նա նրանց տվել է 1 լիրա և որոշ ժամանակ թաքնվել է: Այդ կատակերգությունը նրանք արդեն հաճախ են կրկնել և խեղճ Խարանը արդեն շատ լիրա է տվել, բայց այս անգամ զինակոչի հրամանը իսկական փաստ էր, իսկ մինչ այդ եղել են ստորադաս պաշտոնյաների մեքենայությունները, ովքեր ցանկացել են փող աշխատել: Այս անգամ Խարանն իսկապես պետք է գնար՝ 14 օր թաքնվելուց հետո, իսկ հիմա պետք է որ Կոստանդնուպոլսում լինի: Տալբասի օնբարեբը, որին ի վերջո պաշտոնանկ արին ինքնագլուխ գործունեության համար, պատերազմն սկսվելուց ի վեր այդ ձևով գրպանած կլինի մոտ 100 լիրա:

Երբ ես մոտ 2 ամիս առաջ Չինդիդեր եկա, այնտեղ Գերմանիայի հանդեպ յուրահատուկ զայրույթ կար: Ճանապարհներին աշխատող երկու հույն զինվորի գնդակահարել էին: Նրանցից մեկը երկօրյա արձակուրդ է մեկնել, քանի որ ֆիզիկապես տկար է եղել և, եթե չեմ սխալվում, նրա շորերը դեռ չորացած չեն եղել, դա եղել է ձմռանը, ու 2 օրվա փոխարեն նա ներկայացել է 4 օր հետո: Ապա նրան բանտ են խցկել և մի քանի օր անց՝ գնդակահարել: Գնդակահարությունից հետո մայրը ողբալիս ասել է. «Գոնե նրանք նորից 15 լիրա ուզեին», ինչից բխում է, որ չինովնիկները նույնիսկ այդ առիթն են օգտագործել փող շորթելու համար: Միայն գնդակահարության նախորդ օրը, ինչի մասին մայրը, համենայնդեպս, ոչինչ չի իմացել, հրաժարվել են վերցնել սննդամթերքը, որը բացի փողից, իր որդուն փրկելու համար մայրն անընդհատ տանում էր: Մայրն, իհարկե, ստիպված էր փողը պարտքով վերցնել: Ի վերջո մարդիկ եզրակացրին, ի դեպ, այդ կարծիքը տարածված էր ամենուր, որ «Աբդուլ Համիդի օրոք այդպես չէր, ավելի լավ էր, քան հիմա, այս ամենը նրանք սովորել են միայն գերմանացիներից»:

Բացի այդ, մահմեդականներն իրենց ահավոր արարքներն արդարացնելու համար ասում են. «Գերմանացիներն են այդպես հրամայել»: Գերմանացիները հրամայում են սա, գերմանացիները հրամայում են դա: Հայերի կարծիքով, երկրի խորքում իրենց փրկությունը բացառապես առկախ է գերմանացի դեսպանից: Եթե նա կամենա, ապա իրենք կփրկվեն, եթե նա չկամենա, ապա կորած են: Նրանց կարծիքով՝ նա Թուրքիայում այնպիսի իշխանություն ունի, ինչպիսին Վիլհելմ կայսրը՝ Գերմանիայում:

Կցանկանայի այստեղ նաև նշել, որ զենքը հանձնելու հրամանը երկրի խորքում շատ ավելի ուշ է տրվել, ինչպես այստեղ՝ Կոստանդնուպոլսում: Արդեն վաղուց թերթերում գրվել էր, երբ այնտեղ պլակատներ էին կախում: Արդյո՞ք դա եղել է մարդկանց մի քիչ ավելի երկար տանջելու համար, երբ մտրակով ներխուժում էին տները և անգթորեն հարվածում բոլորին, ով հանդիպում էր իրենց ճանապարհին, թե՞ ուներ այլ պատճառ: Համենայնդեպս, այնտեղ, ուր հայտնվում էին ժանդարմները, մարդիկ դողում էին, շատերը սարսափից անկողին էին ընկնում, վերջում ես ինքս էլ ուժասպառ եղա, քանի որ, որպես այդ ժողովրդի մեջ ապրող միակ գերմանուհի, այդ ամենն ինձ վրա ավելի ուժեղ էր ազդում:

Եթե մենք՝ գերմանացիներս, որպես Թուրքիայի բարեկամներ, այս ամենը լռության ենք մատնում, ուրեմն մենք բարբարոսներ ենք, ում մասին ասում են. «Ասա ինձ՝ ով է բարեկամդ, և ես կասեմ, թե ով ես դու»:

Ֆր. Վ. Հ.

P.S. Քանի որ, չնայած այս ամենին, ես սիրում եմ մահմեդականներին, ոչ նրա համար, որ նրանք միգուցե առաքինի են, այլ նրա համար, որ կույր են ու կուրացված, և որովհետև Փրկիչը նրանց համար էլ է իր արյունը թափել, ես կցանկանայի այս տեղեկությունները խիստ գաղտնի պահել:

Մահմեդական կնոջ համար՝ իր սարսափելի անգիտությամբ հանդերձ, ես հոգով ցավում եմ և թերևս իզուր չեմ սովորել թուրքերենը:

Ես նաև տարբեր անձանց անուններ եմ տվել, ովքեր ինձ չէին հայտնի այդ ամենը, եթե **ամբողջովին չվստահեին**: Այդպիսի վստահությամբ էլ ես հիմա դիմում եմ գերմանական կառավարությանը:

Վերը նշվածը

[Մորդմանի նշումը]

Կարդալով հավելվածը ես համոզվեցի, որ ֆր. Հունեքեն, բացի ամերիկյան դեսպանությունից իր զեկուցագրի բովանդակությունը նախքան մեզ հայտնել է նաև այստեղի հայկական պատրիարքին: Պատրիարքը Էվե-

ռեքի իրադարձություններն ինձ ներկայացրել է արդեն մի քանի շաբաթ առաջ, որոնք մասամբ բառացիորեն համընկնում են ֆր. Հ.-ի նկարագրություններին, ընդ որում՝ հիշատակեց ֆր. Հ.-ի անունը: Ավելի ուշ կայացած զրույցների ժամանակ նա ինձ պատմեց նաև այլ բաներ, որոնք ակնհայտորեն նույն սկզբնաղբյուրից են: Համապատասխանող տեղերը ես ընդգծել եմ կարմիրով: Համենայնդեպս, բացառված չէ, որ պատրիարքարանը Հունեքեի զեկույցի բովանդակության մասին տեղեկացած լինի ոչ թե ուղղակի, այլ ամերիկյան դեսպանության միջոցով:

Ֆր. Հունեքեն այս ընթացքում՝ ամենաուշը այս ամսվա 10-ին, այստեղից մեկնել է, այդ օրը նրան ուղարկված ինձ ներկայանալու խնդրանքով ծանուցագիրը հետ էր եկել հասցեատիրոջ բացակայության պատճառով:

1915 – 07 – 17 – DE – 003

Սկզբնաղբյուրը՝ PA-AA /Կոստ.դեսպ./169

Կոստանդնուպոլսի գլխավոր հյուպատոս Մորդմանի գրառումը

Պերա, 17 հուլիսի 1915

Երեկ երեկոյան ինձ այցելեց դ-ր Դավթյանը՝ հայկական պատրիարքարանի հանձնարարությամբ ինձ հետ հայկական գործերի մասին խոսելու համար:

Նա հիշատակեց (*իմիջիայլոց*), որ պատրիարքն այս օրերին այցելել է նաև Մեծ վեզիրին և բողոքել է ընդդեմ տեղահանման միջոցառումների: Մեծ վեզիրը հակաճառել է, որ այդ միջոցառումներն անցկացնելու է մինչև վերջ: Այդ առնչությամբ դ-ր Դ. ցանկություն հայտնեց, որպեսզի կայզերական դեսպանությունն զբաղվի տվյալ հարցով:

Ես նրան պատասխանեցի.

- Մենք չենք թերագնահատում այդ միջոցառումների տնտեսական ու քաղաքական հետևանքները թուրքական կայսրության համար և ցավում ենք հայ բնակչության շահերի համար:

- Պետք է ենթադրել, որ այժմյան իշխանավորները միանգամայն կիրթ այրեր են, ուստի հետևանքները պետք է որ նույնպես հիմնավոր կշռադատված լինեն, պետք է որ երկրի խորքում կատարված առանձին դեպքերի մասին նույնպես ճշգրիտ տեղեկացված լինեն և գիտենան այժմյան ժամանակներում այդպիսի զանգվածային տեղահանումների

դժվարությունների մասին:

Չնայած այդ ամենին, եթե կառավարությունը շարունակում է տեղահանումը և ընդլայնում տարածքները, ապա դա վկայում է, որ մենք մի վճռի առջև ենք, որը փոփոխման ենթակա չէ և որի դեմ հետագա բողոքներն այլևս անիմաստ են:

- Մենք՝ որպես թուրքերի դաշնակիցներ, ինքնին հասկանալի է, որ չէինք կարող որևէ ճնշում գործադրել և հանուն Թուրքիայի ներքին գործի՝ կասկածի ենթարկել մեր դաշնակցային հարաբերությունները:

Պարոն դեսպանի այս ամսվա 4-ի դեմարշի մասին կարծես թե պատրիարքարանում ընդհանրապես տեղյակ չեն:

Երեկ նույնպես հայ- կաթոլիկական պատրիարքարանի հանձնարարությամբ ինձ այցելեց մոնսինյոր Թումանյանը:

Պատրիարքարանը գրիգորյան պատրիարքի միջոցով տեղեկություններ է ստացել Մարդինի կոտորածների մասին, որից տուժել են այնտեղի կաթոլիկները: Այդ լուրերը, թերևս, ի վերջո վերագրվում են ամերիկյան դեսպանությանը:

Ես նրան պատասխանեցի, որ մենք նույնպես այդ մասին լսել ենք, բայց մենք չենք կարող ստուգել այդ լուրերը, քանի որ Մարդինում մենք հյուպատոսություն չունենք:

Մոնս. Թ. ավելացրեց, որ Մարզվանում (Սվազի վիլայեթ) և Մալաթիայում (Հարպա) առանց բացառության սպանել են բոլոր հայերին:

Ես ասացի դրա վերաբերյալ իմ կարծիքը այն իմաստով, որ դրա դեմ ոչինչ հնարավոր չէ անել:

Հայ կաթոլիկների պատրիարքը ձգտում է հասնել Պապի ուղղակի դեմարշին:

1915 – 07 – 21 – DE – 001

Սկզբնաղբյուրը՝ PA-AA / Կոստ.դեսպ./ 169

Կոստանդնուպոլսի գլխավոր հյուպատոս Մորդմանի գրառումը

Պերա, 21 հուլիսի 1915

Ֆրոյլ. Թորա Վեդել-Յարլսբերգը (նորվեգուհի) և ֆրոյլ. Եվա Էլվերսը,

որոնք մինչև վերջերս Էրզրումում, ապա Էրզինջանի թուրքական հոսպիտալներում (ի վերջո՝ Քոլեյի ղեկավարած Կարմիր Խաչի Էրզինջանի լազարեթում) աշխատել են որպես հիվանդապահներ, այսօր ինձ մոտ էին: Երկուսն էլ օգնության միության միսիաներում իրենց երկարամյա գործունեության շնորհիվ կամ էլ սեփական դիտարկումներով լավ գիտեն Թուրքահայաստանի և հատկապես Քրդստանի երկիրն ու մարդկանց:

Հայկական խնդրի վերաբերյալ նրանց տեսակետն այնպիսին է, որ հայերը պետք է իրենց հասած դժբախտության համար մեղավոր համարեն իրենց, ըստ նրանց՝ հիմնական մեղքը կրում են դաշնակցությունն ու հնչակները, որոնք տարիներ շարունակ հայ բնակչությանը մշակել ու ահաբեկել են: Թուրքական կառավարությունը լրիվ իրավունք ուներ այդ անհուսալի տարրերի դեմն առնելու:

Բայց նույնքան անկեղծորեն այդ երկու օրիորդները իրենց նողկանքն ու զայրույթն արտահայտեցին Էրզրումի շրջակայքում և Սվազի վիլայեթում՝ անպաշտպան ու անմեղ բնակչության, հատկապես՝ կանանց ու երեխաների սպանդի առնչությամբ:

Մանրամասների նկարագրությունը ամբողջովին համապատասխանում է մայոր դ-ր Փիչմանի պատմածներին, որն օրիորդների հետ գրեթե միաժամանակ Էրզրումից եկել էր այստեղ, և եթե նրանք իրենց սեփական աչքերով տեսած զարհուրանքների ազդեցությամբ բացահայտորեն արտահայտել են իրենց զգացմունքները և փորձել են փրկել մահվան դատապարտված առանձին երեխաների, ապա մարդկային տեսակետից դա գոնե հասկանալի ու ներելի է:

Ինչպես հայտնի է, այդ անզգույշ պահվածքը Էրզինջանի մութասարիֆին դրդել է կարգադրելու նրանց մեկնել Էրզինջանից, սկզբում՝ Սվազ:

Ինչ վերաբերում է պարոն Քոլեյին, ապա նա հետևել է չմիջամտելու խիստ հավասարակշռված դիրքորոշմանը: Եթե նշյալ օրիորդների ներկայացրածը ճիշտ է, ապա նա դրանում այնքան հեռուն է գնացել, որ չի խանգարել, որպեսզի այդ օրիորդներն ստիպված լինեն մութասարիֆի հրամանով ճամփա ընկնել՝ առանց բավարար պաշտպանության, նրանց նույնիսկ չի թույլատրվել սպասել դ-ր Փիչմանի ժամանմանը, որը հաջորդ օրը ժամանել է Էրզինջան, որպեսզի վերջինիս հետ մեկնեին:

Երկու օրիորդն էլ մտադրվել են Էրզինջանից գնալ Հարպուտ (Մեզրեհ), որտեղ ժամանակին թողել էին իրենց բոլոր իրերը:

Կեսարիայում նրանք հանդիպել են պարոն կոմս ֆոն Շուլենբերգին:

1915 – 07 – 25 – DE – 001

Սկզբնաղբյուրը՝ P-A/ 14087 /Կոստ.դեսպ./ 170

Ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին՝ Տրապիզոնի հյուպատոս Բերգֆելդից

Զեկույց № 36 / № Գաղտնի 339

Տրապիզոն, 25 հուլիսի 1915

9.7.15-ի № 35 Մ. Գաղտնի 316 զեկուցագրի կապակցությամբ[32]:

45. A22559

Տրապիզոնից հայերին հանելուց հետո շուտով լուրեր տարածվեցին, թե արդեն սկսվել է նրանց ջարդը, որ նրանց օգտագործած ճանապարհին զուգահեռ հոսող Դեիրմենդերե գետը, որը Տրապիզոնի մոտ 100 կմ հոսում է դեպի երկրի խորքը, գետաբերանում և քաղաքի մերձակայքում կույտերով լցված է դիակներով և այլն: Փորձը վկայել է, որ թուրքերի հանդեպ թշնամական երևակայությունը Տրապիզոնում ամենաանհավանական ծաղկունք է ապրում: Այդ իսկ պատճառով կայզերական հյուպատոսությունն այդ լուրերն ընդունեց մեծ վերապահությամբ: Սակայն այս ընթացքում դրանք հաստատվեցին այնպիսի հստակ պնդումներով, որ ես՝ Գերմանիայի ու Թուրքիայի հեղինակության շահերի նկատառմամբ, ինձ պարտավորված համարեցի ստուգել այդ լուրերի իսկությունը: Խնայելով թուրքերի զգայնությունը, ես վալիին տեղեկացրի իմ մտադրության մասին, բայց այնքան ուշ, որպեսզի ժամանակը չհերիքեր հայերի հանդեպ եղած հնարավոր բռնարարքների հետքերը վերացնելու: Վալիին լրիվ համաձայն էր իմ ծրագրին ու մտադրությանը՝ որպես չեզոք վկա ինձ հետ տանել ամերիկացի գործընկերոջը: Հետո՝ ամսի 17-ին, վերջինիս հետ 4 ժամ ձիով շրջեցինք Դերմինդերե գետի երկայնքով անցնող ճանապարհով: Այդ ընթացքում գտանք մի դիակ, որը ջրում մնացել էր մոտ 7 օր, ապացույց, որ մինչև այժմ չի հետևել հնարավոր դիակների ծրագրված հեռացումը: Բացի այդ, մենք հանդիպեցինք

32. A 22559:

երեք բանվորի, որոնք մեզ հայտնեցին, որ առավոտյան իրենց հանձնարարված է եղել՝ ստուգել ջուրը և թաղել գտնված դիակները:

Ըստ նրանց հավատարժան տվյալների, մինչ այժմ նրանք գտել են չորս, այդ թվում՝ մի կնոջ դիակ: Ի վերջո բնակիչները մեզ հայտնեցին, որ տեսել են, թե ինչպես մի դիակ գետի հոսանքը տանում էր դեպի ներքև: Բացառված է, որ մինչև մեր այցելությունը հոսանքը ծով տաներ մեծ կույտերով դիակներ՝ ջրի չնչին մակարդակով և Դերմինդերե գետի բնույթով, որը հանդարտ հոսում է ավազե լայն հունով՝ հաճախ ճյուղավորվելով փոքր ու ծանծաղ, քարերով լցված թևերի: Այդ ընթացքում լուր հասավ առաջին օրվա տեղահանվածներից, թե նրանց քարավանը, որն ամենամեծն էր, ժամանել է Էրզինջան՝ առանց որևէ մեկին կորցնելու:

Ըստ այդմ՝ ես անհիմն եմ համարում Տրապիզոնից տեղահանված հայերի հանդեպ կատարված վայրագությունների մասին բոլոր ասեկոսեները և հակված եմ ենթադրելու, որ ճանապարհին մեռած հայերն իրենց վերջը գտել են ինքնասպանությամբ կամ հիվանդություններից:

Հնարավոր չեղավ ստուգել ուղեկցող պահակախմբի՝ տարագիրներին թալանելու մասին լուրերը: Նմանօրինակ դեպքերը ես բացառված չեմ համարում, բայց մյուս կողմից՝ գիտենալով հայերի նկարագիրը, լրիվ հավանական եմ համարում, որ ժանդարմներին թանկարժեք նվերներ տալով, նրանք փորձել են արժանանալ նրանց հատուկ վերաբերմունքին և ճանապարհին ակնկալել փոքրիկ ծառայություններ:

Հայերի տեղահանման առնչությամբ «Միություն և առաջադիմություն» կոմիտեի ղեկավարների հանդեպ դժգոհությունը մահմեդականների մեջ ընդգրկում է ավելի լայն շրջանակներ: Հասկանալի է, որ կոմիտեի հին թշնամիներն ուրախությամբ են ընդունում այս պատրվակը՝ նրա դիրքերը ցնցելու համար: Բայց կոմիտեի կողմնակիցներն էլ բացահայտորեն չեն խրախուսում հայերի հանդեպ դաժան գործելակերպը: Նրանց դրդապատճառները տարբեր են: Ավելի մեծ մասն ուղղորդվում է զուտ մարդկային մղումներով: Բայց չի կարելի չընդունել, թե կոմիտեի որոշ անդամներ խիստ դժգոհ են, որ իրենք ստիպված են նայել, թե ինչպես են իրենց առաջնորդները տեղահանման առիթով լցնում սեփական գրպանները: Համենայնդեպս, այստեղի կոմիտեի առաջնորդների դիրքը կարծես թե խիստ թուլացել է[33]:

33. Այս պարբերությունը, ինչպես նաև վերջին նախադասությունը բաժանողի համար ջնջված է:

Այս զեկուցագրի պատճենը ես փոխանցել եմ Կոստանդնուպոլսի կայզերական դեսպանություն:

Բերգֆելդ

1915 – 07 – 27 – DE – 001

Սկզբնաղբյուրը՝ PA-AA /R14087
Տպագրված՝ Գ և Հ փաստ. 120 (կրճ.) 144 (կրճ.)

Ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին՝ Հալեպի հյուպատոս Ռյոսլերից

K. № 81/Հ. № 1645

Հալեպ, 27 հուլիսի 1915

Գաղտնի

Հայերի տեղահանման և դրա անցկացման ձևի մասին սույն ամսվա 17-ի №79 իմ վերջին զեկուցագրից հետո հայտնի է դարձել նաև հետևյալը.

1. Ինչպես կարելի էր ակնկալել, այստեղի վալի Ջելալ բեյին պաշտոնից ազատելուց հետո տեղահանումն հիմա ընդգրկում է Հալեպի վիլայեթի ծովափնյա գիծը: Ըստ հայկական աղբյուրներից հասած լուրերի՝ հրաման է տրված մաքրազատել Ալեքսանդրետը, Անտիոքը, Հարեմը, Բեյլանը, Սուքլուքը, Քեսաբը և այլ բնակավայրեր, իսկ իրականացման համար հատկացված է կարճ ժամանակ: Ալեքսանդրետի փոխհյուպատոսությունում մինչև սույն ամսվա 17-ը ոչ մի տեղեկություն չունեին[34]:

2. Կաթողիկոսի՝ Սիսից ստացած լուրերի համաձայն, 800-1000 տղամարդ, որոնց Դիարբեքիրից դեպի հարավ են ուղարկել, ոչ մի տեղ չեն հասել: Ենթադրվում է, որ նրանց բոլորին սպանել են: Այստեղ խոսքը պետք է որ լինի շաբաթներ առաջ տեղի ունեցած դեպքի մասին:

3. Դիակների Եփրատով քշվելը, ինչի մասին արդեն զեկուցվել է, որը նկատվել է Ռումքալեում, Բիրեջիկում և Ջերաբլիսում, ինչպես ինձ զեկուցել են այս ամսվա 17-ին, տևել է 25 օր շարունակ: Բոլոր դիակները

34. 28-ը հուլիսի: Այդ ընթացքում լուրը պաշտոնապես հաստատվել է: Նաև Այնթապցիներ Բիբլիսը պետք է դատարկեն, թեպետ ծովափնյա գոտում չեն:

կապված են եղել նույն կերպ՝ երկուական և մեջք մեջքի: Այդ համաչափությունը հուշում է, որ խոսքը ոչ թե սպանդի մասին է, այլ իշխանությունների հրահանգով կատարված սպանությունների: Դա հավանաբար նաև նշանակում է, որ դիակներն Ադիամանում գետն են շպրտել զինվորները: Ինչպես կզեկուցվի հաջորդիվ, դիակների հոսքը մի քանի օր դադարելուց հետո, սկսվել է նորովի, ընդ որում՝ ավելի մեծ թափով: Այս անգամ խոսքը հիմնականում կանանց ու երեխաների մասին է:

4. Ինչպես իմացա իսկապես հավատարժան ու մինչև հիմա Թել Աբիադում ապրող շվեյցարացի ամուսնական զույգից, հայերն 8-12 տարեկան իրենց աղջիկներին Թել Աբիադում վաճառել են սկզբում 2 մեջիդիեով (մի մեջիդիեն համարժեք է մոտավորապես 3, 50 մարկի), իսկ հետո՝ 1 մեջիդիեով կամ ավելի քիչ, կամ էլ պարզապես տվել են ձրի: Ըստ երևույթին, նրանք ուզեցել են զավակներին ազատել անապատի կլիմայական և բեդվիններից սպասվող ճակատագրից: Դեպի այդտեղ շտապող թուրքերը Թել Աբիադ գյուղում երեխաների համար անընդհատ սակարկում էին աքսորյալների հետ: Իմ հավատարմատարն ինձ ասաց գնորդների անունները: Թել Աբիադով անցնող առաջին թափորները, որոնք գալիս էին Զեյթունից (և նախնական տվյալներով պետք է Ռաքա ուղևորվեին), իրենց ճակատագրից բքացել էին և լռակյաց տանում էին ամեն ինչ: Նրանց բավականաչափ սննդամթերք էր տրվում, բայց խիստ անկանոն: Թել Աբիադից դեպի հարավ, որտեղ ջուրը սուղ է, մանկահասակ երեխաները երևի թե կմեռնեն: Առանց այդ էլ շատերը զոհ կդառնան զրկանքներին: Մի ամբողջ թափոր արդեն ամբողջությամբ կործանվել է ջրի պակասից: Նրանք չէին կարող իրենց հետ գյուղատնտեսական գործիքներ վերցնել: Ի՞նչ պետք է նրանք ձեռնարկեն նշանակված վայրում:

5. Կառավարության օրենքների խստության պայմաններում տարագիրների հանդեպ վերաբերմունքն ավել կամ պակաս պայմանավորված է այն առանձին պաշտոնյաների և ժանդարմների բարի կամքով, որոնց տարածքով նրանք անցնում են: Ուստի նրանք մասամբ կկերակրվեն, մասամբ՝ ոչ:

Հալեպում, օրինակ, որտեղ կառավարության տված սնունդը ժամանակ առ ժամանակ բավարար չէր, հիմա Ջեմալ փաշայի հրամանով և կաթողիկոսի միջամտությունից հետո մեծերի համար վճարում էին 5 մետալիկ (20 պֆենիգ), երեխաների համար՝ 4 մետալիկ (16 պֆենիգ): Այստեղի տարագիրների թիվը հիմա միջին հաշվով մի քանի հազար է: Նրանց թույլատրված է այստեղ մի քիչ հանգստանալ:

6. Շատանում են այն նախանշանները, որ կառավարությունը՝ միտումնավոր կամ անկանխակալ, ձեռքերն ազատում է իր միջոցառումների անցկացումից և հայերի ջարդը թողնում է չերքեզներին ու քրդերին:

7. Վերջին շրջանում հայերը Ռաս ուլ Այն (Բաղդադի երկաթուղու այժմյան վերջին կայանը) գալիս են Խարպուտից, Էրզրումից և Բիթլիսից: Խարպուտի հայերի մասին հայտնում են, որ քաղաքից մի քանի ժամվա հեռավորությամբ մի գյուղում տղամարդկանց բաժանել են կանանցից: Տղամարդկանց սպանել ու թողել են ճանապարհի աջ ու ձախ կողմում, որտեղով հետո պետք է անցնեին կանայք: Կանանց ու աղջիկների թափորը Մարդինի ու Ռաս ուլ Այնի միջակայքում ամբողջությամբ թալա-նել են բեդվինները: Բեդվիններն իրենց հետ քարշ են տվել նրանց, ովքեր դուր են եկել: Ի՞նչ կլինի այդ դժբախտներին, երբ նրանք ավելի խորանան բեդվինների տարածքում:

8. Այստեղի մի հայ պատմեց խարպուտցի իրեն հարազատ մի ընտանիքի մասին, որը բաղկացած է եղել 17 հոգուց, 7 տղամարդկանց տարել են, նրանց ճակատագիրը հայտնի չէ, 2 կին ճանապարհային զրկանքների զոհ են դարձել, 8 հոգին ժամանել են Ռաս ուլ Այն: Ընդ որում՝ Ռաս ուլ Այնից սկսվում է ճանապարհի առավել վատ մասը:

9. Հայտնի հայ պատգամավորներ Զոհրապը և Վարդգեսը, որոնց աքսորել են Կստանդնուպոլսից, որոշ ժամանակ մնացել են Ռաս ուլ Այնում: Նրանք գիտեին, որ մահվամբ կհատուցեն, եթե կատարվի իրենց՝ Դիարբեքիր աքսորելու կառավարության հրամանը: Ես էլ առիթ ունեցա այդ մասին հայտնել կայզերական դեսպանությունն: Ըստ նրանց ուղեկցած և հիմա արդեն այստեղ վերադարձած ժանդարմների պատմությունների, որոնց համաձայն, նրանք հանդիպել են ավազակների, ովքեր իբր պատահաբար գնդակահարել են հենց երկու պատգամավորներին, այլևս կասկած չի կարող լինել, որ կառավարությունն է կարգադրել նրանց սպանել Ուրֆայի ու Դիարբեքիրի միջակայքում:

10. Իմ զեկուցագիրն արդեն ավարտված էր, երբ Բաղդադի երկաթուղու մի ծառայող ինձ հանձնեց իր գրառումը, որի պատճենը խոնարհաբար կցված է այստեղ, որը և հենց կարող եմ հնազանդորեն վկայակոչել: Թող խնայվի ինձ դրա սոսկալի բովանդակությունն այստեղ՝ իմ զեկուցագրում կրկնելը: Ծառայողը, որի անունը անհրաժեշտության դեպքում կարող եմ տալ[35], երաշխավորում է իր գրառման ճշմարտացիությունը

35. Խոսքը Վ. Շպիկերի մասին է, ինչպես Ռոսլերը բացահայտում է 1915-09-03-DE-002 փաստաթղթում:

կամ իր հաղորդագրության բարեխղճությունը: Տարիներ ի վեր նա ինձ հայտնի է որպես բացառիկ վստահելի մարդ:

Հայ ժողովրդի հանդեպ նկարագրված վերաբերմունքը, ըստ իմ համեստ կարծիքի, բացի այլ նկատառումներից, արժանի է նաև գերմանական կողմի հատուկ ուշադրությանն այն պատճառով, որ բնակչության լայն շրջանակներում՝ նաև մահմեդականների մեջ, դա վերագրվում է թուրքական կառավարության վրա գերմանացիների ազդեցությանը: Դա նշանակում է, որ իբր Գերմանիան է առիթ տվողը հայ ժողովրդին՝ մինչև նրա ամբողջովին անհշան մասնիկը ջախջախելու թուրքական կառավարության վճռի համար: Թուրքական կառավարությունը, հավանաբար, կանի ամեն բան՝ այդ տեսակետին նպաստելու համար: Նա ուրախ կլինի իր միջոցառումների խայտառակությունը բարդել մեզ վրա: Բայց դրա հետևանքով Գերմանիայի անունը կխառնվի կեղտի հետ:

Թուրքիայի գերմանացի հյուպատոսները կայզերական դեսպանությունից հանձնարարություն են ստացել՝ հնարավորինս տարածել Արևելյան Պրուսիայում ռուսների բռնարարքների մասին գերմանական Սպիտակ գրքի հուշագիրը: Բայց ի՞նչ հաջողությամբ է հնարավոր այդ հանձնարարության կատարումը մի բնակչության հանդեպ, որն այս իրադարձությունների արդյունքում ստիպված կլինի համեմատել սեփական հպատակների հանդեպ իր կառավարության արածները Արևելյան Պրուսիայում ռուսների արածների հետ: Իմ մինչևայժմյան հեռագրային ու գրավոր զեկուցագրերը պետք է որ ցույց տային, թե թուրքական կառավարությունը **վաղուց** դուրս է եկել հայերի փաստացի կամ հնարավոր խարդավանքների դեմ ուղղված պաշտպանական արդարացի միջոցառումների շրջանակներից՝ ավելի շատ ընդլայնելով իր կարգադրությունները, որոնց կատարումը իշխանություններին ամենախիստ ու ամենակոշտ ձևով պարտավորեցրել է գործել նույնիսկ կանանց ու երեխաների դեմ՝ գիտակցաբար ձգտելով հայ ժողովրդի հնարավորինս մեծ մասին ոչնչացնել այնպիսի միջոցներով, որոնք փոխ են առնված հին ժամանակներից, բայց պատիվ չեն բերում մի կառավարության, որը ցանկանում է դաշնակցային կապ ունենալ Գերմանիայի հետ: Այլևս կասկած չի կարող լինել, որ նա ուզում է հարմար առիթն օգտագործել, քանի որ պատերազմում է Քառյակ դաշինքի կազմում և քանի դեռ դաշնակից Գերմանիան բողոքները համարում է անտեղի, որպեսզի ապագայում ազատվի Հայկական հարցից՝ թողնելով հնարավորինս քիչ, ներպարփակ հայկական համայնքներ: Անմեղների հոծ զանգվածներին նա զոհաբերեց սակավաթիվ մեղավորների հետ:

Մի՞թե հնարավոր չէր լինի արդեն հիմա դադարեցնել հետագա կոտորածները և փրկել գոնե Հալեպի վիլայեթի ծովափնյա շրջանի հայերին, որոնց աքսորը դեռ առջևում է: Եթե ռազմական նկատառումներով նրանց տեղահանումն անխուսափելի է, մի՞թե հնարավոր չէ նրանց փոխադրումը հետաձգել գոնե մեկ-երկու ամսով և խնամքով նախապատրաստել՝ տրամադրելով լծկան անասուններ և սննդամթերք: Չէի՞ն կարող արդյոք նրանք մնալ Հալեպ կամ Ուրֆա քաղաքներում՝ արդեն հայտարարվող հետագա վերադարձի իրավունքի համաձայն: Հունիսի 9-ին «Norddeutsche Allgemeine Zeitung»-ում «Օտոմանյան կառավարությունը թշնամական մեղադրանքների դեմ» հրապարակման մեջ թուրքական կառավարությունը պնդում է, թե տեղահանումները **ժամանակավոր** էին: Նա հայտարարել է. «Եթե որոշ հայեր ստիպված են ժամանակավորապես տեղափոխվել կայսրության այլ շրջաններ, ապա դա կատարվել է, քանի որ նրանք ապրում էին ռազմական գոտում...»: Հնարավոր չէ՞, արդյոք, նրան այստեղ խոսքի վրա բռնել: Մի՞թե Բեյլանը, Սուքլուքը, Քեսաբը և այլն իրոք ռազմական շրջան են: Մի՞թե այնտեղ իսկապես վտանգավոր է կանանց ու երեխաների առկայությունը, չէ՞ որ բոլոր տղամարդիկ զորակոչված են:

«Norddeutsche Allgemeine Zeitung» -ի հուլիսի 13-ի ՝ առաջին հրատարակության №192 համարում, հրապարակվե է Agence Milli կիսապաշտոնական օսմանյան հեռագրային գործակալության մի հայտարարությունը, որը բողոքում է ընդդեմ «Gazette de Lauzanne»-ի այն պնդման, թե օսմանյան կառավարությունը պաշտպանում է Թուրքիայում ապրող հայերի հանդեպ իրագործված օրինազանցությունները, իսկ այդ օրինազանցությունները հաճախ արտահայտվում են ջարդերով:

Ցավոք, շատ բան կարելի է ասել «Gazette de Lausanne»-ի այդ պնդման վերաբերյալ:

Իմ հեռագրային զեկուցագիրը՝ Թել Էրմենի ջարդերի վերաբերյալ անսովոր լավ հաստատված փաստերով, արդեն պատրաստ էր հերքման համար: Պարոն մայոր ֆոն Միկուշը լուսանկարել է այդ փաստերը և ի վիճակի է ներկայացնել: Քրդերի ծեռնարկած ջարդերն իրականացվել են, ինչպես արդեն **ապացուցված է**, թուրքական կառավարության զինված ուժերի ներկայությամբ, բայց հավանական է՝ նաև նրանց գործուն մասնակցությամբ:

Թուրքական կառավարությունն իր հայ հպատակներին, արժե՞ն նշել՝ անմեղներին, հազարներով[36] քշել է անապատ՝ նրանց ռազմական գոտուց հանելու անհրաժեշտության պատրվակով՝ բացառություն չանելով ո՛չ հիվանդների ու հղի կանանց, ո՛չ զորակոչված զինվորների ընտանիքների համար, նրանց սնունդ ու ջուր է մատակարարել անբավարար ու անկանոն, ոչինչ չի ձեռնարկել նրանց մեջ բռնկած համաճարակների դեմ, կանանց մատնել է այնպիսի թշվառության ու հուսահատության, որ նրանք իրենց ծծկեր երեխաներին և նորածիններին թողնում էին ճանապարհներին, վաճառում էին իրենց մանկամարդ աղջիկներին, իրենք էլ փոքր երեխաների հետ նետվում էին գետը, նրանց հանձնել է ուղեկցող զինվորների կամայականությանը՝ դրանով իսկ նրանց մատնելով անարգանքի, պահակախմբի, որն իրեն է վերցրել աղջիկներին և վաճառել, նրանց տվել է բեդվինների ձեռքը, որոնք նրանց թալանել ու առևանգել են, նա մեկուսի վայրերում կարգադրել է անիրավորեն գնդակահարել տղամարդկանց, իսկ զոհերի դիակները թողել է շներին ու գիշատիչ թռչուններին, թերևս, նա՛ է կարգադրել տարագրված պատգամավորների սպանությունը, նա՛ է բանտերից բաց թողել կալանավորներին ու՝ հագցնելով զինվորական համազգեստ, ուղարկել է այն վայրերը, որտեղով պետք է անցնեին աքսորյալները, նա է հավաքագրել չերքեզ կամավորներին և նրանց հրահրել ընդդեմ հայերի: Բայց ի՞նչ է նա հաստատում իր կիսապաշտոնական հայտարարության մեջ. «Օսմանյան կառավարությունը... իր բարեհաճ հովանավորությունը տարածում է Թուրքիայում ապրող բոլոր ազնիվ ու խաղաղասեր քրիստոնյաների վրա...»:

Իսկապես աչքերիս չհավատացի, երբ տեսա այդ հայտարարությունը և խոսք չեմ գտնում՝ բնութագրելու այդ կեղծիքի ահավորությունը: Քանի որ թուրքական կառավարությունը չի կարող իր վրայից հանել պատասխանատվությունն այն ամենի համար, ինչ կատարվել է, ինչքան էլ դա եղած լինի անբավարար խնամքից ու գործադիր մարմինների կանխատեսելի ապականվածությունից և արևելյան մասերում անարխիային հասնող իրավիճակներից, որ հենց ինքը տարագիրներին կանխամտածված ներքաշեց այդ քաոսի մեջ: Պատասխանատվությունը նույնիսկ այն դեպքում կծանրանա նրա վրա, եթե նա հարկադրված լինի կորցնել իշխանությունն իր նշանակած տարրերի վրա, ինչը հեշ-

36. Մինչև հուլիսի կեսերը Ադանայի վիլայեթից և Մարաշի մութասարիֆլիկից տեղահանվել են ավելի քան 30.000 հոգի: Ընդ որում՝ տեղահանումը ընդգրկում է ավելի տարածքներ:

տությամբ կարող էր կատարվել հատկապես Դիարբեքիրի վիլայեթում: Ինչպես այստեղ հայերի բնաջնջումը վերագրվում է գերմանացիների նախաձեռնությանը, այնպես էլ թուրքական կառավարությունը եվրոպական հասարակության առջև փորձում է իր գործելակերպը կոծկել մեր հեղինակությամբ:

Բայցևայնպես թույլատրեք Ձերդ գերազանցության հայեցողությանը թողնել՝ որոշելու, թե արդյո՞ք հարմար է Հայկական հարցի թուրքական մեկնաբանությունները հետագայում հրապարակել գերմանական մամուլում և արդյո՞ք վտանգ չկա, որ մեր դաշնակիցը կվարկաբեկի մեզ:

Նույն զեկուցագիրը կուղարկվի նաև կայզերական դեսպանություն:

Ռյոսլեր

Հավելված

Հալեպ, 27 հուլիսի 1915

Գրառում

Հավելված №81-ի վերաբերյալ

1915թ. հուլիսի 24-ին՝ շաբաթ օրը, ինձ հետ 8 հայ բերեցի Ռաս ուլ Այնի ճանապարհից, 3 կին, տասնչորս տարեկան 1 աղջիկ և 4 աղջիկ՝ 5-8 տարեկան: Կանանցից մեկին, որի ամուսնուն Խարպուտի ու Ռաս ուլ Այնի միջակայքում սպանել և նրա աչքերի առջև վառել էին, Թոռեմ կայանում երկաթուղու անձնակազմն այնպես էր բռնաբարել (7-8 տղամարդ), որ ես կասկածում էի, թե կառողջանա, երկու օր շարունակ նա ուշաթափվում էր և մինչև հիմա իմ բնակարանում է՝ կնոջս խնամքի և բժիշկների հսկողության ներքո: Նրա 7 ամսական երեխային՝ միակ որդուն՝ հյուծված ինչպես կմախք, թաղեցինք Նուս Թելում, պարոն ինժեներ Լինսմայերի մոտ: Երկրորդ կնոջը՝ իր երկու աղջիկների հետ ես գտա քարհանքի բանվորական մի վրանում: Վրանի առջև՝ դեմքով դեպի վրանի ելքը, նստած էին 1 ենթասպա և մոտ 15 զինվոր, իսկ ներսում, կծկված և միայնակ նստած էր այդ կինը: Լինսմայերը ինձ տվեց մի ժանդարմ, որն այդ կնոջը բռնի հանեց վրանից, մենք հնարավորին չափ արագ տարանք Նուս Թել՝ ապահով տեղ: 14 տարեկան աղջկան մենք

գտանք Հոջա կայանում՝ 22-25 տարեկան կայանապետի բարաքում, որն ամուսնացած չէ: Կայանապետը փորձել էր բռնաբարել աղջկան, որին այդ աղջիկը 2 օր շարունակ դիմադրել էր: Երկրորդ օրը կայանապետը աղջկան 24 ժամ թողել է առանց ուտելիքի, որպեսզի ենթարկի իր ցանկասիրությանը: Պարոն ինժեներ Լինսմայերի շնորհիվ, որն սպառնացել էր այդ դեպքի մասին հեռագրով հայտնել պարոն տնօրեն Հազենֆրացին, աղջկան հանձնեցին մեզ: Ռաս ուլ Այնում հենց հիմա կան մոտ 1600 կին ու երեխա՝ բազմահազարների մնացորդը, որոնք իրենց տղամարդկանց հետ տեղահանվել են Խարպուտից ու շրջակայքից: Այդ 1600 հոգու մեջ չկա այլևս ոչ մի տղամարդ կամ 12 տարեկանից բարձր արական սեռի ներկայացուցիչ: Առանց պարենի կամ արևի տապից որևէ կերպ պաշտպանվելու՝ 43 աստիճան տապին առողջները պառկած էին հիվանդների պես՝ մատնված իրենց ուղեկցող զինվորների կամայականությանը: Պարոն ինժեներ Լինսմայերը, որը վերջին ամսին իմ ներկայությամբ խոսում էր «հայ թափթփուկների» մասին, բառացի ինձ ասաց. «Ես այն մարդկանցից չեմ, որ հեշտությամբ են հուզվում, բայց այդ թշվառ մարդկանց տեսքից չկարողացա արցունքներս պահել: Ես անհնար էի համարում, թե մեր դարում կարող է այդպիսի բան պատահել»: Մի ենթասպա՝ Սուլեյման անունով, իրեն է վերցրել 18 կին ու աղջիկ և 2-3 մեջիդիեով տվել է արաբներին ու քրդերին: Մի թուրք կոմիսար ինձ ասաց. «Մենք արդեն պատկերացում չունենք, թե քանի կին ու աղջիկ են տարել արաբներն ու քրդերը, բռնի կամ իշխանությունների համաձայնությամբ: Այս անգամ հայերի հարցը մենք լուծեցինք, ինչպես որ վաղուցվանից ուզում էինք, տասից իննին էլ կենդանի չենք թողել»:

Մինչ ես սա գրում էի, կինս վերադարձավ քաղաքից և արցունքների միջից պատմեց, որ հենց նոր հանդիպել է 800 հոգուց բաղկացած հայերի թափորի՝ոտաբոբիկ ու քրջոտ՝ իրենց չնչին ունեցվածքը մեջքներին կապած քարշ գալով:

Բեզնիեում արտաքսել են ամբողջ բնակչությանը՝ մոտ 1800 կին ու երեխա և սակավաթիվ տղամարդկանց՝ իբր Ուրֆա տեղափոխելու համար: Գյոքսուի՝ Եփրատի մի վտակի մոտ, նրանց ստիպել են հանվել, բոլորին՝ առանց բացառության, սպանել և նետել են գետը: Վերջին օրերին տեսել են, թե ինչպես մի օր մոտ 170, մյուս օրը՝ 50-60 և ավելի դիակներ Եփրատի հոսանքը տանում էր ներքև: Պարոն ինժեներ Ավդիսը և իր հաշվետարը կարճատև ձիազբոսանքի ժամանակ տեսել են 40 դիակ: Դեպի ափ

քշված դիակները խժռում են շները, գետի հոսանքով դեպի ավազուտները քշված դիակները գիշանգղների բաժին են դառնում: Վերջին շրջանում դրանք առավելապես կանանց ու երեխաների դիակներ են:

Վերոհիշյալ 800 հայերին արտաքսել են Մարաշի, Դյոնգելիի ու Չյուրյուքուզի շրջակայքից: Նրանց ասել են՝ տանում են Այնթապ, և նրանք պետք է պարենավորվեն 2 օրվա համար: Երբ նրանք մոտեցել են Այնթապին, ասել են՝ մենք սխալվել ենք, դուք պետք է Նիսիբ գնայիք, Նիսիբում ասել են՝ դուք պետք է Բումբուջ գնայիք, Բումբուջում՝ դուք պետք է Բաբ գնայիք և այլն: Եվ վերջապես, 17 օր անց ժամանել են Հալեպ: 17 օրվա մեջ նրանք իշխանություններից բացարձակապես ոչ մի մթերք չեն ստացել, ստիպված են եղել իրենց չնչին ունեցվածքը տալ հացի դիմաց, Նիսիբի մեծակայքում իրենց ունեցվածքը վաճառել են 5 թուրքական ֆունտով և գումարը տվել են ուղեկցող ժանդարմներին, հակառակ դեպքում նրանց սպառնում էին կանանց ու աղջիկներին գիշերը տանել ու անարգել:

Ռաս ուլ Այն հասած կանայք ստիպված էին ճանապարհին մի քանի անգամ լրիվ հանվել ուեկցող ժանդարմների առջև: Նրանց հագուստների մեջ փող են փնտրել, նաև մազերի ու ... սեռական օրգանների, թե արդյոք փող չե՞ն թաքցրել:

Մի կնոջից բռնի խլել են ավագ դստերը: Հուսահատությունից նա վերցրել է իր մյուս երկու երեխաներին և նետվել է Եփրատ գետը: Մի ձեռնարկատեր ինձ պատմեց, որ իր աչքով է տեսել, թե ինչպես մի կին ծննդաբերել է գետի մոտ, վերցրել է երեխային և հուսահատությունից նետել է գետը:

Սաիդը՝ վերաբնակիչ Տրիպոլիից, որն արդեն 4 տարի է, ինչ պարոն Լինսմայերի մոտ ամսական 400 պիաստր աշխատավարձով աշխատում է որպես ձիապան, կամովին ներկայացել է, որպեսզի, իր ասածով, ինքն էլ հնարավորություն ունենա մի քանի հայ «մորթելու»: Որպես պարգևատրություն նրան խոստացել են տուն Ա.-ում, Ուրֆայի մերձակայքում գտնվող հայկական մի գյուղում: Երկու չերքեզ պարոն պահեստապետ Ջեմանի մոտ Թել-Աբիադում նույն պատճառով ներկայացել են որպես կամավոր: Գյոքսունի մերձակայքում գտնվող Չադաքլի գյուղում գյուղապետը մի ծանոթի ներկայությամբ ասել է. «Ew jikmak itschün giderler» (սրանք գնում են, որպեսզի ընտանիքներ կործանեն):

Արաբ Փունարում գերմաներեն խոսող մի թուրք մայոր ինձ մոտ

պատմեց. «Ես ու եղբայրս Ռաս ուլ Այնից մեզ համար մեկական աղջիկ բերեցինք, որոնց ճանապարհին գտանք: Մենք շատ «ջղայնացած» ենք գերմանացիների վրա, որ նրանք բաներ են անում, իսկ երբ ես հակաճառեցի, նա ասաց. «Գերագույն շտաբի մեր պետը գերմանացի է՝ ֆոն դեր Գոլցը, հրամանատար է և այնքա՜ն շատ գերմանացի սպաներ կան մեր բանակում- մեր Ղուրանն այդպիսի վերաբերմունք չի թույլատրում, ինչպիսին հիմա կրում են հայերը»: Նուս Թելում մահմեդական մի հսկիչ հենց նույն կերպ արտահայտվել է հերթափոխով աշխատող գրագիր Էլիաս Սալֆեթիի ներկայությամբ: Երբ ես այլոց ներկայությամբ ստիպեցի այդ մասին խոսել, նա հակաճառեց. «Էֆենդի, դա միայն ես չէ, որ ասում եմ, այստեղ դա ասում է ամեն ոք»: Վերջերս՝ թուրքերի հայտարարված հաղթանակներից մեկի առիթով, մահմեդական մի խանութպան իմ ներկայությամբ ասաց. «Վալին դեռևս չի հրապարակում հաղթանակի լուրը, նա վախենում է, որ մուսուլմանները ուրախությունից կհարձակվեն քրիստոնյաների վրա (սիրիացիների, ոչ հայերի):

[Անունը] [Վ. Շպիկեր]

[Կոստանդնուպոլսի դեսպանությանը՝ Ցիմերմանից (№1547) 18.8]

Խնդրում եմ Հալեպից եկած №1645 զեկուցագիրը ժամանակին և պատշաճ ձևով, հնարավորինս՝ առանց կայզերական հյուպատոսության վարկաբեկման, օգտագործել Բարձր Դռանը և արտահայտել այն համոզմունքը, որ հայերի դեմ գործելակերպը հակասում է նրանց մտադրություններին և հրահանգներին: Թուրքական աշխատակազմի մեր բարեկամները կըմբռնեն, որ մենք խիստ շահագրգռված ենք օրինազանցությունների եռանդագին ճնշման համար՝ արդեն իսկ մեզ հրահրման մեջ մեղադրելու նախատինքի պատճառով: Մարդասիրության ու բարեկրթության բարձր ընբռնողությունը, որը տարբերակում է թուրքերի պատերազմ վարելու ձևը՝ ի հակառակ թշնամականի, մեզ երաշխիք է տալիս, որ մեր դաշնակիցը նույն սկզբունքները կկիրառի նաև երկրի ներսում:

Ցանկալի է հյուպատոս Ռոսլերին և այլոց հնարավորինս պարզաբանել ու հանգստացնել՝ վկայակոչելով հայերի խարդավանքները և, չնայած դրան, նրանց օգտին մեր ձեռնարկած քայլերը:

1915 – 07 – 28 – DE – 002

Սկզբնաղբյուրը՝ PA-AA /Կոստ.դեսպ./ 170

Կոստանդնուպոլսի դեսպանությանը՝ Սմիռնայի հյուպատոս Հումբերտից

Սմիռնա, 28 հուլիսի 1915

№10

Այստեղի հայ եպիսկոպոսը և հարազատները այն յոթ հայերի, որոնց ռումբ պահելու համար, այս օրերին ռազմական դատարանը դատապարտել է մահվան, խնդրում են Ձերդ պայծառափայլությանը՝ միջնորդել այսօր իրենց անունից հեռագրով Նորին մեծություն սուլթանին ուղարկված ներման դիմումի առնչությամբ: Դատապարտյալներին կախելու ռազմական նախարարի հրամանը պետք է որ արդեն եղած լինի, այնպես որ, եթե Ձերդ գերազանցությունը հակված է այդ խնդրանքը կատարելու, ապա անհրաժեշտ է շտապել:

[Հումբերտ]

[Հռհենլոհե-Լանգենբուրգը Սմիռնայի հյուպատոսությանը (№13) 29.7]

№ 10 հեռագրի պատասխանը

Այն անձանց, ովքեր մեղադրվում են երկրին դավաճանելու համար, ինքնին հասկանալի է, որ չեմ կարող օգնել:

Հ[ռհենլոհե-Լանգենբուրգ]

1915 – 07 – 28 – DE – 015

Սկզբնաղբյուրը՝ PA-AA /Կոստ.դեսպ./Հատ. 170
Տպագրված՝ Գ և Հ 123

Կոստանդնուպոլսի դեսպան Վանգենհայմին՝ Էրզրումում ռեգենտ Շոյբներ-Ռիխտերից

Մ № 552 (գաղտնի զեկուցագիր) Հ № 21

Էրզրում, 28 հուլիսի 1915

Ինչպես պատիվ եմ ունեցել Ձերդ գերազանցությանն ուղղված (սույն ամսվա) 9-ի №20 իմ զեկուցագրում հայտնելու, ցավոք, վերջին շրջանում այստեղ նկատելի է դառնում կողմնակի կառավարման ազդեցությունը:

Բացի այդ, հիմա նաև 3-րդ բանակի գերագույն հրամանատար Մահմուդ Քյամիլ փաշան, որն այստեղ է տեղափոխել իր շտաբակայանը, սուր կերպով խառնվեց վիլայեթի իշխանությունների գործերին:

Հակառակ մյուս քաղաքների, մինչև այժմ Էրզրումում, ինչ-որ չափով մեղմորեն էին վերաբերվում տեղահանվածներին: Այսպես, օրինակ, չքավոր շատ ընտանիքների իշխանությունները մինչև Էրզինջան ու Սվազ տրամադրել էին եզներով լծված սայլեր: Այնուհետև վալին թույլատրեց, որպեսզի հիվանդները, առանց տղամարդ մնացած ընտանիքներն ու միայնակ կանայք կարողանան մնալ Էրզրումում:

Մարդասիրական այդ գործելակերպին, ինչի օգտին հանդես եմ եկել նաև ես, հանկարծ վերջ տրվեց կոմիտեական ինչ-ինչ ազդեցությունների հետևանքով: Այսուհետ նաև Մահմուդ Քյամիլ փաշան է կարգադրել՝ անհապաղ ու անխնա արտաքսել բոլոր հայերին:

Դեռևս քաղաքում մնացած կանանցից ու հիվանդներից կրկին հետ են վերցրել մնալու թույլտվության արդեն բաժանված տեղեկանքները՝ նրանց քշելով տարագրման ճամփաները՝ անխուսափելի մահվանն ընդառաջ:

Դա պատահեց այն ժամանակ, երբ վալին ու ես Էրզինջանում էինք:

Այս առումով ինձ թվում է, որ այստեղի վալին՝ Թահսիմ բեյը, որը Հայկական հարցի մեկնաբանման մի քիչ ավելի հումանիստական տեսակետի կողմնակից է, անզոր է կոշտ ուղղության դեմ:

Իմիջիայլոց, վերջինի կողմնակիցներն անկեղծորեն խոստովանում են, որ հայերի հանդեպ իրենց գործելակերպի վերջնական նպատակը Թուրքիայում նրանց իսպառ բնաջնջումն է:

Պատերազմից հետո մենք «Թուրքիայում այլևս ոչ մի հայ չենք ունենա», այսպիսին է ազդեցիկ մի անհատի բառացի արտահայտած միտքը:

Քանի որ այդ նպատակին հնարավոր չէ հասնել տարբեր ջարդերով, ուստի հուսով են, որ մինչև Միջագետք տանող ճանապարհի զրկանքներն ու անսովոր կլիման կանեն մնացածը: Հայկական հարցի այդպիսի լուծումն իդեալական է թվում կոշտ ուղղության կողմնակիցներին, որին հարում են բոլոր ռազմական ու կառավարական պաշտոնյաները: Թուրք ժողովուրդը ոչ մի կերպ համաձայն չէ Հայկական հարցի այդպիսի լուծմանը և արդեն զգում է հայերի աքսորից հետո երկրին սպառնացող տնտեսական ճգնաժամի ծանրությունը:

Շոյքներ-Ռիխտեր

1915 – 07 – 30 – DE – 011

Սկզբնաղբյուրը՝ PA-AA /Կոստ.դեսպ./ 170
Տպագրված՝ Գ և Հ փաստ. 125 / խմբ.կրճ. /

Կոստանդնուպոլսի դեսպանությանը՝ Հալեպի հյուպատոս Ռյոսլերից

№ 53

Հալեպ, 30 հուլիսի 1915

Կառավարությունը հիմա հրաման է տվել հայերից մաքրազատել ինչպես Հալեպի վիլայեթի ծովափնյա շրջանը, այնպես էլ Այնթապն ու Քիլիսը, հավանաբար նաև Մարաշը, որոնք ո՛չ ռազմական գոտում են, ո՛չ էլ տապային ուղու վրա: Այնթապն ունի 32.000, Քիլիսը՝ 6000 հայ բնակիչ: Խոնարհաբար Ձեր հայեցողությանն եմ թողնում՝ խորհուրդ տալ կառավարությանը. վերացնել այդ հրամանը, կամ գոնե հետաձգել դրա կատարումը: Նրանց կազմակերպվածությունը ոչ մի կերպ բավարար չէ միանգամից իրար հաջորդող զանգվածային տեղահանումների համար: Արդեն հիմա այստեղ ան տասը հազար հայ: Դեր Զորում են 15.000 հոգի, որոնց իշխանությունը կերակրում է ծայրահեղ անբավարար: Սովից փրկվելու համար նրանք վաճառել են ավելի քան 30 երեխա:

Բազում կրթված քաղաքաբնակների համար ճանապարհի զրկանքներն ավելի դժվար տանելի կլինեն, քան գյուղաբնակների համար: Խիստ գաղտնի կերպով հայերը հարց են առաջադրել, թե արդյոք հնարավոր չէ՞ 10.000 թուրքական ֆունտ ռազմատուգանքով խնայել Այնթապ, Մարաշ, Ադանա (*անընթեռնելի է*) քաղաքները: Նրանք նաև հարց են առաջադրում և խնդրում են, քանի որ իրենց դեմ միջոցառումներն անխուսափելի են, աքսորի փոխարեն ընձեռել էմիգրացիայի թույլտվություն:

[Ռյոսլեր]

[Մորդմանի նշումը 2.8]

Որոշ ժամանակ առաջ այստեղի պատրիարքն այդ առումով նույնպես խոսել է Մեծ վեզիրի հետ: Մեծ վեզիրը նրան միայն պատասխանել է. «Դուք ուզում եք մեզ բոլորովին սպառնա՞լ»:

1915 – 08 – 04 – DE – 001

Սկզբնաղբյուրը՝ PA-AA / R14086

Կոստանդնուպոլսի դեսպան Վանգենհայմին՝ արտգործնախարարության ունտերշտատսքարտուղար Ցիմերմանից

Պերա, № 590

Բեռլին, 4 օգոստոսի 1915

Ինչպես բազմիցս նշվել է այնտեղի զեկուցագրերում, մենք պետք է նկատի ունենանք, որ մեր հակառակորդները և մեր հանդեպ անբարեհաճ տրամադրված չեզոք երկրները ջանք կթափեն կայզերական կառավարությանը մեղադրել Թուրքիայում հայերի հալածանքների մեղսակցության համար: Քանի որ այդօրինակ մեղադրանքներին կարող են արձագանք գտնել նաև երկրի ներսում, հատկապես՝ եկեղեցական ու միսիոներական շրջանակներում, մեր դիրքորոշման արդարացման համար հավանաբար անհրաժեշտ կլինի Սպիտակ գրքի կամ նման մի այլ հրատարակության կազմակերպումը:

Ձերդ պայծառափայլությանը խնդրում եմ արդեն հիմա նախապատրաստել այդպիսի ժողովածուի համար պիտանի նյութեր: Հատկապես պետք է շարադրել, որ Թուրքիայում, իրոք, գոյություն է ունեցել հակապետական հայկական շարժման լայն ճյուղավորված ցանց, որի ճնշումը Բարձր Դռան համար ինքնապահպանման պատգամ էր և որ հայերին դավաճանական քայլերի մղել են հենց Անտանտի տերությունները, որոնք էլ բարոյապես հանձն են առել հետևանքների պատասխանատվությունը: Ապա լավ կլիներ նաև նշել, թե ինչ ենք մենք արել, որպեսզի կանխվի հայերի հանդեպ չափազանց կոշտ վերաբերմունքը և մեղմացվեն տուժածների տառապանքները:

Ց[իմերման]

1915 – 08 – 04 – DE – 002

Սկզբնաղբյուրը՝ PA-AA/Կոստ.դեսպ./ 170

Կոստանդնուպոլսի գլխավոր հյուպատոս Մորդմանի գրառումը

Պերա, 4 օգոստոսի 1915

Ինձ հայտնում են.

1.Իզմիտի շրջանից հայերի տեղահանումն ու արտաքսումը:

Ամազոք [մոտ 30կմ Իզմիդից դեպի հյուսիս-արևելք] բացառապես հայերով բնակեցված (մոտ 2000 հոգի), հայկական գրիգորյան պատրիարքարանի մեծ հոգևոր ճեմարանի նստավայրը՝ հարուստ նվիրատվություններով և հնամենի հանրահայտ սրբությամբ, այս ամսվա 1-ին դատարկվել է:

Ադաբազարն ունի 25.000 բնակիչ, որոնց կեսը մահմեդականներ են, 1500-ը հույներ, մնացածը հայեր են [որոնցից 1500-ը՝ բողոքական]: Այսօր պետք է դատարկվեր հայ բնակիչներից: Ադաբազարում գտնվել է ռումբերի պահեստ, որի մասին հայերը պնդում են, թե դա ժամանակին՝ Աբդուլ Համիդի օրոք, հիմնվել է երիտթուրքերի աջակցությամբ:

Բաղչեջիկ (հայերեն՝ Բարդիզագ)[37] զուտ հայկական 10.000 բնակիչ (նրանց թվում նաև մի քանի կաթոլիկ և բողոքական ընտանիք) լավ դպրոցներով, մոտ օրերին երևի կգա նաև նրա հերթը:

Այսօր ինձ մոտ եղան երկու մխիթարյանականներ, ովքեր խնդրում էին կայզերական դեսպանության հրատապ միջնորդությունը գոնե Բաղչեջիկի համար: Ես նրանց պատասխանեցի, որ այդպիսի միջնորդությունը լիովին անհեռանկար է:

Ալանբեյը՝ Իզմիդի մերձակայքում, զուտ հայկական (մոտ 3000 բնակիչ, բնակիչների մեծ մասը աշխատում են ֆեսի ու գլխաշորի կայզերական ֆաբրիկայում), ըստ երևույթին արդեն ամբողջովին դատարկվել է:

Հայերի տեղահանումը ղեկավարել է ոմն Իբրահիմ բեյ, որը 1908թ.[38] Ադանայում ղեկավարել է հայերի կոտորածը:

Ենթադրվում է, որ դրան կհաջորդի նաև **Իզմիդը** (հայ բնակիչների թիվը՝ 5-6000 հոգի):

37. Հավանաբար՝ Պարտիզակ (ծան. թարգմ.):
38. Թե՞ 1909թ (ծան. թարգմ.):

2. Հայերի տեղահանումներ Սև ծովի ափին.

Սամսունի շրջանում մեծաքիվ հայեր իսլամացվել են (հենց Սամսունում, **Ինեբոլիում, Ունիեում**): Ինեբոլիում հայկական եկեղեցին վերածվել է մզկիթի, իսկ հայ քահանաները գործում են որպես իմամներ: Տրապիզոնի շրջանում դավանափոխությանը հավանություն չեն տվել:

Տրապիզոնում շատ անգամ հայերին բարձել են բեռնանավակներ, տարել են ծովի խորքը և այնտեղ նետել ջուրը:

1915 – 08 – 05 – DE – 002

Սկզբնաղբյուրը՝ PA-AA / R14088
Տպագրված՝ Գ և Հ փաստ. 129 (խմբ.կրճ.) 130 (խմբ. կրճ.)

Կոստանդնուպոլսի արտակարգ միսիայի դեսպան Հոհենլոհե-Լանգենբուրգին՝ Էրզրումում ռեգենտ Շոյքներ-Ռիխտերից

Մ № 580 (գաղտնի հաղորդագրություն № 23)

Պատճեն

Էրզրում, 5 օգոստոսի 1915

5 հավելված

Ես ինձ իրավունք եմ վերապահում զեկուցագրին կցել հետևյալ հավելվածները:

1. Զեկուցագիր Դերջանի մոտի ջարդերից փախած մի գյուղացու տպավորությունների մասին: Այդ տղամարդուն նույն օրը ուղեկցեցի վալիի մոտ, որը նրա միջոցով առաջին հերթին ավելի մանրամասն տեղեկություններ ստացավ Դերջանի մոտ կատարված իրադարձությունների մասին: Դրա հիման վրա վալին տվյալ կայմակամին հեռացրեց աշխատանքից:

2. Պատերազմի կամավոր Կարլ Շլիմեի զեկուցագիրը՝ ձիով Տրապիզոն գնալիս ճանապարհին տեսածի մասին:

3. Հայ եպիսկոպոսի նամակը Էրզրումի հյուպատոսությանը:

4. և 5. Հայ կաթոլիկ եպիսկոպոսի ուղերձը հյուպատոսությանը:

Ես հուսով եմ, որ ինչպես Ձերդ գերազանցությունը, այնպես էլ արտ-

գործնախարարությունը այս չափազանց ծանր իրավիճակում, որն ինձ շատ ծանր ժամեր է պատճառում, համաձայն կլինեն իմ դիրքորոշմանը: Ապա ես հուսով եմ՝ ինձ նաև հաջողվել է այստեղի ազդեցիկ շրջանակներին համոզել, որ Հայկական հարցում իմ խորհուրդների բնույթը բարյացակամ է, առավել ևս, որ չնայած գործնական տարբերություններին, անձնական առումով նույն մարդկանց հետ պահել եմ լավ հարաբերություններ:

Շոյքներ-Ռիխտեր

Հավելված 2

Էրզրում, 5 օգոստոսի 1915

Տրապիզոն կատարած իմ ուղևորության մասին:

Հունիսի 18-ին պարոն փոխհյուպատոս ֆոն Շոյքների հանձնարարությամբ ես ձիով այստեղից ուղևորվեցի Տրապիզոն: Մինչև Բայբուրթ ես ձիով գնացի ավստրիական դահուկային միսիայի անդամների հետ: Այստեղի վալին այդ պարոններին խնդրեց իրենց հետ տանել մի հայկական ընտանիքի, նաև այստեղի հայ եպիսկոպոսի քրոջը, որոնք Անգորա գնալու անցաթուղթ ունեին: Բայբուրթում մեզնից պահանջեցին հանձնել այդ ընտանիքին: Երբ մենք հրաժարվեցինք, նրանք տարան կառապաններին, այնպես որ մենք ստիպված եղանք ինքներս քշել ֆուրգոնները: Դ-ր Փիչմանն ինձ խնդրեց՝ իրեն ուղեկցել մինչև Էրզինջան, Բայբուրթում էլ մեզնից հեռագիր չընդունեցին գերմանական հյուպատոսության համար: Մինչ մենք բանակցում էինք, նկատեցինք, որ ուզում են մեզնից բռնի խլել հայերին: Մենք հրացանները նախապատրաստեցինք կրակելու և միայն դրա շնորհիվ կարողացանք անվնաս դուրս գալ Բայբուրթից: Ճանապարհին մենք նկատեցինք պարտիզանների կանոնավոր պահակակետերը: Մեզ ուղեկցող ժանդարմները հրաժարվեցին մեզ հետ շարունակել ճանապարհը և բազմիցս առաջարկեցին սպանել հայերին: Այդպես՝ հարձակման ենթարկվելու մշտական սպասումով հասանք Էրզինջան:

Այնտեղ ոստիկանությունը մեզնից վերցրեց հայկական ընտանիքին և ներկայացրեց: Ինչպես հետո Էրզրումում իմացա, պարոն Շոյքները կառավարությունից ստացել է Էրզինջանի մութասարիֆի պաշտոնական հաղորդագրությունը, որով հայտնում էին, թե հայկական ընտանիքին պահել են, որովհետև նրանց մոտ զենք են գտել: Ես կարող եմ հավաստիացնել, որ

ֆուրգոններն ստուգել են իմ ներկայությամբ և ոչինչ չեն գտել:

Հունիսի 26-ի առավոտյան Էրզինջանով անցնում էր տարագիրների մի մեծ քարավան՝ բաղկացած միայն կանանցից ու երեխաներից: Նրանց մեջ կային հիվանդներ և ծննդաբերելու մոտ հղի կանայք, շատ կանայք և երեխաների մեծ մասը կիսամերկ էին, նրանք իրենց հետ տանում էին կապոցներով խոտ և դրանից ուտում էին, որովհետև ուրիշ ոչինչ չունեին: Մի քանիսն ինձնից հացի համար փող ողորմացին: Երբ ես նրանց մի քիչ տվեցի, ժանդարմները նրանց ծեծեցին: Այդ թափորը գնում էր Քեմախի կիրճի ուղղությամբ:

Հունիսի 27-ին Սիբիքոյի լեռնանցքում հանդիպեցի կանանց ու երեխաների մեկ այլ թափորի: Նրանք էլ էին անմխիթար վիճակում և ժանդարմները նրանց վերաբերվում էին ինչպես անասունների:

Հենց Սիբիքոյում երրորդ թափորն էր, որը պետք է գիշերն այնտեղ անցկացներ: Մի ազատ տեղում նրանք շրջանաձև խիտ նստել էին, իսկ ժանդարմները նրանց չէին թողնում նույնիսկ ջուր բերել:

Հուլիսի 1-ին Տրապիզոնի մոտ հանդիպեցի մի քարավանի՝ բաղկացած տղամարդկանցից, կանանցից ու երեխաներից: Դատելով հագուստից, նրանք երևելի հայեր էին, որոնք անձամբ էին տանում իրենց կապոցները, քանի որ չունեին ոչ ֆուրգոն, ոչ էլ գրաստ: Տրապիզոնից մարդկանց քշել էին սարսափելի դաժան ձևով, նրանց չէին թողել ոչ մի բան վաճառել կամ հետները վերցնել:

Վերադարձի ճանապարհին՝ Տրապիզոնից մինչև Ջևիսլիկ, տեսա ավելի քան 20 տղամարդու դիակ՝ ջրում կամ ջրի մոտ: Բոլորը լրիվ մերկացված էին: Գեմիշանեհի և Քոփ Հանի մոտ ես էլի դիակներ տեսա: Ինչպես ինձ հայտնեցին թուրք գյուղացիները, Տրապիզոնից եկող տղամարդկանց մեծ մասին՝ մինչև Գեմիշանեհ, ճանապարհին սպանել են: Նրանք նաև ասում էին, որ շատ կանանց բռնաբարել ու սպանել են, հատկապես նրանց ուղեկցող ժանդարմները:

Բայբուրթից հետո հանդիպեցի Էրզրումից եկող մի քարավանի, բոլորը սայլերի վրա ու ձիերով գնում էին Էրզինջան: Այդտեղ էին իմ ծանոթներից, ես իմացա, որ նրանց առայժմ ձեռք չեն տվել: Դատելով այն ամենից, ինչ ես տեսել եմ, կարող եմ վկայել, որ ամենալավ վերաբերվել են Էրզրումից տեղահանվածներին:

Ես պատրաստ եմ վերը ասվածը հաստատել երդումով:

Կառլ Շլիմե

1915 – 08 – 05 – DE – 003

Սկզբնաղբյուրը՝ PA-AA / Կոստ. դեսպ./ 170

Կոստանդնուպոլսի դեսպանությանը՝ Հալեպի հյուպատոս Ռյոսլերից

№ 58

Հալեպ, 5 օգոստոսի 1915

№ 43 հեռագրի պատասխանը

Այստեղ հավաստի է համարվում է, որ Խարպուտի նշյալ եպիսկոպոսը[39] և մի քանի քահանա սպանվել են Դիարբեքիրի ու Ուրֆայի միջակայքում: Եկեղեցական արծաթե պարագաները, որ իր հետ տանում էր նրանց հետ սպանված քահանաներից մեկի քույրը, ընկել են ժանդարմների ձեռքը:

[Ռյոսլեր]

[Մորդմանի նշումը]

Սույն ամսվա 6-ին բանավոր հայտնել եմ մոնսինյոր Սայեղյանին, որը պարտավորվել է տեղեկության հնարավոր օգտագործման դեպքում չհայտնել սկզբնաղբյուրը:

1915 – 08 – 06 – DE – 012

Սկզբնաղբյուրը՝ PA-AA /Կոստ.դեսպ./170
Հրատարակված. Գ և Հ փաստ. 131

Նավատորմի ռազմական կցորդ Հումանի զրառումը

Հուման- Էնվեր զրույցը 6.8.15

3)[40] **Գերմանա-հայկական կոմիտեից դ-ր Լեփսիուսի** ներկայության կապակցությամբ Էնվերը հիշատակում է ամերիկյան հյուպատոսի իրեն

39. Ստեփան Իսրայելյան
40. Հումանի հաղորդագրության այս մասը (մյուսները ակտերում չկան) մի քիչ այլ խմբագրմամբ Յեքի թողած փաստաթղթերում հատված է Էնվերի հետ նրա մի հարցազրույցից:

հայտնի դարձած զեկուցագիրը՝ Միացյալ Նահանգների այստեղի դեսպանին: Դրանում հյուպատոսը եզրակացնում է, որ ամերիկյան կառավարությունը լավ կաներ, եթե մեկընդմիշտ հրաժարվեր հայկական իր քաղաքականությունից, քանի որ թուրքերը հայերի հանդեպ իրենց գործելակերպով անհնար կդարձնեն վերջիններիս հետ հետագա ցանկացած քաղաքական ակցիա: Հայերին չեն բնաջնջել, որը քաղաքական տեսակետից դեռևս վատթարագույնը չէր լինի, քանի որ այդպիսի ջարդերի ժամանակ միշտ էլ կարող է մնալ մի տոհմ, որի հետ կարելի էր կապել բոլոր հետագա հույսերը: Դրա փոխարեն (ինչը քաղաքական տեսակետից շատ ավելի վատ էր) նրանց ցրել են ամբողջ երկրով մեկ, այնպես որ նրանք կամա-ակամա պետք է լուծվեն երկրի թուրքական տարրի մեջ: Դրանով առանց այլևայլի աշխարհից կվերանա հայկական խոստումնալից քաղաքականության հիմքը:

Այնուհետև Էնվերը պատմում է այն բազում նախազգուշացումների մասին, որոնք նա պատերազմի սկզբում կարգադրել է հասցնել հայ պատրիարքին և միաժամանակ մատնանշում է այն գովասանքը, որով Սազոնովը վերջերս դումայում արժանացրել է «հավատարիմ» հայերին:

Ռուս գործակալների դրդմամբ ու սադրանքով հայերն այնքան հիմնավոր են մոլեգնել թուրք բնակչության դեմ, որ որ նախկինում Վանի վիլայեթը ներկայացնող 150.000 թուրքերից, կենդանի են մնացել հազիվ 30.000-ը:

Էնվերին հայտնի է նաև մի դավադրություն, ըստ որի՝ Ադաբազար-Իզմիդ վայրի 30.000 հայեր Զաքարիայի մոտ ձգտել են աջակցել ռուսների ցամաք դուրս գալուն:

Նախարարների խորհրդում հենց նա է պաշտպանել այն տեսակետը, թե նկատառելով հենց պատերազմի հանգամանքը՝ պետք է փորձել հայերի հետ լավ ու բարեկամաբար գոյակցել: Նա այդ մասին ասել է նաև պատրիարքին, միաժամանակ ընդգծելով, որ նա արևելյան հայկական կենտրոններում նվազագույն իսկ միջադեպի դեպքում կձեռնարկի դիվային միջոցներ: Կովկասում հզոր թշնամու դեմ կռվող բանակը, պետք է անպայման վստահ լինի, որ իր թիկունքում թշնամի չկա: Դրա համար ինքը՝ ռազմական գլխավոր հրամանատարը, կհոգա բոլոր միջոցներով:

Իմիջիայլոց, Էնվեր փաշան պատրաստ է ընդունել դ-ր Լեփսիուսին[41] և նրա հետ քննարկել Հայկական հարցը:

41. Յեքի փաստաթղթերում ձևակերպված է. «Դ-ր Յեքի ցանկությամբ ընդունել դ-ր Լեփսիուսին»:

1915 – 08 – 11 – DE – 001

Սկզբնաղբյուրը՝ PA-A /R14087, Կոստ.դեսպ. 170

Ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին՝ Հալեպի հյուպատոս Ռյոսլերից

K. № 85/ Հատ. № 1759

Հալեպ, 11 օգոստոսի 1915

Կից հավելվածում խոնարհաբար Ձերդ գերազանցությանն եմ փոխանցում Ուրֆայում սարկավագ Քյունցլերից այս ամսվա 5-ին ինձ հասած նամակներից մեկը: Նրա հայտնած այն փաստը, թե Հայկական հարցում վճիռ կայացնելը այլևս ոչ թե մութասարիֆի կամ ռազմական դատարանի ձեռքին է, այլ կոմիտեի ուղարկած երկու սուրհանդակների, և որ այդ սարսափները Հալիլ և Ահմեդ բեյերն[42] են կառավարում, որպես անկասկածելի փաստ, ինձ համար հաստատեց այստեղի լավատեղյակ ու նշանավոր մի մահմեդական:

Հոսպիտալի դեղագործի համար ես քանիցս միջամտեցի Ջեմալ փաշայի, Ուրֆայի մութասարիֆի, Դիարբեքիրի վալիի մոտ, բայց ամեն ինչ ապարդյուն եղավ:

Ջեմալ փաշան խոստացավ կարգադրել ի կատար չածել նույնիսկ ռազմական դատարանի կայացրած դատավճիռը, քանի դեռ իրեն չեն ներկայացվի համապատասխան փաստաթղթերը: Կոմիտեի անդամների կամայականորեն կազմակերպած աքսորը դեպի Դիարբեքիր խափանեց այդ խոստման հաջողությունը: Եթե Ջեմալ փաշան հիմա դեղագործի գտնվելու վայրի վերաբերյալ հետախուզություն հրահանգի, ապա նրան, բնականաբար, կհայտնեն, որ նա ընկել է ավազակների ձեռքը: Եթե նա բավարարվի այդ տեղեկությամբ, ապա կնշանակի, որ նա և նրա հետ նաև՝ Ուրֆայի ղեկավարությունն այլևս իրենց ձեռքին չեն պահում իշխանությունը:

Այդպես պետք է զոհաբերվեր այն դեղագործը, որը 16 տարի շարունակ հավատարիմ աշխատել է գերմանական հոսպիտալում, որի լոյալ օսմանյան համոզմունքների համար երաշխավորում էր Գերմանիայի

42. Այդ երկուսից չերքեզ Ահմեդը վայրի ու վատահամբավ անձնավորություն է, Հալիլ Բեյը, ինչպես ես հետո իմացա, նույն Էնվեր փաշայի՝ դեպի արևելք ուղարկված դիվիզիայի հրամանատարի, հորեղբայրն է (կամ մորեղբայրը):

արևելյան միսիան: Այսպիսի հանգամանքներում այնքան էլ չես կարող նեղանալ այն հայ բժշկից, որի դեմ արդեն սկսել են պաշտոնապես գործել՝ նրան արգելելով միանձնյա վիրահատումները, որը կորցնում է արիությունը և օգտագործում է իրեն ընձեռված առիթը՝ Ուրֆան լքելու համար: Բայց ինչ-որ թուրքական կողմից նրան հասել է, թե մեր հոսպիտալն առայժմ կփակվի, որտեղ տարիներ շարունակ հազարավոր մահմեդականներ, ինչպես նաև քրիստոնյա հիվանդներ ստացել են գերմանական բժիշկների բուժման ու խնամքի օրհնանքը:

Նույն զեկուցագիրը կուղարկվի կայզերական դեսպանություն:

Ռյոսլեր

Հավելված

Պատճեն

Ուրֆա, 5 օգոստոսի 1915

Երբ ես հուլիսի 3-ին՝ Հալեպից վերադառնալով, կրկին ժամանեցի այստեղ, մեր դեղագործին գտա դեռ ձերբակալված: Այդ օրերին մի քանի պարոն ռազմական դատարանից եկան այստեղ՝ Ուրֆա, իբր ձերբակալվածների համար դատավճիռ կայացնելու: Ես այցելեցի այդ հանձնաժողովի նախագահին և նրան հանգամանորեն ներկայացրի մեր դեպքը: Այդ պարոնների ժամանումից հետո շատ օրեր անց ձերբակալվածների գործն արդեն լավացավ, միայն թե Ահմեդ ու ոմն Խալիլ բեյ՝ երկու թուրք կոմիտեականներ, Դիարբեքիրից ժամանեցին այստեղ և դրանով սկսվեց մի իրավիճակ, որից սաստիկ անարխիայի հոտ էր գալիս: Ապա այդ երկու պարոններն անմիջապես պահանջեցին հենց նոր այստեղ ժամանած երկու նախկին պատգամավոր Վարդգես և Զոհրապ էֆենդիներին սպանել: Նահանգապետը և ժանդարմերիայի հրամանատարը դա չէին ուզում, բայց վերոհիշյալ պարոնները, կարծես, սպառնացել են, թե փոխարենն իրենց կսպանեն: Խալիլ բեյը հրամայել է երկու հայերին սպանել Ուրֆայից մեկ ժամվա ճանապարհ հեռվում: Դրանից հետո ուղարկել են շրջանային ու քաղաքային բժիշկներին և նրանց ստիպել են տալ բժշկական կեղծ տեղեկանք, ըստ որի իբր նրանք հարձակման են ենթարկվել արաբների կողմից և սպանվել են: Ռազմական դատարանն ունեցել է լավագույն մտադրություն՝ ազատ արձակել բոլոր հայ երևելիներին: Բայց Խալիլ ու Ահմեդ բեյերը Դիարբեքիրից ձեռք են

բերել մի հեռագիր, ըստ որի՝ պետք է բոլոր ձերբակալված հայերին կապոտած ու ոտքով ուղարկեն Դիարբեքիր: Դրա համար էլ ես Ձեզ հեռագրեցի կիրակի օրը: «Դեղագործը դեռևս ձերբակալված է, նրան սպառնում է աքսոր», իսկ կիրակիից երկուշաբթի հետևեց 40 տղամարդկանց տեղափոխումը, նրանց մեջ էին նաև մեր դեղագործը և հայ եպիսկոպոսը, որին դեռևս երկու օր առաջ խցկել էին բանտ: Ընդհանուր առմամբ կարծիք կա, որ նրանք, ինչպես նաև երեքշաբթի օրը ճամփա ընկած 50 ձերբակալվածները երբեք չեն ժամանի Դիարբեքիր: Ես էլ նրանց համար քիչ հույս ունեմ, թեպետ գիտեմ **գաղտնի** համաձայնության մասին, ըստ որի՝ երկու բեյը հայերից պահանջում են 1300 թուրքական ֆունտ՝ խոստանալով այդ դեպքում չթողնել, որ քաղաքը դատարկվի, ինչպես նաև կհոգան արդեն տեղահանվածներին ապահով Դիարբեքիր հասցնելու համար: Բեյերն, անշուշտ, սպառնացել են, որ եթե այդ գաղտնիքը բացահայտվի, ապա իրենք Ուրֆայից կաքսորեն բոլոր հայերին:

Փաստ է, որ այդ երկու բեյն են **իշխում** Հայկական հարցում, այն էլ՝ **սարսափեցնող իշխանությամբ**, և ոչ թե կառավարությունը, կամ էլ ռազմական դատարանը, որին պետք է որ այստեղ ուղարկած լինի Ջեմալ փաշան:

Մեր հոսպիտալը որոշ ժամանակից ի վեր նույնպես դժվարություններ ունի: Շրջանային նոր բժիշկ Համդի բեյը հաճույքով կփակեր մեր հոսպիտալը: Նա մեզ սպառնում էր դրանով: Միայն թե դա նրան բացահայտորեն չի հաջողվի: Դրա համար էլ նա հիմա կիրառում է Համիդի օրոք հաճախ օգտագործված մի հնարք. նա մեր դ-ր Արմենակին արգելեց միանձնյա վիրահատումները, իբր դա անթույլատրելի է: Դա ընդամենը հնարք է, քանի որ ժամանակին Ձեր միջոցով իմացել ենք, որ յուրաքանչյուր դիպլոմավոր բժիշկ իրավունք ունի ամենուրեք և միայնակ նույնիսկ դժվարագույն վիրահատություններ անել: Միայն թե դ-ր Արմենակը՝ հայ, արիություն չունեցավ հիմա հակադրվելու, չնայած իմ քաջալերմանը, և այդպիսով այս օրերին բաց թողեց դժվար վիրահատությունները: Հաջորդ շաբաթ նա պետք է մեկնի Սուրուջ՝ նորակոչիկներին հետազոտելու համար, և հետո ուզում է մեկնել Հալեպ, որտեղ նրա կինն է, և թերևս թաքնվի այնտեղ, մինչև անցնեն այս սարսափելի ժամանակները: Ուստի, ես ստիպված կլինեմ հոսպիտալը փակել մինչև նրա վերադարձը: Ցավալի է, քանի որ այստեղ միայն երկու բժիշկ և այնքան շատ հիվանդներ կան: Եթե թույլատրեին գոնե երկու ներկալվածներին՝ դ-ր Յանգին ու դ-ր Լոզին (ֆրանսիացի) աշխատել մեր հոսպիտալում: Անհ-

ռաժեշտության դեպքում ինձ համար հեշտ կլիներ, եթե չի կարելի վստահել մեր թշնամիներին, ապա անցկացնել անհրաժեշտ ստուգում, քանի որ ես արդեն վաղուց մեր աշխատանքի ընթացքից լավ տեղյակ չեմ: Ես այս գործը մոտիկից ներկայացրի նահանգապետին, բայց նրան դուր չեկավ այդ առաջարկը:

Կանանց ու երեխաների տեղափոխման սարսափների մասին, որպես վկա, Ձեզ բանավոր կհայտնի պարոն...:

Ուստի ես կարող եմ այս զեկուցագիրն ավարտել:

[Յակոբ Քյունցլեր]

1915 – 08 – 11 – DE – 011

Սկզբնաղբյուրը՝ PA-AA / Կոստ.դեսպ./ 170
Հրատարակված՝ Գ և Հ փաստ. 133

Տրապիզոնի, Էրզրումի, Ադանայի, Հալեպի, Մոսուլի հյուպատոսություններին՝ Կոստանդնուպոլսի արտակարգ միսիայի դեսպան Հոհենլոհե-Լանգենբուրգից

Պերա, 11 օգոստոսի 1915

Չնայած մեր կրկնվող բողոքներին, հայերի կոտորածները վերջին շաբաթներին ընդունել են այնպիսի չափեր, որը մեզ պարտավորեցնում է, անհրաժեշտ տեղում արտահայտել մեր վճռական դժգոհությունը: Թուրք սպաները, հոգևորականները և այլ անձինք երկրի խորքում բազմիցս բացահայտորեն արտահայտել են այն միտքը, թե այս արհավիրքների իրական հեղինակները մենք ենք, տվյալ պարագայում անհրաժեշտ է եռանդագին հանդես գալ ընդդեմ մեզ վարկաբեկող այդպիսի տեսակետի:

[Հոհենլոհե-Լանգենբուրգ]

1915 – 08 – 12 – DE – 001

Սկզբնաղբյուրը՝ PA-AA /R14087
Հրապարակված՝ Գ և Հ փաստ. 136

Ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին՝ Կոստանդնուպոլսի արտակարգ

միսիայի դեսպան Հոհենլոհե-Լանգենբուրգից

№ 501

Պերա, 12 օգոստոսի 1915

1 հավելված

Իրենց բնակավայրերից տեղահանված հայ բնակչության համակարգված սպանդն այնպիսի չափեր է ընդունել, որ անհրաժեշտ դարձավ մեր կրկին համառորեն հանդես գալն ընդդեմ կատաղի հալածանքների, որոնք կառավարությունը ոչ միայն հանդուրժում էր, այլև ակնհայտորեն նպաստում էր դրանց, մանավանդ որ այնտեղ տարբեր վայրերում այլևս չէին խնայում նաև այլ ցեղերի և դավանանքի քրիստոնյաներին: Դրան գումարվեց այն, որ այս օրերին իշխանությունները սկսեցին տարբեր վայրերի հայ բնակիչներին վերաբնակեցնել Իզմիդի (Նիկոմեդիայի) շրջակայքում, այսինքն՝ մայրաքաղաքի անմիջական հարևանությամբ, իբր նրա համար, որ նրանք ուզում էին աջակցել Զաքարիայի գետաբերանի մոտ ռուսների ցամաք դուրս գալուն: Այդ միջոցառումը խիստ անհանգստություն առաջացրեց այստեղի հայ բնակչության մեջ և ցանկալի էր իմանալ, թե արդյո՞ք նաև այստեղի հայերին են արտաքսելու այսօր սկսված Բայրամի տոնի ավարտից հետո: Այստեղ մշտապես բնակվող հայերի մեծ մասի համար (ամենահամեստ հաշվարկներով 80.000 հոգի) այդպիսի ձեռնարկի իրականացումն իր հետ կբերեր ոչ միայն առևտրի խորքային խանգարումներ, այլև լրջորեն կվնասեր ոչ մահմեդական բնակչության կյանքին ու սեփականությանը՝ չբացառելով նաև օտարերկրացիներին:

Այդ իսկ պատճառով հուլիսի 4-ի մեր հուշագիրը այս ամսվա 11-ին պատճենով կցված փոխանցեցի Բարձր Դռանը: Թալեաթ բեյը, որը դա ընդունեց Մեծ վեզիրի բացակայությամբ, խոստացավ հնարավորին չափ օգնություն ցուցաբերել և հարցմանն ի պատասխան հավաստիացրեց, որ Կոստանդնուպոլսի հայերին չեն աքսորի:

Բարձր Դռանը ներկա պատգամավորների պալատի նախագահ Հալիլ բեյը, որն ըստ երևույթին հավանություն չի տալիս հայերի հանդեպ կառավարության գործելակերպին, հաստատում էր, որ ջարդերն ու այլ զարհուրանքները կառավարությունը չի հորդորում, բայց կառավարությունը միշտ չէ, որ ի վիճակի է ժողովրդական զանգվածների օրինազանցությունների առաջն առնել, կամ էլ իշխանության ստորին օղակնե-

ը տեղահանման միջոցառումների ժամանակ անում են սխալ քայլեր:

Վերը ասվածի կապակցությամբ պետք է նշվի, որ երկրի խորքում թուրքական բնակչության մեջ հաճախ իշխում է այն տեսակետը, ըստ որի՝ իբր գերմանական կառավարությունը համաձայն է հայերի բնաջնջմանը և նույնիսկ ինքն է դա ուղղակիորեն հրահանգել: Այդ իսկ պատճառով ես ցուցում եմ տվել Անատոլիայի կայզերական հյուպատոսություններին՝ վճռականորեն հանդես գալ ընդդեմ մեզ վարկաբեկող այդպիսի տեսակետների, որոնք բացահայտորեն ասում են նույնիսկ սպաները, հոգևորականները և Բարձր Դռան այլ ներկայացուցիչներ: Խնդրում եմ թույլատրել խոնարհաբար Ձերդ գերազանցության հայեցողությանը թողնել, թե արդյոք խորհուրդ չի՞ տրվում դա շեշտել նաև գերմանական մամուլում, որ մենք հեռու ենք հայերի հանդեպ կիրառվող թուրքական կառավարության պատժիչ միջոցառումներից, հետևաբար նաև պատասխանատու չենք եղած օրինազանցությունների համար, որոնք մենք կարող ենք միայն դատապարտել ու դրանց համար ցավել:

Եվ վերջապես, այստեղ ձեռնարկված քայլերին օգնելու համար ցանկալի է թվում օտոմանյան նոր դեսպանի ուշադրությունը հրավիրել իր կառավարության հայկական քաղաքականության հնարավոր հետևանքների և այդ հարցում մեր տեսակետի վրա:

Հոհենլոհե

Հավելված

Հուշագիր (սեփական թարգմանություն)[43]

Պերա, 9 օգոստոսի 1915

Հուլիսի 4-ի իր հուշագրում գերմանական դեսպանությունը պատիվ ուներ Բարձր Դռանը հայտնել, թե ինչ տեսակետ ունի գերմանական կայզերական դեսպանությունը Արևելյան Անատոլիայի գավառների հայ բնակիչների արտաքսման հարցի վերաբերյալ և ուշադրություն դարձնել այն փաստին, որ այդ միջոցառումները շատ վայրերում ուղեկցվել են բռնի գործողություններով, ինչպիսիք են ջարդերն ու թալանը, որոնք չեն կարող արդարացվել կայզերական-օսմանյան կառավարության նպատակով:

43. Ֆրանսերենից թարգմանել է Հոհենլոհե Լանգենբուրգը:

Գերմանիայի դեսպանությունն ստիպված է ցավով արձանագրել, որ այն ժամանակվանից ի վեր մուտք գործած հուսալի և որևէ կասկածից դուրս սկզբնաղբյուրների տեղեկությունների համաձայն, այդ միջադեպերը իշխանությունների կողմից կանխվելու փոխարեն, հայերի տեղահանումը կանոնավորապես ուղեկցվել է այնպես, որ նրանց մեծ մասը զոհվում էր մինչև նշանակված վայրը հասնելը: Դա հատկապես վերաբերում է Տրապիզոնի, Դիարբեքիրի և Էրզրումի գավառներին, որտեղ այդ փաստերը հաստատվել են, որոշակի վայրերում՝ ինչպես Մարդինը, առանց բացառության բոլոր քրիստոնյաները, անկախ նրանց ռասայից կամ դավանանքից, արժանացել են նույն ճակատագրին:

Միաժամանակ կայզերական-օսմանյան կառավարությունը տեղահանման միջոցառումները պետք է տարածեր Փոքր Ասիայի մյուս գավառների վրա, վերջին շրջանում Իզմիդի՝ մայրաքաղաքին մոտ հայկական շրջանների բնակիչները նույն հանգամանքներում հեռացվել են:

Նկատի ունենալով այդ իրադարձությունները՝ Գերմանիայի դեսպանությունն՝ իր կառավարության ցուցումով, ստիպված է կրկին զգուշացնել այդ բռնի գործողությունների կապակցությամբ և հրաժարվել հետևանքների ցանկացած պատասխանատվությունից, որոնք կարող են լինել դրանց հետևանքով: Առավել ևս՝ նա ստիպված է օսմանյան կառավարության ուշադրությունը հրավիրել այն կետին, որ հասարակական կարծիքը հակված է մտածելու, թե իբր Գերմանիան, որպես Թուրքիայի բարեկամ ու դաշնակից, հավանություն է տվել այդ բռնի գործողություններին կամ նույնիսկ ինքն է հրահրել դրանք:

1915 – 08 – 12 – DE – 002

Սկզբնաղբյուրը՝ PA-AA /Կոստ.դեսպ./ 170

Կոստանդնուպոլսի արտակարգ միսիայի դեսպան Հոհենլոհե-Լանգենբուրգին՝ Աղանայի հյուպատոս Բյուգեից

Մ № 699

Աղանա, 12 օգոստոսի 1915

Պատիվ ունեմ Ձերդ գերազանցությանն այս ամսվա 2-ի №11 իմ հաղորդագրության կապակցությամբ խոնարհաբար հայտնելու, որ Աղա-

նայի վալին, որին հանձնարարված էր Մարաշի տարածքում հայերի ապստամբության ճնշումը, իր առաքելությունը կատարելուց հետո վերադարձել է այստեղ: Նա բախման արդյունքների մասին զեկուցել է Ջեմալ փաշային, որ թուրքական կողմից 46 հոգու դիմաց (երկու գումարտակի հզորությամբ զորաջոկատներով) զոհվել է 464 հայ, իսկ 200-ին գերի են վերցրել:

Գերիների ճակատագիրն, իհարկե, ի սկզբանե որոշված է, վիրավորների մասին լուր չկա, այնպես որ շատ հավանական է, որ կհաջորդի ջարդը:

Անկասկած, պատժիչ էքսպեդիցիայի առիթը կառավարության համար շատ ցանկալի էր, այն հանգամանքը, որ վալին Հաքի բեյին է նշանակել նրա առաջնորդ, բացատրվում է, ինչպես իմացել եմ, այդպիսի գործերի համար այդ թուրք սպայի հատկապես «պիտանի» հատկանիշներով:

Հակառակ Հալեպի վիլայեթի և հատկապես Սվազի իրադարձությունների, որոնց մասին ես իրավասու չեմ զեկուցագիր ներկայացնելու, այս կողմում գտնվող շրջանի ներսում մինչև այժմ ոչինչ հայտնի չէ բռնարարքների, բռնաբարությունների և ազգային բորբոքման նմանօրինակ դրսևորումների մասին: Բայց խոսքը, ի դեպ, ոչ թե հատուկ մարդասիրության մասին է, այլ՝ միայն երկրի խորքում հարմար տեղում ամբողջ ուժով հարձակվելու համար ուժերի խնայման: Առանձին դեպքերում նաև այստեղ, օրինակ Օսմանիեում, վերացվեցին երեխաների վաճառքի դեպքերը:

Ստեղծվում է տպավորություն, որ իշխանություններին հատուկ հաճույք է պատճառում ամբողջովին գլխատել սկզբունքորեն մահվան դատապարտված հայ ազգին՝տեղափոխման վերաբերյալ գրեթե ամեն օր տրվող իրարամերժ կարգադրություններով: Ադանա են բերվել բազմաթիվ ընտանիքներ, և նրանք այստեղ մտահոգ սպասում են իրենց հետագա ճակատագրին: Հայերի ամբողջ թափորներ՝ առանց կիզիչ արևից ու փոշուց պաշտպանվելու, ճամբարում են Բաղդադի երկաթուղու կայարանների մերձակա դաշտերում, հատկապես՝ Օսմանիեում:

Մարդկանց տեղափոխման իշխանությունների կողմից ձեռնարկված միջոցառումներն ավելի շատ բարդացնում են նույն մարդկանց վիճակը, քան թեթևացնում ուղևորության տաժանելի գործը, մինչ վարձված կառապաններն ու ուղտապանները, իրոք, տեղափոխում են իրենց ասված մարդկանց, բայց կարճ ճանապարհ անցնելուց հետո բաց անապատում նրանց կրկին իջեցնում են այն պատրվակով, թե կառավարությունն իրենց չի վճարել:

Շատերը նաև դրանով են գլխի ընկնում հայ ժողովրդին ոչնչացնելու կառավարության մտադրությունը: Հայկական ամեն բան ոչնչացնելու ցանկությունը, համենայնդեպս, սպասելի է մի կառավարությունից, որը 6 տարի առաջ այդպիսի մտածելակերպի առկայության վերաբերյալ ներկայացրել է այնքան արյունոտ ապացույց:

Բյուգե

1915 – 08 – 13 – DE – 001

Սկզբնաղբյուրը՝ PA-AA /R14087
Հրապարակված՝ Գ և Հ Փաստ. 137

Ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին՝ Հալեպի հյուպատոս Ռյոսլերից

K № 86/Հ № 1772

Հալեպ, 13 օգոստոսի 1915

Սարկավագ Քյունցլերը Ուրֆայից այս ամսվա 11-ին հասած № 85 զեկուցագրի հետ ուղարկած նամակն ավարտել է հետևյալ բառերով. «Կանանց ու երեխաների տեղափոխման սարսափելիության մասին Ձեզ որպես ականատես բանավոր կհայտնի պարոն ...ը»: Այդ վկան՝ մի ավստրիացի, որն ինձ քաջ ծանոթ է երկու տարուց ի վեր և որի ներկայացրածի ճշմարտացիությունը ես անձամբ երաշխավորում եմ, մի քանի շաբաթ իր կնոջ հետ հանգստացել է Ուրֆայի մերձակայքի խաղողի այգիներում, բայց ժամանակից շուտ վերադարձել է, որովհետև ալևս չի կարողացել տանել ջարդերը: Իմ ցանկությամբ նա գրավոր շարադրեց իր դիտարկումներից մի քանիսը՝ խոնարհաբար ներկայացվող գրառումներին կից պատճենով: Իմիջիայլոց, Ուրֆայից Արաբ-Փունար ճանապարհին նա ենթարկվել է շատ լուրջ ավազակային հարձակման և կարողացել է դիմագրավել, որովհետև ավազակները դրան պատրաստ չեն եղել, որ նա մոտը հրազեն կունենա, և հարձակվողների կողմից աննկատ մնացած մի քանի կառապան շտապել են նրան օգնելու: Ակնհայտ է, որ ավազակները դարանակալել էին հայերի քարավանը: Ավստրիացու կինը վախի հետևանքներից մինչև հիմա հիվանդ պառկած է:

Արևելքում առևտրի ու արդյունաբերության գերմանական միության՝ Ուրֆայի գործագործական մանուֆակտուրայի ներկայացուցիչ պարոն Ֆրանց Էքարտը օգոստոսի 5-ին ինձ նամակ է ուղարկել, որը խոնարհա-

բար կցում եմ պատճենով: Այդ նամակը, ինչպես նաև Ուրֆայի ընդհանուր վիճակը, ինձ դրդեցին մի նամակ ուղարկել Ուրֆայի մութասարիֆին, որում ես նրան երաշխավորեցի գերմանացիների պաշտպանությունը՝ ինչպես իրենց անձի ու անձնակազմի, այնպես էլ իրենց գործունեության ծավալման համար:

Մյուս՝ Ադիամանից ուղարկված խմբի մասին, ինչպես նախկին այդպիսի դեպքերում, ինձ ճշգրիտ տեղեկություններ են հաղորդել: Ադիամանից դուրս եկած 696 հոգուց 321-ը ժամանել են Հալեպ: 206 տղամարդ և 57 կին սպանվել են, 70 կնոջ ու աղջկա, 19 տղայի առևանգել են: Մնացյալի մասին տվյալներ չկան:

Այս ամսվա 12-ին Սվազից այստեղ ժամանած ջոկատը 3 ամիս եղել է ճանապարհին և խպառ հյուծվել է: Ժամանումից անմիջապես հետո մի քանիսը մահացան: Ճանապարհին նրանց բազմիցս արգելել են ջուր խմել: Մուրադսուի մոտ 14 օր շարունակ մի վայրում նրանց շրջանաձև քշել են այնպես, որ նրանք ամբողջ օրերով ջուր չունենան: Այդ խմբի կորուստների թիվն ինձ հայտնի չէ:

Ինչպես ինձ այսօր հայտնեց այստեղի վալի Բեշիր Սամի բեյը, կաթոլիկ հայերին երաշխավորված արտոնությունները կրկին վերացվել են: Աքսորում են բոլորին՝ առանց բացառության: Մյուս կողմից նա հայտարարեց, որ վիլայեթում չի հանդուրժի ապօրինություններ կամ անպատասխանատու ծառայողների ազդեցություններ և հնարավոր հանցագործների դեմ կձեռնարկի ամենախիստ միջոցներ: Ցավոք այդ բարի կամքը չի կանխում այդպիսի դժբախտությունը, որը ծագում է կազմակերպվածության ու նախապատրաստվածության պակասից: Անկասկած Հալեպի վիլայեթում էլ, օրինակ Բաբից դեպի Մեմբիջ տանող ճանապարհին, բազմաթիվ կանայք ու երեխաներ հյուծվածությունից կործանվել են:

Նույն զեկուցագիրը կուղարկվի նաև կայզերական դեսպանություն:

Ռյոսլեր

Հավելված 1

Պատճեն

Արևելքում առևտրի և արդյունաբերության գերմանական միություն, ՍՊԸ, Պոտսդամ

Ուրֆա, 5 օգոստոսի 1915

Մի քանի օր առաջ երկու երիտասարդ թուրք Դիարբեքիրին հարող ճանապարհով անցնող տարագիրներից մի երիտասարդ կնոջ քարշ էին տվել իմ հողակտորի ներքևի մասը՝ մի փոսի մեջ ու բռնաբարելու նպատակով նրան հանվեցրել էին: Այդ կնոջ աղաղակների վրա իմ երեխաները վազել էին այնտեղ և օգնության էին կանչել մոտերքում եղած իմ երեք բանվորին: Վերջինները ազատել էին կնոջը, որը թաքնվեց իմ տանը: Որոշ ժամանակ անց այդ երկու թուրքը չորս ուրիշ ուղեկցողների հետ եկան իմ տան մոտ և իմ ներկայությամբ պահանջում էին հանձնել այդ կնոջը: Իմ կնոջ կրկնակի պատասխանից հետո, որ «այստեղ գերմանացիներ են ապրում», նրանք հեռացան:

Չնայած նահանգապետի մոտ արած իմ հայտարարություններին, ո՛չ ես, ո՛չ իմ ընտանիքը, ո՛չ էլ իմ բանվորները վստահ չեն, թե այդ թուրքերը չեն շարունակի իրենց հետապնդումները: Արդեն այսօր առավոտյան նրանք այն նույն երեք բանվորին քշել են իմ այգում կատարվող աշխատանքից: Ուստի, ես ստիպված եմ խնդրել իմ սեփական կառավարության պաշտպանությունը:

Խոնարհաբար՝ [Ֆր. Էքարտ]

Հալեպի կայզերական գերմանական հյուպատոսություն

Հավելված 2

Ավստրիացու գրառումները

Հալեպի գերմանական հյուպատոսություն է փոխանցված 1915թ. օգոստոսի 11-ին:

Դիտարկումներ՝ Ուրֆայի տարածքում հայերի տեղաշարժի ընթացքում:

1. Այդ թափորները բաղկացած էին միայն կանանցից, ծերունիներից ու երեխաներից: Ուժեղ ու պնդակազմ տղամարդիկ չկային: Այն ջոկատները, որոնք մեկ շաբաթ կամ ավելի ճանապարհին էին, ողորմելի տպավորություն էին թողնում: Շատերը՝ զրկանքներից հյուծված ու հիվանդ, կաղում էին ու իրենց հետ քարշ էին տալիս երեխաներին (շատ էին ծծկեր երեխաներն ու հղի կանայք): Կարելի էր տեսնել երեխաների, ծերերի կամ պարզապես թույլ անձանց հիմնականում վիրավոր, շատ ուռած

ու լաթերով փաթաթված ոտքեր: Տարագիրների մեծ մասն իրենց ունեցածը վաճառել էին Ուրֆայի մոտ, որպեսզի գյուղերում գրաստներ վարձեն (օրը 3 մեջիդիե, այսինքն՝ սովորական գնից երեք անգամ ավելի): Մյուս խմբերն իրենց հետ դեռևս Ուրֆա էին բերում ճանապարհորդական որոշ իրեր ու տան կահ-կարասի, իսկ հետո այստեղ սկսվեց այդ իրերի ալան-թալանը... գրեթե ձրի:

Չարշիում նույնիսկ զինվորներն էին վաճառում այդ տարագիրների իրերը: Ժամանածներից շատերին տեղավորեցին որբանոցում, որտեղ սննդի համար պետք է իրենք հոգային: Շուրջն ամենուրեք զինվորական հսկիչներ էին: Ես նկատեցի, որ մի ագահ վաճառական՝ իր գնած հագուստը հետը, թռավ այգու ցանկապատի վրայով և կաշառքի փողը բացահայտորեն խցկեց պահակի ձեռքը:

Թեյափողով գնելով կամ բարեկամաբար կարելի էր տեղահանվածների զանգվածից յուրացնել կանանց, աղջիկների ու երեխաների: Ավելի ուշ իշխանություններն արգելեցին այդ առևտուրը, այնուամենայնիվ, երբեմն էլի լինում էին սեփականացումներ: Ես անձամբ եմ տեսել երկու կանանց՝ 16 ու 30 տարեկան, որոնց ճանապարհին իրենց էին վերցնում թուրքերը և որոնք (երբ ես նույն օրը թուրքերին հյուր եկա) ինձ պատմեցին, որ Արդահանից են և արդեն 10 օր ճանապարհին են եղել: Ժանդարմները լավ էին վերաբերվում նրանց, ջարդել են քրդերի մի հրոսակախմբի, որը դարանակալել էր կանանց առևանգելու համար, հետո գյուղերում նրանք միշտ էլ հաց են ստացել, նաև պանիր: Ցերեկային տեղաշարժը տևել է 6-7 ժամ, հաճախ հանգստացել են: Աղիամանից դուրս եկող ճանապարհին նրանք տեսել են սպանված մերկ կանանց, նաև այլանդակված, կտրված կրծքերով, երկու դեռևս կենդանի կանայք պատմել են, որ հետ են մնացել թափորից՝ մասամբ հիվանդության պատճառով, մասամբ էլ փախչելու մտադրությամբ, ի դեպ նրանց հետո քրդերն են բռնաբարել ու թալանել:

Տեղափոխման ընթացքում շատ մարդիկ են կործանվում: Ուրֆայում իմ առջև մի կին տապալվեց: Քանի որ ոստիկանը հետ մնալու իրավունք չուներ, շուրջը կանգնած մի քանիսից պահանջեց գնալ ոստիկանություն և հայտնել այդ մասին, որպեսզի հիվանդ կնոջը տանեն: Հաջորդ օրը ես նույն կնոջը (30 տարեկան) գտա մեկ այլ փողոցում, որբանոցի առջև՝ մեռած, ընկած ճանապարհին, կիզիչ արևի տակ: Ես մոտեցա, դեմքն արդեն կապտած էր: Մոտակայքում պահակություն էին անում զինվորներ, ոստիկաններ, իսկ քաղաքացիական անձինք աշխուժացնում էին հրապարակը: Իմ գնահատմամբ՝ մեռած կինն արդեն մի քանի ժամ ընկած էր այդտեղ: Միայն իմ միջամտությունը դրդեց մութասարիֆին կես ժամվա ընթացքում դիակը տեղափոխել, այն էլ՝ գոմաղբի սայլով:

Ուրֆայից դուրս (Թել Աբիադի ուղղությամբ), հենց Ուրֆայի այգիների մոտ, ճանապարհի եզրին ընկած էր 20-24 տարեկան տղամարդու դիակ: Ոչ ոք նրան չէր թաղել, գիշանգղերն էին խժռում նրա մարմինը:

Ուրֆա-Արաբ Փունար ճանապարհին մթության մեջ ես դիակներ չտեսա, բայց կառապանս, որը միշտ երթևեկում է այդտեղով, ճանապարհի երկայնքով մի քանի խարույկի տեղ ցույց տվեց՝ մարդկային դիակներն այրել են հենց տեղում:

Որոշ թափորներ կաղում էին՝ ցավից ճչալով, հենց որևէ մարդ էին նկատում, այդ թշվառներից շատերը ծնկի էին գալիս և օգնություն ու փրկություն հայցում կամ էլ իրենց երեխաներին էին մեկնում՝ վերցնելու: Այդ քայլերթերի ժամանակ՝ 56 աստիճան ջերմության ու ջրի բացակայության պայմաններում, շատերը մեռնում են հյուծախտից, ով հետ է մնում, մահն ապահովված է:

1915 – 08 – 14 – DE – 012

Սկզբնաղբյուրը՝ PA-AA / Կոստ. դեսպ./ 170
Հրապարակված՝ Գ և Հ 139 / խմբ. կրճ./

Կոստանդնուպոլսի դեսպանությանը՝ Մոսուլի փոխհյուպատոս Հոլշտայնից

№ 24

Մոսուլ, 14 օգոստոսի 1915

№ 22 հեռագրի պատասխանը

Այստեղ իմ ականջին դեռևս չեն հասել այդպիսի ձևակերպումներ, թե իբր մենք ենք քրիստոնյաների ջարդի **հեղինակները**, դրան հակառակ՝ այստեղի բնակչության հարգի տարբեր տարրերի մեջ անկասկած իշխում է այն տեսակետը, որ մենք ոչինչ չարեցինք, որպեսզի մեղավորները պատժվեն, ու վերջ տրվեն ոճրագործություններին:

Յուրաքանչյուր ոք գիտե, որ Դիարբեքիրի վալին, օրինակ, իր վիլայեթում քրիստոնյաների հանդեպ կատարված սարսափելի ոճրագործությունների ոգին է, յուրաքանչյուր ոք իրավացիորեն համարում է, որ մենք գիտենք ոճրագործությունների մասին և հարց է ծագում, թե ինչո՞ւ

ենք թողնում, որ զանգվածային սպանությունների մոլի կազմակերպիչն անպատիժ մնա և շարունակի մնալ վալի: Այդպիսի ոճրագործությունների դատապարտման արտահայտությունը հազիվ թե բավարար լինի մեզ վարկաբեկող տարբեր ելույթներին արդյունավետ դիմակայելու համար:

Միայն այն դեպքում, եթե մենք Բարձր Դռանն ստիպենք պատասխանատվության ենթարկել հանցագործներին, ովքեր պաշտոններ են զբաղեցնում Դիարբեքիրում, Մարդինում, Սեերտում և այլն, ընդ որում՝ հնարավորին չափ արագ, միայն այդ ժամանակ կվերականգնեն մեր հանդեպ կասկածները:

Գերմանական տարբեր թերթերում ես կարդացել եմ քրիստոնյաների հանդեպ ոճիրների թուրքական պաշտոնական հերքումներ և զարմանում եմ Բարձր Դռան միամտության վրա, որ կարծում է, թե ի զորու կլինի ակնհայտ ստով երկրի երեսից ջնջել թուրք պաշտոնյաների ոճրագործությունների փաստերը:

Աշխարհը դեռ չի տեսել և չի տեսնի այնպիսի ահավոր ոճիրներ, ինչպիսիք՝ պաշտոնապես ապացուցելի, իրագործվել են Դիարբեքիրի վիլայեթում:

[Հոլշտայն]

1915 – 08 – 20 – DE – 001

Սկզբնաղբյուրը՝ PA-AA/ R14087 / Կոստ. դեսպ./ 170

Արտգործնախարարությանը՝ «Արևելքում հանուն քրիստոնեական բարեսիրության» գերմանական օգնության միության տնօրեն Ֆրիդրիխ Շուխարդից

Մայնի Ֆրանկֆուրտ, 20 օգոստոսի 1915

Ներքոստորագրյալն իրեն իրավունք է վերապահում Ձեզ փոխանցել հաղորդագրությունների մի շարք, որոնք իրեն են հասել **լրիվ վստահելի** անձանցից և հստակ պատկերացում են տալիս այն ձևի ու կերպի մասին, թե ինչպես են թուրքական իշխանությունները վարվում հայ ժողովրդի հետ: Կցված զեկուցագրերը պատկանում են գերմանացու գրչին: Ես դրանք ձեզ եմ փոխանցում երկու օրինակով և խնդրում եմ Ձեզ՝ **դրանց մեկական օրինակն ուղարկել Կոստանդնուպոլսի դեսպանություն**:

Ես կուզենայի նաև խնդրել, որ կառավարությունը գերմանական

դեսպանության միջոցով կարգադրի պահպանել մեր դպրոցների հետագա գործունեության համար անհրաժեշտ ուսուցչական կազմը:

Ինձ թվում է, որ մեր աշխատանքի ապագայի շահերի նկատառմամբ, անպայման անհրաժեշտ կլինի անձամբ բանակցել Կոստանդնուպոլսի դեսպանության հետ և դրա համար ես մտադիր եմ սեպտեմբերին ուղևորվել Կոստանդնուպոլիս:

Այդ իսկ պատճառով կուզենայի խնդրել, ինչպես Դուք դա արեցիք հանուն քույրերի, այդ ուղևորության համար հնարավորին չափ արագ մի անցաթուղթ և երաշխավորագիր ուղարկել՝ նկատի ունենալով տարբեր միսիաների (ավստրո-հունգարական, ռումինական, բուլղարական և թուրքական) գոյությունը:

Ինձ իրավունք եմ վերապահում Ձեզ ուղարկել հետագա մանրամասն զեկուցագրերը:

Նախապես շնորհակալություն հայտնելով բոլոր ջանքերի համար՝ խորին հարգանքով ստորագրում եմ՝

Ֆ. Շուխարդ

[Մորդմանի նշումը 3.9. Բեռլինից եկած ուղեկցող նամակի վերաբերյալ]

Շատ զեկուցագրերի բովանդակությունն այստեղ հայտնի է դարձել այլ առիթով, ի դեպ նոր է Դիարբեքիրից եկած զեկուցագիրը, որտեղից մինչև հիմա ոչ մի լուր չկար:

Հավելված 1

Պատճեն

Մարաշ, 6. 4. 1915

Մեծարգո պարոն Շուխարդ,

Անշուշտ, մինչև այժմ Ձեզ հասած լուրերից նկատած կլինեք, որ մենք այստեղ շատ լուրջ կացության մեջ ենք: Այսօր ահա առիթ է ներկայացել Ձեզ համար ավելի մանրամասն նկարագրել իրավիճակը:

Մարտի սկզբից քրիստոնյաների համար այստեղ դժվարին ժամանակներ են, քանի որ ավազակների (էշքյարների) հետ, որոնք դեռևս Զեյթունի լեռներում են, կառավարության բախման արդյունքում, բավականին շատ ժանդարմներ են սպանվել:

Դա իսլամական բնակչության մեջ այնպիսի հուզումներ առաջաց-

րեց, որ եթե Տերը հրաշք չգործեր, ապա անկասկած մեծ ջարդ կլիներ: Ընդհանրապես զորակոչից ի վեր շատ բուռն շաբաթներ էին, քանի որ կառավարությունը զինվորների զորակոչով ու կենդանիների առգրավմամբ ճնշել է հատկապես քրիստոնյաներին, վերջիններս միշտ լռում էին, թեկուզ և տնքալով: Բայց ի վերջո եկավ ժամանակը, երբ այդ ճնշումն այնքան ծանրացավ, որ նրանք զենք վերցրին՝ դիմադրելու: Անպատշաճ վերաբերմունքի հետևանքով զորակոչված քրիստոնյաներից շատերը դասալիք դարձան: Պետական պաշտոնյաների խոստումները չկատարվեցին, դեռ ավելին, հաճախ կատարվում էր ճիշտ հակառակը: Զինակոչիկներն ստիպված էին տառապել սովից, տարածված էր նաև ծեծը: Ի վերջո նրանցից վերցրին նաև զենքը, նրանք պետք է հանձնեին նաև համազգեստը: Դրա հետևանքով մահմեդականների մեջ տարածվեց այն տեսակետը, թե ժամանակն է թրերը կրկին սրել քրիստոնյաների դեմ պայքարելու համար, և այդ կարծիքը նրանք արտահայտում էին բացահայտ: Կառավարությունից դրա դեմ աշխատում էին, բայց ասեկոսեներին վերջ չկար: Զարդի մտավախությունն, իհարկե, ծանրացել էր հոգիներին: Զեյթունում գնալով ավելի շատ դասալիքներ վերադառնում էին լեռները: Թուրք պաշտոնյաներն արդեն վաղուց դաժանորեն ճնշում էին բնակչությանը, այնպես որ տարիներ ի վեր սարերում ապրում են շատ երիտասարդ մարդիկ, ովքեր խուսափում են ժանդարմների հետ հանդիպելուց: Հիմա իրավիճակն անտանելի է դարձել, կառավարությունն ի վերջո Զեյթունի դեմ ուղարկեց զինվորականներին, որպեսզի բռնեն ավազակներին: Այդ իսկ պատճառով անմիջապես Մարաշ ժամանեց ռազմական դատարանը: Առաջին հերթին նա պահանջեց՝ բոլոր դասալիքներին ներկայանալ ըստ կանչի: Բոլորին բաշխեցին տուգանային ջոկատների վրա և հիմա նրանք պետք է աշխատեին բահով ու քլունգով, ճանապարհներ սարքեին և այդպիսի բաներ: Առաջացավ Զեյթունի ավերման վտանգ, բայց մեր մութասարիֆը, որն արդարամիտ մարդ է, դա խափանեց: Զեյթունի մարդիկ պետք է հանձնեին ավազակներին կամ հայտնեին տեղը, նրանք չէին կարող դա անել:

Մարաշի տարբեր մարդկանց հորդորով ես պատրաստակամություն հայտնեցի ուղևորվել Զեյթուն՝ մարդկանց վրա ազդելու նպատակով, որպեսզի նրանք ենթարկվեն: Քանի որ մեզ մոտ պատերազմական իրավիճակ էր, այդ ուղևորության համար ինձ պետք էր պարետի թույլտվությունը: Վերջինս սկզբում տեղեկացավ մութասարիֆից, ապա թույլատրեց: Եվս չորս մարդու հետ Մարաշից գնացի Զեյթուն, մենք 12 ժամ այնտեղ մնալու թույլտվություն ունեինք: Ես փորձում էի մարդկանց պարզաբանել, թե ինչ վտանգի են ենթարկվում, եթե չեն հնազանդվում կառավարությանը: Իմ մտադրությունն էր՝ ըստ հնարավորին համոզել ավազակներին հանձնվել, բայց վերջինները չթողեցին իրենց հետ խոսել, և ես ստիպված էի ապարդյուն թողնել Զեյթունը: Ես զեկուցեցի մութասարիֆին, թե ինչպես եմ լքել Զեյթունը: Կարողացա մի որոշակի տվյալ տալ, թե որտեղ էին ավազակները: Նրա հետ ուրիշ անգամ էլի խոսեցի և խնդրեցի, այնուամենայնիվ, խնայել Զեյթունի անմեղ բնակիչներին: Նա խոստացավ դա և մինչև հիմա իր խոսքի տերն էր: Այնուհետև շրջափակել են ավազակներին և կրակ են բացել, նրանցից 36-ին գնդակահարել են, մնացածը փախել են, և մինչև հիմա նրանց հետապնդում են: Թե ինչով կվերջանա այս ամենը, ոչ ոք չի կարող կանխատեսել, մինչև հիմա Զեյթունը զերծ է մնացել կրակահերթերից, և ես հուսով եմ, որ գործը դրան այլևս չի հասնի:

Քրիստոնյաների ընդհանուր վիճակը մեզ դրդեց քայլեր ձեռնարկել կոտորածը կանխելու համար, դրա համար, քանի որ ես չէի կարող Մարաշը լքել, մենք որոշեցինք քույր Բեատրիս Ռոհներին ուղարկել Հալեպ, որպեսզի հյուպատոս Ռյոսլերին հայտնի, թե ինչ վտանգի մեջ են այստեղի քրիստոնյաները և նրան նույնպես համոզի գալ այստեղ: Պարոն հյուպատոսը եկավ և այստեղ մնաց 9 օր: Արդեն կարելի էր նկատել նրա ազդեցությունը, նույնիսկ մինչև իր գալը, քանի որ հեռագրով հայտնել էր այդ մասին:

Այն կողմը, որը հաճույքով ջարդ կկազմակերպեր, իհարկե, շատ էր զայրացել, որ հիմա դա չեղավ:

[Կառլ Բլանկ]

Հավելված 2[44]

Պատճեն

Դեր էլ Զորում՝ անապատի մի մեծ քաղաքում, Հալեպից 6 օրվա ճանապարհի հեռավորությամբ, մենք գտանք լեփ-լեցուն մի մեծ իջևանատուն: Տրամադրության տակ եղած բոլոր սրահները, տանիքներն ու պատշգամբները լցված էին հայերով: Հիմնականում կանայք ու երեխաներ, բայց նաև մի քանի տղամարդ, նստած էին իրենց ծածկոցների վրա, որտեղ կարողացել էին գոնե մի քիչ ստվեր գտնել:

44. Հեղինակը քույր Լաուրա Մյոհրինգն է, գրառման ամսաթիվը ենթադրվում է 1915թ, հուլիսի 12-ը:

Հենց լսեցի, որ նրանք հայեր են, գնացի այնտեղ՝ նրանց հետ խոսելու: Նրանք Ֆուոնուսից, Զեյթունի ու Մարաշի տարածքից եկած մարդիկ էին, որոնք մի նեղլիկ սրահում՝ իրար սեղմված, շատ ողորմելի պատկեր էին ներկայացնում: Մարաշի մեր որբանոցների երեխաների մասին հարցի առիթով բերեցին մեր նախկին սանուհի Մարթա Կարաբաշյանին: Նա ինձ պատմեց հետևյալը. «Թուրք ոստիկանները մի օր եկան Ֆուոնուս և ձերբակալեցին մեծ քանակությամբ տղամարդկանց ու տարան՝ իբր որպես զինվորների: Թե ուր տարան, ոչ իրենց էր հայտնի, ոչ էլ իրենց ընտանիքներին»: Մնացածներին ասել են, որ նրանք 4 ժամվա ընթացքում պետք է լքեն իրենց տները: Ինչ կարող էին տանել, նրանց թույլատրվել էր վերցնել հետները նաև բեռնակիր կենդանիներին, ինչքան որ ունեին: Նշանակված ժամկետից հետո խեղճ մարդկանց զինվորների (զափթիեների) հսկողությամբ տարել են իրենց գյուղերից, գնացել են՝ չիմանալով դեպի ուր կամ թե արդյոք երբևէ կտեսնե՞ն իրենց տունը: Սկզբում, քանի դեռ նրանք լեռներում էին ու սնունդ ունեին, բավականին լավ էր: Նրանց խոստացել են փող ու հաց, և սկզբում նաև տվել են, ամեն շնչի համար, որքան հիշում եմ, 30 փարա (12 պֆենիգ): Շատ շուտով սակայն կերաբաժինները դադարեցրել են և միայն ձավար (բլղուր) են տվել 50 դրամ (3,12 գր), օրվա ընթացքում՝ 150 գրամ ամեն մի շնչին: Այդ կերպ Ֆուոնուսի բնակիչները չորսշաբաթյա հոգնեցուցիչ ուղևորությունից հետո Մարաշով ու Հալեպով հասել են Դեր էլ Զոր: Արդեն 3 շաբաթ իջևանատանն էին և չգիտեին, թե ինչ է լինելու իրենց: Նրանք այլևս փող չունեին, թուրքերի տված մթերքն էլ շատ էր քչացել: Արդեն օրեր շարունակ նրանք հաց չեն ունեցել:

Քաղաքներում գիշերները նրանց փակում էին և չէին թողնում խոսել բնակիչների հետ: Այդպես նաև Մարթային չի թույլատրվել գնալ որբանոց: Նա ինձ տխրությամբ պատմեց. «Մենք երկու տուն ունեինք և հարկադրված էինք թողնել, հիմա այնտեղ ապրում են մուհաջիրները՝ մահմեդական վտարանդիներ Եվրոպայից: Ֆուոնուսում ջարդ չի եղել, զինվորներն էլ (զափթիեները) լավ էին վերաբերվում մարդկանց»: Անապատի կիզիչ արևին ու տապին քայլերթի ժամանակ նրանք հիմնականում տառապում էին սննդի ու ջրի պակասից: Որպես յայլաչիներ (լեռնաբնակներ), ինչպես իրենք էին իրենց անվանում, նրանք կրկնակի ծանր էին տանում:

Ուղեկցող զափթիեները մեզ հետո ասացին, որ տարած տղամարդկանց մեծ մասին սպանել են, իսկ դա լավագույն տարբերակն էր թուրքերի համար: Ջարդերն սկսվելուց ի վեր, ըստ նրանց, հայերն այնպիսի ատելություն ունեին թուրքերի հանդեպ, որ վերջինները պետք է որ մշտական վախի մեջ լինեին: Հիմա մտածում են այն մասին, որ հայերին կարելի օգտագործել ճանապարհաշինության համար և այդ կերպ նրանց տանել-հասցնել Բաղդադ: «Ինչո՞ւ» հարցին զափթիեները բացատրեցին, որ այս մարդիկ Ռուսաստանի հետ կապ են ունեցել: Մինչդեռ հայերը պնդում էին, որ տեղյակ չեն իրենց տարագրման պատճառներին:

Հաջորդ օրը՝ կեսօրյա հանգստի ժամանակ, մենք հանդիպեցինք հայերի մի ամբողջ ճամբարի: Խեղճ մարդիկ, քրդերի պես այծի մազից պարզունակ վրաններ էին պատրաստել, որոնց տակ հանգստանում էին: Մեծամասամբ, սակայն, նրանք անպաշտպան պառկած էին կիզիչ արևի տակ՝ շիկացած ավազի վրա: Շատ հիվանդների պատճառով թուրքերը թույլատրեցին մի օր հանգստանալ: Ավելի անսփոփ պատկեր, քան այդ մարդկային թափորն անապատի պայմաններում, դժվար է պատկերացնել: Հագուստից կարելի էր կռահել, որ նրանք ապրել են որոշակի բարեկեցությամբ, իսկ հիմա նրանց դեմքին դրոշմված էր թշվառությունը: «Հա՛ց, հա՛ց»,- համընդհանուր խնդրանք էր դա: Ով անձամբ չգիտի անապատը, չի կարող նույնիսկ մոտավոր պատկերացում կազմել կարիքի ու թշվառության մասին: Այն լեռնոտ է, բայց հիմնականում առանց ստվերի: Օրեր շարունակ ճանապարհն անցնում է ժայռերով և շատ հոգնեցուցիչ է: Եթե գալիս են Հալեպից, ապա ձախ կողմում անընդհատ տեսանելի է Եփրատը, որը հոսում է ինչպես կավե երիզ, բայց ոչ բավականաչափ մոտիկ, որպեսզի հնարավոր լինի այնտեղից ջուր վերցնել: Պետք է որ անտանելի լինեին խեղճ մարդկանց տառապանքները և զարմանալի չէ, որ այդքան շատ հիվանդանում ու մեռնում էին: Դրանք Գերեզնից եկած մարդիկ էին, որոնց աքսորել էին իրենց քարոզչի հետ: Վերջինս ինձ պատմեց, որ օրական մեռնում են 5-6 երեխա ու հիվանդ: Այդ օրը, մի քանի ժամ առաջ թաղել էին մոտ 9 տարեկան մի աղջկա մորը, իսկ ինքը հիմա մնացել էր լրիվ մենակ: Ինձ աղաչում էին այդ երեխային հետս որբանոց տանել: Քարոզիչը պատմեց ճիշտ նույնպիսի պատմություն, ինչպես այն աղջիկը Դեր էլ Զորում: Նա էլ 4 ժամվա ընթացքում պետք է համայնքի հետ միասին լքեր իր տուն ու տեղը: Նաև նրանց բնակավայրում են հավաքագրել զինվորների և դեռ շնորհակալություն են

հայտնել լավ ընդունելության համար: Թե ուր են նրանց տարել, չգիտեին և շատ կուզենային ինձնից իմանալ: Նրանց համար ուրախություն էր ինձ հետ խոսելու հնարավորությունը: Նրանց ուղեկցող թուրքերը խոսում էին միայն թուրքերեն, անապատի արաբները՝ միայն արաբերեն, որը հայերի համար օտար է: Ես այնտեղ տեսա 5 շնչից բաղկացած մի ընտանիքի՝ փոքրիկ իշուկով, մայրը և կրտսեր երեխան նստած էին իշուկին, իսկ հայրը մյուս երկու՝ մոտ 5-6 տարեկան, երեխաների հետ գնում էր հետևից: Երեխաները գլուխները ծածկելու ոչինչ չունեին: Գեբենից եկածներն ինձ պատմեցին, որ արաբները իրենցից խլել են աղջիկներին և բացի այդ տանջել են կանանց:

Քանի որ ճաշի ժամ էր, մենք ուտելու համար հանեցինք մեր պաշարները, բայց դա՝ տառապյալ մարդանց թափորի դիմաց անձամբ ինչ-որ բան ուտելը, հեշտ խնդիր չէր: Մենք տվեցինք, ինչ կարողացանք, իսկ 3 ուղեկիցներիցս յուրաքանչյուրը լուռ իմ ձեռքը խցկեց մի մեջիդիե (3,50 մարկ) «այդ խեղճ մարդկանց համար»: Քարի պես պինդ հացով լիքը մի կապոց Բաղդադից ընդունեցին մեծ երախտագիտությամբ: «Մենք սա թաքախում ենք ջրի մեջ և հետո երեխաներն ուտում են», ասում էին ուրախացած մայրերը: Բոլորն այն կարծիքին էին, որ իրենցից ոչ մեկը չի հասնի Բաղդադ, անապատը համարում էին իրենց բոլորի գերեզմանը:

Ես հիշում եմ ևս մի դրվագ, որը կարող է պատկերացում տալ թշվառության մասին: Իմ ուղեկիցներից մեկն ապակե դատարկ մի աման շպրտեց: Մի ծեր մարդ հարձակվեց դրա վրա, խնդրում էր իրեն տալ և դեռ շնորհակալություն էր հայտնում դրա համար: Ապա նա գնաց գետի մոտ, լվաց այն և բերեց թանձր կավաջրով լցված՝ խնամքով պահած ձեռքում՝ ինչպես գանձ, որպեսզի ևս մեկ անգամ շնորհակալություն հայտնի: Չէ՞ որ հիմա ճանապարհի համար ջուր ուներ:

Օրհնանքի բազում խոսքերի ուղեկցությամբ մենք ի վերջո շարժվեցինք առաջ՝ բոլորս դեռևս մնալով այդ թշվառության տպավորության ներքո: Երեկոյան հասնելով գյուղ՝ մենք կրկին հանդիպեցինք հայերի նմանօրինակ ճամբարի: Այս անգամ Զեյթունից եկած մարդիկ էին: Նույն թշվառությունն էր, նույն բողոքը տապից, հացի պակասից ու արաբների ոտնձգություններից: Բեյրութի կայզերական որբանոցում գթության քույրերի դաստիարակած մի աղջիկ լավ գերմաներենով մեզ պատմեց իր տեսածի մասին: Նրանց էլ են հավաքվելու համար 4 ժամ ժամանակ տվել, որից հետո նրանք ճամփա են ընկել՝ իրենց հետ տանելով տեղաշոր և յուրաքանչյուրի ձեռքին ջրաման: Քանի դեռ փող ունեին, ամեն ինչ լավ էր, նրանց, իհարկե, կողոպտել են, բայցևայնպես կարող էին ինչ-որ բան գնել: Իսկ հիմա միջոցներն սպառվել էին, և դառն կարիքը դարձել էր օրակարգի հարց: Մի կնոջ ձեռքին երեխա կար, որի տեսքից երևում էր, որ նրան ապրելու մնացել է մի քանի օր, ի դեպ, առողջների համար էլ հաց չկար: Ինչո՞ւ է Տերը թողնում այս ամենը: Ինչո՞ւ մենք պետք է այսպես տառապենք: Ինչո՞ւ մեզ միանգամից չեն սպանում: Այդպիսին էին նրանց բողոքները: Մենք լեռնցիներ ենք և չենք կարող ապրել անապատում: Ցերեկը ջուր չունենք երեխաների համար և նրանք ճչում են ծարավից: Գիշերները գալիս են արաբները և թալանում մեր անկողինն ու հագուստը: Նրանք մեզնից խլել են մեր աղջիկներին և բռնաբարել մեր կանանց: Եթե չենք կարողանում ճանապարհը շարունակել, մեզ ծեծում են զափթիեները: Ապա խոսեցին սեփական այլ ցավի մասին. «Մեր այգիներում հիմա հասել են հատապտուղները, շուտով կհասնի նաև հացահատիկը, ո՞վ է բերքը հավաքելու: Իսկ այստեղ մեր երեխաների համար մի խնձոր էլ չենք կարող ճարել: Ես դեռ մի զգեստ ունեի, երեկ այն վաճառեցի 12 պիաստրով (դա 1,80 մարկ է), որպեսզի կարողանամ երեխաներին հաց տալ, այդ 12 պիաստրն էլ սպառվեց: Հիմա ի՞նչ անեմ»: Այդ կինը նաև պատմեց, որ այլ կանայք ջուրն էին նետվում, որպեսզի ազատվեն խայտառակվելուց, նույն բանն են արել նորածիններով մայրերը, քանի որ ոչ մի այլ ելք չեն տեսել: Մենք նաև այդ կնոջը փող տվեցինք և գնեցինք գյուղում եղած ամբողջ հացը: Ցավոք, հացն այնքան էլ շատ չէր: Անապատային ամբողջ ճանապարհին մեզ էլ չէր հերիքում սնունդը, բայց մենք կարողանում էինք սննդամթերք գնել շատ անցորդներից և յուրաքանչյուր իջևանատանը հանգստացող թուրք զինվորներից: Զեյթունում էլ ոչ ոքի չեն սպանել, մարդիկ ոչ մի դեպքի մասին չէին կարողանում պատմել: Նրանց պարզապես անապատ են քշում և այնտեղ շատերը կործանվում են:

Արագ մահը՝ ընտանիքով հանդերձ, մայրերին ավելի հեշտ էր թվում, քան սեփական ու մերձավորների դանդաղ սովամահության աչքերին նայելը:

Իմ ուղեկիցների գնահատմամբ մենք հանդիպեցինք մոտ 3000 այդպիսի տարագիրների:

Հալեպ ժամանելիս ինձ անմիջապես հարցրին հայերի և այն մասին, թե ինչպե՞ս է նրանց պարենավորման հարցը: Ամեն կերպ հոգում էին նրանց համար, այդ առիթով դիմում էին կառավարությանը: Հասան միայն

այն բանին, որ հնարավոր եղավ ստեղծել Հայ օգնության միություն, որի թույլտվությունն ընծեռեցին Կոստանդնուպոլսի ղեկավարությունն ու նաև Հալեպի վալին: Հալեպի հայերը հավաքեցին օգնության գումար, և գերմանական հյուպատոսության ու այդ միության միջոցով խեղճ հայրենազուրկներին կուղարկվի փող, սննդամթերք ու հագուստ: Այս տարածքում տունուտեղից քշված հայերի թիվը մոտավորապես 30.000 է:

Հալեպ գնալու երկրորդ օրը Ամանոսի լեռներում մենք կրկին հայերի հանդիպեցինք: Այս անգամ Հաճնից ու նրա շրջակայքից էին: Նրանք ասում էին, որ գնում են Հալեպ, ուրիշ ոչինչ չգիտեին: Ճանապարհին հազիվ 9 օր էին և ոչ մի օգնություն չէին խնդրում: Անապատում գտնվողների համեմատությամբ նրանք հրաշալի պայմաններում էին: Նրանք սայլեր ունեին, տան կահ-կարասի, ձիեր՝ քուռակների հետ, եզներ ու կովեր և նույնիսկ՝ ուղտեր: Անվերջ էր այդ քարավանը, որը ձգվում էր դեպի վեր՝ լեռները, իսկ ես ինքս ինձ հարցնում էի, թե ինչքա՞ն կտևի այդ բարեկեցությունը: Քանի դեռ նրանք հայրենի հողում են, լեռներում, ոչ մի պատկերացում չունեն անապատի սարսափների մասին:

Դա վերջինն էր, ինչ ես տեսա հայերի հետ կապված: Բայց այդպիսի ապրումները հնարավոր չէ մոռանալ, և ես դրանք փոխանցում եմ՝ սրտանց օգնություն խնդրելով: Եթե նույնիսկ շատ հայեր մեղավոր են և տառապում են սեփական մեղքով, ապա խեղճ կանայք ու երեխաներն ունեն մեր օգնության կարիքը:

Հավելված 3

Պատճեն

Ադանա, 12.7.1915

Մեծարգո պարոն Շուխարդ, արդեն մի քանի օր է, ինչ ես Ադանայում եմ: Այստեղ լինելուս պատճառը վիլայեթի կառավարության դեմ բողոքն է, որ իմ ուսուցիչներին էլ, ինչպես բոլոր մարդկանց աքսորում են: Այդ միջոցառումը տարածվում է ամբողջ երկրի վրա, ամբողջ հայ բնակչությանը կտրել են իր կենսագործունեությունից, խլում են ունեցվածքը, որպեսզի բնակեցնեն մինչև այժմ անմշակ ու ամայի տարածքներում: Խոսքն ամբողջ հայ բնակչության մասին է՝ գյուղական ու քաղաքային, այդպիսով միայն Ադանայում այդ միջոցառումներից տուժել են 13-

15.000 հայ: Եթե ես հիմա Հարունիյե վերադառնամ, ապա այդ բնակավայրը հայերից հավանաբար դատարկված կլինի, բոլորին քշել են:

Մարաշի շրջակայքի գյուղերը դատարկ են, իսկ այս օրերին պետք է դատարկեն Մարաշը: Մարաշի համար լսել եմ, ու այնտեղի փոստը որոշակի ժամանակից ի վեր այլևս նամակներ չի ընդունում Գերմանիայի համար (4 շաբաթվա ընթացքում թուրքական փոստը ոչինչ չի վերցրել արտասահմանի համար): Չափազանց տխուր պատկեր է, և մեր աշխատանքը վտանգված է: Հնարավոր է, որ ծրագրի կատարման համար արգելքներ են ստեղծվել, այսպես, մենք այսօր լսեցինք, որ Օսմանիեում՝ տեղահանվածների ճամբարում, խոլերա է բռնկել: Դա, իհարկե, շատ հնարավոր է, երբ տեսնում ես, թե ինչ զանգվածներով է հավաքվում ժողովուրդը: Գյուղում մարդիկ սկսել են բերքահավաքը, նրանք, ովքեր ջանասիրաբար մշակել են իրենց դաշտերը, պետք է սկսածը թողնեն, այգիները խնամված էին, և մրգատու ծառերը հարուստ բերք էին տվել, բայց ոչ նրանց համար, ովքեր պետք է հեռանային: Մարդիկ հսկայական կորուստներ ունեցան, իրենց ունեցվածքն ու անասունները տվեցին ջրի գնով, քանի որ իրենց հետ կարող էին վերցնել միայն ամենաանհրաժեշտ իրերը: Խեղճ մարդիկ: Նրանց մեջ կային մեծաթիվ հղիներ, ծծկեր երեխաներ ու հիվանդներ, նույնիսկ կույրեր ու հաշմանդամներ: Նրանք չէին կարող նախատեսել ուղևորության համար պիտանի հագուստ, հատկապես կոշիկ: Երեխաներից շատերը շիկացած, փոշոտ ճանապարհներով քայլում էին բոբիկ և շուտով նրանց փոքրիկ ոտքերը կլինեն այրված ու վիրավոր:

Հիմա հարց է ծագում, թե ինչո՞ւ է թուրքական կառավարությունը դա անում: Դա կատարվում է ռազմական նկատառումներով՝ հանուն երկրի անվտանգության: Ենթադրում են, որ եթե անգլիացիները ներխուժեն, ապա հայերը վտանգ կներկայացնեն՝ անցնելով նրանց կողմը: Ցավոք, պետք է ասեմ, որ առանձին մարդիկ այդպիսի ենթադրությունների առիթ տվել են, և Վանից ու Մուշից այստեղ թափանցած լուրերի համաձայն, կարծես թե այնտեղ հենց այդպես էլ եղել է: Նրանք այնտեղ, ինչպես ասում են, ռուսների հետ կռվել են թուրքերի դեմ: Բայց ինչպես էլ դա եղած լինի, այստեղի գործելակերպը բարբարոս է և հավասար է ժողովրդի շեշտակի կրճատմանը: Ես դեսպանին մանրամասն նամակ եմ ուղարկել և խնդրել մեղմացնել դաժանությունները: Բոլորովին չի կարելի անտեսել, թե ինչպիսի արժեքներ են ոչնչացվում քաղաքներում, շատ գործարաններ ստիպված կդադարեն գործելուց, քանի որ զրկվելու են աշխատու-

ժից, որն այլ կերպ չի կարող փոխարինվել: Ինչ արժեքներ են գտնվում հայերի ղեկավարած առևտրական ֆիրմաներում: Ապրանքը վաճառելու կամ աճուրդի մասին մտածել հնարավոր չի լինի, ամեն ինչ պետք է մնա, որպեսզի ընկնի նրանց ձեռքը, ովքեր դրա վրա չեն աշխատել: Թուրքերն այս անգամ ավելի շատ կհարստանան, քան նախկին ժամանակներում որևէ ջարդի ժամանակ և այդ ունեցվածքի համար պայքարելու կարիք չունեն, այն երկնքից կընկնի նրանց գիրկը:

Ինչ վերաբերում է մեր երեխաներին, ես հուսով եմ, որ կկարողանամ նրանց ազատել սայլուղիներով անհայտ ապագա ուղարկելու ճակատագրից: Նրանք հիմա իսկական որբեր են դարձել, մինչև հիմա նրանցից ոմանք քեռի, հորեղբայր, տատիկ կամ այլ ազգականներ ունեին, բայց հիմա նրանց համար ամեն ինչ կորած է, և այն տները, որտեղից նրանք դուրս են եկել՝ այլ ունեցվածքի, այգիների ու դաշտերի հետ, արդեն թուրքերի ձեռքերում են:

[Բ. ֆոն Դոբելեր]

Հավելված 4

Պատճեն

Էնթիլի, 15 հուլիսի (1915)

Բոլոր հայերին թալանել են, սա նմանը չունեցող թշվառություն է:

Սա մեծ ուղևորություն է, որը շատերի համար կործանում է, թշվառություն ու մահ: Խեղճ մարդիկ:

[Բ. ֆոն Դոբելեր]

1915 – 08 – 21 – DE – 001

Սկզբնաղբյուրը PA-AA/R14087

Արտգործնախարարությանը՝ «Արևելքում հանուն քրիստոնեական բարեսիրության» գերմանական օգնության միության տնօրեն Ֆրիդրիխ Շուխարդից:

Մայնի Ֆրանկֆուրտ, 21 օգոստոսի 1915

Երեկվա իմ նամակի կապակցությամբ Ձեզ եմ փոխանցում այսօր

ստացված ևս մեկ զեկուցագիր: Մտավախություն ունեմ, թե շատ շուտով չեզոք և մեր հանդեպ թշնամաբար տրամադրված երկրների թերթերում ի հայտ կգան այս և նմանօրինակ այլ հաղորդագրություններ, որոնք մեր երկիրը մեղսակից կհամարեն այն իրադարձություններին, որ կատարվում են մեր դաշնակցի երկրում՝ մասամբ Գերմանիայի նշանակած ներկայացուցիչների աչքերի առջև:

Խորին հարգանքներով՝
Ֆ. Շուխարդ

Հավելված

Էրզինջանի իրադարձությունների մասին, (28-ը)[45], հունիսի 1915 (տե՛ս նաև 1915-07-28-DE-001)

...Մենք երկուսով խորհում էինք, թե ինչ կկարողանայինք անել տեղահանվածների համար: Մենք այն ժամանակ դեռևս չգիտեինք, որ վճռված է կոտորել ամբողջ ժողովրդին և մտածում էինք, որ կարող ենք օգտակար լինել բազում թափորներից գոնե մեկի համար, երբ նրանց ուղեկցում էին Քեմախի հովիտով դեպի Խարպուտ: Քանի որ մենք ազդեցություն ունենք քրդերի շրջանում, ուստի հուսով էինք, որ կկարողանանք այդ խեղճերին պաշտպանել նրանց հարձակումներից: Երբ մենք դր. Քոլեյին տեղեկացրինք այդ մասին, նա ասաց. «Ես ուրախ եմ, որ մեր մտքերը համընկնում են, քանի որ Դուք՝ քույր Եվա Էլվերս, մի միտք արտահայտեցիք, որով մեղք գործեցիք թուրքական պետության հանդեպ: Հոսպիտալի կառավարիչն ինձ մոտ բողոքեց, որ նրանք հիվանդներին ասել են. «Աստված կպատժի կանանց ու երեխաների հանդեպ կատարված ոճիրների համար»: (Քույր Եվան դա ոչ թե հիվանդներին է ասել, այլ միայն կառավարչին, որը հայերի հասցեին ստոր նկատողություն է արել): Հենց այսօր ես կգրեմ կառավարության այստեղի ներկայացուցչին, որ Դուք գնաք, այլապես չեմ կարող երևալ այդ մարդու աչքերին, բայց Դուք կարող եք մնալ ևս մի քանի օր, մինչև Ձեր գործերը կարգավորեք»: Մեր ազատման մասին մենք հեռագրեցինք Էրզրումի գերմանական հյուպատոսին՝ պարոն Շոյբներ-Ռիխտերին, որը հայտնի է գեր-

45. Գրառման վերջին օրը: (Այս փաստաթուղթը թարգմանված է հատվածաբար) (ծան. թարգմ.):

մանացիների հանդեպ, որպես կանոն, թշնամաբար տրամադրված հայերի մոտ, քանի որ նրանց համար շատ ջանքեր է թափում: Մենք նաև հարցրինք, թե արդյոք նա չի՞ կարող գալ Էրզինջան՝ ելնելով Գերմանիայի շահերից: Պատասխանը. «Հիմա անհնար է բացակայել այստեղից: Երեքշաբթի օրը՝ հունիսի 22-ին, սպասեք այդտեղով անցնող ավստրիացիներին»:

...Մենք վերցրինք 8-14 տարեկան 6 տղաների, որոնք հուսահատ, պինդ կառչել էին մեզ և մի փոքր աղջկա: Այնուհետև մնացյալ ամբոխը՝ երևի թե մի քանի հարյուր հոգի, շարունակեցին իրենց ուղին՝ ողբի բարձր ճիչերով, մինչդեռ ժանդարմները նրանց վրա թափահարում էին իրենց մտրակները: Ապա դ-ր Քոլեյի տանը փոքրիկ աղջկան մենք տվեցինք բարեհամբույր խոհարարուհուն՝ խնդրելով, որ նրան պահի խոհանոցում, մինչև մենք կարողանանք երեկոյան նրան վերցնել: Բայց դ-ր Քոլեի համհարզ Ռիզա բեյը ծեծեց այդ կնոջը և երեխային փողոց շպրտեց: Այդ ընթացքում մեր տղաների հետ վերադարձանք հոսպիտալ, որտեղ ստացանք դ-ր Քոլեյի թույլտվությունը՝ նրանց մինչև մեր իրերը հավաքելը այդ սենյակում թողնելու համար: Նրանց կերակրեցինք և շուտով հանգստացան: «Մենք արդեն փրկված ենք»,- ուրախությամբ ճչացին նրանք, երբ մենք նրանց վերցրինք և մեր ձեռքից բաց չթողեցինք: Իսկ տանը հարցրին. «Իսկ դուք կարո՞ղ եք մեզ օգնել, որ մենք ստիպված չլինենք մուսուլման դառնալ: Իսկ ձեր խաչը մերի նմա՞ն է»: Ամենափոքրը՝ Գրիգորը, որը բայբուրթցի մի մեծահարուստի որդին էր, չէր սփոփվում, նա ողորմելի տեսք ուներ՝ նստած մոր ժակետով ու լացելուց ուռած դեմքով: Հանկարծ նա նետի պես թռավ դեպի պատուհանը և ցույց տալով այդ կողմով անցնող ժանդարմին՝ գոռաց.«Սա այն մարդն է, որ սպանեց հորս»: Տղաները հետո հանեցին իրենց չնչին գումարը և տվեցին մեզ՝ 475 պիաստր: Նրանց հայրերը դա տվել էին՝ հուսալով, թե նրանց մոտ չեն փնտրի: Մենք հետո ձիով գնացինք քաղաք և հայտնեցինք ղեկավարությանը, որ տղաներին վերցրել ենք և հաճույքով կտանենք Մեզերեհ կամ նույնիսկ Գերմանիա: Մեզ զարմացրեց, որ ղեկավարությունը մեզնից չխլեց ձիերը, և, բացի այդ, մեր հանդեպ բարեհաճ էին և խոստացան, որ տղաներին ուղևորության համար թուրքական անուններ կտան: Դրանից հետո հոսպիտալում հավաքեցինք մեր իրերը և երեկոյան մեր իրերով տեղափոխվեցինք մի հյուրանոց, որտեղ անցկացրինք գիշերը: Մի անգամ ուժգին թակեցին դուռը և հարցրին, թե այդտե՞ղ են արդյոք երկու գերմանացի կանայք, իսկ ուրիշ արտառոց բան չպատահեց:

Առավոտյան մենք նախաճաշեցինք սրճարանում: Հյուրանոցի տերը մեզ հետ զրույց սկսեց և ասաց, որ Կոստանդնուպոլսից հրաման է եկել՝ սպանել առանց բացառության բոլոր տարագիրներին: Նրանք արժանի են այդ ճակատագրին, որովհետև հայերը Վանում կոտորել են թուրքերին: Մենք ասացինք նրանց և այդտեղ ներկա մյուսներին, որ եթե հայերը մեղանչել են, ապա պատերազմական ժամանակի օրենքներով պետք էր հարյուրներով մահապատժի ենթարկել, նույնիսկ հազարներով, եթե անհրաժեշտ էր, բայց անպաշտպան ու անմեղ մարդկանց մորթը սատանայական գործ է: Խոջան՝ մեր հոսպիտալի մահմեդական հոգևորականը, դեռ ուզում էր մեզ պարզաբանել, որ թուրքերն, ըստ էության, մեծ գթասրտությամբ են վերաբերվում, իբր հայերը տանջել են թուրքերին, որովհետև նրանց կրոնն ավելի ցածր է, իրենք էլ՝ ավելի անկիրթ, իսկ լուսավոր մուսուլմանները չէին կարող նույնկերպ հատուցել, այլ պետք է բավարարվեին իրենց զոհերին պարզապես սպանելով: Նա խոսքն ավարտեց ասույթով. «Դա Աստծո գործն է, եթե նա չի կարեկցում, ինչու՞ եք դուք կարեկցում»:

Ապա մենք կրկին գնացինք նահանգապետի մոտ, որպեսզի վերջնականապես լուծենք մեր խնդիրը: Մինչև այժմ մենք միշտ նրա տեղակալներին էինք հանդիպում, այս անգամ նա անձամբ էր այնտեղ և կարծես վճռել էր մեզ ի ցույց դնել իր առավելությունը: Բարձր ձայնով, կատաղած գոռում էր մեզ վրա. «Դուք, որպես կին, չպետք է հետաքրքրվեք քաղաքականությամբ, այլ խորը հարգանք պետք է դրսևորեք կառավարության հանդեպ»: Եվ, ինչպես դ-ր Քոլեյը, բռնեց մեր ձեռքից ու դուրս արեց: Այդպես էլ նա մեզ դուրս կշպրտի երկրից: Մենք իրավունք չունենք տղաներին պահելու, նա անմիջապես այնտեղ ուղարկեց մի ժանդարմի, որպեսզի բերի նրանց: Մեր հարցին, թե՞ ինչ հանցանք ենք գործել, նա պատասխանեց.«Դա դուք գիտեք և դ-ր Քոլեյը», իսկ մեր հակաճառությունը, թե խոսքը բոլորովին էլ քաղաքականության մասին չէ, քանի որ դա սոսկ մեր ցանկությունն է եղել՝ փրկել, միևնույն է՝ քրիստոնյա՞ն թե մուսուլմանն է թշվառության մեջ, նրա վրա ոչ մի տպավորություն չթողեց: Այդքանով մենք բաժանվեցինք այդ ճիվաղից: Ճանապարհին մեզ հանդիպեցին տղաները, որոնց առաջ քշելով տարան մեր կողքով՝ այնպես, որ մենք չկարողացանք նրանց ոչինչ ասել և ոչ էլ իրենց փողը վերադարձնել: Այդ ամբողջ սարսափի մեջ ամենադառը, թերևս, այն էր, թե ի վերջո ի՞նչ կարող էին մտածել երեխաները, թե մենք՝ իրենց վերջին

բարեկամները, նույնպես ուզում ենք իրենց խաբել: Դրա համար մենք բժիշկներից մեկին խնդրեցինք հայտնել նրանց գտնվելու տեղը: Բայց այդ նպատակով նա պետք է հարցներ մի թուրքի, իսկ մեր մեկնման օրը վերոնշյալ Ռիզա բեյը մեզնից պահանջեց փողը՝ տղաներին վերադարձնելու պատրվակով, թեպետ մենք այլ կերպ իմացել էինք, որ նրանց արդեն գնդակահարել են:

Երբ մենք հյուրանոց վերադարձանք, մեզ չէին ուզում այլևս այնտեղ պահել և ուղարկեցին հեռավոր հայկական թաղամաս ու տրամադրեցին դատարկված տներից մեկը: Շատ ցավալի էր շրջել այդ բնակավայրում, որտեղ մինչև վերջերս ապրում էին երջանիկ ընտանիքներ, իսկ հիմա այն ամբողջովին ամայի էր: Մարդիկ մտնում ու դուրս էին գալիս և վերցնում էին այն, ինչը արժեքավոր էր թվում: Երկու մեծ տնային Աստվածաշունչ տեսա փողոցում ընկած: Մեզ տեղավորեցին մի տան մեջ, որտեղ ակնհայտորեն իշխել էին կարգուկանոնն ու մաքրությունը, թվում էր, թե տանտիրուհու հոգին դեռևս այդտեղ էր: Նախասրահում նստած էր մի թուրք՝ հայուհու հետ, որին վերցրել էր որպես աղախին, և նրա երեխան: Տղամարդը սիրալիր խաղում էր փոքրիկի հետ, բայց կինը չէր համաձարկվում մեզ հետ խոսել: Շուտով երեքն էլ անհետացան, և մենք մնացինք մենակ՝ ի վիճակի չլինելով դուռը փակել և մեզ համար ջուր ու սնունդ ճարել: Բայց դ-ր Քոլեյն իմացել էր, թե ինչ վիճակում ենք: Նա բավականաչափ սիրալիր էր և կարգադրել էր մեզ մի մեքենայով տանել: Դա հունիսի 19-ին էր: Հաջորդ օրը նահանգապետը առանց ծածկի մի բեռնատար մեքենա էր ուղարկել, որով մենք 7 օր գնալու էինք մինչև Սվազ: Ընդ որում, մեզ թույլատրված չէր գնալ Մեզերեհի միջով, որտեղ մեր իրերն էին՝ մենք այնտեղ երևի չափազանց շատ դիակներ կտեսնեինք: Բայց մենք վճռականապես հրաժարվեցինք օգտվել այդպիսի մեքենայից, և դ-ր Քոլեյի միջամտությամբ նահանգապետը բարեհաճեց ուղարկել երթուղային մեքենա՝ սպառնալով ձերբակալել մեզ, եթե չմեկնենք, քանի որ նրա մարդկանց ընթրոստացնում ենք, և նա չի կարող երաշխավորել, թե մեզ էլ չեն գնդակահարի: Մենք էլ նրան ասացինք, որ հյուպատոսի ցուցումով կուզենայինք սպասել ավստրիական սպաներին, որոնք պետք է ժամանեին 22-ին: Մեր հանդեպ բարեհաճ տրամադրված թուրք ծառայողներն ասացին. «Մի՛ գնացեք, ճանապարհին ձեզ կսպանեն»: Բայց դ-ր Քոլեյը բացատրեց, որ հավանաբար այլևս չի կարողանա մեզ պաշտպանել, և մենք նախընտրեցինք մեկնել: Պարոն

Գեհլսենին էլ ազատեցին աշխատանքից, բայց նրան թույլատրվեց սպասել սպաներին: Այդպիսով, հունիսի 21-ին Էրզինջանից ճամփա ընկանք: Առաջին երկու օրը դ-ր Լինդենբերգն շատ սիրալիր էր մեզ ուղեկցելիս: Առաջին օրը մենք տեսանք երեք, երկրորդ օրը՝ երկու դիակ, որոնք ընկած էին ճանապարհին: Մեկի մոտ պառկած էր մի շուն, և մեր կառապանն ասաց, որ նահանգապետը պետք է կարգադրեր, որպեսզի թաղեին դիակները, այլապես շները կսովորեն մարդու միս ուտել: Ճանապարհին մեզ միացան երկու կարծեցյալ թուրք սպա, որոնք հայ կառապան ունեին: Երեկոյան մեզ ուղեկցող ժանդարմն ասաց, որ երկուսն էլ հայ են, իսկ մեր հարցին, թե արդյոք նրանց նույնպե՞ս կսպանեն, նա պատասխանեց. «Նրանք էլ կգտնեն իրենց տեղը»: Նրանք աշխույժ զրուցում էին դ-ր Լինդենբերգի հետ և որպես իսկական թուրքեր՝ գովերգում էին կանանց քողարկվելը: Ի դեպ, լուրեր տարածվեցին, իբր մենք էլ ենք հայուհիներ. դրանով էր բացատրվում ժանդարմների խիստ զգուշավորությունը, ինչը հետո տեղը զիջեց ավելի սիրալիր վերաբերմունքին: Մարդիկ, ախր, չէին կարող պատկերացնել, որ գերմանացիները կարող են հայերի համար որևէ լավ բան անել: Էրզինջանում մենք այդ գործի մասին խոսեցինք շատ երիտասարդ մի բուժակի հետ: Նա ասաց. «Եթե Գերմանիայում ընթրոստանար մի ցեղ, դուք էլ նրանց չէի՞ք ոչնչացնի»: Եվ քույր Եվան պատասխանեց. «Մենք կպատժեինք մեղավորներին, բայց ոչ երբեք՝ կանանց ու երեխաներին»: Ապա նա ասաց.«Ուրեմն Դուք գերմանուհի չեք»:

...Ռուսական սահմանից մինչև Սվազից դեպի արևմուտք՝ երկիրը հիմա բավականաչափ լավ «մաքրել» են հայերից և դա միայն տխուր սփոփանք է, քանի որ Թուրքիան իր լավագույն մարդկանց սպանելով ինքն իրեն ավերել է: Թուրքերն իրենց են ուրախանում այն օրվա համար, երբ օտար մի տերություն սանձերը կվերցնի իր ձեռքն ու արդարություն կհաստատի, և կատարված ոճիրները՝ որպես այդպիսին, բնավ չարժանացան թուրք ժողովրդի ընդհանուր հավանությանը, կամ գոնե նրա այսպես կոչված կիրթ մասի:

Թորա Ֆոն Վեդեր-Յարլսբերգ/Եվա Էլվերս

[Արտգործնախարարությունը՝ 27.8 Կոստանդնուպոլսի դեսպանությանը (№652)]

Խոնարհաբար ուղարկվում է որպես տեղեկատվություն:

1915 – 08 – 21 – DE – 011

Սկզբնաղբյուրը՝ PA-AA-/Կոս.դեսպ/170
Տպագրված՝ Գ և Հ փաստ. 143 (կրճ.)

Կոստանդնուպոլսի գերմանական դեսպանության խորհրդական Նոյոաքին՝ Կոստանդնուպոլսում Բաղդադի երկաթուղու գլխավոր տնօրեն Գյունտերից

Chemin de Fer Ottoman d'Anatolie

Կոստանդնուպոլիս, 21 օգոստոսի 1915

Շատ հարգելի պարոն ֆոն Նոյոաք, կցված զեկուցագիրը Կոնիայից՝ այս ամսվա 16-ին, կցանկանայի փոխանցել Ձեզ, հասկանալի պատճառներով՝ ոչ թե պաշտոնական ճանապարհով, այլ բացարձակ որպես անհատ անձ և Ձեր անձնական տեղյակության համար՝ որպես ի գիտություն:

Ջերմ ողջույններով՝ Ձեզ շատ հավատարիմ Գյունտեր

[Մորդմանի նշումը 24.8]

Կարճ ասած՝ կցում եմ մանրամասն մի գրառում, որը պարունակում է դրա վերաբերյալ պարոն Զաբելի ու Հոլբախի նոր տեղեկությունները:

Հավելված 1

Կոնիա, 16 օգոստոսի 1915

Ներքոստորագրյալները՝ տվյալ պահին մշտապես Կոնիայում բնակվող Գերմանիայի հպատակներ, իրենց իրավունք են վերապահում կայզերական գերմանական դեսպանությանը քննարկման ներկայացնել սույն զեկուցագիրը:

Արդեն մի շաբաթ է, ինչ մենք ականատես ենք խիստ հուզիչ դրվագների, որոնց մասին հեռվում եղած որևէ մեկը հազիվ թե պատկերացում կազմի: Ամեն օր հայերի երկար քարավաններ են գալիս, որոնք, ըստ իրենց ասածի, արտաքսվել են Իզմիդից, Ադա-Բազարից և շրջակայքից:

Այստեղով անցնողներից մենք իմացանք, որ տեղահանման միջոցառումներն արդեն ամիսներ ի վեր իրականացվում են Կիլիկիայում և հյուսիսային Միջագետքում, և ինչպես մենք լսում ենք, Անատոլիայի մյուս մասերն էլ կմաքրեն հայերից: Այսօր այստեղի հայերն էլ են հրաման ստացել՝ ութ օրվա մեջ թողնել քաղաքը:

Անշուշտ, մեզ չի վերաբերում այս միջոցառումները իշխանություններին ներկայացնելը, մեզ նաև հայտնի է, որ հայերի մեջ մեղավորներ կան: Ի՞նչ նպատակ ունի մեր զեկուցագիրը՝ ընդամենը բողոք արտահայտել այդ տարագիրների հանդեպ մարդկայնությանը հակասող ցանկացած վերաբերմունքի ձևի դեմ:

Կանանց ու երեխաներին քշում են բռունցքի ու մահակի հարվածներով, բաց սայլերով և թաթարական ֆուրգոններով նրանց քշում են գիշերը, իսկ չունևորները՝ հետիոտն, իրենց ունեցվածքի մնացորդներով շարունակում են դժվարին ճանապարհը:

Նրանք, ովքեր զրկված են ամենաանհրաժեշտ բաներից, ստիպված են չնչին գներով վաճառել իրենց խղճուկ ունեցվածքը, որը հաճախ նրանցից խլում են բռնի ուժով ու թալանում:

Թե որքան մեծ է հուսահատությունը, երևում է այն բանից, որ մայրերն իրենց երեխաներին նվիրաբերում են, որպեսզի նրանց պաշտպանեն թշվառագույն ճակատագրից:

Երեխաներին, որոնց վերցրել են կարեկից քրիստոնյա ընտանիքները, ավելի ուշ իշխանությունները խլել են նրանցից և տվել են թուրքերին:

Մեր կողմի օգնությունները լավ բան չեն համարվում: Դա մեզ հիշեցնում է այս տարվա ապրիլի դեպքի մասին, երբ արգելվեց այստեղի ամերիկյան միսիայի օգնությունը Զեյթունից տեղահանված մոտ 3000 հայերին, դրան հակառակ՝ ոչ մի կողմից բողոք չեղավ, երբ այդ նույն միսիան բալկանյան խժդժությունների ժամանակ 500 թուրքական ֆունտից ավել անկողին ու սպիտակեղեն բաժանեց մահմեդական տարագիրներին՝ Էսկի-Շեհիրից մինչև Էրեգլի:

Այստեղից մինչև Հալեպ ամբողջ ճանապարհը նման է ցավի ու թշվառության քարավանի: Բնակավայրերում, ինչպիսիք են Քարամանը, Էրեգլին և Բոզանտին, որտեղ իրենք՝ բնակիչներն են տառապում հացի պակասից, տարագիրների վիճակն աննկարագրելի է, նրանք դատապարտված են դանդաղ, տանջալի սովամահության: Որպես ի գիտություն, հիշեցնում ենք, որ Բոզանտիում, չնայած հացի գնին՝ 8 պիաստր մեկ օքայի համար, այն ճարել հնարավոր չէ:

Այս կողմի լեռնային տարածքներում և Տավրոսի այն կողմի հովիտ-

ներում այդ թշվառներին միտումնավոր թողնում են կիսավայրենի մահմեդական բնակչության անարգող տոփանքին:

Այսպիսով, ամբողջ միջոցառումը, ըստ երևույթին, նպատակաուղղված է հայերի իսպառ բնաջնջմանը:

Այդ անմարդկային վերաբերմունքը համաշխարհային պատմության մեջ անտանելի խայտառակ հետք է թողնում ոչ միայն թուրքերի, այլև մեզ՝ գերմանացիներիս համար, որպես նրանց այժմյան դաշնակիցներ ու խորհրդատուներ, եթե մենք հիմա անտարբեր հետևենք այս գործին և թողնենք այս ժողովրդի բնաջնջումը: Բացի այն ամենը, որ այդ գործողությունները չափազանց ցավալի են՝ դատելով երկրի տնտեսական վիճակով, գերմանական ձեռնարկություններն էլ կտուժեն դրանից, եթե կործանվի այդ աշխատասեր ժողովուրդը:

Եթե ներքոստորագրյալները իրենց իրավունք են վերապահում կայզերական դեսպանությանը տեղեկացնել այս հանգամանքների մասին, ապա դա անում են՝ ենթադրելով, որ սրանք ամբողջ ծավալով հայտնի չեն կայզերական դեսպանությանը:

Մենք՝ գերմանացիներս, ովքեր ստիպված ենք այստեղ հիմա ամեն օր ականատես լինել անմարդկային գործողությունների, որպես քաղաքակիրթ պետության անդամներ՝ կիսաքաղաքակիրթ ժողովրդի մեջ, մեզ պարտավորված ենք զգում բողոքել դրա դեմ:

Սպասելով, որ մեր խնդրանքը հաշվի կառնվի, որ գոնե կմեղմացվի հազարավոր ու բյուրավոր անմեղ կանանց և երեխաների ճակատագիրը, ստորագրում ենք:

Խորին հարգանքներով՝

Վիլլի Զեգեր՝ Անատոլիական արդյունաբերա-առևտրական սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ղեկավար, Կոնիայի բաժանմունք. Գեորգ Բիգել՝ միջնակարգ դպրոցի ուսուցիչ, Հայնրիխ Յանսոն՝ գործարանի վարպետ, Յ.Է. Մաուրեր՝ դիպլոմավորված ինժեներ:

[Մորդմանի նշումը 24.8]

4857-ի վերաբերյալ

1.Պարոն **Ռուդոլֆ Զաբելը** «**Tägl. Rundschau**»-ից, որն այս ամսի 20-ին այցելեց ինձ, Միջագետքից դեպի այստեղ իր ուղևորության ընթացքում հետևել է հայ տարագիրների քարավանին մինչև Կոնիա և ավելի հեռու:

Նա ուներ Կոնիայի գերմանացիների դիմումի պատճենը:

Նա նկարագրում է, թե ինչպես են սկսում արևմուտքից աքսորել:

Սկզբում էշելոններն ուղարկում են մեծ համակենտրոնացման ճամբար. ով ի վիճակի չէ վճարել ուղետոմսի համար, պետք է հետիոտն գնա: Կոնիայում մեծ մասը վաճառում է իր ունեցվածքը, բայց վաճառել թույլատրվում է միայն թուրքերին:

Ունևորներն իրենց կանխիկ գումարը պահ են տվել Օտոմանյան բանկում, որոշ ժամանակ անց դա արգելվել է, իսկ ներդրված գումարներն առգրավել են իշխանությունները: Իմիջիայլոց, այդպես է պատահել իզմիդցի մի հարուստ արաբի հետ:

Իզմիդի հայ եպիսկոպոսը գույքագրել է հայերի անշարժ գույքը: Գույքագրման ցանկը ինժեներ Մաուերի ձեռքում է, որը ցանկանում է այն ավելի ուշ հանձնել այստեղ:

Հայ բողոքականներին ու **կաթոլիկներին** վերջին շրջանում խնայում են, Իզմիդից և մերձակայքից տեղահանված հայերն այս պահին Էսքիշեհիրում են, և, ըստ երևույթին, պետք է տեղափոխվեն Կինտակիա, ուր աքսորել են հայերին:

Տարագիրների պարենավորումն ու տեղավորումը վատ է կազմակերպված, նրանց մեջ մահացությունը մեծ է:

Էրեգլիում մի մեծ ճամբար կա (մոտ 3000 մարդ), ըստ երևույթին, այնտեղ տեղավորել են երկաթուղով ժամանածներին, քանի որ մարդիկ դեռևս իրենց հետ բերում են շատ իրեր: Նրանց մեջ նույնպես մահացությունը մեծ է:

Ամեն օր Էրեգլի են ժամանում հինգ գնացք՝ յուրաքանչյուրը 1000-1500 հայերով, պարոն Զաբելը տեսել է 8000 մարդ, որոնց ոտքով են քշել:

Ուլու Քիշլան ամենավատ կայաններից մեկն է, այնտեղի ճամբարը մինչ այդ զբաղված էր աշխատանքային գումարտակներով՝ վարակված փնթիությամբ, վնասատու միջատներով և այլն: Տարագիրների վիճակն այնտեղ շատ թշվառ է:

Ուլու Քիշլայից հետո դադարում է երկաթուղով տեղափոխումը, տարագիրներին առանձին ջոկատներով քշում են ինչպես անասունի հոտ:

Այնտեղ սկսվում են նաև ճանապարհային ավազակների հարձակումները, այդպիսի մի հարձակման մասին պարոն Զաբելը հստակ տեղեկություններ ունի, այդ ժամանակ սպանվել և վիրավորվել են մոտ 15 հայ:

Բոզանտիում՝ հաջորդ կայանում, ո՛չ տանիք կա, ո՛չ էլ՝ հաց: Այնտեղից առանց կանգ առնելու գնում են հաջորդ 10 կմ-ը, դեպի բարաքային ճամբարը՝ էտապային ուղիով:

Բոզանտիի այն կողմում աքսորյալների մեջ այլևս ուժեղ տղամար-

դիկ չկան, կան մի քանի ազատ ֆուրգոն՝ ունևորների համար, քանի որ տրամադրված փոխադրամիջոցներն առգրավել են զինվորականները:

Տարագիրներն **Ադանա** են ժամանում ամբողջովին ուժասպառ:

Ադանա-Օսմանիե-Համիդիե էտապային ուղին միայն ոտքով են անցնում: Հալեպից հետո վերանում են նաև ամուսնության տարիքի աղջիկները:

Փոխգնդապետ Քլինքիարդին Ռաքուլեմում թուրք սպաները երկու աղջիկ են առաջարկել[46]:

Քուբլայում կրկին ավելի մեծ ճամբար կա, որտեղ, իմիջիայլոց, նույնպես տեղավորված են դյորթյոլցի հայեր:

Մյուս՝ պարոն Զաբելի նկատած իրողություններից արժե նշել, որ Ազմի բեյը, որին տեղափոխել են Բեյրութ, Կոնիայից մեկնելուց քիչ առաջ հրամայել է ավերել հայկական բողոքական եկեղեցու զանգակատունը, ուր հաճախում էին նաև բողոքական գերմանացիները: Չնայած գերմանական կողմի թախանձագին խնդրանքին, հրամանն ի կատար է ածվել:

Պարոն Զաբելը թողնում է զգաստ ու անկողմնակալ դիտորդի տպավորություն, նա շատ նյութ է հավաքել, դրանց մեջ կան նաև մի շարք լուսանկարներ ու ֆիլմեր:

Նրա դատողությունները ծայրամասերի թուրք պաշտոնյաների մասին ոչնչացնող էին: Իմիջիայլոց նա ասաց: Ինքն անհանգիստ ժամանակներում՝ պատերազմի և հեղափոխությունների ընթացքում, ճանապարհորդել է շատ երկրներով, բայց այնպիսի անարխիա, ինչպես այստեղ է, նա ոչ մի տեղ չի տեսել:

2. Այս ամսվա 23-ին ինձ այցելեց պարոն ֆոն Հոլբախը (կառավարական պաշտոնյա, երկար տարիներ՝ Թուրքիայում) վերջում եղել է Ադանայում և գրեթե Զաբելի հետ միաժամանակ եկել է այստեղ: Տարագիրների տառապանքների մասին նրա պատմությունները համընկնում են պ-ն Զաբելի զեկուցագրին: Մանրամասներից առանձնացնում եմ.

Երկաթուղով ուղարկվածներին ներկայումս 50-60 հոգով խցկում են անասունների համար նախատեսված վագոնները, որտեղ հազիվ 40 հոգի է տեղավորվում:

Կոնիայում և Ադանայում եղել են շատ դավանափոխություններ իսլամի, արդեն Կոնիայում շատ հայեր վաճառում են իրենց երեխաներին:

46. Այս նախադասությունը կրկին ջնջվել է:

Հայերի հալածանքների պատճառով Ադանայում ծանր վնաս է հասցվելու առևտրին: Ադանայի ամբողջ շուկան հայկական է: Բամբակագործությունը նույնպես բացառապես հայերի ձեռքին է, դրանից պատրաստված ապրանքի առևտուրը՝ հույների ձեռքին:

Հաքքի բեյը (Գերագույն շտաբի սպա)՝ Ադանայի վալին, սկզբում ջանում էր պաշտպանել հայերին, հետո կանչել են Կոստանդնուպոլիս և Ադանա վերադառնալուց հետո հայերի հանդեպ դարձել է անողոք:

Պարոն ֆոն Հոլբախն իր զեկուցագիրը եզրափակել է հետևյալ խոսքերով. **վաղուց ի վեր ինքը թուրքամետ է եղել, բայց այն բանից հետո, ինչ տեսել է սեփական աչքերով, հիմնավորապես բուժվել է թուրքերի հանդեպ իր համակրանքից**:

Հիմա նա լռում է, բայց հարմար պահին ամեն ինչի մասին կգրի լրագրերում:

[Մորդմանի գրառումը 24.8]

Վիլլի Զեգերը՝ Կոնիայում, օգոստոսի18-ին, պարոն Գյունտերին (հատված)

1. Տեղահանման համար տրամադրված նախապատրաստական ժամկետը այստեղի հայերի համար 8 օրից կրճատվել է 6-ի, 21-ին արտաքսվելու են 2000 մարդ...

2. Հայ եպիսկոպոսն ինձ խնդրում է՝ հեռագիր ուղարկել Նորին մեծություն կայսերը, որ հայ գրիգորյաններն ուզում են դառնալ բողոքական և կայսրից պաշտպանություն են խնդրում...

3. Լուրեր կան, որ կաթոլիկները՝ Նորին մեծություն կայսր Ֆրանց Յոզեֆի ջանքերով, ազատվել են աքսորից...

4. Մեծագույն հուսահատություն է հայերի մեջ: Ոստիկաններն իրենց չարաշահումների իրավունք են վերապահում: Ունեցվածքը վաճառվում է չնչին գներով և վաճառքի ժամանակ այդ խեղճերի դեմ ստեղծում են ամեն հնարավոր արգելքներ...

5. Ինչպես հայտնել են՝ մոտ 25 հայ մահմեդական դառնալու պատրաստակամություն են հայտնել:

6. Ինչպես արդեն գրել եմ, այդ ցուցումից տուժել են նաև իմ ծառայողները:

Խնդրում է դեսպանությանը՝ քայլեր ձեռնարկել հօգուտ հալածվածների:

[Մորդմանի նշումը, 24.8]

Կաթոլիկների ու բողոքականների առնչությամբ Թալեաթ բեյն ինձ երեկ կրկնեց իր նախկին հավաստիացումները, ես հատուկ նշեցի 6-րդ կետը: Թալեաթ բեյը դրա վերաբերյալ նշեց, որ նա այդ գործն արդեն քննարկել է պարոն Գյունտերի հետ: Երկաթուղային ծառայողները մնում են, բայց աստիճանաբար փոխարինվելու են:

1915 – 08 – 23 – DE – 013

Սկզբնաղբյուրը՝ PA-AA/ Կոստ.դեսպ./ 170
Հրապարակված՝ Գ և Հ փաստ. 149 (կրճ.)

Կոստանդնուպոլսի գերմանական ռազմական միսիային՝ ավագ լեյտենանտ Շտանգեից

Մ. №3841 Էրզրում, 23 օգոստոսի 1915

Գաղտնի
Զեկուցագիր հայերի աքսորի մասին

Հայերի տեղահանումներն սկսվեցին մոտավորապես 1915թ. մայիսի կեսին: Մինչ այդ ամեն ինչ բավական հանգիստ էր, հայերը կարող էին զբաղվել իրենց առևտրով ու արհեստով, առանց արգելքի դավանում էին իրենց կրոնը և ընդհանուր առմամբ գոհ էին իրենց վիճակից: Այնուամենայնիվ, այս տարվա փետրվարի 10-ին երեկոյան ժամը վեցին բոլորի աչքերի առջև սպանեցին այստեղի Օտոմանյան բանկի 2-րդ տնօրենին՝ հայի: Չնայած կառավարության թվացյալ ջանքերին՝ հանցագործին դեռևս չեն գտել: Այսօր այլևս կասած չկա, որ այդ սպանության առիթը զուտ քաղաքական էր: Նույն այդ ժամանակ սպանել էին նաև Էրզինջանի հայ եպիսկոպոսին:

Մոտավորապես մայիսի 20-ին գլխավոր հրամանատար Քյամիլ փաշան հրամայեց Էրզրումից դեպի հյուսիս տեղաբաշխված գյուղերի հայ բնակչությանը մաքրազատել, որը թուրքական մարմինները կատարեցին ամենակոշտ ձևով: Դրա վերաբերյալ ներկայացված է հայ գյուղական բնակիչների՝ իրենց եպիսկոպոսին ուղղված նամակի պատ-

ճենը: Ամենակարճ ժամկետում մարդկանց հանեցին հայրենի տուն-տեղից, դաշտերից ու բոլորին միասին քշեցին, մեծ մասին ժանդարմները ժամանակ չտվեցին ամենաանհրաժեշտ իրերը հավաքելու և իրենց հետ վերցնելու համար: Թողած կամ հետները վերցրած ունեցվածքը ուղեկցող ժանդարմներն ու զինվորները խլում էին տերերից կամ թալանում էին տներից: Այն ժամանակվա վատ եղանակին տարագիրներն ստիպված էին գիշերել բաց երկնքի տակ, հիմնականում միայն հատուկ վճարի դեպքում էին նրանք ժանդարմներից բնակավայրեր մտնելու թույլտվություն ստանում, որպեսզի սննդամթերք ճարեն կամ ջուր վերցնեն: Բռնություններ էին լինում, և իսկապես հուսահատ մայրերն իրենց ծծկեր երեխաներին նետում էին Եփրատը, քանի որ նրանց կերակրելու այլևս ոչ մի հնարավորություն չէին տեսնում: Գերմանացի հյուպատոսը հյուպատոսության գերմանացի ծառայողների միջոցով բազմիցս կարգադրել է հաց բաժանել, և վերջինները կարող են հայտնել տարագիրների տառապանքների մասին:

Անհերքելիորեն հաստատված է, որ այդ հայերին գրեթե առանց բացառության սպանել են Մամախաթունի (Դերջանի) տարածքում՝ այսպես կոչված չեթեները (կամավորները), աշիրեթները և այդպիսի խաժամուժը, ընդ որում՝ զինվորական պահակախմբի թույլտվությամբ, նույնիսկ նրանց աջակցությամբ: Վալին այդ փաստերը (իհարկե, սոսկ սահմանափակ չափով) խոստովանել է Գերմանիայի հյուպատոսին, իսկ վերջինն էլ մանրամասների մասին հարցաքննել է մի ծեր հայի, որը վիրավոր փախել է սպանդից: Հյուպատոսության ծառա, պատերազմի կամավոր Շլիմեն տեսել է դիակների բավական մեծ քանակություն:

Հունիսի սկզբին սկսվեց հայերի տեղահանումը Էրզրում քաղաքից: Կառավարական և ոստիկանական իշխանությունների և նրանց մարմինների գործելակերպում լրիվ բացակայում էր կազմակերպվածությունն ու կարգուկանոնը: Դեռ ավելին, դա մասնակից բոլոր թուրքերի համար խորապես ատելի ու օրենքից դուրս համարվող բնակչության դասի հանդեպ գազանային դաժանության, անխնա, անմարդկային և հակաօրինական կամայականության բնորոշ օրինակ է: Դրա վերաբերյալ անհերքելի մեծաթիվ օրինակներ կան: Կառավարությունը չի արել նվազագույնը՝ տարագիրներին ինչ-որ կերպ օգնելու համար, և, քանի որ ոստիկանները գիտեին իրենց վերադասների տրամադրվածությունը, ուստի իրենք էլ իրենց հերթին անում էին ամեն ինչ՝ հայերի տառապան-

քը շատացնելու համար: Արտաքսումները հրահանգվում էին և նորից վերացվում, այնուհետև մնալու վերաբերյալ ոստիկանության թույլտվության տեղեկանքները մի քանի օր անց պահանջում էին, ոչնչացնում և բաժանում էին տեղահանման նոր հրամաններ: Շատ դեպքերում դրանք տալիս էին առավոտվա համար: Հակաճառություններն ու բողոքները չէին ընկատառվում, և ոչ հազվադեպ դրանց պատասխանում էին բիրտ, կոպիտ վարմունքով:

Կառավարությունը տեղահանվածներին չէր հայտնում նշանակված վերջնավայրը: Նա թողնում էր, որ փոխադրամիջոցների գները հասնեն գրեթե անմատչելի չափերի, տալիս էին հիմնականում ոչ բավարար քանակությամբ ուղեկցող զինվորներ, ովքեր անկիրթ էին և տարագիրներին պաշտպանելու իրենց պարտավորությունը ոչ մի կերպ լուրջ չէին ընդունում, ինչպես դա հաճախ բացահայտվում էր ավելի ուշ: Այնուամենայնիվ, ամենուրեք հայտնի էր, որ ճանապարհների անապահովությունը հասել է մեծ չափերի, բայց դա իշխանություններին հետ չպահեց հայերին քշելու գաղափարից: Ինչ էլ լինի՝ նրանք **պետք է** զոհվեն: Տրապիզոնում՝ տեղահանման հրամանն ստանալուց հետո, հայերին նույնիսկ արգելել են իրենց սեփականությունից ինչ-որ բան վաճառել կամ հետը վերցնել: Այստեղի հյուպատոսության ծառան՝ գերմանացի կամավորական Շլիմեն (Շլիմեն հյուպատոսության հանձնարարությամբ Բայբուրթով, Էրզինջանով գործուղվել է դեպի Տրապիզոն) Տրապիզոնում անձամբ է տեսել, թե ինչպես են շարքային ոստիկանները ոստիկանական պահակետի կողքով անցնող տարագիրներից խլել նրանց խղճուկ կապոցները:

Վերն ասվածը թող բավարարի՝ թեկուզ թեթևակի պատկերացում կազմելու այն դաժան վերաբերմունքի մասին, որին մատնված են հայերը: Բազմաթիվ այլ մանրամասներ կան տրամադրության տակ:

Որքան էլ կառավարությունը ձգտի թաքցնել կամ մեղմել իրադարձությունները, անհնար է չնկատել, որ վիճակն այսպիսին է.

Առաջին թափորից, որը հունիսի 16-ին ուղիղ ճանապարհով դուրս եկավ դեպի Խարպուտ և որը բաղկացած էր առավելապես հայ երևելիներից, ովքեր իրենց հետ բավականին շատ ուղեբեռ էին տանում, բոլոր տղամարդկանց՝ չնչին բացառությամբ, սպանել են, որը վալիի խոստովանությամբ, կազմում է 13 հայ: Կանայք՝ ամենափոքր երեխաների հետ, կարծես թե ժամանել են Խարպուտ, հասուն աղջիկների մասին ոչ մի հստակ տեղեկություն չկա: Մյուս խմբերին ուղարկել են Բայբուրթով

դեպի Էրզինջան և հետո Քեմախի (Եփրատի հովիտ) ուղղությամբ: Ընդհանուր առմամբ նրանք «պետք է որ» բարեհաջող անցած լինեն Եփրատի հովիտը, բայց դեռևս պետք է անցնեն Մարաշից Խարպուտ մի վտանգավոր հատված և Ուրֆայի տարածքը:

Էրզինջանի հայերի տղամարդկանց կողքի են տարել՝ դեպի լեռները և մորթել են զինվորականների աջակցությամբ, իսկ կանանց ողորմելի վիճակով քշել են Էրզինջան: Թե հետո ինչ է պատահել նրանց, այս պահին հայտնի չէ: Տրապիզոնում հայերին տարել են ծովը և շպրտել են տախտակամածից: Տրապիզոնի եպիսկոպոսին կանչել են ռազմական դատարան և ճանապարհին խեղդել են ուղեկիցներով հանդերձ: Մի զինվորական հայ բժշկի սպանել էին Տրապիզոնի ու Բայբուրթի միջակայքում:

Էրզինջանի հայերին, բոլորին միասին, քշել են Քեմախի հովիտը և այնտեղ մորթել են: Բավականին հավաստի տեղեկացնում են, որ նախապես պատրաստ պահած սայլերով դիակները հասցրել են Եփրատ և նետել են գետը: Էրզինջանի եպիսկոպոսն ուղեկցել է իր հավատակիցներին և նույն բախտին է արժանացել:

Էրզրումում դեռևս կան սակավաթիվ հայեր, այն բանից հետո, երբ ի սկզբանե տրված հրամանը, թե կանայք ու երեխաներն առանց տղամարդկանց պաշտպանության իրավունք ունեին մնալ քաղաքում, կրկին չեղյալ է համարվել և նրանց աքսորն իրականացվել է խիստ ու անխնա: Առանց ծրագրի աքսորել են նույնիսկ նրանց, ում կարիքն անպայման ունեին ռազմական ու վարչական ձեռարկությունները՝ արհեստավորներին, դարբիններին, վարորդներին, ռազմական հոսպիտալի անձնակազմին, բանկային ու պետական ծառայողներին, ռազմական բժիշկներին:

Հայերի հեռացումն Էրզրումի պատերազմական շրջանից օրենքով թույլատրելի էր և հիմնավորվում է ռազմական անհրաժեշտությամբ: Գործնականում հայերն իրենց անհուսալի դրսևորեցին տարբեր վայրերում: Ռուսների աջակցությամբ գործը հասավ ապստամբությունների ու մուսուլմանական բնակչության դեմ բռնությունների, ինչպես օր. Վանա լճի մոտ, Բիթլիսում, Մուշում: Եղան դեպքեր, երբ կտրում էին հեռագրալարերը, քիչ չէին նաև լրտեսության դեպքերը: Մյուս կողմից Էրզրումում հայ բնակչությունն իրեն բոլորովին հանգիստ է պահել: Թե արդյոք նրանք հետո էլ կշարունակեին խաղաղ մնալ՝ Էրզրումին ռուսների հնարավոր մոտենալու դեպքում, ներկայումս անհնար է հստակ ասել: Զորակոչվել են զինծառայությանը պիտանի բոլոր հայերը՝ համեմատաբար

չնչին բացառությամբ: Ըստ դրա՝ որևէ ազդեցիկ խոովությունից վախենալու առանձնապես առիթ չկար: Չնայած դրան՝ կառավարությունում կարծես թե այդպիսի մտավախություն ունեին հայերից, բայց դա անհամեմատելի էր այն ուժգուրկ վիճակին, որում այստեղ տվյալ պահին հայերն էին: Եթե նույնիսկ հիմա այս ոչ այնքան հուսալի տարրի արտաքսման վճիռը բացառապես գերագույն հրամանատարության գործն է, ապա կարելի է սպասել ու պահանջել, որպեսզի այդ միջոցառումն անցկացվի՝ առանց այն աքսորյալների կյանքին ու սեփականությանը վնաս հասցնելու, ում անձի հանդեպ չի ապացուցվել նվազագույն մեղքը: Դրանով իսկ չի շոշափվում առանձին մեղավորների դեմ գործ հարուցելու իրավունքն ու պարտականությունը: Բայց այն, որ հարյուր հազարավորների կանոնավոր սպանում էին, որ իշխանությունները կամայականորեն տնօրինում էին թողած ցանկացած սեփականություն (տներ, խանութներ, ապրանք, տնային գույք, հայկական եկեղեցում կային 150.000 թուրքական ֆունտ արժողությամբ պաշարներ), որ արտաքսումն իրականացվում էր ամենաանմարդկային ձևով, որ ընտանիքներին ու կանանց քշում էին առանց տղամարդկանց պաշտպանության, որ ի վերջո, մահմեդական հավատին անցած հայերին այլևս կասկածելի չէին համարում և հանգիստ էին թողնում, արդարացի հիմք է ենթադրելու, որ հայերին տեղահանելու համար ռազմական պատճառները համարվում էին երկրորդական, որ հիմնականը՝ նախ այս հարմար առիթն օգտագործելն էր, երբ դրսից չէր սպասվում որևէ միջամտություն, ի կատար ածելու վաղուց փայփայված ծրագիրը՝ հայ բնակչությանը հիմնավորապես թուլացնել, եթե ոչ՝ բնաջնջել: Դրա համար ցանկալի առիթ էին ընձեռում ռազմական պատճառները և երկրի տարբեր մասերում խոովարարական նկրտումները:

Ընդ որում՝ իշխանությունները կարծես թե արդարացված են համարում անմեղների հատուցման սկզբունքը այն մեղավորների արարքների համար, որոնց հնարավոր չէ բռնել: Եվրոպացու համար այդ սկզբունքը բացատրվում է նրանով, որ փաստացի բարեկրթության և բարոյականության վերաբերյալ թուրքի ըմբռնումները բոլորովին չեն համապատասխանում մերին:

Տեղահանման միջոցառումների իրականացման ժամանակ վալին մի անգամ վկայակոչեց գլխավոր հրամանատարի հրամանները, մեկ ուրիշ անգամ Կոստանդնուպոլսից եկած հրամանները: Դրան հակառակ,

գլխավոր հրամանատարը մշտապես պահանջում էր տեղահանման անխնա արագացումն ու ոչ հաճախ հրամաններ էր տալիս, որոնց կատարման պատասխանատվությունը հանձնարարում էր վալիին՝ առանց ցանկանալու կամ կարողանալու կատարման համար միջոցներ տրամադրել: Գլխավոր հրամանատարը պետք է, որ տեղյակ լիներ հայերի առաջին սպանությունների, ինչպես նաև ուղեկցող ժանդարմների պահվածքի մասին, նա գիտեր ճանապարհների անապահովության մասին, ոչինչ չէր անում այդ վտանգը վերացնելու համար, և, չնայած դրան, հայերի տարագրումը հրամայում էր հենց այդ ճանապարհներով: Այդ գործելակերպը, համենայնդեպս, համապատասխանում է հյուպատոսի մոտ նրա արտահայտած այն մտքին, թե պատերազմից հետո այլևս Հայկական հարց չի լինի:

Ամբողջ կատարվածից հետո կարելի է հաստատ ընդունել հետևյալը.

Հայերի արտաքսումն ու բնաջնջումը Կոստանդնուպոլսում որոշել է երիտթուրքական կոմիտեն, թեպետ կազմակերպել և իրականացկացել են զինվորականներն ու կամավորականները՝ հրոսակախմբերի աջակցությամբ: Բացի այդ՝ այստեղ էին Հիլմի բեյը, Շաքիր բեյը, Էրզրումի պատգամավոր Զեյֆուլա բեյը, նաև այստեղ ծառայող Թախսին բեյը, ոստիկանության պետ Խուլուսի բեյը և վերջապես՝ Մահմուդ Քյամիլ փաշան, որը միջոցառումների իրականացման ընթացքում ոստիկանության պետի հետ, իրեն դրսևորեց ամենաղաժան ձևով:

[Լիման ֆոն Սանդերսի նշումը, 9.9]

Կայզերական ռազմական կցորդ Նորին մեծություն պարոն գնդապետ ֆոն Լոսովին

1915 – 08 – 27 – DE – 003

Սկզբնաղբյուրը՝ PA-AA/R14087

Ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին՝ Տրապիզոնի հյուպատոս Բերգֆելդից

Զեկուցագիր № 39/ Մ. № գաղտնի զեկ. 407

Տրապիզոն, 27 օգոստոսի 1915

Հուլիսի 25-ի զեկուցագրի կապակցությամբ

Տրապիզոնից հայերի համընդհանուր տեղահանման ժամանակ միայն եզակի մարդիկ մնացին այստեղ՝ վալիի բանավոր կամ գրավոր թույլտվությամբ: Խոսքը Օտոմանյան բանկի ծխախոտային արտադրության վարչության ծառայողների մասին է՝ երկու ծառայողների կանայք և մի քանի միայնակ մնացած կանայք: Հիմա էլ գիշերը նրանց են աքսորում և, ըստ երևույթին, հենց քաղաքի մոտ էլ կսպանեն: Տրապիզոնի վալին, թեպետ երիտթուրքական կոմիտեի անդամ է, բայց ձգտում էր պահպանել իր անկախությունը և հնարավորինս թուլացնել հայերի դեմ ձեռնարկվող միջոցառումները: Թերևս նրա ազդեցությանը պետք է վերագրել այդ ընթացքում այստեղի հրահանգչին և կոմիտեի առաջնորդ Նաի բեյին գործից ազատելը: Ցավոք, նա ոչ մի աջակցություն չի ստանում իր ծառայողներից ու ոստիկանության մարմիններից: Նրանք, չնչին բացառություններով, ամենալկտի ձևով հարստանում են՝ հայերի տները լքելուց հետո: Այդպիսով վալին չկարողացավ հայերի կյանքի ու սեփականության համար պայքարել հանցագործների դեմ: Մյուս կողմից դա հակասում էր նրա էությանը՝ մնալ իր հավանությանը չարժանացած հանցագործությունների անզոր ականատես: Դրան պետք է վերագրել այն, որ նա զիջեց դիրքերը և աննշան պատրվակով մոտ երեք շաբաթով ուղևորվեց երկրի խորքը:

Նկարագրված իրադարձությունները ցավալի են ոչ միայն գերմանացիների և թուրքերի հեղինակության համար, այլև համամարդկային տեսակետից դրանք վտանգավոր են նաև այն առումով, որ կոմիտեի անդամները հաճույք կստանան այդքան հեշտությամբ հարստանալուց և այսուհետ նույն կերպ կվարվեն նաև հունական բնակչության հանդեպ, եթե հիմա չպատժվեն: Վերջինը հնարավոր է միայն Տրապիզոնի ռազմական դատարանի հիմնավորմամբ՝ այդ գործով նախնական հետաքննությամբ և վերջնական դատապարտմամբ, որի ընթացքում դատավորների դիրքորոշումը հեշտ չի լինելու: Նրանց ոչ միայն փորձելու են կաշառել հայերից խլած ավարի մի մասով, այլև կոմիտեի մարդկանց դեմ գործ հարուցելով՝ նրանք վտանգում են արատավորել իրենց ապագան:

Կոստանդնուպոլսի կայզերական դեսպանությանը հեռագրով տեղեկացրել եմ և այս զեկուցագրի պատճենն ուղարկել:

[Բերգֆելդ]

1915 – 08 – 29 – DE – 001

Սկզբնաղբյուրը՝ PA-AA /R14087
Հրապարակված՝ Գ և Հ փաստ. 226 (միայն հավելված 4)

Ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին՝ նախարար-ռեզիդենտ բարոն Մաքս ֆոն Օպենհայմից

Դամասկոս, 29 օգոստոսի 1915

Ջեմալ փաշան կրկին առիթն օգտագործեց ինձ հետ Հայկական հարցի մասին խոսելու համար և իր սպաներին հանձնարարեց՝ փաստաթղթերից ինձ տրամադրել նույնի զարգացումների վերաբերյալ առավել մանրամասն գրավոր ու բանավոր տվյալներ՝ 4-րդ բանակի գործողությունների տարածքում: Այդպես ինձ փոխանցեցին՝ հատկապես թարգմանաբար կցված, տեղահանված հայերի հետ վարվելու վերաբերյալ Ջեմալ փաշայի արձակած հրամանները: Ջեմալ փաշային խորհուրդ տվեցի՝ այստեղ և Կոստանդնուպոլսի կենտրոնական վարչությունում հավաքել տալ Հայկական հարցի վերաբերյալ ամբողջ նյութը և հարմար առիթի դեպքում դրանից հրատարակել փաստերով հաստատված հրապարակում, որպեսզի թուրքական կողմից կարողանան ճիշտ ժամանակին հակադրվել անկասկած իրենց սպասել չտվող մեղադրանքներին: Ասիական Թուրքիայում իմ ուղևորությունների ժամանակ ես ստիպված եմ եղել շատ գործ ունենալ հայերի հետ:

Ցավում եմ, որ նրանց մասին իմ դատողությունները (իմիջիայլոց, այս տարածքների շատ գերմանացիների մեծ մասի կարծիքին համապատասխան) շատ վատ են:

Նախկինում՝ ընդհուպ մինչև համիդյան ժամանակաշրջանը, հայերն իրենց թուրք տերերի հետ ավելի վատ հարաբերություններ չունեին, քան մյուս քրիստոնյա օտոմանները: Ընդհակառակը, հենց նրանք էին ընդգրկվել շատ պաշտոնների նշանակվելու համար, ընդհուպ մինչև նախարարներ: Խորացող բեկումն ու ատելությունը թուրքերի և հայերի միջև վերաբերում են առավել նոր ժամանակների: Ըստ իս, դրանք առաջին հերթին հետևանք են 19-րդ դարի կեսերին սկսված ամերիկյան ու անգլիական միսիոներական գործունեության, ինչպես նաև ռուսական,

անգլիական և ֆրանսիական հյուպատոսների սադրիչ աշխատանքի: Կիսով չափ կրթված հայերը, ովքեր հետո Եվրոպայում ու Ամերիկայում ծանոթացան ժամանակակից քաղաքակրթությանն ու տոգորվեցին հեղափոխական հայացքներով՝ ըստ էության հազարամյակներ ի վեր այլևս գոյություն չունեցող Հայկական մեծ թագավորության վերահաստատման մտքով, վերադառնալով հայրենիք, իրենց հայրենակիցներին պատվաստում էին հակակրանքի ու ժամանակակից հարաբերությունների հանդեպ դժգոհության բացիլով: Համիդյան ժամանակներում, որպես հայերի խարդավանքներին պատասխան գործողություն եղած ջարդերը, բնականաբար, նպաստեցին այն բանին, որ այդպես զարգացան՝ մասնավորապես հայերի ինքնատիպության շնորհիվ, շարունակ ավելի վատթարացող հարաբերություններն ինչպես իրենց և շուրջը բնակվող մահմեդական տարրերի միջև, այնպես էլ թուրքական կառավարության հետ: Անվիճելիորեն ճարպիկ, մասամբ նաև մահմեդականների համեմատությամբ հայերի մտավոր գերազանցությունը, ձեռներեցության մեջ նրանց հայտնի հնարամտությունը, խարդավանքների հանդեպ հակումը, մեծամտությունն ու հեղափոխական միտքը, իրենց շրջապատում առաջին հերթին նրանց կատարած տնական հրահրումն ու թուրքերի հանդեպ վերջին շրջանում բացահայտ դրսևորվող թշնամանքը, սրում են լարվածությունը:

Համիդյան վարչակարգը տապալելու համար երիտթուրքերի հետ Եվրոպայում մի շարք հայերի համատեղ աշխատանքը թվում էր, թե կրերի հարաբերությունների բարելավում: Նոր երիտթուրք պարոնները հայերի հանդեպ մեծագույն սիրալիրություն ցուցաբերեցին ինչպես Կոստանդնուպոլսում, այնպես էլ ծայրամասերում՝ նրանց հանձնելով բազմաթիվ նախարարություններ և այլ պաշտոններ:

Հակահեղափոխությունը հայերի համար կրկին բերեց ճգնաժամային շրջան, ջարդեր եղան Ադանայում: Բայցևայնպես, շատ շուտով հարաբերությունները կրկին լավացան: Վերջին տարիներին Սիրիայում և Միջագետքում ես շատ հայ զինվորներ և ժանդարմներ եմ տեսել, որոնց նրանց մահմեդական ընկերներն, իսկապես, եղբայրաբար էին վերաբերվում: Թուրքերի արտակարգ սիրալիր վերաբերմունքը տևեց ավելի երկար, քան Բալկանյան պատերազմը, չնայած այն ժամանակ քրիստոնյա զինվորների՝ հատկապես հայերի, հետ ունեցած տխուր փորձին: Նույնիսկ հիմա նեղուցի մոտ գտնվող մահմեդական զորամասերին հրամաններ են արձակել առանձին հայ սպաներ և ստացել են արիությունի շքանշաններ, մասամբ՝ շտաբի թուրք սպաներից: Միայն պատերազմի ավելի ուշ փուլում հայ զինվորներին զինաթափեցին և բաշխեցին աշխատանքային գումարտակներին:

Այնուհանդերձ, դեռևս այս պատերազմի սկզբում հայերն, ըստ էության, անցան Թուրքիայի և Գերմանիայի թշնամիների կողմը: Մինչև Թուրքիայի պատերազմ հայտարարելը և հետո, նրանք մեծ թվով, որպես կամավորներ անցան ֆրանսիացիների, անգլիացիների և ռուսների կողմը: Փարիզում Անտանտի շահերի օգտին Շերիֆ փաշայի նյութած դավադրության մեջ հայերը մեծ դեր խաղացին: Կովկասում նրանք արել են ամեն հնարավոր բան՝ ռուսներին աջակցելու համար, ամբողջ գյուղեր անցան թշնամու կողմը, նրանց ցուցաբերեցին մեծ ծառայություններ և այլն: Վանի տարածքում և արևելյան Փոքր Ասիայում շուտով պարզ դարձավ, որ խոսքը թշնամու հետ վաղուց ի վեր նախապատրաստված գործողությունների մասին է՝ թուրքական տերությունը տապալելու համար: Վանի իրադարձությունները հայտնի են: Շատ թուրք ծառայողներ, սպաներ և անհատ անձինք ինձ հայտնել են արյունալի, նողկալի կոտորածների մասին, որոնք հայերը գործել են մահմեդականների հանդեպ Վանում և նրա շրջակայքում: Ռուս և հայ զինվորներն ու սպաները ճնշում էին թուրքահայերին: Թուրքերը մարզի հեռավոր մասերում ստիպված էին կռվել հայերի դեմ, որոնք կազմել էին կանոնավոր զորաջոկատներ՝ ռուսական գերագույն հրամանատարության ներքո: Դիարբեքիրում և մյուս փոքրասիական քաղաքներում հայտնաբերվեցին ռազմականորեն ստորաբաժանված դավադրության թելերը. ամենահեղինակավոր հայերը նշանակված էին որպես հրամանատարներ, գնդապետներ և այլն: Երևելիների և նույնիսկ եպիսկոպոսների (Մարդին) նկուղներում, ասում են, գտել են ռուսական զենք ու ռումբեր, ինչպես նաև համազգեստի պարագաներ, որպեսզի հայերին ճանաչելի դարձնեն որպես ազատության ու Ռուսաստանի համար պայքարողներ: Բնորոշ է Լոզանի թերթերից մեկում Վանի իրադարձությունների, ինչպես նաև Զեյթունի ու Ալեքսանդրետի ծովածոցի խարդավանքների մասին հայտարարությունը (որի մասին ինձ ասաց Ջեմալ փաշան), նախքան այդ ամենի կատարվելը:

Ադանայի, Զեյթունի և այլն, արևմտյան հայերի կապը արևելյան Փոքր Ասիայի հայերի հետ ծագեց տարբեր հանցանշաններով: Զեյթունում՝ Մարաշից դեպի հյուսիս հայկական լեռնային այդ բնում, այս գար-

նանը կազմակերպվել է հրոսակախումբ՝ ուժեղացած դասալիք զինվորներով, որը մարտի վերջին իր հարձակումների հանդգնությունը տարածեց նույնիսկ Մարաշից դեպի Զեյթուն ճանապարհին ժանդարմների ուղեկցած զինամթերքի փոխադրամիջոցի վրա: Պահանջվեց 4 գումարտակ ուղարկել, որպեսզի քշեն քաղաքի մերձակայքի մի վանքում ամրացած ապստամբներին: Միաժամանակ Կիլիկիայի լեռներում նկատելի դարձան ավելի աշխուժացած հրոսակախմբերը: Շատ անգամ Օսմանիե-Ռաջու էտապային ուղու վրա ժանդարմներին ու զինվորներին ծուղակն էին գցում ու սպանում: Ամենատարբեր կասկածելի նշաններ էին նկատվում հատկապես Ալեքսանդրետի ծովածոցի ափամերձ բնակչության մեջ՝ թշնամու ժամանակավոր ցամաք դուրս գալու ժամանակ, ինչը հանգեցրեց Ալեքսաղրետի մոտի երկաթուղու ավերմանը. անկասկած ցուցաբերվել են լրտեսական և այլ աջակցող ծառայություններ: Դյորթյոլում բռնել են մի հայ լրտեսի, որը՝ մատակարարված հարուստ դրամական միջոցներով, անգլիական «Դորիս» հածանավով ժամանել էր Կիպրոսից: Նույն վայրում հայտնաբերել են թաքցրած արկղեր՝ իտալական ծագում ունեցող ռազմամթերքով:

Այդ և այլ առանձին դեպքերի կուտակումը թուրքական կարևոր վայրերում պետք է որ մտավախություն առաջացներ, որ այստեղ էլ՝ արևմուտքում, թշնամու ցամաք դուրս գալու դեպքում ընդհանուր ապստամբության պարագայում հայերը կմիանային թշնամուն: Առաջին հերթին հենց այստեղ՝ Ալեքսաղրետի ծովախորշում և Մերսինի մոտ, պետք էր սպասել ցամաք դուրս գալուն: Հայկական մեծ ապստամբության հետևանքները կարող էին լինել անկանխատեսելի: Տիրելով Զեյթունի և Ջիհանի լեռնանցքներին և լեռնային Կիլիկիայի տարածքին, թշնամին Փոքր Ասիան և Եվրոպական Թուրքիան կբաժաներ կայսրության ամբողջ հարավային և հարավ-արևելյան կեսից. եգիպտական ռազմաբշավը՝ մինչև զավթիչներին կրկին քշելը, կդառնար անհնարին՝ բոլորովին չխոսելով կայսրության արաբական շրջանների որոշակի մասերի վրա հնարավոր ազդեցությունների մասին:

Դա պետք էր բոլոր միջոցներով կանխել, իսկ դա, ինչպես ինձ միշտ հավաստիացնում էին Ջեմալ փաշան և նրա սպաները, կարող էր վճռականապես կատարվել միայն այն ժամանակ, եթե ամենուրեք հայերի վտանգավոր մեծամասնությունը վերածեին անվտանգ փոքրամասնության և ընդհանրապես հեռացնեին հատկապես ռազմավարական

վտանգավոր գոտուց: Այդ նպատակով, պետք է այն բանից հետո, երբ արդեն Կոստանդնուպոլսում հիմնավորապես որոշեցին հայերի զանգվածային տեղահանումները, բանակի 4-րդ կորպուսի տարածքում ծովափից երկրի խորքն աքսորվեին սկզբում գյուղերի հայ բնակիչները (բայց ոչ՝ մեծ քաղաքների), փոքր խմբերով՝ առնվազն 25-30 ընտանիքներով, այնպես, որ ցանկացած վերամիավորում անհնար դառնար:

Հայերի դեմ ամենախիստ գործողություններ ձեռնարկելիս՝ ինձ բացատրեց Ջեմալը, ղեկավարվելով հիշյալ փաստաթղթերով, առաջին իսկ պահից ինքը հրամաններ է արձակել, որպեսզի պետության շահերից բխող միջոցառումներն անցկացնելիս խուսափեն անհարկի ամեն տեսակ դաժանությունից և, բացի այդ, որպեսզի կանխեն քաղաքացիական բնակչության ցանկացած միջամտություն և դրանով իսկ՝ ջարդերը: Ամեն ինչ պետք է կատարվեր միայն զինվորական և քաղաքացիական իշխանությունների միջոցով:

Առաջին փաստաթուղթը (Հավելված 1) մարտի 16-ի (հին տոմարով) մի մանիֆեստ է, որի նպատակն էր Զեյթունի շրջակայքում պատժել և սպառնալիքներով խափանել մահմեդական բնակչության ամեն դեպքում արդարացված հուզումների պոռթկումներն ընդդեմ այդ քաղաքի խիստ վարկաբեկված հայերի: Ապրիլի 2-ին (հին տոմարով) դուրս եկավ Ջեմալ փաշայի՝ համընդհանուր տեղահանման վերաբերյալ հրամանը (Հավելված 2), որն սկզբում կիրառվեց Զեյթունի նկատմամբ: Տեղահանվածներին այստեղից հասցրին Կոնիա: Այնուհետև աստիճանաբար՝ ուժեղացված խստությամբ և արագացված տեմպերով, մաքրեցին ծովափը, երբ Իտալիայի՝ եվրոպական պատերազմի մեջ մտնելով, Թուրքիայի հանդեպ դեռևս անորոշ նրա վերաբերմունքին ավելացավ նաև իտալացիների ցամաք դուրս գալու՝ մինչ այդ էլ առկա վտանգը: Այդպես մաքրազատեցին Դյոթյոլը, Էրզինը, Հասանբեյլին, Հաճնը, Ալբիստանը ու այլ վայրեր ու այնտեղի հայերին քշեցին հյուսիսային Միջագետք, Ռուքքայի տարածք՝ Եփրատի մերձակայքը: Նաև այստեղ է Ջեմալ փաշայի լուրջ կամքը՝ խուսափել օրինազանցություններից, վավերացված մի շարք հրամանագրերով (Հավելված 3. ապրիլի 28-ի հրամանագիրը, ապրիլի 25-ի, մայիսի 4-ի ու հունիսի 10-ի՝ հին տոմարով): Որ, չնայած դրան, զինվորական ու քաղաքացիական ստորին օղակներում եղել են չարաշահումներ առկա հանգամանքներում, ակնհայտ է: Սիսի պատրիարքի՝ Ջեմալ փաշային ուղղած բողոքներից մեկն էլ հենց եղել է Ջեմալ փաշայի այս տարվա հունիսին Հալեպ ուղևորվելու հիմնական

պատճառը: Ջեմալ փաշան անմիջապես հրահանգել է հետաքննություններ անցկացնել, բայց մինչև դրանց ավարտվելը արձակել է խիստ հրաման՝ նկատի ունեցած վիլայեթների համար (Հավելված 4), որում Սիսի պատրիարքի հայտնած չարաշահումները, որոնք նա անձամբ ճշգրիտ թվարկել է, առանց այլևայլի համարվել են իրոք ճշմարտացի, կրկին խոստացրել է բոլոր իշխանությունների պատասխանատվությունը՝ աքսորված հայերի կյանքի, պատվի ու սեփականության համար և այս հրամանագրի կատարման հսկողությունը հանձնարարել է հատուկ, չգրանցված վերստուգող սպաներին:

Սկզբում հայերը չէին դիմադրում իրենց տեղահանելիս: Բայց վերջին շրջանում զինվորական իշխանություններն իրենց առաջադրանքը կատարելիս շատ անգամ առնչվում էին դժվարությունների, հատկապես Մարաշ քաղաքի հայկական մասը դատարկելիս, որտեղից 500-600 տեղահանվածներ փախան դեպի Ֆունշլիկ (Մարաշից դեպի հարավ), որտեղ խրամատավորվեցին: Այնտեղ էլ նրանց մինչև վերջին մարդը կոտորեցին նրանց դեմ ուղարկված զինվորականները: Այնուհետև, որպեսզի խույս տան ձերբակալությունից, Անտիոքի հայերը թաքնվեցին սարերում, որտեղ նրանց դեռևս փնտրում են: Ներկայումս ընթանում է 12000 հայերի տեղափոխումը Դամասկոսով դեպի հարավ, ավելի ճիշտ՝ դեպի հարավային Հաուրան և Քերակից դեպի արևելք ընկած տարածք՝ Հեջազի երկաթուղու մոտ: Այդպիսի տեղափոխում անձամբ տեսել եմ ուշ երեկոյան Դամասկոսի մոտով անցնելիս: Դրանք մոտավորապես 500 մարդ էին՝ տարբեր տարիքի: Նրանք գալիս էին Հալեպից՝ սայլերով և բոլոր հնարավոր բեռնակիր անասուններով: Ոչ ոք հետիոտն չէր գնում, մի քանի պնդակազմ ուղտերի վրա բարձած էր նրանց ունեցվածքը: Քարավանն ուղեկցում էին ժանդարմները: Երկաթուղային տեղափոխումը ցանկալի է, բայց հազիվ թե հնարավոր լինի մեծ դժվարությունների պայմաններում, որոնց պետք է առնչվի երկաթուղին, հատկապես նկատի ունենալով մեքենաների համար վառելանյութի հնարավորությունները: Ադանայի և Հալեպի միջակայքում էլ տեսա հայերի, որոնք ճամփա էին ընկել նույն կերպ:

Ինչպես նախկինում, հայ ժողովրդին իր հայրենիքից արտաքսելու, տեղափոխման և վերաբնակեցման ժամանակ, անշուշտ պատահում են դաժանություններ, անխուսափելի վայրագություններ, սարսափելի ընտանեկան դրամաներ: Նոր բնակավայրեր տրամադրելիս, իհարկե, ոչ միշտ են մտածում անվտանգության ու հայերի գոյատևման հետագա

հնարավորությունների մասին: Դա չի եղել նույնիսկ նախկին ժամանակներում մուհաջիրների՝ կրոնական պատճառներով քրիստոնյա զավթիչների գրաված տարածքներից փախած մահմեդականների օրոք: Ինձ պետք է միայն հիշեցնել 40 տարի առաջ Ռաս ուլ Այնի մոտ (իմ Թել Հալաֆի) բնակություն հաստատած 40.000 չեչենների (չերքեզների) մասին, որոնց թիվը շրջակա քոչվոր բեդվին-ավազակների և այլնի հետ արյունալի հաշվեհարդար տեսնելու տենդի պատճառով կրճատվեց ընդհուպ մինչև 1000 հոգու: Մարդկային կարեկցանքը եվրոպացուն, անշուշտ, պարտավորեցնում է, այնուամենայնիվ, ողբալ այդքան շատ անմեղ տառապողների ճակատագիրը և մտածել օգնություն ցուցաբերելու մասին: Համենայնդեպս, հիմնվելով պետական մտածողության դրդապատճառների վրա՝ պետք է հասկանալ, որ այս դժվարին ժամանակներում թուրքերը ձգտում են բոլոր միջոցներով պաշտպանվել հայերի վտանգից:

Գերմանացիները, որոնց հետ խոսել եմ Ադանայի տարածքում, առաջին հերթին՝ ավագ ինժեներ Վինկլերը, ինչպես նաև ավելի ուշ՝ ավագ ինժեներ Ֆյոլները՝ Հալեպում, համակարծիք էին ինձ, որ թուրքերն այս տարածքում ինքնապահպանման պարտադրանքով ստիպված էին միջոցներ ձեռնարկել ընդդեմ հայերի: Թուրքերն իրենց հերթին հիմա պայքարում են իրենց գոյության համար: Նրանք, ովքեր հրահրել են հայերին, այս պահին միավորվել են Թուրքիայի թշնամիների հետ, առաջին հերթին հենց իրենք էլ մեղավոր են նրանց դժբախտության համար: Թուրք իշխանավորների աններելի անփութությունը կլիներ, եթե նրանք Վանի փորձից հետո իրենց ունեցած բոլոր միջոցներով չկանխեին, քանի դեռ ժամանակ կար այդպիսի դավաճանության հնարավորությունն արդեն իսկ արևմուտքում, որը կարող էր լինել ավելի ճակատագրական:

Անշուշտ, հայերի ծանր ճակատագիրը և, թերևս, դրանց իրականացման ընթացքում եղած անխուսափելի դաժանությունները մեր թշնամիները որպես մեղք բարդում են մեզ՝ գերմանացիներիս վրա, ինչպես այս պատերազմում նաև այլ խայտառակ բծեր անարդարացիորեն փորձում են կպցնել մեզ: Ես ապրում եմ այն համոզմունքով, որ մենք ո՛չ Կոստանդնուպոլսում, ո՛չ էլ ծայրամասերում ի վիճակի չէինք փոխել թուրքական կառավարության՝ հայերից պաշտպանվելու, երևի թե նրանց նույնիսկ ամբողջովին կամ մասամբ վերացնելու անհողդողդ կամքը: Որպես Թուրքիայի դաշնակիցներ, մենք իրավունք չունենք հայերի դեմ նրանց նախազգուշական միջոցառումների ժամանակ հակադրվել,

հատկապես 4-րդ բանակի տարածքում: Բարեկամական հորդորները՝ անվտանգության միջոցառումներն իրականացնելիս վարվել հնարավորին չափ մեղմ, գերմանական կողմից միշտ եղել են, ես ինքս ջանք չեմ խնայել դրանց համար:

Ես չեմ կիսում այն տեսակետը, թե հայերի տեղահանումը կարող էր արաբներին դրդել ապստամբության: Մահմեդական արաբները հակառակ են բնիկ քրիստոնյաներին, հատկապես՝ հայերին: Մյուս քրիստոնյա օտոմանները, թեպետ բոլորն էլ առանց բացառության թշնամաբար են տրամադրված թուրքերին, այնուամենայնիվ, այս պատերազմում չեն գործի, հատկապես եթե հաղթանակը լինի թուրքերի և նրա դաշնակիցների կողմը:

Մեզ՝ գերմանացիներիս հանդեպ, մտածող հայերը՝ անկախ այն բանից՝ ուղղափառ են, կաթոլիկ թե բողոքական, անտեսելով չնչին բացառությունները, իրենց հոգու խորքում միշտ թշնամաբար են տրամադրված. նրանք գիտեին, որ մենք ցանկանում էինք ուժեղացնել թուրքական կայսրությունը, մինչդեռ իրենք ձգտում էին նրա ոչնչացմանը:

Օպենհայմ

1915 – 09 – 03 – DE – 002

Սկզբնաղբյուրը՝ PA-AA-/R1487, R14095 Կոստ. դեսպ. 170

Ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին՝ Հալեպի հյուպատոս Ռյոսլերից

K № 90

Հալեպ, 3 սեպտեմբերի 1915

K № 90/Հ № 1950 նամակին կից

Հավելված 1

Պատճեն

Ուրֆա, 23 օգոստոսի 1915թ

Շատ հարգելի պարոն հյուպատոս,

Ամենօրյա մահաբեր տեղափոխումը տևեց մինչև օգոստոսի 19-ը: Այդ օրը ոստիկանությունը խուզարկություններ անցկացրեց տարբեր հայկա-

կան տներում: Մի տան մեջ նրանք գտան մաուզերի մի քանի փամփուշտ: Հետագա խուզարկումների ժամանակ հանկարծակի մի թաքստոցի դուռը բացվեց և հնչեց երեք կրակոց. մի ոստիկան, մի ժանդարմ և մի քանի զինվոր մեռած ընկան: Մյուսները փախան և անմիջապես լուր տարածեցին, թե յուրաքանչյուր մուսուլման պետք է զինվի, որովհետև գյավուրները հարձակվում են մուսուլմանների վրա: Անմիջապես բոլոր կողմերից հայերի վրա հարձակվեց խառնամբոխը և սկսեց իսկական կոտորած: Զոհ դարձան, թերևս, 200 մարդ՝ հայ ու սիրիացի, մինչև գիշերը վրա հասավ: Հաջորդ առավոտյան իշխանությունները ղեկը կրկին իրենց ձեռքը վերցրին, և խառնամբոխն ստիպված էր հանգստանալ: Այն ժամանակվանից ի վեր հանգիստ է: Բայց ոչ մի հայ չի երևում փողոցում, թեև տեղի կառավարությունն անվտանգություն է խոստանում:

Լուրերից պարզ դարձավ, որ երկու .... Խալիլ և Ահմեդ բեյերը, որոնց մասին Ձեզ արդեն գրել եմ, մեկնել են: Տա Աստված, որ դա ճիշտ լինի: Քարաքոփրյուում՝ Ուրֆայից մեկ ժամվա ճամփա դեպի հյուսիս, Հարանյան հարթավայրում հարյուրավոր հայեր աշխատում են ճանապարհաշինարարությունում, ասում են, որ այս օրերին նրանց բոլորին գնդակահարել են: Բայց այդ լուրը վերջնականապես հաստատված չէ: Տա Աստված, որ դա ճիշտ չլինի:

Հ. Գ. Թաքստոցից հնչած կրակոցներն արձակել էր մի հայ, որը ժամանակին զենքով հանդերձ փախել էր բանակից:

Հավելված 3

№ 1806

Դամասկոսի կայզերական հյուպատոսությանը

Հալեպ, 17 օգոստոսի 1915

Այն բանից հետո, երբ կառավարությունը որոշեց հայերից մաքրազատել նաև Մարաշ, Այնթապ, Տարսուս, Ադանա, Մերսինա քաղաքները և Հալեպի վիլայեթի ափամերձ շրջանը, 4-րդ բանակի գործողությունների տարածքում տեղահանումից տուժած հայերի թիվը գնահատվում է թերևս 120.000-ից մինչև 150.000, նրանցից 15.000-ը գտնվում են Դեր էլ Զորում, 10.000-ն այստեղ՝ Հալեպում:

Մինչ արևելյան վիլայեթներից (3-րդ բանակի տարածքը) այստեղ են ժամանում օրական 300-400 կին ու երեխա, երկաթուղով Այնթապից ու Մարաշից եկող հայերին առանց կանգառի ուղարկում են ավելի հեռու՝ դեպի հարավ: Սկզբում ասում էին, որ նրանց պետք է տանեն Դամասկոս, որպեսզի այնտեղից բաշխեն Հաուրանում: Փաստն այն է, որ Համայում հազարավորները լքելու են երկաթուղին: Ըստ երևույթին, նրանց այնտեղից կուղարկեն Պալմիրա:

Ես շնորհակալ կլինեի հաճելի տեղեկության համար, եթե հայերը Համայից Դամասկոս հասնեին **սայլուղիներով**՝ երկաթուղով տեղափոխելու փոխարեն: Դա համահունչ կլիներ այն դաժանությանը, որով արևելքի հայերը շատ անգամ ավելի ստիպված կլինեին հետիոտն քայլել դեպի Հալեպ, փոխանակ Ռաս ուլ Այնից կամ այն կայաններից, որտեղ հասնում են երկաթուղուն, նրանց գնացքով տեղափոխելու (ավելի քան 300 կմ):

Ես բացառում եմ, թե կառավարությունն ի վիճակի է աքսորյալների զանգվածը կերակրելու, մինչդեռ նրանց զրկել են իրենց գոյությունն ապահովելու ամեն մի հնարավորությունից: Ոչ միայն քաղաքացիներն են գյուղում անօգնական, այլև գյուղացիներին էլ ամեն ինչ չի հերիքում՝ սկսած տանիքից մինչև հողագործական գործիքները, անասուններն ու սերմացուն:

Ռյոսլեր

Հավելված 4

Մի հայի զեկուցագիրը

Հալեպ, 23 օգոստոսի 1915

Էրզրումի, Սվազի, Դիարբեքիրի և Խարպուտի վիլայեթներից տեղահանվածներից 6000-ը Հալեպում են, 3000-ը՝ Համայում և շրջակայքում, 3000-ը՝ Դեր էլ Զորում և 1000-ը՝ Ռաս ուլ Այնում: Այդ 13.000 այրիներին ու երեխաներին ստիպել են 2-ից 5 ամիս շրջել այդտեղ: Հավաստի աղբյուրից գիտենք, որ այն մարդկանց թիվը, ովքեր դեռ պետք է ժամանեն այստեղ, անցնում է 60.000-ից:

Այս 4 վիլայեթներից եկած այրիներին ու երեխաներին անցկացրել են սարերով ու դաշտավայրերով, ամենաամայի ու ամենավատ ճանապարհներով: 2-ից 5 ամսում միայն մի քանի խումբ է 3 թե 4 անգամ կառավարությունից հաց ստացել: Ամբողջովին թալանել են նրանց փողերն ու ունեցվածքը:

Դիարբեքիրի վիլայեթի Բաքրամադենից աքսորվել են 35 հարուստ և ունևոր ընտանիք, նաև այրիներ, և նրանց 15 օր է պետք եղել՝ Դիարբեքիրից Ուրֆա գալու համար: Ուղեկցող սպան խուզարկել է նրանց հագուստը և 300 թուրքական ֆունտից բացի խլել է նաև շատ զարդեր: Ուղևորության ընթացքում նրանց խուզարկել է ևս մի քանի անգամ՝ բացարձակապես ոչինչ չթողնելով:

Խարպուտից արտաքսվածներից երրորդ խումբը բաղկացած էր 1500 հոգուց, որոնք չորս օրում հասան Արղեն: Նրանց ուղեկցող սպան այնտեղ ասաց, որ իբր հրաման է եղել, որպեսզի բոլոր տղամարդիկ գնան բերքահավաքի, արական սեռի բոլոր անձանց՝ 11 տարեկանից բարձր, հավաքել և տարել են մի իջևանատուն: Կանայք և երեխաները պետք է շարունակեին ճանապարհը: 3 ժամ տևած քայլերթից հետո նա հրամայեց երթադադար բաց երկնքի տակ, ինքն անձամբ ձիով վերադարձավ Արղեն և 7-8 ժամ հետո երեկոյան վերադարձավ կանանց ու երեխաների մոտ և ասաց նրանց. «Տղամարդիկ գնացել են բերքահավաքի»: Հաջորդ առավոտյան, 2 ժամ գնալուց հետո, նրանք եկան քրդական մի գյուղ, նրանց ուղեկցող սպան ասաց. «Այն կանայք, ովքեր իրենց մոտ փող կամ զարդեղեն ունեն, պետք է անմիջապես դրանք ինձ տան, ով իր մոտ 40-ից ավել պիաստր կպահի, կգնդակահարվի: Փողերն ու զարդերը, որոնք հիմա ինձ կտաք, Դիարբեքիրում հետ կստանաք»: Այդ խոստումից հետո կանայք հանձնեցին իրենց փողի ու զարդերի մեծ մասը: Երկրորդ երեկոյան նույն սպան խուզարկեց հագուստը, կանանց ու աղջիկների ամբողջ մարմինը, նույնիսկ նրանց հանել տվեց ներքնաշորերը և ձեռքերով ու աչքերով փող էր փնտրում: 10 ժանդարմ, որոնք այդ սպայի հետ էին, ամբողջ ուղևորության ընթացքում անհանգստացնում էին կանանց և ասում էին. «Ձեր փողը մեզ տվեք, ոչ թե սպային: Դիարբեքիրում մենք ձեզ կվերադարձնենք, իսկ սպան ուզում է ամեն ինչ իրեն պահել»: Դիարբեքիր ժամանելով նրանք ոչինչ հետ չստացան, մի օր մնացին Դիարբեքիրում և հաջորդ օրը պետք է շարունակեին իրենց ճամփան: Հենց այնտեղ սպաներն ու ժանդարմներն առևանգեցին երիտասարդ կանանց ու աղջիկներին: Երբ նրանք Դիարբեքիրից դուրս եկան, մի քանի ժանդարմի հետ եկավ այն սպան, որը մինչև այդտեղ ուղեկցել էր նրանց, իր համար ընտրեց մի քանի գեղեցիկ աղջիկ ու տղա և մնացածներին թողեց 6-7 ժանդարմների հետ, իսկ ինքն իր ավարով հե-

ռացավ: Մարդինի ճանապարհին ժանդարմները տարագիրներից խլեցին նրանց չնչին ունեցվածքը, մի կտոր հացը և մնացած մի քանի զարդեղենը: Քանի որ ժանդարմները գիտեին, որ աքսորյալներն իրենց մոտ այլևս փող չունեն, նրանց տանջում էին Մարդինից Ռաս ուլ Այն 4 օր տևած ամբողջ ուղևորության ընթացքում՝ նրանց չտալով անգամ խմելու ջուր: Շատ երիտասարդ աղջիկների ու տղաների նրանք վաճառեցին քրդերին և այլոց, կամ պարզապես նվիրաբերեցին, այնպես որ 1500 հոգուց, որոնց արտաքսել էին Խարպուտից, Ռաս ուլ Այն ժամանեցին միայն 500-ը: Մոտ 1000-ը կամ ուժասպառ ընկել էին ճանապարհին, կամ նրանց առևանգել էին կամ՝ վաճառել, շատերին էլ պարզապես սպանել էին: Բոլոր կանանց՝ առանց բացառության թալանեցին, շատերը ոչ պակաս քան 9 անգամ ստիպված էին հանել ներքնաշորերը և հանդուրժել իրենց ուղեկցող տարբեր սպաների ու ժանդարմների խուզարկումներն ու զննումները: Խարպուտից արտաքսվածներն ստիպված էին տանել հնարավոր ամեն տեսակ ստորություն ու չար արարք՝ միմիայն սպաներից ու ժանդարմներից:

Մուդուրգայից՝ Էրզրումին ամենամոտ գյուղից, ամբողջ բնակչությանը՝ մոտ 2300 հոգի, արտաքսեցին: Ճանապարհին տղամարդկանց բաժանեցին կանանցից, վերջիններին տարան ոչ թե գյուղական ապահով ճանապարհով, այլ սարերով և ամբողջ ուղևորության ընթացքում նրանք 4 անգամ իշխանությունից ստացան մեկական բուլկի: Ամբողջ 2 օր մի կաթիլ ջուր չստացան, թեպետ ջուր կար, իսկ ծարավից կիսամեռ կանանց և երեխաներին ժանդարմները քշում էին ավելի հեռու, ամեն օր 30-40 կին ու երեխա ուժասպառ մեռնում էին ճանապարհին, իսկ նրանցից մի քանիսին գնդակահարեցին ուղեկցող ժանդարմները: Տարագիրների մեջ չկա որևէ մեկը, որին 7-10 անգամ կողոպտած չլինեն: Ժանդարմներն ու նրանց թույլտվությամբ՝ նաև քրդերը, բռնաբարում էին կանանց ու աղջիկներին: Այդ 2300-ից միայն 4 կին, 4 աղջիկ և 3 տղա ժամանեցին Հալեպ՝ լրիվ թշվառ վիճակում:

Չնայած, որ Հալեպում, Համայում, Դեր էլ Զորում ու Ռաս ուլ Այնում գտնվող այրիների ու որբերի թիվը, հազիվ 13.000 է, Հալեպ աքսորվածների թիվը, երբ նրանք լքել էին Էրզրումի, Սվազի, Խարպուտի ու Դիարբեքիրի վիլայեթները, կազմում էր 35.000-40.000: Վերոնշյալ թվից երևում է, որ 65% -ը 2-5 ամսում սպանվել կամ զոհվել է սովից ու ծարավից: Այդ 65%-ի մեջ 39% 10-11 տարեկանից բարձր, արական սեռի ներկայացուցիչներ՝ և կանայք (8%), 13% երիտասարդ կանայք ու աղջիկներ, իսկ 5%

տղաների առևանգել են՝ ժանդարմների համաձայնությամբ: Մնացած մասը, այսինքն՝ 35% կանայք և երեխաները ժամանել են Հալեպ: 100 ժամանածներից 72-ը հիվանդ էին՝ ոտքերին թարախակալած վերքեր: Մոտ 6000 այրիներն ու որբերը, որոնք Հալեպում են, բացառությամբ 40 կամ 50 հոգու, բոբիկ են: Նրանց կոշիկները՝ ուղեկցող ժանդարմների թույլտվությամբ, վերցրել են քրդերն ու թուրքերը և յուրաքանչյուր առանձին հագուստի մաս ու անկողնային պարագա բազմաթիվ անգամ խուզարկել են: Պետք է նաև նշել, որ բացի առևանգված երիտասարդ կանանցից ու աղջիկներից, 25%-ին, որոնք քիչ թե շատ ավելի լավ տեսք ունեին, իրենց ուղեկցող ժանդարմները, քրդերն ու թուրքերը ցերեկը կամ գիշերը բռնի կողքի էին քաշել ու բռնաբարել, մի քանի ավելի գեղեցիկներին՝ նույնիսկ 10-15 տղամարդ՝ հերթով: Կանանց ու աղջիկների մի ամբողջ խումբ այդ կերպ պառկած ընկած մնաց ճանապարհին:

Հալեպ ժամանած բոլոր 6000 այրիների ու որբերի համար անհնար է հագուստ և անկողնային պարագաներ ճարել: Այստեղի հայերը և մի քանի բարեկամներ վերջին ամիսներին փողով, հագուստի պարագաներով, անկողնով և այլնով, որքան որ կարողացան, օգնեցին Հալեպից ու Ադանայից, Մարաշի վիլայեթից ու շրջակայքից տեղահանված 50.000 հայերին, այդպիսով նոր ժամանածների համար օգնության աղբյուրներն սպառվեցին: Ամեն օր թշվառներն ստանում են մի բուլկի (300 գր), հազարավոր հիվանդներ ստանում են դեղորայք և վիրակապվում են: Հալեպի տարագիրների համար ամենօրյա ծախսերը կազմում են 50 ֆունտ և դա չի հերիքում, որպեսզի փրկվի բոլորի կյանքը: Այս վերջին 10 օրերին՝ 11-ից մինչև օգոստոսի 21-ը, միջին թվով մեռնում էր 25 մարդ, իսկ մեռնողների թիվը դեռևս բազմապատկվելու է:

Լրացում. Մինչև սեպտեմբերի 2-ն էլ մահվան դեպքերի ամենօրյա թիվը միջին հաշվով կազմել է 25 հոգի:

Հավելված 5

Հալեպ, 2 սեպտեմբերի 1915

Հուլիսի 28-ից մինչև օգոստոսի 20-ն իմ ֆերմայի գործերով ուղևորվեցի Մարաշ: Բեշգյոզում՝ Այնթապի ու Քիլիսի միջակայքում, գյուղի բնակիչները զրուցում էին այն մասին, որ վաղվանից Այնթապում էլ կսկսվի հայերի տեղահանումը: Որոշ ժամանակ անց նրանց միացավ լավ հագնված մի

պարոն, դատելով տեսքից՝ չերքեզ, կիսով չափ քաղաքացիական, կիսով չափ սպայական հագուստով, և տեղեկացավ, թե քաղաքի ո՞ր մասից են մարդիկ հեռանում, ի՞նչ ճանապարհով, ի՞նչ մարդիկ, կա՞ն այնպիսիք, որոնք ինչ-որ բան ունեն: Երբ ներկաներից մեկը նրան հարցրեց՝ քաղաքացիական ա՞նձ է, թե՞ զինվորական, նա քմծիծաղով պատասխանեց. «Մի՞թե կա ավելի նպաստավոր առիթ զինվորական լինելու, քան հիմա»: Իսկ երբ նույն մարդն հետո ավելացրեց. «Այս անգամ Գերմանիան այս անհավատներին, խոզերին (գյավուրները, հրնզրները) այնպիսի դաս տվեց, որը նրանք չեն մոռանա», ես չդիմացա և պատասխանեցի նրան, որ դա կնշանակի վարկաբեկել գերմանացու անունը, եթե գերմանացու անունը հիշատակվում է այդպիսի գործերում, որոնք ես հենց նոր ստիպված եղա լսել: Վերադառնալիս ես իմացա, որ Այնթապից դուրս եկած երկրորդ քարավանը, ինչպես ինձ հավաստիացրին ամենատարբեր կողմերից, մինչև վերջին շապիկը թալանված է, մի քանի կառավարական պետական պաշտոնյայի համաձայնությամբ, որոնց հետ վերոհիշյալ պարոնը, ըստ երևույթին, պետք է որ նույնպես կապ ունենա: Այդ ավազակային հարձակման մասին հայտնել եմ ավելի շուտ: Հալեպի վալին պատժիչ միջոցներ ձեռնարկեց: Այնթապի մութասարիֆին պաշտոնանկ արեցին:

Այնթապից 3 ժամվա ճանապարհ դեպի հյուսիս, Սամ գյուղի բնակիչները Չյուրյուքոզից տեղահանվածների թափորից բռնի խլել են մի աղջկա: 5 մեջիդիեի դիմաց աղջկան վերադարձրել են: 3 մեջիդ. հավաքել էին հենց տարագիրները՝ ամբողջովին թշվառ մարդիկ, 2 մեջիդ. վճարել էին Այնթապի բարեկամները, աղջկան առևանգողը նրանց հետ մինչև Այնթապ եկավ, որպեսզի փողն ստանա:

Քարաբյուրուքում՝ Այնթապի և Մարաշի միջակայքում, ես հանդիպեցի հայերի թափորի՝ մոտ 40 կին ու երեխա, 5-6 տղամարդ: Նրանց հետ սերտ՝ մոտավորապես 200 մետր հեռավորությամբ, կիպ գնում էին նոր հագնված 100 զինվոր: Կանանց մեջ կար մի երիտասարդ աղջիկ՝ ուսուցչուհի, որը մի քանի տարի է, ինչ աշխատում էր գերմանացիների մոտ, նա նոր էր առողջացել տիֆով ծանր հիվանդանալուց հետո: Նրան և մի երիտասարդ կնոջ, որի ամուսինն այդ ժամանակ որպես զինվոր ծառայում էր Դամասկոսում, զինվորները բռնի ուժով պահանջում էին գիշերվա համար: Միայն այն բանի շնորհիվ, որ ջորեպան մուսուլմանները նույնպես պաշտպանեցին կանանց, հնարավոր եղավ զինվորներին 3 անգամ հետ պահել այդ քայլից:

Օգոստոսի 6-ին Մարաշին մոտ Ֆունդաջակ գյուղը բոլոր բնակիչներով հանդերձ, մոտ 300 հոգի, գետնին հավասարեցրին: Բնակչությունը՝ հիմնականում գրեթե բոլորը ջորեպաններ, վերջին 3 ամսում ստիպված էին բազմիցս հայերին տեղափոխել Եփրատի ուղղությամբ: Նրանք մեռածներին Եփրատում իրենց աչքերով էին տեսել, տեսել են, թե ինչպես են վաճառել ու բռնաբարել կանանց: «Սնգյուլյու օլյում (ցանկալի մահ)», գերմանացիների ներկայությամբ այդպես էին արտահայտվում Մարաշ եկած Ֆունդաջակի մարդիկ, երբ խոսք եղավ նախկին ջարդերի մասին: Երբ 30 հայ ավազակ ուժով թափանցել են գյուղ և սպառնացել են բոլոր նրանց, ովքեր կենթարկվեն կառավարության պահանջներին, և, իսկապես, գնդակահարել են մի քանիսին, ովքեր փորձել են փախչել, գյուղն ստիպված է եղել դիմադրել: Մարաշի հայկական դպրոցում ես տեսել եմ ֆունդուջակցի ավելի քան 100 կին ու երեխաների՝ կրակոցներից ջնջխված ոտքերով ու թևերով և ամեն հնարավոր խեղումներով, նրանց մեջ՝ նաև 1 և 2 տարեկան երեխաների:

Օգոստոսի 13-ին Մարաշում գնդակահարեցին 34 հայի՝ Մարաշի մերձակա գյուղերից, Ֆուռնուսից, Շիվիլիգից և այլն, նրանց մեջ՝ նաև 2 տասներկու տարեկան տղաների: Օգոստոսի 15-ին կրկին գնդակահարեցին 24 մարդու և մյուս 14-ին կախեցին, նույնպես Մարաշի մերձակա գյուղերից: 24 տղամարդկու ծանր շղթայով վզերից կապել էին իրար և շրջան էին կազմել, նրանց գնդակահարել էին մուսուլման բնակչության ներկայությամբ՝ ամերիկյան քոլեջի հետևում: Ես ականատես էի, թե ինչպես դեռևս մահվան մեջ ջղաձգվող դիակները հանձնում էին քաղաքացիական բիրտ բնակչության կամայականությանը, որը կոպտորեն քաշում էր գնդակահարվածների թևերից ու ոտքերից, և շուրջը հավաքված մուսուլմանական բնակչությանը զվարճացնելու համար ոստիկաններն ու ժանդարմները ևս կես ժամ անընդհատ շարունակում էին կրակել ատրճանակներից՝ մասնավորապես արդեն սարսափելիորեն այլանդակված դիակների վրա: Դրանից հետո նույն մարդիկ գնացին գերմանական հիվանդանոցի մոտ և գոռում էին. «յաշասն ալմանիյա» (կեցցե Գերմանիան): Մուսուլմանները ինձ կրկին ու կրկին ասում էին, որ Գերմանիան է հրահանգել հայերին այդ կերպ բնաջնջել:

Քաղաքից ֆերմա ճանապարհին քաղաքի ծայրամասում ես տեսա մարդկային գլուխ՝ ընկած գոմաղբի կույտի վրա, որը թուրք դեռահասները դրել էին որպես նշանակետ: Մարաշում, իմ այնտեղ լինելու ժամա-

նակ, քաղաքացիական բնակչությունն ամեն օր սպանում էր հայերի, որոնց դիակներն օրերով մնում էին ջրուղիներում կամ այլուր:

Գյուրյունից և Այրան-Փունարից արտաքսվածներից մոտ 2800-ին Մարաշից դեպի հյուսիս-արևելք 12 ժամվա ճամփա անցնելուց հետո թալանել են 8 ավազակ, մասամբ հագնված սպայական, մասամբ էլ զինվորական համազգեստ: Քիզիլ-Գեչիդում՝ Այրան-Փունարից 1,5 ժամվա ճանապարհին, 8 ավազակ միացել են թափորն ուղեկցող ժանդարմներին և բավականին երկար ժամանակ զրուցում էին նրանց հետ: Այրան-Փունարում ժանդարմները բաժանեցին մարդկանց, սակավաթիվ տղամարդկանց՝ առանձին, կանանց՝առանձին: Կանանց մի մասին ամբողջովին մերկացրին և փող էին փնտրում, 4 կնոջ ու երկու աղջկա գիշերը տարան ու բռնաբարեցին: Նրանցից հաջորդ առավոտյան վերադարձան 5-ը: Էնգիսեք-դաղի մի կիրճում ամբողջ քարավանը իսպառ թալանեցին աղջադարլի քրդերը, նուրդաքլի քրդերը, սետրաքլիկ և հելեթե թուրքերը՝ Տապո անունով մի քրդի ղեկավարությամբ, որը Սերայքյոյում հայտնի քուրդ աղաներից՝ Հասանի որդին էր. նա մի գերմանացի պարոնի և ինձ նախկինում դեպի Մալաթիա կատարած մի պատահական ուղևորության ժամանակ բացահայտորեն խոստովանեց. «Այստեղ Դուք իմ հյուրերն եք, այստեղից մի ժամ հեռանալուց հետո ես այլևս պատասխանատու չեմ Ձեզ համար, հնարավոր է՝ ես էլ չդիմանամ Ձեզ թալանելու գայթակղությանը»: Այդ հարձակման ժամանակ սպանեցին մոտ 200 հոգու, 70 ծանր վիրավորների ստիպված էին թողնել, մնացյալ՝ ավելի քան 50 վիրավորին տարան թափորի հետ: Մոտ 2500 հոգուց բաղկացած այդ թափորին ես հանդիպեցի Կարաբյուրքում: Մարդիկ աննկարագրելի թշվառ վիճակում են: Կարաբյուրքից 1 ժամվա ճանապարհ անց 2 տղամարդ ընկած էին ճամփին, մեկը՝ 2, մյուսը՝ 7 ծակված վերքերով, ապա 2 ուժասպառ կին, այնուհետև 4 կին, նրանց մեջ մոտ 13 տարեկան աղջնակ՝ գրկին փալասների մեջ փաթաթված 2 օրական երեխա: Ճանապարհին ընկած մնացել էր մոտ 60 տարեկան մի տղամարդ՝ դեմքին մեկ մատի երկարությամբ և 2 մատի լայնությամբ խոր վերք, նա ինձ ասաց, որ Գյուրունից դուրս է եկել 13 անասունով: Այրան-Փունարում բոլոր անասունները և ապրանքները նրանից խլել են, ու նա հետիոտն մինչև մեկ ժամ քարշ է եկել և Կարաբյուրքի մոտ ուժասպառ տապալվել է: Այդ մարդիկ բոլորը ունևոր էին, թալանված անասունների, ապրանքների և փողի արժեքը գնահատվում է 8000 թուրքական ֆունտ: Ուժասպառներին թողնում են ճանապարհին, Կարաբյուրքից Մարաշ տանող ճանապարհի երկու կողմերում էլ կարելի է տեսնել դիակներ: 2500 հոգուց բաղկացած այդ թափորի մեջ ես տղամարդ չտեսա, բացի երևի 30-40-ից: 15 տարեկանից բարձր տղամարդկանց քշել են կանանցից առաջ և, հավանաբար, սպանել են: Այդ հայերին միտումնավոր քշել են զարտուղի և վտանգավոր ճանապարհներով, փոխանակ՝ ուղիղ ճանապարհով 4 օրում Մարաշի միջով, նրանք արդեն մի ամիս է՝ ճանապարհին էին: Առանց անասունների, առանց անկողինների, առանց սննդի պետք է նրանք տարագրվեին՝ օրական ստանալով մի անգամ մի կտոր հաց (jukhar ekmek) և դա բավարար չէր՝ գոնե մեկ անգամ կուշտ ուտելու համար: Նրանցից 400-ը բողոքականներ էին, այդ ընթացքում նրանք ժամանեցին Հալեպ, նրանցից օրական 2-3-ը մեռնում են: Հարձակումը Այրան-Փունարում եղավ Ալբիստանի համաձայնությամբ, որը հայերից պահանջել է 2001 թուրքական ֆունտ և այդ մարդկանց խոստացել էր, որ կհոգա, որպեսզի նրանք ապահով հասնեն մինչև Այնթապ: Գյուրյունի կայմակամն էլ էր պահանջել իրեն վճարել 1020 թուրքական ֆունտ և նույն հավաստիացումներն էր տվել: Ես տեսա մի հայ ուսուցչի, որը մյուսների հետ Գյուրյունում ակումբի մի սենյակում այդ գումարը տվել էր կայմակամի ձեռքը: Այնթապի մերձակայքում գիշերը մի քանի կանանց բռնաբարել էին քաղաքացիական անձինք՝ Այնթապից: Այրան-Փունարի հարձակման ժամանակ տղամարդկանց ու կանանց կապել էին ծառերին ու հրկիզել: Հեքաշ էֆ. թափորն ուղեկցող ժանդարմ-ենթասպան, հետ ընկած մի մարդու սվինահարեց թիկունքից: Դեռևս Գյուրյունից դուրս գալու ժամանակ մոլլաները հայկական եկեղեցիների տանիքներից «հավատացյալներին» աղաղակաձայն կանչում էին աղոթքի: Մի ականատես՝ մարաշցի մի հայ, որը Այրան-Փունարի մերձակա մի գյուղում աշխատել էր որպես ջրաղացպան և հարձակման ժամանակ փախել էր այդտեղից, ինձ պատմեց, որ իր ջրաղացից ոչ հեռու նա տեսել է, թե ինչպես երկու եղբայր վիճաբանում են ավարի պատճառով, ընդորում, նրանցից մեկն ասել է. «Այս բեռի համար ես 40 կին եմ սպանել»:

Արդեն տարիներ ի վեր ինձ ծանոթ մի մահմեդական՝Հաջի անունով, Մարաշում ինձ պատմեց հետևյալը. «Նասիբի մոտ ինձ և բոլոր ջորեպաններին փակեցին մի իջևանատանը և դուրը կողպեցին, ֆուռնուսցի շատ երիտասարդ կանանց թափորն ուղեկցող ժանդարմներն ու քաղաքացիական անձինք բռնաբարեցին»:

Այնթապում՝ ոստիկանության կոմիսարի բյուրոյում, իմ ներկայությամբ մի մահմեդական աղա ասաց մի հայի. «Սրա, նրա մոտ (*ընթեռնելի չէ*) շատ նամակներ են գտել, ի՞նչ կապ ունես դու այդ մարդկանց հետ: Ես քեզ այնքան հաճախ եմ ասել, որ դու պետք է մահմեդական դառնաս, եթե դու ինձ լսեիր, հիմա կխուսափեիր բոլոր տհաճություններից, որոնց ենթարկվում է քո ժողովուրդը»:

Քաղիր փաշան Մարաշում ինձ ասաց. «Ես գիտեմ, որ 3-րդ բանակի գործողությունների տարածքում, կառավարության հրամանի համաձայն, արական սեռի ամբողջ բնակչությանն սպանել են»:

Օգոստոսի 20-ին, երեկոյան ժամը 6-ին Մարաշում՝ Աղանայի վալիի հրամանի համաձայն, հայտարարեցին, որ մինչև հաջորդ օրը կեսօր, ժամը 12-ին 15 տարեկանից բարձր ամբողջ արական սեռի բնակչությունը՝ 5000 տղամարդ, ուղևորության համար պատրաստ կանգնած լինեն քաղաքի դարպասների մոտ: Ով ժամը 12[00]-ից հետո դեռ քաղաքում լինի, առանց այլևայլի կգնդակահարվի: Յուրաքանչյուր ոք գիտեր, թե ինչ էր նշանակում կառավարության այդ հրամանը, և մենք ապրեցինք ամենասարսափելի խուճապը: Վերջին պահին՝ Մարաշի շատ մարդասեր մութասարիֆի միջամտության շնորհիվ, վալիի հրամանը փոխվեց այնքանով, որ տղամարդիկ կարող էին ճամփա ընկնել իրենց ընտանիքների հետ: Դեռևս օգոստոսի 18-ին Աղանայի վալին, որն այդ ընթացքում Մարաշում էր, հրամայեց կանչել հոգևոր իշխանություններին և նրանց հավաստիացրեց, որ Մարաշի հայերին չեն արտաքսի, այդպիսով, առաջին տեղահանվածները պետք է քաղաքը լքեին առանց որևէ նախապատրաստության:

Ալբիստանին մոտ Բյուլվերեն գյուղում բոլոր հայ բնակիչներին՝ 85 մարդու, սպանել էին, բացառությամբ 12 տարեկան մի տղայի, որը ջուրն էր նետվել և զերծ էր մնացել դրանից: Այդ տղան փրկվել էր՝ ուղևորվելով Մարաշ:

Զեյթունի մերձակայքում մի գյուղի բնակիչներին, որտեղ տարածվել էր ծաղիկ հիվանդությունը, արտաքսեցին: Ծաղիկով հիվանդներին, այդ թվում՝ ծաղիկից կուրացածներին, Մարաշում տեղավորեցին իջևանատներում, որոնք արդեն լցված էին այլ գյուղերից տեղահանվածներով:

Մարաշում ես տեսա երևի թե 200 հոգուց բաղկացած թափոր՝ նրանց մեջ տարբեր կույրեր, մոտ 60 տարեկան մի մայր՝ ի ծնե հաշմանդամ դստեր ձեռքը բռնած: Այդպես նրանք հետիոտն ճամփա էին ընկել: Մի ժամ քայլելուց հետո արդեն մի մարդ ընկած մնաց Էրքենես կամուրջի մոտ,

նրան թալանեցին և սպանեցին, 4 օր անց՝ մենք նրա դիակը տեսանք փոսի մեջ ընկած:

Մի քանի օր առաջ ես այստեղ՝ Հալեպում այցելեցի մի ծանոթի: Նրա մոտ իր երեխայի հետ հյուրընկալվում էր Սվազից արտաքսված մի մայր՝ ընտանիքի 26 անդամներից երկու կենդանի մնացածը, որոնք 3 ամիս առաջ տեղահանվել էին Սվազից և այդ օրերին ժամանել էին այստեղ:

Բաշ-Փունարի մոտ՝ Այնթապից դեպի հյուսիս-արևելք, Սամ գյուղի դիմաց օրերով ընկած էին տղամարդիկ, որոնց գլուխները վառված էին և կանայք, որոնց որովայնը պատռված էր: Մի տղամարդ և մի կին կապված էին իրար: Երկու ժամվա ճամփա Այնթապի այս կողմում, Այնթապ-Քիլիս երթուղային ճանապարհին մոտ մի իջևանատանը սպանել էին մոտ 25 տարեկան մի հայի: Մի սիգարետ բերանին, մյուսը՝ ականջի հետևը՝ թրիքով գծած բեղերով, դիակը ուղիղ կանգնեցրել էին իջևանատան դռների մեջտեղը: Կողքից անցնողներին ձայն էին տալիս. «Հլա էս հաշաշին[47] նայեք, թե ոնց է կարողանում հլա ծխել»:

Մարաշից 5 ժամ անցնելուց հետո իմ այստեղ գալու ճամփին հանդիպեցի 7 թուրք զինվորի: Ինձ հետ 6 հայ աղջիկ կային, նրանցից 5-ը ամերիկյան մանկավարժական սեմինարիայից և գերմանական որբանոցի մի ուսուցչուհի: Քարավանից 20 քայլ առաջ զինվորներից մեկը պատրաստվեց կրակելու և կրակեց օդի մեջ: Մեկ այլ զինվոր աղջիկների մեկի ձեռքից խլեց հովանոցը և, իհարկե, այլ բռնություններ էլ կաներ, եթե ես այդ ընթացքում ձիով չհասնեի: Երբ ես իմ մտրակով հարձակվեցի նրա վրա, բոլորը փախան:

Մարաշի մոտ գտնվող Չամոստիլի ճանապարհին մի գյուղացի մոլլա իր հրացանով (մարտինի տեսակի) նշան բռնեց ինձ ուղեկցող հայի վրա: Միայն այն բանի շնորհիվ, որ ես կոպտորեն հարձակվեցի և ձին քշեցի նրա վրա, կարողացա փրկել այդ հային: Երկուսուկես ժամ տևած ճանապարհին իմ ծանոթները տեսել էին գնդակահարված դիակներ, որոնք օրերով մնում էին ընկած՝ առանց թաղելու:

Վ. Շպիկեր

[*Շպիկերի վերոհիշյալ զեկուցագիրը «Թուրքիայում զոհված մի գերմանացու գրառումները» վերնագրով կա նաև շվեյցարական օգնության միության հանձնաժողովի՝ 1915 թ. Հայաստանի համար լույս ընծայած 2-րդ բրոշյուրում՝ «Նյութեր՝ հայերի ճակատագիրը 1915/1916թթ. քն-*

47. Հավանաբար՝ թմրամոլ (ծան. թարգմ.):

նարկման համար», որը գտնվում է փաստաթղթերում: Այնտեղի զեկուցագիրը թեպետ պարունակում է որոշ բացթողումներ ու փոփոխություններ, բայց հետևյալ փաստարկումներն ավելի ծավալուն են:]

Խարպուտից և Սվազից 18.000 տեղահանվածներից Հալեպ հասան 350 հոգի (կանայք և երեխաներ) և Էրզրումից տեղահանված 1900 հոգուց Հալեպ հասան 11 հոգի՝ մի հիվանդ տղա, 4 աղջիկ և 6 կին: Կանանցից ու աղջիկներից բաղկացած մի թափոր Ռաս ուլ Այնից մինչև Հալեպ 65 ժամ տևած ճանապարհն ստիպված էր երկաթուղու երկայնքով գնալ հետիոտն, թեպետ վագոնները վերադառնում էին դատարկ: Մահմեդական ուղևորները, ովքեր գալիս էին այդ ճանապարհով, հայտնում էին, որ ճանապարհները երկու կողմում ընկած շատ դիակների պատճառով անանցանելի են, և նրանց նեխման գարշահոտությունն ապականում էր օդը: «Ջերծ մնացածներից» և մինչև հիմա ավելի հեռու չուղարկվածներից մինչև այսօր զրկանքների հետևանքով մահացել են 100-ից 200 մարդ: Երբ հյուծված ու կմախքի վերածված կանայք և երեխաները Հալեպ են հասնում, վայրի կենդանիների պես հարձակվում են ուտելիքի վրա: Շատերի ներքին օրգաններն այլևս չեն գործում, 1-2 գդալ ուտելուց հետո գդալները ցած են դնում: Կառավարությունը հայտնում է, որ տեղահանվածներին սնունդ են մատակարարում, վերոհիշյալ թափորը՝ Խարպուտից, երեք ամսում միայն մեկ անգամ է հաց ստացել:

Բացի այդ, որ կառավարությունը հոգ չի տանում մարդկանց համար, թողնում է նրանցից ամեն ինչ խլել: Ռաս ուլ Այն հասավ 200 աղջիկներից ու կանանցից բաղկացած մի թափոր՝ լրիվ մերկ: Կոշիկներ, շապիկ, կարճ ասած՝ ամեն ինչը խլել էին նրանցից և չորս օր շարունակ ստիպել էին քայլել կիզիչ արևի (40 աստիճան ստվերում) և ուղեկցող զինվորների ծաղրուծանակի տակ: Պարոն...ասաց, որ ինքն էլ է տեսել 400 կանանցից և երեխաներից բաղկացած թափոր՝ նույն վիճակում: Եթե այդ թշվառները դիմում էին պաշտոնյաների մարդկայնության զգացմունքներին, ապա պատասխանը լինում էր.«Մենք հստակ հրաման ունենք կառավարությունից՝ ձեզ հետ վարվել այսպես»:

Հալեպում մեռածներին սկզբնական շրջանում հայկական եկեղեցու տրամադրած դագաղներով տանում էին գերեզմանոց: Համալներն[48] էին դա անում և յուրաքանչյուր մեռածի համար ստանում էին 2 պիաստր: Երբ համալները չէին հասցնում, կանայք իրենք էին իրենց մեռելներին

48. Համալներ՝ բեռնակիրներ:

տանում գերեզմանոց, փոքր երեխաներին՝ գրկած, ավելի մեծերին՝ պարկի վրա, որի ծայրերից բռնում էին չորս կին: Ես տեսել եմ մեռելներ, որոնց գրաստի վրա գցած տանում էին գերեզմանոց: Իմ ծանոթներից մեկը տեսել է ձողին կապած դիակ, որին այդ ձևով քարշ են տվել երկու տղամարդ: Մեկ ուրիշը տեսել է, թե ինչպես եզները լծած սայլը՝ լիքը մեռելներով, հասցրել են գերեզմանոց: Երկանիվ ֆուրգոնը չի կարողացել մտնել գերեզմանոցի նեղ դռներից ներս: Առանց երկար մտածելու՝ բատրակը շուռ է տվել ֆուրգոնը և դատարկել այն: Հետո մեռելների ձեռքերից ու ոտքերից քարշ տալով հասցրել է գերեզման: Հիմա օրական գործում են 5-6 սայլ, որոնք մեռելներին տեղափոխում են գերեզմանոց: Մի իջևանատանը՝ այսպես կոչված հիվանդանոցում, մի կիրակի օր ես տեսա մոտ 20 մետր լայնությամբ և 40 մետր երկարությամբ բակում ընկած 30 դիակ: Մոտ 20-ին թաղեցին արդեն այդ օրը: Այդ 30 դիակը մնացին մինչև երեկո: Իմ կինը կարգադրել էր դրանք հավաքել-տանել դեռ մթնշաղին՝ երեք բեռնակրին տալով մեկական մեջիդիե[49]: Մի դիակի մաշկը կպել էր բեռնակիրների ձեռքերին, այդքան արդեն խորացել էր քայքայումը: Մեռածների մեջ ամենուրեք պառկած էին մահամերձ և ծանր հիվանդներ՝ կիզիչ արևի տակ, մոտ 1000 մարդ: Այդ ամենը ներկայացնում էր մի այնպիսի սարսափելի տեսարան, ինչպիսին ես նախկինում երբեք չէի տեսել, նույնիսկ Մարաշում ամռանը՝ նախկինում հայտնած 24 հոգու գնդակահարության ժամանակ: Գրեթե բոլորը փորլուծ ունեին, բակում ակոսներ էին փորել, որոնց երկայնքով պառկած էին մեռնողները. թիկունքով նրանց շուռ էին տվել դեպի փոսերը, որպեսզի նրանց հնարավոր բնական կարիքներն անմիջապես ընկնեին այդ ակոսների մեջ: Ով մեռնում էր, կողքի էին հանում, և նրա տխուր տեղն զբաղեցնում էր մեկ ուրիշը: Հաճախ պատահում էր, որ իբրև մեռած գերեզմանի մոտ տարածները դեռևս կենդանության նշաններ էին ցույց տալիս, նրանց կողքի էին դնում, մինչև կհամոզվեին, թե մահացել է: Մի երիտասարդ աղջիկ նորից այնքան ուշքի եկավ, որ հնարավոր եղավ նրան քաղաք վերադարձնել, և երեկոյան թաղվածներից մեկը հաջորդ առավոտյան կենդանի նստած էր իր գերեզմանի վրա: Մեծաթիվ մեռածների թաղում էին մի գերեզմանում, և նրան վերջում էին թաղել, մթնշաղին մակերեսին մի քիչ հող էին լցրել: Թել Աբիադում պարոն...-ը տեսել է բաց գերեզմաններ՝ 20-30 դիակներով: Գերեզմանները փակում

49. Մեջիդե՝ մոտ 4.5 ֆր.:

էին, եթե լցված էին լինում մեռելներով: Պարոն...-ն ինձ ասում է, որ նեխահոտից հնարավոր չէ մոտենալ, իսկ մերձակայքում պետք է տեղավորվեին տեղահանվածները: Մի սենյակում տեղավորված 35 լրիվ որբ երեխաներից Հալեպում մի շաբաթում 30-ը պարենի բացակայությունից մահացան: Պարոն...-ն ասում է, որ իր՝ դեպի այստեղ ուղևորության ժամանակ ճանապարհին ամենուրեք դիակներ է տեսել, մի քուրդ նրա մոտ պարծեցել է, որ 14 երեխա է սպանել:

Կիրակի օրը՝ 1915 թվի օգոստոսի 12-ին, ես պետք է գնայի Հալեպի Դամասկոսյան կայարան և առիթ ունեցա տեսնելու, թե ինչպես մոտ 1000 կանանց ու երեխաների բարձում էին անասունների համար նախատեսված վագոնները: Մեզ մոտ՝ Գերմանիայում, անասունների համար ավելի շատ տեղ է հատկացվում, քան այստեղ՝ այս խեղճ մարդկանց: Այդ մարդկանց 90%-ի մահը դրոշմված էր դեմքերին: Նրանց մեջ կային մարդիկ, որոնց փաստորեն ժամանակ չէին թողել մեռնելու: Մինչև երեկո ուղարկեցին մի թափոր, հաջորդ առավոտյան գտան 2 մեռած, միջին տարիքի երեխաներ, որոնք մահացել էին բեռնելու ժամանակ և մնացել էին ընկած:

1915թ. սեպտեմբերի 13-ին հրապարակվեց 4-րդ բանակի գլխավոր հրամանատար Ջեմալ փաշայի մի հեռագիրը. «Բաղդադի երկաթուղու կառուցման ընկերության ինժեներների կամ այլ ծառայողների արած հայերի տեղափոխման վերաբերյալ լուսանկարները 48 ժամվա ընթացքում՝ օրիգինալ ժապավենների հետ, Հալեպում հանձնել Բաղդադի երկաթուղու զինվորական կոմիսարիատ: Ցանկացած ընդդիմացում այդ կարգադրությանը հետապնդվելու է պատերազմական ժամանակների օրենքներով»:

Մի քանի անգամ ես տեսա կանանց ու երեխաների, որոնք աղբակույտը քչփորելով փնտրում էին սննդի մնացորդներ. գտածն անմիջապես ուտում էին: Ես տեսել եմ, թե ինչպես երեխաները կրծոտում էին հում ոսկորներ, որոնք գտնում էին անկյուններից, միաժամանակ օգտագործելով որպես միզանոթ:

Մարաշի ու Այնթապի միջակայքում մի գյուղի մահմեդական բնակչությունը մոտ 100 ընտանիքից բաղկացած թափորին ուզեց ջուր ու հաց բաժանել, թափորն ուղեկցող զինվորներն արգելեցին: Տեղահանվածների 4/5-ը կանայք և երեխաներ էին, տղամարդկանց մեծ մասին զորակոչել են:

Մարաշով անցած 20.000 տեղահանվածներն իրավունք չունեին Այնթապ գնալու և պարենավորվելու, թեպետ քարավանների ուղիղ ճանապարհն անցնում էր Այնթապով:

[Հաջորդ հատվածները՝ բացառությամբ որոշ շեղումների, համապատասխանում են 1915-07-27-DE-001 հավելվածին՝ «Դաս ուլ Այնում այս պահին... մինչև «...դա այստեղ ասում է յուրաքանչյուր որ»]:

Բիրիջիկում բանտերն ամեն օր լցվում են, գիշերվա ընթացքում դրանք դատարկվում են: Թել Արմենը՝ 3000 բնակիչներով մի գյուղ, հարձակման ենթարկվեց, բնակիչներին կոտորեցին՝ մեռած թե կենդանի նետեցին ջրհորը կամ վառեցին: Մայոր ֆոն Միկուշը ականատես է եղել այդ ամայացմանը: Մի գերմանացի ռոտմիստր Դիարբեքիրի և Ուրֆայի միջակայքում ճանապարհի երկու կողմում տեսել է անթաղ դիակներ՝ կտրված կոկորդներով: Պարոն Ս. ճանապարհին տեսել է անթիվ-անհամար մանուկների չթաղված դիակներ:

Թել-Աբիադում՝ թափորն ուղարկելուց հետո, երկաթուղու մոտ մնացին 17 մահամերձ մարդ: Երկաթուղու երկու ծառայող հետո կարգադրեցին բոլոր 17 հոգուն թաղել:

Մի քանի օր է, ինչ դեպի այս վայրեր են ուղարկվում հայերի բոլոր թափորները: Պարոն...-ի ասածները համընկնում են նրան, ինչ ինձ ասաց տեղահանման հանձնաժողովի նախագահը, երբ ես նրան խնդրանքով դիմեցի չորս հայ երեխաների համար. «Դուք չեք հասկանում, թե մենք ինչ ենք մտադրվել: Մենք ուզում ենք արմատախիլ անել հայի անունը[50]: Ինչպես Գերմանիան է ուզում միայն գերմանացիների գոյությունը, այնպես էլ մենք ենք ուզում միայն թուրքերի գոյությունը, միայն թուրքերի»:

1915 – 09 – 04 – DE – 001

Սկզբնաղբյուրը՝ PA-AA/R14087,Կոստ, դեսպ./170
Հրապարակված՝ Գ և Հ փաստ. 160 (կրճ.)

Ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին՝ Կոստանդնուպոլսի արտակարգ միսիայի դեսպան Հոհենլոհե-Լանգենբուրգից

№ 549

Պերա, 4 սեպտեմբերի 1915

50. Այս երկու նախադասությունը մեջբերված են գերմանական փոխհյուպատոս Հոֆմանի 1916-01-03-DE-001 փաստաթղթում:

3 հավելվածներ

Այս ամսվա 2-ին Թալեաթ բեյն ինձ փոխանցեց պատճենով կցված տարբեր հեռագրային հրամանների գերմաներեն թարգմանությունները, որոնք նա ուղղել էր հայերի հալածանքների գործով նկատառվող գավառների պաշտոնյաներին: Դրանով նա ուզում էր ապացուցել, թե կենտրոնական կառավարությունը լրջորեն ջանքեր է թափում երկրի խորքում հայերի հանդեպ օրինազանցություններին վերջ տալու և տարագիրների փոխադրման ժամանակ նրանց պարենավորումը հոգալու համար: Այդ կապակցությամբ Թալեաթ բեյը մի քանի օր առաջ իմ ներկայությամբ արտահայտվեց. «le question arménienne n'existe plus» (Հայկական հարց այլևս գոյություն չունի):

Առաջին և երրորդ հեռագրերի վրա ամսաթիվ չկար, առաջինը, հավանաբար, ուղարկվել էր օգոստոսի 31-ին:

Ինձ վերապահելով հետագա հաշվետվություն ներկայացնելու իրավունքը, կցանկանայի նշել, որ Տրապիզոնի կայզերական հյուպատոսության մի հեռագրի համաձայն, այնտեղ դեռևս օգոստոս ամսի վերջին օրերին մինչև այժմ տեղահանումից զերծ մնացած մի խումբ հայերի (նրանց մեջ՝ Օտոմանյան բանկի ղեկավար մարմնի ծառայողներ ու կանայք) գիշերը հանել և, ըստ երևույթին, քաղաքի մերձակայքում սպանել են: Այստեղի հայ-կաթոլիկ պատրիարքը նույնպես՝ ուղևորների վկայությունների հիման վրա, հայտնում է, որ Անգորայի հայերին (հիմնականում՝ կաթոլիկներ), նրանց մեջ՝ կաթոլիկ արքեպիսկոպոսին իր հոգևորականների և միաբանության շատ քույրերի հետ, օգոստոսի 30-ին արտաքսել են Անգորայից և որոշ հեռավորության վրա բոլորին սպանել են:

Նկատի ունենալով վերջին դեպքերը, կարելի էր խորհուրդ տալ՝ առայժմ ձեռնպահ մնալ այդ հեռագրերը մամուլում հրապարակելուց:

Հոհենլոհե

[Գյոպերտի նշումը 2.9]

Հայկական հարցը

Թալեաթ բեյը կից հրամաններն այսօր փոխանցեց անվտանգության ծառայությանը: Հենց որ պատերազմական իրավիճակը հնարավորություն տա, նա ուզում է ուղևորվել գավառները, որպեսզի հսկի հրամանների բարեխիղճ կատարումը: Անվտանգության ծառայությունը հրա-

մանների մասին հայտնել է մոնսինյոր Դուչիին և հայկական կաթոլիկ եկեղեցու եպիսկոպոսին:

Հավելված 1

1) Հյուդավենդիգիար, Անգորա, Կոնիա, Իզմիտ, Ադանա, Մարաշ, Ուրֆա, Հալեպ, Զոր, Սվազ, Յուքահիա, Կարասի, Նիգդե, Մամուրեթ ուլ Ազիզ, Դիարբեքիր, Գարահիսար, Կեսարիա, Էրզրում գավառների իշխանություններին:

Քանի որ կայզերական կառավարությունը հայերին իրենց բնակավայրերից նախապես որոշված գոտիներ տեղափոխելով հետամուտ է միմիայն մի նպատակի՝ կանխել այդ ազգության հակակառավարական գործունեությունն ու ձեռնարկումները, ինչպես նաև անհնար դարձնել հայկական պետություն ստեղծելու վերաբերյալ նրանց ազգայնական նկրտումները, բայց ոչ նրանց բնաջնջումը, վերջնականապես այդպես որոշվեց՝ բոլոր միջոցները ձեռնարկել տեղափոխման ժամանակ շարասյուների պաշտպանության ու կերակրման համար և բոլոր մնացյալ հայերին, բացառությամբ նրանց, ովքեր արդեն հեռացվել են և սպասում են իրենց հետագա տեղափոխմանը, ինչպես նաև, համաձայն արդեն եղած հաղորդագրությանը՝ զինվորական ընտանիքներին, ամիրաժեշտ արհեստավորների համապատասխան թվին և կաթոլիկ ու բողոքական համայնքների հայերին այսուհետ այլևս չարտաքսել իրենց բնակավայրերից:

Սույնով հայտարարվում է, որ դատական կարգով քրեական գործ կհարուցվի բոլոր այն անձանց դեմ, ովքեր կհարձակվեն շարասյուների վրա, կզբաղվեն թալանով և իրենց անասնական մղումներով խայտառակ արարքներ կգործեն՝ իրենց հանցակիցների հետ, ինչպես նաև բոլոր պաշտոնյաների, ովքեր մեղավոր կճանաչվեն: Այդպիսի հանցագործությունների կրկնման դեպքում դրա պատասխանատվությունը հանձնարարել վիլայեթների և լիվաների[51] իշխանություններին:

Հավելված 2

II Ծածկագրված հեռագիր, օգոստոսի 15-ին 1331 (29-ը օգոստոսի, 1915)

51. Լիվա կամ սանջակ՝ վիլայեթից հետո ամենամեծ տարածքային միավորը (ծան. թարգմ.):

Կոնիայի վիլայեթին

Էրեգլիում գտնվող հայ տարագիրների համար պետք է հաց և ձիթապտուղ ճարել և նախապատրաստել պաքսիմատ: Հայտնեք անհրաժեշտ վերադիր ծախսերի մասին, որպեսզի անհրաժեշտ գումարն այստեղից ուղարկվի:

Հավելված 3

III Ծածկագրված հեռագիր

Իզմիտ, Էսքիշեհիր, Քութահիա, Գարահիսար, Հուդավենդիգիար, Կոնիա, Անգորա, Ադանա, Հալեպ գավառների իշխանություններին:

Սույնով Ձեզ հանձնարարվում է երեք կամ չորս օրվա համար հաց ճարել կանգառներում գտնվող հայերի համար և նրանց համար, ում պետք է բերեն հեռավոր կանգառներից և բոլոր միջոցները ձեռնարկել, որպեսզի նրանք ճանապարհին չտառապեն կարիքից:

[Մորդմանի նշումը, 4.9. (ավարտած 7.9.)]

№ 5118 A 33a-ում (Բարձր Դռան հեռագրերը Հայկական հարցի առնչությամբ)

Ա) Ներքին գործերի նախարարությունում Ազիզ բեյը՝ Ջամբուլատ բեյի տեղակալը, ինձ այսօր հայտարարեց հետևյալը:

1) Առաջին հեռագիրը փաստորեն առաքվել է միայն նշված գավառների ղեկավարություններին, հետևաբար ոչ Տրապիզոն, բացի այդ՝ բացակայում են Կաբամունին, Բիթլիսը, Վանը, որտեղ, ըստ Բերգֆելդի անցած ամսվա 27-ի (№4996) հեռագրի, ջարդեր են եղել: Վերջին դեպքերի մասին Ազիզ բեյին ոչինչ հայտնի չէր:

2) Դրան հակառակ նա տեղյակ էր, որ Անգորայից հայերի տեղահանման ժամանակ տեղի է ունեցել «բախում», մանրամասները բացակայում են:

3) Եթե հեռագրում ոչինչ չի ասվում արդեն տեղահանված կաթոլիկներին և բողոքականներին վերադարձնելու մասին, ապա պատճառն այն է, որ վերջիններին միայն մասամբ է թույլատրվելու վերադառնալ, որպեսզի նրանց կրկին մեծ զանգվածներով չհավաքեն առանձին բնակավայրերում:

Բ) Տվյալ հեռագրերի պարզ պատճենները այսօր՝ սեպտեմբերի 4-ին.

«Նորին պայծառափայլության հանձնարարությամբ» ուղեկցող կարճ մակագրությամբ հանձնեցի մոնսինյոր Դոլչիին և հայ կաթոլիկական պատրիարքարանից մոնսինյոր Նազլյանին՝ մոնս. Թերգյանի համար:

Գ) Այստեղի հայ գրիգորյան պատրիարքը թախանձագին խնդրում է, որ, եթե հնարավոր է, մենք միջամտենք հետևյալ կետերի համար.

1) Արևմտյան գավառներից տեղահանված հայերին չուղարկեն Բոզանտիի միջով:

2) Այն հայերի հարազատները, որոնք զինվորական ծառայության մեջ են, ազատվեն աքսորից:

3) Կառավարությունը թույլատրի հոգևոր իշխանությունների և ոչ պաշտոնական այլ անձանց ու միությունների օգնությունը:

4) Թույլատրվի նամակագրություն աքսորյալների և նրանց այլ տեղերում մնացած հարազատների միջև:

[Նոյոռաթի նշումը, 7.9.]

Կետերը կարող են առիթի դեպքում քննարկման դրվել, չափազանց հաճախակի և մանրամասնած միջամտությունը թուլացնում է ազդեցությունը:

[Հեռագիր Էրզրումի հյուպատոսությանը (№36), Ադանայի հյուպատոսությանը (№37) և Հալեպի հյուպատոսությանը (№64)]

Բարձր Դուռը դեսպանությանը հայտնել է հեռագրային հրահանգների բառացի տեքստը, որոնք (ըստ երևույթին օգոստոսի 29-ին) առաքվել են գավառների իշխանություններին, նրանց մեջ նաև հայերի հետապնդումների գործով տեղերը: Նրանց էական բովանդակությունը հետևյալն է. զանգվածային տեղահանումները ոչ թե հայերի բնաջնջման նպատակ ունեն, այլ հակակառավարական տարրերի վնասազերծման, տեղափոխման ժամանակ տարագիրներին պետք է պաշտպանել ու կերակրել: Դեռևս չտեղահանվածներին, այսուհետ, ինչպես արդեն նախկինում կարգադրված էր՝ զինվորականների ընտանիքներին, կաթոլիկներին և բողոքականներին, ինչպես նաև այն արհեստավորներին, որոնք անփոխարինելի են, այլևս չեն աքսորելու, տեղահանվածների դեմ օրինազանցությունները կպատժվեն դատական կարգով և կրկնման դեպքում պատասխանատվության կենթարկվեն ավելի բարձր պաշտոնյաները:

[Մորդմանի նշումը]

NB Տրապիզոնում ավարտվել է 4996 կարգադրությամբ:

Ադանայի վալին նույնիսկ նաև այս դեպքում չի հոգացել Բարձր Դռան հրամանների մասին, համեմատիր նաև 7216A12-ում էջ 142

1915 – 09 – 05 – DE – 001

Սկզբնաղբյուրը՝ PA-AA/R14087

Արտգործնախարարությանը՝ «Քյոլնիշեր ցայտունգ» թերթի թղթակից Տիսցկայից

Կոստանդնուպոլիս, 5 սեպտեմբերի 1915

Խիստ գաղտնի տեղեկատվություն

Հայերի հետապնդումների վերաբերյալ հայկական կողմից հաղորդվում են հետևյալ փաստերը: Դրանք, անշուշտ, ընդհանուր առմամբ ճշմարտացի են: Մյուս կողմից շատ քիչ թուրքեր կան, որոնց հետ կարելի է բաց խոսել Հայկական հարցի մասին, անմիջապես պոռթկում է նույնիսկ սովորական, քիչ թե շատ կրթված ու աշխարհ տեսած մարդկանց ցասումը, որն ամեն ինչ իրար է խառնում և որը միշտ ավարտվում է նույն կրկներգով. «Բոլոր հայերին պետք է ոչնչացնել, նրանք դավաճաններ են»: Իհարկե, հայերի ներկայացրած կարևորագույն փաստերն ինձ համար հաստատվում են նաև այլ կողմից, միայն թե տեսակետն է մնում սուբյեկտիվ:

Հայ կամավորների ջոկատները, բնականաբար, հիմնվել են ռուսական, ոչ թե թուրքական տարածքներում՝ կոմիտեների միջոցով, որոնք գոյություն ունեն արդեն տասնամյակներ ի վեր և բացահայտ ձգտել են Հայաստանը պոկել Թուրքիայից: Երբ Էնվեր փաշան դեկտեմբերին այցելեց հայերի ռազմական գործողությունների դաշտը, հաստատեց, որ թուրքերը պետք է կռվեն հայերի դեմ, ինչպես ռուսների դեմ: Չնայած դրան՝ միայն շատ շաբաթներ անց Էրզրումի բերդն ազատվեց հայերից, մի ապացույց, որ այս կողմի թուրքական հայերը երկար ժամանակ իրենց կոռեկտ են պահել: Թուրքահայերից դեպի ռուսները հոսքն սկսվեց

միայն մարտին, երբ Վանում հայերից (կանխարգելիչ թե տեղ գտած դավաճանության հետևանքով, չեմ կարող որոշել) բռնագրավվեց զենքը: Մարտին նույնպես ձերբակալվեցին տարբեր հայ երևելիներ, նրանց մեջ՝ Վանի պատգամավոր Վռամյանը և Բիթլիսի պատգամավոր Փափազյանը: Երբ ընկերներն ընդվզեցին և բողոքեցին, Վանում ու վիլայեթի գյուղերում սկսվեցին **զանգվածային տեղահանումներ ու ոճրագործություններ**: Միայն դրանից հետո սկսվեց բաց խռովություն և բազմաթիվ հայեր միացան ռուսական հրոսակախմբերին: Թեժ կռիվների ընթացքում, որոնք տևեցին մոտ երկու ամիս, հայերը մի քանի անգամ գրոհեցին Վանը, որը միայն վերջերս, ինչն, իհարկե, կրկին լռության է մատնվում, կարճ ժամանակ տիրելուց հետո (8 օր) թուրքերը կորցրին, քաղաքը ոչ պակաս, քան հինգ անգամ փոխեց տիրոջը:

Կոստանդնուպոլսում ձերբակալություններն սկսվեցին ապրիլի 24/25-ին՝ որպես Վանի վրա հայերի գրոհի հետևանք: 850 հոգի՝ ինչպես ուղղափառ, այնպես էլ բողոքական ու կաթոլիկ, այդ ժամանակ տեղահանվեցին, նրանց թվում շատ հեղինակավոր պատգամավոր հենց Կոստանդնուպոլսից՝ փաստաբան Զոհրապը, Էրզրումից պատգամավոր Վարդգեսը (որը Թալեաթ բեյի հետ լավ հարաբերություններ ուներ), մոտ 40 եպիսկոպոս, 40 բժիշկ, 10 փաստաբան, նրանց հետ նաև շատերն ավելի ցածր բուրժուազիայից և պրոլետարիատից: Ձերբակալվածներից 250-ին տարան Այաշ՝ Անգորայի վիլայեթ, իսկ մնացածին՝ Ջանգերե՝ Կաստամունիի վիլայեթ: Ապրիլի 24-ի երեկոյան՝ «Ազատամարտ» թերթի սենյակները խուզարկելիս, որը միաժամանակ «դաշնակցականների» ակումբի տարածքն էր, ձերբակալեցին առանց բացառության բոլոր քաղաքական գործիչներին, լրագրողներին և այլոց, բռնագրավեցին ամբողջ թղթակցությունը: Թերթը, չնայած իր հեղափոխական անվանմանը, գոյություն ուներ արդեն հինգ տարի, կառավարությունն այն վատ չէր ընդունում, նույնիսկ համաձայնություն կար երիտթուրքական կոմիտեի հետ:

Այդ ձերբակալումների հետ միաժամանակ մայաքաղաքում հրաման արձակվեց՝ զանգվածային տեղահանումներ սկսել նաև Էրզրումի, Սվազի, Դիարբեքիրի, Խարպուտի, Բիթլիսի և Տրապիզոնի վիլայեթներում: Այդ ժամանակվանից ամենուրեք շարունակվեցին հայերի կանոնավոր հետապնդումները: Հիմա տարբեր վիլայեթների և քաղաքների համար ստացվում է տարբեր պատկեր, այնպես որ ամենաճիշտը չորս մասի բաժանելն է:

I. Կոստանդնուպոլիս: Այստեղ թուրքական կառավարությունը հասկանալի պատճառներով ամենազուսպն էր: Սկզբում տեղահանեցին ամուրի տղամարդկանց (ովքեր ծագումով անատոլիական վիլայեթից էին, ընդհուպ մինչև Սվազից դեպի արևելք), հետո բոլոր ամուսնացած ու ամուրի տղամարդկանց, որոնց հայրենիքը Հայաստանի գավառներն են առաջիններին՝ ընտանիքների հետ: Մինչև այժմ տեղահանել են մոտ 2000 տղամարդ, 50 ընտանիք: Ես կարիք չունեմ ծավալվելու այն դաժանության մասին, թե ինչպես պետք է հավաքվեին կարճ ժամանակում՝ հաճախ նաև մի քանի ժամում, առանց դրամական և ընտանեկան գործերը կարգի բերելու հնարավորության: Հաճախ տան արժեքավոր գույքը վաճառվում էր ծիծաղելիորեն չնչին գնով: Կոստանդնուպոլսում կառավարությունը մինչև հիմա փորձում է միջոցառումներն անցկացնել այնպես, կարծես թե խոսքը սոսկ քաղաքականապես կասկածելիների մասին է: Դա պարզապես ծիծաղելի է: Տեղահանվեցին ժողովրդի ամենաանմեղ մարդիկ, ընդ որում՝ լրիվ որոշակի համակարգով: 14 օր շարունակ, այս 14 օրերին քաղաքի մի շրջանում, ինչպես օրինակ՝ իմ տանը, եթե կան երկու դռնապան, ապա մեկին այսօր, մյուսին՝ մեկ ամիս անց են տանում ու չքանում են, ո՞վ գիտե, թե՝ ուր: Փողոցում ոստիկանը ձայն է տալիս կողքից անցնող մարդկանց, ովքեր ֆես են կրում, և պահանջում է ցույց տալ բնակության թույլտվությունը (վեզիկա) և եթե նա հայ է, ապա անմիջապես պետք է գնա հետները, ամեն ինչ կատարվում է առանց կանխազգուշացման, ոստիկանական ձերբակալության տեսքով: Օրուգիշեր կարելի է քաղաքում ամենուրեք տեսնել մեկական ոստիկան՝ երկու ժանդարմների հետ շրջելով հայերի փնտրելիս, իսկ այսօր ոստիկանությունը շարվել է նույնիսկ Պերայում հայ կաթոլիկական եկեղեցու դռների մոտ և պահանջում է անձնագրերը: Դա կարծես թե ուզում է թողնել հենց այն տպավորությունը, թե իբր որոնում են կասկածելիների, բայց ես կարող եմ հավաստի տեղեկություններով հաստատել, որ այդ ամենը կատարվում է առանց ընտրության, և տեղահանումների թիվը սահմանափակվում է միայն նրա համար, որ ի դեմս դեսպանների դեռևս չեն համարձակվում նույն մեծ թափով միջոցառումների, ինչպես գավառներում: Սկզբում ուզում են մաքրազատել այնտեղ, հետո կգա մայրաքաղաքի հերթը, այդպիսին է ընդհանուր տպավորությունը բացարձակ թուրքամետ շրջանակներում:

II. Հայերից ամբողջովին մաքրազատված են և դարձել են կանոնավոր ջարդերի, ամեն տեսակ ոճրագործությունների, բռնապղծության,

բռնի դավանափոխումների և այլնի թատերաբեմ՝ Էրզրումի, Տրապիզոնի (այստեղ մի մասն արդեն իսլամ է ընդունել) վիլայեթները, ինչպես նաև Սվազ, Խարպուտ, Կեսարիա, Յոզղաթ, Ամասիա, Մերսիֆան, Մարաշ քաղաքները: Տեղահանվածներին ուղարկում են Ուրֆա, Բիրեջիկ, Զոր և այլն, այսինքն՝ շատ հեռու, մասամբ արաբական տարածքներ, որտեղ նրանք՝ կտրված իրենց միջավայրից, անշուշտ, կիսով չափ կկործանվեն: Որոշ քաղաքներում տղամարդկանց պահում են ձերբակալված, կանանց ու երեխաներին աքսորում են առանց հսկողության ու խնամքի՝ մատնվելով թշվառության: Այն տարբերությունը, որ մի քանի վիլայեթներում միայն մեկ կամ մի քանի քաղաքներում, մեկ այլ տեղ՝ մի ամբողջ վիլայեթի հետ են այդպես վարվել, բացատրվում է նրանով, որ նահանգապետերը լրիվ ազատ գործելու հնարավորություն ունեն: Այդ առումով այդպիսի օրինակ է Անգորան, որը հայտնի դարձավ վերջին կիրակի օրը եղած ջարդերի տխուր առիթով: Այնտեղ, ինչպես ինձ պատմեցին հայերը, չնայած կենտրոնական կառավարության կրկնվող պահանջին, վալի Մազար բեյը հրաժարվել է այդ խիստ միջոցառումներն առանց տարբերակման ու ընդհանուր տեսքով տարածել ամբողջ հայ բնակչության վրա, պաշտոնից հեռացվել է: Իրոք, հիմա նողկալի բաներ եղան հենց Անգորայում, որը որպես մեծ և երկաթուղուն մոտ ու Կոստանդնուպոլսի հետ ամենօրյա կապ ունեցող քաղաք, որպես վիլայեթի գլխավոր վայր և գերագույն դատական ատյանների նստավայր, հայերին ընձեռում էր համեմատաբար նպաստավոր գոյության պայմաններ, և որը արևելյան ռազմաբեմից այնքան հեռու է, որ ստիպում է ամբողջովին բացառել արական սեռի բնակչության մեծ մասի կասկածելիության միտքը: Անգորայում հայերի հիմնական զանգվածը կաթոլիկներ են: Թուրքական կառավարությունը նրանց հանդեպ, բնականաբար, մի քիչ ավելի նվազ է վատ տրամադրված, որովհետև նրանցից ավելի հեռու է դեպի Ռուսաստան հառած զառանցանքային տրամադրվածությունը, քան ուղղափառներինը: Թալեաթ բեյի խոստացած մեղմացումները երևի թե հիմնականում կվերաբերեն հայերի կաթոլիկական մասին: Սկզբում նույն պատճառով նաև Անգորայում տեղահանում էին միայն ուղղափառ տղամարդկանց, մինչդեռ կաթոլիկներից միայն մի քանիսին, շատ քիչ ձերբակալություններ եղան: Բայց ութ օր առաջ՝ կիրակի օրը, նոր վալի Աբիֆ բեյը՝ Կոստանդնուպոլսի ոստիկանության պետ Ջամբոլատի՝ մոլի հայատյացի ու ազգայնամոլի դրածոն, կաթոլիկ հայերի ձերբակալությունից հետո կարգադրեց կամ թույլատրեց կանանց մեծ ջարդ, ընդ ո-

բում՝ եղան ամեն տեսակ գարշանքներ, նաև՝ բռնաբարություններ ու երիտասարդ աղջիկների առևանգում: Դա ինձ մոտ հաստատել են ամենուրեք, որտեղ ես հարցրել եմ այդ մասին: Հուսահատության մեջ կանայք շտապել են 20 բոպեի հեռավորությամբ գտնվող կայարան, բայց ընդամենը ճանապարհին թուրքերի ձեռքն ընկնելու համար: Երկաթուղու հայ ծառայողների մեծ մասը փրկվեցին գնացքով Էրքիշայ փախչելով. երկաթուղային կապը Անգորայի հետ դադարեցվեց: Այստեղ լուրեր կան 6000 հայ զոհերի մասին: Անգորա քաղաքի համար դա միգուցե մի քանի անգամ չափազանցված է, բայց վիլայեթի համար՝ ոչ:

III. Սովորական տեղահանում՝առանց հատուկ դաժանությունների, իրականացվեցին Ադանայի, Կոնիայի և Բրուսայի վիլայեթներում, Իզմիդի սանջակում և Ադաբազար քաղաքում: Այդ տեղահանումներն սկսվել են արդեն մեկ, երկու ամսից ի վեր: Այդ տարածքներից ես լսել եմ տան արժեքավոր տնային գույքը, ամբողջ ունեցվածքը չնչին գնով վաճառելու լրիվ ապշեցուցիչ օրինակների մասին: Ասում են, որ «Զինգեր» կարի մեքենաները կարելի էր ձեռք բերել մի քանի մեջիդիեով (20 պիաստր): Հայկական կողմից միայն խոստովանում են, որ Ադաբազարում հայերի մեջ գտել են մոտ 300-400 մառուզեր, բայց նրանք հերքում են այժմյան պատերազմի հետ կապված ցանկացած հեղափոխական շարժում: Ախր Ադաբազարը նույնպես ռազմաբեմից ավելի հեռու է, քան Անգորան: Զենքի գոյությունը ներկայացնում են ճնշող և հարձակումների հակված ոչ հայկական բնակչության դեմ որպես միշտ անհրաժեշտ պաշտպանություն: Անգորայում պետք է որ ոչ մի զենք եղած չլինի:

IV. Հատուկ տեսակ է ներկայացնում Զեյթունը (Ադանայի վիլայեթ), որտեղ արդեն համաշխարհային պատերազմից վեց ամիս առաջ գործի էր դրված հայկական բնակչության (այստեղ հատկապես ուժեղ, ըստ էության, Աբդուլ Համիդի օրոք երբեք մինչև վերջ չհնազանդեցված) համակարգված դատարկումը՝ ամբողջ ընտանիքներ իրարից բաժանելով, բոլոր ուղղություններով ցրելով: Պատերազմի ընթացքում այդ տեղափոխումները ամբողջապես իրականացվեցին: Այստեղ չի կարելի չնշել մի կարևոր կապ: Հայտնի է, որ Փարիզում ապրող Շերիֆ փաշան՝ երիտթուրքերի ոխերիմ թշնամին, ի դեպ, միշտ տխուր մի անհատ, արդեն տարիներ շարունակ փորձում է երիտթուրքերի մահափորձ կազմակերպել: Նա իրականացրեց դա՝ իր ծրագրերում օգտագործելով շատ համախոհների: Նույնպես Փարիզում ապրող Սաբահեդդինին, այսպես կոչված «Հնչակյաններին», որոնք դաշնակցականների նման հեղափոխա-

կան հայկական կոմիտե են: Դա վերաբերում էր հատկապես Թալեաթ բեյին: Մոտ 20 հայ՝ գրեթե բոլորը հնչակյաններ, ավելի ուշ՝ մայիսին, Բայարիզի հրապարակում կախաղան հանվեցին, թեպետ դավադրությունը գրված էր միայն թղթի վրա և Թուրքիայի օրենքի համաձայն՝ փորձը, ինչպես մեզանում նման հանգամանքներում, նույնչափ պատժելի չէ, ինչպես արդեն իրականացված արարքը: Պատժի խստությունը բացատրվում է հենց պատերազմի հայկական թատերաբեմում տեղի ունեցող գործերով: Բայց այդ չափազանց չհիմնավորված, նույնիսկ սոսկ թվացյալ կապով կտրվում է նաև Շերիֆ փաշայի ծրագրերի (որոնք կարելի է բնութագրել որպես զուտ թուրքական խարդավանքներ) և հայկական շարժման կապը: Սակայն թուրքական կառավարությունը, ըստ օրենքով մտածող բոլոր հայերի դատողությունների, հնչակյանների «պատիժն» օգտագործեց որպես ցանկալի առիթ՝ կոմյունիկեի հրապարակմամբ (Հայկական հարցի վերաբերյալ միակ հրապարակված փաստաթուղթը): Իմ սեփական, ինչպես նաև այլ թղթակիցների հեռագրերը խոհեմաբար թաքցրել են մինչև պաշտոնական կոմյունիկեի ի հայտ գալը և այն փաստի օգտագործմամբ, որ հնչակների ակումբը ձգտում է Հայաստանի ինքնավարությանը: Երկու գործի փաստերը միտումնավոր խառնելու հանգամանքը այնպես է ներկայացված, որ դրա միջոցով ընդհանրապես կարելի է գրգռել հայերի դեմ և արդարացում գտնել հայկական բնակչության հանդեպ դաժան միջոցառումների համար: Իրականում կախաղան հանված հայերը, զոհերն ու ներթուրքական խարդավանքների գործիքները, ոչ մի կապ չունեին Հայաստանում կատարվող իրադարձությունների հետ, թեպետ նրանք պատահաբար հնչակյաններ էին: Այդպես է աշխատում թուրքական կառավարությունը: Այդպիսին են փաստերը:

Բայց իհարկե, ոչ այնքան համակրելի մարդկանց տեսակին պատկանող հայերի բարեկեցությունից ու ցավից շատ ավելի կարևոր են քաղաքական մեծ կապն ու Հայկական հարցի աստառը, նաև դրա հետ կապված ապագայի հեռանկարները: Քանզի, եթե Թուրքիայում ամեն ինչ լիներ այնպես, ինչպես մենք պետք է ցանկանանք գերմանացիների տեսակետից, ապա համաշխարհային պատերազմի համընդհանուր տառապանքի ու թշվառության մեջ հնարավոր կլիներ աչքերը փակել հայերի տառապանքի հանդեպ: Բայց, ցավոք, ամեն ինչ այլ կերպ է: Հայերի հետապնդումներում մեր առջև բավականին հանկարծակի ձեռնարկված ու խիստ համակարգված փորձ է՝ ակնհայտորեն պայմանա-

վորված ռուսների հետ կռվող հայկական լեգեոններից կրած ռազմական կորուստների ցասումով, **բայց երկրի դավաճանության համար ճնշումների չափը վաղուց անցած**, առավել ևս դրանց դեմ արտառոց նախազգուշական միջոցառումներից **վերաճած ամբողջ հայ ժողովրդի լիակատար մասնատմանն ու աստիճանական բնաջնջմանն նպատակաուղղված ձեռնարկման**: Հայերն իրենք են ասում. «Աբդուլ Համիդը մեր մեջ ջարդեր էր կազմակերպում, բայց մենք նրա իշխանության օրոք ժամանակ առ ժամանակ կարողանում էինք հարմարվել, հիմա շատ ավելի վատ են վարվում, քան ջարդն է: Սպանում և դանդաղորեն կործանում են ամբողջ հայ ազգին՝ բաժանելով ընտանիքներին և մասնատված վերաբնակեցնելով բոլորովին օտար տեղում՝զրկելով ամբողջ ունեցվածքից: Մենք դեռ կհասկանայինք, եթե երկրի յուրաքանչյուր դավաճանության և լրտեսության համար մի քանի հարյուր տղամարդ կախեին, որպես սարսափեցնող օրինակ, կարող էինք ընդունել, եթե հայկական ռազմադաշտում կատարվող գործողություններից այնտեղ հազարավորների կոտորեին, ինչպես Համիդի ժամանակներում: Բայց մենք չենք հասկանում, թե ի՞նչ են անում պատերազմից հետո Անատոլիայում: Մոլուցքով պայմանավորված ցանկացած ջարդ կարելի էր հասկանալ, բայց այս նենգորեն դանդաղ, լավ մտածված տեղահանման քաղաքականությունը՝ոչ»: **Եվ նրանք լիովին ճիշտ են**: Նույնիսկ ղեկավար գերմանական, թուրքամետ շրջանակներում այնպիսի տպավորություն ունեն, թե այն նպատակաուղղված է ամբողջ հայության դեմ: Ոմանք ասում են՝ հայերից հետո կգա հրեաների և հույների հերթը: Ոմանք լուռ մտածում են. իսկ ամենավերջում Թուրքիայից կվտարեն նաև գերմանացիներին...: Ցավոք, ես էլ՝ լինելով թուրքերի հանդեպ բավականին լավատես, իմ այստեղի առաջադրանքն սկսելով, կարճ ժամանակ անց, այլևս չեմ կարողանում ազատվել այդ զգացումից: Համոզվածությունս, որ արտահայտել եմ Գալիպոլիի իմ զեկուցագրում, ռազմական ոլորտում է և վերաբերում է Գերմանիայի որպես Թուրքիայի դաշնակցի այժմյան վիճակին: Թուրքերը կդիմանան, եթե նույնիսկ այս ամենը դեռ երկար տևի, դա հաստատ է: Ես, իհարկե, պետք է իմ շատ հոդվածներում զիջումներ անեի նաև թուրքական գրաքննչությանը, կամ էլ (քանի որ հոդվածները չեմ ներկայացնում գրաքննության)՝ թուրքական կառավարությանը:

Պետք է կարողանալ վերանալ դրանից: Եթե ես, օրինակ, ասել եմ, թե Էնվեր փաշան լավ հարաբերություններ ունի գերմանական ռազմական միսիայի հետ, ապա դա ճշմարիտ է, քանի որ Էնվեր փաշան ունի

գերմանացիների կարիքը. առանց նրանց Դարդանելը վաղուց անցած կլինեին: Պետք է լիներ նաև թշնամական կողմից պատերազմի ժամանակ եղած չափազանց անտեղի ձևակերպումների հերքում՝ տարակարծություններին դիմակայելու համար: Չեմ կարծում, թե իմ հոդվածը (1)՝ Գալիպոլիից, դուր է եկել Էնվերին: Հայկական հարցին կրկին անդրադառնալու համար, ես մեծ նշանակություն եմ տալիս դրան, քանզի այն պարզ, այս պահին իշխող թուրքական ոգու դիպուկ ախտանիշ է: Գերմանական դեսպանությունը բավականին հաճախ բարեկամաբար, բայց որոշակի ձևով թուրքական կառավարությանը հանդիմանել է հայերին հետապնդելու պատճառով: Ամենասարսափելին այն է, որ, չնայած գերմանա-թուրքական ռազմական բարեկամությանն ու սերտ դաշինքին և չնայած այն բանին, որ այս պատերազմում թուրքերը մեր կարիքն ունեն այնպես, ինչպես օդը՝ շնչելու համար, կառավարությունն անհրաժեշտ չի համարում գոնե ընդհանուր առմամբ կատարել Գերմանիայի պահանջը, որը նրան միայն բարիք է ցանկանում, քանի որ բոլոր հայ լրտեսները վաղուց անցել են ռուսական տարածք կամ կախված են, իսկ առաջադեմ հայ ժողովրդի հետագա բնաջնջումը կնշանակի ծանր տնտեսական վնաս, որից Թուրքիան հիմա, երբ պատերազմն ամայացրել է Անատոլիան, հատկապես պետք է խուսափեր: Ոչ, ամեն ինչ շարունակվում է հին ձևով, խոստումներն անորոշ են, և ոչ ոք չի հավատում դրանց և չնայած բոլոր խոստումներին՝ հենց վերջերս այնպիսի բաներ են կատարվում, որոնք ապտակ են գերմանացու դեմքին: Հայերը, ինչպես բավական հաճախ ասվել է իմ ներկայությամբ, գրեթե առանց բացառության, համոզված են, որ այն դիրքի շնորհիվ, որ Գերմանիան այսօր ունի Թուրքիայում, բավական կլիներ մի վճռական քայլ, որպեսզի փոփոխություններ առաջացներ: Նրանք չեն կարող ըմբռնել, որ ոչ մի փոփոխություն չի լինի, նրանք թաքնվում են ամերիկյան դեսպանի թիկունքում, որն իր հերթին թուրքերին առաջարկում է հայերի տառապանքները մեղմացնելու համար բանական միջոցառումներ և բազմիցս եռանդուն քայլեր է արել ընդդեմ հետապնդումների: Դրա համար էլ ամերիկյան դեսպանը գիտե նաև, այն բանից հետո, երբ Թուրքիան մերժեց միջամտությունը՝ իր երկրի միջոցով ներազդել բոլոր չեզոք երկրների վրա, այնպես որ ի վերջո բոլորը կհավատան Հայկական հարցում գերմանա-թուրքական համաձայնությանը. որպես դրա հետևանք՝ կլինի արշավանք ընդդեմ գերմանական բարբարոսության: Այդ դեպքում դեսպանությունը ոչինչ բաց չի թողնի՝ այդ հարցում ուղղումներ անելու հա-

մար: Բայց բարեմիտ գերմանական խորհուրդների հանդեպ այդ քամահրանքը կրկնակի ուշադրության է արժանի: Դա ապացույց է այն բանի, որ թուրքերն արդեն վճռել են **ամենաճանաչաբար ստեղծել զուտ թուրքական ազգային պետություն** (այդ դեպքում կփորձեն իրենց գերեզմանը) և ապա՝ այդ ամենը **արթնացող թուրքական մեծամտության** շատ ախտանիշներից միայն մեկն է:

Առաջինի կապակցությամբ ես վկայակոչում եմ արևելագետների ամենահեղինակավոր շրջանակների դատողությունները, որոնք, բացարձակ լավ հարաբերություններ ունենալով երիտթուրքերի հետ՝ իզուր ջանք են թափում՝ ավելի նվազ հոռետեսական պատկերացում կազմել պատերազմից անմիջապես հետո Թուրքիայի ապագայի վերաբերյալ: Լիովին հասկանալի է, որ թուրքերն առաջին հերթին հարված կհասցնեին **հայերին**. նրանք ոչ միայն որոշ առիթ են տվել (համաձայնենք դրան), այլև նրանք **ամենաթույլն են** ոչ թուրքերի մեջ, ովքեր ամենքից քիչ կարող են պաշտպանվել: Մյուսները՝ հրեաներ, հույներ ու եվրոպացիներ են: Թուրքական կառավարությունն առայժմ տեղին է համարում հայերի ձեռքից գնացող աշխատատեղերը, որոնք չեն կարող փոխարինվել թուրքերով, տալ հրեաներին: Այդպես, օրինակ, Արևելյան երկաթուղու բոլոր հայ ծառայողներին փոխարինեցին հրեաներով: Հույներին, որոնք հայերի հալածանքների արդյունքում նույնպես շատ շահեցին (որպես քաղաքականապես ոչ հուսալի), իհարկե, չէր կարելի օգտագործել այդ ճանապարհահատվածում, որով անցնում է դեպի Դարդանել ամբողջ թիկունքի ծառայությունը: Անատոլիական երկաթուղու ղեկավարությունը, դրան հակառակ, մինչև հիմա հաջողությամբ է պաշտպանվել իր հայ ծառայողներին ազատելուց: Ռազմական տեսակետից կարևոր հատվածներում, ինչպիսին Արևելյան երկաթուղին է, ի վերջո, բացատրելի է հայերի ազատումը. բայց անհավանական է, թե ինչպես է Սալոնիկը հունական դառնալուց հետո տնտեսապես անկում ապրել, այնտեղից այստեղ հոսող հրեաներն ամենուր կարողացան տեղավորվել ղեկավար մարմիններում և նույնիսկ քաղաքականության մեջ: Այն չափով, թե ինչքան են չքանում հայերը, նրանց տեղը գրավում են հրեաները: «Հիլալի» խմբագրության անձնակազմում (հ.-նշանակում է «Կիսալուսին», իսկ թերթը գրեթե «Թանինի» ֆրանսերեն հրատարակությունն է, ճիշտ նույնքան լավ կառավարական օրգան է) արդեն շատ հրեաներ են նստած: Թուրքերը թողնում են, որ հրեաներն իրենց լավ

զգան, քանի որ նրանք այդ անպաշտպան ժողովրդին ցանկացած ժամանակ կարող են ճնշել և ազատվել նրանից: Առայժմ հրեաները նրանց պետք են որպես հայերին փոխարինողներ՝ իրենց սեփական ինտելեկտի ու գործարարության բացակայության պատճառով: Հրեաներն, իհարկե, նաև քաղաքականապես ավելի հուսալի են, ավելի ճիշտ ասած՝ անգույն են, քանի որ մարտի 18-ին նրանք բոլորը դրեցին գլխարկներ և սկսեցին խոսել ֆրանսերեն, հիմա նրանք կրկին ֆես են դնում, գնալով ավելի շատ գերմաներեն են խոսում: Նրանք հուսով են հույներին ավելի ուշ ընդգրկել, զուտ թուրքական քաղաքականությամբ, երբ Թուրքիան մեր հաղթանակի շնորհիվ այնքան կուժեղանա, որ փոքրիկ Հունաստանն այլևս ոչինչ չի կարողանա անել ընդդեմ Թուրքիայում հույն բնակչության ծուլման: Առայժմ հայերն են զոհերը: Բայց թուրքերը միաժամանակ երկչոտ են ճնշողական իրենց քաղաքականության մեջ: Դա լավագույնս ապացուցում է **քրդերի** հանդեպ նրանց վերաբերմունքը: Աբդուլ Համիդի օրոք քրդերին բավական լավ էին վերաբերվում, նրանք զբաղեցնում էին բարձր պաշտոններ և ժամանակ առ ժամանակ նրանց բաց էին թողնում հայերի վրա: Երիտթուրքերը, դրան հակառակ, բացառեցին քրդերի ազդեցությունը, կոմիտեական կառավարությունը քրդերի մեջ ձեռք բերեց որոշ ոխերիմ թշնամիներ (ինչպես օրինակ Աբդուռեսակի հայտնի գերդաստանը, որոնք շուտ եկան դեպի ռուսները), միաժամանակ ռուսական ռուբլին սկսեց հաջողությամբ շրջանառել քրդերի մեջ և անցյալ տարվա սոսկ թվացյալ տապալված քրդական խռովությունը (կարծում եմ 1914թ. գարնանը, երբ քրդերի առաջնորդ Թահան ռուսների օգնությանը դիմեց, դրա ապացույցն էր) և քրդերի մի մասը նույնիսկ միավորվեց հայերի հետ, որոնց նախկինում, սովորաբար կոտորում էին: Ռուսաստանն, իհարկե, փորձում է ամբողջ Քրդստանը հրահրել Թուրքիայի դեմ, և քրդերի շատ մեծ հատված հայկական ռազմադաշտում լրիվ նույնն է արել, ինչ որ հայերը, միացել են ռուսների հետ: Բայց խոսք չի եղել Քրդստանում ինչ-որ ճնշումների մասին: Թուրքական կառավարությունն արդեն վախենում է քրդերից:

Հայ ժողովրդի ճնշման ամենախոր պատճառը վերջերս, Էնվեր Փաշայի տպավորությամբ՝ Ադրիանուպոլսի վերագրավման, Դարդանելի հաղթանակների և այլնի վրա հիմնված **փքուն նացիոնալիզմն ու մահմեդական ֆանատիզմն է**: Անտանտի կողմնակիցները դրա հետ, իհարկե, նաև հաստատում են՝ թուրքերը գիտակցում են, որ դեռ հնարավոր է

Դարդանելն անցնել, որ Թուրքիան կարող է պատերազմը տանուլ տալ, ուստի ուզում են, Փոքր Ասիայի հաշտության բանակցությունների ժամանակ հնարավորին չափ մեծ մասը փրկել իրենց համար, մեծ տերություններին՝ հատկապես Ռուսաստանին դնելով արդեն իրագործված փաստի առջև և կարողանա ասել, թե բոլոր այդ գավառները զուտ թուրքական են, այնտեղ հայ չկա: Այդ իսկ պատճառով դրանք մաքրում են բոլոր ոչ թուրքական բաղադրամասերից: Թեպետ այս տեսակետի քննադատությունն ավելորդ է, բայց այն, համենայնդեպս, ապացուցում է, որ ամայացման թուրքական ոչ հեռատես քաղաքականությունը դեմ է առնում ծաղրի: Դրան հակառակ՝ ինչ-որ բան կարելի է թուրքական հաշվարկներում ընդունել որպես փաստացի գործոն: Հայերը՝ այդ չափազանց խելացի, գործունյա և հարմարվելու ունակ ժողովուրդը, մինչև հիմա, այսինքն՝ մինչև ժամանակավոր ուժեղ հրեականացումը, անկասկած, այն խումբն էին, որն ամենաշատ շփումներ ուներ ղեկավար օղակների հետ: Նույնիսկ նախարարները հայերին համարում են իրենցը: Հելլենիստական մեծ պետության վերականգնման զառանցանքի վրա հիմնված թշնամանքով ու նաև համընդհանուր լրտեսական հոտառությամբ հույներին՝ առանց բացառության, թուրքերը միշտ համարել են իբրև օտար տարր, թեպետ նրանք գրեթե միշտ կարողանում էին ջրից չոր դուրս գալ (զուտ ռազմական նկատառումներով, բայց առանց դաժանությունների, հույներից դատարկվեցին միայն Բոսֆորի ափերը): Այդպես չէր հայերի պարագան, որոնք համարվում էին Օսմանյան կայսրության իսկական բաղադրամաս և ազատ, անկախ հայ ժողովրդի գոյության հավակնողական ձգտումներ ունեն սահմանի մյուս կողմում: (Հայը նաև Ռուսաստանին չի համարում բացարձակ իդեալ, նա գիտե, որ իր երկրի աշխարհագրական դիրքը իրենից խլում է ինքնուրույնության ցանկացած հույս, և եթե նա այսօր իր արյունով օգնում է ռուսներին՝ թուրքական դիրքերը գրավելու, ապա դա լոկ ապացույցն է սարսափելի վատ թուրքական կառավարության, որը նրան ճնշել է, չնայած բարեփոխումների բոլոր նախագծերին): Այդ իսկ պատճառով, ըստ հին թուրքական տեսակետի, հայն ավելի վտանգավոր, հարաբերություններում ավելի սերտաճած հակառակորդ ու մրցակից է, որին պետք վերացնել առաջին հերթին: Նրան բնաջնջելը պետք է սկսել արդեն իսկ պատերազմի ընթացքում, նրան պետք է մեծ ջանքերով տեղահանել դեպի երկրի բոլոր հեռավոր մասերը, մինչդեռ մեծաթիվ հունական բնակչությունը

հարմար պահին, այսինքն՝ երբ Հունաստանը ուժեղացած Թուրքիային ընդհանրապես այլևս ոչինչ չի կարողանա անել, միմիայն կամայական միջոցառմամբ, որն առևտրի մեջ կկտրի նրա կենսական նյարդը, ինքն իրեն Հունաստան կմեկնի: Կառավարությունը չի ուզում սպասել, մինչև որ գերմանացիների աճող ազդեցությունը պատերազմից հետո դժվարացնի հայերի արտաքսումը, դրա համար էլ հիմա անում է ամեն հնարավոր բան, բայց չի կարող պատերազմի ժամանակ հայերին պարզապես արտաքսելու հրաման տալ, քանի որ առաջին հերթին բացակայում են ճանապարհային կապերը դեպի արտասահման և երկրորդ՝ չի ուզում, որ Թուրքիան լքեն այդքան շատ մարդիկ, ովքեր ամեն ինչ գիտեն, թե ինչ է կատարվում երկրի խորքում, և այդ կերպ լուրը կհասցնեն թշնամական արտասահման: Դրա համար էլ նախընտրում են տեղահանման հյուծիչ (ինչպես տուժածների, այնպես էլ կառավարության համար) ու դաժան համակարգը: Որոշ ժամանակ կանանց ու երեխաներին թույլատրվեց լքել Թուրքիայի տարածքը, ապա (օգոստոսի սկզբին) վերացրին նաև այդ թույլտվությունը:

Չեմ ցանկանում իմ փաստարկումներով այնպես հասկացվել, թե իբր անմիջապես սպասվում է լարվածություն գերմանացիների (ընդհանրապես եվրոպացիների) և թուրքերի միջև կամ արդեն իսկ սկսվել է: Ընդհանուր առմամբ, Փառք Աստծո, մենք դեռևս տիրապետում ենք իրավիճակին և **քանի դեռ շարունակվում է պատերազմը, ամեն ինչ լավ կլինի**: Հոռետեսներն, իհարկե, արդեն իսկ Էնվեր Փաշայի անմեղ խոսքի մեջ էլ, ինչպես թագադիր արքայազնին ուղղված հեռագրի կետում, որ «նա հուսով է, որ կկարողանա թշնամուն ծովը շպրտել», ակնարկ են տեսնում, որ Էնվերին ավելի հաճելի է թշնամու հախից միայնակ գալ, և նա արդեն հիմա ցանկանում է կանխել գերմանական զորքերի ուղարկումն այստեղ՝ Սերբիայի միջով ճանապարհը բացելուց հետո: Անշուշտ, թուրքերն ավելի շատ սիրում են ռազմամթերք ու հրետանի, նաև վաճառված նավեր, քան անմիջական զորքեր ուղարկելը, այնուամենայնիվ, ես չեմ կարող միանալ գերմանացիների այդքան խոր ու չափազանցված անվստահությանը: Բայց ինձ թվում է՝ փաստ է, որ **թուրքերը բավականին կուշտ են մեզնից՝ գերմանացիներից**, միայն թե ռազմական տեսակետից՝ դեռ ոչ, որովհետև նրանք դեռևս մեր կարիքն ունեն: Թուրքը՝ լինելով զուտ արևելցի, պատերազմից հետո շուտով իրեն իրավունք կվերապահի անցնել ֆրանսիացիների ազդեցության ներքո. իհարկե, այլ հարց է, թե ֆրանսիական ազդեցությունն ինչ-որ կերպ հիշարժան կլինի՞

նյութական առումով: Մեզ՝ գերմանացիներիս հետ, իսկական լարվածության շրջանը, թերևս, բավական հեռու է, այդ ժամկետը պայմանավորված է նաև այն բանով, թե ինչ կուզենանք մենք Անատոլիայում և այլն: Իմ այսօրվա գաղտնի հաղորդագրության ամբողջ նպատակն է՝ նախազգուշացնել ինչպես **Թուրքիայի բարգավաճման, այնպես էլ գերմանա-թուրքական հարաբերությունների** լավատեսության առումով: Ես անհրաժեշտ եմ համարում, արդեն հիմա անել այդպիսի նախազգուշացում, որովհետև արդեն երկար ժամանակ գոյություն ունեցող գրաքննության վիճակը կարգելի ինձ և մյուսներին հրապարակել թերթում այն, ինչը համապատասխանում է զուտ ճշմարտությանը, այդպիսով հեշտությամբ կստեղծվեր կեղծ պատկերացում: Իմ երկար խրատական նամակի վերջում կցանկանայի ավելացնել նաև որոշ մանրամասներ, որոնք ես դիտարկում եմ որպես արքնացող թուրքական ոգու ախտանիշներ: Այդ ոգին, որը ես համարում եմ հիշատակման արժանի, անմիջապես նկատել է նաև արտակարգ միսիայի դեսպան իշխան Հոհենլոհեն: Երբ վերջինս իր ժամանումից հետո ինձ կարճ ժամանակով ընդունեց, այնքան կարճ, որ հազիվ կարողացա գրի առնել ամենակարևոր տպավորությունները, բայց միաժամանակ նաև բավականին երկար, որպեսզի կարողանայի պարզ պատկերացում կազմել, իմ մի հարցին, որում բացակայում էր սեփական տպավորության մասին որևէ ակնարկ, անմիջապես ինձ հակաճառեց. «Շատ հետաքրքիր կլինի տեսնել, թե Գերմանիային ինչպես կգոհացնի արքնացող թուրքական նացիոնալիզմը»: (Ես խնդրում եմ՝ այս միտքը քննարկել հատկապես գաղտնի): Կարծես թե դեսպանի այդ տպավորությունը գերակշռում է ամբողջ մնացյալին:

Այն, որ թուրքերն այդպես հանկարծակի վերացրին կապիտուլյացիաները[52], արդեն այդ ոգու հստակ ախտանիշն էր: Հենց դրա վերացմամբ, որն այդ ճանապարհին ամենադժվար առաջին քայլն էր, նրանք ի վիճակի են շատ արագ, սեփական հայեցողությամբ փոխել ամբողջ վերաբերմունքը եվրոպացիների հանդեպ: Մենք՝ գերմանացիներս, նույնպես բացարձակապես ոչ մի հիմք չունենք ուրախանալու՝ հունիսին Թալեաթ բեյի հաստատած բոլոր **ֆիրմաների ֆրանսերեն ցուցանակների** լիակատար ճնշման համար: Այն պատրվակով, որ ֆրանսերենը թշնամու լեզու է, արեցին առաջին քայլը՝ բռնի վերացնելով Արևելքում փաստացի շփման եվրոպական լեզուն, միաժամանակ պարտադիր

52. Օտարերկրացիներին որոշակի արտոնություններ ընձեռող պայմանագրեր (ծան. թարգմ):

դարձնելով ֆիրմաների թուրքերեն ցուցանակները: Այնուհանդերձ, պետք չէ մտածել, թե դրանով ինչ-որ կերպ ավելացան ֆիրմաների գերմաներեն ցուցանակները: Գերմանական ֆիրմաների մեծ մասը, թերևս իմանալով, թե ինչ են մտադրվել, սահմանափակվեցին թուրքերեն ցուցանակներով, և այսօր շատ դժվար է Պերայում կողմնորոշվելը: Հունարենը, հայերենը, եբրայերենը պահեցին, որովհետև երկրորդական կարևորություն ունեն: Հարվածը հասավ հենց եվրոպականին, դիպավ նաև ֆրանսերենին, մեզ՝գերմանացիներիս՝ նմանապես: Իսկ հիմա ես կուզենայի մատնացույց անել **«Հիլալի» օգոստոսի 31-ի մի հոդվածը**, որն, իմ կարծիքով, անամոթություն ու հանդգնություն է: Երիտթուրքական կոմիտեի այդ օրգանը առաջնորդող մի հոդվածում գրում է. „Devant l'ère nouvelle: "--- C'est la renaissance militaire et politique aussi bien que morale et intellectuelle de notre pays --- Le pays a prouvé qu'il peut, le cas échéant, se passer economiquement du concours étranger, se suffira à lui-même pour ses besoins stricts qu'il conserve intact son génie d'organisation, qu'il est richement doué de forces productrices. Nos hôpitaux ne le cèdent en rien aux meilleurs etablissements similaires de l'Europe"--- etc.

Եվ այդ նույն հոդվածում «Հիլալը» հարված է հասցնում գերմանացի պրոֆեսորներին, որոնց Թուրքիայի կրթության նախարարությունը հրավիրել է այստեղ աշխատելու, ասելով, թե այդ ամենում ամենակարևորը, համենայնդեպս, մնում է, լեզվի հարցը, և պետք է ցավել, որ հրավիրված դասավանդողներին անորոշ ժամանակ են հատկացրել թուրքերենն ուսումնասիրելու համար՝ փոխանակ նրանց պայմանագրով պարտավորեցնելու, որ այն տիրապետեն հստակ որոշված ժամկետում:

Սրանք կարող են թվալ ոչ այնքան կարևոր մանրամասներ: Բայց դրանք ցույց են տալիս այն ուղին, որով կընթանան գործերը: Եվ դա կրկնելու համար կուզենայի սոսկ ակնարկել, որ ես հեռու եմ վարդագույն լավատեսությանը տրվելուց: Գրաքննչությունը, ցավոք, հաճախ արգելում է իսկապես բոլորովին անմեղ բաների վերաբերյալ հաղորդագրությունները, նույնիսկ շատ կարևոր ու բարենպաստ փաստերի մասին հեռագրերն անպատշաճորեն երկար է պահում, այնպես, որ փողը հենց այնպես ջուրը չգցելու համար բացարձակապես ոչ մի բանի մասին չի հեռագրում՝ գիտակցելով, որ W.T.B.-ն[53] տալիս է այն ամենը, ինչ թուրքերը հաղորդելու համար հարմար են համարում: Բայց ես ուշադրու-

53. Վոլֆի հեռագրային գործակալությունը:

թյամբ հետևում եմ զարգացումներին, և երբ մի օր դիվային ռազմական գրաքննչությունը լուծարվի, ապա ես, թերևս, ավելի հաճախ առիթ կունենամ անկեղծ խոսք ասելու: Մինչ այդ պետք է բավարարվեմ հաղորդագրություններով, որոնք հիմա, երբ ես տեսա, որ հաջողվում է, կգան կանոնավոր հաջորդականությամբ:

Կոնստանդնուպոլիս, 6 սեպտեմբերի, 1915

Խիստ գաղտնի

Հազիվ էի վերջացրել իմ երեկվա զեկուցագիրը, երբ «Հիլալ»-ն ինձ ուրախացնում է «Notre mission en Orient»[54] վերնագրված առաջնորդող հոդվածով, որտեղ գրեթե յուրաքանչյուր տողից **ժայթքում է արդի Թուրքիայի մեծամոլությունն ու ազգայնամոլությունը**: Ես այսօր սահմանափակվում եմ հոդվածն այստեղ ընդգծումներով կցելով:

Երեկվա իմ ասածից հետո ես դեռ տեղեկանում եմ, որ արդեն բազմիցս սկսել են Թուրքիայում գերմանական ձեռնարկությունները թուրքացնել: Սկսում են մանրուքներից. ֆիրմաների ցուցանակների հետ նաև անձնակազմի գլխարկների համարներն ու ցուցանակներն են զուտ թուրքերեն, նաև ամբողջ գործավարությունը պետք է լինի թուրքերեն: (Գոյություն ունեն դրա վերաբերյալ օրինական կարգադրություններ, որոնք մոտ երեք ամսվա վաղեմություն ունեն, բայց մինչև այժմ վրիպել են իմ աչքից. ես կհավաքեմ դրանք և կուղարկեմ:) Շատ լավ գիտեն, որ գերմանացի հին տնօրեններն այլևս ի վիճակի չեն հանկարծակի թուրքերեն սովորելու, այդ կերպ նրանց դուրս կմղեն, քանի որ այդ դեպքում այլևս չեն կարողանա հսկել սեփական գործարար թղթաբանությունը, անհրաժեշտ կլինի ծառայության ընդունել թուրք կամ թուրք-հրեական անձնակազմի ավելի մեծ տոկոս և այլն: Այդ միտման դեմն առնելու միակ ուղին այն է, որ գերմանացի գործարարներն արդեն Գերմանիայում սկսեն լավ թուրքերեն սովորել, որն, այնուամենայնիվ, շատ դժվար է, բայց անհրաժեշտ, եթե թուրքերն այսպես շարունակեն: Ղեկավար շրջանակները գերմանացի պրոֆեսորներին հրավիրելու մեջ, ովքեր արդեն հոկտեմբերի 1-ին կգան այստեղ, նույն պատճառներով նախապես ֆիասկո են կանխատեսում: Որպես առանձին, բայց Թուրքիայում եվրոպացիների դիրքի վերաբերյալ թուրքերի ազգայնամոլական հայացքների բնորոշ նշան, ես՝ որ**պես խիստ գաղտնի**, կցանանայի նաև հաղորդել, որ այստեղի ավստ-

54. «Մեր միսիան Արևելքում»:

ռիական գլխավոր հյուպատոսության մի բարձր պաշտոնյայից լսել եմ, թե թուրքերը վերջերս հանդգնություն են ունեցել քշել **գերմանական հյուպատոսության ծառայող Շթոյերցեթելին**: Իհարկե, տվյալ հայտնողը դուրս է թռել: Կապիտուլյացիաների վերացման հոդվածի մասին պատերազմից հետո նույնպես դեռ լուրջ զրույց կկայանա: Գնալով ավելի պարզ է դառնում, որ հրեաների մեջ, առնվազն «Դյոնմես»-ի դասում (այսինքն՝ իսլամ ընդունած հրեաներ Սալոնիկից) հատկապես եռանդուն են մասնակցում թուրքական նացիոնալիզմին: Այնպիսի հոդվածները, ինչպիսին է «Հիլալ»-ինը, գրվում են «Դյոնմես»-ում: Ներքին գործերի նախարար Թալեաթ բեյը, որն անձամբ ծագումով Սալոնիկից է, թերևս ոչ այլ ինչ է, եթե ոչ դյոնմե: Ես հիմա բացարձակ հակասեմիտական գերմանական շրջանակներում լսել եմ այն տեսակետը, թե Գերմանիան դյոնմեների այդ դասին չպետք է անտեսի, այլ ընդհակառակը, մի քիչ խրախուսի, քանի որ այն երիտթուրքական կոմիտեում գնալով ավելի շատ ազդեցություն է ձեռք բերում և նրանց միջոցով Թուրքիայում կարելի է շատ բանի հասնել: Ես ինքս այլ կարծիքի եմ, ոչ թե հակասեմիտականի, այլ այն զգացման վրա հիմնվելով, թե այդ կոմիտեի հանցախումբն՝ իր հրեաներով, չի ներկայացնում թուրք ժողովրդին և որ Գերմանիան, եթե պատերազմից հետո շատ եռանդուն հանդես գա, նաև առանց նրանց և հակառակ նրանց, նույնիսկ շատ ավելի լավ կհասնի նպատակին: Ակնհայտ է, որ մենք պետք է մեծ նշանակություն տանք Թուրքիային այն բանից հետ, երբ, ցավոք, կորցրինք մեր միջմայրցամաքյան տնտեսական շահերի այնքան մեծ մասը և միայն մեծ ջանքերով կրկին պետք է վերականգնենք: Բայց Թուրքիայում է **Անատոլիան**, այն ամենով, ինչը Արևելքում միանում է դրան (Հայաստան, Պարսկաստան, արաբական շրջաններ և այլն), գլխավորը, որ **հասարակ անատոլիացին իսկապես սիրում է Գերմանիան**, նա, ով առաջին հերթին իր արյունն է հեղում Դարդանելում, մեր անկեղծ բարեկամն է և ուրախություն է՝ միասին այդքան տղաների հետ լինելը: Եվ ինչպես նա, այդպես էլ ասիական Թուրքիայի մյուսը բոլոր ժողովուրդները, ինչպես հիմա դաժանորեն հալածված հայերը, չնայած բոլոր պաշտոնական խոսքերին՝ դեռևս անհուսալի սիրիացիներն ու այլք, ուրախությամբ ողջունում են գերմանացիների մշակութային աշխատանքը, մեզ համար հեշտ կլինի նրանց հետ լեզու գտնել, և եթե մենք երբևէ լոկ իրականացնենք Թուրքական կառավարության հանդեպ գլխավորը, ապա այդ մեծ ապագա ունեցող երկրներում մեզ համար տնտեսական գործունեության

ասպարեզում ուժեղ նեցուկ կծառայեն: Այդ իսկ պատճառով ես դեմ եմ Ստամբուլում նստող կոմիտեի հանցախմբին (նրանց, և ոչ թե իսկական թուրք ժողովրդին են վերաբերում իմ բոլոր նախազգուշացումներն ու հոռետեսությունը), ավելի շուտ եռանդի համար, քան քննանքի, և առավել ևս չեմ կարող հանդես գալ այն բանի համար, որ պետք է խրախուսվեն ելիտթուրքերի սեղանից խժռող հրեաները:

(Արտգործնախարարությունը Կոստանդնուպոլսի դեսպանությանը (№ 738) 30.9)

Կից՝ հրապարակման համար չնախատեսված, «Քյոլնիշեր ցայտունգի» այնտեղի թղթակցի զեկուցագրերը հավատարմորեն ուղարկվում են *տիտղ.* Պերայի դեսպանին՝ գաղտնի ծանոթացման համար, եթե կհաճեք:

1915 – 09 – 06 – DE – 001

Սկզբնաղբյուրը՝ PA-AA/R14087

Ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին՝ Ալեքսանդրետի փոխհյուպատոս Հոֆմանից

B № 824/K №17

Ալեքսանդրետ, 6 սեպտեմբերի 1915

Այստեղ ապրող **հայերի** աքսորը հրահանգվեց այս տարվա օգոստոսի 1-ին և այսօր ավարտվեց:

Ընդհանուր առմամբ հենց Ալեքսանդրետից հեռացվեց մոտ 1000 հոգի, գրեթե նույնքան էլ՝ 10 կմ հեռավորության վրա գտնվող Բեյլան ավանից և մոտակա լեռնային գյուղերից:

Դատարկումը պետք է սկզբում իրականացվեր «անմիջապես»: Դրան համապատասխան հայերի մի մասին տրվեց երեքօրյա, մնացածին՝ ութօրյա ժամկետ: Փոխադրամիջոցների պակասը և դրամական օգնության բացակայությունը և այստեղի կայմակամի շրջահայացությունը աքսորի բաշխումն այնուամենայնիվ, հասցրին մոտ 5 շաբաթվա:

Աքսորյալների մեծ մասի համար որպես փոխադրամիջոց ծառայում էին սայլեր, ինչպես նաև բեռնակիր ձիեր և ավանակներ, որոնք բռնագրավվում էին մահմեդական բնակչությունից:

Հայերն իրավունք ունեին իրենց շարժական գույքը վաճառել, անշարժ գույքը, այրան հակառակ, չէին կարող ո՛չ վաճառել, ո՛չ էլ վարձակալության տալ: Նրանք իրավունք ունեին նոր հավաքած դաշտային բերքը վաճառել, մինչդեռ դեռևս ցողունի վրա եղած պտուղից օգտվելու իրավունքը պաշտոնապես տրվեց վարձակալության՝ հոգուտ պետական գանձարանի: Կառավարությունում ակնհայտորեն հորինում են, թե իբր վերաբնակեցման վայրում աքսորյալները կստանան թողածին համարժեք փոխհատուցում:

Այնպիսի հայերի ընտանիքների համար, ովքեր այս պահին զինծառայության են, սկզբում բացարձակապես աքսորից բացառություն **չարեցին**: Ավելի ուշ՝ գոնե Ալեքսանդրետում այդպիսի ընտանիքներ կային, մինչդեռ հարևան Բեյլան բնակավայրում և լեռնային գյուղերում չկային: Այն, որ նրանց համար բացառություն չարվեց, կառավարությունը հիմնավորում էր այն տվյալներով, որ իբր բոլոր հայերը դասալիքներ են: Դա ոչ միայն դժվար է պատկերացնել, այլև փաստորեն ճշմարիտ չէ: Ինձ հայտնի դարձած դասալքության դեպքերում, կարծես թե դասալիքներն իրենց պարտականության կատարմանն ընդդիմացել են իրենց մերձավորներին սպասվող տեղահանման ու աքսորի մասին լուրն ստանալուց և տուն գնալու համար արձակուրդ տրամադրելու դիմումը մերժելուց հետո միայն: Մասամբ այդպիսի դասալիքներն իրենց ընտանիքներում որոշ ժամանակ լինելուց հետո վերադարձել են զորամաս: Այդ փաստերը հաշվի են առել Ալեքսանդրետում ու Բեյլանում՝ այդպիսի դեպքերում գոնե մեղմ վերաբերմունքով: Բազմիցս սահմանափակվել են նույնիսկ նրանով, որ դասալիքներին առանց այլևայլի աքսորել են մերձավորների հետ:

Ընդհանուր առմամբ այստեղի իշխանությունները՝ հատկապես տեղական ղեկավարության գլխին կանգնած կայմակամ Ֆաքին բեյը, կարողացան հնարավորին չափ մեղմ կատարել իրենց տրված հրամանները՝ առանց վնասելու դրանց հիմքում առկա պետական շահը: Այն, որ այդ հնարավորությունը չնչին էր, դա տեղական իշխանությունների մեղքը չէր:

Տեղահանումից բացառություններ եղան միայն քչերի համար: Հալեպի ամերիկյան հյուպատոսության և ամերիկյան դեսպանության ջանքերով երբեմն հնարավոր եղավ թողնել հայ կաթոլիկներին (70-80 հոգի), հետո նաև բողոքականներին (Ալեքսանդրետում՝ 40-50 հոգի, Բեյլանում և մերձակայքում՝ մի քիչ ավելի): Ավելի ուշ կարգադրություն եղավ, որ այդ երկու կատեգորիաներն էլ պետք է մաքրազատեն ծովափը, բայց նրանց թույլատրվեց մնալ ծայրամասի որևէ բնակավայրում՝ իրենց սեփական ընտրությամբ:

Տեղահանման նպատակը, ըստ երևույթին, վերաբնակեցումն է Հալեպից դեպի հարավ գտնվող սարահարթում (Համա և Հոմս), որոնք մինչև այժմ ունեն սակավաթիվ **մահմեդական** արաբ բնակչություն: Եթե հիշվի այն անմտությունն ու անկարողությունը, որ թուրքական իշխանությունները ցուցաբերեցին Բալկանյան պատերազմից հետո մահմեդական փախստականներին բնակեցնելիս, որոնց հետևանքը եղավ անչափ մեծ մահացությունը այդպիսի թափորներում, ապա առանց դժվարության կարելի է ենթադրել՝ դա հաստատում են նաև թուրք պաշտոնյաները, որ տեղահանված հայերի, հատկապես լեռնաբնակների մեջ մահացությունը շատ ավելի մեծ կլինի: Կարելի է առանց խոսքի նաև ենթադրել, որ մեր հակառակորդներն այդպիսի եղանակի ստվերը նետելու են նաև մեր երկրի վրա: Այդ անուրախալի կողմնակի ազդեցության մասին թող այստեղ այնուհանդերձ այլևս խոսք չլինի:

Ընդհակառակը, արժե ընդգծել, որ Թուրքիայի պետական շահի համար այստեղի ծովափնյա հայերի տեղահանումից ակնկալվող կասկածելի օգուտից ավելի մեծ կլինի տնտեսական այն վնասը, որը կսպառնա տվյալ տեղանքին:

Որպես տեղահանման պատճառ ասվում են դավաճանական գործողությունները, որով մեղավոր են դարձել Լաթաքիայի և Քեսաբի (ինչպես նախկինում Դյորթյոլի մոտ) ծովափնյա հայերը, իսկ Ալեքսանդրետի հայերը կասկած են հարուցել: Այս միջոցին պետք է բացառված համարել, որ այստեղի հայերն իրենց հակաթուրքական և հակագերմանական զգացմունքները կարող են փաստացի լրջորեն գործադրել ի վնաս Թուրքիայի, եթե իշխանությունները գոնե ինչ-որ չափով աչալուրջ են: Դրան հակառակ այստեղի լեռնաբնակ հայերի հանդեպ առաջադրված կասկածը, թե նրանք ուտելիքով աջակցում էին Ամանոսի լեռների լանջերն անապահով դարձնող դասալիքներին, ինչ-որ չափով, անշուշտ, հիմնավորված է: Այնուամենայնիվ, դասալքության այդ ամբողջ հարցի վտանգավորությունը թվում է ուռճացված:

Մյուս կողմից՝ ինչ վերաբերում է տնտեսական շահերի վտանգմանը, ապա, այնուամենայնիվ, Ալեքսանդրետի հայ բնակչությունը կազմում էր, ընդհանուր բնակչության միայն 1/6 մինչև 1/5 մասը (նորմալ՝10-12000): Բայց այդ ոչ մեծ մասն առանձնանում էր գործարարությամբ, վարպետությամբ, նպատակասլացությամբ՝ առնվազն «ֆելահական» (Նուզեյրի) և մահմեդական թուրք բնակչության համեմատությամբ, որը կազմում է մնացած բնակչության մեծ մասը: Հայերի տեղահանման հետևանքով այ-

սօր Ալեքսանդրետում բացակայում են ամենահմուտ արհեստավորները: Քաղաքը մնացել է առանց ատամնաբույժի, առանց ժամագործի: Քաղաքը լքել են ամենագիտակ բժիշկները, հմուտ վաճառականների անձնակազմը, կարևոր առևտրականները: Հենց Ալեքսանդրետի մեծության (ինչպես վերևում նշվեց՝ 10-12000 բնակիչ, հիմա, իմիջիայլոց, հազիվ մոտ 4000) տնտեսապես այդքան արժեքավոր ու նաև բնակչության՝ **կլիմային հարմարված** մասի բացակայությունը նշանակում է զգալի տնտեսական վնաս՝ Բաղդադի երկաթուղուն առնչված մեծ տնտեսական խնդիրներում, որոնք շուտով կծառանան այդ բնակավայրի առջև:

Թեպետ հիշյալ տնտեսական մեծ խնդիրների սկիզբը (նավահանգստի կառուցումը, ճահիճների չորացումը, երկաթուղային կապի ստեղծումը Հալեպի և նրա թիկունքում փռված մեծ տարածքի միջև) կբերի մեծ ներգաղթի՝ հիմա առաջացած բացերը լրացնելու համար, բայց այդ ներգաղթի համար զգալի ժամանակ կպահանջվի, որպեսզի կարողանան հարմարվել այստեղի տենդային կլիմային (Հենրի Գոյը 1907թ. լույս տեսած աշխատությունում Ալեքսանդրետն անվանում է «Essai sur l'Agriculture du Golfe d'A, plage meurtriere»).

Աքսորված հայ **գյուղացիների** հողատարածքներում պետք է որ տեղավորվեն մահմեդական փախստականները: Վերջին տարիների այդպիսի փախստականների հետ ունեցած փորձի համաձայն՝ խիստ կասկածելի է, թե նրանք իրենց ջանասիրությամբ կմրցեն նախորդների հետ: Այս տարածքի գյուղատնտեսության համար էլ հայերի աքսորը կազդի բացասաբար:

Հոֆման

1915 – 09 – 09 – DE – 001

Սկզբնաղբյուրը՝ PA-AA (Կոստ.դեսպ.)170

Կոստանդնուպոլսի դեսպանությանը՝ Մոսուլի փոխհյուպատոս Հոլշտայնից

№ 39

Մոսուլ, 9 սեպտեմբերի 1915

Ըստ Ջեզիրեհից Բաղդադ այստեղով անցնող թուրքական զորքերի պատմությունների, հիշյալ քաղաքում մի շաբաթ առաջ՝ տեղական իշխա-

նությունների թույլտվությամբ ու զինվորների մասնակցությամբ, կարծես թե, կոտորել են բոլոր քրիստոնյաներին՝ Դիարբեքիրի պատգամավոր Ֆեթքի բեյի վարձած քրդերի միջոցով: Ճանապարհորդների պատմածները համահունչ են, այստեղի խալդի պատրիարքը հաստատեց նույնը: Այստեղի ղեկավարությունն ինձ տվեց խուսափողական պատասխան:

Խոնարհաբար խնդրում եմ Բարձր Դռան ուշադրությունը հրավիրել դրա վրա:

Մենք նույնպես զուտ գործնական հետաքրքրություններ ունենք՝ անկախ այն ամենից, որ մեր ընտրած գլխավոր էտապային վայրում պահպանվի կարգուկանոն:

[Հոլշթայն]

1915 – 09 – 09 – DE – 002

Սկզբնաղբյուրը՝ PA-AA (Կոստ.դեսպ.) 96

Կոստանդնուպոլսի դեսպանությանը՝ Սամսունի փոխհյուպատոս Քուքհոֆից

№ 377

Սամսուն, 9 սեպտեմբերի 1915

Այս տարվա հուլիսի 19-ի B №1619 հրամանի կապակցությամբ:

Մեղմունի քահանայի և Գրիգոր Հաղիգյանի, ինչպես նաև Ներապոլումի միավորման քույրերի ճակատագրի վերաբերյալ բոլոր փորձերն անպտուղ էին: Հյուպատոսությունների (նաև գերմանացիների) տեղեկություններ հավաքելը իշխանությունների կողմից ընկալվում է որպես անցանկալի միջամտություն պետության ներքին գործերին: Հայ կաթոլիկների եկեղեցին և եկեղեցական պրեսբիտերականությունը (երիցականությունը), ինչպես ընդհանրապես բոլոր եկեղեցիները, դպրոցները, ամբողջ ժողովրդի անձնական սեփականությունը պաշտոնապես բռնագրավված և կնքված է՝ ներառյալ իսլամ ընդունածների անձնական սեփականությունը:

Այս դժբախտ ժողովրդի ճակատագրի վերաբերյալ երկրի խորքից եկած լուրերը սարսափազդու են: Նրանք, ովքեր իսլամ չեն ընդունել, ըստ

երևույթին, զոհ են դարձել կամ կառավարության հավաքագրված ավազակային հրոսաախմբերի դահճային կացիններին, կամ էլ կկործանվեն զրկանքներից: Երիտասարդ կանանց ու աղջիկներին կքշեն հարեմներ, իսկ երեխաներին, ովքեր չեն զոհվի ուղևորության ընթացքում, կհանձնեն մուսուլման ընտանիքներին: Իսլամ ընդունածներն էլ իրավունք չունեն մնալ իրենց բգնակավայրերում: Ըստ երևույթին, նրանց ցրում են ամբողջ երկրով մեկ, ընդ որում՝ մասնատված, Փոքր Ասիայի խորքում մահմեդական բնակչության մեջ: Ծովափին ոչ մի հայի մնալ չի թույլատրված:

Թե որքան հիմնավոր են գործում, վկայում են վերջերս այստեղ ընդունված կառավարական միջոցառումները: Որոշ հայ մայրեր իրենց երեխաներին գաղտնի տեղավորել են հունական ընտանիքներում: Այդ խեղճ արարածներին՝ այդ թվում ծծկեր երեխաների, ծանր տույժերի սպառնալիքով խլեցին իրենց քրիստոնյա զգացող որդեգրած ծնողներից: Հույն քրիստոնյաները դողում են և հիմք ունեն, քանի որ առաջին իսկ առիթի դեպքում նրանց սպասում է նույն ճակատագիրը, ինչպես հայերին: Եթե Հունաստանն անցնի թշնամական ճամբար, ապա նրանց հավատակիցները Թուրքիայում կորած են:

Ներուկաղնեզարն ու Աբդուլ Համիդը նկարագիր ունեցող մարդիկ էին և բնաջնջման տաղանդի հարցում լրիվ դիլետանտ էին, քանի որ մի քանի շաբաթվա մեջ ամբողջովին արմատախիլ անել լայնարձակ երկրով մեկ ցրված մի ամբողջ ժողովուրդ, ինչը մենք հիմա ապրում ենք սոսկալով, ի վիճակի չէին այդպիսի հաջողությամբ ի կատար ածել ո՛չ դեռևս Չինգիզ խանը, ո՛չ Թամերլանը և ո՛չ էլ վաղեմի թուրք սուլթանները:

Քուքհոֆ

1915 – 09 – 10 – DE – 001

Սկզբանղբյուրը՝ PA-AA (Կոստ.դեսպ.)170
Հրապարակված՝ Գ և Հ . փաստ .165 (խմբ.կրճ.)

Կոստանդնուպոլսի դեսպանությանը՝ Ադանայի հյուպատոս Բյուգեից

№ 22

Ադանա, 10 սեպտեմբերի 1915

№ 37 Հեռագրի պատասխանը

Բարձր Դռան օգոստոսի 29-ին հայերի վերաբերյալ կայզերական դեսպանություն ուղարկած հաղորդագրությունը բացարձակ հանդուգն **խաբեություն է** դեսպանությանը, որովհետև այստեղ ուղարկված հրահանգիչ Ալի Մունիֆ բեյի պնդմամբ Բարձր Դուռն այնուհետև ամբողջովին վերացրեց այդ կարգադրությունը: Իշխանությունները, ինքնին հասկանալի է, գործում են միայն երկրորդ ցուցումով և շարունակում են տեղահանումը՝ առանց կրոնական տարբերության: Հրահանգով սպանված հայերի թիվը, հավանաբար, արդեն գերազանցում է 1909թ. երիտթուրքերի կազմակերպած ջարդերի զոհերի քանակը: Հնարավոր է, որ ոչ գերմանական մամուլն ավելի մոտենա կոտորածների թեմային, չնայած մինչև հիմա թուրքական հյուպատոսությունների կողմից արված հերքումներին:

Իմիջիայլոց, այստեղի կոմիտեի ղեկավար Իսմաիլ Զաֆան սպառնացել էր համատարած ջարդերով, եթե հայերը չտեղահանվեին:

[Բյուգե]

1915 – 09 – 14 – DE – 001

Սկզբանաղբյուրը՝ PA-AA / R14087

Ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին՝ Կոստանդնուպոլսում արտակարգ միսիայի դեսպան Հոհենլոհե-Լանգենբուրգից

№ 565

Պերա, 14 սեպտեմբերի 1915

Ադանայի կայզերական հյուպատոսը՝ վկայակոչելով օգոստոսի 29-ին Բարձր Դռան հաղորդած հեռագրի՝ աքսորված հայերի հանդեպ վերաբերմունքի վերաբերյալ հատվածը հեռագրով հաղորդում է հետևյալը.

«Օգոստոսի 29-ին Բարձր Դռան հայերի վերաբերյալ կայզերական դեսպանությանն ուղարկած հաղորդագրությունը բացարձակ հանդուգն **խաբեություն** է դեսպանությանը, որովհետև այստեղ ուղարկված հրահանգիչ Ալի Մունիֆ բեյի պնդմամբ Բարձր Դուռն այնուհետև ամբողջովին վերացրել է այդ կարգադրությունը: Իշխանությունները, ինքնին հասկանալի է, գործում են միայն երկրորդ ցուցումով և շարունակում են տեղահանումը՝ առանց կրոնական տարբերության: Հրահանգով սպանված հայերի թիվը, հավանաբար, արդեն գերազանցում է 1909թ. երիտթուրքերի կազմակերպած ջարդերի զոհերի քանակը: Հնարավոր է, որ ոչ գերմանական մամուլն ավելի մոտենա կոտորածների թեմային, չնայած մինչև հիմա թուրքական հյուպատոսությունների արած հերքումներին:

Իմիջիայլոց, այստեղի կոմիտեի ղեկավար Իսմայիլ Զաֆան սպառնացել էր համատարած ջարդերով, եթե հայերը **չտեղահանվեն**»[55]:

Իսկապես Բարձր Դռան տրամադրած արտոնությունները հետին թվով բազմիցս կրկին սահմանափակվել են, հատկապես Ադանա և Անգորա գավառների կապակցությամբ: Այդպես, օրինակ, ներքին գործերի նախարարությունը պնդում է, որ արդեն աքսորում գտնվող հայերը, որքանով որ նշված արտոնությունները կիրառելի են նրանց համար, չվերադառնան իրենց հայրենիք, այլ հասցվեն նշանակման վայրը: Այդ մասին անհրաժեշտ հստակությամբ չի խոսվում Բարձր Դռան երեք հեռագրերից առաջինում, առնվազն մեզ հաղորդված հեռագրի գերմաներեն թարգմանության մեջ, բայց համապատասխանում է կառավարության ծրագրին, որը ցանկանում է հայերի կուտակումները ցրել Փոքր Ասիայի որոշակի վայրերում և մեծ քաղաքներում: Ի վերջո, երկրի խորքում իշխանությունները կարծես թե բազմակի կրում են Union et Progrès (Միություն և առաջադիմություն) կոմիտեի անպատասխանատու ղեկավարների և այլ տարրերի ազդեցությունը, ովքեր չեն հոգում կենտրոնական կառավարության հրամանների կատարման համար և հայերի ու այլ բնիկ քրիստոնյաների հանդեպ կազմակերպում են օրինազանցություններ:

Դրան հակառակ, առայժմ ոչ մի ապացույց չկա, թե Բարձր Դուռը խնդրո առարկա իր հաղորդագրությամբ մտադրվել է կայզերական դեսպանությանն «անպատկառորեն խաբելու»:

Պարոն Բյուգեի հեռագրում հիշատակված Ալի Մունիֆ բեյը ներքին գործերի նախարարության նույն նախկին մուստեշարն է (ունտերշտատսքարտուղար), որին վերջերս նշանակել են Լիբանանի նահանգապետ: Իր պաշտոնական նստավայր ուղևորվելու ժամանակ նա մի քանի օրով կանգ է առել Ադանայում, բայց նախարարությունում ժխտում են, որ նա այնտեղ հրահանգչի միսիա է կատարել:

Հոհենլոհե

55. Տե՛ս 1915-09-10-DE-011 փաստ.:

1915 – 09 – 25 – DE – 001

Սկզբնաղբյուրը՝ PA-AA/R14088
Հրապարակված՝ Գ և Հ փաստ. 175

Ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին՝ Կոստանդնուպոլսում արտակարգ միսիայի դեսպան Հոհենլոհե-Լանգենբուրգի

№ 586

Պերա, 25 սեպտեմբերի, 1915

Նախնական հաղորդագրություններ՝ №549[56], 580, 565

Ադանայի և Հալեպի կայզերական հյուպատոսությունների հետագա հաղորդագրությունները հաստատում են, որ Բարձր Դռան հայտնի հեռագրային հաղորդագրությունները՝ նպատակաուղղված տեղահանված հայերի վիճակի բարելավմանը, տարբեր բացառությունների և գավառական իշխանությունների կամայականությունների արդյունքում, որոնք ինքը Բարձր Դուռը հենց սկզբից ևեթ և հետո արել էր տրամադրված արտոնությունների մասին, մեծ մասամբ չհասան իրենց նպատակին:

Ինչպես այս ամսվա 13-ին հայտնում է պարոն դոկտ. Բյուգեն, Ադանայում պետք է տեղահանվեն այրիները, որբերը, զինվորական ընտանիքները, նույնիսկ հիվանդներն ու կույրերը:

Միաժամանակ պարոն Ռյոսլերն է հայտնում Հալեպից, որ չնայած Բարձր Դռան տարագիրներին սննդամթերքով ապահովելու հրամանին, նրանց մեծ մասը կզոհվեն սովից, քանի որ իշխանություններն ի վիճակի չեն կազմակերպել այդպիսի զանգվածային պարենավորում:

Վերջերս՝ այս ամսվա 18-ին պարոն Ռյոսլերից ստացվեց նաև հետևյալ հեռագիրը.

«Այս օրերին արևելքից այստեղ հետիոտն ժամանեցին սովահար հայ կանանց ու երեխաների երկար քարավաններ և շարունակեցին ճանապարհը, որքանը որ մնացին կենդանի»:

Բարձր Դռան հրամանը՝ թողնել դեռևս իրենց բնակավայրերում գտնվողներին, իրատեսական չէ, քանի որ յուրաքանչյուր ոք կարող է կասկածելի համարվել, ինչը բազմիցս կիրառվում է:

56. A 264741/ A 27578, ներկայացվել է պարոն Ռոզենբերգին: A 27200 կցված է:

Հրամանին հակառակ՝ զինվորների ընտանիքների համար բացառություններ չեն արվում: Ծանր հիվանդներին էլ են անգթորեն տեղափոխում:

Վերջին շրջանում տեղափոխումը կրկին Դեր Զոր ու Մոսուլ ուղղությամբ է:

Չնայած Բարձր Դռան հակառակ հավաստիացումներին՝ ամեն ինչ նպատակաուղղված է հայ ժողովրդի բնաջնջմանը:

Հայերն ինձ խնդրել են, Ձերդ պայծառափայլությանը ևս մեկ անգամ հարգալից ներկայացնել այս ամենը:

Թալեաթ բեյը, որի ուշադրությունը ես հրավիրեցի այս հանգամանքների վրա, պատրաստակամություն հայտնեց օգնելու, ի դեպ, ես հազիվ թե հավատամ, որ Կենտրոնի հրամաններն էականորեն կբարելավեն տեղահանված հայերի վիճակը:

Հոհենլոհե

1915 – 10 – 01 – DE – 001

Սկզբնաղբյուրը՝ PA-AA/R14088
Հրապարակված՝ Գ և Հ փաստ. 175

Արտգործնախարարության ունտերշտատսքարտուղար Ցիմերմանին՝ Կոստանդնուպոլսում գերմանացի լրագրող ֆոն Տիսցկայից

Կոստանդնուպոլիս, 1 սեպտեմբերի 1915
Ժուռնալշտր. 14, Հան Նիկիտիտս

Շատ հարգելի պարոն ունտերշտատսքարտուղար,

Պատիվ ունեմ Ձերդ գերազանցությանը փոխանցելու կայսրության արևելքում հայերի ապստամբության և հայերին բնաջնջելու թուրքական միջոցառումների վերաբերյալ զեկուցագրեր, որոնք խնդրում եմ հաճեք դիտարկել որպես լրացում սեպտեմբերի 7-ի իմ շարադրանքին:

Խորին հարգանքով, Ձերդ գերազանցությանը միշտ հավատարիմ

ֆոն Տիսցկա

Հավելված 1

Լրիվ գաղտնի

Կոստանդնուպոլիս, 22 սեպտեմբերի 1915

Հայկական ապստամբությունն ու թուրքերի արհավիրքները

Արյունալի միջոցառումները, որոնք հիմա ծավալվել են ասիական Թուրքիայում և որոնց վերջն առայժմ հնարավոր չէ կանխատեսել, թերևս այդպիսի չափերով Թուրքիայում դեռ երբեք չեն կատարվել: Թուրքերը, ինչպես նաև հայերը դրանում խաղում են փոխնիփոխ գործող դերեր: Հաջողությամբ խոսելու հնարավորություն են ստանում հայերը, և ընդունվում են միայն այն տվյալները, որոնք որպես պաշտոնական նյութ ներկայացվել են հայ պատրիարք մոնսինյոր Զավենին և Հայկական Միության նախագահ պարոն դոկտ. Թավիդյանին, և հաստատել են ներկա վկաները:

Ըստ դրա, հայկական ապստամբության ծագումը վերագրում են այս տարվա փետրվարին: 30-40 երիտասարդ զինապարտ հայեր փախել էին Զեյթուն՝ զինծառայությունից խուսափելու մտադրությամբ: Բնակչությունը կանգնեց դասալիքների և՛ կողմը, և՛ նրանց դեմ: Ստոր մարդիկ, թերևս, աջակցեցին թուրքական կառավարությանը՝ նրանց բռնելու համար: Գործը հասավ հայերի ու թուրք ժանդարմների միջև փոխհրաձգության, որի արդյունքում առաջիններից 14-15 հոգի սպանվեց:

Այստեղի հայ պատրիարքն այցելել է նախարար Թալեաթ բեյին, որպեսզի այնտեղի իրադարձությունների մասին ճշգրիտ տեղեկություն ստանա: Ընդ որում՝ նախարարը պատրիարքին հայտնել է, որ նա Զեյթունի հայ բնակչության պահվածքից շատ գոհ է:

Այդ իսկ պատճառով հայկական կողմին պետք է որ տարօրինակ թվար, որ բախումից ընդամենը մի քանի ժամ անց Զեյթունի բոլոր հայ բնակիչները՝ կանանց ու երեխաների հետ լքեցին Զեյթունը և 5000 հոգի փախան Կոնիա, իսկ մնացածը՝ Մուշից դեպի հարավ՝ Սորտ: Պատրիարքի հարցմանը թուրքական կառավարությունից եկավ պատասխան, թե այստեղ խոսքը օրինազանցության մասին է, ինչպես 40-50 տարի առաջ և պատերազմի ժամանակ դրա դեմ ոչինչ հնարավոր չէ անել:

Մայիսի վերջին քշեցին Էրզրումի հայ բնակիչներին, պատրիարքը

պատճառների մասին հարցրեց ռազմական նախարար Էնվեր փաշային և նրանից ստացավ պատասխան, թե իրեն հայտնի չէ հայերին Էրզրումից արտաքսելու միջոցառումների մասին: Այնուհետև՝ հին տոմարով օգոստոսի 2-ին եղավ Բարձր Դռան մի հրահանգ, ըստ որի՝ բոլոր զորամասերի հրամանատարներն իրավունք ունեն քաղաքներից ու գյուղերից հեռացնել բնակիչներին, եթե դա կպահանջի պետության շահը:

Այստեղի ամերիկյան դեսպանը, որին դիմել էր պատրիարքը և խնդրել էր պարզաբանումներ Էրզրումից տեղահանվածների ճակատագրի մասին, պատասխանել է, որ վերջիններին ուղարկել են Թերջան: Բայց այդ տեղեկությունը չի հաստատվել: Դեռ ավելին, հուլիսի 25-ին 200-300 կին Էրզրումից ժամանեց Հալեպ: Ոչ մի տղամարդ չէր ուղեկցում նրանց: Բոլոր տղամարդկանց պետք է որ սպանած լինեն ճանապարհին:

Վանում կատարվել է հետևյալը. մի զինապարտ հայի ապրիլի 6-ին (հին տոմարով) Վանից դեպի հարավ՝ Շաբաքում[57] ձերբակալել են թուրքական ժանդարմները: Քանի որ ցանկացել են նրան հասցնել Վան, նրա մի քանի ընկերներ ընդդիմացել են հանձնմանը և ուժով ազատել են երիտասարդ տղամարդուն: Վանի գեներալ-նահանգապետը հրավիրել է հայ հեղափոխական կուսակցության՝ դաշնակցության ժողով և համատեղ որոշում է կայացրել, որ կուսակցության որևէ ղեկավար ժանդարմերիայի պետի և մի քանի ժանդարմի, ինչպես նաև հայկական հեղափոխական միությունների անդամների հետ պետք է ուղևորվեին Շատակ և փախստականին հանձնեին ոստիկանական իշխանություններին: Շատակի ճանապարհին գիշերը հայ ղեկավարին և նրա ուղեկիցներին թուրք ժանդարմներն սպանել են: Ապա երբ Վանի նահանգապետը ցանկացել է ձերբակալել դաշնակցության մյուս անդամներին, նրանց մի մասը քաշվել է հարևան գյուղերը: Թուրքական ջոկատների դեմ հայերի կռվի ժամանակ սպանվել են մի քանի հարյուր հայ: Տասը օր անց Վանում հայտնվել են ռուսական զորաջոկատներ, որից հետո թուրք գեներալ-նահանգապետ Զևդեթ բեյը՝ Էնվեր փաշայի աներորդին, փախել է: Նշանակվել է հայկական ղեկավարություն, որում մասնակցում էին նաև քրդերը: Ավելի ուշ ռուսներին քշեցին Վանից, բայց նրանք, ինչպես հայտնում են, կրկին գրավել են Վանը և ներկայումս պետք է որ այդ տարածքի տերը լինեն:

Մի կին Բայբուրթից՝ Էրզրումից դեպի հյուսիս-արևելք, այստեղի

57. Բնագրում Շաբաք է, հետո՝ նաև Շատաք (ըստ երևույթին՝ Շատախն է) (ծան. թարգ.):

պատրիարքին հայտնել է հետևյալը: Բայբուրթի արքեպիսկոպոսին և քաղաքի 12 երևելիների թուրքերը կախել են: Հարյուր հայի նույն տեղից ուղարկել են պարսկական Լառիստան գավառ, նրանք չեն վերադարձել: Երեք օրում քշել են քաղաքի գրեթե ամբողջ արական սեռի բնակչությանը: Դրան հետևել է բնակավայրի թալանը թուրք չեթեների (բաշիբոզուկների) կողմից: Նրանք վերցնում էին այն ամենը, ինչ հնարավոր էր հափշտակել: Մի քանի թաքցված դրամով կանայք փախչում էին իրենց երեխաների հետ՝ առանձին տղամարդկանց ուղեկցությամբ:

Չեթեները հետապնդում էին փախստականներին և կանանցից խլում էին 5-15 տարեկան բոլոր երեխաներին, նաև իրենց դուր եկած երիտասարդ կանանց: Այդտեղ կանգ առած ականատեսի քրոջն էլ են տարել, նա իր հետ ունեցել է մի քանի օրական մի երեխա: Երեխային խլել են նրանից, շպրտել, իսկ երիտասարդ կնոջը տարել են իրենց հետ: Էրզրումցի հայ կանայք էլ, որոնց ամուսիններին սպանել էին, միացել են բայբուրթցի կանանց: Մի թուրք կին ուղեկցող ժանդարմներին հարցրել է մի գյուղում, որի միջով անցնում էր քարավանը, թե արդյոք ինքը չի կարող մի հայ երեխա վերցնել: Երբ հայուհին, որի երեխան պահանջում էր թրքուհին, հրաժարվել է տալ իր երեխային, ժանդարմը հայտարարել է, որ թրքուհին կարող է վերցնել մորը և երեխային: Մի քանի տղամարդկանց, որոնք ուղեկցում են կանանց քարավանը, հաջորդ երեք օրերին սպանել են թուրք չեթեները, Էրզրումի մի թուրք կին ասել է ժանդարմին. «Բեր ինձ մի հայ տղամարդ, ես ուզում եմ նրան սպանել»: «Բայց դու կարո՞ղ ես սպանել,- հարցրեց ժանդարմը: Նա պատասխանեց. «այո», որից հետո մի ծեր հայի սպանեց ատրճանակից արձակած կրակոցներով: Առանձին երեխաների, որոնք սարսափից փախել էին, ինչպես հայտնում է այդ կինը Բայբուրթից, ժանդարմները բռնել և նետել են Եփրատը, Էրզինջանի գերմանական հոսպիտալի 2 սանիտար հրաժարվել են ծառայությունից, քանի որ չեն կարողացել նայել այն զարհուրանքներին, թե ինչպես են խեղդում կամ կենդանի թաղում կանանց ու տղամարդկանց: Մի նորվեգուհի՝ օրիորդ Ա.Վեդելը Յարդսբերգից և մի գերմանացի քույր, որի անունը հայտնի չէ, կատարվածի մասին հայտնել են այստեղի պատրիարքին, որից հետո լքել են Էրզինջանը:

Գավառներից չկա ոչ մի լուր, թե գոնե մեկ տղամարդ փրկված լինի: Այստեղ հասած նամակները գրել են միայն կանայք:

Այստեղի հիանալի հայ փաստաբան Զոհրապը Ալեքսանդրետից

աքսորվելով գնացել է Ուրֆա և ճանապարհին մահացել է: Նա պատգամավոր էր և ասում են, իբր տառապել է սրտային հիվանդությամբ: Հայտնի պատգամավոր Վարդգեսը, ինձ քաջածանոթ, համենայնդեպս, լրիվ առողջ էր (մի քանի ամիս առաջ ներքին գործերի նախարարությունում զրուցել եմ նրա հետ), չի հասել աքսորավայր՝ Դիարբեքիր: Նրա կնոջը, որի հետ ամուսնացած էր արդեն երեք տարի, մի երիտասարդ գերմանացու օգնությամբ, ուրիշի անձնագրով հասցրել են Գերմանիա:

Վարդգեսը Դաշնակցություն միության անդամ էր: Նրա մահը հաստատված է: Շարքիշլայում՝ Սվազից դեպի հարավ-արևմուտք, Ամասիա-Սամսուն, Կեսարիա և Մալաթիա ճանապարհների խաչմերուկում կայմակամը ամեն օր կանայք ու աղջիկներ էր պատվիրում, որոնց ինքն ու ժանդարմներն անարգում և ապա ուղարկում էին տուն: Այնտեղ նաև երեխաների էին սպանում: Երեք երեխա Շարքիշլայից՝ 13-15 տարեկան, փախել են Կոստանդնուպոլիս և հայ պատրիարքին հայտնել են այնտեղի իրադարձությունների մասին:

Շարքիշլայի կայմակամին այս ընթացքում ձերբակալել է կառավարությունը, և նա հասցվել է Կոստանդնուպոլիս:

65 տղայի Շապին Գարահիսարից՝ Սվազի ու Էրզինջանի միջակայքում, տարել են Անգորա և դարձրել են մուսուլման:

Կոնիայի և Իզմիրի եպիսկոպոսներն Էրեգլիից հեռագրել են Էնվեր փաշային՝ աքսորի առնչությամբ օգնություն խնդրել իրենց հավատացյալների համար: Էնվեր Փաշան պատասխանել է. մենք ուղարկել ենք տարագիրների ղեկավարին, որպեսզի նա հայ փախստականներին տեղավորի իրենց նախկին բնակավայրի մերձակայքում: Ղեկավարը ժամանեց Էրեգլի և եպիսկոպոսներին հայտարարեց, որ բոլոր չտեղավորվածներին պետք է հասցնեն Հալեպ: Երբ այդ տնօրենին ցույց տվեցին Էնվերի հեռագիրը, նա պատասխանեց, որ Էնվեր փաշան, իրոք, այդպես է ցանկացել, բայց հիմա դա հնարավոր չէ: Կոստանդնուպոլսում Էնվեր փաշան պատրիարք Զավենին հավաստիացրել է՝ Կոստանդնուպոլսից արտաքսվածներին ոչ թե Հալեպ կտանեն, այլ Կաստամունի:

Բուլղարիայի հայ քահանաները բուլղարական կառավարության միջոցով քայլեր են ձեռնարկել Թուրքիայի իրենց հավատակիցների օգտին: Մինչ Անգորայից գոհացուցիչ պատասխան է ուղարկվել Բուլղարիա, ինչպես մի հայտնի թուրք պաշտոնյայի ասել է այստեղի ոստիկանության պետ Բեդրի բեյը Այաշում՝ Անգորայից դեպի արևմուտք, սպանել են բոլոր հայերին: Հալեպում գերմանական դպրոցի տնօրենը՝ պարոն Էդուարդ

Գրեթերը, պատրիարքին պատմել է, որ այնտեղի գերմանացի հյուպատոսը դառը լացել է այն զարհուրանքների համար, որոնք թուրքերն այնտեղ արել են հայերի հանդեպ: Լացը, թերևս, շատ չի օգնի, թերևս կան առավել արդյունավետ միջոցներ, քան կարեկցանքի արցունքները:

Հայ պատրիարքը Ամերիկայի և Գերմանիայի դեսպաններին իր բողոքն է ներկայացրել՝ եղած պաշտոնական նյութերով դժվարին կացությունից դուրս գալու համար:

Ֆոն Տիսցկա

Հավելված 2

Կոստանդնուպոլիս, 29 սեպտեմբերի 1915

Մուսուլմանների հանդեպ հայերի կատարած արհավիրքները

Ներքին գործերի նախարարության անվտանգության վարչության պետ Ջեմբոլաղ բեյն ինձ ուղարկեց Էսադ բեյի՝ երկրորդ բաժանմունքի պետի մոտ, քանի որ ինքը չափազանց կարճ ժամանակ է զբաղեցնում այդ պաշտոնը, որպեսզի կարողանա տեղեկություններ տալ մուսուլմանների հանդեպ հայերի կատարած հանցագործությունների մասին: Էսադ բեյը, որը ցանկանում է հավաքված նյութերը մի քանի ամիս անց տպագրել մի բրոշյուրում, ինձ հայտնեց. Արդեն մի քանի տարի է, ինչ կայսրության արևելքում սկսվել է հայկական շարժում: Պատերազմն սկսվելուն պես այն ընդունեց ավելի սուր բնույթ: Հայ հեղափոխական դաշնակցության կուսակցությունից կազմակերպվեցին հրոսակախմբեր:Նրանց գլխավորում էր Պաստերմաջյանը՝ նախկին պատգամավոր Էրզրումից, որը Կովկասում ռուսների կողմից գերեվարվելով կարողացավ Թուրքիային մոլորության մեջ գցել իր օգտին:

Իրականում նա հանդես էր գալիս որպես հինգ հայկական հրոսակախմբերի գլխավոր հրամանատար, որոնք Վանի շրջակայքի բնակավայրերում օրինազանցություններով, հետո Վանում սպանություններով և խայտառակ արարքներով տարածում էին ամեն տեսակ սարսափ: Վանում մահմեդական բնակչությունը վարձեց յոթ նավ, որպեսզի Վանից լճով փախչեն Ադելխիվաս՝ դեպի լճի հյուսիսային մաս: Բոլոր յոթ բեռնանավերը՝ յուրաքանչյուրն առնվազն 400 հոգով, ընդամենը՝ 2800, պայթյունների արդյունքում խորտակվեցին լճում՝ ամբողջ կազմով ու բեռներով:

200 մահմեդական ընտանիքների կոտորեցին հայ հրոսակախմբերը՝ չխնայելով ծերերին, կանանց ու երեխաներին: Վանի ամերիկյան հոսպիտալում ապաստան են գտել մի քանի հարյուր մուսուլման կին ու երեխա: Նրանց հայտնաբերել են, վրաները նավթ են լցրել և հրդեհել: Հայկական հրոսակախմբերի հայտնվելուց երեք օր անց քաղաք են ժամանել նաև ռուսական անկանոն զորքերը, իսկ ավելի ուշ՝ նաև զորաջոկատները և մասնակցել են ջարդերին: Ջևդեթ բեյը՝ Վանի գեներալ-նահանգապետը, էնվեր փաշայի աներորդին, մնաց Վանում, որքան որ կարողացավ, և բնակավայրը պաշտպանեց եղած ժանդարմներով:

Ակնունի փաշան՝ Պաստերմաջյանի ընկերը, որը նշանակվեց Վանի նահանգապետ, տարածեց մի մանիֆեստ՝ զգուշացնելով գավառի բոլոր բնակիչներին պահել թուրքերի կողմը՝ միաժամանակ ռուսական ցարին համարելով որպես երկիրն ազատագրող:

[Ինը տող անընթեռնելի են]

Կովկասից Ակնունի փաշային ուղարկվել են առաձնահատուկ հրուստ դրոշներ, ինչպես նաև Բոստոնից Fédération Révolutionaire arménien արձանագրությամբ, կարմիր ատլասի վրա ոսկեթել ասեղնագործած դաշույն, փետուր և բահ:

Ես տեսա մի մեծ լուսանկար Իզմիրից՝ այլանդակված 8 երիտասարդ մուսուլման կանանցով, Աղաբազարից՝ մի ծեր թուրք ժանդարմի՝ պատռված որովայնով և դուրս թափված փորոտիքով: Հրացանների և ռումբերի մեծ ավար էր ընկել թուրքերի ձեռքը Ամասիայում, Սվազում, Կեսարիայում, Մարզվանում և Սվազի վիլայեթի Սոուխայրեում: Հրացանները հիմնականում բազմակի լիցքավորվող մաուզերներ էին, բայց կային նաև մանլիչեր և լեգրա տիպի: Աղանայում եկեղեցու վրա տեղավորված է եղել լուսասարք: Դիարբեքիրում դինամիտի և ռումբերի ավարը, իրոք, զգալի էր, Իզմիրում էլ են գտնվել շատ ռումբեր և հրացաններ:

Էսադ բեյը տվեց այն մահմեդականների թիվը, ովքեր զոհ են դարձել հայերի վրեժխնդրությանը, մոտ 200.000 հոգի, որի համար, սակայն, ոչ մի հիմք չկար, այնպես որ այդ թիվը կարող է խիստ չափազանցված լինել:

Անգլիացիների առաջխաղացումն Իրաքում

Անգլիական զորքերը ժամանել են Էդ Դեյր՝ Բաղդադի ու Հալեպի կես ճանապարհին: Հետևապես լրիվ բացառված է թվում, թե Բաղդադի

շրջակայքում հանգիստ է, և արաբական շեյխերն անցել են թուրքերի կողմը: Ամարան գտնվում է անգլիացիների ձեռքում, Կուտել Ամարան՝ թուրքերի ձեռքում: Ֆալոմջայում՝ Տիգրիսի ափին, Եփրատի հոսանքի ամենաներ մասում, անգլիացիներն առայժմ **չեն** կարողանում ամրանալ, մինչդեռ Բեղրեհում մոտ են պարսկական սահմանին:

Հավելված 3

Խիստ գաղտնի

Կոստանդնուպոլիս, 30 սեպտեմբերի 1915

Ճշմարտությունը հայերի բնաջնջմանը նպատակաուղղված թուրքական միջոցառումների մասին

Սմիռնայի և Ադրիանուպոլսի վիլայեթներում հայերին թողնում են, մասամբ՝ նաև Կոստանդնուպոլսում: Մնացած բոլոր գավառներից հայերին աքսորել են Հալեպ, Մոսուլ, Զորտ և այլ վայրեր, ուր նրանք չեն ժամանել: Նախկին պատգամավոր Զոհրապը՝ Կոստանդնուպոլսի ամենահայտնի փաստաբաններից մեկը, Ալեքսանդրետից Ուրֆա ճանապարհին մահացել է, պատգամավոր Վարդգեսը չի ժամանել Դիարբեքիր, ուր նա աքսորված էր:

Սմիռնայի վալի Ռահմի բեյը և Ադրիանուպոլսի վալի Հաջի Ադիլ բեյը հայտարարել են, որ չեն ուզում արտաքսել հայերին: Զեկուցման համար ժամանելով ներքին գործերի նախարարի մոտ, երկուսն էլ իրենց որոշումը չեն փոխել: **Նույնպես անհամաձայնության նշան** կոմիտեում: Թալեաթը ծայրահեղական է, մինչև հիմա կատարվել է այն, ինչ նա է ցանկացել: Ռահմին ավելի շատ է սովորել, քան Թալեաթը, ավելի շատ է ճանապարհորդել, գործնական, բայց նաև մարդասեր անհատ է, որի՝ իբրև պատգամավորի, հստակ դատողությունները՝ տարբեր քաղաքական հարցերի վերաբերյալ, բազմիցս լուսաբանել եմ ինքս և որոնք արժանացել են մեծ հավանության: Նա շատ կողմնակիցներ ունի կոմիտեում:

Ընդհանուր առմամբ Թուրքիայում ահազանգող լուրերին քիչ են ուշադրություն դարձնում, որովհետև գիտեն, որ շատ բան չափազանցվում է, բայց նաև նրա համար, որ այսօրվա կառավարությանը տրված է հնարավորին չափ շատ գործելու ազատություն: Այսօրվա կառավարությունը

լիովին անարդարացի է լիբերալ համարվում: Այն ավելի շուտ ամեն ինչ է, քան դա, այն ավելի աբսոլյուտիստական է, ավելի բռնապետական, քան Աբդուլ Համիդինն էր: Մամուլի բերանը փակված է և միայն գովել գիտե այսօրվա իշխանավորներին, ինչը բարեկամացած արտասահմանը տարածում է բարի կամքով, բայց քիչ լավատեղյակությամբ:

Այսպես, խոսում էին խիստ միջոցառումների մասին, որոնք կառավարությունը Վանի ապստամբության պատճառով կիրառում էր ընդդեմ հայերի, որպես արդարացի ինքնապաշտպանություն, որին պետք է դիմեր պետությունը՝ կարգուկանոն հաստատելու համար: Հայերի մեղքը թվում էր ավելի մեծ, երբ նրանք դաշինք ունեին ազգային թշնամու՝ ռուսների հետ, որոնք օժանդակում էին Վանի հայկական հեղափոխական ապստամբությանը:

Այն, որ կառավարությունը երկաթե ձեռքով միջոցներ է ձեռնարկում և ծնկի է բերում նրանց, ովքեր ուզում են անջատվել, դա նրա իրավունքն է, քանի որ երկիրը բաղկացած է շատ անհամատեղելի տարրերից, որոնք հարմար պահի են սպասում, որպեսզի ընդօրինակեն հայերին, և ոչինչ այնքան բացասաբար չի ազդում, որքան թուլություն դրսևորելը, որտեղ միայն ուժը կարող է ամրացնել կառավարության հեղինակությունը: Բայց որպեսզի ազատության թիկնոցը չվերածվի խրտվիլակի, այն պետք է ճանաչի սահման, սահմանափակում, որպեսզի մեղավորներին պատժելու փոխարեն ոչնչացնի անմեղներին ու անպաշտպաններին, որովհետև նրանք պատկանում են խռովարարների ռասային[58]:

Այսօր խոսքը զոհերի մասին է, որպիսին դեռևս չգիտի իսկապես բռնարարքներով ոչ աղքատ թուրքական պատմությունը: Դա ցնցող ճշմարտություն է, որը պահանջում է յուրաքանչյուրի օգնությունը, ով ի վիճակի է օգնելու:

Սկզբունքորեն միևնույն է, թե հայերի զոհերն անցնում են 500.000-ից կամ չեն հասնում դրան: Երկու կողմում էլ բավականաչափ մեղք է գործվել: Ինչը մեծ նշանակություն ունի, դա այն հանգստությունն ու ինքնին հասկանալի լինելու փաստն է, որը կատարվում է հետապնդումների ու հալածանքների ժամանակ և վկայում է այն մեծամտության մասին, որ հեգնում է զանկացած օտար միջամտություն:

Հայերը չէ, որ իմ հոգում արթնացնում են թուրքական կառավարության գործողությունների պատճառներով և հետևանքներով խորու-

58. Պետք է, որ լինի... պատժի մեղավորներին, անմեղներին ու անպաշտպաններին ոչնչացնելու փոխարեն...

թյամբ զբաղվելու մղում՝ որպես իրավունքի ու մարդասիրության ներկայացուցիչ երևալու համար, այլ դրանք այստեղի սենատի թուրք սենատորներն են, մեծ վաստակի տեր մարդիկ և անթերի խառնվածքով, ովքեր նողկանքով են ընդունում այն գործողությունները, որոնք իրականացնում էր իրենց կառավարությունը՝ աներեր հանգստությամբ և որպես ինքնըստինքյան հասկանալի մի բան:

Երբ հետո իմ մտերիմ հայ բարեկամ Հակոբ Համանդյան էֆենդուն՝ ներքին գործերի նախարարության քաղաքացիական հրահանգչին, որը 26 տարի շարունակ մեծ ջանասիրությամբ և աներեր հավատարմությամբ աշխատել է որպես Conseillor legiste օրենսդիր խորհրդական, որպես նահանգապետների և գեներալ-նահանգապետների ներկայացուցիչ, հանկարծակի ազատում են աշխատանքից՝ առանց թոշակի, ես պահանջեցի պարզաբանում, քանի որ առաջին քայլին կարող էր հաջորդել ընտանիքի կյանքի համար կործանարար երկրորդ քայլը:

Ներքին գործերի նախարարությունում ինձ հետ բարեկամացած տնօրեն Հասան Ֆեհմի բեյից այս տարվա սեպտեմբերի 14-ի ամսաթվով ստացա հետևյալ պատասխանը. «Ձեր բարեկամի ազնվությունը կասկածից դուրս է: Միայն ընդունված և ամենուրեք կիրառվող միջոցառումների արդյունքում է նա ուղարկվել թոշակի»:

Այսպես է գրված տեղափոխման վկայականում, քանի որ այս տղամարդն ամենաունակն է, լավագույն աշխատողը և, ինչպես հայտարարվել է պաշտոնապես, փորձարկված ազնվության տեր: Բայց նա մեծ ընտանիք ունի, նրա միակ կերակրողն է և ցանկացած պահի կարող է ուղարկվել սահմաններից դուրս, որտեղից նա չի վերադառնա:

Այս ամսվա 20-ին Հասան Ֆեհմի բեյն ինձ հայտնեց, որ նախարար Թալեաթ բեյն ուզում է ներքին գործերի նախարարությունից հեռացնել բոլոր հայերին, քանի որ թուրք պաշտոնյաները նրանց հետ այլևս չեն ուզում աշխատել: Բայց թուրքական այդ հրաժարումը կարող է միայն վնասակար ազդեցություն ունենալ ծառայողական գործընթացի վրա և հետևաբար շարունակ նորանոր դժվարություններ կստեղծի ներքին կառավարման մեջ: Այսպիսով, ներքին գործերի նախարարը վճռեց ամեն դեպքում իր գերատեսչությունում բոլոր հայերին ազատել ծառայությունից՝ առանց հաշվի առնելու անձը: Ներքին կառավարման համակարգում ավելի շատ, քան մեկ այլ նախարարությունում, հայերը հնարավորություն ունեն համատեղ ծրագրեր մշակել և խոսվություններ նյութել:

Հայերից պետք է ազատվել, քանի որ նրանք անհաշտելի, վրեժխնդիր բնավորություն ունեն և քանի որ նրանք խիզախ են, միաժամանակ կարող են պետության համար վտանգավոր տարր լինել:

Իմ հակաճառությանը, թե մյուս նախարարություններում էլ, ինչպես արդարադատության, ֆինանսների, հասարակական աշխատանքների, անտառագործության և գյուղատնտեսության, ինչպես նաև Conseil d'Etat-ում, նույնպես հայեր կան, ինձ իրազեկեցին, որ հայերի վերջը պետք է տան: Սկիզբը պետք է դրվի ներքին գործերի նախարարությունում, ժամանակի հետ դրան կհետևեն նաև պետական մյուս իշխանությունները:

Այսպիսով վճռված փաստ է՝ բոլոր պետական ոլորտներից հեռացնել հայերին և հետագայում Օսմանյան կայսրությունը կառուցել թուրքական հիմքի վրա:

Բոլոր հայերին գավառներից քշելու և Միջագետքում բնակեցնելու թուրքական ծրագիրը, ըստ դոկտոր Ռոհրբախի բրոշյուրի, նորություն չէ: Թուրքերը հայերին չէին վստահում՝ որպես ռուսներին սահմանակից հարևաններ: Հայերի տեղահանման համար ազդակ ծառայեց Վանի ապստամբությունը: Այնպիսի երկաթե կամք ունեցող մարդու համար, ինչպիսին Թալեաթ բեյն է, որը հակված է ամենածայրահեղ քայլերի, եթե դա ճիշտ է համարում, ինքնիրեն չի թողնի ենթարկվել որևէ մեկի ազդեցությանը և կատարման ցանկացած ձև լավ է համարում, եթե այն հասցնում է նպատակին, այդպիսի մարդու համար Վանի ապստամբությամբ հայերի տեղահանումը դարձավ անհրաժեշտություն:

Թե ինչ անարդարություններ և դաժանություններ են կատարվում այդ ընթացքում, միևնույն է: Թալեաթ բեյը լավատես է par excellence, հատկապես սեփական որոշումների հարցում: Ինչպիսի աշխուժությամբ նա հրահանգներ է տալիս, այդպիսի անտարբերությամբ էլ ընդունում է բոլոր բողոքները: Մինչև վերջին ժամանակներս՝ այս տարվա սկզբին, հայկական տարրը համարվում էր ամենահուսալին, իսկապես միակ հուսալին՝ Թուրքիայի քրիստոնյա տարրերից:Այդ մասին կարելի էր կարդալ բոլոր թերթերում, և ներկայացված ամեն հարմար առիթով դա հաստատում էին թուրք բարձրաստիճան պաշտոնյաները:

Մարտից սկսած փոփոխություններ եղան, այնքան համապարփակ, այնքան որոշակի, կարծես թե թուրքերը մինչև հիմա չգիտեին, թե ինչ վտանգավոր օձերի են տաքացրել իրենց կրծքի տակ:

Այնտեղ, որտեղ փորձը չի կարգավորում և որոշում գործողություններ-

ը, տիրում է կամայականություն ու անկայունություն: Ջեմալ փաշան՝ որպես նավատորմի նախարար, թուրք-ֆրանսիական կոմիտեի ամենակրքոտ ջատագովն էր: Մահացու թշնամու՝ ռուսների համար էլ, պետք էր հեշտացնել նահանջի ուղին: Թեք Յունեսկուն՝ հաճախ հիշատակվող Ռումինիայի ներքին գործերի նախարարը, Թալեաթ բեյի ամենավստահելի մարդն էր:

Ընդհանուր առմամբ, հայերն ի՞նչ շահ ունեն թուրքերից անջատվելուց: Նրանք չեն միանում իրենց թագավորությանը, ինչպես Թուրքիայի բուլղարները, հույները ու սերբերը Թուրքիայում, և չափազանց հստակ են տեսնում՝ ռուսներին վստահելու համար: Բայց զենքը, որ թուրքերը գտան հայերի մոտ, մեծ մասամբ նրանք 1908թ. ստացել էին թուրքերից, որպեսզի կարողանային կոմիտեին աջակցել հետադիմության դեմ պայքարում պաշտպանվելիս: Բայց եթե թուրքերը չեն վստահում հայերին, որոնք էշելոններով ռուսական սահմանի մոտ էին, ապա ինչո՞ւ նույն դաժանությամբ նրանց տարհանեցին Յալովայից, Անգորայից, Բրուսայից, Կաստամունիից, ինչպես և ռուսական սահմանից: Միայն այդ վայրերից աքսորել են 250.000 հայ: 48 ժամվա ընթացքում նրանք պետք է լքեին իրենց տները և գնային աքսոր՝ դեպի Հալեպ, Զորտ, Համա, Մոսուլ կամ էլ Հաուրան:

Թուրքական կառավարությունը ոչինչ չարեց տարագիրներին իրենց աքսորավայր հասցնելու համար: Երկաթուղային գնացքներն զբաղված էին զորքերով: Ոչ մի հայի համար այնտեղ տեղ չկար: Ճանապարհին անվտանգություն ապահովելու համար ոչ մի միջոց չէին ձեռնարկել:

Չեթեները՝ 1877-78 թթ. պատերազմից մնացած հին բաշիբոզուկները, կրկին այնտեղ էին, որտեղ կարելի էր էժան ավար ձեռք բերել և սպանել՝ ընդ որում ոչինչ չվտանգելով: Որքան քաջ է թուրք զինվորը և մարդկային, եթե չի թունավորված կրոնական մոլեռանդությամբ, նույնքան վախկոտ ու անմարդկային են անկանոն զորաջոկատները: Վստահաբար կարելի է հաստատել, որ երիտթուրքերը հրահրեցին չեթեներին և ղեկավարում էին նրանց:

Այն վայրերում, որտեղ տեղի ունեցան հայ բնակչության ջարդեր, ինչպես Բայբուրթում, Շապին Գարահիսարում, Անգորայում, Մալաթիայում, տղամարդկանց բաժանել էին ընտանիքներից: Կանայք իրենց հետ վերցրել էին այն ամենը, ինչ կարող էին հապճեպ հավաքել: Չեթեները հետևում էին անպաշտպանների թափորներին, թալանում էին, բռնաբարում և սպանում, ինչպես կամենային: Մի թուրք ավագ լեյտենանտ, որը կռվում էր Դարդանելում և կարճատև արձակուրդով եկել էր մայրաքաղաք, լացելով պատմում էր, թե ինչ էին գրում նրա հարազատները Տրապիզոնից ու Սվազից՝ հայերի հանդեպ թուրքերի կատարած ջարդերի մասին:

Բարձր հայ հոգևորականության մասին այսօր միայն գիտեն, որ Սմիռնայի եպիսկոպոսը կենդանի է, պատրիարքը վախենում է, որ մնացած մեծ մասին սպանել են: Ոչ ոք չգիտե, թե ինչ է եղել հայկական եկեղեցիների և եկեղեցիներում հարյուրամյակներով հավաքված գանձերին: Հայ պատրիարքի ցանկացած հարցում ներքին գործերի նախարարությունում մնում է անպատասխան:

Գովք

Թուրքերը հաճույքով են թողնում, որ իրենց գովեն: Նախկինում նրանք լսում էին գովքը և ուրախանում էին դրանով, առանց իրենց վարքի վրա տևական ազդեցության: Հիմա երիտթուրքերը գովքն ընդունում են հալած յուղի տեղ և վայելում են իրենց անսխալականությունը:

Իսկապես ժամանակն է, որպեսզի վերջ տրվի թուրքերի հանդեպ լրիվ ավելորդ քծնանքին: Չէ՞ որ ուզում են թուրքերենը որպես ուսումնական առարկա ներդնել Հեսենի ավագ դպրոցներում: Եվ դա այն ժամանակ, երբ մարդ մոլորվում է փողոցներում՝ չկարողանալով կողմնորոշվել զուտ թուրքերեն գրված ցուցանակների մեջ, և ստացված արժեքավոր առաքումների մասին բոլոր ծանուցագրերը թուրքերը եվրոպացուն ուղարկում են թուրքերենով՝ ընդհուպ մինչև անունը, այնպես որ հնարավոր չէ իմանալ, թե դու լիազորվա՞ծ ես այն ստանալ, թե՞ ոչ: Այնուամենայնիվ, սենտիմենտալության մեջ պետք չէ շատ հեռուն գնալ և մեծամոլությամբ տառապողներին նոր նյութ մատակարարել նրանց չհիմնավորված սնապարծության համար: «Հիլալ»-ի ոգեշունչ հոդվածը պահանջում է, որ գերմանացի պրոֆեսորները, ովքեր ուզում են դասավանդել այստեղի համալսարաններում, ոչ թե իրենց թարգմանիչներին բերեն հայրենիքից, այլ փնտրեն նրանց այստեղ, և որպեսզի հաջողությամբ

դասավանդեն, պետք է ձգտեն թուրքերենն այնպես յուրացնել, որ ուսումնական առարկաները կարդան այդ լեզվով: «Հիլալ»-ի մեկ այլ առաջնորդող հոդված Էնվեր փաշային Հինդենբուրգի հետ նույն աստիճանի վրա է դնում՝ կարգադրելու իր ունակությամբ, կամքի ուժով և հանճարեղ դատողություններով:

Բայցևայնպես, առանց կանխակալ կարծիքի, գործերն իրականում բոլորովին այլ կերպ են: Սուեզի ջրանցքի արշավից պետք էր հրաժարվել, քանի որ ձեռնարկվել էր ոչ ճիշտ ժամանակին և ոչ բավարար միջոցներով, ինչպիսիք են ծանր հրետանու ու բեռնակիր անասունների, ուղտերի պակասը, որոնց մատակարարումը պետք է ձեռնարկվեր ճիշտ ժամանակին:

Արաբական Իրաքում թուրքերն անակնկալի եկան անգլիացիների առաջխաղացումից և տեղյակ չէին Բասրայում անգլիացիների արշավի երկար նախապատրաստություններին: Արշավանքը դեպի Կովկաս հետևեց անբավարար համազգեստավորված զորաջոկատներով, որոնց կարիքները բավարարված չէին: Տիֆը, որին զոհ դարձավ թվով ասած մի բանակային կորպուս, պետք էր վերագրել ծանր զրկանքներին, որոնք անհիմն ու ապարդյուն պահանջվում էին զորաջոկատներից: Վանը դեռևս ռուսների ձեռքում է, որոնք նաև Էրզրումի մերձակայքում են: Դարդանելը պաշտպանելու համար շատ բան արվեց: Զորաջոկատները լավ զինված են և լավ են պարենավորվում: Արտակարգ արդյունքներով, որոնք ծավալվում են Եվրոպայի աչքերի առջև, դատում են Թուրքիայի ուժի մասին: Բայցևայնպես, այնտեղ էլ գործերն այլ կերպ կդասավորվեին, եթե միայն թուրքերը հրամայեին: Միայն զորքերի քաջությունը չի անում դա: Թուրքերը համակարգողներ չեն: Գեներալների մեծ մասը չգիտե հրամաններ տալ, նրանք չեն կարողանում ստորադաս հրամանատարների հետ համաձայնեցված աշխատել: Նրանք ուսուցչի կարիք ունեն, որը նրանց ցույց կտա, թե ինչպես առանձին մեկը միայն ամբողջի շրջանակներում կարող է հաջողությամբ գործել և նրանց հայացքը կբացի նոր հարձակման համար, որը նրանց դեռ օտար է: Գերմանացիների գործունեությունն այստեղ կարող է ավելին ստեղծել: Նրանց անմոռանալի ծեր ուսուցիչ ֆոն դեր Գոլց փաշան պետք է սանձը կրկին վերցնի իր ամուր ձեռքը և միասնականությունը դնի լիակատար շարժման մեջ:

Էնվեր փաշայի վաստակը Դարդանելի այդ օրինակելի բանակի ձևավորման հարցում, իհարկե, չպետք է նսեմացնել, նա ստեղծել է այն, ինչ կարող է ստեղծել բարի կամքն ու ջանասիրությունը և մասնագիտության ամբողջովին նվիրվելը: Բայց առանց գերմանացիների դա այնպես չէր ստացվի, ինչպես ստացվեց:

Այսպիսով, Գերմանիայում պետք էր ձեռնպահ մնալ գովքի չափազանց մեծ զգացումից ու հիացումից: Դրանից ոչ մի երատխիք չկա: Տարբեր ռազմական ոլորտներում զբաղված գերմանացիներ արդեն այսօր բողոքում են թուրքերի հավակնոտությունից: Եթե մնանք շողոքորթության գերադրական աստիճանում, ապա կաճեն նաև Թուրքիայի հետ շփվելու դժվարությունները, իսկ առավելությունը, որն ուզում է և պետք է ակնկալի Գերմանիան, կնվազի: «Ոչինչ այնքան դժվար չէ տանել, որքան լավ օրերի շարքը»: Դա առկա է միշտ այնտեղ, որտեղ բացակայում է ինքնաքննադատությունը, ասես թե մի գիշերվա մեջ երկնքից թափվում են փառքն ու պատիվը ու մթագնում է առողջ դատողությունը:

Ֆոն Տիսցկա

1915 – 10 – 01 – DE – 004

Սկզբնաղբյուրը՝ PA/AA/R14088
Հրապարակված՝ Գ և Հ փաստ 178

Արտգործնախարարության դեսպանության խորհրդական Ռոզենբերգի գրառումը

Բեռլին, 1 հոկտեմբերի 1915

Թուրքիայի դեսպանության խորհրդականին այսօր համառորեն ներկայացվեցին բոլոր փաստարկները, որոնք վկայում են Թուրքիայում հայկական բնակչության հանդեպ խնայողական վերաբերմունքի օգտին: Հետապնդելով և բնաջնջելով հայ տարրին, որը Թուրքիայում առևտրի ու արհեստի գլխավոր կրողն է, հենց Թուրքիային կհասցվի տնտեսական ծանրագույն վնաս: Հայերի հետապնդումների մասին լուրե-

ը մեծ աղմուկ կբարձրացնեն ոչ միայն թշնամական արտասահմանում, այլև չեզոք երկրներում և Թուրքիայի հեղինակության համար կլինեն վնասաբեր: Նույն Գերմանիայի մարդասիրական շրջանակներում զգալի կդառնա աշխուժացած անհանգստությունը:

Էդհեմ բեյը խոստացավ դեսպանի հետ խոսել, նաև զեկուցել Կոստանդնուպոլիս: Նա խոստովանեց, որ եղել են օրինազանցություններ, թեպետ արտասահմանում տարածված լուրերը խիստ չափազանցված են: Մինչև ընթացիկ տարվա գարունը միանգամայն լավ հարաբերություններ են պահպանվել հայերի ու թուրքերի միջև, ինչը ավելի քան բացատրելի է, չէ՞ որ հայերը հեղափոխության ժամանակ համակրել են կոմիտեին և նրանց հետ գործել ընդդեմ հին ռեժիմի: Բեկումն սկսվեց միայն ապրիլին, երբ թուրքերի դեպի Ադրբեջան շարժվելու ժամանակ թուրքական բանակի թիկունքում գործը հասավ հայերի ապտամբությանը, որի ընթացքում սպանվեցին ոչ պակաս, քան 180.000 մահմեդական: Զարմանալի չէ, որ մահմեդականները վրեժխնդիր եղան դրա համար: Հայերի տարհանումը դեպի երկրի խորքն անհրաժեշտ էր ռազմական պատճառներով և բխում էր Թուրքիայի ինքնապաշտպանության շահերից: Եթե այդ ընթացքում հարձակումներ եղել են, ապա դրանք կենտրոնական կառավարության հավանությանը չեն արժանացել: Կենտրոնական կառավարությունը, մեծ տարածությունների վրա և կայսրության պարզունակ միջոցներով, ցավոք, միշտ չէ, որ ի վիճակի է կանխելու ավելի ստորին իշխանությունների ապաշնորհությունն ու անփութությունը:

1915 – 10 – 01 – DE – 006

Սկզբնաղբյուրը՝ PA-AA/R14088

Ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին՝ Աղանայի հյուպատոս Բյուգեից

Աղանա, 1 հոկտեմբերի 1915

12 հավելված (նամակին կից)

Հավելված 12

Մկրտիչ Նազարյան անունով մի հայ, որը բնակվում է Աղանայում, այս տարվա հուլիսին ինձ պատմեց հետևյալը:

«Մի ամերիկյան թերթում տպագրված էր թղթակցություն Պարսկաստանից, որտեղ ամերիկյան մի միսիոներուհի հետևյալ տեղեկություններն է տվել Ուրմիայի իրադարձությունների մասին:

Այս տարվա հունվարին Վանի այն ժամանակվա վալիի որդին՝ երիտասարդ մի սպա, որն ուսումնառել է Բեյրութում, գրավել է պարսկական Ուրմիա քաղաքը և մնացած բնակիչներին (հայերին ու ասորիներին)՝ մոտ 700 հոգու, ովքեր թաքնվում էին պարսկական քրդերի մոտ, հրամայել է բռնությամբ հանել իրենց թաքստոցներից և բոլորին՝ առանց բացառության, մորթել: Մի քանի օր անց ռուսները՝ հիմնականում ռուսահայերը, վերագրավում են Ուրմիա քաղաքը: Այդ տպավորության ներքո ռուսաստանյան հայերը գրոհեցին և մի քանի օրում գրավեցին թուրքական Վան քաղաքը»:

Ենթադրելով կարելի է ասել, որ հայերը՝ Ուրմիայի վայրագությունների տպավորությամբ վրեժխնդիր են եղել Վանի վալիից և նրա կնոջից: Բայց քանի որ Վանի վալիի կինը պետք է որ լինի այժմյան ռազմական նախարար Էնվեր փաշայի մոտիկ ազգականուհին, կարծում են, որ հայերի հալածանքներն ու բնաջնջումը նրա իսկ վրեժխնդրության ակտն է:

[Բյուգեն՝Վանգենհայմին (Մ. № 935) 21.10]

Պատիվ ունեմ Ձերդ գերազանցությանը փոխանցելու այս ամսվա Մ № 869 մի զեկուցագրի պատճենը, 12 հավելվածների հետ միասին՝ հայերի հալածանքների վերաբերյալ՝ խոնարհաբար կատարելով երեկվա հեռագրային ցուցումը:

1915 – 10 – 07 – DE – 002

Սկզբնաղբյուրը՝ PA_AA/R104088
Հրապարակված՝ Գ և Հ փաստ. 222

Արտգործնախարարությանը՝ Անատոլիական երկաթուղային ընկե-

ության գերատեսչական խորհրդի նախագահ Արթուր Գվիներից

Բեռլին, 7 հոկտեմբերի 1915

Մեծ հավատարմությամբ արտգործնախարարությանն ենք փոխանցում այստեղ սեպտեմբերի 29-ին թուրքական կառավարության հրապարակած «Loi provisoire»-ի տեքստը՝ հայկական կալվածքների վերաբերյալ:

Դրա վերաբերյալ մեր գլխավոր տնօրինությունը տեղին շեշտում է.
«Թերևս շատ ավելի հասարակ ու պարզ կլիներ տպել տալ երկու հոդվածներում, այն է՝

Հոդված 1. Tous les biens des Arméniens sont confisquns.
Հոդված 2. Le Gouvernment encaissera les créances des exilés et il remboursera (ou ne remboursera pas) leurs dettes.
Անատոլիական երկաթուղային ընկերություն, նախագահ՝ Գվիներ
Հավելված (ֆրանսերեն)

1915 – 10 – 12 – DE – 001

Սկզբնաղբյուրը՝ PA-AA /R14088

Արտգործնախարարության ունտերշտատսքարտուղար Ցիմերմանին՝ գերմանական թերթերի հրատարակիչների միության նախագահ Ֆրիդրիխ Ֆաբերից

Հասերոդե, Հարց, 12 հոկտեմբերի 1915
Հազվիճքել 1

Ստացա Ձերդ գերազանցության սույն ամսվա 4-ի[59] մանրամասն նամակը՝ հետո ուղարկված այստեղ, ուր ես իմ բժշկի համար հորդորներով փորձում եմ կոփել նյարդերս: Այնուհետև կարգադրեցի անմիջապես թերթերին ուղարկել գաղտնի տեղեկատվական նամակ և խորհուրդ տվեցի՝ մեր ազգային շահերի նկատառումով, չանդրադառնալ Հայկական հարցին: Ես չկարողացա այստեղի իմ անկյունից հետևել մամուլին, բայց հուսով եմ, որ դրանով այդ գործի վրա գերմանական հրապարակայնության մեջ առայժմ փակ դրվեց: Միաժամանակ նամակ ուղարկեցի ավետարանչական միսիոներական օգնության տնօրեն Շրայբերին, որում սպառնացի հրաժարվել Գ.Ա.Մ.Օ[60]-ում զբաղեցրած իմ պաշտոնից, եթե նա կոնֆերանսը չհասցնի այն բանին, որպեսզի նրանք հրաժարվեն լայն շրջանակներում Հայկական հարցով զբաղվելու ծրագրից: Տնօրեն Շրայբերը Լայպցիգի կոնֆերանսից հետո այցելեց ինձ և հայտնեց, որ ինքը պ-ն Լեփսիուսի հետ համաձայնության է եկել, որ միայն ռայխսկանցլերին ուղարկվի մի դիմում: Տեղի տալով իմ համառ խնդրանքին՝ նա հրաժարվել է ինչպես այդ դիմումի հրապարակումից, այնպես էլ մամուլում դրա մասին հիշատակելուց, և ինձ ու գերագույն նախագահ Հեգելին կից նամակով ուղարկված դիմումի նախագծից երևում է, որ մյուս մասնակիցներն էլ են միացել դրան:

Պարոն տնօրեն Շրայբերի համառ ու հանգստացնող հավաստիացումներից հետո ես այդպես էլ չմասնակցեցի կոնֆերանսին: Բայց այդ ընթացքում պարոն դ-ր Լեփսիուսը բեռլինյան մամուլի ներկայացուցիչների առջև հանդես եկավ Հայաստանի իրադարձությունների վերաբերյալ հրապարակման համար չնախատեսված զեկույցով, որի մասին Ձերդ գերազանցության համար խոնարհաբար կցում եմ բեռլինյան մեր խմբագրության զեկուցագիրը: Եզրակացությունից[61], որը բազմիցս բառացիորեն համընկնում է Ձերդ գերազանցության՝ ինձ ուղարկած նամակին, ենթադրում եմ, որ Ձեզ ուղարկած իմ նամակի և իր զեկույցի միջակայքում Դուք ընդունել եք պարոն Լեփսիուսին: Այդ զեկույցից հետո և որոշ այլ պատճառներով, որ ինձ բանավոր հայտնեց տնօրեն

59. A 28473:

60. Գ.Ա.Մ.Օ.՝ գերմանական ավետարանչական միսիոներական օգնություն:

61. Ռոզենբերգի նշումը. եզրակացությունը Լեփսիուսինը չէ, այլ կոմս Վեդելի դատողությունների վերարտադրությունն է, որոնք նա ասել է հաջորդ օրը՝ մամուլի նիստի ժամանակ:

Շրայբերը՝ ըստ դ-ր Լեփսիուսի փորձի, ես շատ շնորհակալ կլինեի, եթե կարողանայի այս շաբաթվա վերջում՝ ամսի 4-ին ունենալ Ձեր նամակում նշված մանրամասն բանավոր զրույցը:

Շաբաթվա կեսին ես կվերադառնամ Մագդեբուրգ և ուրբաթ օրվա կեսօրից կկարողանայի լինել Ձեր տրամադրության ներքո: Պարոն դ-ր Լեփսիուսի զեկույցից հետո, որի մասին օտարերկրյա խմբագրություններին կհայտնեն բեռլինյան իրենց ներկայացուցիչները, հրատարակիչներն ինձնից կակնկալեն որոշակիորեն նոր մեկնաբանություններ: Խնդրում եմ թույլատրել հավելվածով Ձեզ փոխանցել՝ որպես Ձեզ համար գաղտնի տեղեկատվություն, պարոն տնօրեն Շրայբերի վերոնշյալ գրառման պատճենը: Այն տպավորությունից, որ պարոն Լեփսիուսի ելույթը թողել է պարոն Ռոհրբախի վրա, կարելի է եզրակացնել, թե ինչ տպավորություն կթողնի այն հասարակայնության և թերթի աշխատակիցների վրա՝ քաղաքական ու տնտեսական հայացքների պատճառով, որոնք դ-ր Լեփսիուսը կապում է իր զեկույցի հետ: Ես դա զգացի այն ձևից, թե ինչպես իմ գլխավոր խմբագիրն արտահայտվեց հեռախոսային մի զրույցի առիթով: Եթե պարոն Ռոհրբախի մտքերը Շրայբերի նամակում ճիշտ են վերարտադրված, ապա շրջապատում պաստորը, թերևս, մինչև վերջ ընկալվում է որպես քաղաքական գործիչ, քանի որ օտարերկրյա մամուլի լուրերը, անշուշտ, ամենաանհուսալի սկզբնաղբյուրն են, որից կարելի է քաղել:

Բայց ինչ էլ լինի, գործն ունի ամենատարբեր հատկանիշներ, որոնք բավականին ուժեղ դիպչում են մեզ և սպառնում են տրամադրություն բորբոքել, ինչպես ժամանակին եղավ լուրերի առնչությամբ, դրա համար էլ խիստ անհրաժեշտ եմ համարում Ձերդ գերազանցության հետ զրույցի ժամանակ մանրակրկիտ պարզաբանել ամբողջ հարցի քաղաքական կողմը, թե ի՞նչ կեցվածք են պահանջում մեր ազգային շահերը հիմա և ի՞նչ՝ Սերբիայի բարեհաջող ճեղքումից հետո, որպեսզի դրանից հետո հնարավոր լինի գաղտնի տեղյակ պահել հրատարակիչներին:

Ձերդ գերազանցության հանդեպ հարգանքով լի և հավատարիմ

դ-ր Ֆաբեր

Հավելված 1

Պատճեն

Գերմանական ավետարանչական միսիոներական օգնություն
Բեռլին-Շտեգլից
Հումբոլդտ-շտր. 14.1

Նորին մեծություն պարոն ավագ նախագահ դ-ր ֆոն Հեգելին, պարոն իրավագիտության դոկտոր Ռ. Ֆաբերին, Մագդեբուրգ

Մեծարգո պարոնայք,

Արևելյան այսօրվա կոնֆերանսին ամբողջությամբ ներկայացվեցին գրեթե բոլոր գործող ավետարանական բարեգործական միությունները, ոմանք՝ նախագահության բազմաթիվ անդամներով. բացի այդ պարոն պրոֆեսորներ Դ. Հաուզլայտերը և Դ. Ռիխտերը, ինչպես նաև միսիայի տնօրեն Շպիկերը՝ գերմանական միսիոներական հանձնաժողովից և մի քանի այլ անհատներ, որոնց թվում ես հիշատակում եմ դ-ր Ռոհրբախին, պրոֆեսորներ Դ. Ռադե-Մարբուրգին, Դ. Դայսման-Բեռլինին, ապա՝ տնօրեն Աքսենֆելդին, միսիայի տեսուչ Կնոդտին՝ համընդհանուր ավետարանչական բողոքական միսիոներական միությունից: Ժողովը տևեց ժամը 9-ից 15-ը՝ ճաշի մեկժամյա ընդմիջումով: Արևելքում գործող շրջանակներին այն տվեց փորձի փոխանակման մեծ հնարավորություն և իրենց համար խիստ դժվար հարցի առավել լավ պարզաբանում: Հայ ժողովրդի ճակատագիրը քննարկվեց բազմակողմանիորեն: Պարոն դ-ր Լեփսիուսի հաղորդածները, որոնք հիմնված էին ոչ միայն հայկական ու ամերիկյան աղբյուրների և իր միսիոներական աշխատակիցների զեկուցագրերի, այլև ամենից առաջ Թալեաթ բեյի ու Էնվեր բեյի հետ իր զրույցների վրա, վճռական ազդեցություն ունեցան և դրանք հաստատեցին հատկապես ողջամիտ տնօրեն Շուխարդը (Մայնի Ֆրանկֆուրտ), պաստոր Լոհմանի աշխատակցի և պաստոր Բաուերնֆայնդը, որը մինչև օգոստոսի սկիզբը եղել էր Մալաթիայում: Ուղղակի դրամատիկ ազդեցություն ունեցան դ-ր Ռոհրբախի հետևյալ խոսքերը, նա, ցավոք, մեր ժողովին կարողացավ մասնակցել միայն կարճ ժամանակով: «Դ-ր Լեփսիու-

սի փաստարկները բացարձակապես հաստատվում են օտարերկրյա մամուլի լուրերով: Այդ իրադարձությունները մեզ համար անհնար են դարձնում թուրքական դաշինքի համար համատեղ պատասխանատվություն կրելը: Ռազմական իշխանությունը հրապարակայնության համար փակել է մեր բերանը: Բայց մենք կարող ենք և պետք է ասենք կառավարությանը, որ այլևս չենք կարող այդ դաշինքը ճանաչել որպես երկու իրավահավասար պետությունների միություն: Եթե այս ամենը հայտնի դառնա, ապա գերմանական ժողովուրդը կխայտառակվի ամբողջ աշխարհի առջև: Այդ իսկ պատճառով կառավարությունը պետք է Թուրքիային ստիպի հատուցել հայերին: Մենք կանգնած ենք Թուրքիայի վերջի սկզբում, որի վրա պետք է սեկվեստր դրվի»: Դ-ր Լեփսիուսն իրավացիորեն մատնանշեց, թե ինչ նշանակություն ունեցան դ-ր Ռոհրբախի այն խոսքերը, որին նա ոչ առանց հիմքի համարում էր «մեր գերմանա-թուրքական ամբողջ քաղաքականության մարգարե»: «Ես գլխարկս հանում եմ նրա առջև»:

Դ-ր Լեփսիուսի, Դ. Աքսենֆելդի, Դ Ռիխտերի կազմած և իմ խմբագրած կից դիմումը՝ ուղղված ռայխսկանցլերին, որը նիստից հետո մենք չորսս, պարոն Ռադեի հետ, ևս մեկ անգամ մանրակրկիտ ընթերցեցինք, ինձ համար շատ անսպասելի և գոհացուցիչ ձևով քննարկումների նյութ տվեց, որի ընթացքում հստակ դրսևորվեցին «կողմն» ու «դեմը»: Դ-ր Լեփսիուսը, անշուշտ, կարծում է, որ դիմումը կստորագրի նաև պարոն դ-ր Ռոհրբախը: Դ. Ռադեն պարոն ֆոն Հառնակի մոտ գնալիս դիմումն իր հետ վերցրեց, որպեսզի նրան էլ խնդրի ստորագրել: Մեր պայմանավորվածության համաձայն՝ դիմումը ներկայացնում եմ Ձեզ՝ խնդրելով, Ձեր համաձայնությունը, որ ես էլ ստորագրեմ: Քանի որ միտումնավոր նախապատրաստվել է միայն մի քանի օրինակ, ես Ձեզ կարող եմ տալ միայն իմ ձեռքի տակ եղած ուղղված աշխատանքային օրինակը: Նախ ես այն կուղարկեմ դ-ր Ֆաբերին, քանի որ ես նրան կարող եմ ներկայացնել իմ նյութը և տալ մի քանի տեղեկություն:

Ամբողջ շեշտը ուղղված էր նրան, որ դիմումը (ինչպես նաև ամբողջ բանակցությունները) լիովին գաղտնի մնա, ինչի մասին ոչինչ չպետք է հրապարակվի, առայժմ՝ նույնիսկ դիմումի փաստը:

Տարբեր կողմերից՝ հատկապես դ-ր Ռադեի, ընդգծվեց, թե որքան շնորհակալ են Գ.Ա.Մ.Օ.-անը՝ այս հավաքը կազմակերպելու համար: Միությունում՝ պարոնայք Դ. Ռիխտերի, դ-ր Լեփսիուսի և Դ. Աքսենֆելդի հետ, ինձ հանձնարարվեց ձեռք բերել ևս մի քանի ստորագրություն և դիմումը փոխանցել ռայխսկանցլերին, ինչին կհամաձայնեք նաև Դուք: Ապա Գ.Ա.Մ.Օ.-անը խնդրեցին գործերի հետագա ընթացքի մասին ոչ միայն տեղեկացնել մասնակիցներին, այլև կազմակերպել Արևելքում գործող օղակների հավաքները: Այն, ինչ դ-ր Ռիխտերը պահանջեց հունվարի 29-ի իր զեկույցում, որպեսզի «Գ.Ա.Մ.Օ.-ը դառնա ազնիվ միջնորդ մեր կրոնական ու ազգային համաշխարհային խնդիրների միջև», այսօր առաջին անգամ փորձեց դա իրագործել: Իհարկե, մենք դժվարագույն խնդրի առջև ենք, բայց անհատական զրույցի ժամանակ ինձ իրավացիորեն ասացին, թե որքան անհրաժեշտ ու պիտանի էր Գ.Ա.Մ.Օ-ան մասնակցությունը հենց այստեղ: Ինչպես ես բանավոր ասացի Ձեզ երկուսիդ, ինձ համար շատ հարգելի ու սիրելի պարոնայք, անկեղծորեն ցավում եմ, որ այս հարցում իմ արագ գործելու եղանակով՝ առանց Ձեզ հետ նախնական համաձայնության գալու, Ձեզ որոշ անհանգստություն պատճառեցի:

Ձեզ հետ իմ քննարկման արժեքավոր արդյունքը Վարնիգերոդում, շատ հարգելի պարոն դոկտոր, եղավ, ի դեպ, նաև Ձեզ հետ ապագայում նախատեսվող առավել հաճախակի հանդիպումներն այստեղ՝ Բեռլինում:

Խորին հարգանքներով՝ ձեզ երախտապարտ

[Ա.Վ. Շրայբեր]

Հավելված 2

[Բեռլինյան «Մագդեբուրգեր ցայտունգ»-ի խմբագրության հաշվետվությունը մամուլի առջև Լեփսիուսի ելույթի և արտգործնախարարության առարկության վերաբերյալ]

7.10.15

Պատճեն
Գաղտնի

Թուրքիայի ներքն վիճակի վերաբերյալ

Դ-ր Լեփսիուսը, որն այս օրերին Բեռլինի մամուլի առջև հրապարակման համար չնախատեսված ելույթ ունեցավ՝ միգուցե հիմնականում եկեղեցական շահերի ելակետով, ամբողջ 30 տարի ճանապարհորդել է Փոքր Ասիայում, հիմա վերջերս էլ՝ կրկին: Նա **հայ ժողովրդի տե-**

դահանման մասին խոսեց գերմանացի առևտրականների, միսիոներների, երկաթուղային ծառայողների հաղորդածների հիման վրա, ապա նաև հունական, բուլղարական և ամերիկյան դիվանագիտական ներկայացուցչությունների զեկուցագրերի և ի վերջո երկրի խորքից հայկական պատրիարքարան եկող տեղեկությունների և Կոստանդնուպոլսի հայկական սահմանադրական կուսակցության կենտրոնական կոմիտեի տեղեկությունների հիման վրա:

Էրզրումում եվրոպական պատերազմի սկզբում երիտթուրքական կոմիտեի անդամները խորհուրդ են տվել հայերին՝ հեղափոխականացնել Կովկասի 1,5 միլիոն ռուսահայերին (Թուրքիայում 2 միլիոն են): Դա տեղի չունեցավ, քանի որ կովկասյան հայերին այնքան լավ էին վերաբերվում, որ նրանք եռանդով լծվեցին ռուսական գործին: Թուրքերն էլ երբեք չեն կարողանա գրավել Կովկասը: Թուրքերը պատերազմի սկզբում թուրքական բանակում զինաթափեցին բոլոր հայերին և օգտագործեցին միայն որպես աշխատանքային գումարտակների զինվորներ: Այնուհետև բավականին անխոհեմ ձևով զինաթափեցին նաև հայ ժողովրդին, թեպետ զենքն այնտեղ պետք էր քաղաքացիներին խաղաղություն ապահովելու համար: Դրան հակառակ՝ թուրք բնակչությանը պետականորեն զինեցին և կազմակերպեցին քրդական ժողովրդական գնդեր, ինչպես նաև հրոսակախմբեր՝ հազարավոր բանտարկյալներից: Նոյեմբերից մինչև ապրիլ թալանեցին 400-500 հայկական գյուղ և դեռ իրենց բնակավայրերում սպանեցին մոտ 26.000 հայ: Հայ զինվորները շատ անգամ լքել են աշխատանքային գումարտակները, որովհետև աշխատանքի ժամանակ հաճախ նրանց սպանել են իրենց թուրք ընկերները: Պատերազմի սկզբում հայ առաջնորդները կապ են հաստատել թուրքական իշխանությունների հետ՝ դժվարությունները հաղթահարելու համար, չնայած դրան թուրքերը 3 ամսվա ընթացքում ոչնչացրին իրենց հայերի կեսին: Մայիսի վերջին, ինչպես խոստովանում է Էնվերը, հրամայված է եղել անատոլիական բոլոր վիլայեթներից հայերին քշել Արաբական անապատներ: Դա իրականացվեց: Մի մասին, իհարկե, կախեցին, 100-200.000 սպանեցին ճանապարհին, 2000-3000 տեղ հասան, բայց կզոհվեն, եթե նրանց օգնություն չցուցաբերվի: Այս փաստերը Թուրքիայում ոչ մեկը չի վիճարկում:

Ինչ վերաբերում է **մեղավորության** հարցին, ապա զեկուցողը կարծում էր, որ կարողացավ լիովին արդարացնել հայերին: Որոշ վայրերում

նրանք դեռ կարողացել են պաշտպանվել, բայց նրանք այդ ժամանակ, օր. Վանում, դեռ ոչինչ չգիտեին ռուսական սահմանի մոտի տեղաշարժերի մասին, և զարմացած էին, երբ ռուսները եկան, և որոնց նրանք դիմավորեցին, իհարկե, որպես ազատագրողների: Ի դեպ, հայկական կենտրոնական կոմիտեն հրահանգեց՝ խուսափել այն ամենից, ինչը կարող էր հանգեցնել բախման, քանի որ վախենում էին, որ այդ դեպքում կրկին կսկսվեր Աբդուլ Համիդի հայերին հալածելու հին ծրագիրը: Բարձրաստիճան մի պաշտոնյա զեկուցողին ասել է. «Մենք կուրացած պետք է լինեինք, որ չօգտագործեինք այս առիթը՝ հայերից ազատվելու համար»:

Իսկ ի՞նչն է **թուրքերի դրդապատճառը**: Էնվերը զեկուցողի ներկայությամբ անվանել է ռազմավարական պատճառները: Հայերին պետք էր հեռացնել սահմաններից և երկրի խորքում վնասազերծել էտապային ուղիները: Հեղինակի այն փաստարկը, որ զինծառայության պիտանի բոլոր տղամարդկանց զորակոչել են որպես աշխատանքային գումարտակի զինվորներ, թերևս բոլորովին չի թուլացնում այդ մտահոգությունը: Էնվերի կարծիքով 40 միլիոն թուրքերը վերջապես ուզում են ապահովել իրենց **ազգային** կյանքը, ուստի հայերին պետք է այնպես ցրել, որ նրանք ոչ մի տեղ մեծամասնությամբ իրար հետ չապրեն, ճիշտ այնպես, ինչպես մեզանում՝ հրեաների առնչությամբ: «Եթե դուք կարողանայիք Լեհաստանը Պրուսիա դարձնել,- ասել է նա,- դուք դա չէի՞ք անի: Դուք դա այլևս չեք կարող անել, իսկ մենք կարող ենք այդպիսի մի բան անել»: Ամերիկյան դեսպանը Թալեաթին առաջարկել է՝ բացի նավով Ամերիկա գնացած 7000 հայից, մնացած բոլոր հայերին էլ տանել Ամերիկա, նույնիսկ մի ամբողջ միլիոն, քանի որ այդ աշխատասեր ու գործարար բնակչությանը կարելի է օգտագործել այն կողմում: Թալեաթը խոսել է Էնվերի հետ, բայց նա հայտարարել է. «Այդ դեպքում կտեղափոխվեն հարուստները, իսկ այստեղ կմնան աղքատները»: Զեկուցողի կարծիքով, խոսքը ունևոր հայերի ծրագրված **թալանի** մասին է, որոնք ամենուրեք՝ հրեաների ու հույների հետ, իսկ երկրի խորքում առավելապես մենակ իրենց ձեռքում են պահում առևտուրն ու արհեստը: Այդ իսկ պատճառով տեղահանման հետևանքը նախևառաջ կլինի Անատոլիայի տնտեսական աղետը, իսկ **Թուրքիան** այդ կերպ ինքն **իրեն տնտեսապես կկործանի**: Մեր առևտրի համար դա ունի ամենուղղակի նշանակություն, քանի որ ամբողջ **ներմուծումը** հայերի ձեռքին է: Բայց Գերմանիայի ար-

տահանումը ամբողջովին վարկային գործ է, և եթե հիմա ծայրամասերի տնտեսական շրջանակները չեն վճարում, ապա չեն վճարի նաև Կոստանդնուպոլսի առևտրականները: Ուրեմն գերմանական փողի մի հսկայական մաս կկորչի արդեն հիմա: Կոստանդնուպոլսում չկա ոչ մի թուրք ներմուծող: **Արտահանումն** էլ կազմակերպում են հույներն ու հրեաները: Բայց թուրքերը երբեք չեն կարող ստանձնել այդ գործը, քանի որ տնտեսական գործունեության համար, դա ի դեպ հանրահայտ ճշմարտություն է, բացարձակապես անտաղանդ են: Կառավարությունը լրիվ անբավարար գիտե ասիական Թուրքիայի հարաբերությունները, քանի որ իշխանության ղեկին կանգնած երիտթուրքերը մակեդոնացիներ են՝ հիմնականում Սալոնիկից: Նրանք վարում են զուտ գաղափարական, թուրք նացիոնալիստական քաղաքականություն:

Բայց նացիոնալիզմն էլ այդ հողի վրա Եվրոպայից ներմուծված ապրանք է, քանի որ իսլամը չեզոքացնում է ազգությունները: Դրա համար էլ սրբազան պատերազմը իզուր փորձ էր, քանի որ մյուս իսլամական ազգությունները թքած ունեին թուրքական նացիոնալիզմի վրա, որին իրականում պետք է ծառայեր այդ սրբազան պատերազմը, և նրանք իրենց ավելի լավ են զգում ռուսների ու անգլիացիների, քան թուրքերի մեջ: Եթե մենք հաշտություն ձեռք բերենք, **մինչև մեր** Սուեզի վրա գնալը, ապա Անգլիայի դիրքը Թուրքիայի հարավում արտակարգ կուժեղանա: Քանի որ այնտեղ նստած են արաբները, իսկ նրանց թշնամանքը թուրքերի հանդեպ երբեք չի անհետացել: Ջեմալ բեյը՝ գլխավոր հրամանատարը Սիրիայում, որը արաբ է և հարավի համար նույնն է նշանակում, ինչ Էնվերը հյուսիսի համար, մի կերպ, մեծ դժվարությամբ զորքերն ուղարկեց դեպի հյուսիս, անգլիացիների հետ էլ անմիջապես հաշտություն կկնքեր, եթե Դարդանելում գործերը տապալվեին: Այս պատերազմը հիմա հավատացյալների պատերազմ չէ անհավատների դեմ, այլ սոսկ թուրքերի կռիվն է՝ բայց բոլոր ոչ թուրքերի դեմ: Օրինակ, ամերիկացիները Բեյրութում համալսարան ունեն՝ 22 մեծ պալատներով, որտեղ կրթություն են ստացել Սիրիայում աշխատող բոլոր բժիշկները, դեղագործները և այլն, այնտեղ վերջերս պետք է դասավանդեին թուրքերենով: Ամերիկացիներն այս անգամ դեռ բացատրեցին, որ թուրքերեն դասագրքեր չկան, և իրենց ուսանողների երեք քառորդը թուրքերեն չի հասկանում: Թե ինչ հաջողություն ունեցավ թուրքացման այդ քաղաքականությունը Ալբանիայում և ամբողջ եվրոպական Թուրքիայում, իհարկե, վկայեցին Բալկանյան վեր-

ջին պատերազմները: Այդ քաղաքականությունը կարող է վտանգել նաև ասիական Թուրքիայի ամբողջականությունը:

Սակայն այդ քաղաքականությունը որոշակի չափով նպատակաուղղված է նաև ընդդեմ մեզ, համենայնդեպս, շատ ավելի, քան այստեղ տեղյակ են: Տարեց թուրքերն, իհարկե, թշնամաբար են տրամադրված գերմանացիների հանդեպ, որովհետև մենք պատերազմի մեջ ներքաշեցինք թուրքական կառավարությանը: Եվ երբ Դարդանելում վիրավորները տուն են վերադառնում, բնակչությունը անեծքներ է թափում գերմանացիների գլխին: Բայց երիտթուրքերն էլ մեզ համարում են սոսկ ծառաներ:

Իրականում արտգործնախարարությունում էլ ցավով նկատել են, որ Էնվերը պարոն Լուդվիգ Բ.Տ.-ի ներկայությամբ վերջերս մեծամտորեն հայտարարել է, թե ինքը գերմանական զորքերի կարիքը չունի: Համալսարանական 16 պրոֆեսորների Կոստանդնուպոլիս են հրավիրել միայն այն բանի համար, որպեսզի Կոստանդնուպոլսում այլևս չքննարկեն **գերմանական** համալսարանի մասին Յեքի միտքը: Նրանք պետք է գրավոր պատրաստակամություն հայտնեին՝ մեկ տարի անց դասավանդել թուրքերեն, բայց դա անհնար է, քանի որ թուրքերենին տիրապետելու համար հարկավոր է մի քանի տարի: Հետևաբար մի տարի հետո, եթե նրանք իրենց խոստումը չկատարեն, ապա նրանց կարելի է վռնդել: Մինչդեռ թուրք բնակչությունը խիստ զայրացած է ֆրանսիական դպրոցները փակելու համար, և դրանք պատերազմից անմիջապես հետո նորից կվերաբացվեն: Ձեկուցողն ընդհանրապես չի կասկածում, որ հաշտություն կնքելուց հետո կրկին կսկսվի թուրքերի հին խաղը անգլիացիների, ֆրանսիացիների և ռուսների հետ, իսկ մենք կմնանք ձեռնունայն: Այս պահին մեզ համար, նաև զեկուցողի կարծիքով, կենսական հարց է որպես դաշնակից Թուրքիային մեր կողմից պինդ պահելը: Բայց եթե մենք Կոստանդնուպոլսում ենք և կարող ենք այստեղ լինել միայն Սերբիայի միջով, ապա նա կարծում է, որ հասել է պահը, երբ մենք իշխանության առավել ուժեղ լծակներով, քան հիմա ունենք Կոստանդնուպոլսում, պետք է խափանենք, որպեսզի մեզ զրկեն Փոքր Ասիայի կովի ամբողջ շահույթից: Վերջերս մի նիստի ժամանակ, որտեղ զեկուցում էր նաև Լեփսիուսը, **Գվիները** բացահայտորեն հաստատեց իր դատողությունները և միայն ավելացրեց, որ ներկայումս մենք դրա դեմ ոչինչ չենք կարող անել:

Քննարկման ժամանակ շեշտվեց մեր տնտեսական կյանքի և ապա-

գա ծրագրերի համար մեծ վտանգը: Անտվերպեն-Բաղդադ: Թուրքը, ինչպես հայտնի է, դատարկաշրջիկ է, դրա համար էլ մյուսները նրա երկրում ունեն այնպիսի դերակատարություն, որի պարագայում նա իրեն լավ չի զգում: Բայց ինքը չի կարող նրանց փոխարինել, իսկ դա մեզ համար կարևոր է: Հայերն ամենագործարար տարրերն են հենց անատոլիական երկաթուղու մոտ, կամ գոնե այդպիսին էին: Թուրքիայում մեր դիրքի համընդհանուր խնդրի վերաբերյալ մենք պետք է միշտ հստակ հասկանանք այն, ինչ բոլորս գիտենք, բայց ժամանակ առ ժամանակ մոռանում ենք: Այն, որ բացի Թալեաթից ու Էնվերից ամբողջ երիտթուրքական կոմիտեում իրականում չկա գերմանացիների ոչ մի բարեկամ, քանի որ կոմիտեն ֆրանսիացիների մակաբույծն է, և երիտթուրքերը դաստիարակվել են հիմնականում Փարիզում, իսկ մեզանում տեսնում են հետադիմական պետություն: Ջավիդ բեյը դեռ պատերազմի ժամանակ այստեղ՝ Բեռլինում, արտահայտեց իր հակակրանքը պատերազմի հանդեպ և անկեղծորեն հայտնեց ֆրանսիացիների հանդեպ իր համակրանքը: Դա այդպես է, եթե ոչ ամենուրեք, ապա շատ տեղերի համար հաստատված է, որ թուրք պաշտոնյաները հասարակության մեջ հիմա հաճախ քողարկվում են գերմանական ազգությամբ, որը **վնասում է** գերմանական ազգին, այսպես, օրինակ, տեղ-տեղ տարածում են, թե կառավարությունը բոլորովին չի ցանկացել կոտորել հայերին, բայց գերմանական կայսրը ստիպել է նրան, բացի այդ՝ նաև չեն ուզում ստեղծվի տպավորություն, թե մենք արժեքավոր օգնություն ենք ցուցաբերում: Գերմանացիները հաճախ առնչվում են նույնիսկ այնպիսի դժվարությունների, երբ օր. մեր կամավոր սանիտարական շարասյուները ցանկացել են բարձրացնել գերմանական դրոշը:

Արտգործնախարարության առարկությունը: Գերմանացիների կողմից՝ հայերի կոտորածներ հրահրելու վերջին վերսիան ընդհանուր առմամբ տարածված չէ Թուրքիայում: Իհարկե, Թուրքիան պատերազմն սկսեց ոչ հանուն մեզ, բայց մի մասը՝ թեկուզ փոքր, հենց համոզված էր, որ թուրքերի նպատակներին կարելի էր հասնել միայն մեզ հետ, և մենք պետք է ուրախ լինենք, որ գրավել ենք այդ քիչ մասին, և նա այս պահին ունի վճռական ազդեցություն: Մենք գիտենք, որ մեր սպաներն այնտեղ ներքևում կանգնած են կորսված պահակետում և հավանական է, որ թուրք բնակչության հիասթափությունը, եթե պետք է վերցվի Դարդանելը, կուղղվի նրանց դեմ, և մենք երևի թե նրանց այլևս չենք տեսնի:

Բայց սա պատերազմ է: Այս կողմից մենք հանգամանորեն չանդրադարձանք ամենամեծ՝ ոչ ակնթարթային, այլ ապագայի տնտեսական խնդիրներին: Ինչ վերաբերում է մասնավորապես հայերին, ապա գերմանական կառավարությունը, երբ Թուրքիան մտավ պատերազմի մեջ, հայերին հասկացրեց, որ եկել է պահը, երբ նրանք կարող են գործով ապացուցել իրենց հավատարմությունը թուրքերի հանդեպ և հիմք դնել ապահով ապագայի համար: Այդ խորհուրդը հայերը մասամբ անտեսեցին, ընդ որում՝ Անտանտի հրահրմամբ և ռուսների ու անգլիացիների փողերով: Պատերազմի առաջին ամիսներին թուրքական կառավարությունը հայերի հանդեպ կոռեկտ ու հանգիստ էր: Ամենասկզբում, մեր ծառայությունների տեղեկությունների համաձայն, նրանք հայերին դեռ չէին զինաթափել: Շատ դաժան միջոցառումներ, այնուամենայնիվ, ձեռնարկվեցին, երբ թուրքական զորքերի թիկունքում բռնկեց հայերի ապստամբությունը: Այդտեղ ռուսահայերի մեղքով տուժեցին նաև թուրքահայերը: Այդ մեղքը օր. նրանում էր, որ մի քանի օրում ավելի քան 150.000 մահմեդական զոհ դարձան ապստամբությանը: Այդ արյունահեղության մասին Անտանտի մամուլը ոչինչ չի հիշատակում: Բայց սեպտեմբերի 23-ին «Daily Chronicle»-ը («Ամենօրյա խրոնիկա») «Our seventh Allied» («Մեր յոթերորդ դաշնակիցը») հոդվածում գրել է հենց հայերի մասին և գովել է հայ ժողովրդին, որը հենց սկզբից հանդես եկավ Անտանտի կողմում: Այն, որ էվակուացիայի ժամանակ եղել են օրինազանցություններ, իհարկե, մեր նախարարությունը համարում է ցավալի, բայց ըմբռնելի, քանի որ կենտրոնական կառավարությունը չնչին ազդեցություն ունի ծայրամասերի վրա: Շատ ցավալի կլիներ, եթե մեր **միսիոներական միությունները** գրոհեին հայկական հարցը: Դրանից կտուժեր Թուրքիայի հետ մեր հարաբերությունը, հավանաբար նաև կվնասեր՝ հայերին օգնելու փոխարեն: Մեր ներկայացուցչությունը Թուրքիայում վաղուց ամեն ինչ կաներ հայերի ճակատագիրը թեթևացնելու համար՝ առանց եկեղեցական պահանջների կարիքն զգալու: Ավելի մոտ, քան հայերը, մեզ համար մեր հայրենակիցներն են, որոնց ծանր պայքարը անուղղակի թեթևանում է Թուրքիայի միջոցով: Մեր քրիստոնեական համերաշխության զգացումը կարող էր մեկ այլ տեղ էլ ապացուցվել, օր. Մարոկոյում գերմանացիների բնաջնջման, մեր արևելյան պրուսացիների հափշտակումների և, ի վերջո, Լեհաստանի ամայացման առնչությամբ: Եթե խայտաբղետ և հեթանոս հորդաները, որոնց մեր թշնամինե-

ը բերում են մեր դեմ՝ կրակի տակ, չեն պատվազրկել մեր գերմանացի կանանց և չեն անարգել գերմանական մշակույթի հազարամյա հուշարձանները, ապա պետք է երախտապարտ լինենք ոչ թե մարդկայնության բարձր զգացումին ու քրիստոնեությանը, որը մեր թշնամիներն ու չեզոք երկրներն ի ցույց են դնում հայերի կապակցությամբ, մամուլում կարելի էր լռել այդ ամբողջ հարցի մասին, մենք նախկինում չափազանց շատ ենք խառնվել ներքին գործերին, օր Իտալիայում, նույնիսկ Ավստրիայում, մինչդեռ Անգլիան այդպիսի գործերի դեպքում երբեք չի անհանգստացել իր դաշնակիցների համար: Ամերիկացիները Հայկական հարցով պաշտոնապես զբաղվում են ոչ շատ վաղուց և այս պարագայում, եթե լուծեն սուզանավի հարցը, ապա կփորձեն մեզ հետ վեճի բռնվել հայերի պատճառով:

Այս ամենից հետո մեր դիրքն այս պահի համար ինձ թվում է ինքնին հասկանալի, բայց մյուս կողմից՝ նաև ապագայի համար, առաջադրել այդպիսի մեծ ու դժվարին խնդիրներ, որոնք գերմանական մամուլը հավանաբար ստիպված կլինի քննարկել մինչ հաշտություն կնքելը և մեր դիվանագիտությանն աջակցելու համար թուրքերին առնչվող իսկապես ծանր խնդրի վերաբերյալ ժամանակին անթաքույց ասել իր կարծիքը:

1915 – 10 – 18 – DE – 011

Սկզբնաղբյուրը՝ PA-AA (Կոստ. դեսպ.) 171
Հրապարակված՝ Գ և Հ փաստ 185 (խմբ.կրճ.)

Կոստանդնուպոլսի դեսպանությանը՝ Հալեպում ռեգենտ Հոֆմանից

№ 123

Հալեպ, 18 հոկտեմբերի 1915

Հայերի տարագրման ընթացքը

Երեկ կարգադրվեց 14 օրում քաղաքը դատարկել տարագիրներից (20.000), հավանաբար նկատի ունենալով թիկունքը: Միաժամանակ համակենտրոնացման ճամբարների հավաքումը՝ քաղաքից դուրս: Տավրոսից դեպի հարավ երկաթուղին այլևս չի օգտագործվում աքսորի համար: Սեփական փոխադրամիջոց չունեցող ընտանիքները կտեղափոխվեն ոտքով, յուրաքանչյուր ընտանիքի ուղեբեռի համար՝ մեկ ուղտ, որը հաճախ ակամա հետ է մնում: Վիլայեթի քաղաքական գործերի կառավարչի տվյալներով՝ Կաթմայի և Ռաջուի մերձակայքում կենտրոնացված են 40.000-ը, մյուս կասկածյալները մոտենում են՝ Արևմտյան, Միջին և Հյուսիսային Անատոլիայից, դեպի հարավ (Ռաքքա, Դեր Զոր, արևմտյան Հաուրան) «բնակեցման» համար ուղարկել են 300000 հոգի: Ըստ հիշյալ պաշտոնյայի՝ նրանք ի վերջո հարկադրաբար իրենք իրենց հույսին կմնան և «բոլորն էլ կմեռնեն», կառավարությունը, ըստ նրա, խաղաղ ժամանակ «երևի թե» կարողանար գլուխ բերել վերաբնակեցումը, թեպետ մահմեդականների բնակեցումը նույնպես բազմիցս տապալվեց, բայց հիմա ո՛չ փող ունի, ո՛չ էլ ծառայողներ: Համենայնդեպս, բնակեցման համար բացակայում է ամեն ինչ, համակենտրոնացման ճամբարների համար չեն մատակարարվում ո՛չ վրաններ, ո՛չ բավականաչափ ալյուր, ո՛չ էլ վառելանյութ: Աքսորված գյուղացիներից իշխանությունները վերցրել էին նույնիսկ բրիչներն ու բահերը: Համընդհանուր համոզմունքն այն է, որ բոլոր տարագիրները դատապարտված են մահվան: Գերմանիայի համաձայնությունն այդ զանգվածային սպանություններին, իմիջիայլոց, չեն ընդունում ոչ միայն բոլոր քրիստոնյաները այն չի արժանանում նաև երկրի մահմեդական բնակչության մի մասի հավանությանը: Վերջիններս առիթի դեպքում վկայակոչում են Գերմանիայի օրինակը (Բելգիա): Զեկուցագիրը հետևում է:

[Հոֆման]

[Մորդմանի նշումը, 20.10]

NB. Ըստ երևույթին (համեմատիր 5990) խոսքը ոչ թե Հալեպի բնակչության արտաքսման մասին է, այլ երկրի այլ մասերից այնտեղ հավաքված հայերի թափորների հետագա տեղափոխման մասին:

Նույնիսկ Թալեաթ բեյը դեռևս մի քանի օր առաջ իմ ներկայությամբ, ինչպես արդեն նախկինում մեկ անգամ, մատնացույց արեց, որ մենք Բելգիայում սպանել ենք 40.000 բելգիացու: Ես մեկ այլ տեղից էլ եմ լսել, խոսքը fable convenue (համաձայնեցված առակի) մասին է, որն ակնհայտորեն թշնամական կողմը միտումնավոր տարածում է թուրքերի մեջ:

1915 – 10 – 26 – DE – 001

Սկզբնաղբյուրը՝ PA-AA/R14088

Ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին՝ Կոստանդնուպոլսում գործերի հավատարմատար Նոյոաքից

№ 634

Պերա, 26 հոկտեմբերի 1915

15.10.15-ի №773[62] հրամանագրի և իմ հեռագրային հաղորդագրության կապակցությամբ:

Ընդդիմությունը, որին թուրքական կառավարությունը պետք է հաղթահարի սեփական ճամբարի ներսում՝ բացառապես Գերմանիայի օգնությամբ պետական կառավարման բոլոր մասերը վերակազմավորելու իր ծրագրով, հենվում է հենց այն կասկածի վրա, որ Գերմանիան ճիշտ այնպես, ինչպես նախկինում Քառյակ միության տերությունները և Միացյալ Նահանգները, Թուրքիայում իրենց ապագա քաղաքականությունը վարելիս, թուրքերի վրա հենվելու փոխարեն, կարող են հենվել այլ ժողովուրդներից մեկի վրա:

Համենայնդեպս, հայերի՝ որպես եվրոպական առևտրի միջնորդի, կորուստը կորուստ է նաև մեզ համար: Բայց թուրքերի վստահությունը մեզ համար չափազանց կարևոր է, որպեսզի այն վտանգենք՝ փորձելով հայերին վերադարձնել իրենց հին դերակատարությունը:

«Արևելքում հանուն քրիստոնեական բարեսիրության» օգնության միությունը՝ Գերմանիայի արևելյան միսիան, գերմանա-հայկական միությունը, կայզերական գթության քույրերն իրենց գործունեությունը երբեք չեն օգտագործել քաղաքական և կոմերցիոն քարոզչության նպատակով: Նրանք ցանկանում էին, ինչպես հնչում է դիպուկ արտահայտությունը՝«ծառայել հայ ժողովրդին»: Նրանք այդ նպատակով ծախսել են հարյուր հազարավոր մարկ և շատ անձնվեր աշխատանք են կատարել, որի համար ավելի լավ կիրառություն կգտնվեր թե՛ հայրենիքում, և թե՛ արտասահմանում մշտապես ապրող գերմանացիների համար: Դրանով նրանք

62. A29546 [միայն Շուխարդի նամակի համար, հրամանագրի A-համարը 30744 և 31719]

իրենց համար քիչ երախտագիտություն են վաստակել: Համաշխարհային պատերազմի սկզբում թուրքահայերն անմիջապես հանդես եկան ընդդեմ գերմանացիների, նրանք այստեղ էլ են մեր հանդեպ թշնամական քարոզչություն կրողները՝ հայերի հետապնդումներից դեռևս շատ առաջ:

Հետապնդումների արդյունքում ստեղծված թշվառությունը կարող էր մեղմացվել միայն բազում միլիոններ ծախսելով: Թուրքական կառավարությունը մինչև հիմա մերժել է ամեն տեսակ օգնության ակցիա: Թե ավելի ուշ որքանով նա մասնակից կդառնա դրան, դեռ պարզ չէ: Ամենայն հավանականությամբ՝ ամբողջ աշխարհին համագործակցելու կոչ կանեն, եթե նույնիսկ արտասահմանում ապրող հայերը, թերևս, խնայողաբար կողքի քաշվեն:

Գերմանական միություններն, անշուշտ, մտադիր են, երբ արդեն ռազմական գրաքննչությունն իրենց այլևս չնեղի, աշխույժ քարոզչություն ծավալել և, անկասկած, Գերմանիայում կգտնեն գթասիրտ մարդկանց, ովքեր մեծ գումարներ կտան հայ ժողովրդի համար: Մեծածավալ այդպիսի ակցիան կարող էր արթնացնել թուրքերի անվստահությունը, և դեռ հայկական միջոցներն էլ կմսխվեին՝առանց մեզ համար որևէ օգուտի: Իհարկե, խոսքը հայամետ գերմանական միությունները ճնշելու մասին չէ: Նկատի ունենալով այն եղանակը, թե ինչպես մեր թշնամիները թուրքերի հայկական քաղաքականությունը շահարկեցին ընդդեմ մեզ, ապա մեզ համար նույնիսկ ցանկալի պետք է լինի, որ թույլատրելուն պես գերմանական կողմից անհատական բնույթի օգնության գործունեություն ծավալվի հայերի օգտին: Միայն թե օգնության գործունեությունը ոչ մի կերպ չպետք է դուրս գա այն շրջանակներից, ինչ կատարվել է նախքան պատերազմը: Կայզերական կառավարությունն էլ միությունների ձգտումներին աջակցելիս պետք է դրսևորի մեծագույն զգուշավորություն:

Ես կցանկանայի ինձ իրավունք վերապահել առաջարկելու՝ գործել ընդհատակից և համապատասխան վարչական միջոցներով անել այնպես, որ հայերի համար արվող նվիրատվությունները չընդունեն չափազանց մեծ ծավալ:

Նոյոաք

Ռոզենբերգի նշումը

Դ-ր Յեքի և պարոն Էրցբերգերի հետ առիթի դեպքում կխոսվի առաջարկված իմաստով:

1915 – 11 – 04 – DE – 011

Սկզբնաղբյուրը՝ PA-AA /Կոստ.դեսպ./171
Հրապարակված՝ Գ և Հ փաստ. 19 /խմբ./

Կոստանդնուպոլսի դեսպանությանը՝ Մոսուլի փոխիշխանապատոս Հոլշտայնից

№ 60

Մոսուլ, 4 սեպտեմբերի 1915

Հրատապ

Հալիլ բեյն՝ իր շտաբով երեկ ժամանել է այստեղ: Նա հիվանդացել է և մի քանի օր պետք է անկողնում մնա: Հենց նոր նրա շտաբից մի գնդապետ ինձ հայտարարեց, որ Մոսուլում էլ պետք է ոչնչացնեն հայերին, և մտադիր է ինքը դա անել, ես էլ չեմ կարողանա նրան ետ պահել այդ մտքից, գերմանացիներն ուրացան թուրքերի հետ իրենց բարեկամությունը, քանի որ ցանկանում էին արգելել հայերի հանդեպ դատավճռի իրականացումը:

Անմիջապես խիստ վճռական ու **հրատապ** հրամաններ են տրված Հալիլ բեյին՝ այնուամենայնիվ, արգելակել հետագա ջարդերը:

Հալիլի զորքերին, որոնք ջարդեր են կազմակերպել հյուսիսում, վաղը, կամ վաղը չէ մյուս օրը սպասում են այստեղ:

[Հոլշտայն]

1915 – 11 – 06 – DE – 012

Սկզբնաղբյուրը՝ PA-AA /Կոստ. դեսպ./171
Հրապարակված՝ Գ և Հ փաստ 196 (կրճ.)

[Մորդմանի գրառումը 6.11]

«Արևելքում հանուն քրիստոնեական բարեսիրության» գերմանական օգնության միության հիմնարկներից քույր **Ալմա Յոհանսոնի** տվյալները՝ Մուշում հայերի հալածանքների մասին: (5. XI)

(N.B.Մուշում կա տղաների և աղջիկների որբանոց և մեկ պոլիկլինիկա, այսպես կոչված՝ բուժկայան):

Մուշ քաղաքն ունի 50.000 բնակիչ, որոնց կեսը հայ է, մյուս կեսը՝ մահմեդականներ (քրդեր, թուրքեր), Մուշի շրջանում մոտ 300 գյուղ կա, հիմնականում՝ հայկական:

Ցմեռվա ընթացքում արական սեռի հայ բնակչությանն օգտագործում էին արևելյան ռազմադաշտում մթերքի և զինամթերքի տեղափոխման համար՝ այդ մարդկանցից միայն շատ քչերը վերադարձան, 2-300-ից՝ միջին թվով հազիվ 50-ը:

Գարնանն ավերեցին հայկական գյուղերը, այն բանից հետո, երբ մինչ այդ արդեն դաժանորեն բռնագրավել և օթևանելու համար տեղավորել էին զորքերը:

Մայիս-հունիսին Բիթլիսը մաքրեցին հայերից:

Հունիսի կեսերին մութասարիֆը հայտնեց Ալմա Յոհանսոնին և Բոդիլ Բյորնին, որ **գերմանական** և թուրքական կառավարությունները որոշել են բոլոր եվրոպացիներին ուղարկել Խարպուտ:

Ռուսները Վանից իրենց առաջխաղացման ընթացքում գրավեցին Ահլաթը, Բուլանիկը, Գոփը և Լիշը, իսկ նրանց պարեկները հսկում էին Մուշից 1-2 օրվա ճանապարհ հեռվում:

Բայց երկու քույրն էլ հրաժարվել են լքել Մուշը:

Քաղաքը շրջապատված էր զորքերով, և դիրքավորված էին գնդացիրներ շուրջը:

Հուլիսի 11-ին, կիրակի օրվա գիշերը, հրացանների կրակոցներով սկսվեց կոտորածը, թուրքերը պնդում էին, որ իբր հայերը փորձել են անցնել Սասուն:

Պալատում մի քանի ուսնոր հայերի հաղորդեցին, որ նրանք երեք օրում՝ քաղաքի ամբողջ բնակչության հետ, պետք է լքեն քաղաքը, բայց ամբողջ իրենց ունեցվածքը պետք է թողնեն, որն այսուհետ պատկանում է կառավարությանը:

Առանց սպասելու այդ ժամկետը լրանալուն՝ արդեն երկու ժամ անց, թուրքերն սկսեցին ներխուժել հայերի տները և թալանել:

Երկուշաբթի օրը՝ ամսի 12-ին, ամբողջ օրը շարունակվեց հրետանու և հրացանների կրակահերթը, թուրք բնակչությունը մասնակցում էր դրան:

Երեկոյան զինվորները ներխուժեցին աղջիկների որբանոց՝ թաքնված հայեր փնտրելու:

Գիշերը և հաջորդ օրը դեռևս շատ կրակեցին: Բակի դուռը փակելու փորձ անելիս կրակոցներից սպանվեցին մի կին և մի որբ աղջիկ՝ քույր Յոհանսոնի կողքին:

Չորեքշաբթի օրը՝ վաղ առավոտյան, հիշյալ քույրն ուղևորվեց մութասարիֆի՝ **Սերվեթ բեյի** մոտ, որպեսզի հիմնարկի և նրա բնակիչների համար ձեռք բերի պաշտպանություն ու խնայողական վերաբերմունք:

Մութասարիֆը՝ Էնվեր փաշայի մտերիմ բարեկամը, իրեն պահեց կատաղածի պես և կտրուկ մերժեց խնդրանքը՝ չանսալով իր շրջապատի մարդկանց հորդորներին: Միայն երկու քույրերին թույլատրվեց պահել երեք աղջիկ և մի ծառա:

Արական սեռի հայ բնակչությանը հենց քաղաքի մոտ սպանեցին, կանանց, աղջիկներին և երեխաներին ևս մեկ օր քարշ տվեցին և վերացրին: Միայն որբանոցի երեք հայ ուսուցչուհիների հետո ազատ արձակեցին:

Քաղաքը դատարկելուց հետո հայկական թաղամասը հրկիզվեց և հողին հավասարեցվեց, հայկական գյուղերը՝ նմանապես:

Այդ իրադարձությունների ժամանակ ռազմական բժիշկ դ-ր Ասադ բեյը՝ ալբանացի, որն աչքի է ընկել իր դաժանությամբ, սպառնացել է նաև երկու քույրերին:

Օգոստոսի 10-ին վերջինները մեկնեցին Մեզերեհ, Խարպուտ, որտեղ հասան օգոստոսի 20-ին՝ հիվանդացած մութասարիֆի հետ, որը 2 օր անց մահացավ:

Խարպուտում հայերի բնաջնման մասին քույր Ալման նույնպես մանրամասն տվյալներ է հաղորդել: Հալածանքներն այնտեղ սկսվել են արդեն մայիսին, տղամարդկանց զանգվածային ոչնչացումը տեղի է ունեցել հուլիսյան առաջին օրերին (վալի Սաբիթ բեյը՝քուրդ, ոստիկանության պետը՝ Ռեշադ բեյ):

Մանրամասների մասին հիշեցնում եմ:

Պաշտոնական շրջանակները Մուշում, Մեզերե-Խարպուտում և Սվազում միաձայն հաստատում են, որ գերմանացիներն են թուրքական կառավարությունից պահանջել՝ տեղահանել ու բնաջնջել հայերին:

Օրիորդ Յոհանսոնն այսօր այցելեց ամերիկյան դեսպանատուն:

1915 – 11 – 08 – DE – 001

Սկզբնաղբյուրը՝ PA-AA/R12089
Հրապարակված՝ Գ և Հ փաստ 195 (կրճ. խմբ.)

Ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին՝ Հալեպի հյուպատոս Ռյոսլերից

№ 103/Հ № 2511

Հալեպ, 8 նոյեմբերի 1915

Հոկտեմբերի կեսին հայերի տեղահանումը հասավ որոշակի գագաթնակետի, այնպես որ կարելի էր գնահատել նրա տարածումը և պահն էր հարմար՝ ընդհանրական պատկերացում կազմելու համար: Պարոն փոխհյուպատոս Հոֆմանն իմ համաձայնությամբ գործի անցավ և ավարտելուց հետո այն կուղարկի Ալեքսանդրետից: Ինձ անցանկալի չէր թվում, որ ինձ հետ մեկտեղ այստեղից կարտահայտվի ևս մեկ դիտորդ: Իմ հերթին ես շարունակում եմ մի քանի իրադարձությունների նկարագրությունը և նախօրոք կարող եմ ուղարկել համընդհանուր դիտողություն: Ռանկեն իր համաշխարհային պատմության մեջ սաքսոնների հանդեպ Կարլ Մեծի քաղաքականությունը քննարկելիս ասում է. «Չի կարելի հերքել, թե օրենքների խստությունը պետք է արթնացներ դիմակայություն դրանց իսկ դեմ: Այդօրինակ խառնաշփոթի ժամանակ դա միշտ պատահում է: **Այն միջոցները, որոնք ձեռնարկում են ընդդիմության առաջացումը կանխելու համար, պիտանի են նույնն արթնացնելու համար**»:

Այս նախադասությունը դիպուկ է թուրքական կառավարության քաղաքականության համար, որը, չնայած տատանումներին, ընդհանուր առմամբ կիրառվել է հայերի հանդեպ՝ սկսած 1895թ. ջարդերից: Դա հատկապես կարող է վերաբերել նաև վերջին իրադարձություններին: Կառավարությունը հայերի հանդեպ կանխարգելիչ միջոցառումները ձեռնարկեց պատմության մեջ հազվադեպ հանդիպող դաժանությամբ և արդյունքում երեք տարբեր վայրերում առաջացավ դիմադրություն՝ Ֆունդաջակում, Սուեդիեում և Ուրֆայում: Ֆունդաջակի մասին ես նախկինում հայտնել եմ: Սուեդիեի կռիվները (4 գյուղ Անտիոքի մերձակայքում) ավարտվեցին նրանով, որ ապստամբները ծածուկ մի ծովախորշում՝ քողարկված թշնամու ռազմական նավի կրակով, կանանցով ու երեխաներով հանդերձ, որ հայկական կողմից հաշվվում է 6000 հոգի, նստեցին նավ: Եթե հաշվենք, որ այդ գյուղական բնակչության մեջ բարձր տոկոսային հարաբերությամբ 10% -ը համարվում է զինակիր, ապա ստացվում է 600 տղամարդ, ովքեր հավանաբար զինծառայության կմտնեն թշնամական բանակի կազմում: Չնայած այդ փաստին և չնայած, ի վերջո, թշնամական հածանավի հետ ստեղծված կապին, չկա ոչ մի ապացույց, թե այդ

տարածքում ի սկզբանե մտածել են ապստամբության մասին: Շատ ավելի հավանական է, որ աքսորի վտանգը մղեց դիմակայության:

Ուրֆայում էլ հայերի ապստամբության համար դրսի միջամտություն ենթադրելու կարիք չկա: Հնարավոր է, որ Վանից ու Դիարբեքիրից եկածներն են հրահրել ու գլխավորել, բայց բավական էր, որ Ուրֆայի բնակիչներն աչքի առաջ ունենային կառավարության կանխարգելիչ միջոցառումները՝ տեղահանումն ու դրանով իրենց ժողովրդի և ամեն մեկի առանձին կործանումը, որպեսզի ծնվեր դիմադրելու վճիռ: Այնուհետև պայքարի սկիզբը դրվեց հայերի մեղքով: Առանձին դեպքերում իրադարձությունները ծավալվեցին մոտավորապես հետևյալ կերպ, ընդ որում՝ ես հետևում եմ մայոր Գրաֆ Վոլֆսքելին, որը գեներալ Ֆախրի փաշային ուղեկցել է Ուրֆա՝ ապստամբությունը ճնշելու համար:

Դրան հաջորդած օգոստոսի 19-ին՝ պարեկին կրակոցով պատելուց և դրան անմիջապես հաջորդած ջարդերից հետո, այլևս ոչինչ չկատարվեց, նույնիսկ պարեկին սպանողների դեմ հետաքննություն չսկսվեց: Սեպտեմբերի վերջին հայկական թաղամասում կրկին հրաձգություն եղավ, որի մասին այլևս ոչինչ հայտնի չդարձավ, նույնիսկ այն, թե ում դեմ էր այն ուղղված: Երբ հաջորդ օրը այդ միջադեպը պարզելու համար կառավարությունը ժանդարմների պահակախումբ ուղարկեց, նրանց մի մասին գնդակահարեցին: Դրանից հետո հայերը բարիկադներ կառուցեցին իրենց թաղամասում: Նախնառաջ այն շրջափակվեց Ուրֆայում եղած 60-80 ժանդարմներով: Հոկտեմբերի առաջին օրերին ժամանեց մի գումարտակ, հոկտեմբերի 4-ին՝ Ֆախրի փաշան կոմս Վոլֆսքելի հետ, հոկտեմբերի 5-ին՝ երկրորդ գումարտակը դաշտային երկու գնդացիրներով: Հանձնվելու պահանջը հայերը մերժեցին, որոնց մեջ պաշտպանների թիվը հասնում էր մոտ 2000-ի: Հոկտեմբերի 6-ից սկսվեց գրոհը, որն ուղղված էր հիմնականում պաշտպանական երեք դիրքերին: Ուրֆայի նեղլիկ և անկյունաձև ճարտարապետական ոճը, որի տները քարից են և հաճախ կառուցվում են հին, քարանձավային բնակարանների վրա, հայերը հմտորեն հարմարեցրել էին պաշտպանության համար, և դա դժվարացնում էր գրավումը: Հայերը զինված էին հրացաններով և ձեռքի նռնակներով, որոնց պատրաստման համար, թերևս, օգտագործվել է Բաղդադի երկաթուղու կառուցման ժամանակ գողացված դինամիտը: Դրան հակառակ, նրանց մոտ չկար, ինչպես սխալմամբ պնդում էին ռուսական կամ այլ գնդացիրներ: Հոկտեմբերի 12-ին ներգրավվեցին ևս երրորդ մի գումարտակ՝ 2 հրանոթով: Հոկտեմբերի 14-ին գրոհեցին եկեղեցին, 15-ին՝ ամերիկյան միսիան, որը, հակառակ միսիոներ Լեսլիի կամքի, գրավել էին հայերը, և որպես ամուր շենք վերածել հիմնական հենակետի: Հայերը Լեսլիին պահել էին որպես պատանդ՝ հուսալով, թե չեն հրակոծի այն շենքը, որտեղ նա է: Նրան թողնելու թուրքերի պահանջը հայերը մերժեցին: Նրան ազատագրեցին միայն գրոհող զորաջոկատները: Եկեղեցու և միսիայի գրավումից հետո դիմադրությունը կոտրվեց: Թուրքերի կորուստները կազմեցին 50 մեռած և 120-ից մինչև 130 վիրավոր: Քարանձավների ու ջրհորների ստուգումն արժեցավ ևս մի շարք զինվորների կյանք՝ թաքնված պաշտպանվողների առանձին կրակոցներից: Սկսվել է ռազմադատական հետաքննություն: Հանձնաժողովը որոշումներ կկայացնի հայերի հանդեպ հետագա միջոցառումների մասին:

Իմիջիայլոց, տեղահանումները շարունակվում են ամենավճռական ձևով և ամենասարսափելի հետևանքներով: Սովն ու համաճարակը մահվան հարուստ ավար են մատակարարում: Տարագիրների մեջ մահացությունը Հալեպում չափազանց մեծ է: Ընդ որում՝ մինչև Ջեմալ փաշայի ժամանելը, որի մասին կասվի հետո՝ ստորև զեկուցագրում, բացակայում էին ամենաանհրաժեշտ սանիտարական կարգադրությունները: Մոտավորապես հոկտեմբերի կեսին որոշվեց թաղման համար նոր տեղ հատկացնել՝ քաղաքից դուրս: Բայց մինչև պատրաստ լինելը, որպեսզի հնարավոր լինի թաղելը, արդեն կույտերով դիակներ էին բեռնաթափում և մի քան օր դրանք մնում էին բաց երկնքի տակ: Այդպիսի պայմաններում չի կարելի զարմանալ, որ բծավոր տիֆը տարածվեց քաղաքի բնակիչների մեջ և բռնկեց ընդհանուր սաստիկ համաճարակ: Ամենօրյա մահվան դեպքերի թիվը հասնում էր 150-ից մինչև 200-ի:

Վերջերս ինքս պատահաբար տպավորություն ստացա մի ճանապարհից, որով անցնում են տարագիրները: Աֆրինի ու Հալեպի միջակայքում, այսինքն՝ մոտավորապես 60 կմ ձգվող տարածքում, հոկտեմբերի 21-ին ես տեսա 4 դիակ՝ անմիջապես ճանապարհի եզրին. նրանցից երկուսին արդեն կիսով չափ հոշոտել էին գիշատիչները: Երբ այդ դիակներից առաջինները տեսնելուց հետո ես հասա առաջին իսկ իջևանատուն և տիրոջից պահանջեցի ուղարկել մարդկանց՝ վճարի դիմաց թաղելու համար, նա ժպտաց, բայց արեց այն, ինչ ես ուզում էի: Երբ ես նրան հարցրի, թե ինչու էր ժպտում, ասաց. «Եթե ուզում ես, ապա ես թաղել

կտամ այդ դիակները: Բայց ինչո՞ւ ես այդքան մեծ նշանակություն տալիս հենց դրանց: Եթե դու իմանայիր, թե քանիսն են պառկած այստեղ, հողի ամեն մի ակոսում, ապա դու կհրաժարվեիր դրանից, որ թաղեն հենց այդ մեկին, որը տեսանելի է ճանապարհից»: Եթե դա կատարվում է շատ երթևեկելի Ալեքսանդրետի խճուղու վրա, որի մասին առանց այդ էլ կզեկուցեն կողքով անցնող զինվորներն ու ժանդարմները, ապա դժվար չէ եզրակացնել, թե երկրի խորքի ավելի քիչ երթևեկելի ճանապարհներին դա ավելի լավ տեսք չի ունենա: Ես դեռ չեմ հիշատակել օդն ապականող բազում կենդանական լեշերի մասին: Կաթմայի մերձակայքում գտնվող համակենտրոնացման ճամբարը ներկայացնում էր հիգիենիկ խնամքի բացակայության աննկարագրելի տեսարան: Տարագիրները գտնվում էին սնուցման ու առույգության բոլոր փուլերում՝ բոբիկ քայլողներից ու սովամահության մոտ վիճակից, մի կերպ քարշ եկողներից կամ հուսահատվածներից և ճամփեզրին անգգա նստածներից մինչև այնպիսիք, ովքեր դեռ անվնաս կոշիկ ունեին հագին կամ որոշ տնային կահ-կարասիով գնում էին սայլերով: Ընդ որում՝ տարբերությունները բացատրվում էին մինչև այդտեղ անցած ճանապարհի երկարությամբ:

Իրավիճակը դարձավ այնպիսին, որ Բոգանտիից Հալեպ էտապային ուղին բռնկված է համաճարակով և որ միայն գնդապետ բարոն ֆոն Քրեսին հաջողվեց՝ հիգիենիկ միջոցառումների ռազմական կարևորությունը վկայակոչելով, 4-րդ բանակի գլխավոր հրամանատար Ջեմալ փաշային դրդել այցելելու Հալեպ: Մինչև գալը Ջեմալ փաշան ստացավ առողջական վիճակի վերաբերյալ իր հեռագրային հարցմանը վերաբերող թիկունքի տեսչության պետ Վելի փաշայի պատասխանը, որ կան դիզենտերիայի մի քանի դեպք, բայց ոչ մի ուրիշ վարակիչ հիվանդություն: Միայն երբ Ջեմալ փաշայի մոտ Ռայաքից հաղորդագրություն եկավ, որ Հալեպից եկող մի գնացքում երեք դիակ են գտնվել, նա վճռեց ուղևորվել:

Հիմա նա այստեղ վճռական կարգադրություններ արեց: Սահմանված է տեղեկացնելու պարտավորություն: Կահավորվում են հոսպիտալներ: Պետք է նախապատրաստվեն հիվանդների տեղափոխման սայլակներ: Քաղաքը բաժանված է շրջանների, որոնց հսկողությունն ստանձնում են մեկական բժիշկ՝ տներ հաճախելու իրավունքով: Քաղաքի մաքրման ծառայությունը պետք է կազմակերպվի նորովի:

Հրամանները տրված են, և խոսքը կատարման մասին է: Խնդրել են գերմանացի սանիտարական ռազմական բժշկի: Այստեղի վայրերի

կարևորության պայմաններում, որտեղով պետք է երբևէ բանակներ ուղարկվեն Իրաք կամ Եգիպտոս, պետք է համաճարակի հաղթահարմանը մեծ ուշադրություն հատկացվի: Բարոն ֆոն Քրեսի անհատականությունը երաշխավոր է դրա համար, որ կարվի ամեն հնարավոր բան:

Նույն զեկուցագիրը կուղարկվի Կոստանդնուպոլսի կայզերական դեսպանություն:

Ռյոսլեր

1915 – 11 – 09 – DE – 011

Սկզբնաղբյուրը՝ PA-AA/Կոստ.դեսպ./171
Հրապարակված՝ Գ և Հ փաստ.195

Ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին՝ Կոստանդնուպոլսում գործերի կառավարիչ Նոյոռաթից

№ 660

Պերա, 9 նոյեմբերի 1915

Պարոն ֆոն Շոյբներ-Ռիխտերը Մոսուլից այս ամսվա 5-ի ամսաթվով հայտնում է հետևյալը.

«Էրզրումից Խինիսով, Մուշով, Բիթլիսով, Սեերտով դեպի Մոսուլ տանող ճանապարհին նախկինում հայերով բնակեցված բոլոր գյուղերը կամ տները տեսա լրիվ դատարկ ու ավերված: Ես կենդանի մնացած հայ տղամարդ չտեսա: Պետք է որ մի քանիսը սարերը փախած լինեն: Մոտավորապես 500 հայ կին և երեխա ողբալի վիճակում գտնվում են Բիթլիսի հայկական եկեղեցում: Ասում են, որ հայ կանանց թուրքերի տներում պահում են որպես գերի: Ամբողջ ճանապարհին ես և ինձ ուղեկցող գերմանացի պարոնները տեսանք էլի հայ տղամարդանց, կանանց ու երեխաների ընկած դիակներ՝ հաճախ սվինների հարվածների նշաններով, թեպետ մեզնից առաջ կառավարության պահանջով ժանդարմների միջոցով ճանապարհները մաքրվել էին դիակներից: Քրդերի վկայությամբ այդ տարածքի բոլոր հայերին սպանել են: Հայերի նախապատրաստած հեղափոխություն կամ ապստամբություն, ըստ իմ տեղե-

կությունների, եղել է միայն Վանում, մյուս վայրերում եղել է ինքնապաշտպանություն: Թուրքերն, իմիջիայլոց, նաև թուրք սպաները, ամենուրեք տարածում էին և շատ անգամ իրենք էլ էին հավատում, թե գերմանական կառավարությունն է հրահրել հայերի ոչնչացումը»:

Մուշի հայերի բնաջնջման և Մուշի հայկական թաղամասի, ինչպես նաև շրջակայքի հայկական գյուղերի ավերման մասին մանրամասն տեղեկություններ հաղորդեց վերջերս այստեղ ժամանած քույր Ալմա Յոհանսոնը (շվեդուհի)՝ «Արևելքում հանուն քրիստոնեական բարեսիրության» գերմանական օգնության միության այնտեղի որբանոցից: Ըստ նրա՝ երևի թե ամբողջ հայ բնակչությունից՝ բացառությամբ որոշ փախստականների ու մի քանի առևանգված կնոջ, գրեթե ոչ ոք չի մնացել: Հայերի տները հրկիզել ու հետո հողին են հավասարեցրել: Այդ իրադարձությունների համար, որոնք կատարվեցին հուլիսի առաջին կեսին, ինչպես կարելի է եզրակացնել հիշյալ անձի նկարագրություններից, ըստ երևույթին, առիթ է ծառայել ռուսական զորքերի մոտենալը, որոնք Ախլաթի, Բուլանիկի, Գոփի ու Լիշի գրավումից հետո հեռու էին Մուշից մոտ մեկ-երկու օրվա ճանապարհով:

Ֆրոյլայն Յոհանսոնը, որը Մուշից դուրս էր եկել օգոստոսին և Սվազի միջով այստեղ ժամանեց մի քանի ամիս Խարպուտում (Մեզերեհ, Մամուրեթ ուլ Ազիզ) մնալուց հետո, իր շարադրանքի վերջում նշել է, որ պաշտոնական շրջանակները ինչպես Մուշում, այնպես էլ Մեզերեհում, նաև Սվազում միաձայն պնդում էին, թե իբր գերմանացիներն են թուրքական կառավարությանը հրահրել հալածել հայերին:

Ն[ոյոաթ]

1915 – 11 – 10 – DE – 011

Սկզբնաղբյուրը՝ PA-AA /Կոստ.դեսպ./ 171
Հրապարակված՝ Գ և Հ փաստ. 197

Կոստանդնուպոլսի դեսպանության գործերի կառավարիչ Նոյոաթին՝ ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգից

№ 857

Բեռլին, 10 նոյեմբերի 1915

2 հավելված

Պատճենում կցված դիմումի մեջ Գերմանիայի բողոքական շրջանակների անվանի ներկայացուցիչները առաջադրել են Հայկական հարցը: Նույն թեման է արծարծում նաև Գերմանիայի կաթոլիկների միսիոներական կոնֆերանսի պատճենով կցված որոշումը: Երկու հայտարարություններն էլ արտահայտում են այն աճող մտահոգությունն ու հուզումները, որով Գերմանիայում էլ են հետևում հայերի հանդեպ թուրքերի ձեռնարկած միջոցառումներին:

Ձերդ մեծությանը խնդրում եմ՝ նկատի ունենալով հավելվածում ներկայացված տեսակետներն ու ցանկությունները, ընձեռված յուրաքանչյուր առիթն ու Ձեր ազդեցությունն ամբողջ եռանդով Բարձր Դռանն օգտագործել հայերի օգտին և Ձեր ուշադրությունն ուղղել հատկապես այն բանին, որ Բարձր Դռան միջոցառումները չտարածվեն նաև Թուրքիայի մյուս քրիստոնյա ժողովուրդների վրա:

Ձերդ մեծություն, դեպքերի զարգացումների մասին կխնդրեի ինձ անընդհատ տեղյակ պահել:

Բեթման Հոլվեգ

Հավելված 1

Պատճեն

Բեռլին, 15 հոկտեմբերի 1915

Գերմանական կայսրության կանցլեր Ձերդ գերազանցություն, պարոն դ-ր Բեթման Հոլվեգին, Բեռլին W

Ձերդ գերազանցություն,

Ներքոստորագրյալների խիղճը թելադրում է արտահայտելու այն անհանգստությունը, որը համակել է իրենց և գերմանական քրիստոնյաների աճող շրջանակներին՝ **Թուրքիայում հայ ժողովրդի ողբալի վիճակի առնչությամբ, որին, ըստ հավաստի լուրերի, սպառնում է բնաջնջում, եթե ամենաարագ կերպով վերջ չտրվի անմարդկային այն միջոցառումներին, որոնց մատնված է նա:**

Այդ լուրերը մեզ տալիս են հետևյալ պատկերը:

Երբ արդեն արևելյան վիլայեթներում ռուս-թուրքական պատերազմից

հետո հարյուրավոր հայկական գյուղեր քրդերն ու անկանոն կազմավորումները թալանել և սպանել են հազարավոր անպաշտպան հայերի, արդեն մայիսի վերջից հրաման տրվեց անատոլիական բոլոր վիլայեթների և Կիլիկիայի ամբողջ հայ բնակչությանը քշել դեպի արաբական տափաստաններ՝ Բաղդադի երկաթուղուց դեպի հարավ: Այդ միջոցառումն անցած ամիսներին իրականացվեց անմարդկային դաժանությամբ:

Մինչ հայ ժողովրդի զենք կրելու ունակ տղամարդիկ բանակ էին զորակոչվում և երկրի խորքում էտապային ուղիների վրա անզեն օգտագործվում էին որպես բեռնակիր և ճանապարհաշինարարներ, իրենց բնակավայրերից դաժան զինվորները անասունների հոտի պես՝ հարյուր-հազարավոր թափորներով դեպի աքսոր՝ ավելի քան հարյուրավոր մղոններ էին քշում տղամարդու պաշտպանությունից և ունեցվածքից զրկված, առանց հանդերձանքի ու պարենի, բոբիկ, սովահար, հյուծված և անընդհատ վայրագությունների ու անարգման մատնված կանանց, երեխաներին, հիվանդներին ու ծերերին: Այդ միջոցառումն սկսվեց նրանով, որ մայրաքաղաքում և երկրի խորքի կենտրոններում հանկարծակի բանտ նետվեցին ժողովրդի առաջնորդներ՝ մտավորականներ, երևելիներ ու եկեղեցական բարձրաստիճան անձինք և առանց հարցաքննության ու դատավարության գնդակահարվեցին կամ տեղահանվեցին: Աշխատանքային ծառայության զորակոչված զինապարտները ճանապարհներին ենթարկվել են հարձակման և գնդակահարվել են: Տեղահանված կանանց, երեխաների և ծերերի կեսից էլ պակասն է հասել իրենց նշանակման վայր: Աղջիկներին ու երիտասարդ կանանց քարշ են տվել թուրքական հարեմներ և քրդական գյուղեր, որտեղ նրանց այլընտրանք չէր մնում, քան ընդունել իսլամ: Նույն կերպ անթիվ երեխաների խլեցին իրենց քրիստոնյա ծնողներից և և հիմա դաստիարակում են որպես մուսուլմաններ: Տեղահանումից զերծ մնացին միայն մի քանի հարյուր քրիստոնյա ընտանիք, որոնք վճռեցին ընդունել իսլամ: Տեղահանման միջոցառումն իրականում կրում էր ամենամեծ մասշտաբի կոտորածի բնույթ: Ճանապարհի որոշակի հատվածներում ջարդերի, սովի ու հյուծվածության հետևանքով տարագիրների թիվը, ըստ երևույթին, կիսով չափ նվազել է:

Բնական է, որ հազիվ թե հնարավոր լինի ճշգրիտ տվյալներ ներկայացնել տարագիրների և ջարդի զոհերի թվի վերաբերյալ: Ըստ վիլայեթների հայկական պատրիարքարանի վիճակագրության՝ տեղահանումից տուժած վիլայեթները բնակեցված էին 1.200.000 հայերով: Եթե նույնիսկ ընդունենք, թե բնակչության մի մասը կարող էր փախած լինել լեռները և հեռավոր շրջանները զերծ են մնացել, ապա, այնուամենայնիվ, մնում է մոտ մեկ միլիոն հայ քրիստոնյա, ովքեր տուժել են տեղահանումից ու ջարդերից, ընդ որում՝ առանց դավանանքի տարբերակման՝ գրիգորյաններ, հռոմեական կաթոլիկներ ու բողոքականներ: Արդյոք նրանցից կեսը կամ թե քանիսն են սպանված, թե արդյոք իսլամ ընդունած ընտանիքների թիվը հաշվվում է հազարներով կամ տասնյակ հազարներով, տվյալ պահին ոչ ոք չի կարող ասել: Բայց չի կարող դրանում որևէ կասկած լինել, որ Արևելքի ամենաաշխատունակ ու ամենաջանասեր ժողովրդին հասած հարվածը տնտեսական, մշակութային ու քաղաքական առումով Թուրքիայի ապագայի համար կունենա ամենաճակատագրական հետևանքները, իսկ արդեն հաշտության բանակցությունների ժամանակ ամենազգայուն ձևով կդիպչի Թուրքիայի հետ դաշնակից տերությունների շահերին ու պատվին:

Առևտուրն ու արհեստը, որ երկրի խորքում բացառապես հայերի ձեռքում էին, ոչնչացված են: Կոստանդնուպոլսի հայ առևտրական ու արհեստավոր բնակչության (մոտ 180.000), Սմիռնայինը՝ (28.000), Ադանայինը և մի քանի այլ՝ հայկական շրջանների ծայրամասերում ընկած քաղաքների, որոնց մինչև հիմա ձեռք չեն տվել, նախապատրաստվող տեղահանումը ճակատագրական կլինի Գերմանիային խիստ շահագրգռած Թուրքիայի տնտեսության զարգացման համար: Երկրի գիտակների կարծիքով, չի կարելի հույս ունենալ, թե նույնիսկ տասնամյակներ հետո թուրք և հրեա տարրերն ի վիճակի կլինեն հանդես գալ հայկական տարրի կորստյան փոխարեն: Թող այդ հարցերի վերաբերյալ արտահայտվեն տնտեսական կյանքի հեղինակությունները:

Բայց այն, ինչն առաջին հերթին է անհանգստացնում ներքոստորագրյալներին և մղում է վստահությամբ համակված դիմել Ձերդ գերազանցությանը, դա Գերմանիայի տնտեսական ու մշակութային գործունեության ապագայի համար մտահոգությունը չէ, որը լրջորեն հարցի տակ է դրվում թուրքական ազգայնամոլության ու իսլամական մոլեռանդության օրինազանցություններով: Այն, ինչ անհանգստացնում է մեր խիղճը, դա այն պատասխանատվությունն է, որը քննարկման ենթակա գործողությունների համար դրվում է գերմանական ժողովրդի՝ որպես Թուրքիայի հետ դաշնակցային կապ ունեցող քրիստոնյա ժողովրդի վրա:

Ոչ միայն Անտանտի մամուլը, այլև չեզոք երկրների հասարակական

կարծիքը Գերմանիային մեղսակից է համարում՝ Թուրքիայի ներքին իրադարձությունների համար: Անշուշտ, այստեղ գերագնահատվում է Բարձր Դռան վրա գերմանական դիվանագիտության ազդեցությունը: Բայց կայուն է մնում այն տպավորությունը, որ Գերմանիան՝ Անտանտի տերությունների անջատումից հետո, միակն էր Բոսֆորում, որը կարող էր արգելել քրիստոնյաների ջարդերը: Միջոցառումները, որոնք սպառնում են կործանել հայ ժողովրդին, Բարձր Դուռը հիմնավորում է հայկական բնակչության մեջ հեղափոխական խարդավանքներով ու սահմանակից շրջաններում ռազմավարական միջոցառումներով: Եթե նույնիսկ ինչ-որ տեղ իրավացիորեն են կշտամբում հայերին (ըստ մեր ունեցած տեղեկությունների, ոչ մի ապացուցելի հիմք չկա հայ քաղաքական ու եկեղեցական ազդեցիկ կազմակերպությունների հայրենադավ պահվածքի վերաբերյալ), միևնույն է՝ այն չի արդարացնում անլսելի դաժան միջոցառումները: Մենք ձեռնպահ ենք մնում դատողություններ անել նպատակների վերաբերյալ, որոնց ի վերջո այդ եղանակով հետամուտ է թուրքական կառավարությունը: Բայց այնուամենայնիվ, իրականացնելիս վատթարագույն խթան են դարձել մոլեռանդությունն ու քրիստոնյաների հանդեպ ատելությունը, ինչը սպառնացող վտանգ է մնում Թուրքիայի մյուս ոչ մուսուլման ժողովուրդների համար: Հնչում են այնպիսի խոսքեր, ինչպիսիք են. «Երկիրը պետք է լինի զուտ մուսուլմանական և ուրիշ ոչինչ»: Դրան համապատասխանում է այն, որ վերացված են միսիոներական հաստատությունները: Ստեղծվում է տպավորություն, կարծես թե պետք է արմատախիլ արվի քրիստոնեական ցանկացած բարեգործական և ցանկացած օտարերկրյա մշակութային ազդեցություն:

Այդ իրադարձությունները մնացյալ քրիստոնյա երկրների համար պարզապես անտանելի են, իսկ Թուրքիայի համար էլ՝ արդարացի ձգտմամբ՝ իր ներքին գործերը պաշտպանել դրսի միջամտություններից, պետք է, որ ստեղծեն հազիվ հաղթահարելի դժվարություններ: Դրան առնչված հուզումները չեզոք և թշնամական երկրներում աճում են և կվերաճեն կրքոտ դրսևորման, հենց որ փաստերն ամբողջովին հայտնի դառնան: Արդյոք այդ զայրույթն իր ամբողջ խստությամբ չի՞ ուղղվի **Գերմանիայի** դեմ, միայն որին վստահում էր աշխարհը, որը Թուրքիայի հետ հարաբերությունների շնորհիվ կարող էր կանխել այդ սարսափելի գործերը և անհրաժեշտ միջոցառումները սահմանափակել ռազմավարական պահանջով: Ինչպես Թուրքիայի պատերազմի մեջ ներքաշվելու

և «սրբազան պատերազմ» հայտարարելու համար պատասխանատու են դարձրել Գերմանիային, այդպես էլ նրան կվերագրեն քրիստոնյա ժողովրդի բնաջնջման ամբողջ մեղքը: Այդ ազդեցությունը, ինչը մեր մտավախությունն է, ավելի կխորանա, քան կարծեցյալ բելգիական զարհուրանքների ժամանակ:

Բայց քանի դեռ մինչև այժմ արտասահմանի բոլոր մեղադրանքներն առանց ազդեցության վրիպել են մեր ժողովրդի համերաշխ ու բարի խղճից, այդ լուրերը, որոնց հայտնի դառնալուն ոչ ոք չի կարող խանգարել, **ամենակործանարար ազդեցությունը կունենան գերմանացի քրիստոնյաների վրա**: Արդեն իսկ սրբազան պատերազմ հայտարարելիս որոշ շրջանակներում խոսեց խղճի ձայնը: Մենք կարողացանք նրանց հանգստացնել՝ վկայակոչելով, որ այս սրբազան պատերազմն ուղղված է ոչ թե քրիստոնյաների դեմ, որպես այդպիսիք, այլ քրիստոնյա ժողովուրդների հետ՝ Թուրքիայի թշնամիների դեմ: Բայց ոչ ոք չի կարող կանխել գերմանացի քրիստոնյաների բերկրանքը խեղող այն ազդեցությունը, երբ նրանք ստիպված են նայել, թե ինչպես են իրենց դաշնակիցները ոչնչացնում մի ամբողջ քրիստոնյա ժողովուրդ: Մաքուր խղճով, որով մենք դիմում ենք Աստծուն մեր զենքի հաղթանակի համար, արմատավորվում է մեր ժողովրդի դիմակայության ուժը: Այդ համերաշխությունն ու բերկրանքը սպառնում է երերալ, եթե հայտնի դառնա, որ մեր այլադավան դաշնակիցները՝ առանց պատճառի ու իմաստի, մահացու հալածանքի են ենթարկում հարյուր հազարավոր մեր հավատակիցներին, առանց մեր կողմից նրանց փրկության համար հնարավոր ամեն բան անելու:

Մեզ հայտնի է, որ գերմանական կառավարությունը շարունակ քայլեր է արել, իսկ դա բխում է նաև Թուրքիայի սեփական շահերից, հայերի բնաջնջումն արգելակելու համար:

Ցավոք, փաստերը վկայում են, որ այդ քայլերը չկարողացան կանխել ճակատագրականը: Թուրքական կառավարությունը, որքանով մենք ենք տեղեկացված, մինչև այժմ չի արել անհրաժեշտ ոչ մի բան՝ տարագիրներին սովամահությունից փրկելու համար և նույնիսկ մերժել է տառապող կանանց ու երեխաներին օգնություն հասցնելու փորձերը: Պետք է երկյուղել, որ դեռ կենդանի մնացած տարագիրները նույնպես՝ հիմնականում կանայք ու երեխաներ, դատապարտված են մահվան:

Մենք **չենք կարող**, մեր քրիստոնյա ժողովուրդը **չի կարող** լուռ նայել այդ ամենին: Թուրքական կառավարությունը, որն ինքը պլանա-

չափորեն կոչ է անում և բոլոր երկրների իսլամական համերաշխության զգացմունքն օգտագործում է իր ազգային նպատակների համար, **իրավունք չունի** իր քրիստոնյա դաշնակիցներից պահանջելու, որ նրանք լռության մատնեն իրենց քրիստոնեական համերաշխության զգացմունքը: Նա պետք է գիտակցի, թե ապագայի համար որքանով է դժվարացնում սեփական ուղին, եթե իր պատասխանատվությամբ գործում է սարսափելի արարքներ, որն անբողջ քրիստոնյա աշխարհը պետք է ընկալի որպես ապտակ իր երեսին: Պետք է կանխել, որպեսզի գերմանական անվան պատիվը չարատավորվի բնորոշ խայտառակ արարքներում մեղսակցության մասին թեկուզ ակնարկից: Անտանելի է այն միտքը, որ մինչ մենք՝ գերմանացիներս, գերյալ մահմեդականների համար մզկիթներ ենք կառուցում, հարյուրավոր քրիստոնեական եկեղեցիներ ավերվում կամ վերածվում են մզկիթների: Մեր խղճին ծանրանում է, որ մինչ գերմանական մամուլը գովերգում է մահմեդական մեր դաշնակիցների մեծահոգությունն ու հանդուրժողականությունը, մահմեդականների կողմից առատորեն հեղվում է քրիստոնյաների անմեղ արյունը, և բյուրավոր քրիստոնյաներ բռնի կերպով իսլամացվում են:

Մենք չենք հրաժարվում այն պարտականություններից, որոնք մեզ՝ գերմանացի քրիստոնյաներիս վրա են ըստ Թուրքիայի հետ մեր դաշնակցային կապի: Մենք անկեղծորեն համաձայն ենք այն ցանկությանը, որ մեր կողմում նրա հերոսական կռվի արդյունքում նրան բաժին հասնեն վաստակած պտուղները, և բացարձակապես չենք ցանկանում նրան ինչ-որ կերպ ավելորդ դժվարություններ պատճառել: Բայց մենք չենք կարող նաև հրաժարվել մեր հավատակիցների հանդեպ պարտականություններից, այլապես մենք գործած կլինենք պատվի ու խղճի դեմ և մեր ժողովրդի հաղթանակի վրա ստվեր կընկնի:

Այդ իսկ պատճառով Ձերդ գերազանցությանը խնդրում ենք Բարձր Դռանը ներկայացնել ստեղծված վիճակի անտանելիությունը և օգնության միջոցառումների հրատապությունը, ընդ որում՝ նկատի ունենալով առավելապես երեք նպատակ, որոնք ոչ մի կերպ չեն հակասում Թուրքիայի բարեկեցությանը կամ մեր նպատակներին հասնելուն, ընդհակառակը՝ դրանք ամենասերտ կերպով առնչված են մարդասիրության պահանջներին և տնտեսական շահերին:

1. Որպեսզի արգելվի մինչև հիմա խնայված Կոստանդնուպոլսի, Սմիռնայի, Ադանայի և այլ՝ դեռևս չտուժած քաղաքների ու շրջանների բնակչության տեղահանումը:

2. Որպեսզի ձեռնարկվեն ոչ միայն կարծեցյալ ու թվացյալ, այլ իրական ու ազդեցիկ միջոցներ՝ Միջագետքի անապատներում հարյուր-հազարավոր տեղահանված կանանց ու երեխաների կյանքը պահպանելու և հետագա վայրագությունները դեռևս կենդանի մնացած հայերի հանդեպ դադարեցնելու համար:

3. Որպեսզի այդ երկրների քրիստոնյաներին հնարավորություն տրվի, միգուցե գերմանացի ու չեզոք երկրների վստահելի անձանց միջոցով, օգնություն հասցնել տառապող տարագիրներին և թույլատրել օգնությունների մուտքը:

Հաշտություն կնքելիս խնդրում ենք նկատի ունենալ, որ այժմ ստիպողաբար իսլամ ընդունածներին հնարավորություն տրվի վերադառնալ քրիստոնեության, և անհրաժեշտ երաշխիքներ տրվեն Թուրքիայում քրիստոնյա փոքրամասնության հետագա խաղաղ ու օրինապահ զարգացման և Արևելքում քրիստոնեական բարեսիրական ու մշակութային գործունեության համար:

Ձերդ գերազանցությանն ակնածանքով խնդրում ենք՝ մեզ հնարավորին չափ շուտ հնարավորություն տալ, որպեսզի մենք կարողանանք հակազդել գերմանական քրիստոնյաների մեջ եղած անհանգստությանը և ազդեցիկ հերքել արտասահմանի բողոքները:

Ձերդ գերազանցությանը խորին խորնարհումով՝

Դ-ր Կարլ Աքսենֆելդ, Բեռլինի միսիոներական միության տնօրեն, Բեռլին

Պրոֆեսոր Բաումգարտեն, Քիլ

Պրոֆեսոր դ-ր Յոհաննես Բուրխարդ, իրավագիտության պրոֆեսոր Պոզենի թագավորական ակադեմիայում

Սուպերինդենտանտ Դ. Ա. Կորդեն, Լայպցիգ

Ադոլֆ Դայսման, աստվածաբանության պրոֆեսոր Բեռլինի համալսարանում, Գ.Ա.Մ.-ի նախագահության անդամ

Գերագույն քարոզիչ, աստվածաբանության դ-ր Դիբելիուս-Դրեզդեն, ավետարանչական լյութերական կոնսիստորիայի փոխնախագահ

Կոնսիստորիական խորհրդական, քահանա դ-ր Երիխ Ֆյորստեր, Մայնի Ֆրանկֆուրտ

Թ. Հարբեք, քահանա, միաբանության հոգածության ու ավետարանչական գերմանական միության 1-ին նախագահ, Բարմեն

Տնօրեն Դ.Գ. Հակիուս, Հերմանսբուրգ Հանում

Ա. Հակիուս, իրավագ., գաղտնի խորհրդական, Հանովեր,

Հենդլեր, ավագ պաստոր և գերագույն սուպերինդենտանտ, Բեռլին

Պրոֆ. Դ. ֆոն Հառնաք, իսկ. գաղտնի խորհրդական, Բեռլին-Գրյունվալդ

Պրոֆ. Դ.Գ. Հաուզլայթեր, Հալե (Զալի)

Հելդ, Սուդանի ինժեներական միսիայի միսիոներական տեսուչ, Վիսբադեն

Պ.Օ. Հենիգ, եղբայրական համայնքի միսիայի տնօրեն, Հերնհուտ

Պրոֆեսոր դ-ր Վ. Հերման, Մարբուրգ

Դ. Հեզեքիլ, գերագույն սուպերինդենտանտ, Վերնիգերոդե

Դ-ր Հորնեման, պետ. դատական խորհրդական, Բեռլին

Գերագույն սուպերինդենտանտ, Դ. Կաֆտան, Քիլ

Պաստոր Դ. դ-ր Քինդ, համայն ավետարանչական բողոքական միսիոներական միության նախագահ, Բեռլին

Դ.Վ. Լ.Քյոլբինգ, Հերնհութում, Երուսաղեմի ավետարանչական եղբայրական համայնքի բորոտների ապաստանի վարչության նախագահ

Դ-ր Յոհաննես Լեփսիուս, Պոտսդամ

Կոնս. գաղտնի խորհրդական պրոֆ. Դ-ր Լոֆս, Հալե

Պրոֆ. Դ. Մահլինգ, Բեռլին- Շարլոտենբուրգ

Դ. Ֆիլիպս, Բեռլին-Շարլոտենբուրգ

Քաղաքային քահանա Պֆիստերեր, Վայնսբերգ- Վյուրտեմբերգ

Պրոֆ. Դ. Յուլիուս Ռիխտեր, Բեռլին-Շտեգլից

Պաստոր Ռյոբելեն, Հերմանսբուրգ Հ-ում, Պարսկաստանում լյութերական միսիայի միության նախագահ

Ռյոդենբեք, Պոտսդամ 1 թեմի սուպերինդենտանտ, գերմանական արևելյան միսիայի տնօրեն, Կլայն-Գլինիկե Պոտսդամի մոտ

Լից. Դ-ր Պաուլ Ռոհրբախ, Բեռլին

Պաստոր Յոհ. Շպիկեր, Հոենոսի միսիոներական միություն, Բարմեն

Միսիոներական տեսուչ լից. Շլունկ, Համբուրգ

Շլիխտ, սուպերինդենտանտ, նախկինում Երուսաղեմի գերմանական ավետարանչական համայնքի քահանա, Ռուդով՝ Բեռլինի մոտ

Ա.Վ. Շրայբեր, միսիայի տնօրեն, Բեռլին- Շտեգլից

Աստվածաբանության դ-ր Հանս ֆոն Շուբերտ, եկեղեցական գաղտնի խորհրդական, աստվածաբանության օրդինար պրոֆեսոր, ներկայումս աստվածաբանության ֆակուլտետի դեկան Հայդելբերգում

Պրոֆ. աստվածաբանության և իրավագիտության դ-ր Ռ. Զեեբերգ, Բեռլին

Տնօրեն Դ.Ֆ. Ա. Շպիկեր, Բեռլին-Գրյունվալդում

Քահանա Էվալդ Շթիր, Ալտեն՝ Դեսաուի մոտ, «Գերմանա-հայկական միության» և «Անհրաժեշտ բարեգործություն» միության համար

Ֆ Շուխարդ, «Արևելքում հանուն քրիստոնեական բարեսիրության» գերմանական օգնության միություն, գրանցված միություն, Մայնի Ֆրանկֆուրտ

Մարտին Ուրբան, միսիայի տեսուչ, Հարավ-արևելյան Եվրոպայի միսիայի նախագահ, գրանցված միություն, Հաուզդորֆ, Նոյոդեի շրջան

Պրոֆ. դ-ր Վեքեսեր, Կառլսռուհե

Եկեղեցական գաղտնի խորհրդական Հ.Հ. Վենդտ, աստվածաբանության պրոֆեսոր Ենայում

Ա. Վինկլեր, քահանա, Բեռլին, Գերմանիայի Արևելյան միսիայի հոգաբարձուների խորհրդի անդամ

Ադոլֆ Ցելլեր, պաստոր, Ցեհլենդորֆ, նախկինում Մարաշ, Հալեպի վիլայեթ

Գերհարդ ֆոն Ցեցշվից, քահանա և ավագանի Բուրգբորնհայմում, Բավարիա

Պրոֆ., աստվածաբանության դ-ր Դալման, Երուսաղեմից

Գուստավ Գերոք, քաղաքային քահանա Շտուտգարտում

Յոհաննես Լոհման, գթության քույրերի խաղաղասիրական ապաստանի քահանա Միխովիցում

Լիցենտիատ Ռ. Մում, ռայխսթագի անդամ, Բեռլին, Հ.Ա. 87

Հավելված 2

Բեռլին, 29 հոկտեմբերի 1915

Գերմանիայի կաթոլիկների գերագույն հավաքների կենտրոնական կոմիտեի միսիոներական հանձնաժողովը, որը հավաքվել էր 1915թ. հոկտեմբերի 29-ին, իր անհետաձգելի պարտքն է համարում ձայնը բարձրացնել, որպեսզի անհապաղ վերջ տրվեն ծայրահեղ դաժան միջոցառումներին, որոնք ներկայումս թուրքական կառավարությունը կիրառում

է հայերի հանդեպ: Ինչում էլ շարունակեն մեղադրել հայերին, այնուամենայնիվ, մարդասիրության պատվիրանը, որին ականջալուր պետք է լինի նաև թուրքական կառավարությունը, պահանջում է վերջ տալ ամբողջ հայ ժողովրդին սպառնացող բնաջնջմանը:

Ժողովը վստահությամբ է վերաբերվում գերմանական կայսրության ղեկավարությանը, որը մինչև հիմա, իր ուժերի ներածի չափ ամեն ինչ արել է հայերի տառապանքը թեթևացնելու համար: Բայց նկատի ունենալով Հայաստանում անընդհատ շարունակվող զարհուրանքները՝ նա խնդրում է, որ դիվանագիտական ուղիներով անընդհատ ազդելով մեր դաշնակից Թուրքիայի կառավարության վրա, ներդնի իր բոլոր ուժերը՝ հայերի տառապանքները մեղմելու համար, ինչը կարող է իրականացվել առանց վտանգելու ռազմական դաշնակցության հարաբերությունները:

Թուրքական կառավարությունը պետք է ըմբռնի, որ չնայած Թուրքիայի հետ դաշնակցելու բերկրանքին, Գերմանիայի քրիստոնյա բնակչությունը պետք է զայրույթով համակվի, եթե իր հավատակիցները Թուրքիայում այդքան ծանրորեն հալածվում են: Առավել ևս, երբ բոլոր գերմանացի կաթոլիկները, ինչպես դա պարզվեց միսիոներական հանձնաժողովի քննարկումներից, մնում են ամենագլխավոր այն տեսակետին, որ Թուրքիայի բոլոր քրիստոնյա ժողովուրդներից պահանջվի լոյալություն թուրքական պետության հանդեպ ու, իրենք էլ իրենց հերթին պատրաստ են այդ առումով ազդել արևելյան քրիստոնյաների վրա և արթնացնել նրանց քաղաքացիական մտածելակերպը:

Իմիջիայլոց, հենց Թուրքիայի ճիշտ հասկացված շահերն են պահանջում, որ վերջինս իրեն չզրկի այդքան արժեքավոր աշխատողներից, ինչպիսիք նրա համար մինչև հիմա եղել են հայերը՝ պետական կառավարման ու տնտեսական առաջադիմության բնագավառում:

Սակայն ամենից առաջ մենք խնդրում ենք ռայխսկանցլերին՝ զգոնությամբ հետևել, որպեսզի ոչ մի պարագայում թուրքական կայսրության այլ մասերում էլ այդպիսի իրադարձություններ չլինեն քրիստոնյա բնակչության հանդեպ:

Միսիոներական հանձնաժողովում ստորագրությամբ հանդես եկած գերմանական կաթոլիկները խորին վստահություն են տածում գերմանական կայսրության ղեկավարության և բարեկամացած Թուրքիայի կառավարության հանդեպ, որ հիշյալ անպատեհությունները վերացնելով՝ Թուրքիայի հետ մեր դաշինքը հետագայում էլ Գերմանիայի քրիստոնյա ժողովուրդը կարող է ընդունել լավ տրամադրությամբ ու ըմբռնումով:

Գերմանացի կաթոլիկների միսիոներական հանձնաժողովում ներկայացված բոլոր կազմակերպությունների անունից ստորագրում են՝

Պրելատ դ-ր Վերթման, նախագահ
Իրավաբանական խորհրդական, իրավ. դ-ր Կարլ Բախեմ
Մ. Էրցբերգեր, ռայխսթագի անդամ

1915 – 11 – 12 – DE – 003

Սկզբնաղբյուրը՝ PA-AA /Կոստ. դեսպ./171

Արտգործնախարարության դեսպանական խորհրդական Ռոզենբերգին՝ «Արևելքում հանուն քրիստոնեական բարեսիրության» գերմանական օգնության միության տնօրեն Ֆրիդրիխ Շուխալոյից

Կոստանդնուպոլիս, 12 նոյեմբերի 1915

Հարգելի պարոն գաղտնի խորհրդական,

Ընդառաջելով տարիներ ի վեր ինձ հետ մտերմացած American Board–ի ղեկավարի հրատապ ցանկությանը՝ այսօր այցելեցի ամերիկյան դեսպանին: Թեպետ այդ այցելությունը բոլորովին դուրս էր իմ ծրագրերից, երկար խորհրդածություններից հետո ես իմ պարտքը համարեցի չխուսափել դրանից: Ես համարեցի, որ պետք է օգտագործել առիթը՝ պարոն ամերիկյան դեսպանին հավաստիացնելու, որ իմ խորին համոզմամբ մեր արտգործնախարարությունը տվյալ պայմաններում արել է ամեն բան, ինչ կարելի էր ձեռնարկել այս պահին Թուրքիայի հայ քրիստոնյա բնակչության պարագայում:

Ցավոք, տեղահանման միջոցառումները հիմա վերաբերում են նաև բողոքականներին ու կաթոլիկներին:

Ես ամբողջ հստակությամբ համարում եմ, որ մեր տներն ու հիմնարկները՝ մեր բոլոր երեխաներով ու ծառայողներով հանդերձ, այսուհետ էլ իրենց հույսը կարող են դնել մեր գերմանական կառավարության վրա:

Մեր քույր Ալմա Յոհանսոնը՝ շվեդուհի, նախկինում Մուշում էր, իր հետ բերել է հայ ժողովրդի հանդեպ մեր դաշնակիցների «փառավոր արարքների» մասին ցնցող մանրամասներ:

Ինձ իրավունք եմ վերապահում արտգործնախարարություն ուղարկել ևս մեկ մանրամասն զեկուցագիր:

Բայց արդեն այսօր կցանկանայի Ձեր ուշադրությունը հրավիրել մի փաստի վրա, որը պարունակելու է այդ զեկուցագիրը:

Դուք, հավանաբար, դեռևս հիշում եք 2 թե 3 տարի առաջ Բիթլիսի շրջանում քրդերի ապստամբությունը, որի ժամանակ որպես պատիժ կախաղան հանեցին մի շարք քուրդ առաջնորդների, կարծեմ 13 հոգու: Ռուսական զորքերի մոտենալուն պես քրդական այդ ցեղերը մտածում էին, որ այսուհետ վրա է հասել հատուցման օրը, իսկ թուրք մակերեսային պաշտոնյաներն ու սպաները կարող էին Վանի տարածքից սարսափելի բաներ հայտնել:

Ինձ լրիվ հավանական է թվում, որ քրդերի այդ ոճրագործությունները՝ որոշակի պատճառներով, կբարդեն հայերի վրա:

Ըստ Վանի մեր միսիոներ Շայորիի բանավոր զեկույցների, որի հետ ես խոսել եմ հենց Բեռլինից այստեղ ժամանելուց առաջ, թերևս նաև հայերն են սպանել մահմեդականների, բայց չեն արել դաժանություններ ոչ տղամարդկանց հանդեպ, ոչ կանանց ու աղջիկների բռնաբարություններ, ոչ էլ կոպտություններ երեխաների հանդեպ:

Ինձ իրավունք եմ վերապահում ավելի ուշ զեկուցել շատ ուշագրավ բաների մասին՝ երկրի խորքից տրված կեղծ հեռագրերի և այլ շատ բաների մասին: Ներողություն, որ Ձեզ տանջում եմ նաև հեռվից, բայց ախր ճշմարիտ է, որ մեր արտգործնախարարությունը գիտե **բոլոր փաստերը**, որպեսզի այդքան հստակ տեսնի ու ավելի լավ միջոցներ ձեռնարկի, եթե երբևէ դրա համար հնարավորություն ստեղծվի:

Խորին ակնածանքով՝ Ֆ. Շուխարդ

1915 – 11 – 12 – DE – 012

Սկզբնաղբյուրը՝ PA-AA /Կոստ. դեսպ./ 172
Հրապարակված՝ Գ և Հ փաստ.198

Գերմանիայի ավետարանչական օգնության միսիայի տնօրեն Ավգուստ Վիլհելմ Շրայբերին՝ ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգից

Բեռլին, 12 նոյեմբերի 1915

Պատճեն

Ձերդ գերազանցություն և այլք, թույլ տվեք խորին երախտագիտությամբ հաստատել անցած ամսվա 15-ին ուղարկված դիմումի ստանալը:

Կայզերական կառավարությունը, ինչպես մինչև հիմա, այդպես էլ ապագայում, իր բարձրագույն պարտավորություններից մեկն է համարելու իր ազդեցության օգտագործումը, որպեսզի քրիստոնյա ժողովուրդները իրենց հավատի պատճառով չհալածվեն: Գերմանական քրիստոնյաները կարող են վստահ լինել, որ ղեկավարվելով այդ սկզբունքներով, ես կանեմ ամեն բան, ինչ ի զորու եմ, որպեսզի հաշվի նստեմ Ձեր արծածած հոգսերի ու ցանկությունների հետ:

Կոստանդնուպոլսի կայզերական դեսպանությանը ես հայտնել եմ Ձեր դիմումի բովանդակությունը:

[Բեթման Հոլվեգ]

1915 – 11 – 12 – DE – 013

Սկզբնաղբյուրը՝ PA-AA /R14088; Կոստ. դեսպ.171

Ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին՝ Կոստանդնուպոլսում գործերի կառավարիչ Նոյոռաթից

№ 669

Պերա, 12 նոյեմբերի 1915

1 հավելված

Արևելյան Անատոլիայի ռազմադաշտի իր առաքելության առնչությամբ ֆելդմարշալ ֆոն դեր Գոլցը ցանկություն էր հայտնել՝ իրեն հանձնել Հայկական հարցի վերաբերյալ կայզերական հյուպատոսություններին տրված հրահանգների պատճենները և միաժամանակ իրեն կողմնորոշել այդ հարցի վերաբերյալ մեր տեսակետով: Դրանից հետո ես նրան ուղարկեցի պատճենով կցված գրառումը:

Ֆելդմարշալի խնդրանքի համար, իմիջիայլոց, առիթ էր ծառայել դեռ շատ վաղուց թուրքական բանակի ղեկավարության ծրագրած՝ քրիստոնեություն դավանող մի շարք սիրիացիների դեմ արշավանքը, որոնք դժվարանցանելի կետում՝ Մարդինի ու Միդիաթի միջակայքում, հայերի հետ խրամատավորվել էին, որպեսզի խուսափեն Դիարբեքիրի վալիի կազմակերպած քրիստոնյաների ջարդերից: Քանի որ այդ արշավանքի հանձնարարությունն ի սկզբանե ստացած 4-րդ բանակը (Ջեմալ փա-

շան) չափազանց շատ էր հեռացել, ֆելդմարշալը 3-րդ բանակի հատուկ ջոկատին հրամայել էր՝ այնտեղ վերականգնել կարգուկանոնը: Մոսուլի հյուպատոսության ռեգենտ Հոլշտայնը, նկատի ունենալով, որ խոսքն իսկական ապստամբության մասին չէ, Մոսուլի վալիի հետ փոխադարձ համաձայնությամբ, հուշեց պաշարվածների հետ բանակցելու ուղին և նշեց, որ բանակցություններին՝ մյուս անհատներից բացի, որպես ցանկալի անձ, մասնակցի նաև պարոն ֆոն Շոյբներ-Ռիխտերը, որի զորաջոկատները նույնպես պետք է մասնակցեին արշավանքին: Ֆելդմարշալը, որն իրավամբ չէր ցանկանում, որ գերմանացի սպաները խառնվեին այդ գործին, այդ ընթացքում հրաման արձակեց, որպեսզի ֆոն Շոյբների ջոկատը ներգրավվի խնդրո առարկա արշավանքին: Ի դեպ, ինչպես լսել եմ, թուրքական մեծ շտաբակայանը Միդիաթի մոտ տեղաբաշխված հատուկ նշանակության ջոկատի հրամանատարներին կարգադրել է՝ հնարավորության դեպքում՝ վալիի հետ, այդ գործը լավ կարգավորել:

Ն[ոյոաթ]

Հավելված

1. Կայզերական դեսպանության հրահանգները կայզերական հյուպատոսություններին՝ Հայկական հարցի քննարկման առնչությամբ:

Մայիսի 31-ին Էրզրումի, Մոսուլի, Աղանայի, Հալեպի ու Բաղդադի հյուպատոսությունները տեղեկացվել են այն մասին, որ հայերի լրտեսության ու զանգվածային ապստամբությունների կանխման համար այլ միջոցառումների հետ, ինչպիսիք են հայկական դպրոցների ու թերթերի փակումը և այլն, որոշվել է՝ ոչ բոլորովին անմեղ ընտանիքներին՝ այն ժամանակ ապստամբած կենտրոններից անցկացնել Միջագետք, ինչպես նաև Էնվեր փաշան մեզ անհապաղ խնդրեց՝ դրանում իրեն չխանգարել: Այդ հաղորդագրությանը կցված էր նկատառում, որպեսզի մենք՝ հաշվի առնելով Թուրքիայի քաղաքական ու ռազմական իրավիճակը, ոչ թե հիմնավորապես խանգարենք, այլ միայն փորձենք մեղմել կատարումը:

Այդ իմաստով արդեն նախապես՝ համապատասխանաբար մայիսի 19-ին ու 21-ին, Էրզրումի ու Աղանայի հյուպատոսություններն իրենց հարցման վերաբերյալ հստակ կարգադրություններ են ստացել: Էրզրումի հյուպատոսությանն, ի դեպ, հանձնարարված էր հայերի օգտին իրենց միջնորդությանը տալ բարեկամական խորհրդի տեսք, որպեսզի զրկել պաշտոնական դեմարշի բնույթից: Հունիսի 21-ին նույն հյուպատոսությանը հրահանգված էր ընդդեմ հայ տարագիրների ջարդի, վալիին եռանդուն բողոքներ ներկայացնել, քանի որ այդպիսի միջադեպերը կգցեն թուրքական կառավարության վարկը արտասահմանի չեզոք երկրներում ու իրենց սեփական բարեկամների շրջանում և կտապալեն իրենց իշխանությունների հեղինակությունը: Նույն հրահանգում ասված է նաև հետևյալը. «Ռուսների ու հայերի գրաված շրջաններում անխուսափելի են պատժիչ միջոցներն ու վրեժխնդրության գործողությունները: Դրանով նաև նոր առիթ կտրվի հայկական գործերին օտար միջամտության, և Թուրքիայի դիրքն ապագա հաշտության բանակցություններում ավելորդ անգամ կթուլանա: Եթե նույնիսկ մենք ոչինչ չենք կարող անել ընդդեմ հայերի տեղահանման, որքանով դա արդարացված է ռազմական վիճակով, ապա մենք պետք է ավելի եռանդուն պայքարենք՝ նաև հանուն մեր շահերի, որպեսզի տեղի չունենան անպաշտպան բնակչության ջարդեր, իսկ տեղական իշխանությունների պարտականությունն է՝ բոլոր միջոցներով կանխել այդպիսի դեպքերը, եթե չեն ուզում ստանձնել ծանր պատասխանատվություն»:

Տրապիզոնի հյուպատոսին հունիսի 25-ին և սեպտեմբերի 9-ին հրահանգել էին՝ վալիին երաշխավորել տարագիրների պաշտպանությունը:

Ինչպես նա, այնպես էլ Հալեպի, Էրզրումի, Սամսունի հյուպատոսները գավառների իշխանությունների առջև բազմիցս միջնորդել են վերոնշյալ իմաստով:

Այն բանից հետո, երբ այստեղ ամենատարբեր աղբյուրներից եկած զեկուցագրերից հայտնի դարձավ, որ գերմանական կառավարությանը և Թուրքիայում նրա ներկայացուցիչներին հաճախ ներկայացնում են որպես հայերի հալածանքների հեղինակներ, օգոստոսի 11-ին հիշյալ հյուպատոսություններին տրվեց հետևյալ ցուցումը.

«Չնայած մեր անընդհատ բողոքներին, հայերի կոտորածները վերջին շաբաթներին այնպիսի ծավալ են ընդունել, որ մեզ պարտավորեցնում են այդ իրադարձությունների առնչությամբ արտահայտել վճռական դժգոհություն, որտեղ որ դա անհրաժեշտ կլինի: Թուրք սպաները, պաշտոնյաները, հոգևորականները և այլ անձինք երկրի խորքում բազմիցս արտահայտել են այն միտքը, թե մենք ենք այդ զարհուրանքները հրահրողները: Մեզ վարկաբեկող այդպիսի ձևակերպման դեմ առիթի դեպքում պետք է եռանդագին հանդես գալ»:

2. Հայկական հարցում մեր տեսակետը եղել է այն, որ առաջնորդվելով ռազմական շահերով ու երկրի ներքին ապահովությամբ, թուրքական կառավարությունն իրավունք ուներ ձեռնարկել բացառիկ միջոցառումներ, որոնք կարող են համարվել պաշտպանության համար անհրաժեշտ, ինչպես օրինակ՝ հայկական բնակչության բռնի տեղահանումը ռուսների ներխուժման և ֆրանսիական ու անգլիական նավատորմների գործողությունների սպառնալիքի շրջաններից:

Դրան հակառակ՝ արտգործնախարարությունն ու կայզերական կառավարությունը դատապարտել են այդ բռնի միջոցառումների հետևանքով եղած ամեն տեսակ օրինազանցությունները: Առանձին անձանց սպանություններ, զանգվածային մահապատիժներ, որոնք հատկապես տեղի ունեցան Դիարբեքիրում, Կայզերիում, հարձակումներ տարագիրների քարավանների վրա, առանձին վայրերում (Մուշում, Էրզրումում, Էրզինջանում, Տրապիզոնում, Դիարբեքիրում, Անգորայում, Մալաթիայում) պարբերաբար կազմակերպված հազարավոր անպաշտպան տղամարդկանց ու կանանց կոտորածները, ջարդի տարածումը այլադավան քրիստոնյաների վրա, որոնք քաղաքական շահի ոչ մի ընդհանրություն չունեն իսկական (այսպես կոչված՝ գրիգորյան) հայերի հետ և մասամբ էլ թշնամաբար են տրամադրված, չի կարելի նաև արդարացնել տարագիրների հանդեպ անխնա վերաբերմունքը, որոնց զրկելով գոյության բոլոր միջոցներից, մատնել են սովի ու թշվառության:

Ռազմական տեսակետից նույնքան քիչ հիմնավորելի է նաև ռազմաբեմից հեռու երկրամասերից հայ բնակչության տեղահանումը:

Տնտեսական վնասը, որը հասցրել է այդ միջոցառումը, նույնչափ վերաբերում է երկրի առևտրին, հողագործությանը և արդյունաբերությանը, գերմանական շահերն արդեն իսկ զգալիորեն ներքաշվել են անախորժությունների մեջ:

Հանուն դաշնակիցների ընդհանուր շահերի, կայզերական դեսպանությունը Բարձր Դռան ուշադրությունը բազմիցս հրավիրել է հայերի հալածանքների քաղաքական ու առևտրատնտեսական հետևանքների վրա և համառորեն պնդել է՝ դադարեցնել վատթարագույն չարաշահումները, ընդ որում՝ միտումնավոր չի շեշտել հումանիտար տեսակետը և խուսափել է այն տպավորությունից, թե իբր ուզում է միջամտել ներքաղաքական գործերին:

Բազմաթիվ դեպքերում, երբ շոշափվել են գերմանական շահերը, դեսպանությունն առանձին հայերի համար միջամտել է պաշտոնական

կամ կիսապաշտոնական ձևով: Նույն կերպ դեսպանությունը բազմիցս ցուցումներ է տվել առանձին հյուպատոսությունների՝ պատշաճ ձևով բողոքներ ներկայացնել կատարված զարհուրանքների դեմ և միջամտել հայերի հանդեպ մարդասիրական վերաբերմունքի համար: Ի վերջո, մեր կողմից Բարձր Դռան ուշադրությունը հրավիրել ենք առանձին՝ հատկապես ծանր հանցագործությունների վրա: Կայզերական դեսպանությանն առավել ևս խոցում է երկրի խորքում տարածված այն տեսակետը, հատկապես նաև Անատոլիայում, ըստ որի՝ իբր գերմանական կառավարությունն է հրահրել հայերի դեմ թուրքական կառավարության ոճրագործությունը, իսկ գավառներում հյուպատոսներն իբր աջակցել ու հորդորել են: Այդ տեսակետն իշխում է ոչ միայն հայերի, այլև թուրքերի մեջ և, ինչպես վկայում են բազմաթիվ լուրերը, այն միտումնավոր տարածում են բարձրաստիճան կամ ցածրաստիճան պաշտոնյաներն ու զինվորականները: Այդ ձևակերպումների դեմ գերմանական կողմը պետք է շատ վճռական բողոքի, իսկ կայզերական կառավարությունն իրեն իրավունք է վերապահում հարմար պահին ընդդեմ դրա հանդես գալ նաև հրապարակավ:

1915 – 11 – 16 – DE – 001

Սկզբնաղբյուրը՝ PA-AA /R14089
Հրապարակված՝ Գ և Հ փաստ.202 /կրճ./

Ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին՝ Հալեպի հյուպատոս Ռյոսլերից

K № 108/ Հատ. № 2577

Հալեպ, 16 նոյեմբերի 1915

Թուրքիայի դեսպանությունը Բեռլինում հրապարակել է Ուրֆայի խռովությանը վերաբերող՝ հավելվածում խոնարհաբար կցված հայտարարությունը, որը տպագրվել է «Նորդդոյչե Ալգեմայնե Ցայտունգ»-ի հոկտեմբերի 28-ի №299-ում (երկրորդ հրատարակություն) և ինձ առիթ է տալիս անելու հետևյալ նկատառումները: Ի դեպ այն վկայում է.

«Նպատակը, որին խռովությամբ ձգտում էին հրոսակախմբերը, մի կողմից՝ օտար բնակավայրերի վնասումն ու ավերումն էր և Թուրքիայի հետ պատերազմող երկրների հպատակների սպանությունը, որպեսզի

այդ ամենի հետևանքը հետո բարդեն Թուրքիայի վրա: Մյուս կողմից՝ նրանք ցանկանում էին կայզերական զորքերի մի մասը գամել ամրացված թաքստոցներին՝ նրանց շեղելով ռազմաբեմից»:

Դրան հակառակ պետք է պնդել, որ ապստամբության նպատակը հնարավոր չէ հասկանալ առանց դրա նախապատմության: Քսան տարի առաջ Ուրֆան շատ տուժեց հայերի կոտորածից: Այն ժամանակ, ի-միջիայլոց, 1000 մարդու միտումնավոր վառեցին եկեղեցում, ուր նրանց ներկալել էին՝ իբր ապաստան տալու պատրվակով: Այդ պահից ի վեր հայերն ապրում էին ջարդը կրկնվելու մշտական վախով և իրենց ապահովում էին զենքով, որպեսզի անպաշտպան չմնան:

Երբ այս տարվա վաղ ամռանը հայերին տեղահանելու վերաբերյալ հրաման եղավ, այստեղի վալի Ջեմալ բեյը հրաժարվեց կատարել, ինչի համար նա պաշտոնանկ արվեց: «Ապրելը՝ մարդու ամենաբնական իրավունքն է: Որդը, որին դու կոխում ես, կծկվում է: Հայերը կպաշտպանվեն»:

Ուրֆայի բնակիչներն արդեն գիտեին, թե ինչ տեսակ կանխարգելիչ միջոցառումներ են լինելու, որոնք ներկայիս համաշխարհային ճգնաժամում թուրքական կառավարությունը ձեռնարկելու է ընդդեմ հայերի: Մոտավորապես հունիսի կեսին նրանցից 50 ամենահեղինակավոր անձանց ձերբակալեցին, իսկ մեկին մահակով ծեծեցին մինչև մահամերձ վիճակի հասցնելը (իմ զեկուցագրի հավելվածը՝ 29 հունիսի, № 67): Դրանից որոշ ժամանակ անց նրանց ուղարկեցին Դիարբեքիր, Մարաշ, որտեղ էլ հենց իբր պետք է կայանար նրանց դատավարությունը, բայց ճանապարհին՝ այսինքն առանց դատավճռի, նրանց սպանեցին: Նրանց մեջ էր գերմանական հոսպիտալում երկար տարիներ աշխատող դեղագործը, որը, գերմանացի միսիոներների վկայությամբ, եղել է օրինապահ օտոմանյան հպատակ, ի դեպ՝ ինչպես նաև 50 ձերբակալվածներից շատերը: Ուրֆայի բնակիչները նաև հյուսիսից ու արևելքից ժամանած տարագիրների ճակատագրի ականատեսն էին: Նրանք գիտեին, որ տղամարդկանց սպանել են, կանանց ու աղջիկներին անարգել, լավագույն դեպքում տարել են մուսուլմանական հարեմներ, իսկ մնացածին՝ երեխաներին ու տարեց կանանց, մատնել են սովամահության: Սրանից էլ այդ որոշումը՝ ավելի լավ է մեռնել զենքը ձեռքին և իրենց կյանքը հնարավորին չափ թանկ ծախել, քան թողնել, որ սպանեն իրենց ու իրենց անպաշտպան ընտանիքներին: Ճիշտ է, որ դեռևս որոշված չի եղել Ուրֆայի հայերի համընդհանուր տեղահանումը, երբ

բռնկեց խռովությունը: Թուրքիայի առանձին քաղաքներ, որոնք դեռ մինչ այդ չէին տուժել այդ ճակատագրից, որքանով այստեղ հայտնի է, դրանք են Կոստանդնուպոլիսը, Սմիռնան, Հալեպը և Ուրֆան: Սակայն ի՞նչ երաշխիքներ կային, որ չէր գա նաև Ուրֆայի հերթը: Արդեն մայիսին աքսորել էին 18 ընտանիք, 50 հոգու ոչնչացման մասին հենց նոր ասացի: Հասկանալի էր, որ ինչպես ամենուրեք, այստեղից էլ կտեղահանեն զանգվածաբար, երբ արդեն վերացրել են առաջնորդներին: Հաջորդեցին տնային խուզարկումները՝ զենք փնտրելու նպատակով: Այդ ընթացքում կրակոցով սպանվեց մի պարեկ: Ապա երկրորդ՝ չպարզված հրաձգությունը սկիզբ դրեց ճգնաժամին:

Հայերը չեն գրավել «օտար բնակավայրեր», ինչպես ընդհանրացնելով հաստատում է այդ հայտարարությունը, որի հիման վրա հանգամանքներին քաջածանոթ գերմանացին պետք է եզրակացներ, որ նաև գերմանական միսիոներական հիմնարկներն են ներքաշվել կռվի մեջ, այլ նրանք զբաղեցրել են իրենց պաշտպանության համար բարենպաստ դիրքում գտնվող ամերիկյան միսիան:

……..

Նշում

Գերմանական շենքերից (հոսպիտալ, որքանոց, գերմանացի ծառայողների անձնական տները, գորգի ֆաբրիկան) միայն վերջինը, որը գտնվում էր հին քաղաքի կենտրոնում, տուժեց այդ ամենից՝ այն էլ շատ թեթև: Այն մարտերի տարածքի եզրին էր և իր վրա ընդունել էր հրացանի մի քանի կրակոց, թերևս նաև մի ձեռքի նռնակ, որը սակայն որևէ վնաս չէր հասցրել: Գերմանացիներից ոչ մեկը չի վիրավորվել: Դրա փոխարեն՝ միսիան այն աստիճանի է տուժել, որ նրա ամբողջ տեղաբնակ անձնակազմին, որը թեպետ չէր մասնակցել խռովությանը, անխնա ու դաժանորեն քշեցին: Թե դա ի՞նչ ազդեցություն կունենա աշխատանքը շարունակելու վրա, ես առայժմ դեռ չեմ կարող ասել:

……

Հայերը նաև ամերիկյան միսիոներ Լեսլիին ու յոթ ֆրանսահպատակների պատանդ են պահել իրենց քաղամասում, բայց ոչ նրանց սպանելու համար: Եթե դա ուզենային, ապա դրա համար ունեին բավականաչափ հնարավորություն, քանի որ այդ օտարերկրացիներն օրեր շարունակ

նրանց տրամադրության տակ էին: Ավելի հասկանալի կլիներ, եթե հայտարարության մեջ ասված լիներ. «որպեսզի նրանց սպանել տան թուրքական գնդակներով»: Քանի որ նրանց պահելն, այնուամենայնիվ, օտարերկրացիների ճակատագիրը հայերի ճակատագրին շղթայելու հուսահատ փորձ էր, որպեսզի գոնե այդ կերպ թեթևացնեն իրենց վիճակը:

Ի վերջո, ինչ վերաբերում է այն պնդմանը, թե հայերը գրավել են քաղաքի մուսուլմանական թաղամասերը և սկսել են կոտորել բնակիչներին, ապա դա, ըստ այդ իրադարձություններին մասնակցած մայոր կոմս Վոլֆսքելի վկայության, հնարված է: Դա ինձ հիշեցնում է հետևյալ դեպքը: Երբ ես ապրիլի սկզբին Մարաշում էի, և միայն մի քանի հայեր, ովքեր համարձակվում էին տներից դուրս գալ, հայտարարված պաշարման վիճակի ու գալիք սարսափների ազդեցությամբ, վախվորած հազիվ էին հավաքվում իրենց տների երկայնքով, մուսուլման խառանակիչները փորձեցին Կոստանդնուպոլիս հեռագիր ուղարկել այն բովանդակությամբ, թե իբր հայերը Մարաշում գրավել են մզկիթները և վերածել են եկեղեցիների:

Թուրքական հայտարարության մեջ ամսաթվերն ըստ արևելյան օրացույցի են: Հետևաբար՝ ըստ արևմտյան օրացույցի, հրաձգությունը դադարեցվել է սեպտեմբերի 29-ին, իսկ խռովությունը ճնշվել է հոկտեմբերի 16-ին: Թուրքերի կորուստները կազմել են ոչ թե 20, այլ 50 մեռած, բացի այդ՝ 120-130 վիրավոր:

Իմ շարադրանքով ես մտադրություն չունեմ մեկ կամ մյուս կողմին չափազանց սեր կամ չափազանց տառապանք վերագրել, բայց պարտքս եմ համարում Ձերդ գերազանցությանը ներկայացնել իմ ծառայողական տարածքում կատարվածի մասին այն, ինչ ես ճշմարտություն եմ համարում:

Նույն զեկուցագիրը կուղարկվի նաև Կոստանդնուպոլսի կայզերական դեսպանություն:

Ռյոսլեր

Հավելված

[Նորդդոյչե Ալգեմայնե Ցայտունգ]

Քեոլին, 27 հոկտեմբերի [1915]

Կայզերական թուրքական դեսպանությունը հայտնում է. Սեպտեմբերի 16-ի գիշերը հայկական հրոսակախմբերը կազմակերպել են խռովություն: Նրանք դիրքավորվել են Ուրֆա քաղաքի բարձրադիր ամուր

շենքերում և կրակ են բացել մեր ժանդարմ պարեկների վրա, որոնցից երկուսը սպանվել են, ութը վիրավորվել: Մեր ժանդարմերիային ամենուրեք դիմավորել են կրակով: Երբ հայերն արդեն գրավել էին օտար հաստատությունները և բռնի պահել էին նրանց տերերին, ստեղծեցին հրակնատներ: Քանի որ այդ փաստերն ապացուցում էին, որ խռովարար հրոսակախմբերը վճռել են զինված դիմադրել և օգտվել ժանդարմների սակավությունից ու քանի որ նրանք ի վերջո գրավեցին քաղաքի մուսուլմանական թաղամասերը և սկսեցին կոտորել բնակիչներին, ուստի ռազմաճակատի համար նախատեսված մի քանի ջոկատ ուղարկվեցին Ուրֆա: Հրոսակախմբերի թաքստոցներն ավերվեցին, և հոկտեմբերի 3-ին խռովությունը ճնշվեց: Այդ միջադեպի արդյունքում սպանված զինվորների և ժանդարմների թիվը 20 է, իսկ վիրավորներինը՝ 50:

Նպատակը, որին հրոսակախմբերը հետամուտ էին իրենց խռովությամբ, մի կողմից՝ օտար հաստատությունների վնասումն ու ավերումն էր և Թուրքիայի հետ պատերազմող պետությունների հպատակներին սպանելը, որպեսզի այդ սպանությունների հետևանքներն այնուհետև բարդեն Թուրքիայի վրա, մյուս կողմից նրանք ուզում էին կայզերական զորքերի մի մասին գամել իրենց ամրացված թաքստոցներին և այդ կերպ նրանց շեղել ռազմաբեմից:

Կայզերական իշխանությունների ուժեղ և արագ միջոցառումների շնորհիվ խռովությունը ցանկալի հաջողություն չունեցավ: Այն ճնշվեց՝ առանց վնասելու Թուրքիայի հետ պատերազմող երկրների կամ չեզոք երկրների որևէ հպատակի:

1915 – 11 – 16 – DE – 002

Սկզբնաղբյուրը՝ PA-AA /R14089
Հրապարակված՝ Գ և Հ, փաստ. 203 /կրճ./

Ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին՝ Հալեպի հյուպատոս Ռյոսլերից

K № 109, № 2078

Հալեպ, 16 նոյեմբերի 1915

Հավելվածում Ձերդ գերազանցությանը խոնարհաբար փոխանցում

եմ մի գերմանացու զեկուցագիրը, որին ես վերջերս Հայկական հարցի հետ բոլորովին կապ չունեցող ծառայողական առիթով պետք է ուղարկեի Դեր Զոր, այն պատմում է դեպի այնտեղ գնացող՝ դեռևս ճանապարհին գտնվող կամ արդեն նպատակակետին հասած հայերի ճակատագրի մասին: Դրանք ուղևորությամբ պարտադրված դիտարկումներ են:

Գնդի ավագ բժիշկ դ-ր Շախթը, որն այստեղից Բաղդադ ընտրել էր գետի ճանապարհը, նոյեմբերի 3-ին Դեր Զորից ինձ գրեց. «Ճանապարհին ես շատ սարսափելի բաներ եմ տեսել: Այն, ինչ պատմել են, ճշմարիտ է»:

Ցամաքով դեպի Բաղդադ տանող էտապային ուղին Հալեպից դեպի Դեր Զոր, ըստ այդմ, բռնկված է բծավոր տիֆի համաճարակով: Նույնը, թերևս, վերաբերում է նաև ջրային ճանապարհին:

Նույն զեկուցագիրը կուղարկվի կայզերական դեսպանություն:

Ռյոսլեր

Հավելված

Հալեպ, 11 նոյեմբերի 1915

Հայերի երթը դեպի Դեր Զոր

Դեր-Զոր ուղևորվելիս անպայման հանդիպում ես տեղահանված հայերի հետքերին: Արդեն Դեր Հաֆիրը բացահայտում է առաջին հետքը: Նախկինում այնտեղ կար փերեզակի մի խանութ, հիմա դրանք երեքն են, որոնք ամեն ինչ անում են՝ շահույթ կորզելով հայերի ստիպողական ծանր վիճակից, բարձր գներով թալանելով նրանց (այծի միսը 1 օքքա 5-6 պիաստր, հացը՝ 4-5, ձուն՝ 10 փարա և այլն): Այդ խուլիգանությանը հանդիպում ես մինչև Դեր Զոր: Քանի որ հազարավոր հայեր անցնում են Բաղդադի ճանապարհի երկայնքի իջևանատներով, խղճուկ մատակարարվող խանութները, որոնք, ըստ էության, գրեթե ապրանքի ոչ մի տեսակների չունեն, ամբողջովին դատարկ են, եղածն էլ վաճառողը թանկ գներով ծախում է սովահար գնորդներին: Ճամբարների տեղավայրերում միայն տիղմով լցված, դիակներով, թրիքով, քրջերով ապականված Եփրատի ջուրն էր: Թափորներին պարենով մատակարարելու մասին չեն հոգացել, թեպետ հնարավորություն եղել է: Չէ՞ որ կարելի էր առանց այլևայլի նախապատրաստել ջրի պահեստավորման տեղեր՝ կանգնած ու զտված ջրով՝ անընդհատ անցնող թափորների համար: Այդպիսով, իրենց բեռներից, երեխաներից, հիվանդներից ու տառապանքներից բա-

ցի, տարագիրներն ստիպված էին իրենց հետ քարշ տալ մթերք և նույնիսկ ջուր՝ երկար քայլերթի համար: Շատ տեղերում չկա վառելանյութ: Ուշ երեկոյան ժամանածներն ուժասպառ ամենուրեք շրջում ու որպես վառելանյութ հավաքում են մեծ դժվարությամբ դուրս քաշվող մատուտակի արմատները: Դաղարքատեղերն ամիսներ շարունակ մարդկային արտաթորանքի զանգվածներից, թափոններից, քրջերից ու աղբից հասել են նողկալի վիճակի, որը չի փոխվի այնքան ժամանակ, մինչև այնտեղով չանցնի վերջին թափորը: Գետի ու Բաղդադի ճանապարհի երկայնքով տրորված ճանապարհները հաջորդաբար բացահայտում են տարագրման հետքերը. թողած սայլեր, որոնց քաշող անասունները սատկել են, ջարդված ֆուրգոններ, հագուստի մնացորդներ ու քրջեր, որոնք այլևս հնարավոր չէ հագնել, անասունների լեշեր և մարդկային դիակներ՝ քայքայման տարբեր աստիճաններում: Միայն բնությունն է իր լեշ խժռող կենդանիներով կարճ ժամանակում հոգում դիակները վերացնելու համար: Մեզքենեյում մենք գտանք հետ մնացած մի խումբ..., նրանց մեջ կար նստած դիրքով նեխող մի դիակ, մահամերձ մի կին և 2 հիվանդ: Իջևանատունը և նրան հարող շրջակայքը լցված էր զինվորականներով ու բեռնատար անասուններով, և ամեն ոք ուներ այլ հոգսեր, քան դժբախտության այդ վայրը մաքրելը:

Աբու Հրերեն՝ Եփրատի ափին... դեռ վերջերս հաջիով ու վաճառականով ապահովված, այժմ... վերածվել է մարդկային աղբի հսկա մի կույտի, կենդանու 5 լեշ, աղբ, ցնցոտիներ ու միլիոնավոր ճանճեր... իսկական մահվան օջախ, հետո ժամեր շարունակ միայն անապատ: Այդ դժբախտ վայրում միայնակ նստած էր սովահար մի պառավ: Բաց կապույտ աչքերը, ճեփ-ճերմակ մազերը և դիմագծերը մատնում էին նրա ավելի բարվոք անցյալը... ամեն ինչ անցել է վաղուց... նա խելագար մղկտում էր երեխաների համար... միգուցե ևս մեկ մայրամուտ... հետո, հետո նա վստահ է, որ նրանց կազատեն: Մենք կարգադրեցինք նրան տեղափոխել իջևանատուն՝ մարդազուրկ աղբանոց 2 զինվորով, ուրիշ ոչինչ: Աբու Հրերեի հետևում, որտեղ ճանապարհն անցնում է անջուր անապատով, բացի բազմաթիվ կենդանական լեշերից և հագուստի մնացորդներից, մենք գտանք 3 տղայի դիակ, 1 տղամարդու և 1 կնոջ դիակ՝ ընկած ճանապարհի եզրին:

Համամ... ունի երկու մեծ իջևանատուն՝ ապականված, հայերի 3 մեծ ճամբար. ա) նավավարներ՝ փայտե 7 նավակներով, բ) սայլապաններ՝

սայլերի իրենց կայանով, գ) հետիոտներ՝ ողորմելի վիճակում, իրենց ունեցվածքի մնացորդներով: Լուսադեմին նրանք կրկին ճամփա ընկան՝ 800-ից մինչև 900 մարդ՝ Անտիոքից, Մարաշի շրջանից, Քիլիսից, Սուսլիից: Համամից հետո 3 ժամ անց ճանապարհը ճյուղավորվեց մեր ճանապարհից և, հավանաբար, մոտենում էր գետափին, մինչդեռ հիմնական ճանապարհը տանում էր անապատային խութերի միջով:

Սաբխա... գաղթականների առաջին կայանը: Նախկինում մի քանի հարյուր բնակիչ, այժմ հաշվվում է 7000 հոգի (ըստ մյուդիր Նահիեի վկայության): Անապատի ժայռոտ զառիթափերի և գետի հոսանքի միջև կա մի վայր... գետափին հին մասն է՝ մի քանի տնամերձ այգիներով, լեռնաշղթայի մոտ ավանը հիմա մեծանում է...շատ ուղիղ ու անկյունաձև նրբանցքներով, հազարավոր ձեռքեր տքնաջան աշխատում են, այնտեղ դասավորված են քարերի շարքեր, ավելի քան100 նոր տուն: Կարճ ժամանակում պատրաստ կլինեն ևս 250 տուն: Հուլիսին ու օգոստոսին ժամանեցին առաջին վերաբնակիչները՝ Զեյթունից: Շատերը դեռ ապրում են վարձու տներում (վարձը՝ 2-3 մեջիդիե), մեծամասնությունը դեռ ապրում են վրանային ճամբարներում և բակերում: Իշխանությունները շենքի հիմքի համար շինանյութ են տալիս և թողնում են քար կտրել: Հաց և ալյուր տալիս են հազիվ բավարար քանակով, ինչի վերաբերյալ նկատելի են բողոքներ: Վերաբնակները կառուցել են դարբնոց, մսի խանութ, թիթեղագործության արհեստանոց և 2-3 խանութ՝ թիթեղյա իրերի վաճառքի համար: Շատ հայեր մեռնում են հիվանդություններից: Ճամբարում ապրողները ինքնապաշտպանության նպատակով, հիվանդներին՝ հատկապես կանանց, քշում են ճամբարից և հանձնում են բնությանը: Առանց սննդի, առանց բժշկի ու խնամքի, նրանք պառկում են տնքալով, հաց մուրալով՝ այնքան, մինչև գթասիրտ ճակատագիրը նրանց կթողներ մեռնել... (մոտ 40 սարսափելի այլանդակված անձինք): Անցման տեղում ես հաշվեցի ջրի հոսանքով կիտված 12 դիակ, որոնց նողկալի գարշահոտությունը որևէ մեկին չէր կարող ստիպել թաղելու: Ըստ համայնքի ղեկավարի կարծիքի, դեռ շատ հազարավոր «վերաբնակներ» կգան, այսինքն՝ ինչպես բառացի ասաց այդ պարոնը. «Մենք նրանց կստիպենք գալ: Որպեսզի երկիրը մշակեն»: Գետից դեպի վերև ու ներքև կենդանի մնացածների համար, համենայնդեպս, սարսափելի վայրեր են: Այնտեղ անպայման անհրաժեշտ է բժշկական օգնություն:

Բնակեցման հիմնական վայրը Դեր Զորն է: Արդեն իսկ առաջին

մուտքն անմիջապես պատկերեց վերաբնակների հիմնական զբաղմունքը. մեռածներին թաղելը, անզգա մտորումների մեջ ընկնելը, դժվարին, կիսամեռ գոյությունը: Դեր Զորն ինքնին բավական գեղատեսիլ քաղաք է՝ գեղեցիկ, լայն փողոցներով: Նախկինում ունեցել է 14.000 բնակիչ, այժմ՝ 25-30.000: Կուտակված մարդկային հսկայական զանգվածների համար չկա ոչ մի կազմակերպչական կարգավորում: Չկա բավարար քանակությամբ սննդամթերք (հացթուխները ժամեր շարունակ հաց չունեն), մի շոգեաղաց անբավարար թխկթխկում է օր ու գիշեր, հացի ու բանջարեղենի պակասը հաստատված է: 3 բուժկայանը լեփ-լեցուն են ավելի քան հազար հիվանդներով: Համայնքի 1 բժիշկ, 1 մարզային բժիշկ, դեղատունը՝ գրեթե դատարկ: Համայնքի բժիշկը հիմա մի քանի օրով գործուղման նպատակով գնացել է քաղաքից, մահացությունն օրական 150-200 մարդ է (համայնքի բժշկի խոսքերը): Միայն այդպես է հնարավոր շարունակել հազարավոր գաղթականների ընդունումը: Քաղաքից դեպի ներքև ու վերև վրանային մեծ ճամբարներ են: Գետի ձախ ափին՝ նավային կամրջակի մոտ, այդ վայրերին բնորոշ տերևներից պատրաստված խրճիթներում տեղավորված է մեռնողների հսկայական բազմություն: Նրանք մոռացվածներն են, որոնց միակ փրկիչը մահն է:

Ոչ մի լեզվամտածողություն չի կարող գոնե մոտավորապես նկարագրել մարդկային այդ թշվառության իսկությունը, այնքա՜ն աննկարագրելի են այնտեղի իրադարձությունները: Իսկ դժբախտների թափորն անընդհատ լրացվում է: Մյուս հետիոտների վկայությամբ՝ ավելի հեռվում կան հարյուրավոր ընկած անթաղ դիակներ: Իր ծառայությունը կատարող ժանդարմն ինձ պատասխանեց.«Ի՞նչ պետք է անես: Նրանք իրենք իրենց մեռնում են»:

Իշխանություններն ամեն օր խնամքով մաքրում են բոլոր անկյուններն ու փողոցները, կառուցում են բնակելի նոր թաղամասեր, ինչպես Սաբխայում, մարդկանց փող են բաժանում, ինչպես նաև՝ հաց ու ալյուր, բայցևայնպես, որոշ բացառություններով՝ մահը կյանքից գերադասելի է: Ինչպես Սաբխայում, այնպես էլ Դեր Զորում, ցանկացած մարդկային բնակավայր հեռու է շատ ժամերի ճանապարհով... անապատային ծայրամաս:

Արաբները քարեր են շպրտում հայերի վրա, ծեծում են, ծաղրուծանակի են ենթարկում, ինչպես մենք տեսանք այդպիսի օրինակներ:

Օրինակ. Մադենում՝ Եփրատի ափին, դեպի ափ էին քշվել 3 դիակ,

արաբները քար էին շպրտում նրանց վրա, թքում էին և դեռ ծիծաղում (մի դիակը գլխատված էր):

Մեր այնտեղ լինելու ժամանակ ոստիկանությունը շատ հայերի արգելեց մեզ դիմել և մեզ հետ խոսել (դրա համար կառավարություն կա, ոչ թե գերմանացիները):

Ի՞նչ աշխատանք կա կենդանի մնացածների համար. հողագործություն ու այգեգործություն՝ գետի երկայնքով, որտեղ, համենայնդեպս, բարեբեր հող կա, արհեստ ու մի քիչ առևտուր:

Ստորագրություն

[Ցիմերմանը՝ Կոստանդնուպոլսի դեսպանությանը /№947/ 10.12.1915]

Թույլ տվեք խոնարհաբար Ձերդ գերազանցության հայեցողությանը թողնել, թե արդյոք խորհուրդ տրվո՞ւմ է թուրքական կառավարությանն իրազեկել Դեր Զոր աքսորված հայերի ճակատագրի վերաբերյալ անցած ամսվա 16-ին Հալեպի կայզերական հյուպատոսի ներկայացրած մի գերմանացու № 2078 զեկուցագիրը և բովանդակությունն օգտագործել հայերի օգտին նոր միջամտությունների համար:

1915 – 11 – 17 – DE – 001

Սկզբնաղբյուրը՝ PA-AA /Կոստ. դեսպ./ 171

Կոստանդնուպոլսի դեսպանությանը՝ Դամասկոսի հյուպատոս Լոյթվեղից

№ 52

Դամասկոս, 17 նոյեմբերի, 1915

Ջեմալ փաշայի հրամանով երկու նախկին խմբապետ, ովքեր ի վերջո որպես հրոսակախմբի առաջնորդներ Հայաստան էին գնացել, հայերի հանդեպ հանցագործությունների և թալանի համար կախաղան բարձրացվեցին: Ջեմալ փաշայի քաղաքական այդ ճարպիկ միջոցառումը տրամադրում եմ մամուլով տարածելու համար:

[Լոյթվեղ]

[Արտգործնախարարությանը՝ Կոստանդնուպոլսի դեսպանությունից /№ 2739/ 18/11]

Դամասկոսի կայզերական հյուպատոսն այս ամսվա 17-ին հեռագրով հայտնում է (*վերոնշյալ տեքստը*):

Թե արդյոք հարմա՞ր է և որքանո՞վ այդ հաղորդագրությունը հայրենական մամուլում օգտագործել թուրքերի օգտին, թույլ տվեք այդ որոշումը կայացնելը թողնել Ձերդ գերազանցությանը: Այստեղի մամուլին դա **մենք** չենք կարող ուղղել:

1915 – 11 – 18 – DE – 001

Սկզբնաղբյուրը՝ PA-AA /Կոստ. դեսպ./ 171

Կոստանդնուպոլսի դեսպան Վոլֆ Մետեռնիխին՝ արտգործնախարարության ունտերշտատսքարտուար Ցիմերմանից

№ 875

Բեռլին, 18 նոյեմբերի 1915

2 հավելված

Այլ իրադարձությունների կապակցությամբ

Հավատարմորեն Ձերդ գերազանցությանն եմ փոխանցում փոխգնդապետ Բյոթրիխի ստորագրած հրամանագրի կից պատճենը, որը վերաբերում է աշխատանքից երկաթուղու հայ ծառայողների հեռացմանը և այդ ձեռնարկի վերաբերյալ Անատոլիական երկաթուղու փոխտնօրենի կարծիքին: Երկու փաստաթուղթն էլ գաղտնի մեզ է տրամադրել Անատոլիական երկաթուղային ընկերության վարչությունը և այստեղից էլ դրանք հաղորդվել են բանակի գերագույն հրամանատարությանը:

Ցիմերման

[Նոյռաթի նշումը]

Նամակի (*անընթեռնելի է*) արդեն մեր փաստաթղթերի մեջ է: Գործի վերաբերյալ առայժմ պետք չէ կարգադրություններ անել:

Հավելված 1 (ֆրանսերեն)

Հավելված 2

A 32610- ի պատճենը: Chemin de Fer Ottoman d'Anatolie

№ 7702 / 389

Կոստանդնուպոլիս, 28 հոկտեմբերի 1915

Անատոլիական երկաթուղային վարչությանը, Բեռլին:

«Պարոն Բյոթռիխը հանձնաժողովի որոշումների առնչությամբ ոչ միայն բողոք չի ներկայացրել ռազմական նախարարին, այլև թույլ է տվել այդ որոշումները փոխանցել իր ստորագրությամբ»:

Մեր հակառակորդները երբևէ շատ փող կվճարեն, որպեսզի տիրանան այդ փաստաթղթերին, քանի որ ռազմական անդամի ստորագրությամբ նրանք կապացուցեն, որ գերմանացիները ոչ միայն ոչինչ չեն արել հայերի հալածանքները կանխելու համար, այլև նրանք այդ նպատակով որոշ հրամաններ են տվել, այսինքն՝ դրանք ստորագրել են նրանք:

Ռազմական նախարարը մատը նենգ ժպիտով դրեց Բյոթռիխի ստորագրության վրա, քանի որ թուրքերի համար թանկ է այն փաստը, որ այդ փաստաթուղթը, որի մասին դեռ երկար կխոսվի, ստորագրել է ոչ թե թուրքը, այլ գերմանացին»:

Փոխտնօրեն
Ստորագրություն

1915 – 11 – 29 – DE – 001

Սկզբնաղբյուրը՝ PA-AA / R14089
Հրապարակված՝ Գ և Հ փաստ. 205

Կոստանդնուպոլսի դեսպան Վոլֆ-Մետեռնիխին՝ արտգործնախարարության պետքարտուղար Յագովից

№ 913

Բեռլին, 29 նոյեմբերի 1915

Սույն ամսվա 9-ի № 660 զեկուցագրի վերաբերյալ
Պարոն Շոյքներ-Ռիխտերի սույն ամսվա 5-ի զեկուցագիրը և այս-

տեղ ունեցած հաղորդագրությունները, ցավոք, ստեղծում են այն տպավորությունը, թե թուրքական կառավարությունը՝ հակառակ մեր առարկություններին ու զգուշացումներին, համառորեն հետևում է հայերի հանդեպ կործանարար քաղաքականությանը: Անտեսելով համընդհանուր մարդասիրական ու քաղաքական բնույթի նկատառումները, մենք՝ որպես Թուրքիայի իսկական բարեկամներ, նրա իսկ շահերի նկատառմամբ, խորապես ցավում ենք, որ նա անհասկանալի կարճատեսությամբ, իր գործելակերպով իրեն զրկում է երկրի տնտեսական զարգացման համար կարևոր բնակչության տարրից: Թշնամական և չեզոք արտերկրում չեն դադարում մեզ պատասխանատու դարձնել թուրքական իշխանությունների գործողությունների համար: Ինչպես կրկին հաստատում է պարոն ֆոն Շոյքների զեկուցագիրը, նույնիսկ թուրք բնակչության լայն շրջանակներում տարածված է այն պատկերացումը, թե իբր Գերմանիան է Թուրքիային մղել հայերի հալածանքներին: Նկատի ունենալով իր գերմանական դաշնակիցների հանդեպ Բարձր Դռան հավատարմությունը՝ կարծում եմ, մենք կարող ենք ակնկալել, որ նա եռանդուն կերպով հանդես կգա այդպիսի ասեկոսեների դեմ:

Պատիվ ունեմ Ձերդ գերազանցությանը և այլոց խնդրելու՝ վերոնշյալ առումով խոսել այդտեղի ղեկավարության հետ և այդ առնչությամբ արտահայտել մեր ակնկալիքը, որ Բարձր Դուռը Հայկական հարցը քննարկելիս կհետևի մեր խորհուրդներին:

[Յագով]

1915 – 11 – 29 – DE – 003

Սկզբնաղբյուրը՝ PA-AA/ R14089

Ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին՝ Կոստանդնուպոլսում արտակարգ միսիայի դեսպան Վոլֆ Մետեռնիխից

№ 701

Պերա, 29 նոյեմբերի 1915

1 հավելված

Այս ամսվա 20-ի (Մ №10102)[63] զեկուցագրի ներածական մասի կապակցությամբ և վկայակոչելով Ձերդ գերազանցությանն ուղղված Հա-

63. A 34383, A 35115-ին կից:

լեպի կայզերական հյուպատոսի այս ամսվա 8-ի և 16-ի զեկուցագրերը (№ 2511[64] և № 2577[65]), պատիվ ունեմ Ձերդ գերազանցությանը կից հավելվածով փոխանցել պաշտոնաթող նախարար-ռեզիդենտ Օպենհայմի ներկայացրած շարադրանքի պատճենը՝ Ուրֆայում հայերի հուզումների վերաբերյալ:

Մետեռնիխ

Հավելված

Հայերի հուզումներն Ուրֆայում

Անհանգստությունների ծիլերն ի հայտ եկան ամիսներ առաջ, դրանք պետք է փնտրել արդեն իսկ Վանի իրադարձություններում: Այդ մասին լուրը մինչև Ուրֆա ստեղծեց որոշակիորեն ակնկալվող հուզումներ՝ ակնհայտորեն ուռճացված այնտեղի խռովության օջախից եկած քարոզիչների միջոցով: Հուզումներն աճեցին, երբ վտանգի տարածման առաջն առնելու կապակցությամբ Ուրֆայում էլ հետևեցին հեղինակավոր հայերի ձերբակալություններ, որոնց էլ սպանեցին տարագրման ճանապարհին: Այնուհետև այդ տրամադրությունը պահպանվեց Դիարբեքիրի և Վանի տարածքից տեղահանված հայերի թափորներով, որոնք Ուրֆա էին հասնում բավականին հուսահատ վիճակում և այնտեղ, ասում են, զանգվածաբար կործանվում էին սովից ու հիվանդություններից: Այնուամենայնիվ, շաբաթներ շարունակ արտաքուստ ոչինչ չէր զգացվում նախապատրաստվող իրադարձությունների մասին, այնպես որ սկզբում հարց չի առաջադրվել Ուրֆայի բնակչության ընդգրկուն աքսորի մասին: Այն, որ ներկայված թշնամաբար տրամադրված հպատակները դեր խաղացին խռովության կազմակերպման մեջ, կոմս Վոլֆսքելը չի ընդունում[66]:

Հուզումների բացահայտ սկզբի համար ազդանշան ծառայեցին հստակ որոշելի իրադարձություններ: Առաջինն ընկնում է օգոստոս ամսվա վերջին: Այն ժամանակ ժանդարմերիայի պարեկների կեսը, որոնք հայկական թաղամասի մի տանը զենք էին փնտրում, սպանվեցին կրակոցներից, մնացածները փախուստի դիմեցին: Հազիվ էր այդ միջադեպը հայտնի դարձել շուկայում ու հարակից թուրքական թաղամասերում, երբ

64. A 35045

65. A 35046

66. Վերջին նախադասությունը բաշխող անձի համար ջնջված է:

ընդհատացած մահմեդական բնակչությունը վրեժխնդիր եղավ հենց շուկայում և փողոցներում գտնվող հայերից, որոնցից մոտ 100-ը սպանվեցին: Այնուամենայնիվ մութասարիֆի միջամտությամբ ամեն դեպքում հնարավոր եղավ արագորեն կանխել հետագա ջարդը: Դրանից հետո հայերը մի քանի օր մնացին իրենց թաղամասում, որտեղ նրանք բարիկադներ կառուցեցին, բայց մնացածում նրանք իրենց հանգիստ էին պահում: Մյուս կողմից էլ նրանց դեմ ոչինչ չհաջորդեց, նույնիսկ՝ պարեկների վրա հարձակման առիթով նախնական հետաքննություն: Այդպիսով որոշ ժամանակ անց կարծես թե վերականգնվեց կանոնավոր վիճակը:

Ապա՝ սեպտեմբերի վերջին, կատարվեց երկրորդ իրադարձությունը; հայկական թաղամասում կրկին կրակոցներ եղան, որի պատճառը, համենայնդեպս, պարզված չէ (նույնիսկ, թե ում դեմ է ուղղված եղել): Ինքնին դա ոչ մի նշանակություն չուներ, քանի որ, ըստ երևույթին, ոչ ոք չէր վիրավորվել, բայց ունեցավ այնպիսի հետևանք, որ հաջորդ օրը թաղամաս ուղարկվեց ժանդարմերիայի ավելի ուժեղացված պահակախումբ, որպեսզի հետաքննի այդ միջադեպը: Այդ պահակախմբի վրա կրկին կրակեցին և սպանեցին մի քանի ժանդարմի, մյուսները փրկվեցին փախուստով: Հիմա բոլոր հայերը, ովքեր պատահաբար թաղամասից դուրս էին, հնարավորին չափ արագ շտապեցին այնտեղ և կարճ ժամանակում ամբողջ հայկական թաղամասը փակեցին բարիկադներով և անցան պաշտպանության վիճակի:

Հայկական թաղամասը, գրեթե ամբողջ քաղաքի կեսը, գտնվում է պաշտպանության համար չափազանց բարենպաստ բարձունքում, որտեղ շատ քարանձավներ կան: Դեպի այնտեղ հայերը շատ հմտորեն անցումներ էին փորել իրենց տներից և այնտեղ, ինչպես նաև կողմնակի տեղերում, որոնք բացված էին խորը ջրհորներից, թաքցրել էին զենքի և ռազմամթերքի պաշարներ (ավելի ուշ՝ իսկական ապստամբության ճնշումից հետո, այդ ստորգետնյա կառույցները վերջին պաշտպանվողների համար ծառայում էին որպես դժվար հայտնաբերվող թաքստոցներ): Թաղամասի տները կառուցված են բացառապես քարից, մասամբ՝ շատ ամուր: Տները կառուցելիս էլ նրանք գործել էին պաշտպանության համար անառարկելի ռազմական վարպետությամբ, բոլոր դռներն ու պատուհանները ամրացվել էին, պատերի մեջ հրակնատներ էին սարքել, փոքրաթիվ անցումները, որոնք դրսից տանում էին դեպի թաղամաս, հակառակ կողմի տներից, որոնք շատ խիտ էին բնակեցված, կարող էին

երկայնքով կրակի տակ առնվել: Նույն համակարգը հաջողությամբ ու հմտորեն կիրառվում էր նաև ծուռումուռ փողոցներով քաղամասի ներսում, նրբանցքը փակող տունը ամեն անգամ օգտագործվում էր որպես յուրահատուկ հենակետ: Գլխավոր հենակետերն էին՝ հյուսիսում, ամերիկյան միսիան, որ բռնի գրավել էին հայերը, հարավ-արևմուտքում՝ հայկական եկեղեցին, դպրոցը և հարակից տները, արևելքում՝ մի քանի առանձնահատուկ ամուր տներ: Ամբողջ քաղամասը բաժանված էր առանձին մասերի, որոնցից յուրաքանչյուրը ենթարկվում էր իր ղեկավարին: Առաջնորդները պետք է որ եղած լինեն մեծամասամբ դրսից եկածները (Դիարբեքիրից, Վանից, Զեյթունից): Պաշտպանվողների թիվը կազմում էր մոտ 2000 զինունակ տղամարդ: Նրանք ապահովված էին մեծաթիվ հրացաններով, նաև փոքր տրամաչափի շատ հրանոթներով և ունեին շատ ռազմամթերք: Գնդացիրներ չունեին, բայց ունեին ձեռքի ինքնաշեն շատ նռնակներ: Միտք է ծագում, որ դրա համար անհրաժեշտ դինամիտը ժամանակի ընթացքում կուտակել էին երկաթուղու կառուցման ժամանակ աշխատող շատ հայ բանվորներ:

Պաշտպանության սկզբնապահին (սեպտեմբերի վերջին) թուրքական կողմում Ուրֆայի զինված ուժերում հազիվ 70-80 ժանդարմ կային, որոնք, իհարկե, ամբողջովին անզոր էին: Հոկտեմբերի առաջին օրերին եկավ առաջին ռազմական օգնությունը՝ մեկ գումարտակ, սակայն դա էլ դեռևս չէր կարող մտածել լուրջ հարձակման մասին: Հոկտեմբերի 4-ին ժամանեցին Ֆախրի փաշան (և կոմս Վոլֆսքելը)[67]: Ամսի 5-ին հետևեց մեկ այլ գումարտակ՝ դաշտային 2 գնդացրով:

Հոկտեմբերի 6-ին սկսվեց կռիվը, որի ընթացքում (12-ին) մարտահրապարակում հայտնվեց երրորդ գումարտակը՝ 12սմ տրամաչափի երկու հրանոթով: Ապա 13-ին հիմնական հարձակումը շարունակվեց հարավից, հովտից դեպի վերև՝ եկեղեցու վրա, 14-ին գրոհեցին նախավերջին անգամ՝ շրջակա տների վրա, 15-ին՝ ամերիկյան միսիայի վրա: Դրանով կոտրվեց հիմնական դիմադրությունը: Վերջին ապստամբները սողոսկեցին, ինչպես արդեն ասվեց, քարանձավներն ու ջրհորները, որտեղից նրանց դուրս էին քշում հաջորդ 14 օրերի ընթաքում, այդ ընթացքում տեղի էին ունենում առանձին փոքր ընդհարումներ:

Տների մեծ մասն ավերվեց հրետանու կրակահերթից, ամերիկյան միսիան էլ էր տուժել, մի հարված հասել էր արհեստանոցին և մեկ ուրիշը՝

67. Փակագծերի միջի բովանդակությունը բաշխող անձի համար ջնջված է:

նրա եկեղեցու գմբեթին: Ծագած հրդեհների պատճառով ավերվեցին ևս մի շարք տներ: Հայերն, ըստ երևույթին, կռվում կորցրին 300-400 մարդ, մյուսները գերվեցին և սպասում են հետագա վճռի:

Կռվի արդյունքում թուրքերի կորուստները կազմեցին 60 սպանված և 120-130 վիրավոր, մի քանի զոհ պահանջվեց նաև վերջին թաքնվածներին փնտրելիս:

Եվս մի քանի կարճ նշում ամերիկյան միսիայի և նրա ղեկավարի դերի մասին: Ինչպես արդեն համառոտակի ասվեց, հայերն իրենց քաղամասը մարտապատնեշելիս բռնի գրավել էին ամերիկյան միսիան: Միաժամանակ այն առավելությամբ, որ պաշտպանության համար ամուր շենք էին ձեռքբերում, թերևս նաև հուսով էին, որ թուրքական կողմը չի համարձակվի կրակ բացել միսիայի վրա, քանի դեռ ներսում կլինի ամերիկյան միսիոները, դրա համար էլ նրան միսիայում պահեցին որպես պատանդ: Միսիոներն անմիջապես փորձել է նամակ գրել մութասարիֆին՝ օգնության խնդրանքով, բայց նամակը կես ճամփին բռնել էին, երկրորդ նամակը, որը սուրհանդակը նետել էր գերմանական ֆաբրիկայի պարսպից դուրս, բարեհաջող հասել է մութասարիֆին, իսկ նրանից էլ փոխանցվել է զինվորականներին: Վերջինների պատասխան նամակն էլ՝ այն բովանդակությամբ, թե միսիոներն իր հետ եղած օտարերկրացիների, որբերի և այլոց հետ կարող է հանգիստ դուրս գալ (այդ ժամանակ նրանք չգիտեին, որ հայերը նրան որպես պատանդ են պահում, այլ մտածում էին, թե պարզապես վախենում է ընկնել թուրքական առաջավոր պահակետի ձեռքը), կրկին առգրավեցին: Երբ մի քանի օր անց ոչինչ չեղավ, զինվորականությունն այդօրինակ դիմում գրեց միսիոների համար՝ սև տառերով մեծ սպիտակ կտավի վրա (առաջնային միսիայից հեռավորությունը պահակետից կազմում է 60 քայլից ոչ ավելի): Այդ լուրը միսիոները ճիշտ կարդաց, չնայած նրա հայտարարությանը, թե ըստ այդ ծանուցագրի թուրքական բանակը շենքը խնայելու այլևս ոչ մի պարտավորություն չի կրում՝ հանուն նրա անձի, սակայն հիմա էլ հայերը նրան ազատ չարձակեցին, դեռ ավելին՝ կտրականապես հայտարարեցին, որ կկրակեն, հենց որ փորձի լքել շենքը: Այնուհետև միսիոները մի մեծ կտորի վրա կարողացավ գրել «Ինձ դուրս չեն թողնում» բառերը: Ի դեպ նա ստիպված եղավ դիմանալ ամբողջ կռվի ընթացքում և ազատագրվեց միայն միսիայի վրա թուրքերի գրոհի արդյունքում: Նա և նրա մարդիկ չէին տուժել:

1915 – 12 – 07 – DE – 001

Սկզբնաղբյուրը՝ PA-AA/R14089
Հրապարակումը.. Գ և Հ փաստ. 209 (կրճ.)

Ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին՝ Կոստանդնուպոլսի արտակարգ միսիայի դեսպան Վոլֆ Մետեռնիխից

№ 711

Պերա, 7 դեկտեմբերի 1915

№ 857 հրամանի, № 855 հրամանի[68] և № 2401հեռագրի պատասխանը

Վերջին շաբաթվա ընթացքում տեղի ունեցած հայկական կոտորածները լրջորեն քննարկեցի Էնվեր փաշայի, Հալիլ բեյի, իսկ այսօր՝ Ջեմալ փաշայի հետ և նշեցի այն, որ հուզումներն ու զայրույթը կընդգրկեն լայն շրջանակներ նաև բարեկամական արտասահմանում և Գերմանիայում և, ի վերջո, թուրքական կառավարությանը կզրկեն բոլոր համակրանքներից, եթե այդ ամենը չդադարեցվի: Էնվեր փաշան ու Հալիլ բեյը հաստատում են, որ հետագա տեղահանումներ չեն նախատեսված, հատկապես՝ Կոստանդնուպոլսից: Նրանք թաքնվում են պատերազմական անհրաժեշտության հետևում, որ ապստամբները պետք է պատժվեին և խույս են տալիս այն մեղադրանքից, որ հարյուր հազարավոր կանայք, երեխաներ ու ծերունիներ մատնվում են թշվառության ու զոհվում: Ջեմալ փաշան ասում է, որ սկզբնական հրահանգներն անհրաժեշտ էին, բայց դրանց իրականացումը վատ էր կազմակերպված: Նա չի հերքում, որ դրա հետևանքով ցավալի իրավիճակներ են եղել, որոնք նա ձգտել է մեղմել սննդամթերք ու դրամ մատակարարելով: Դա ճիշտ է: Հալեպի մոտակայքում նրա թիկունքի գիծը փախստականների թշվառության հետևանքով բռնկված է համաճարակով, և նա դժվարին կացությունից ելք է փնտրում, նաև կախել է տվել շատ մարդկանց, ովքեր թալանել են փախստականներին: Գնդապետ ֆոն Քրեսը՝ Ջեմալի շտաբի պետը, ինձ ասում է, որ թշվառությունն աննկարագրելի է և գերազանցում է բոլոր պատկերացումները: Ընդ որում՝ երկրում տարածվում է, թե գերմանացիներն են ցանկացել ջարդերը:

68. A 32368:

Ես չափազանց խիստ զրույց վարեցի: Բողոքները ոչինչ չեն տալիս, իսկ թուրքական ստահոդ հավաստիացումները, որ այլևս տեղահանումներ չեն լինի, արժեք չունեն:

Հավաստի աղբյուրից տեղեկանում եմ, որ այստեղի ոստիկանության պետի հաղորդմամբ, ինչը խնդրում եմ գաղտնի պահել, Կոստանդնուպոլսից էլ վերջերս մոտ 4000 հայ քշել են Անատոլիա, որ դեռևս Կոստանդնուպոլսում ապրող 80.000 հայերին պետք է աստիճանաբար մաքրազատեն, երբ արդեն սեպտեմբերին մոտ 30.000-ին արտաքսել են Կոստանդնուպոլսից, իսկ մնացյալ 30.000-ը փախել են: Եթե պետք է դադարեցնել, ապա անհրաժեշտ են ավելի խիստ միջոցներ: Դրա համար ես առաջարկում եմ հետևյալ հրապարակումը «Norddeutsche Allgemeine Zeitung»-ում՝ նշելով իմ անունը, և որ այն գրվել է կայզերական կառավարության հանձնարարությամբ:

«Իրենց նախկին բնակավայրերից այլ վայրեր վերաբնակեցված Թուրքիայի հայկական բնակչության ցավալի ճակատագրի մասին բազմաթիվ լուրերի հետևանքով, որոնք Գերմանիա են թափանցել մասամբ արտասահմանյան մամուլից, գերմանական ժողովրդի լայն շրջանակներ համակված են աճող անհանգստությամբ: Եթե նույնիսկ յուրաքանչյուր պետության իրավունք է վերապահված, հատկապես պատերազմի ժամանակ, իր բնակչության խռովարար տարրերի հետ վարվել պատերազմական իրավունքի ամենայն խստությամբ, ապա պետության անվտանգության համար անհրաժեշտ միջոցառումների իրականացման ժամանակ պետք է, այնուամենայնիվ, խուսափել, որպեսզի առանձին անձանց մեղքով մի ամբողջ ցեղ չտառապի՝ ծերերով, կանանցով ու երեխաներով հանդերձ:

Նկատի ունենալով Թուրքիայի ու Գերմանիայի միջև դաշնակցական կապի վրա հիմնված բարեկամական սերտ հարաբերությունները, կայզերական կառավարությունն իր պարտքը համարեց, երբ արդեն տեղ հասան հայկական բնակչության վերաբնակեցման ժամանակ եղած խիստ ցավալի իրադարձությունների մասին առաջին լուրերը, որոնք հիմնականում եղել են կարծես թե ցածր պաշտոնյաների սխալ քայլերի հետևանքով, Կոստանդնուպոլսի կայզերական դեսպանության միջոցով թուրքական կառավարության ուշադրությունը համառորեն հրավիրել օրինազանցությունների և դաժանությունների վրա և կրկնակի ձևով՝ գրավոր և բանավոր, պահանջել դրանց դադարեցումը: Կայզերական կառավարությունը լրջորեն հույս է տածում, ինչպես հենց Թուրքիայի, այնպես էլ հայ բնակչության շահերի նկատառմամբ, որ կհետևեն այս պատկերացումներին»:

Մեր մամուլում պետք է նույնպես հնարավորություն տալ արտահայտելու հայերի հալածանքների վերաբերյալ զայրույթը և դադարեցնել գովասանքների շռայլումը թուրքերի հասցեին: Այն ամենը, ինչին նրանք հասնում են, մեր մեխանիզմն է՝ մեր սպաները, մեր տեխնիկան, մեր փողերը: Առանց մեր օգնության այդ փքված գորտը ոչինչ չի կարողանա անել: Մենք բոլորովին կարիք չունենք այդքան երկչոտ վարվելու թուրքերի հետ: Նրանք չեն կարող հեշտությամբ այլ կողմ շրջվել և հաշտություն կնքել: **Այժմյան** իշխանավորների հետ անգլիական կառավարությունը հեշտությամբ պակտ չի կնքի, ավելի շուտ արդեն Ջեմալի հետ, եթե նա, ինչը բացառված չէ, դուրս մղի Էնվերին: Անգլիական կառավարությունը տարիներ ի վեր փորձում է Էնվերին դուրս մղել: Խիստ անհավանական է, որ անգլիացիները ձգտեն **այժմյան** իշխանավորների հետ սեպարատ հաշտության: Շատ ավելի անհավանական է, որ նրանք Էնվեր փաշային օգտագործեն համընդհանուր հաշտության համար: Դրա համար նրանց առջև բաց են հարյուրավոր այլ ուղիներ:

Հայկական հարցում հաջողություն ունենալու համար մենք պետք է թուրքական կառավարությանը վախ ներշնչենք հետևանքների հանդեպ: Եթե մենք՝ ռազմական նկատառումներով, չենք համարձակվում ավելի վճռական հանդես գալ, ապա այլևս ոչինչ չի մնում, քան հետագա անհաջող նախազգուշացումները, որոնք ավելի շատ բորբոքում են, քան օգնում, ապա մնում է դիտել, թե ինչպես է մեր դաշնակիցը շարունակում կոտորել:

Հայերի հալածանքների ոգին Թալեաթ բեյն է: Նա Անատոլիայից կվերադառնա հազիվ շաբաթվա վերջին: Միայն այդ ժամանակ ես կիմանամ, թե նրա վրա ինչպիսի ազդեցություն ունեն իմ քննարկումները նրա գործընկերների և Ջեմալի հետ: Դրա համար էլ առաջարկում եմ հապաղել հրապարակել «Norddeutsche Allgemeine Zeitung»-ում, մինչև ինձնից հաջորդ հեռագիր ստանալը:

Մետեռնիխ

[Ցիմերմանի նշումը, 16.12]

Այնուամենայնիվ, մենք պետք է դա անենք: Բայց մինչև հրապարակումը, ըստ իս, պետք է հոդվածը շատ մեղմացված լինի: Այժմյան ձևով շատ կսազեր Անտանտին:

[Յագովի նշումը]

Հատկապես ավարտը պետք է ավելի բարեհաճ լինի թուրքական կառավարության համար:

[Բեթման Հոլվեգի նշումը, 17.]

Ներկայացված՝ դաշնակցի այդպիսի հրապարակային խարազանումն ընթացող պատերազմի ժամանակ, կլիներ մի միջոց, ինչպիսին պատմության մեջ դեռևս չի եղել: Մեր միակ նպատակն է՝ Թուրքիային մինչև պատերազմի վերջն ամեն կերպ մեր կողմում պահել, միևնույն է, թե դրա հետևանքով հայերը կկոտորվեն, թե՝ ոչ: Ավելի տևական պատերազմի դեպքում թուրքերը մեզ դեռ շատ պետք կգան: Ես չեմ հասկանում, թե ինչպես է Մետեռնիխը կարողանում այդ առաջարկն անել, թեպետ բացառված չի համարում, որ Ջեմալը դուրս կմղի Էնվերին:

1915 – 12 – 09 – DE – 001

Սկզբնաղբյուրը՝ PA-AA/R14089
Հրապարակված՝ Գ և Հ փաստ. 210

Ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին՝ Կոստանդնուպոլսում արտակարգ միսիայի դեսպան Վոլֆ Մետեռնիխից

№ 714

Պերա, 9 դեկտեմբերի 1915

Անցած ամսվա 29-ի № 913 հրամանագրի կապակցությամբ[69]

Հայկական հարցն այսօր լրջորեն քննարկել եմ Մեծ վեզիրի հետ, նրա ուշադրությունը հրավիրել եմ այն բանի վրա, որ թուրքական կառավարությունը հայերի հետապնդումներով հեշտությամբ կորցնում է այն համակրանքները, որ ունի իր հանդեպ բարեհաճ արտերկրում, որ Գերմանիայում ուժգնանում են հուզումները, իսկ պարոն ռայխսկանցլերին գրոհում են ուղերձներով, որպեսզի բարեկամական ու դաշնակից երկրներում միջամ-

69. A 33278-ը կցվում է:

տեն հայերի օգտին: Ես կրկին շեշտեցի այն, որ պետության անվտանգությունը վտանգող դավադիրներն արժանի են խիստ պատժի, բայց հարյուր հազարավոր ծերերի, երեխաների ու կանանց խայտառակ տարագրումը մութ էջ կկազմի երիտթուրքական պատմության մեջ:

Այս անգամ առարկությունները ես միտումնավոր արեցի Մեծ վեզիրի մոտ և ոչ թե տրիումվիրատի որևէ անդամի, որովհետև ինձ հայտնի է, որ նա չի խրախուսում հայերի հետապնդումները: Թեպետ նա ի զորու չէ դրանք դադարեցնել, բայց նրան շատ ցանկալի կլինի իմ առարկություններն օգտագործել իր գործընկերների մոտ:

Վերջապես ես նրան ասացի այն չարաշահումների մասին, որ գործել են թուրքական ստորին պաշտոնյաները՝ այն կեղծ պնդումներով, որ իբր գերմանացիներն են խրախուսել հայերի հալածանքները: Այդ զրպարտությունը, ինչը ես անհերքելիորեն գիտեմ ուղևորներից և այլ աղբյուրներից, լայնորեն տարածված է Անատոլիայում: Մենք բոլորովին մտադրված չենք հայկական քաղաքականության համար թուրքական կառավարության հետ բաժանել պատասխանատվությունը, և ես նրան խնդրեցի՝ եռանդագին հանդես գալ ընդդեմ այդ զրպարտությունների:

Մեծ վեզիրին ոչինչ հայտնի չէր այդ լուրերի մասին: Բայց նա հստակ խոստացավ դրանք հերքել: Ի դեպ, նա արտահայտեց այն միտքը, որ հայերը օտար՝ հատկապես ռուսների, սադրիչ գործողությունների զոհն են դարձել: Ապստամբության նախապատրաստվել են ամբողջական շրջաններ և մատակարարվել են զենքով: Խոսքը եղել է ոչ թե առանձին վայրերի ապստամբության մասին, այլ ամբողջ տարածքների, ինչի համար էլ պատժի կարող են ենթարկվել ոչ առանձին վայրեր: Մնացածում նա համաձայն չէր այն վերաբերմունքին, ինչին արժանացավ հայ բնակչությունը: Ես նրա մոտ նշեցի, որ ինչպես նա գիտե պատմության փորձից, հեղափոխությունները հետևանք են վատ կառավարման, և որ հարյուր հազարավոր անմեղ մարդկանց հանդեպ հալածանքներն ու դաժան վերաբերմունքը պետությունը պաշտպանելու ոչ մի օրինական միջոցառում չեն պարունակում:

Եթե ես ստիպված եմ թուրքերին որևէ տհաճ բան ասել, ապա դա անում եմ շատ հանգիստ, և նրանք էլ են համակերպվում: Թեպետ այլևս չկա ոչ մի հին թուրքական կուսակցություն, բայցևայնպես, տարեց թուրքերի մեջ դեռևս կան մարդիկ, ովքեր ամաչում են հայերի հալածանքների համար:

Կուզենայի հավատալ, որ իմ առարկությունները, այնուամենայնիվ, իզուր չեն եղել: Ջեմալ փաշան հայերի համար պահանջել է որոշ արտոնյալ պայմաններ, որպեսզի դեռևս Հալեպում գտնվող հայերն իրավունք ունենան մնալ մոտիկ վայրերում, Դեր Զոր՝ անապատի ծայրամաս քշելու փոխարեն, որտեղ նրանք կզոհվեն, ետ կանչվեն Բաղդադի երկաթուղու կառուցմանը մասնակցած հայ ինժեներները, շինարարներն ու բանվորները, ովքեր արդեն աքսորված են և որպեսզի կարողանան նաև տարագրված արհեստավորներին կրկին վարձել բանակի կարիքների համար: Ջեմալ փաշան, որը նույնպես պատկանում է այն թուրքերի թվին, ովքեր ամաչում են, իր ցանկություններն անցկացնելիս մինչև այժմ հանդիպել է կոմիտեի դիմադրությանը: Բոլորովին վերջերս, դրան հակառակ, ինչպես ինձ հայտնեց նրա շտաբի պետ գնդապետ Ֆոն Քրեսը, դրանք շարունակվում էին: Նա այդ ամենը վերագրում է իմ միջամտությանը: Գնդապետն ինձ ասում է, որ հայերի տառապանքների սոսկալի պատկերները նրան չեն լքի, թերևս, ամբողջ կյանքի ընթացքում:

Մետեռնիխ

1915 – 12 – 18 – DE – 001

Սկզբնաղբյուրը՝ PA-AA/R14089
Հրապարակված՝ Գ և Հ փաստ. 215 (կրճ.)

Ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին՝ Կոստանդնուպոլսում արտակարգ միսիայի դեսպան Վոլֆ-Մետեռնիխից

№ 725

Պերա, 18 դեկտեմբերի 1915

Այսօր հայերի վիճակի մասին հանգամանորեն խոսեցի Թալեաթ բեյի հետ, որը վերադարձել է Անատոլիայից: Նա ասում է, որ ձեռնարկել է ծավալուն միջոցառումներ՝արտաքսված հայ ընտանիքների սնունդը կազմակերպելու համար: Հայերի սեփականության ու կյանքի հանդեպ օրինազանցությունները խստիվ կպատժվեն: Վերջերս ևս 20 անձ, ովքեր մեղադրվում են այդպիսի հանցագործությունների համար, մահապատժի են ենթարկվել: Ռուսական սահմանին մերձակա շրջաններում և Հա-

լեպի մոտ, ռազմական անվտանգության նկատառումով, զանգվածային տեղահանումներ ժամանակին անհրաժեշտ են եղել: Ռուսական կառավարության հրահրած մեծ մասշտաբի դավադրություններ բացահայտվել են գրիգորյանական հայերի մեջ՝ սահմանամերձ շրջաններում և Հալեպի մոտ: Իբր դավադրություններ են նախապատրաստվել կամուրջների ու երկաթուղու համար: Նրա ասելով, անհնար է եղել մարդկանց զանգվածից առանձնացնել առանձին մեղավորների: Հիմնականում միայն տեղահանումը կարող էր երաշխավորել անվտանգություն: Սիրիայում հայերին հանգիստ են թողել, Կոստանդնուպոլսում՝ նույնպես: Ներկայումս այլևս ոչ մի տեղ տեղափոխումներ չեն կատարվում, և կառավարությունը փորձում է մեղմել տեղաշարժի հետևանքով ծագած չարիքները:

Ես ակնարկեցի, որ կաթոլիկ հայերի նախկին պատրիարքն ու նրա տեղակալն սովորականի պես այսօր այցելեցին ինձ և հավաստիացրին, որ իրենք ու իրենց համայնքները լոյալ օտոմանյան հպատակներ են և ոչ մի հեղափոխական շարժման չեն մասնակցել: Չնայած դրան՝ շատերին աքսորել են: Այդ հոգևորականները հուսով էին, որ արտաքսվածներն իրավունք կունենան վերադառնալ իրենց համայնքներն ու լքված բնակարանները՝ Հալեպ և Հալեպի մերձակայք:

Նախարարին հարցրի, թե արդյո՞ք նրանց դա նույն կերպ կթույլատրվի, ինչպես բողոքական հայերին, որոնք նույնպես իրենց չեն դրսևորել որպես հեղափոխականներ: Նա պատասխանեց, որ հայ կաթոլիկները և հայ բողոքականները հիմնականում հեղափոխական գործունեությամբ չեն զբաղվում, ըստ հնարավորության նրանք կվերադառնան իրենց հայրենիք:

Այնուհետև նախարարի հետ խոսեցի Անատոլիայում լայնորեն տարածված զրպարտության մասին, ըստ որի՝ իբր գերմանական կառավարությունը նպաստել է հայերի հալածանքներին: Նա պատասխանեց, որ Մեծ վեզիրի հետ այդ մասին իմ զրույցի արդյունքում նա իշխանության բոլոր համապատասխան մարմիններին ցուցում է տվել՝ հանդես գալ այդ լուրերի դեմ և հայտարարել, որ գերմանական կառավարությունը կապ չունի այդ գործի հետ և թուրքական կառավարությունը մենակ ինքն է կրում հայերի դեմ ուղղված միջոցառումների պատասխանատվությունը:

Զրույցի ժամանակ Թալեաթ բեյն արտահայտեց տարօրինակ տեսակետ, որը լսել եմ նաև նրա գործընկերներից, թե մենք էլ այդպիսի

դեպքերում կգործենք այդպես և բռնի ուժով արմատախիլ կանենք հեղափոխական շարժումը Գերմանիայում: Ես անընդհատ հիմնավորում էի այդ տեսակետի անմտությունը, որ մեղավորներին պատժելու համար տառապում են անմեղները և որ միայն ապացուցված հանցագործությունները կարող են պատժվել: Ես նախարարին բացատրեցի, որ մենք երբեք չենք գործի այդ եղանակով և կպատժենք միայն մեղք գործածներին:

Տարբեր կողմերից ինձ հայտնում են, որ իմ լուրջ դիտողությունները կարծես թե տպավորություն են թողել թուրք իշխանավորների վրա: Ես հիմա այդ գործը որոշ ժամանակով հանգիստ կթողնեմ, մինչ չլսեմ հայերի հալածանքների վերաբերյալ նոր բողոքներ: Չափազանց հաճախ արվող դիտողությունները նպատակավրեպ են, քանզի դրանց ազդեցությունը բթանում է: Բայց հենց որ անհրաժեշտ լինի, ես կրկին գործի կանցնեմ:

Պ. Մետեռնիխ

1915 – 12 – 20 – DE – 001

Սկզբնաղբյուրը՝ PA-AA / R14089

Ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին՝ Հալեպի հյուպատոս Ռյոսլերից

K № 116/B № 1881

Հալեպ, 20 դեկտեմբերի 1915

Հավելված 1

Պատճեն

Շաբաթաթերթ «Ֆրանկֆուրտեր ցայտունգ» № 41, էջ 2, 1915թ. 12-ը հոկտեմբերի

Հայաստանից հասնում են ամերիկյան կողմի հաղորդագրություններ, որ թուրքերն այնտեղ ապստամբած հայերին ճնշում են դաժանություններով: Այդ իրադարձությունների մասին լորդ Քրոմերը խոսել է նաև անգլիական պառլամենտում: Ընդ որում՝ նա այն կարծիքին է, որ

հազիվ թե հնարավոր լինի հավատալ, որ զոհերի թիվը 800.000 է, ինչպես դա հաստատում էին: Բայց հետո ի հայտ եկավ անգլիացիների իսկական ստորությունը: Այն է՝ լորդ Քրոմերը ենթադրում էր, որ թեպետ չկան սպանություններին **գերմանացիների մասնակցության մասին** հավաստի զեկուցագրեր, այնուամենայնիվ **Գերմանիան հավասար պատասխանատվություն է կրում,** քանի որ Կոստանդնուպոլսում նրա ազդեցությունն անվիճելի է: Լորդ Բրյուսը պատասխանում է, որ անհրաժեշտ է ամբողջ աշխարհին հայտնել այդ զեկուցագրերի մասին: Հյուպատոսների զեկուցագրերը հայտնում էին լրիվ ողբալի վիճակի մասին: Մի շրջանում ամբողջ բնակչությանը ոչնչացրել են: Լորդ Բրյուսն ավելացրել է, որ 800.000 մեռածների թիվը, որը լորդ Քրոմերը համարում է անհավատալի, ինքը համարում է հնարավոր: Ինչպես աշխարհում կատարվող ամեն ինչի, այնպես էլ հիմա Հայաստանում կատարվող իրադարձությունների համար, որոնց մասին ի դեպ դեռևս չկա ոչ մի վավերագրված տեղեկություն, անգլիացիները գերմանացիներին դարձնում են համապատասխանատու: Կահիրեից ստացված մի հաղորդագրությամբ «Թայմսը» նույնիսկ տարածել է անամոթ այն սուտը, թե գերմանական հյուպատոսները Փոքր Ասիայում ղեկավարել են արյունալի ջարդերը և խրախուսել են դրանք: Ըստ այդմ՝ Հալեպի գերմանական հյուպատոս Ռյոսլերը Այնթապ է ուղևորվել, որպեսզի անձամբ հսկի այդ գործը: Իրականում, իհարկե, ճիշտ հակառակն է եղել: Գերմանական հյուպատոսներն ու միսիոներն ամեն կերպ ջանացել են կանխել կամ գոնե մեղմել հուզումները ճնշելու ընթացքում դրսևորված հնարավոր դաժանությունները, և դա առանց այլևայլի էլ պարզ է, որ Հալեպի գերմանական հյուպատոսի ուղևորությունը ոչ թե կոտորածները հսկելու նպատակ է ունեցել, այլ ըստ հնարավորին դրանք կանխելու: Բայց անգլիացիները, որոնք մինչև այժմ խարազանող ոչ մի խոսք չեն գտել իրենց ռուս դաշնակիցների՝ հրեաներին ջարդելու, գերմանացիներին սպանելու, թալանելու և դաժան վերաբերմունքի համար, հիմա հաճույքով կցանկանային հայտնի եղանակով գերմանացիների վզին փաթաթել Հայաստանում իրականացված կարծեցյալ ջարդերը: Անգլիացիների այդ նորագույն սադրանքին հակառակ, որքանով որ դա մեզ է վերաբերում, պետք է պաշտպանվենք: Մենք կցանկանայինք մատնանշել, որ եթե թուրքերը հայերի հետ դաժան են վարվել, միգուցե հայերն իրենք են դրա առիթը տվել, և եթե եվրոպական կողմի հրահրման հետևանքով Հայաստանում

օրինազանցություններ եղան, ապա մեղքը բարդվում է ոչ թե Գերմանիայի, այլ մեր թշնամիների վրա, որոնք սադրանքով և դրամական միջոցներով **Թուրքիայի հայերին մղեցին ապստամբության**: Այդ ապստամբության ընթացքում հայերը կոտորել են հազարավոր մահմեդականներ և դեռ սեպտեմբերի 23-ին Լոնդոնի «Դեյլի քրոնիքլ»-ի մի հոդված **Հայաստանն** անվանել է Անտանտի **չորրորդ դաշնակից**: Եթե թուրքերը հետո դիմել են պատասխան դաժան միջոցների, ապա ապստամբած հայերն իրենք են մեղավոր դրանում, այդ դեպքում մեղսակից է ոչ թե գերմանական կողմը, այլ անգլիական, ռուսական ու ֆրանսիական հրահրողները:

Հավելված 2

«Ֆրանկֆուրտեր ցայտունգ» շաբաթաթերթ, № 41, էջ 5, 1915թ. 12-ը հոկտեմբերի

Հայկական հարցը Թուրքիայում

Դեռևս Աբդուլ Համիդի օրոք Թուրքիայի բոլոր կենտրոնախույս տարրերի համար սովորույթ դարձավ՝ Եվրոպայի «հետաքրքրությունը» սևեռել իր վրա, որպեսզի առաջ բերված ներխուժումից օգուտ քաղեն ինքնավարության իրենց տենչանքի ու ամեն տեսակ քաղաքական ձգտումների համար: Դեղատոմսը լրիվ պարզ էր, և քանի որ Անգլիան միշտ պատրաստ էր այս երկրի երեսին ճնշվածների ճակատագիրը ծառայեցնել իր նպատակներին, շատ դեպքերում իր գործակալների միջոցով ստեղծում էր այդպիսի «ճնշվածներ», որպեսզի հետո իրավունք ունենա դրսից միջամտել և իր համար շորթել ամենամեծ օգուտը, այդպիսով Հայկական հարցն էլ ոչ այլ ինչ է, եթե ոչ Անգլիայի մեծ ջանքերով մշտապես բաց պահած դռնակ՝ Թուրքիայի քաղաքականություն ազատ մուտք գործելու համար: Եթե համենայնդեպս, Անգլիան այնքան հեռուն է գնացել, որ ժամանակին իր գործելակերպով տեղյակ է պահել Հայաստանի թշվառ ու անտեղյակ ժողովրդին, թե անգլիական բանակը օդանավերով օգնության կհասնի ու կտապալի փաղդիշահի իշխանությունը, միայն թե... հայերը պետք է նախ սկսեն հեղափոխություն անել:

Նախադեպը չունեցող սադրանք է տեղի ունեցել վերջին 20 տարիներին և փաստ է, որ համաշխարհային պատերազմի ընթացքում Անգլիայի զորքերում վարձու հայ զինվորները կատարել են մի շարք դավաճանական գործողություններ: **Էրզրումի** վիլայեթում թուրքերի կռիվների ժամանակ հայերը լրտեսում էին ռուսների օգտին, **Ալեքսանդրետի** մոտ հայերը՝ դավաճանական մտադրությամբ, շփվում էին նավակայանում կանգնած «Դորիս» հածանավի հետ, Կոստանդնուպոլսում հայերը մասնակցում էին դավադրությանը, որը պետք է տապալեր թուրքական կառավարությունը: Դրան ավելացրած այն, որ հայը՝ իր առավել բարձր ինտելեկտով և առևտրականի մեծ տաղանդով, գործնական հարաբերություններում շարունակ գերազանցում էր դժվարաշարժ թուրքին՝ որպես վաճառական, հարկային վարձակալ, բանկիր, գործակալ, ընդ որում՝ ինքը հարստանում է, մինչդեռ թուրքը աղքատանում, հայը արևելքի ամենաատած մարդն է: Շատ դեպքերում՝ ոչ անարադարացի: Եվ չնայած դրան՝ ընդհանրացնելը սխալ է:

Բայց լրիվ հասկանալի է, որ Անատոլիայի անկիրթ ժողովուրդը և նրա կիսակիրթ ղեկավարները, մոլեռանդ հոգևորականներն ու մեծամիտ ազգայնամոլները զոհ դարձան այդպիսի ընդհանրացումների և անմեղներին սպանեցին մեղավորների հետ: Եկեք պատկերացնենք, թե ինչ կձեռնարկեին ֆրանսիացիները, եթե նրանց մեջ ապրեր մի ժողովուրդ, որը բացահայտորեն համակրեր գերմանացիներին, մեզ լրտեսական ծառայություններ մատուցեր և փորձեր սպանել Ժոֆրեին ու Պուանկարեին: Արդյոք այդ ժամանակ ֆրանսիական կառավարությանը կհաջողվե՞ր ճնշել սեփական ժողովրդի զայրույթը այդպիսի անհավատարիմ ցեղի դեմ: Նրան նույնիսկ չի հաջողվում մեր գերմանացի գերիներին պաշտպանել բիրտ ամբոխի ամենավայրենի վիրավորանքներից, որոնք, թերևս, կարծում են, որ այդպիսի «կիրթ արարքներով» տոկ հայրենասիրական պարտք են կատարում:

Երբ լորդ Քրոմերը անգլիական պառլամենտում խոսում է 800.000 սպանված հայերի մասին, ապա դա մի թիվ է, որը քաղաքականապես տպավորվում է: Դա ամենակարևորն է: Լորդն իր անձնական վարանմանը փոքր ինչ տուրք է տալիս իր այն պնդմամբ, թե ինքն էլ անձամբ չի հավատում այդ թվին: Այդ թվին ոչ ոք չի հավատա, ով գիտե Թուրքիայի իրադրությունը: Ըստ այդ թվի՝ սպանված պետք է լինեն Թուրքիայում ապրող բոլոր հայերի ավելի քան 30 տոկոսը՝ ներառյալ կանայք ու երե-

խաներ: Դա լիովին բացառված է: Բայց եթե նույնիսկ պետք է արձանագրել զգալիորեն ավելի քիչ զոհեր և նրանց մեջ լիներ անմեղների մի խումբ, ապա միևնույն է՝ Գերմանիայում յուրաքանչյուր ոք խիստ կցավեր այդ իրադարձությունների համար: Մեր թշնամիների ամբողջ կեղծավոր զայրույթն այն է, որ այսուհետ կպնդեն, թե մենք՝ գերմանացիներս, թուրք խաժամուժին օգնում ենք իրենց ջարդերում: **Բայց ճիշտ հակառակ դեպքն է: Մենք փորձում ենք հանդարտեցնել բորբոքված «անատոլիական ժողովրդական ոգին» և պաշտպանել անմեղներին:**

Չի կարելի թերագնահատել այն դժվարությունները, որոնք թուրքական կառավարության համար ստեղծվում են Հայկական հարցի առնչությամբ: Վատ հաղորդակցությունների պայմաններում, որոնք ունի Փոքր Ասիան, ամեն տեսակ նախաձեռնությունից զուրկ միջին պաշտոնյաների առկայությամբ, լրտեսի ու դավաճանի դեմ ժողովրդի զայրույթով, որին նա ավելի շատ համարում է օտար ցեղի ներկայացուցիչ, քան առանձին անձ, զանգվածների վրա պետական ազդեցությունը շատ դանդաղ է գործում: Թուրքիայում շատ դժվար է, հատկապես, երբ բանակն առաջին գծում է, արագորեն դառնալ դրության տերը, կրկնակի դժվար է, երբ այդպիսի շարժման դրդապատճառները ինքնին հայրենասիրական են և պետք է արգելել նրանց գռեհիկ դրսևորումները:

Չնայած այդ դժվարություններին, թուրքական կառավարությունը **պետք է** իր ձեռքում պահի սանձերը: Պետք է բոլոր հանգամանքներում խուսափել բորբոքված ժողովրդական զանգվածների կազմակերպած ամեն տեսակ Լինչի դատաստանից: Կառավարությունը լիակատար իրավունք ունի իր համապատասխան մարմինների միջոցով գնդակահարել տալ յուրաքանչյուր առանձին մարդու, ում կբռնեն հանցագործության մեջ (արագ պատիժը ամենալավ պատիժն է) և իրավունք ունի ռազմական դատարան հանձնել յուրաքանչյուր կասկածյալի, բայց կառավարության բոլոր այդ գործողությունները պետք է կատարվեն սուլթանի կամ պետական իշխանության մարմինների անունից, ոչ թե խաժամուժի ու քուրդ ավազակների ու ամեն տեսակ թափթփուկի ձեռքով: Գերմանիայի հասարակական կարծիքը հաստատապես համոզված է, որ մեզ հետ բարեկամացած կառավարությունը, երբ նա դրսում այդքան շքեղորեն աշխարհին ցույց է տվել իր ուժը, հիմա դա կարող է ցույց տալ նաև ներսում:

1915 – 12 – 21 – DE – 002

Սկզբնաղբյուրը՝ PA-AA/R14089

Արտգործնախարարությանը՝ Կոստանդնուպոլսում արտակարգ միսիայի դեսպան Վոլֆ Մետեռնիխից

№ 3013

Պերա, 21 դեկտեմբերի 1915

Բաղդադ, 20.12: Ստացվել է հետագա տեղափոխման վերաբերյալ իշխան Ռոյսի ցուցումը 17.12: Բեռլին, № 13: Ռազմական կցորդի նախաձեռնությամբ Թեհրանում Զոմերը բանակցություններ է սկսել հայերի հետ: Նա հեռագրում է արդյունքի մասին.

«Այստեղի հայկական կուսակցության առաջնորդների հետ ուղղակի բանակցությունները վկայեցին, որ Պարսկաստանի ու Կովկասի հայերը դիրքորոշման փոփոխության ուղում են հասնել ոչ թե տեղային զիջումներով, այլ միայն Հայկական հարցն ամբողջությամբ առաջադրելով: Ամենաէական ցանկություններն են՝ ինքնավար Հայաստանի ստեղծումը՝ գերմանական դաշնային պետության կամ չվեյցարական կանտոնի օրինակով, եթե հնարավոր է՝ գերմանական գերիշխանությամբ՝ օտոմանյան գերագույն իշխանության ներքո: Թուրքերի տեղահանած բոլոր հայերի ազատ արձակում և բնակեցում հայկական գավառներում: Թուրքական կողմի խոստումների երաշխիքներ՝ գերմանական ու ավստրիական կառավարությունների միջոցով»:

[Մետեռնիխ]

[Յագովի հեռագրային պատասխանը]

Գաղտնի առաքող Զոմերին՝ №13 հեռագրի կապակցությամբ, ինչպես նաև դեսպանորդ դ-ր Վասելին և ֆելդմարշալ բարոն ֆոն դեր Գոլցին:

Հայերի հետ բանակցությունները սառեցնել: Եթե նրանք կհամառեն, ապա պատճառաբանեք հրահանգների բացակայությամբ: Խնդրում եմ՝ տեղյակ պահեք ռազմական կցորդ կոմս Քանիցին:

Դեսպանորդ դ-ր Վասելին՝ անձնական կողմնորոշման համար:

Նկատի ունենալով Թուրքիային՝ կտրականապես խուսափել Պարսկաստանի հայերի հետ գործ ունենալուց, մյուս կողմից՝ նաև նրանց հետ անփափկանկատ վարվելուց, որպեսզի նրանց մեր դեմ ուղղված քարոզչանյութ չտրվի:

1915 – 12 – 21 – DE – 011

Սկզբնաղբյուրը՝ PA-AA / Կոստ. դեսպ./ 172
Հրապարակված՝ Գ և Հ փաստ. 217

Կոստանդնուպոլսի գլխավոր հյուպատոս Մորդմանի գրառումը

Պերա, 21 դեկտեմբերի 1915

Հայերի բռնի իսլամացումն Անատոլիայում

Այն սկսվեց մեծ ընդգրկումով և համակարգված անցկացվեց Տրապիզոնի գավառում: **Սամսունի** փոխհյուպատոս Քուքհոֆը դրա մասին մանրամասնորեն հայտնել է այս տարվա հուլիսի սկզբին:

Ընդ որում՝ նա գրում է (A53 a v. 22 էջ 176).

«Խոսքը ոչ ավել, ոչ պակաս մի ամբողջ ժողովրդի բնաջնջման կամ բռնի իսլամացման մասին է: Կառավարությունն ուղարկել է խիստ հավատացյալ, մոլեռանդ մահմեդական տղամարդկանց ու կանանց բոլոր հայկական տները քարոզելու՝ իսլամ ընդունել, այլապես սպառնալով վատթարագույն հետևանքներ նրանց համար, ովքեր հավատարիմ կմնան իրենց դավանանքին: Առայսօր շատ ընտանիքներ են դավանափոխվել, և նրանց թիվն օրեցօր աճում է: Մեծամասնությունը մինչև հիմա ընդդիմանում էր այդ գայթակղությանը, և ամեն օր նրանց քշում էին դեպի երկրի խորքը: Ինչպես ինձ հայտնի է դառնում, նրանց հետ են պահում ոչ հեռավոր վայրերում, որպեսզի ավելի հիմնավոր մշակեն իսլամի համար: Սամսունի մերձակայքում բոլոր հայկական գյուղերը մահմեդականացվել են, Ունիում՝ նույնպես: Արտոնություններ ոչ մեկին չեն տրվում, բացի ուրացողներից»:

Տրապիզոնում դավանափոխման առանձին դեպքերի մասին՝ համ. նույն տեղում, էջ 204, վերևում:

Օգոստոսի սկզբին այդ վայրերից մահմեդական մի ճանապարհորդ հայտնեց, որ Ունիեում, Սամսունում, Ինեբոլիեում և այլուր հայերը զանգվածաբար իսլամ են ընդունել, չնայած նրանցից շատերին հետին թվով տեղահանել են: Թերմեում հայ քահանան դարձել է մահմեդական, իսկ եկեղեցին վերածվել է մզկիթի (A53 av 23, էջ 54):

Մյուս վայրերում իսլամացումը կարծես թե հաջողություն չի ունեցել: Բայց օր. հայտնել են, որ Կոնիայում մի խումբ հայեր (25 հոգի) պատրաստ են եղել դավանափոխվել:

Կարելի է ենթադրել, որ շատ դեպքերում իշխանությունները, որպեսզի չտապալեն հայերի արտաքսման նպատակը՝ տղամարդկանց ոչնչացում ու հայերի սեփականության բռնագրավում, արգելում էին զանգվածային դավանափոխությունները կամ էլ դավանափոխվածներին, այնուամենայնիվ, արտաքսում էին:

Հաճնում ու շրջակայքում (Ադանայի վիլայեթ) հայերի իսլամացմանն է վերաբերում քույր Դիդսունի նոյեմբերի 15-ի զեկուցագիրը (հավելված, զեկուցագիր, Հալեպ՝ 30.11 № 7078): Հենց Ադանայից հյուպատոս Բյուգեն հոկտեմբերի 21-ին հայտնում է (Հավ. 3) նույն զեկուցագրի վերաբերյալ (Մ № 6226 A53 av 24):

«Թուրքական որբանոցի տնօրենը քրիստոնյա սաներին հայտարարել է, որ նրանք կամ պետք է իսլամ ընդունեն կամ էլ լքեն մանկատունը: Աղջիկները լքեցին որբանոցը, նաև՝ տղաների մի մասը, մնացին 14-ը, նրանք հավանաբար իսլամացվելու են: Տնօրենը երեխաներին հայտարարել էր, որ օսմանյան որբանոցում տեղ չկա քրիստոնեական կրոնի համար, նրանց արգելվեց աղոթել»:

Այստեղ՝ Կոստանդնուպոլսում, հանգամանքների ճնշմամբ պետք է որ 20 հայ դավանափոխված լինեն, ըստ երևույթին՝ հենց նրանք, ովքեր Անատոլիայում հարստացել են և դավանափոխմամբ փորձում են փրկել իրենց կարողությունը:

[Նոյոռաթի նշումը, 20.12]

Հալիլ բեյը ամենավճռական ձևով հերքում է, որ ստիպողական դարձն իսլամի եղել է հիշատակման արժանի ծավալով: Եղած դեպքերի համար ստորին պաշտոնյաները պատժվել են:

1915 – 12 – 31 – DE – 003

Սկզբնաղբյուրը՝ PA-AA/Կոստ.դեսպ./

Մոսուլի հյուպատոսությանը՝ Կոստանդնուպոլսի դեսպանությունից

№ 102

Կոստանդնուպոլիս, 31 դեկտեմբերի 1915

Խնդրում եմ ճշտել, թե արդյոք Ստեփան Չիրաջյանը՝ Դիարբեքիրից Արգանայի ու Մադենի պատգամավորը, այնտե՞ղ է, կամ էլ թե ի՞նչ է հայտնի նրա գտնվելու վայրի մասին: Հայտնել հեռագրով:

[Մորդմանի նշումը]

Պարոն Քրումբհոլցի՝ ավստրո-հունգարական դեսպանության դրագոմանի խնդրանքով, խոսքը դ-ր Լազարի մերձավոր հարազատի մասին է, կայզերական գլխավոր հյուպատոսության միջոցով հայտնել են այստեղ:

[Կոստանդնուպոլսի դեսպանությանը՝ Մոսուլի հյուպատոս Հոլշտայնից (№1/ 10.1.1916)]

№ 102 հեռագրի պատասխանը

Իր ժամանակին Դիարբեքիրից այստեղ աքսորված հայերից ոչ մեկը առայսօր Մոսուլ չի հասել: Ինչպես այն ժամանակ ինձ հայտնել էր այստեղի վալին, Դիարբեքիրի հայերից ոչ մեկը կենդանի չի մնացել: Ստեփան Չիրաջյանի ճակատագրի մասին այստեղ ոչինչ հայտնի չէ:

[Հոլշտայն]

1916 – 01 – 03 – DE – 001

Սկզբնաղբյուրը՝ PA-AA/R14090
Հրապարակված՝ Գ և Հ փաստ. 182 (միայն 4-րդ հավելվածը) (կրճ.)

Կոստանդնուպոլսի դեսպան Վոլֆ Մետեռնիխին՝ Հալեպի հյուպատոս Ռյոսլերից

№ 10

Հալեպ, 3 հունվարի 1916

5 հավելված

Հավելված 4

Հալեպ, 15 հոկտեմբերի 1915

Որպես գերմանական ռեալական դպրոցի ուսուցիչ, որի առջև հենց հիմա են բացվել գործունեության չկանխատեսված լայն հնարավորություններ, մենք՝ ներքոստորագրյալներս, մեր պարտքն ենք համարում արտգործնախարարության վերին օղակներին մատնացույց անել այն ցավալի ազդեցության վրա, որից տուժում է այդ խոստումնալից աշխատանքը՝ հայերին արտաքսելիս մեր աչքերի առջև օրեցօր ծավալվող վայրագություններից:

Մենք չենք ուզում անդրադառնալ արյունալի ջարդերին, որոնցով սովորաբար սկսվում է հայերի տեղահանումը իրենց լեռնային երկրից: Հազարավոր տղամարդկանց, որոնց առանձին կամ երբեմն իր մերձավորների աչքերի առաջ մորթում էին, ոչ էլ անթիվ աղջիկների, կանանց ու երեխաների՝ անարգված ու խեղված իրենց հսկիչների ու նրանց հանցակիցների ձեռքով, որոնց դիակները փռված են ճանապարհներին, որտեղով անընդհատ տարագիրների նորանոր քարավաններ են անցնում, ոչ էլ անասելի դաժանությունների, ծարավի, սովի, որոնք կրճատում էին կենդանի մնացած՝ հաճախ մինչև վերջին գրոշը թալանված այրիների ու որբերի թիվը, մինչ նրանք՝ հաճախ կմախքի վերածված, հասնում են այստեղ, որպեսզի հետո երևի թե վեցից մեկը, որոնք ճամփա են ընկնում, անցնի նույնպիսի տառապանքի ուղի՝ առանց գոյության որևէ հնարավորության, միայն թե չքանա հայի անունը:

Այս ամենը, մենք կարծում ենք, որ հայտնի է արտգործնախարարության վերին օղակներին՝ այս երկրում իր ունեցած ներկայացուցիչների միջոցով:

Դրա փոխարեն՝ թող մեզ թույլատրվի լուսաբանել ժողովրդի բնաջնջման զանգվածային թշվառության մի փոքր դրվագ, որը մեր դեմ է հառնում անմիջապես մեր դպրոցին հարող տարածքում՝ բաժանված մի նեղ նրբանցքով:

Այնտեղ կա մի հին, մեծ իջևանատուն, որը թուրքական իշխանությունները տրամադրել են հայերին՝ իրենց տարագիրների համար,

հատկապես՝ ծանր հիվանդների: Այսինքն՝ պետք է կարծել, ինչ-որ հիվանդանոցի նման բան: Մտնենք նեղլիկ մուտքով ներս:

Մի քանի կամարների ներքո պառկած են հյուծված կերպարանքներ՝ փաթաթված ցնցոտիներով, լերկ գետնի վրա, լավագույն դեպքում՝ տեղավորված իրենց շարժական գույքի մնացորդների վրա: Կանայք ու երեխաներ, մեկ-մեկ էլ ծերունիներ: Ոչ մի հասուն տարիքի տղամարդ:

Մտնում ենք բակ: Այն դարձել է միակ արտաքնոցը: Կամարների եզրին՝ իրենց աղբի մեջ խառնիխուռն, պառկած են հիվանդներ, մահամերձներ, մեռածներ: Միլիոնավոր ճանճեր՝ ուժասպառ հիվանդների ու դիակների վրա: Տնքոցներ, հեծեծանքներ, այստեղ-այնտեղ բժշկական օգնության աղերսանք, բողոքներ՝ հազարավոր ճանճերից տանջահար աչքերի խոռոչներից: Մի ծերունու մերկ մարմնի կողքին՝ երկու երեխա, որոնք հոգում են իրենց բնական կարիքները:

Մենք բարձրանում ենք արտաթորանքներով ծածկված բակով՝ դեպի այն կողմում գտնվող կամարը: Մի դյուժին երեխաներ՝ գրեթե սովամահ, անզգա, նրանց մեջ՝ մի քանի մահամերձ կամ գուցե մեռած: Ոչ ոք չի հոգում նրանց համար: Մութ խորշից դուրս բերվեց մի տղայի կիսանեխված դիակը, որի վրա ուշադրություն դարձրին նեխահոտի պատճառով: Այստեղ՝ այս խորշերում, որբեր են, որոնց մայրերը մահացել են վերջին օրերին: Այստեղ ոչ մի բժիշկ չի հայտնվում: Ոչ մի դեղորայք մեղմացում չի բերում: Նրանք էլ են դատապարտված սարսափելի մահվան: Նրանք սովամահ կլինեն: Կառավարությունն այս «հիվանդանոցին» մատակարարում է ոսպ ու բլղուր (հացահատիկի ծավար), կամ զինվորական սև հաց: Այս թշվառների՝ հաճախ շաբաթներով, նույնիսկ ամիսներով անջուր տապին քշված արարածների թուլացած ստամոքսն այդպիսի սնունդ այլևս չի մարսում, որն առանց այդ էլ չէր հերիքի: Դիզենտերիա, հյուծախտ, տիֆ...

Այդ ընթացքում հայտնվեցին բեռնակիրները՝ դագաղներով: Վերջին օրերին մեռածների մի մասին, ինչպես որ կան, դնում են դրանց մեջ, տանում են ամենամոտ գերեզմանոցը և դատարկում են զանգվածային գերեզմանի մեջ: Փոխադրամիջոցը դագաղներով (որոնք պարզապես ձեռքի պատգարակներ են) չի բավարարում, ախր օրական մեռնում են այստեղ հասած կենդանի մնացածներից 100-150-ը, բեռնատարները դիակները բարձում են բեռի նման, բրեզենտը ծածկում է ամենասարսափելին: Այստեղից-այնտեղից կախվում են ոտքեր, գլուխ՝ հենց որ սայլը գլորվում է փողոցներով:

Իսկ այս դրվագների ծավալման վայրի անմիջական հարևանությամբ մենք՝ գերմանացի ուսուցիչներս, ստիպված ենք մեր աշակերտներին ծանոթացնել գերմանական մշակույթին: Նրանք, հավանաբար, դպրոցի ճանապարհին տեսել են այդպիսի սայլ՝ լիքը լցված դիակներով, կամ էլ բաց պատուհանից լսել են թշվառ զոհերի տնքոցը, նրանց հազը, կամ էլ այդ թշվառ արարածները ողորմություն են խնդրել նրանցից, ովքեր հազիվ դուրս են սողացել օդ շնչելու և իրենց թուլության պատճառով չեն կարողացել կրկին հետ քարշ գալ և հիմա՝ ճանճերով ծածկված, մեռնում են փողոցում:

Ինչպիսի տրամադրությամբ պետք է մեր աշակերտները, եթե նրանք հայ են, մեզնից սովորեն պատմություն, երկրագիտություն, կրոն և այլ առարկաներ, եթե նրանց հայրենակիցները դպրոցի հարևան բակում սովամահ են լինում:

Կարծում եք՝ մահմեդական երեխաները չեն մոլորվում, երբ ի դեմս այդ պատկերների լսում են **մեր** դասերը: Չէ՞ որ կան մեծաթիվ կարգին մահմեդականներ, ովքեր նողկանքով լի դատապարտում են անմեղ կանանց ու երեխաների զանգվածային սպանությունները՝ որպես մեղք գթառատ Աստծո պատվիրանների դեմ, և չգիտակցելով, որ իրենց սեփական կառավարությունը կարող է լինել այդպիսի մեղսալի արհավիրքների հեղինակը, մեղավորներին փնտրում են գերմանացիների մեջ: Սոսկալի բծեր են սպառնում այստեղ Գերմանիայի պատվի վահանակին՝ արևելյան ժողովուրդների ապագա պատմական հիշողության մեջ:

Մեզ չի վերաբերում իրենց լեռնային երկրից հայերին արտաքսելու քաղաքական իրավունքի քննարկումը: Բայց մենք ուզում ենք և պետք է բարձրաձայնենք, որ գերմանացիների դպրոցական աշխատանքը՝ տարագրման այս սոսկալի ձևով, կանանց ու երեխաների զանգվածային սպանությունների տեսքով, ինչպիսին պատմությունը դեռևս չի տեսել, այս երկրին կհասցնի անուղղելի վնաս:

Մենք խորապես համոզված ենք, որ մեր վսեմ արտաքին գործոց գերատեսչությանը իր ազդեցությամբ կհաջողվի գոնե վերջին պահին դադարեցնել այս խայտառակ սպանդը և մեզ՝ գերմանացի ուսուցիչներիս, կազատի այն ամոթից, որն օրեցօր ավելի է ծանրանում մեր հոգուն՝ հանցակցության կասկածով հիմա այստեղ՝ քրիստոնյաների ու մահմեդականների մոտ, բայց հետո արդեն նաև ամբողջ աշխարհում:

Ավագ ուսուցիչ՝ դ-ր Նիպագ
Մարի Շպիկեր

Գործընկեր դ-ր Նիպագի շարադրանքը բոլորովին չափազանցված չէ: Արդեն մի քանի ամիս է, ինչ մենք շնչում ենք դիակների գարշահոտությունը և ապրում ենք մեռնողների մեջ: Միայն երկինքն ի վեր աղաղակող վիճակի շուտափույթ ավարտի հույսը մեզ դեռևս հնարավորություն է տալիս շարունակելու աշխատանքը դպրոցում, և կամքը՝ այստեղի ոչ թուրքական բնակչությանը ըստ հնարավորին ապացուցելու, որ մենք՝ գերմանացիներս, անձամբ ոչ մի կապ չունենք այս երկրի սարսափելի գործելակերպի հետ:

Դպրոցի տնօրեն՝ Հուբեր
Դ-ր Էդուարդ Գրեթեր

Հավելված 5

(Լուսանկարներ՝ գերմանական դպրոցի մերձակայքում գտնվող ճամբարի վայրից)

1916 – 01 – 03 – DE – 002

Սկզբնաղբյուրը՝ PA-AA/R14090
Հրապարակված՝ Գ և Հ փաստ. 226 (խմբ. կրճ.)[70]

Ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին՝ Հալեպի հյուպատոս Ռյոսլերից

№ 16/ K № 2

Հալեպ, 3 հունվարի 1916

2 հավելված

Խոնարհաբար Ձերդ գերազանցությանն եմ ներկայացնում հետևյալ տեղեկությունները հայերի տեղահանման վերաբերյալ:

1. Ուրֆայից՝ սարկավագ Քյունցլերի մի զեկուցագրի պատճենն այնտեղի իրադարձությունների մասին՝ օգոստոսի սկզբից մինչև դեկտեմբերի սկիզբը: Թեպետ զեկուցագիրը մասամբ կրկնում է արդեն հայտնի դարձածը, բայց, այնուամենայնիվ, արժե փոխանցել: Այնտեղից կարե-

70. Որպես հավելված 2 Լեփսիուսի տպագրած փաստաթուղթը Օպենհայմի 1915թ. օգոստոսի 29-ին ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին գրած զեկուցագրի 4-րդ հավելվածն է:

լի հատկապես վերցնել, որ 500 և 1000 մարդու արդեն մորթել էին մինչև հոկտեմբերի սկզբի կռիվների սկսվելը: Այսինքն՝ աշխատանքային գումարտակի մի քանի 100-ին՝ քաղաքի հյուսիսում, և մեկ այլ աշխատանքային գումարտակի 400-ին՝ քաղաքի հարավում, չհաշված արդեն նախապես տարագրվածներից Դիարբեքիրի ճանապարհին սպանվածները: Նորություն է նաև այն, ինչը նա հայտնում է քաղաքի ճակատագրի մասին՝ ռազմական պարտությունից հետո:

2. Ինժեներ Բաստեդորֆի զեկուցագիրը, որը վճռորոշ իրադարձությունների ընթացքում շաբաթներով զբաղված էր Ռաս ուլ Այնում և Թել Աբիադում Բաղդադի երկաթուղու կառուցմամբ, և որի հավաստիությունը լավագույնն է: Նրա բանավոր հաղորդածները շատ ավելի ցնցող էին: Այնուամենայնիվ, նրա գլխավոր զեկուցագիրը նույնպես պարունակում է բավականին փաստեր, որպեսզի պատկերացում կազմվի թուրքական կառավարության կողմից տարագիրների մտածված ու ցանկացած ոչնչացման մասին: Հայերի անընդհատ մեջբերած պատմությունը, որ տարագիրների քարավանները միտումնավոր այս ու այն կողմ այնքան են տանում, որպեսզի նրանց «հասցնեն» մահվան, այստեղ մի օրինակով հաստատվում է: Ուրֆայից տեղահանվածների մի խումբ պետք է անցներ հետևյալ ճանապարհը:

Ուրֆայից՝ Թել Աբիադ
Թել Աբիադից՝ Ռաքքա
Ռաքքայից՝ Թել Աբիադ
Թել Աբիադից՝ Ռաքքա

Թել Աբիադից Ռաքքա ճանապարհահատվածն օդային ուղով 90 կմ է:

3. Արդեն բազմիցս հայտնած և հենց հիմա հաստատված փաստը, որ կառավարության մարմինները բնակչությանը կոչ են անում ու քաջալերում՝ արմատախիլ անել հայերին, կարող է սահմանափակվել նրանով, որ Ջեմալ փաշան՝ 4-րդ բանակի գլխավոր հրամանատարը, անձամբ չի ուզեցել հայերի բնաջնջումը: Նրա կամքը ի զորու չի եղել դրա առաջն առնելու, բայց դա էլ է թեթևացում՝ սոսկալի պատկերում գտնե մի խաղաղասեր գիծ գտնել: Իզլահիեի հայերի հավաքական ճամբարը 6 շաբաթ շարունակ, չնայած գերմանացիների ինժեներների պաշտպանությանը, քրդերի բազմաթիվ հարձակումների առարկան էր, որոնց ընթացքում մորթում էին կանանց ու երեխաների: Երբ Ջեմալ փաշան անցնում էր այդտեղով, և նրան զեկուցեցին այդ մասին, նա տրամադրեց իր 12 թիկ-

նապահ ժանդարմներին, որոնք շատ եռանդագին գործեցին քրդերի դեմ և մի քանիսին գերեվարեցին: Նրանց հետո կախեցին:

Եթե 4-րդ բանակի տարածքի վիճակը, թեպետ այն բավականին վատ է, չի հասնի 3-րդ բանակի տարածքի վիճակին, ապա աշխարհագրական ու քաղաքական իրավիճակի, ինչպես նաև երթևեկային ճանապարհների զանազանությամբ պայմանավորված տարբերությունների կողքին պետք է դասել նաև Ջեմալ փաշայի ազդեցությունը:

4. Մինչ ես նախկինում անընդհատ զեկուցում էի, որ հայերի դիակներն անթաղ էին մնում և զոհ էին դառնում գիշատիչ կենդանիներին, ինձ հայտնած բանավոր նոր տեղեկությունների համաձայն, այլևս կասկած չկա, որ նաև դեռևս կենդանի մնացած հայերին, ովքեր հիվանդ ու հյուծված վիճակում մնացել են ազատ բնության մեջ և նրանց համար ոչ ոք չի հոգացել, խժռել են շները:

Դրա վերաբերյալ կա մի տարեց գերմանացի ինժեների վկայությունը՝ անպայման հավաստի, որը Արաբ Փունարում աշխատելով հսկել է այնտեղի ու Հերաբ Նասի միջակայքի հատվածը: Դիտարկումն արել են ինչպես նա, այնպես էլ տեղաբնակ ծառայողները: Անհրաժեշտության դեպքում նրա անունը կտրամադրվի:

Դիակների հոտն այդ երկու կայանների միջև այնքան ուժգին է, որ նա դեմքը բազմիցս փակել է, եթե ստիպված է եղել վերադառնալ ձիով:

Նույնպիսի զեկուցագիր կուղարկվի նաև կայզերական դեսպանություն:

Ռյոսլեր

Հավելված 1

Պատճեն

Ուրֆա, 5 դեկտեմբերի 1915

Ես կարծում եմ, որ Դուք ճիշտ եք տեղեկացված օգոստոսից ի վեր այստեղի շատ իրադարձությունների մասին: Այնուամենայնիվ, ես կցանկանայի այստեղ ինչ-որ բան կրկնել: Հավանաբար, սրա մեջ կա դեռ ինչ-որ բան, ինչը Դուք չգիտեք:

Օգոստոսի սկզբին երկու բեյերի ժամանումը Դիարբեքիրից: Դրանից անմիջապես հետո արդեն վաղուց ձերբակալված ու պահված հայերի մահացու փոխադրումը, ուստի նրանց մեջ էր նաև մեր դեղագործ Աբրահամը: Օգոստոսի 15-ին սկսվում է երիտասարդ հայերի փնտրտուքը՝

իբր զինվորական ծառայության համար: 19-ին մի տուն խուզարկելիս թաքստոցից կրակոցով սպանվեց մի ոստիկան: Կեսօրվա ժամը 3-ին: Մնացած ոստիկանները փախան մուսուլմանական բնակարան և այդ մասին հայտնեցին ղեկավարությանը: Խալիլ և Ահմեդ բեյերը, վերը հիշատակվածները, ջարդի հրաման տվեցին: Մինչև երեկո սպանվեցին մոտ 100 հայ: Հաջորդ օրը աշխատանքային գումարտակի մոտ 100 հայի մորթեցին Ուրֆայից դեպի հյուսիս մեկուկես ժամվա հեռավորությամբ: Հաջորդ օրը՝ 400 հոգու, հարավում աշխատող աշխատանքային մի այլ գումարտակից: Օգոստոսի 19-ից հանգիստ էր, բայց հայերը թաքնված մնացին իրենց տներում: Սեպտեմբերի 29-ին ոստիկանությունը փնտրում էր երիտասարդ հայերի, ովքեր նախորդ գիշերը մի տնից կրակոցներ էին արձակել: Այդ ընթացքում նրանց վրա կրկին կրակել էին: Ով կարողացել է՝ փախել, փրկվել է: Շուկայում գտնվող հայերին մորթել են, օգոստոսի 19-ին միայն առանձին հայեր են համարձակվել տնից դուրս գալ՝ շուկա և այլն: Արդեն երեկոյան հայկական թաղամասն այլևս մատչելի չէր մահմեդականների համար: Հետո սկսվեց պաշարումը, որն, այնուամենայնիվ, պետք է վատ վերջանար հայերի համար: Հոկտեմբերի 16-ին հիմնականում հանձնեցին դավաղրությանը չմասնակցած հայերին, հատկապես կանանց ու երեխաներին: Հանձնված տղամարդկանց մորթեցին, մի քանիսին էլ կախեցին: Կանանց ու երեխաներին աստիճանաբար աքսորեցին դեպի հարավ: Հայերի մնացյալ մասի փնտրտուքը, ովքեր չէին հանձնվել, այլ թաքնվել էին ջրհորներում և այլուր, շարունակվեց դեռ երկար՝ մինչև նոյեմբերի կեսը:

Խռովությանը չմասնակցած հացթուխներին սկզբում կենդանի թողին և նրանց թույլատրեցին աշխատել իրենց խանութներում, բայց նոյեմբերի 20-ին հեռացրին նաև նրանց, ընդ որում ճանապարհելուց հետո՝ քաղաքից դուրս սպանեցին:

Կասկածելի զբաղմունքի տեր մի քանի հայ՝ թուրքերին ցույց տալով հայերի թաքստոցները, իրավունք ստացան մնալ Ուրֆայում:Դեղագործ Գարեգինն էլ կարող է մնալ, բայց հիմա այդ մարդիկ ստիպված են կիսով չափ դառնալ մուսուլման: Մեր դեղագործին այսօր հասկացրել են՝ եթե ուզում է մնալ, ապա պետք է գոնե որևէ մուսուլմանական անուն ընդունի: Հավանաբար, մեր բժշկին էլ նույն բանը խորհուրդ կտան:

Խռովությանը բոլորովին չմասնակցած միակ քրիստոնյա Կարմուջ գյուղը վերջին շաբաթվա ընթացքում նույնպես տեղահանվեց: Շատ ցավալի է:

Հաճախ մտածում եմ՝ գոնե մեզնից որևէ մեկը կարողանար գնալ Ռաքքա, Դեր Զոր և այլն, որպեսզի օգներ տարագիրների կենդանի մնացածների մնացորդներին: Միայն թե համոզված եմ, որ կառավարությունը չի թույլատրի մեր օգնությունը: Այսպիսով, մենք պետք է պարզապես թողնենք, որ այդ ժողովուրդը՝ իր լավ ու վատ կողմերով հանդերձ կործանվի:

[Յակոբ Քյունցլեր]

1916 – 01 – 11 – DE – 001

Սկզբնաղբյուրը՝ PA-AA/R14089

Ռայխսթագի պատգամավոր Կարլ Լիբկնեխտի հարցումը ռայխսթագի 26-րդ նիստին

Բեռլին, 11 հունվարի 1916

Դ-ր Լիբկնեխտի հարցումները (տե՛ս դրանք)

№ 12 Հայ բնակչությունը Թուրքիայում /Հավելվածներից №187-ը/
Դ-ր Լիբկնեխտ (տե՛ս դրանք) 512
Կանոնակարգի վերաբերյալ 513
Դ-ր ֆոն Շթումը՝ արտգործնախարարության քաղաքական բաժնի ղեկավար, կայզերական դեսպանորդ.....512

Նախագահ. Մենք անցնում ենք օրակարգի հարցերին: Օրակարգի առաջին կետը կազմում են հարցումները: Առաջինը հայտարարում եմ №12-ը (տպագրված նյութերի №187-ը): Հարցումն ընթերցելու համար ձայնը տրվում է պատգամավոր պարոն դ-ր Լիբկնեխտին:

Դ-ր Լիբկնեխտ, պատգամավոր.

Արդյոք պարոն ռայխսկանցլերին հայտնի՞ է, որ այս պատերազմի ընթացքում դաշնակից թուրքական կայսրությունում հայ բնակչությանը հարյուր-հազարներով տեղահանել են իրենց բնակավայրերից և ոչնչացրել են:

Ի՞նչ քայլեր է ձեռնարկել պարոն ռայխսկանցլերը դաշնակից թուրքական կառավարության մոտ՝ որպես անհրաժեշտ հատուցում՝ մնացյալ հայ բնակչության վիճակը Թուրքիայում մարդավայել կազմակեր-

պելու և նմանօրինակ արհավիրքների կրկնությունը կանխելու համար:

Նախագահ. Պատասխանելու համար խոսքը տրվում է արտգործնախարարության քաղաքական բաժնի ղեկավար, կայզերական դեսպանորդ պարոն ֆոն Շթումին:

Դ-ր ֆոն Շթում, կայզերական դեսպանորդ, արտգործնախարարության քաղաքական բաժնի ղեկավար, բունդեսռաթի կոմիսար.

Պարոն ռայխսկանցլերին հայտնի է, որ որոշ ժամանակ առաջ, մեր հակառակորդների խորվարարական խարդավանքների առնչությամբ, Բարձր Դուռը թուրքական կայսրության տարածքի որոշակի մասերից հայ բնակչությանը տեղահանել և նրանց տրամադրել է նոր բնակավայրեր: Այդ միջոցառումների հետադարձ որոշ ազդեցությունների պատճառով գերմանական ու թուրքական կառավարությունների միջև տեղի է ունենում մտքերի փոխանակում: Մանրամասները չեն կարող հաղորդվել:

(Պատգամավոր դ-ր Լիբկնեխտ: Ես ձայն եմ խնդրում՝ հարցումը լրացնելու համար: Աշխուժացում):

Նախագահ. Հարցումը լրացնելու համար խոսքը տրվում է պարոն պատգամավոր դ-ր Լիբկնեխտին:

Դ-ր Լիբկնեխտ, պատգամավոր.

Արդյոք պարոն ռայխսկանցլերին հայտնի՞ է, որ պրոֆեսոր Լեփսիուսը խոսում է թուրքահայերին ուղղակիորեն արմատախիլ անելու մասին...

(Նախագահի զանգակը - Հռետորը փորձում է շարունակել խոսքը: Կանչեր՝ հանգիստ, հանգիստ):

Նախագահ. Պարոն պատգամավոր, դա նոր հարցում է, որը ես չեմ կարող թույլատրել:

(Պատգամավոր դ-ր Լիբկնեխտ. Պարոն նախագահ, կանոնակարգի վերաբերյալ):

- Խնդրեմ՝ կանոնակարգի վերաբերյալ:

Դ-ր Լիբկնեխտ, պատգամավոր.

Քանի դեռ պարոն նախագահը հարցումը մինչև վերջ չի լսել, նա ի վիճակի չի լինի դատել (աշխուժություն), թե արդյոք խոսքը նոր հարցման մասի՞ն է, թե՞ ոչ: Ի դեպ, ես շեշտում եմ, որ պարոն նախագահն ինքնակամ չի հանգել այդ տեսակետին (աշխույժ արձագանք՝ oho՝), որ առկա է նոր հարցում, այլ դա ասվել է դրսից:

Նախագահ. Պարոն պատգամավոր դ-ր Լիբկնեխտ, ես պետք է բողոքեմ իմ գործավարության այդպիսի քննադատության համար (աշխույժ՝ բրավո՝):

1916 – 01 – 18 – DE – 001

Սկզբնաղբյուրը՝ PA-AA/R14089

Արտգործնախարարության գրառումը

1 Նամակ, մտահոգիչ է:

Դ-ր Ռիթերի նամակը՝ ուղղված պրոֆ. Բեքերին, Բոնն

6-րդ և 8-րդ էջերը պարունակում են տեղեկություններ հայերի ու սիրիացիների ջարդերի մասին:

[Վեզենդոնքի նշումը]

Պարոն հյուպատոս Շաբինգերին՝ արաբերեն մասերի ստուգման համար:

Գաղտնի

Արաբերեն մասը 4-րդ էջում պարունակում է (*անընթեռնելի*) արձանագրություն և անվնաս է:

11-րդ էջը թուրքերեն է և գերմաներեն թարգմանությամբ (Ս. Բեք) հնչում է հետևյալ կերպ.

«Ճանապարհի երկու կողմում մենք տեսանք սպանված հայերի: Մենք հաշվեցինք մոտ 5 հոգի: Մեծ մասը կանայք էին: Մեկի ձեռքերի և թևերի մեջ մեխեր էին խփված: Ինչ էլ լինի...»

24.1.16 չորեքշաբթի

[Վեզենդոնքի նշումը]

Նամակը պետք է փոխանցել գաղտնի:

[Արտգործնախարարության նշումը, 3.2.]

Խնդրում եմ գաղտնիության նշում: Ըստ 2-րդ բաժանմունքի տվյալների գաղտնիության նշումը միտումնավոր անել ըստ կից ֆորմուլյարի: (Անընթեռնելի է) [*ի նկատի ունի հետևյալ հանձնարարությունը:*]

[Հանձն. 3.2.]

Կից նամակները պետք է նախարարության մեկ ծրարի մեջ և որպես R.D.S.. (ռայխի տպագիր նյութ) կնքված ուղարկել հետևյալ նշումով՝

Քանի որ կից նամակը պարունակում է ռազմական ու քաղաքական տեղեկություններ, հայրենական շահերի նկատառումով, պետք է նրանց բովանդակությունը գաղտնի պահել:

Բեռլին, 3.2, 1916

1916 – 01 – 24 – DE – 001

Սկզբնաղբյուրը՝ PA-AA/R14089
Հրապարակված՝ Գ և Հ փաստ. 230

Ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին՝ Կոստանդնուպոլսում արտակարգ միսիայի դեսպան Վոլֆ Մետեռնիխից

№ 29

Պերա, 24 հունվարի 1916

Անցյալ տարվա դեկտեմբերի 12-ի №949[71] հրամանագրի վերաբերյալ:

Այստեղի արտաքին գործոց նախարար Հալիլ բեյը ամենավճռական ձևով հերքեց իմ առարկությունները, որ հայերի ստիպողական դավանափոխումները եղել են ասելու արժանի ծավալով: Եղած դեպքերում ստորին պաշտոնյաների կողմից հարձակումների ժամանակ տվյալ մարդիկ պատժվել են:

Նախարարի հավաստիացումները հակասում են համապատասխան զեկուցագրերին, որոնք տարբեր վայրերից և իրարից անկախ աղբյուրներից այդ հարցի առնչությամբ բազմիցս ստացվել են կայզերական դեսպանությունում:

Սամսունի փոխհյուպատոս Քուքհոֆի մանրամասն տեղեկություններով, որոնք հաստատվեցին այլ կողմից, կարելի է եզրակացնել, որ հենց

71. A 35310:

Սև ծովի ափամերձ շրջաններում հայերի իսլամացումը՝ մասամբ համոզելով, մասամբ սպառնալով, ավելի մեծ ընդգրկումով է իրականացվել:

Համենայնդեպս, այլ վայրերում, որտեղ բազմաթիվ հայեր սեփական մղումով, որպեսզի խուսափեն աքսորից ու կարողության բռնագրավումից, վճռել են անցնել իսլամի, իշխանությունները չեն նպաստել և դավանափոխներին, այնուամենայնիվ, աքսորել են: Ըստ երևույթին՝ երկյուղել են, որ զանգվածային դավանափոխումներով կարող է խափանվել հայերի տեղահանման իսկական նպատակը՝ հայ բակչության իսպառ վնասազերծումը:

Այդ ժամանակվանից ի վեր ընտրվեց այլ՝ ավելի նվազ աչքի զարնող ուղի:

Այսպես, Ադանայի հյուպատոս Բյուգեն անցյալ տարվա հոկտեմբերին հայտնեց, որ այնտեղի թուրքական որբանոցի վարիչը քրիստոնյա սաներին հայտնել է, թե օսմանյան որբանոցում քրիստոնյա կրոնի համար տեղ չկա: Ով չընդունի իսլամ, պետք է լքի որբանոցը: Դրան ի պատասխան՝ քրիստոնյա երեխաները լքել են որբանոցը՝ բացառությամբ 14 տղայի, որոնք, հավանաբար, այդ ընթացքում իսլամ են ընդունել:

Այնուհետև հայ պատրիարքը դեկտեմբերի կեսին հայտնել է այստեղ, որ Անատոլիայում տեղահանված հայկական ընտանիքների կին անդամներին, որոնց տղամարդ անդամներն սպանվել կամ անհայտ կորել են, սկսել են խմբերով բաշխել մահմեդական ընտանիքների վրա, որպեսզի նրանց իսլամացնեն: Ռազմական նախարարն էլ է կարգադրել, որ զինվորական ծառայության մեջ եղած բոլոր հայերը պետք է դառնան մահմեդական և արդեն հիմա ստանան մահմեդական անուններ, մինչ իսկական ձևականությունները, պատերազմական վիճակի նկատառումով, կպահպանվեն ավելի ուշ:

Ի վերջո հաստատվում է, որ նաև այստեղ՝ մայրաքաղաքում, թուրքերը հաճախ ազդել են հայերի վրա, որպեսզի նրանք իսլամ ընդունեն: Այնուամենայնիվ, դավանափոխների թիվը՝ այստեղի հայ բնակչության ընդհանուր թվի համեմատությամբ, պարզապես չնչին է: Ըստ երևույթին, մինչև հիմա իսլամ ընդունել են հազիվ մոտ 20 հայ, նրանց մեջ հիմնականում այնպիսիք, ովքեր Անատոլիայում հարստացել են և դավանափոխությամբ փորձում են փրկել իրենց կարողությունը:

Մետեռնիխ

1916 – 01 – 26 – DE – 001

Սկզբնաղբյուրը՝ PA-AA/R14090
Հրապարակված՝ Գ և Հ փաստ. 231

Կոստանդնուպոլսում արտակարգ միսիայի դեսպան Վոլֆ-Մետեռնիխին՝ Հալեպի հյուպատոս Ռոսլերից

№ 236

Հալեպ, 26 հունվարի 1916

Պատճեն[72]

Հալեպից հայերի տեղահանման հարցի վերաբերյալ առանձին մի դեպքի առիթով ոստիկանության մի կոմիսարից իմացել եմ հետևյալը.

Հրամաններ են տրվել՝ տեղահանել յուրաքանչյուր հայի, ով չունի Հալեպում տրված «Թեսքերե նուֆուս» (քաղաքացիության վկայական) և, ի դեպ, առանց նկատառելու ժամանակը, որը նա ապրել է արդեն Հալեպում: Միայն այդպիսի վկայականն էր համարվում ապացույց, որ դրա տերը չի պատկանում աքսորյալների թվին:

Հետևաբար, ենթադրենք, 10 տարի առաջ թուրքական այլ քաղաքից տեղափոխվել է Հալեպ և նրա քաղաքացիության վկայականը (թեսքերե նուֆուս) մեկ այլ քաղաքից է, այդ ընթացքում առիթ չունենալով այդ փաստաթուղթը փոխել է այստեղինի հետ, ապա նա ենթակա է աքսորի:

Այդ հրամանով կառավարությունը ձեռքին զենք ունի՝ այստեղի հայերի մեծ մասին աքսորելու համար: Միայն այստեղ ծնվածներն են ապահով, բայց միայն այնպիսիք, ովքեր կան կառավարության ցուցակներում, որոնք, ինչպես հայտնի է, օտոմանյան հպատակների համար ամենուրեք չէ, որ կազմվում են: Ներգաղթածների, այսինքն՝ նաև մինչև տեղահանումը այստեղ տեղափոխվածների զգալի մասը չի ունենա այստեղի փաստաթուղթը: Ոստիկանությունն զբաղված է ճշտումներով: Այստեղի շատ հայեր էլ արդեն արտաքսվել են այդ կերպ:

[Ռոսլեր]

72. Մետեռնիխը 8.2.1916 (№55) պատճենով ներկայացրել է ռայխսկանցլերին:

1916 – 01 – 26 – DE – 004

Սկզբնաղբյուրը՝ PA-AA/R14090, Կոստ. դեսպ./98

Արտգործնախարարությանը՝ «Արևելքում հանուն քրիստոնեական բարեսիրության» գերմանական օգնության միության տնօրեն Ֆրիդրիխ Շուխարդից

Մայնի Ֆրանկֆուրտ, 26 հունվարի 1916

Թույլ տվեք ինձ՝ երկու օրինակով Ձեզ փոխանցել Ձեր միջնորդությամբ ինձ հասած մեր քույրեր Բեատրիս Ռոհների ու Պաուլա Շեֆերի[73] զեկուցագիրը, քանի որ տեղյակ չեմ, թե արդյոք Դուք նույնից պատճեն կցե՞լ եք Ձեր փաստաթղթերին:

Խորին ակնածանքով՝ Ֆ. Շուխարդ

Հավելվածներ 1, 2, 3 (4-ը՝ անգլերեն)

[Մորդմանի նշումը, 29.12]

Հավելվածները

1. Քույր Բեատրիս Ռոհների նամակը ուղղված դ-ր Շուխարդին 15.12, կցված է:

Բախչե Օսմանիե դաշտավայրում հայերի համակենտրոնացման ճամբար այցելության վերաբերյալ քույր Պաուլա Շեֆերի զեկուցագիրը 16.11.-ին և Բեատրիս Ռոհների այդօրինակ զեկուցագիրը Մամուրի վրանային ճամբար 26.11.-ին այցելության մասին, նաև քույր Պաուլա Շեֆերի նույնպիսի զեկուցագիրը Իզլահիեի 1.12. –ին վրանային ճամբար այցելության մասին:

2. Ծրարը պարունակում է.

Բեատրիս Ռոհների 15.12 նամակը միստր Փիքին (այստեղի սրբատան), Պաուլա Շեֆերի 13.12 նոթերը «Հալեպի ճանապարհին», վերաբերում է հիմնականում հայերին օգնելու համար դրամական միջոցների ձեռքբերմանը:

73. Փոխանցվել է Կոստանդնուպոլսի դեսպանությանը՝ 3.2.1916թ.:

Դրան ավելացրած՝ 1-ին կետում հիշատակված զեկուցագրերի մեկական պատճեն:

Ըստ իս՝ նամակները 2-րդ կետի հավելվածի հետ փոխանցելու համար տարակուսելու ոչ մի առիթ չկա՝ հայերի համակենտրոնացման ճամբարների վիճակը այստեղ բավականաչափ հայտնի է այլ՝ հատկապես բանավոր նկարագրություններից: Մարդասիրական նպատակներին արգելք դառնալու պատճառ չկա:

[Կոստանդնուպոլսի դեսպանությունը՝ ռայխսկանցլերին 29.12]

Խոնարհաբար Ձերդ գերազանցությանն եմ փոխանցում հավելվածով՝ գերմանական օգնության միության տնօրեն պարոն Ֆ. Շուխարդի համար նախատեսված, Մարաշի օգնության միությունում աշխատող Բեատրիս Ռոհների նամակը՝ Ձեր հայեցողությանը թողնելով, թե արդյոք արժե՞ բովանդակությունն ստուգելուց հետո ուղարկել ըստ նշանակության:

[Բեատրիս Ռոհները (Մարաշի կայան) Մորդմանին 15.12][74]

Հարգելի պարոն գաղտնի խորհրդական,

Հավանաբար, Ձեզ կհետաքրքրի կցված զեկուցագիրը, որը Ձեր թանկագին հասցեին եմ ուղարկում՝ խնդրելով բարեհաճորեն այն փոխանցել ըստ նշ., եթե Հալեպում իրենց իրավունք են վերապահում ինչ-որ բան անել ծածուկ, թող ամերիկացիներն էլ օգնեն իրենց ռոքֆելերյան ֆոնդերով:

Արդյոք հնարավոր չէ՞ գերմանացի 2 քույրերի համար ստանալ **պաշտոնական** թույլտվություն՝ **Կարմիր Խաչում** այս զանգվածային թշվառության մեջ աշխատելու համար: Եթե Դուք կկամենաք այդ հարցին մեզ պատասխան ուղարկել Հալեպի գերմանական հյուպատոսություն, ապա մենք անչափ երախտապարտ կլինենք Ձեզ: Մենք կարող ենք երաշխավորել, որ **ոչ մի խոսք** չի լինի քաղաքականության և այլնի մասին[75]:

Խորին հարգանքներով Ձեզ ողջունում է Ձեզ հավատարիմ՝
Բեատրիս Ռոհներ

74.. Մորդմանի նշումը: Եկել է 27.12 կեսօրին՝ ինձ անհայտ ճանապարհով՝ ոչ փոստով, հավելվածների հետ:

75. Մորդմանի նշումը. այնքան էլ հասկանալի չէ:

1916 – 01 – 31 – DE – 001

Սկզբնաղբյուրը՝ PA-AA/ R14090/ MF 7140/18-21
Հրապարակված՝ Գ և Հ փաստ. 234

Ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին՝ Հալեպի հյուպատոս Ռյոսլերից

K № 15 / № 285

Հալեպ, 31 հունվարի 1916

Հավելվածով խոնարհաբար Ձերդ գերազանցությանն եմ փոխանցում Ուրֆայում սարկավագ Քյունցլերի մի նամակի պատճենը, որից բխում է, որ Ուրֆայում մնացած վերջին հայերը հանգամանքների պարտադրանքով իսլամ են ընդունել, նրանց մեջ է նաև դ-ր Արմենակ Աբուհայաթյանը՝ Գերմանիայի Արևելյան միսիայի հոսպիտալի բժիշկը, այնուհետև՝ նաև Ուրֆայում թուրքերի հավաքած որբերը:

Այնուամենայնիվ, դրան հաջորդած բժշկի ձերբակալության մասին ես այլ կերպ հայտնեցի կայզերական դեսպանություն: Նամակից բխում էր, որ նա բոլորովին չի մասնակցել բնակչության դիմակայությանը:

Բոնի իսլամացումների մասին այստեղ մի քանի շաբաթ առաջ հայտնի է դարձել նաև այլ վայրից: Կեսարիայում հրաման է եղել հայերին Սվազ աքսորելու մասին: Այդ աքսորը նշանակում էր մահ: Միգուցե նրանց փրկելու համար մութասարիֆը հրաման է արձակել, ով իսլամ ընդունի, նրան կխնայեն: Շատերն ընդունել են: Բողոքական և կաթոլիկ հոգևորականների մի խումբ հրաժարվել է ընդունել: Ինձ անհայտ կերպով բանը հասավ այնտեղ, որ նրանց աքսորեցին ոչ թե Սվազ, այլ Էրեգլի, որի ճանապարհի վտանգներն առավել նվազ են: Երբ նրանք ճանապարհային որոշ փորձություններից հետո ժամանել են Տարսուս, այնտեղ պատահաբար հանդիպել են բարոն ֆոն Քրեսին՝ Ջեմալ փաշայի հետ Կոստանդնուպոլիս նրա ուղևորվելու ժամանակ: Նա փաշային ծանոթացրել է իրենց գործերին, ինչը նրանց ապահովել է անվտանգ անցում Հալեպ և ապա թույլատրվել է բնակվել մասամբ Դամասկոսում, մասամբ էլ՝ Երուսաղեմում: Տեղեկությունն ստացվել է նրանցից: Նրանց մեջ է նաև բողոքական քարոզիչ Վահրամ Թահմիզյանը, հիմա Դամասկոսում է:

Նույն զեկուցագիրը կուղարկվի Կոստանդնուպոլսի կայզերական դեսպանություն:

Ռյոսլեր

Հավելված

Պատճեն

Ուրֆա, 17 հունվարի 1916

Մեծարգո պարոն հյուպատոս,

Թերևս իրավացիորեն Դուք ինձնից սպասում եք մի քանի տող՝ մեր հոսպիտալի իրադարձությունների մասին:

8 օր առաջ ոստիկանությունը հանկարծակի ձերբակալեց դեռևս կազդուրվող մեր բժշկին: Մեկ ժամ անց նույնը կատարվեց նաև դեղագործի օգնական Հովսեփի հանդեպ, հիմա՝ մահմեդական Յուսուֆ անունով: Երբ տեսա, որ վերադարձնելու փոխարեն ոստիկանությունը նրանց երկուսին էլ բանտ նետեց, երեկոյան ես ուղևորվեցի նահանգապետի մոտ, որտեղ իմացա միայն, որ ձերբակալման հրամանը եղել է ոչ թե Ուրֆայից, այլ՝ հավանաբար Հալեպից: Ապա հաջորդ առավոտյան ես Ձեզ հեռագիր հղեցի: Այդ շաբաթվա ընթացքում ես զարտուղի ճանապարհով պարզեցի, թե որտեղից էր փչում վատ քամին: Որոշ ժամանակ մենք այստեղ ռազմական վերադաս ունեինք՝ Գ., որը հիմա այնտեղ է, նա է տվել հրամանը: Ամբողջ Ուրֆան վրդովված էր երկուսի ձերբակալման պատճառով, որոնցից յուրաքանչյուրը կարող էր ապացուցել, որ ինքը բոլորովին չի մասնակցել խռովությանը: Հարցն այն է, որ Գ.-ն կոպիտ սրիկա է: Եթե նա թերևս գիտենար, որ մեր բժիշկը, որի անունը հիմա Արիֆ էֆենդի է, և նա այս ընթացքում, ինչպես և ամբողջ տեղաբնակ անձնակազմը, մահմեդական է դարձել, երևի թե այդ հրամանը չտար: Ի դեպ, ինձ շատ վշտացրեց արական սեռի սպասարկող մեր անձնակազմի արարքը, ես ամեն ինչ լավագույնս էի մտահղացել, իրենց իսկ համաձայնությամբ, նրանք կցուցակագրվեին որպես **սիրիական բողոքականներ**, դրանով մենք կբավարարեինք այդ կարծեցյալ հրամանի պահանջները, ըստ որի՝ ոչ մի հայ այլևս իրավունք չունի Ուրֆայում մնալ: Բայց հետո հանկարծակի հայտնի դարձավ, որ նրանք ցուցակագրվել են որպես մուսուլմաններ: Բնավորության ուժը մեր բժշկի հատկապես թույլ կողմն է, ինչն էլ այդ գործին անցանկալի ընթացք տվեց: Իհարկե, դեռ հաստատ չէ, թե արդյո՞ք նրանց կվերցնի մահմեդական կրոնական հա-

մայնքը: Բայց, հավանաբար, քանի որ որբեր են, որոնք այստեղ հավաքվել են հիմա այնտեղ գտնվող նախկին գնդապետի (գեներալի) հրամանով, վերջերս բոլորն էլ վերամկրտվել են»՝ տարբեր դայակների հետ:

Ես լսել եմ, որ բժշկին արդեն դատապարտել են, բայց թե ինչ ժամկետով, չգիտեմ:

[Յակոբ Քյունցլեր]

[Ռոզենբերգի նշումը, 24.2]

Մինչև այս զեկուցագրի ստանալը Պերայի կայզերական դեսպանը թուրքական կառավարության մոտ արդեն բողոքներ է ներկայացրել հայերին պարտադրվող դավանափոխությունների առնչությամբ: Հալիլ բեյը վճռականորեն հերքել է բռնի դավանափոխումները: Պետք է ենթադրել, որ կոմս Մետեռնիխը, որին ծանոթ է հյուպատոս Ռյոսլերի զեկուցագիրը, եթե պահը հարմար գտնի, ապա իր անունից նորովի բողոքներ կներկայացնի Բարձր Դռանը:

Այդ իսկ պատճառով՝ առայժմ կցել ակտերին:

1916 – 01 – 31 – DE – 003

Սկզբնաղբյուրը՝ PA -AA/ Կոստ.դեսպ./ 99; 10/12 /չի ուղարկվել/

Ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին՝ Կոստանդնուպոլսի դեսպան Վոլֆ Մետեռնիխից

Պերա, ... հունվարի 1916

Cessat

Ինչպես բխում է մինչև այժմ Ձերդ գերազանցությանն ուղղված կայզերական դեսպանության զեկուցագրերից, իմ պաշտոնում եղած նախորդի պես ես էլ թուրքական կառավարության ուշադրությունը բազմիցս հրավիրել եմ այն մեծ պատասխանատվության վրա, որ նա հանձն է առնում հայ հպատակների հանդեպ գործելակերպով: Չնայած այն ծանր մտահոգությանը, որը մենք բարեկամական խորհրդի կարգով պետք է արտահայտենք ժողովրդի այդ բաղադրամասի տեղահանման

նպատակով արձակված ժամանակավոր օրենքների հանդեպ, դրանք իրականացնելիս կատարված օրինազանցություններն ու անհատ անձանց և պաշտոնյաների չարաշահումները, որոնք՝ արդեն տարագիրների գերմանացի պարտատերերի շահերի նկատառմամբ, մեզ ստիպում էին Բարձր Դռանն անընդհատ խստագույն նախազգուշացումներ անել: Ինչպես ընդհանուր առմամբ արված գրավոր ու բանավոր բողոքներով, օրինակ անցած տարվա հուլիսի 7-ի № 433 Մեծ վեզիրին ուղղված հուշագրով, այնպես էլ առանձին դեպքերի վերաբերյալ բազմաթիվ գրավորհաղորդագրություններով, մենք Բարձր Դռանը, ընդունելով հանդերձ ձեռնարկած միջոցառումների անհրաժեշտ մասը, կասկածներ չթողինք իրավունքի ու օրենքի ոտնահարումների մեր դատապարտումների վերաբերյալ: Երբ, այնուամենայնիվ, մեր նշած հանգամանքներում փոփոխություններ չարձանագրվեցին, ստիպված եղանք համատեղ տուժած գերմանական շահերը պաշտպանելու համար Բարձր Դռանը հայտարարել, որ մենք նրան պատասխանատու կդարձնենք այն վնասի համար, որ կարող են կրել գերմանացի պարտատերերը՝ որպես Թուրքիայի կառավարական մարմինների հակահրավական գործելակերպի անմիջական հետևանք: Բարձր Դռան հանդեպ այդ տեսակետը մենք ի վերջո արտահայտել ենք սեպտեմբերի 13-ի № 6358 և անցյալ տարվա հոկտեմբերի 5-ի № 8102 հայտարարագրերում, որոնք Ձերդ գերազանցությանն են ներկայացվել սեպտեմբերի 14-ի № 6358 և հոկտեմբերի 5-ի № 8102 զեկուցագրերի պատճեններով:

Այդ նոտաներին Բարձր Դուռը պատասխանեց անցյալ տարվա դեկտեմբերի 22-ի վերբալ նոտայով, որից պատիվ եմ ունեցել Ձերդ Գերազանցությանը ներկայացնել № ... մի պատճենը: Այդ նոտայում թուրքական կառավարությունը եզրակացնում է, որ ինքը ոչ մի կերպ պարտավոր չէ հատուցել հայերի հալածանքների հետևանքով տուժած գերմանական կայսրության հպատակների կրած վնասները: Առաջին նախանշանները, որոնք բխում են այդ եզրակացությունից, տրամաբանական ու իրավական տեսակետից ոչ մի քննություն չեն բռնում:

Նոտաների առաջին իսկ փաստարկը, որ երկրի ներքին կառավարման գործողությունները, եթե նույնիսկ առնչվում են այնտեղ ապրող օտարերկրացիների շահերին, չեն կարող դառնալ դիվանագիտական քայլի առարկա, այդ ընդհանրացմանը չի համապատասխանում, քանի որ եթե կառավարման մարմինների այդ գործողությունները կարող են յուրովի

լինել իրավախախտումներ կամ ինչ-որ կերպ հակասում են տվյալ երկրի ներքին օրենքներին, ապա միջազգային իրավունքի համապատասխան չափանիշներով՝ դրանց հետևանքով տուժած օտարերկրացուն տվյալ երկրի կառավարությունից կամ դիվանագիտական ներկայացուցչությունից պետք է տրվի վնասի հատուցում պահանջելու լիազորություն, և այդ պահանջը դառնա դիվանագիտական հայտարարությունների առարկա:

Որպես վնասների հատուցումից հրաժարվելու հիմնական պատճառ Բարձր Դուռն օգտվում է այն դրույթից, որ իրավունքի իրականացմամբ ոչ մի կերպ չի ենթադրվում վնասի հատուցման որևէ պարտավորություն: Այդ դրույթն էլ իր ընդհանրությամբ, իհարկե, իրավական կշիռ չունի և սեփականազրկման հրամանով կարող էր օր. հեշտությամբ չեղյալ համարվել, որն, անկասկած, պետության իրավունքն է և նրան, այնուամենայնիվ, պարտավորեցնում է հատուցել սեփականազրկվածների վնասը:

Նույնքան սակավարժեք է Բարձր Դռան հաջորդ այն փաստարկը, թե թուրքական կառավարությունը հնարավորինս քիչ է պարտավոր վնասներ հատուցել, եթե ինքը ձգտում է ժամանակավոր օրենքով (սեպտեմբերի 13-ի) նվազագույնի հասցնել հայերի աքսորով պատճառած վնասները: Վնասների չափը նվազեցնելու փորձը, իհարկե, նշանակություն չունի, եթե նույնիսկ հաջողված համարվի այն հարցի քննարկման համար, թե արդյոք թուրքական կառավարությունը, ըստ էության, հատուցման պարտավորություն ունի՞:

Ի վերջո, նոտայի նախավերջին պարբերության մեջ պարունակած հրաժարման հիմնավորումը՝ դրանով պայմանավորված ժամկետի երկարաձգմամբ, արտասահմանում ապրող պարտատերերի համար պարունակում է տրամաբանական սխալ. որպես հրաժարման հիմնավորում բերվում է այն, որ վերոնշյալ օրենքն իր հրապարակմամբ իրավական ուժ է ստացել, և այդ իսկ պատճառով օտարերկրացիները, ինչպես նաև տեղաբնակները, պարտավոր են հետևել նրանում նշված ժամկետներին: Այդ հանրահայտ փաստի գրեթե պարզունակ ընգծմամբ Դուռը թեթևակի հուշում է, որ հենց կայզերական դեպանության քայլն է թուրքական կառավարությանը նպատակաուղղված դրդում՝ փոփոխություններ անել վերոնշյալ ժամանակավոր օրենքի կիրառման կարգում:

Այսպիսով, մեջբերված փաստարկները մասամբ բխում են petitio principii-ից, մասամբ էլ շրջանցում են քննարկվող հարցերը: Դրա համար էլ զուրկ են ապացուցման ուժից: Դրանց վերացումից հետո մնում են հետևյալ դրույթները:

1. Յուրաքանչյուր պետություն իրավունք ունի ճնշել իր տարածքում սկիզբ առած խռովարարական շարժումները:

2. Առաջացված վնասի պատասխանատվությունը կրում են թշնամական պետությունները, քանի որ նրանք են հրահրել և աջակցել հայերի ապստամբական շարժումները:

Առաջին դրույթը, ինչպես խոստովանում է հենց Բարձր Դուռը, մենք չենք վիճարկում: Պետք է նաև խոստովանել, որ հայ բնակչության մասերի տեղահանումը պայմանավորված էր ռազմական շահերով և կարող է համարվել պաշտպանական անհրաժեշտ գործողություն:

Երկրորդ դրույթում ճշմարտությանը համապատասխանում է այն, որ հայերի խռովարարական շարժումը հրահրված է թշնամական պետությունների գործելակերպով՝ հատկապես Ռուսաստանի ու Անգլիայի: Բայց չի կարելի համաձայնել, թե դրա համար նշված թշնամական պետություններն են բացառապես պատասխանատու նաև եղած վնասների համար: Իր ապացույցները բերելիս Դուռը կանխամտածված նսեմացնում է նախավերջին սխալ պարբերության համար անհրաժեշտ հիմնադրույթը, թե այն վնասները, որոնց համար ուզում ենք պատասխանատու դարձնել հատուցման համար, խռովարարական շարժման ճնշմանը նպատակաուղղված հայերի տեղահանման անմիջական հետևանք են: Դրա հետ արծածվում է հարցի միջուկային կետը, որն ամբողջ իր բովանդակությամբ Դռան նոտան միտումնավոր սխալ է փաստարկում: Այն կառուցված է այն ենթադրության վրա, թե ուղղակի վնասը, որ կրել են գերմանական կայսրության տուժած հպատակները, ինքնըստինքյան առաջացել է տեղահանման հետևանքով: Դրան հակառակ, մենք անցյալ տարվա սեպտեմբերի 13-ի մեր նոտայում ընդգծված շեշտել ենք, որ դրա պատճառը, անտեսելով նպատակավրեպ վարչական միջոցառումները, պետք է փնտրել գավառական իշխանությունների անօրեն գործելակերպում:

Գործի հետագա քննարկումների ժամանակ մենք պետք է հետամուտ լինենք, որ մենք իրավասու չենք հետազոտել, թե արդյոք անհրաժե՞շտ էր հայերի ապստամբության ճնշման ու կանխման նպատակին հասնելու համար, իրականացված չափերով հայ ժողովրդի տեղահանումը:

Շատ կասկածելի է թվում նաև այն, թե արդյոք օտարերկրյա ներկայացուցչությունն իրավասո՞ւ է հարց առաջադրել, թե արդյո՞ք թուրքական սահմանադրությանը չի՞ հակասում չդատված անձանց վերաբնակեցումն ու նրանց ունեցվածքի վերացումը: Պատգամավորների պալատի

նախկին նախագահ Ախմեդ Ռիզա բեյը սենատում արտասանած իր ճառերից մեկում, որի բովանդակությունը ֆրանսերեն թարգմանությամբ կցված է հավելվածին, հաստատում է այդ հակասությունը: Խոսքը վերաբերում է երկու ժամանակավոր օրենքներին:

1. Անցյալ տարվա մայիսի 14-ի (հին տոմարով) օրենքը, որից պատիվ ունեմ հավելվածին կցել գերմաներեն թարգմանությունը և որի երկրորդ հոդվածը բանակի, բանակային կորպուսի և դիվիզիայի հրամանատարներին իրավունք է վերապահում վերաբնակեցնել այն քաղաքային ու գյուղական համայնքների բնակչությանը, որտեղ նկատվում են խռովարարական շարժումներ:

2. Անցյալ տարվա սեպտեմբերի 13-ի օրենքը աքսորված անձանց պարտքերի ու պահանջների վերաբերյալ, ինչի մասին պատիվ եմ ունեցել Ձերդ գերազանցությանը հայտնել անցյալ տարվա հոկտեմբերի 5-ին № 8102-ով:

Եթե նույնիսկ մենք միանայինք Ախմեդ Ռիզա բեյի կարծիքին, ես այնուամենայնիվ չէի ընդունի, որ մենք լիազորված ենք դա որպես հակաճառություն ներկայացնել Դռանը: Քանի որ նշված վերջին օրենքը, որից կտուժեն գերմանացի պարտատերերը, փաստորեն կվերաբերի նաև թուրք վերաբնակիչ պարտատերերին, և միջազգային իրավական հիմնադրույթներով օտարերկրացին ժամանման երկրում չի կարող հավակնել արտոնյալ դիրքի՝ տեղաբնակների համեմատությամբ: Թերևս այդ միտքն էր ուզում արտահայտել Բարձր Դուռը՝ ապաշնորհությամբ կազմած դեկտեմբերի 22-ի իր պատասխան նոտայում:

Նույն փաստարկով Դուռը կարող էր ի վերջո պայքարել ընդդեմ հետագա առարկությունների, որոնք աչքի են զարնում գերմանացի պարտատերերի շահերը ներկայացնողների տեսակետից, թե հենց դեկտեմբերի 13-ի օրենքը պարունակում է դրույթներ, որոնք զգալիորեն դժվարացնում են օտարերկրացի պարտատերերի պահանջների բավարարումը, եթե գործնականում անհնար չեն դարձնում: Այն կետի պատճառով, որն ընդգծված է անցյալ տարվա հոկտեմբերի 5-ի № 8102 զեկուցագրում, ես կարող եմ վկայակոչել նաև պատճենին կցված վերբալ նոտան, որն այստեղի ավստրո-հունգարական դեսպանություն ավստրո-հունգարական առևտրական պալատի անցյալ տարվա հոկտեմբերի 23-ի եզրակացության հիման վրա ուղղեց Բարձր Դռանը:

Այս հանգամանքներում կարծես թե միայն մի ելք է մնում՝ թուրքական կառավարությանը իրավականորեն պատասխանատու դարձնել այն ուղ-

ղակի վնասի համար, որ կայսրության հպատակները կրել են հայերի վերաբնակեցման հետևանքով: Մենք մեր պահանջները պետք է հիմնավորենք, որ վնասներն առաջացել են ոչ թե վերաբնակեցմամբ, այլ հարձակումներով ու օրինազանցություններով, որոնք թուրքական կառավարության մարմինները պատճառել են միջոցառումներն իրականացնելիս:

Պետք է որ դժվար լինի, եթե ոչ անհնար, յուրաքանչյուր առանձին դեպքի համար դիպուկ ապացույց գտնել այդ հիմնավորման համար; դեպքերի հայ վկաները մեծ մասամբ այլևս կենդանի չեն, մնացյալներն էլ թուրքական մարմինների տված տխուր փորձից հետո իրենց հավաստի վկայությամբ նույնքան քիչ կարող են օգնել մեղադրողին, որքան այլ թուրքահպատակ վկաները: Իրավունքի չարաշահումների ոչ թուրք վկաները մնացել են չնչին թվով: Նրանց վկայությանը թուրքական կառավարությունը, հավանաբար, կհակադրի իր պաշտոնյաների՝ դրանց հակասող ցուցմունքները:

Ընդ որում, թերևս, պետք չլինի ամեն մի առանձին դեպքում ապացուցել գոյացած վնասի ու թուրքական մարմինների գործելակերպի միջև եղած պատճառական կապը: Վերաբնակեցումն իրականացնելիս վերջինների չարաշահումների ու օրինազանցությունների այնքան շատ դեպքեր են ապացուցվել, որ նրանց հաճախականությունն իրավունք է տալիս ենթադրելու, որ նաև այն դեպքերում, որոնց համար չկան համոզիչ մերկացնող փաստեր, առկա է թուրքերի մեղավորությունը: Այդ իսկ պատճառով թուրքական կառավարության առջև պետք է նրա դեմ խոսող ենթադրությունը նրա վիճարկած ամեն մի առանձին դեպքի համար հերքել համոզիչ հակափաստարկներով:

Թուրքական մարմինների չարաշահումներն ու օրինազանցությունները Էրզրումի, Մոսուլի, Հալեպի, Ադանայի ու Տրապիզոնի մեր հյուպատոսությունները քննարկել են ծավալուն, երեք հատորանոց փաստաթղթերով ու զեկուցագրերով, ըստ որոնց հետևյալ կետերը համարվում են ապացուցված ու օրինակներով հաստատված:

Ա/ Օրինազանցություններ աքսորյալների կյանքի դեմ

1. Շատ դեպքերում կառավարությունը տեղահանել է հայ կամ այլ քրիստոնյա տարրեր՝ մայիսի 14-ի օրենքում չունենալով դրա համար անհրաժեշտ նախադրյալներ: Շատ անգամ այդ նախադրյալներն ստեղծվել են նույնիսկ արհեստականորեն, հայերի գրպանները թաքուն խցկել են փամփուշտներ, որոնք այնուհետև ոստիկանության խուզարկումների ժամանակ օգտագործվել են որպես ապացույց՝ խռովարարական տրամադրությունների համար:

2. Թուրքական իշխանությունները հրաժարվեցին ճնշել տարագիրների կյանքին ու ունեցվածքին սպառնացող կազմակերպված հրոսակախմբերին: Բազմաթիվ թուրք պաշտոնյաներ ու զինվորականներ բացահայտորեն խոստովանել են, որ իրենց միջոցառումներով կառավարության հետապնդած վերջնական նպատակը եղել է ոչ թե վերաբնակեցումը, այլ հայերի բնաջնջումը:

3. Թուրք ոստիկանները, ժանդարմներն ու զինվորները՝ մասամբ իրենց վերադասների հրամանով, մասամբ՝ ինքնակամ, մասնակցել են տեղահանվածների սպանությանը: Այդ առումով հատկապես ծանր մեղքի տակ են Դիարբեքիրի վալի Ռեշիդ բեյը, Էրզրումի վալի Թախսին բեյը, Էրզրումի ոստիկանության պետ Խուլուսի բեյը և ոմն Մախմուդ Քյամիլ փաշա: Շատ անգամ պետական պաշտոնյաները նաև անհատ անձանց էլ են հրահրել տարագիրներին ոչնչացնելու:

4. Կառավարությունը ոչինչ չարեց տարագիրների քարավաններում բռնկած վարակիչ հիվանդությունների դեմն առնելու համար:

Բ) Օրինազանցություններ տեղահանվածների ունեցվածքի հանդեպ

1. Թուրք ոստիկանները, ժանդարմները և զինվորները մասնակցել են տարագիրների տների հիմնահատակ հրկիզմանը:

2. Թուրք ոստիկանները, ժանդարմները և զինվորները ակտիվորեն մասնակցել են տարագիրների տների և քարավանների թալանին: Այդ քարավաններն ուղեկցող ժանդարմները, ինչպես նաև այլ պաշտոնյաներ բազմիցս դրամ են շորթել տարագիրներից:

3. Թուրք զինվորականներն ու վարչական պաշտոնյաները մեծ կաշառքի դիմաց խնայել են որոշ հարուստ հայերի: Այդ առումով, օրինակ, ծանր մեղք են գործել Ադանայի վալի Հաքի բեյը և Ադանայի ոստիկանության պետ Ջեմալ բեյը:

4. Տեղահանվածների անշարժ գույքը հանձնվում է միայն թուրքահպատակներին, ավելի ճիշտ՝ միայն մահմեդականներին: Օտար պարտատերերի համար անհնար է ստանալ իրենց պարտապանների անշարժ գույքը: Հողակտորների համար կառավարության սահմանած գինն այնքան չնչին է, որ բացարձակապես անբավարար է նախկին տերերի պարտքերը մարելու համար:

Թուրքական մարմինների վերոնշյալ հակաօրինական գործելակերպն ունեցավ այնպիսի հետևանքներ, որ վերաբնակեցման ժամանակ դրանից տուժածները ամենաշատը հատուցեցին իրենց կյանքով, բոլոր դեպքերում իրենց սեփականությամբ, այնպես որ գերմանացի պարտատերերի համար անհնար է բավարարել իրենց պահանջները՝ իրենց պարտապանների վիճակի պատճառով:

[Լրացում ձեռագրով]

Ես կցանկանայի խորհուրդ տալ թուրքական կառավարությանը՝ իրենց փաստարկները հերքելիս և վերոնշյալ տեսակետները շեշտելիս, թերևս բացառությամբ Բ/3/ -ում նշված կետի, պատասխանել, որ մենք նրանց՝ ինչպես նախկինում, պատասխանատու ենք համարում անմիջական այն վնասների համար, որոնք գերմանացիները կրել են հայերի հալածանքների հետևանքով: Ապա վնասների հատուցման պահանջները պետք է գրանցվեն հյուպատոսական ծառայողների վարած կայզերական հպատակների պահանջների վերաբերյալ ցուցակներում և ներկայացվեն թուրքական կառավարությանը:

Այդ հարցում իմ հետագա դիտողական դիրքի պատճառով՝ խնդրում եմ Ձերդ գերազանցությանը՝ բարեհաճել ինձ ցուցում ուղարկել:

[Դեսպանության նշումը]

Պատգամավոր պարոն դ-ր Գյոփերտին *(որպես ի գիտություն)*
2. Երկու ամիս անց կրկին ներկայացնել:

1916 – 02 – 09 – DE - 001

Սկզբնաղբյուրը՝ PA-AA/R14090
Հրապարակված՝ Գ և Հ փաստ. 235 (առանց հավելվածի) (խմբ. կրճ.)

Ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին՝ Հալեպի հյուպատոս Ռյոսլերից

№ 366 K №18

Հալեպ, 9 փետրվարի 1916.

Ձեզ խոնարհաբար զեկուցում եմ հայ ժողովրդի երկարատև ու դան-

դաղ բնաջնջման առանձին մանրամասների մասին, որոնք ինձ հայտնի են դարձել վերջին շաբաթների ընթացքում:

Նոյեմբերին և դեկտեմբերի սկզբին տեղահանվածների առավել մեծ մասը սփռված էր Աղանայից Հալեպ ձգվող երկաթուղու երկայնքով, հատկապես Իզլահիեում և Կաթմայում: Ռազմական նկատառումներով պետք է նրանց հեռացնեին՝ էտապային ուղին ազատելու և զորքերին վարակիչ հիվանդություններից զերծ պահելու համար: Սկզբում տեղափոխումը կատարվում էր գնացքով՝ դեպի Ռաս ուլ Այն: Բայց քանի որ տարագիրները Ռաս ուլ Այնում դատապարտված էին մահվան և բացի այդ, երկաթուղին չէր կարողանում հաղթահարել հայերի և զինվորների միաժամանակյա տեղափոխումը, ուստի հայերին հետիոտն քշում էին Իզլահիեից և Կաթմայից դեպի Աքթերին, իսկ Աքթերինից դեպի Բաբ: Կաթմայից մինչև Աքթերին տարածությունը մոտավորապես 30 կմ է, իսկ այդտեղից էլ Բաբ՝ գրեթե նույնքան: Այսպիսով, դա համեմատաբար նպաստավոր որոշում էր: Կոստանդնուպոլսում Ջեմալ փաշան պնդում էր, որ հայերը պետք է մնան Աքթերինի և Բաբի միջանկյալ տարածքում: Աքթերինից (կայանից) հնարավոր կլիներ պարենի մատակարարումը: **Բայց այդ կարգադրությունները կրկին չեղյալ են համարվել, և թշնամիներին Բաբից Դեր Զոր են ուղարկել**: Թե ինչ հետևանքներ է դա ունեցել, այդ մասին խնդրում եմ թույլատրել մատնանշելու հյուպատոս Լիթենի կից նամակը, որում նա ինձ գրել էր իր Բաղդադից Հալեպ ուղևորության մասին: Թե ինչպիսի տեսք ունի Մեզբենեի և Դեր Զորի միջանկյալ տարածքը, այդ մասին ես արդեն ներկայացրել եմ մի գերմանացու զեկուցագիրը, նոյեմբերի 16-ի ամսաթվով K. № 109 (J № 2078): Այդ երթուղով դեռ կրկին շարունակվում է դժբախտների հոսքը: Այնտեղ, իմիջիայլոց, Նորին մեծություն իշխան Ռոյսը մոտավորապես հունվարի 12-ին Տիքնե և Սաբխա կայանների միջնաադրածքում, ինչպես նա ինձ պատմեց, տեսել է ճանապարհին ընկած 15 դիակ, մինչդեռ նրա կառապանն ավելին է հաշվել:

Հունվարի սկզբին կարեկից մի մարդ Կաթմայի և Բիթլիսի միջանկյալ ճանապարհից 50 երեխա է հավաքել և բերել է Քիլիս: Նա ցանկացել է նրանց հանձնել կայմակամին, բայց վերջինս չի ընդունել նրանց, այնպես որ նրանք ստիպված են եղել մնալ բաց երկնքի ներքո: Հաջորդ առավոտյան հիվանդ և հյուծված երեխաներից 30-ը սառել են: Այս լուրը ստացվել է հայկական սկզբնաղբյուրներից, բայց ոչ մի հիմք չկա կասկածելու դրա հավաստիությանը:

Մի հայ, որ արիություն ունի ժամանակ առ ժամանակ զգեստափոխված այստեղից Բաբ գնալու՝ տառապյալներին փողով օգնելու մղումով

(գերմանացի քույրերին չի թույլատրվել Հալեպից դուրս գործունեություն ծավալել), տեղեկացնում է, որ հունվարի վերջին իր՝ երկուսուկես օր Բաբում մնալու ընթացքում, 1029 հայ է մահացել: Ամենասարսափելին այն է, որ այդ թշվառներին և հիվանդներին ստիպում էին քայլերթի համար ոտքի կանգնել: Նրանց քշում էին հարվածելով և հրկիզում էին նրանց վրանները: Նա ականատես է եղել, թե ինչպես մի կնոջ մահակով խփելով տանջամահ են արել: Համաձայն այն դեպքերի, որ ավելի վաղ տեղի են ունեցել Հալեպ քաղաքում, պետք է որ այս պատմությունն էլ հավաստի լինի:

Մի քանի ամիս առաջ 3000 կանայք և այրիներ Հալեպից Քիլիս են ուղարկվել, որտեղ նրանց համար համեմատաբար նպաստավոր էր, գոնե կարող էին իրենց կյանքը երկարաձգել: Հունվարի երկրորդ շաբաթվա ընթացքում նրանց այնտեղից աքսորել են:

Նույն զեկուցագիրը կուղարկվի նաև կայզերական դեսպանություն:

Ռյոսլեր

1916 – 02 – 10 – DE – 002

Սկզբնաղբյուրը՝ PA-AA/Կոստ.դեսպ./100

Կոստանդնուպոլսի դեսպանության գլխավոր հյուպատոս Մորդմանին՝ տեղի ամերիկյան սրբատան գանձապետ Փիքից

10 փետրվարի 1916

Հարգելի պարոն Մորդման,

Ես չգիտեմ՝ արդյոք Դուք տեսե՞լ եք քույր Ռոհների կցված զեկուցագիրը՝ թվագրված. Հալեպ, 17-ը հունվարի: Մենք հիմա քույր Ռոհներին և Շեֆերին ուղարկում ենք ամսական 500 թուրքական ֆունտ:

Խորին հարգանքներով՝
Մ. Մ. Փիք
գանձապետ

Հավելված

Սիրելի պարոն Փիք,

Գերմանական դեսպանության միջոցով մենք ստացել ենք հեռագրի

պատասխանը, որում ասված է, որ Դուք մինչև փետրվարի վերջը կկարողանաք 1000 ֆունտ տրամադրել: Գումարն արդեն ճանապարհին կլինի, երբ այս տողերը հասնեն Ձեզ: Հազար ֆունտը ինքնին մեծ գումար է, բայց դա այսօրվա պահանջարկի համեմատությամբ, ինչպես մենք գերմաներեն ասում ենք, մի կաթիլ ջուր է ծովում: Այստեղի ավետարանչական համայնքի քարոզիչ՝ քահանա Հովհաննես Էսքիջյանն այսօր ինձ մոտ էր և խնդրեց, որ Ձեզ ևս մեկ անգամ ներկայացնեմ ամբողջ իրավիճակը: Հաջողվել է կապվել Հալեպի հարավի և հարավարևմտյան տեղամասերի շատ տարագիրների հետ: Ամենուրեք արժանահավատ մարդիկ են, ովքեր կարողանում են կազմակերպել փողի բաշխումը և արտակարգ իրավիճակին բնորոշ խիստ անհրաժեշտ աշխատանքները: Ամենակարևորը ետ մնացածների, ամբողջ ճանապարհներին թափառող երեխաների համար կատարվող աշխատանքն է: Քիլիսում, Ռաս ուլ Այնում, Լեբկայում, Հանում, Հոմսում, Մուարայում, Սելինիժեում, Հալեպում հավաքել են այդպիսի երեխաներին: Այդպիսի օջախները հույսն ամբողջովին դրել են օտարների օգնության վրա: Եթե Դուք այլևս ոչինչ չկարողանաք ուղարկել, ապա նրանք սովամահ կլինեն: Վերջերս մի տղամարդ 30 երեխաների ճամփաներից հավաքել և բերել էր Քիլիս. այնտեղ նրանց մուտքը կառավարության կողմից արգելվել է՝ պատճառաբանելով, որ նրանց համար հոգ տանելու փող չկա: Հաջորդ առավոտյան երեսունին էլ սառած գտել են ճանապարհին: Հիմա Քիլիսում մի փոքրիկ ապաստան է բացվել: Բայց Ձեզնից ամեն օր ինչ-որ բան պետք է ստանան հարյուրավոր մանկական ձեռքեր, այլապես չկա որևէ մեկը, որ դա կարողանա անել: Իսկ հարյուրավորներն էլ դեռ անօթևան թափառում են ճամփաներին: Շատ-շատերը դեռ կարող են փրկվել, եթե անհրաժեշտ միջոցներ լինեն: Բայց դրա համար **ամեն շաբաթ** մեծ գումար է անհրաժեշտ և դա սպասվում է Ձեզնից: Ահազանգեք, Ձեր տրամադրության տակ եղած բոլոր միջոցներով: Հնարավոր չէ՞ մեկ անգամ ևս դիմել այս երեխաներին Ամերիկա տեղափոխելու համար: Այդ կերպ կարող էին հազարավոր երեխաներ փրկվել: Միայն այստեղ՝ Հալեպում, շուրջ 750 երեխա է հավաքվել. նրանց մեծ մասի համար թուրքական կառավարությունը տալիս է հաց և այլ մթերք, բայց հագուստի, մահճակալների և այդպիսի այլ պարագաների համար պետք է այլ ձևով հոգալ: Խոսում են, թե կառավարությունը մտադրություն ունի որբերին տեղափոխել Կոստանդնուպոլիս:

Թե ինչպիսի տեսք ունի Այնթապը, Դուք երևի լսել եք: Ամեն ինչ այնքան մռայլ ու անմխիթար է, որքան միայն հնարավոր է: Այնուհանդերձ առավոտը մոտ է, ինչքան էլ գիշերը ամենամութը թվա: 350 երեխաների խումբը, որ մեզ հանձնել է Ջեմալ փաշան, հնարավորինս բարձիթողի վիճակում էր, իրենց կրած տառապանքներից ամեն օր նրանցից շատերը ուժասպառ տապալվում են:

Ինչպե՞ս է Ձեր որպիսությունը: Մայրաքաղաքում թերևս ամեն ինչ խաղաղ է:

Բարեմաղթանքներս և այլն.

[Բեատրիս Ռոհներ]

Խնդրում եմ մեզ համար գերմանական դեսպանության միջոցով այստեղի գերմանական հյուպատոսին հեռագրով ծածկագրված որոշակի պատասխան ուղարկեք, թե շաբաթական ինչքան գումար կարող ենք ակնկալել:

[Մորդմանի նշումը 15.02]

Պարոն դ-ր Վեբերին. կարծում եմ, որ այլևս կարիք չկա, որ մենք կարգադրություններ անենք: Եթե գրասենյակներում ժամանակ կունենան, ապա լավ կլիներ հավելվածից պատճեն պահել: Այն պարունակում է որոշ հետաքրքիր տեղեկություններ: Մ. Փիքին ես հեռախոսով կտեղեկացնեմ, որ ստացել եմ:

1916 – 02 – 14 - DE – 002

Սկզբնաղբյուրը՝ PA-AA/ R14090/ A4240, pr.15.2.1916

Արտաքին գործերի նախարարությանը՝ Արևելքում հանուն քրիստոնեական բարեսիրության գերմանական օգնության միության տնօրեն Ֆրիդրիխ Շուխարդից

Ֆրանկֆուրտ, 14-ը փետրվարի 1916թ.

Ի լրումն Ձեր վավերագրերի՝ թույլ տվեք Ձեզ փոխանցել վերջերս այստեղ հասած զեկուցագրերը՝ կրկնակի արված պատճենով: Եթե

Դուք դեռ այնտեղ վերցրած լինեք դրանցից մեկ պատճեն, ապա մենք Ձեզ շնորհակալ կլինենք, եթե Դուք դա նշեք մեր զեկուցագրերը փոխանցելու ժամանակ:

Խորին հարգանքներով՝ Ձեզ հավատարիմ՝

Ֆ. Շուխարդ

[Կոստանդնուպոլսի դեսպանությանը՝ արտաքին գործերի նախարարությունից 19.02]

«Արևելքում հանուն քրիստոնեական բարեսիրության» գերմ.օգնության միության ուղարկած հայերի հալածանքների մասին զեկուցագրերի սույն պատճեններն ուղարկվում են (*տիտղ.*) դեսպանին՝ Պերա №128՝ որպես ի գիտություն:

[Շուխարդին՝ արտգործնախարարությունից 19.02]

Թույլ տվեք Ձերդ գերազանցությանը շնորհակալությամբ հաստատել, որ 14.02-ի Հալեպից ուղարկված նամակի հետ ստացել եմ նաև հայերի հալածանքների մասին զեկուցագրերը: Կոստանդնուպոլսի կայզերական դեսպանությունում կտեղեկացվեն զեկուցագրերի բովանդակությանը: Իմիջայլոց պետք է նշեմ, որ ընդունված չէ պատճեններ անել այստեղի գրաքննչությամբ անցնող փաստաթղթերից:

1916 – 03 – 27 – DE – 001

Սկզբնաղբյուրը՝ PA - AA /R 14090
Տպագրված՝ Գ և Հ 255 (կրճ.)

Ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին՝ Կոստանդնուպոլսում արտակարգ միսիայի դեսպան Վոլֆ Մետեռնիխից

№ 131

Պերա, 27 մարտի 1916թ.

Մարտի 17-ի № 213 հրամանով

Հալեպի կայզերական հյուպատոսը, որին առաջարկվել է հեռագրով

զեկուցել, շատ ցանկալի է համարում կարիքավոր հայերի համար շվեյցարական կողմի առաջարկած օգնությունը, ինչպես նաև դոկտոր Վիշերի տեղեկատվական ուղևորությունը, որին նա համարում է այդ նպատակի համար հատկապես հարմար: Համենայնդեպս, նա չի հավատում, որ Շվեյցարական միության մասնակցությունը կայուն բնույթ կկրի, ավելի շատ խոսքը գաղտնիաբար օգնելու փորձի մասին է, այդ դեպքում էլ նա ենթադրում է նաև, որ դոկտոր Վիշերի ճանապարհորդության նպատակակետը Բաղդադն է, որպեսզի նա աննկատ կարողանա անցնել Դեր Զոր, որտեղ բնակություն է հաստատել հայերի մեծ մասը:

Այն հարցը, թե արդյոք թուրքական իշխանությունները կհանդուրժե՞ն հայերի համար նախատեսված Ամերիկայից վերջերս եկած հարուստ դրամական միջոցներով խիստ անհրաժեշտ օգնությունը՝ թեկուզ համեստ չափերով և զերծ որևէ քաղաքական քարոզչությունից, դեռ մնում է անորոշ:

Չնայած բոլոր հակառակ հավաստիացումներին ստեղծվում է այն տպավորությունը, թե կարծես Բարձր Դուռը որոշել է այսուհետ վերացնել նաև տարագիրների մնացորդներին, ովքեր մինչև այժմ խուսափել են թշվառությունից ու կործանումից և ըստ հնարավորին՝ մինչև հաշտության կնքումը վերացնել նրանց: Պարոն Ռոյսլերի վերջին տեղեկությունների համաձայն՝ Հալեպում նախատեսվում է մշտաբնակ հայերի տեղահանումը. ոստիկանությունը գաղտնի տեղեկացնում է, որ իսլամ ընդունողները կազատվեն այդ պատժամիջոցից: Այդպես են վարվել վերջերս Ադրիանուպոլսում: Դրա հետևանքով Հալեպում, ինչպես նաև Ադրիանուպոլսում բազմաթիվ հայեր իսլամ են ընդունել: Այդպիսի վիճակում են նաև Փոքր Ասիայի տարբեր շրջաններում հավաքված հայ տարագիրները, նրանք փորձում են իրենց ապրուստը վաստակել, մնացել են առանց պետական հոգածության, արգելվում է աշխատել, սպառնում են աքսորել ավելի հեռու, և նրանք իրենց փրկությունը համարում են դավանափոխությունը:

Պարոն Վիշերի պարոն Ռոյսլերին ուղղված նամակը՝ հարցաթերթիկի հետ, ուղարկվել է: Մնայալ հարցաթերթիկները ուղարկել եմ Դամասկոսի, Ադանայի, Սմիռնայի ու Մոսուլի կայզերական հյուպատոսական ծառայություններին:

Մետեռնիխ

1916 – 03 – 29 – DE – 002

Սկզբնաղբյուրը՝ PA-AA /R14091
Տպագրված՝ Գ և Հ փաստ. 256

Ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին՝ Կոստանդնուպոլսի արտակարգ միսիայի դեսպան Վոլֆ Մետեռնիխից

№ 139

Պերա, 29-ը մարտի 1916

№ 131 զեկուցագրի կապակցությամբ[76]

Այստեղի ամերիկյան սրբատան խնդրանքով Դամասկոսի կայզերական հյուպատոսից պահանջել էի ներկայացնել իր կարծիքը՝ այդ հաստատություններից մեկի ծրագրած Դամասկոսի կարիքավոր հայերի համար նախատեսվող օգնության մեծ ձեռնարկների հեռանկարների մասին: Գաղափարն այսպիսին էր՝ Դամասկոսում կամ հնարավոր է՝ Բեյրութում, ստեղծել կենտրոնացված տեղ՝ պահեստներով: Անհրաժեշտ դրամական միջոցները և օգնող անձնակազմը պետք է տրամադրեր ամերիկյան կողմը, դրա փոխարեն շատ ցանկալի կլիներ ղեկավարումը վստահել գերմանացի անձի և դրա համար ի նկատի ունեին պաստոր Կունցեին:

Ի պատասխան դրան՝ պարոն Լոյթվեղը զեկուցում է հետևյալը.

«Երեք շաբաթ առաջ մտադրվել էի Դամասկոսում և շրջակայքում գտնվող հայերի համար Դամասկոսում բնակվող գերմանացի միսիոներ Հանաուերի ղեկավարությամբ կառուցել ճաշարան, բաղնիք և որբանոց: Այդ մասին տեղյակ պահեցի Ջեմալ փաշային: Վերջինս ինձ վստահեցրեց, որ ինքն անձամբ կուզենար հնարավորին չափ թեթևացնել հայերի տառապանքները, բայց Կոստանդնուպոլսից խիստ հրահանգ ունի՝ արգելել հայերին օգնելու ձեռնարկներին գերմանական ու ամերիկյան յուրաքանչյուր մասնակցություն, քանի որ ընդդեմ թուրքական կառավարության հայերի ներքին դիմակայությունը կարող է կոտրվել միայն այն դեպքում, եթե նրանց հասկացվի, որ իրենք ոչ մի օտար կառավարությու-

76. A 8373:

նից որևէ աջակցություն չեն կարող ակնկալել: Այնուհետև իմ խնդրանքին, թե ե՞րբ հնարավոր կլինի ինչ-որ բան անել, նա իմ ներկայությամբ Դամասկոսի քաղաքապետին կարգադրեց՝ մի շենք վարձել և այնտեղ ընդունել հայ որբերին: Ջեմալ փաշան պատրաստակամություն հայտնեց իմ միջոցով ստանալ հայերի համար նախատեսված գումարները և բաժանել տալ այն թուրք պաշտոնյաների միջոցով, ովքեր վայելում են նաև իմ վստահությունը:

Այստեղ պետք է նշել, որ թուրքական իշխանությունները փորձում են խանգարել նաև հայկական պատրիարքարանին՝ օգնության հասնելու տառապյալ տարագիրներին, ուստի՝ հայկական պատրիարքարանն ստիպված է այդ նպատակի համար օգտվել օտարների միջնորդությունից: Այսպիսով ստեղծվում է տպավորություն, թե կարծես Բարձր Դուռը մերժում է յուրաքանչյուր բարեգործական օգնություն, որ կողմից էլ որ այն գա:

Մետեռնիխ

1916 – 04 – 01 – DE – 001

Սկզբնաղբյուրը՝ PA -AA/ Կոստ, դեսպ./ 100

Կոստանդնուպոլսի դեսպանության գլխավոր հյուպատոս Մորդտմանին՝ Մալաթիայի կուրանոցի վարիչ Քրիստոֆելից

Սվազ, 1 ապրիլի 1916թ.

Շատ հարգելի պարոն գլխավոր հյուպատոս,

ցավում եմ, որ մեկնելուցս առաջ չկարողացա հայտնել իմ խորին շնորհակալությունը Ձեր ջանքերի և սրտացավ վերաբերմունքի համար: Իմ մեկնելու օրը Ձեզ փնտրեցի Ձեր տանը և դեսպանությունում, բայց, ցավոք, չհանդիպեցի: Հիմա ես օգտագործում եմ առաջին հարմար առիթը՝ Ձեզ երախտիքի մի քանի տող գրելու և ուղևորությունից ստացած իմ տպավորությունները հայտնելու համար: Երեկ հասել եմ այստեղ, և ճանապարհորդությունը մինչև հիմա կարելի է համարել բավականին հաջող:

Կեսարիայի և Սվազի բնակչության հետ փախստականների ընդհարման մասին հաստատող ոչինչ չգտա: Բայց դրությունն անմխիթար է, հատկապես՝ ինչ վերաբերում է հայ բնակչությանը: Էրեգլիում ես հանդիպեցի վերջին հայերին, ովքեր չեն ընդունել իսլամ: Այնտեղից մինչև այստեղ հիմնովին մաքրազատել են, ընդ որում՝ կամ տեղահանել են, կամ դրդել են իսլամ ընդունելու, կամ էլ կոտորել են: Այլևս ոչ մի տեղ չի լսվում որևէ հայերեն խոսք: Գեմերեքում սպանել են հազարավոր մարդկանց: Յոզղաթի շրջակայքում 6 գյուղերի բնակչությանը կոտորել են, բոլորին, նույնիսկ ծծկեր երեխաներին: Ճանապարհին հանդիպեցի դեռ մի քանի հազար հայ ճանապարհաշինարարների (ameli tabur)՝ մեծամասամբ արդեն մահմեդականացած և դեռ շարունակ հարկադրված իսլամ ընդունելու: Վտանգ կա, որ այդ մարդկանց էլ աշխատանքն ավարտելուց հետո ինչ-որ առիթով կսպանեն, ինչպես որ դա արել են Էրզինջանի մերձակայքում: Մի՞թե հնարավոր չէ նրանց կյանքը փրկել: Հնարավոր չէ՞ արդյոք ընդհանրապես ինչ-որ բան անել ժողովրդի կենդանի մնացած մասի համար:

Սվազի մոտերքում՝ ինձ քաջածանոթ մի գյուղում, 500 տղամարդ կային, նրանցից կենդանի են մնացել 30-ը: 18 հոգուց բաղկացած մի ընտանիք հիվանդությունների և ջարդի հետևանքով կորցրել է 14 հոգու: Մյուս բազմանդամ ընտանիքներից կենդանի են մնացել մեկ կամ երկու հոգի: Սրանք ոչ թե առանձին դեպքեր են, այլ գրեթե օրինաչափ է: Սրանից կարելի է ենթադրել զոհվածների թիվը: Մալաթիայում թշվառությունը մեծ է, քանի որ այնտեղ են մնացել տեղահանվածների կանանց ու երեխաների մի հոծ բազմություն: Համենայնդեպս, նրանց թիվը համաճարակների և հիվանդությունների պատճառով խիստ նվազել է: Ես սարսափում եմ այն առաջադրանքից, որն ինձ այնտեղ սպասվում է: Ի դեպ, կանգ չեն առնում նաև բողոքականների առջև: Գոնե Աստվածը շուտ ապավեն լինի:

Ձեզ հավատարիմ և երախտապարտ՝
Էռնստ Յ. Քրիստոֆել (քահանա)

Դերսիմի քրդերն անհանգիստ են և կարծես թե ապստամբություն են ծրագրում: Թուրքերի և հայերի մեջ տարածված է այն կարծիքը, թե գերմանացիներն են ահ ու սարսափի պատճառը:

Կներեք վատ ձեռագրիս համար: Իմ տրամադրության տակ սեղան չկա, և գրում եմ ծնկներիս վրա:

Քրիստոֆել (Մալաթիա)

1916 – 04 – 06 – DE – 011

Սկզբնաղբյուրը՝ PA-AA/ Կոստ. դեսպ. հատոր 172
Տպագրված՝ Գ և Հ փաստ.257 (խմբ. կրճ.)

Կոստանդնուպոլսի դեսպանությանը՝ Հալեպի հյուպատոս Ռյոսլերից

Հալեպ, 6 ապրիլի191թ.

№ 55

Ռաս ուլ Այնում տեղաբաշխված հայերի համակենտրոնացման ճամբարի վրա այս օրերին հարձակվել են այնտեղի ստվարաբնակ չերքեզները և այդպիսի այլ մարդիկ: Անգեն 14.000 բնակիչների մեծ մասին կոտորել են: Մանրամասները բացակայում են և ավելի ուշ կտեղեկացնենք:

Ըստ մեկ ուրիշ սկզբնաղբյուրի, սկզբում խոսք էր եղել միայն 400 ընտանիքի մասին, որոնց բաժանել և կոտորել են:

Ֆելդմարշալ բարոն ֆոն դեր Գոլցի տրամադրած տեղեկատվության համաձայն Ռաս ուլ Այնը կարող է լինել կարևոր էտապային վայր:

Ռյոսլեր

1916 – 04 – 07 – DE – 003

Սկզբնաղբյուրը՝ PA – AA /Կոստ. դեսպ./ 100

Կոստանդնուպոլսի դեսպանությանը՝ Հալեպի հյուպատոս Ռյոսլերից

Հալեպ, 7 ապրիլի 1916թ.

№ 61

№ 57 հեռ. պատասխանը

Մարաշի պատգամավորին տված ներքին գործերի նախարարի հաղորդագրությունները ես համարում եմ աչքերին թոզ փչել: Հալեպում բնակվող հայերի տեղահանումներն այս օրերին շատ ավելի կոշտ են իրականացվում, քան նախկինում: Եթե նախարարը, իրոք, լրջորեն ուզում է կասեցնել այդ ամենը, ապա լավագույն միջոցը կլիներ կոմիսար Աբդուլ Ահադ Նուրի բեյին գործից ազատելը:

Գերմանացի մի ֆրանցիսկանական[76] ինձ խնդրել է միջամտել հոգուտ այստեղի կաթոլիկ հայերի: Սկսվել է նաև նրանց տեղահանումը:

[Ռյոսլեր]

[Կոստանդնուպոլսի դեսպանության պատասխանը (№ 62) 8. 4]

№ 60 և № 61 հեռագրի պատասխանը

Ներքին գործերի նախարարն այսօր կրկնեց իր հավաստիացումները, որ մտադրված չէ տեղահանել Հալեպում բնակվող հայերին և այդ առումով խիստ կարգադրություն է արել: Բացառել են նաև կաթոլիկ հայերի տեղահանումը: Եթե կլինեն տեղական իշխանությունների հակառակ կարգադրություններ, նա խնդրում է տեղեկացնել, եթե հնարավոր է՝ որոշակի դեպքերի մեջբերմամբ:

[Կոստանդնուպոլսի դեսպանությանը՝ Հալեպի հյուպատոսությունից (№ 60) 7.4]

Քանի որ նախատեսվում է հայերին Հալեպից ամբողջովին աքսորել, արդեն հիմա խնդրում եմ բացառություններ անել գոնե գերմանական դպրոցների աշակերտների և աշակերտուհիների համար, թեպետ դպրոցները գիշերօթիկ բաժին չունեն:

[Նոյոտաթի նշումը 11.04]

Ես այս հարցն արդեն քննարկել եմ Թալեաթի հետ, ինչպես դա երևում է Հալեպ ուղարկված 08.04-ի հեռագրից: Այդ գործը դրանով պետք է որ ժամանակավորապես կարգավորված լինի:

[Կոստանդնուպոլսի դեսպանությանը՝ Հալեպի հյուպատոսությունից (№ 64) 10. 04]

№ 62 հեռագրի պատասխանը

Թե ինչպես են նախարարի հրամանները կատարում տեղական իշխանությունները (վալին և տեղահանման կոմիսարները), նկարագրված են հունվարի 26-ի և հունվարի 28-ի իմ՝ № 236 և № 247զեկուցագրերում: Դեռ պատերազմից առաջ Հալեպում ապրում էին առնվազն 6000 հայ. այս օրերին կիրառվող մեթոդների հետևանքով, մշտաբնակ համարվում է 56 ընտանիք: Դա ծաղր է փաստացի տվյալների համեմատությամբ:

76. Կաթոլիկական միաբանության անդամ (ծան. թարգմ.):

Այդ իսկ պատճառով անհրաժեշտ էին հրամաններ, որպեսզի մշտաբնակ լինելու ցուցանիշ համարվեր նաև հարկերի վճարումը, որը այստեղ եղել է առնվազն մեկ-երկու տարի, հիշյալ անձանց վկայականը այդպիսի ապացույցներով կհամարվեր օրինական:

Տեղահանումը բուռն ընթացք ունի: Օրինակ՝ երեկ աքսորվել են 200-ից մինչև 300 մարդ, նրանց մեջ են նաև զինվորների ընտանիքներ: Հրամայված է եղել նրանց տեղավորել մերձակա գյուղերում: Բայց Մարաշում բոլորին քշել են դեպի Դեր Զոր: Նրանք իրավունք չունեին իրենց հետ որևէ բան վերցնել, ուստի նրանց սպասում է սովամահություն:

Նույնիսկ առանձին կանայք և աղջիկներ են փողոցում հարձակման ենթարկվում, և այս իրավիճակն իշխանության օղակներն օգտագործում են կամայական գործողությունների համար: Իսկական մարդադրոս է, և հայերը սարսափում են, որ իրենց կանայք և աղջիկներն աստիճանաբար՝ առանց բացառության կանարգվեն:

Ես կարծում եմ, որ բացառություն կարվի ինչպես կաթոլիկների, այնպես էլ՝ բողոքականների համար:

Լրացում. վալին երեկ հայտարարել է մայոր ֆոն Միկուշին, որ ինքը հայերին արտաքսելու խիստ հրամաններ է ստացել:

[Կոստանդնուպոլսի դեսպանությանը՝Հալեպի հյուպատոսությունից (№ 67) 12. 04]

Հայ Շուքրի Փարթանյանը, որը 1913 թվականից գերմանական դպրոցի աշակերտ է, այսօր անհետացել է: Նրա ծնողները, որ Հալեպի մշտաբնակ հացթուխներ են, այսօր աքսորվել են:

[Կոստանդնուպոլսի դեսպանության պատասխանը (№ 64) 15.4]

Այսօր կրկին ներքին գործերի նախարարության ուշադրությունը հրավիրեցի Հալեպում կատարվող իրադարձությունների և նրա հրամանների նկատելի թերակատարման վրա: Թալեաթ բեյը վալիին կրկին ցուցում տվեց, որ Հալեպից տեղահանեն միայն հայերի արտաքսման վերաբերյալ վերջին հիմունքներով բնակություն հաստատած հայերին, իսկ կաթոլիկներին ու բողոքականներին բացառեն:

[Կոստանդնուպոլսի դեսպանության պատասխանը (№ 72) 17. 04]

Ի լրացում № 64 հեռագրի

Վերջին օրերին աքսորվել են լատինական կաթոլիկ ընտանիքներ,

նրանց մեջ են ներքոհիշյալները, ովքեր ըստ ծխական համայնքի մատյանների ավելի քան 10 տարի մշտապես բնակվում են Հալեպում: Ալեքսանդրո Հեկտեր, Սյուզան Քաթաց, Կոպրակի, Արթին Մյուսաթի ..... քղերմերգի:

[Կոստանդնուպոլսի դեսպանության նշումը 20. 04]

Հաղորդագրություն Թալիաթին՝ Aide Memoire–ի հետ միասին:

1916 – 04 – 15 – DE – 001

Սկզբնաղբյուրը՝ PA – AA /Կոստ. դեսպ./ 100

Կոստանդնուպոլսի դեսպանության խորհրդական Վեբերի գրառումը

Կոստանդնուպոլիս, 15 ապրիլի 1916թ.

G. A.

Պարոն Շտրաուբինգերն այսօր ինձ խնդրեց՝ Ձերդ գերազանցությանը հաղորդել, ինչ ինքը ըստ հավաստի և ուղիղ կապով հասած լուրերի, իմացել է Հալեպից: Այստեղի հայկական (գրիգորյան և կաթոլիկ) բնակչությանը կրկին սպառնում է տեղահանություն և այն ծայրահեղ վատ վիճակում է, և որ երրորդ մարդու միջոցով իր ականջին հասել է, թե Անգորայի պաշտպաններն էլ են սկսել աքսորել այնտեղի հայերին (հիմնականում կաթոլիկ):

Պարոն Շտրաուբինգերն ընդ որում հիշեցրեց, որ Բարձր Դուռը Ձերդ գերազանցությանը մի քանի շաբաթ առաջ հանգստացնող հավաստիացումներ է արել:

[Նոյոռաթի նշումը 18. 04]

Այս գործը ես Թալեաթ բեյի հետ քննարկել եմ հազիվ ապրիլի 15-ին, լրիվ (*վերծանված չէ*), առարկությունը ոչ մի ազդեցություն չի ունենա: Թալեաթ բեյը հաստատեց, որ ուզում է նոր կարգադրություններ անել:

Դ-ր Շտրաուբինգերը բանավոր կտեղեկացվի:

1916 – 04 – 16 – DE – 001

Սկզբնաղբյուր՝ PA-AA /Կոստ. դեսպ./ 100

Կոստանդնուպոլսի դեսպանության խորհրդական Նոյոաքին՝ Էրզրումի հյուպատոս Շուլենբուրգից

Էրզինջան, 16 ապրիլի 1916թ.

Սիրելի Նոյոաք,

Պատերազմական անցուդարձն ինձ դարձրել է տարբեր երիտասարդ աղջիկների պաշտպան, աշխատանք, որից միայն վրդովմունք է առաջանում, բայց ոչ երբեք «բավականություն»: Նրանից մեկը՝ օրիորդ Անա Չիլինգարյանը, երիտասարդ հայուհի Էրզրումի մի շատ լավ ընտանիքից, հայերի տեղահանման ժամանակ, այսինքն՝ մինչև ինձ, դիմել է մեր հյուպատոսությանը և հայցել է պաշտպանություն: Հորը քշել են Հալեպի վիլայեթ և նա Սերուջում է: Երբ վերջերս Էրզրումը կորցրին, Մահմուդ Քյամիլ փաշան, աստված ողորմի նրան, մեզ ստիպեց մեր հյուպատոսության պաշտպանության ներքո գտնվող որոշ հայերի մեզ հետ տանել: Երբ ես նրանց բարեհաջող մինչև Սվազ ուղարկեցի, իմ վրա հեռագրերի տեղատարափ սկսվեց, որ օրիորդ Չիլինգարյանն ուզում է հարմար առիթն օգտագործել (հիվանդացած մի գերմանացի բժիշկ է վերադառնում) գնալ Կոստոլի և այնտեղից էլ՝ Գերմանիա: Թե ինչն է նրան ձգում դեպի Գերմանիա, ես այդպես էլ չկարողացա պարզել, ըստ երևույթին՝ «կրթությունը շարունակելը», քանի որ Էրզրումում նրա ուսումնատենչության համար բավարար պայմաններ չկան: Նա պետք է փնտրի բարձրակարգ պանսիոն կամ դրա նման մի բան: Նա լավ խոսում է ֆրանսերեն, բայց ոչ մի բառ՝ գերմաներեն: Բայց իսկական դժվարությունը բոլորովին այլ է: Մինչև հայերի տեղահանումները Չիլինգարյանների ընտանիքը շատ ունևոր էր, գրեթե՝ հարուստ, թե ինչպիսին կլինեն նրանց ֆինանսական հնարավորությունները պատերազմից հետո, միայն Աստծուն է հայտնի, համենայնդեպս, հիմա նա ոչինչ չունի: Ուրեմն Գերմանիայում մնալու նրա ծախսերը պետք է ինչ-որ մեկն ստանձնի, եթե օրիորդ Չիլինգարյանն իսկապես ուզում է այնտեղ գնալ: Ես մտածում էի այդ երիտասարդ օրիորդին, իսկ նա իրոք երիտասարդ օրիորդ է՝ մի քիչ a la Erzeroum, բայցևայնպես, բարեկիրթ երիտասարդ աղջկան Գերմանիայում ծանոթացնել բարեպաշտ մի ընկերության, որոնցից շատ կան, ովքեր հայերին փրկելը իրենց գործն են համարում: Այդ միություններից միայն մեկի հասցեն գիտեմ, «Գերմանական օգնության միությունը»՝ Մայնի Ֆրանկֆուրտում, Ֆյուրստենբերգերշտրասե 151, որի տնօրենն Շուխարդն այս պահին պետք է որ Կոստոլիսում լինի: Իմ խնդրանքը Ձեզ այն է, որպեսզի Դուք օրիորդ Չիլինգարյանին երաշխավորեք պարոն Շուխարդի առջև՝ նրան ինչ-որ ձևով օգնելու համար, եթե դրա անհրաժեշտությունը լինի, ինչպես օր. ճամփորդական անձնագիր ճարելը, կամ նրան որևէ բարի խորհուրդ տալ, եթե Դուք դա կարող եք: Հավանաբար, Դուք մի անգամ նրան կանչել կտաք (նա արդեն երևի Կոստոլիսում կլինի, երբ Դուք այս նամակն ստանաք, և կբնակվի իմ քարտուղար Վերթի մոր մոտ) և նրա հետ կքննարկեք, թե իրականում ի՞նչ է նա ցանկանում Գերմանիայում: Այս երիտասարդ աղջիկը սիրունությամբ չի փայլում, բայց ամբողջ աշխարհին իրենով հետաքրքրելու յուրօրինակ տաղանդ ունի: Դուք բարի գործ արած կլինեք, եթե նրա համար մի քիչ հոգաք: Այս ընթացքում ես կգրեմ նաև Գերմանիայում ապրող իմ բազմաթիվ ազգականներին, հավանաբար նրանք էլ ինչ-որ բան կմտածեն: Ցավոք, մայրս ծանր հիվանդացել է, և ես նրան չեմ կարող դիմել:

Ես այս նամակը գրում եմ այսպես ասած՝ ասպանդակի վրա, այսինքն՝ ես վաղը առավոտյան շուտ ձիով Սամսուն եմ մեկնում: Եթե եղանակը լավ լինի, ինչը քիչ հավանական է, ձիով գնալը հաճելի կլինի: Ես գնալու եմ Քարասունդով, ապա ծովափով: Նամակս ավարտում եմ հեռագրային ոճի մի քանի նշումներով, որոնք Ձեզ, հավանաբար, կհետաքրքրեն:

Վեհիբ Փաշան բոլորիս վրա լավ տպավորություն է թողնում: Բայց նրա գործը շատ բարդ է լինելու, հին բանակը շատ վատ վիճակում է, ուժասպառ, ընկճված և այլն, դրան հակառակ՝ ռուսները մեծ առավելություն ունեն:

Ծովափն անմխիթար տեսք ունի: Տրապիզոնը երևի կկորցնեն: Իլունգերի գունդն անում է, ինչ կարող է, բայց արդեն ծանր կորուստներ կան: Ես ափսոսում եմ գեղեցիկ Տրապիզոնի համար՝ իմ գողտրիկ սերը այս վատ երկրում: Ըստ էության, Տրապիզոնի ամբողջ վիլայեթն է հիասքանչ, այցելության արժանի:

Իմ խնդիրն այստեղ (կապը կովկասցիների հետ) ամենալայն շրջանակներում ժողովրդականություն չունի, դրա համար էլ ստիպված եմ

«տանդեմ» նշանաբանով աշխատել, ինչը գործը դարձնում է գրավիչ, բայց ոչ զվարճալի: Այս պահի դրությամբ իմ բարձր կառավարությունն ինձ առանց փողի է թողնում: Ժամանակին Բեռլինում առաջին վեց ամիսների համար 5 միլիոն տրամադրելուց հետո (իհարկե թղթի վրա), որից մինչև հիմա՝ այսինքն 10 ամսում, հազիվ մեկն եմ ստացել, այժմ հոսքը բոլորովին դադարել է: Դե վերջում էլ կսնանկանանք:

Մոտ ժամանակներս այստեղ սպասում են Էնվեր Փաշային, քանի որ ես Սամսուն եմ մեկնելու, բախտ չեմ ունենա նրան և նրան ուղեկցող գերմանական խմբին տեսնելու: Ռազմական նախարարին այստեղի բանակը հատկապես չի սիրում: Դա անընդհատ ասվում է, նույնիսկ իմ՝ արտասահմանցուս ներկայությամբ: Պատճառն, ըստ երևույթին, անցյալ տարվա ձմեռային արշավանքի ժամանակ նրա վերաբերմունքն է եղել (սեփական ձեռքով սպաներին գնդակահարելը և այլն):

Այն, որ մեզ՝ գերմանացիներիս, կուզենային գրողի ծոցն ուղարկել, հատկապես Կոմիտեի շրջանակներում, Ձեզ հազիվ թե զարմացնի: Ժողովրդականություն հազվադեպ են վայելում նաև դպրոցական ուսուցիչները: Դրա փոխարեն հասարակ ժողովուրդը մեզ հարգում է և անում է ամեն բան՝ մեզ օգտակար լինելու համար: Գերմանացի սպայի առջև ստորաքարշ երկրպագուն խոնարհվում է մինչև գետին:

Այս Անատոլիան սարերի ծով է, որոնց արանքներում տարածվում են փոքրածավալ բարեբեր դաշտեր: Սարերը լերկ են և հանածոներից աղքատ (գոնե այդպես թվում է): Ջուր ամենուրեք չափազանց շատ կա: Բնակչությունը սարսափելիորեն նոսր է և հայերի տեղահանման հետևանքով ավելի է նվազել: 100 տարվա տքնաջան աշխատանքի և մի քանի հարյուր միլիարդների ներդրման պայմաններում Անատոլիան կարելի է վերածել մեծ Տիրոլի: Ես երբեք չեմ լսել, թե Տիրոլը հարուստ երկիր է:

Այդ նպատակին կարելի է հասնել միայն բռնապետության միջոցով, ասել է թե՝ մի կառավարության միջոցով, որը ժողովրդի հանդեպ գիտակցաբար անարդար կվարվի: Օրինակ այստեղ մարդու ամենասուրբ իրավունքն է, որ ամեն մի ոչխարի գլուխ կարող է պատահած ծառը կտրել: Դա պետք է ուժով վերացնել, եթե ուզում են սարերն անտառապատել:

Հայերի անցյալ տարվա ջարդերը մինչև 99/100 սուտ են, բխում են այս ժողովրդի սարսափելի վախկոտությունից և արևելցիների չափազանցման մոլուցքից: Իհարկե, մեծաթիվ մարդկանց սպանել են, ավելի շատ զոհվել են ճանապարհին, մեծ ջարդեր քիչ են պատահել:

Հողակտորներից քշված հայ գյուղացիները հիմա ստիպված են մանրավաճառ դառնալ: Թուրքիան պետք է այդ ռուսական «ռայոնը» բնակեցնի, եթե ուզում է իր ժողովրդին պաշտպանել այդ վաճառականների շահագործումից:

Ես Ձեզ խնդրում եմ, հարմար առիթի դեպքում ինձ երաշխավորել բարոնուհու առջև, եթե նա ինձ դեռ հիշում է և սրտանց ողջունում եմ նաև նրան:

Ձեզ միշտ հավատարիմ՝

Ֆ. Վ. Շուլենբերգ

Ամենաջերմ ողջույններս նաև դեսպանության պարոններին:

1916 - 04 - 27 - DE - 001

Սկզբնաղբյուրը՝ PA-AA /R1 4091.
Տպագրված՝ Գ և Հ փաստ. 260

Ռայխսկանցլեր Բեթման՝ Հոլվեգին Հալեպի հյուպատոս Ռյոսլերից
K № 47/ № 1189

Հալեպ, 27 ապրիլի 1916թ.

Հայերի տեղահանման, դրա հետևանքների և ուղեկցող երևույթների մասին ես վերջապես զեկուցել եմ՝ այս տարվա փետրվարի 9-ին K 18 և այս ամսվա 12-ին № 1033 համարով: Կոստանդնուպոլսի դեսպանությունն եմ ուղարկել քույր Ռոհների լրացրած, պարոն Վիշերի Բազելի համար նախատեսված հարցաթերթիկը: Ժողովրդի բնաջնջումը դեռ շարունակվում է: Բարեխղճորեն ներկայացված հետևյալ մանրամասներից մի քանիսը բացահայտում են, որ նախատեսված է ծրագրված բնաջնջում:

1) Փետրվարի կեսին բոլոր երեխաներին Քիլիսից Բաբ են ուղարկել, երբ արդեն ավելի վաղ կանանց քշել էին ավելի հեռու:

2) Ապրիլի 16-ին Մաարայում և մերձակա գյուղերում «բնակություն հաստատած» հայերին, ովքեր մեծամասամբ սովից ու զրկանքներից արդեն խիստ ուժասպառ էին եղել, քշել են Դեր Զորի ուղղությամբ:

3) Ապրիլի 19-ին հայտնի դարձավ, որ հրամայվել է՝ Մարաշում մինչ այդ խնայված 9000 հայերին, նախկինում եղած 24.000-ից մնացածնե-

ին, ևս աքսորել: Այդ մարդիկ դեռ առաջին տեղահանումների ժամանակ, ի կատարումն հրամանի, պատրաստ էին տարագրման, վաճառել էին իրենց վերջին ունեցվածքը և այդ ժամանակվանից ի վեր զրկանքներից ուժասպառ էին եղել: Սկսվել է հրամանի իրագործումը: 120 ընտանիք մինչև ապրիլի 25-ը Այնթապ են ժամանել, որտեղից Բիրեջիկով դեպի Դեր Զոր պետք է գնան: Ամսի 26-ին և 27-ին Այնթապում սպասվում է երկրորդ՝ ավելի մեծ քարավանը:

4) Ինչպես իմացա Դեր Զորից եկած թուրք սպայից, Դեր Զորի մութասարիֆը հրաման է ստացել՝ այնտեղ թողնել միայն այնքան հայերի, որ համապատասխանի տեղի բնակչության 10%-ին, մացածներին ուղարկել Մոսուլ: Դեր Զորի բնակչությունը երևի թե 20.000 է: Այնտեղ ուղարկված հայերի թիվը առնվազն 15.000 է, այնպես որ 13.000-ին պետք է այդտեղից քշեին: Մութասարիֆ Զուադ բեյը՝ մի մարդասեր անձնավորություն, որը տարիներ շարունակ ապրել է Եգիպտոսում, այն սակավաթիվ թուրք պաշտոնյաներից էր, որոնք փորձում էին մեղմել կառավարության դաժան հրամանների կատարումը, չնայած դրան սպան այն կարծիքին էր, որ այդ թշվառների մեծ մասին պետք է քշեն, և նրանցից քչերը կհասնեն Մոսուլ: Ինչքա՞ն կթողնեն քոչվորները, եզդիներն ու քրդերը և քանի՞սը կմնան սովից, զրկանքներից և հիվանդություններից հետո:

Ապրիլի 19-ի լուրերը վկայում են, որ Հալեպի և Դեր Զորի միջակայքում եղած յուրաքանչյուր կայանում՝ այսինքն Մեզբեհեում, Աբու Հրերեում, Համամում, Սաբխայում օրական 50-100 մարդ են մեռնում, նրանց մեծ մասը՝ սովից:

5) Ապրիլի 6-ին այստեղ հայտնի է դարձել, որ Ռաս ուլ Այնի մոտերքում կրկին ջարդեր են եղել: Լուրերից մեկը հաստատում է, որ 14.000 հոգուց բաղկացած համակենտրոնացման ճամբարի մեծ մասին կոտորել են, մինչդեռ ըստ մեկ այլ լուրի՝ 400 ընտանիքի ճամբարից տարել և ճանապարհին սպանել են: Ըստ մի գերմանացու հավաստի տեղեկությունների, որը բազմաթիվ օրեր էր անցկացրել Ռաս ուլ Այնում ու մերձակայքում և վերադարձից հետո ապրիլի 22-ին ինձ այցելեց, ես պետք է հետևյալը ենթադրեմ: Ճամբարում դեռ կան առավելագույնը 2000 տարագիրներ: Մեկ ամիս շարունակ ամեն օր կամ գրեթե ամեն օր 300-500 տարագիրների ճամբարից տարել են Ռաս ուլ Այնից մոտ 10 կմ հեռու և սպանել են: Դիակները նետել են գետը, որը Փոքր Ասիայի Քիփերչի մեծ քարտեզի վրա, Նիզեբինի թերթ (D VI), նշված է որպես Դիրջիբ էլ Հա-

մար և տարվա այդ ժամանակ շատ ջրառատ է: Մի թուրք սպա, այդ դեպքերի առնչությամբ Ռաս ուլ Այնի կայմակամից բացատրություն է պահանջել, և նա շատ հանգիստ պատասխանել է, որ ինքը գործում է հրամանի համաձայն: Այդ տեղանքով է անցնում VI բանակի էտապային ուղին՝ Ռաս ուլ Այնից դեպի Մոսուլ: Քանի որ այնտեղ երկու կամուրջ կառուցելու անհրաժեշտություն էր առաջացել, բայց VI բանակը բավարար պատրաստի ուժեր չուներ դրա համար, ապա մոտավորապես ապրիլի 15-ին IV բանակը սակրավորների՝ սիրիական մահմեդականներից կազմված նախապատրաստող մի գումարտակ է ուղարկում: Այդ մարդիկ, որոնք երկու օրում Դամասկոսից Ռաս ուլ Այն են տեղափոխվել, ոչինչ չգիտեին տարագիր հայերի վիճակի մասին և ճանապարհին պետք է որ որևէ ազդեցության ենթարկված չլինեին, տեղ հասնելուն պես զարհուրել են: Նրանք այն կարծիքին էին, թե զինվորները հայերին մորթել են: Այսպիսով կրկին հաստատվում է այն ենթադրությունը, որ այդ գործն ի կատար է ածվել **ըստ հրամանի**: Համենայնդեպս՝ այդ տեղանքում տարածված կարծիք է: Որպես դահիճ ծառայել է Ռաս ուլ Այնի մերձակայքում բնակություն հաստատած չեչենների չերքեզական տոհմը:

6) Փետրվարի վերջին, մարտի սկզբին Հալեպի աշխատանքային ջոկատի հայերին հասկացրին՝ մասամբ հաջողությամբ, դավանափոխ լինել և իսլամ ընդունել: Մարտ ամսվա ընթացքում պատրաստվեցին Հալեպի հայերի ցուցակները՝ որպես տեղահանման նախապատրաստություն, և ոստիկանների միջոցով լուր էին տարածում, որ աքսորից միակ փրկությունը իսլամ ընդունելն է: Երբ դրանից հետո մի շարք ընտանիքներ դավանափոխության պատրաստակամություն հայտնեցին, նրանց հետ վարվում էին այնպես, կարծես թե այդ խնդրանքի թույլտվությունը հատուկ ողորմածություն է: Այսինքն՝ ավելի շուտ խորշում էին, կարծես թե սարսափում էին տհաճ տպավորություններից, կամ թերևս դավանափոխության կոչերը վերագրում էին այլ պատասխանատու ատյաններին կամ պարզապես ուզում էին հաճույք ստանալ՝ հայերի հետ խաղալով, ինչպես կատուն մկան հետ:

7) Մարտին և ապրիլի առաջին կեսին Հալեպում կազմակերպվեց ամենաղաժան որսը ոչ միայն դրսից եկած և այստեղ թաքնված հայերի հանդեպ, այլև սկիզբ դրվեց այստեղ մշտապես բնակվող հայերի տեղահանմանը: Փողոցում հարձակվում էին նաև առանձին կանանց և աղջիկների վրա և օգտվում էին կառավարության օղակների կամայականության այս իրա-

վիճակից: Եվ զարմանալի չէր լինի, եթե իրենց կրոնն ու իրենց կանանց պատիվը վտանգած հայերը դիմեին հուսահատական գործողությունների:

Ապրիլի 18-ից ի վեր Հալեպում մի քիչ հանգիստ է, ընդ որում՝ կարծես թե կայզերական դեսպանության միջամտությամբ, որը ներքին գործերի նախարարին դրդել է հրաման տալ տեղի իշխանություններին, որպեսզի նրանք չաքսորեն տեղաբնակներին, ինչպես նաև կաթոլիկներին ու բողոքականներին: Այն ձևը, որով վալին սկսեց դադարը, համաձայնություն էր այստեղի հոգևորականությանը՝ Զատկի տոներին ներողամտություն դրսևորել:Մարդիկ դեռ չեն համարձակվում հուսալ, թե ներողամտության այդ շրջանը կարող է երկար տևել կամ, որ վտանգն իսպառ վերացել է: Չնայած համաձայնությանը՝ հիմա էլ ձեռի հետ աքսորում են առանձին մարդկանց:

Նույն զեկուցագիրը կուղարկվի նաև կայզերական դեսպանություն:

Ռյոսլեր

1916 – 05 – 10 – DE – 002

Սկզբնաղբյուրը՝ PA A– AA /R1 4091

Արտգործնախարարությանը՝ *(լրիվ տիտղոսը)* Ֆրիդրիխ Շուխարդից

Մայնի Ֆրանկֆուրտ, 10 մայիսի 1916թ.

Մենք մեզ իրավունք ենք վերապահում՝ մեր քույր Կլարա Պֆայֆերից վերջերս ստացած զեկուցագրի պատճենն ուղարկել Ձեզ՝ Ձեր փաստաթղթերին կցելու համար:

Հավելված

Կարճ տեղեկագիր՝ Մամուրեթ ուլ Ազիզի հայերի վիճակի մասին:

Երբ 1914թ. սկսվեց պատերազմը, բոլոր տղամարդիկ զորակոչվեցին, գնացին նաև երիտասարդ հայ տղամարդիկ՝ թուրքական կառավարությանը ծառայելու համար, քանի որ ի վիճակի չէին փրկագնով ազատվել զինվորական ծառայությունից: Մենք այն ժամանակ չէինք կռահում, թե ինչ է դրան հետևելու: Առաջին ամիսներն անցան լավ,

մինչև որ 1915թ. սկզբներին մեզ մոտ լուրեր հասան Վանի շրջակայքում հայերի հեղափոխական շարժումների մասին: Մեզ մոտ անմիջապես հայ զինվորների ձեռքից վերցրին զենքը, նրանց տեսակավորեցին ըստ զինվորական ծառայության, այսինքն՝ նրանց պետք է օգտագործեին այլ աշխատանքների համար, ինչպես օրինակ ճանապարհաշինության և այլն: Ավելի տարեց հայերը, որոնք իրենց կյանքում արդեն շատ բան էին տեսել, այդ ժամանակ շատ լուրջ մտավախություններ ունեին:

Այդ ժամանակ մենք տարբեր տեղերից լսում էինք հայերի տեղահանումների մասին: Բայց մեզ մոտ դեռ համեմատաբար հանգիստ էր, մինչև որ մայիսի 1-ին հանկարծակի ձերբակալվեցին մի քանի տղամարդիկ, որոնց մեծ մասը պատկանում էր բարձր դասին: (Մեր ուսուցիչներից մեկն էլ էր դրանց մեջ, բայց պարոն Էհմանին հաջողվեց նրան մի քանի օրից հետո ազատել): Տարբեր տներում խուզարկումներ էին անցկացվում, որովհետև հեղափոխական գրքեր և գրավոր նյութեր էին փնտրում: (Մենք լսում էինք նաև, որ իբր նաև գտել են): Դրանից հետո շատ չանցած հայտարարվեց, որ հայերը պետք է իրենց զենքերը մինչև որոշակի օրը հանձնեն: (Դրանք զենքեր էին, որոնք շատ դեպքերում առանձին մարդիկ ինքնապաշտպանության համար պահում էին տանը կամ ուղևորության ժամանակ իրենց հետ էին վերցնում:) Պետք է նաև նշվի, որ կառավարության կողմից կար զենք կրելու թույլտվություն: Որքան որ հիշում եմ, այդ հայտարարությունն արվեց հունիսի սկզբին՝ մինչև 15-ը: Հայ բնակչության մեջ այդ առնչությամբ մեծ հուզումներ եղան: Յուրաքանչյուր ոք, ով զենք ուներ, չէր ուզենա այն հանձնել, քանի որ սարսափում էր վատթարագույնից: Որոշ թվաքանակ հանձնվեց, բայց շատերն էլ թաքցրին: Այդպիսով կառավարությունը ձեռնարկեց պարտադիր միջոցառումներ: Որոշ մարդկանց բռնեցին, տանջեցին, ծեծեցին: Նրանցից պահանջվում էր հայտնել, թե ովքեր զենք ունեն, և թե որտեղ են դրանք թաքցված: Այդ կտտանքներից առանձին տղամարդիկ տանջամահ եղան: Ամբողջ գյուղեր զինվորները շրջափակեցին, գյուղի տղամարդկանց շատերին կապոտեցին և ամենասարսափելի ձևով ծեծեցին, որովհետև չէին հավատում, թե ամբողջ զենքը հանձնված է: Այդպիսի ծեծերի արդյունքում դեռ շատ բան ի հայտ եկավ, նույնիսկ որոշ ռումբեր հայտնաբերեցին: Բայց եթե նույնիսկ ամեն ինչ հանձնված էր, այդ տեղերում էլ մարդիկ դեռ ոչ մի հանգիստ չունեին: Պատմում էին, որ հայերից ոմանք, ովքեր այլևս զենք չունեին, գնում էին այն, որպեսզի հանձնեն և ազատվեն: Թե այդ ժամանակ ինչպիսի տառապանքներ են կրել առան-

ձին մարդիկ կամ ամբողջ գյուղեր, դժվար է բառերով արտահայտել: Գերմանացի քույրերն իրենք էլ էին հայերին հորդորում հանձնել զենքերը, եթե որևէ զենք դեռ թաքցրել են, քանի որ մենք հուսով էինք, թե դրանով թշվառությանը վերջ կտրվի, և բնակչությանը կթողնեն տեղում: Պարոն Էհմանն անձամբ այս ու այն կողմ, առանձին գյուղեր էր գնում, որպեսզի մարդկանց համոզի, որ ոչինչ չպահեն: Նա նույնիսկ բանտ գնալու թույլտվություն ստացավ, որպեսզի առանձին մարդկանց համոզի ամեն ինչ հանձնել: Չենք հավաքելու այդ ամբողջ ժամանակ անընդհատ նորանոր տղամարդկանց էին բանտ նետում: Հաճախ նրանց տանում էին կեսգիշերին՝ անկողնուց: Նաև շարունակում էին հավաքագրել երիտասարդ տղամարդկանց որպես զինվորների: Բայց ինչպես ասվել է, ոչ մի հայի չուղարկեցին ռազմաճակատ՝ թշնամու դեմ, այլ նրանց օգտագործում էին աշխատանքների համար: Իսկ թե ինչ էր վիճակված նրանց, մեզանից ոչ մեկն այն ժամանակ չգիտեր: Բայց երկար չմնացինք անտեղյակության մեջ:

Հունիսի կեսին էր, երբ հանկարծ մի առավոտ հայտնի դարձավ. «Անցած գիշեր մեծաթիվ բանտարկյալների՝ 600 հոգու, բանտից տարել են: Ու՞ր: Միայն Աստված գիտե: Նրանց այլևս ոչ տեսել են, ոչ էլ որևէ բան լսել նրանց մասին: Միաժամանակ երիտասարդ հայերին, ում հավաքագրել էին որպես զինվորների, ճանապարհաշինության համար, խմբերով տարել են Մեզերեհ, փակել են մի շենքում և պահել են մշտական հսկողությամբ: Մի քանի օր անց նրանց՝ թվով 1200 հոգի զինված զինվորների ուղեկցությամբ տարել են: Կնշանակի նրանք պետք է կրկին ճանապարհներ կառուցեն: Մաղենում՝ Մեզերեհից 2 օրվա ճանապարհ հեռու, նրանք երևի իսկապես մի քանի օր նաև աշխատել են, ապա նրանց քշել են Դիարբեքիր, չորս-չորս, կամ հինգ-հինգ իրար են կապել և սպանել: Հունիսի 23-ի գիշերը բանտից տարել են ևս 300 տղամարդու: Դրա հաջորդ օրը առավոտյան ամենուրեք լաց ու կոծ էր: Հարազատները, որ իրենց մերձավորներին ուտելիք էին տարել, բանտը դատարկված էին տեսել: Ու՞ր են կորել տղամարդիկ: Դժվար է ենթադրել, թե նրանցից որևէ մեկը դեռ կենդանի է: Քանի որ նրանք իրար էին կապկված, ուրեմն փախուստը բացառված էր, իսկ եթե փախել էին, ապա ո՞ւր: Հետապնդումներն ու որոնումները վերջ չունեն: Ես ի վիճակի չեմ բոլոր սարսափները, ինչը մենք վերապրել ենք այստեղ՝ հունիսի վերջին, մանրամասնորեն հաղորդելու, բայցևայնպես իրավիճակը դեռ ավելի էր վատանալու:

Հունիսի 24-ին, ինչպես դա ընդունված էր, երեկոյան ժողովից հետո մենք մեր մարդկանցով տոնում էինք Սուրբ ընթրիքը: Բայց դա ի՞նչ տոն էր: Ոչ ոք չէր կարող ազատվել այն ահավոր մտքից, որ սա վերջին անգամն է: Իսկապես երկու օր անց, շաբաթ օրը՝ հունիսի 26-ին, հայտարարվեց, որ գալիք շաբաթվա ընթացքում հայ բնակչությունը պետք է լքի այդ բնակավայրը: Մեկ օր անց, կիրակի օրը՝ հունիսի 27-ին, մենք վերջին ժողովն անցկացրինք մեր ճաշարանում: Միայն լաց ու հեկեկոցներ էին լսվում:

Դրան հաջորդող օրերին այստեղով անցան Էրզրումի տարածքից տեղահանված հայերի թափորներ՝ աննկարագրելի թշվառ վիճակում: Այդ խմբերում տղամարդիկ ու հասուն որդիներ չկային, և երբ կանանց հարցնում էին, թե ո՞ւր են ձեր տղամարդիկ, նրանք պատասխանում էին. «Սպանել են»: Հիմա կարելի է պատկերացնել այն մարդկանց զարհուրանքը, ովքեր պետք է տեղահանվեին: Նրանցից շատերը աղոթքով և Աստծո խոսքով փորձում էին սրտապնդվել՝սարսափներով լի ճամփան ընկնելուց առաջ: Այդ օրերին մենք աղոթքի ժամեր էինք ունենում, ինչպիսիք երբեք չենք ունեցել: Ամեն առավոտ ժամը 8-ին հավաքների մեր սրահը լեփ-լեցուն էր: Դրանք օրհնված օրեր էին, երբ շատերը հանդիպում էին իրենց աստծուն: Մենք՝ գերմանացի քույրերս, նաև հայ քրիստոնյաներից շատերը, հուսով էինք, քանի որ համայնքը խոնարհվում էր իր Աստծո առջև, որ Տերը կողորմա և կկանխի աղետը, բայց երբ սահմանված օրը եկավ, մենք տեսանք, որ երկու օրում մեր քաղաքի 1800 ընտանիքներ պետք է լքեին իրենց օջախներն ու այն ամենը, ինչ սիրելի էր իրենց համար, և պետք է վերցնեին ճամփորդի ցուպը, ընդառաջ գնային իրենց մռայլ ու մութ ապագային: Ըստ երևույթին, նրանց պետք է տանեն Ուրֆայի տարածք: Մեզերեհը, կարծես, մահացել էր, շուկայի խանութները փակ էին, իսկ դրան հաջորդող կիրակի օրը ժողովների մեր սրահը գրեթե դատարկ էր:

Արդեն շուտով մեզ հասան զանազան լուրեր և ասեկոսեներ: Մալաթիայի ճանապարհին գեղեցիկ երիտասարդ կանանց և աղջիկներին բաժանել են տեղահանված ընտանիքներից և հետ են ուղարկել, որպեսզի նրանք կարողանան իրենց կյանքը երկարաձգել որպես թուրքերի կանայք: Մնացածներին, բացառությամբ մի քանի տղամարդկանց, որոնց Իզոլիում բաժանել էին իրենց ընտանիքներից, բերել էին Մալաթիա: Այնտեղ բոլոր տղամարդկանց և հասուն որդիներին բաժանել են

ընտանիքներից և բանտ են նետել: Լացող երեխաների և կանանց խցկել են տները և հավաստիացրել, որ նրանց տղամարդկանց այլ ճանապարհով են ուղարկել և որ իրենց ուղևորության ավարտին նրանց հետ կրկին կհանդիպեն: Բայց այն քիչ կանայք, ովքեր հասել են մի վայր, որտեղ կարող էին մնալ, իրենց տղամարդկանցից որևէ կենդանության նշան չեն ստացել: Մեզերեհում մեզ լուր հասավ, որ նրանց բոլորին սպանել են Մալաթիայի մոտերքում: Հուլիսի 6-ին Քեղնիից զարհուրելի վիճակում կրկին տարագիրների մեծ թափորներ եկան: Պետք էր անձամբ տեսնել այդ խեղճերին՝ գիտենալու համար, թե որքան մեծ կարող է լինել թշվառությունը: Նրանց ժամանակավորապես խցկեցին տեղահանված հայերի տները: Շատերը խմբերով մահացան հիվանդություններից: Ամեն առավոտ դիահավաք սայլերն անցնում էին այդ տների կողքով, դիակները նետում էին իրար վրա ու տանում: Հաճախ տարագիրների ամբողջ խմբերի փակում էին հենց գերեզմանոցում: Օր ու գիշեր նրանք ստիպված էին անցկացնել գերեզմանների մեջ, մինչև որ մահը՝ որպես փրկարար բարեկամ, վերջ կտար նրանց տառապանքներին:

Այդ սարսափներով լի շաբաթներին ու ամիսներին երբեմն թվում էր, թե կառավարությունն ուզում է նաև ինչ-որ բանով օգնել: Օրինակ հիմնադրվում էին որբանոցներ: Մեկը մեր մոտերքում էր: Խեղճ երեխաները կեղտի ու թշվառության մեջ էին, ճչում էին օր ու գիշեր, և ի վերջո այդպես էլ մեռնում էին: Մենք՝ որբանոցի քույրերս, հերթով ապուր էինք եփում այդ խեղճերի համար: Երբ մենք ճաշով գալիս էինք, հաճախ այդ ճիչն ավելի էր ուժգնանում, քանի որ սովն այնքան մեծ էր, որ բոլորն էլ միանգամից էին ուզում ստանալ: Մի առավոտ բոլոր երեխաներն անհետացան: Ո՞ւր մնացին նրանք, ես չգիտեմ, մի քանիսին ավելի ուշ տեսել եմ նույնպիսի մեկ այլ որբանոցում: Պատմում են, որ մյուսներին ջուրն են նետել: Թե այդ իրոք այդպես է, ես չեմ կարող ասել, քանի որ անձամբ չեմ տեսել, բայց հավատում եմ այն ամենին, ինչ տեսել եմ:

Սեպտեմբերի սկզբին մի առավոտյան՝ շատ վաղ, մի քանի արհեստավորների, որոնք մեծ գաղթի ժամանակ մնալու իրավունք ունեին, քանի որ պատերազմի սկզբում աշխատել էին կառավարության համար, հանել էին անկողնուց, մի քանի օրով խցկել էին բանտերը, իսկ հետո, ինչպես նրանց բոլոր տառապակիցներին, տարել և սպանել էին: Նրանց մորթեցին ինչպես ոչխարների, քանի որ նրանցից և ոչ մեկը նույնիսկ փոքրագույն մի զենք չուներ իրեն պաշտպանելու համար:

Այլևս դժվար է Մեզերեհում որևէ հայ տղամարդ գտնել, բացի մի քանիսից, ում կարիքը կառավարության համար դեռևս կար և մասամբ մուսուլման էին դարձել: Բայց հետապնդումներն ու որոնումները չէին ավարտվում: Մի քանի թշվառ կանայք, ովքեր անցնող քարավաններից անջատվել ու մնացել էին, դեռ մեծ կարիքի մեջ էին: Եվ այդպես շարունակվում էր: Ինչպե՞ս է ցավում մարդու սիրտը, երբ տեսնում է մինչև ատամները զինված զինվորների սուր ճոճելը այդ թշվառների վրա: Նոյեմբերի 4-ը իմ գիտակցության մեջ վերջին անգամ բերեց այդպիսի մի նողկալի օր:

Ես փորձեցի իմ շարադրանքով մի փոքրիկ պատկեր ներկայացնել այն ամենից, ինչ ես անցյալ տարի ապրել եմ Մեզերեհում: Առանձին դեպքերի մասին ես կարող էի շատ ավելի մանրամասն գրել, և պատրաստ եմ դա սրտանց անել, եթե դրա անհրաժեշտությունն առաջանա:

Այս տարվա մարտի 7-ից ես լքեցի Մեզերեհը: Թե ինչ է կատարվել այդ օրվանից հետո, ես չգիտեմ, քանի որ մեր քույրերն ի վիճակի չեն այնտեղից իրենց տպավորությունները հաղորդելու:

[Քույր Կլարա Պֆայֆեր,Մեզերեհ]

1916 – 05 – 30 – DE – 001

Սկզբնաղբյուր՝ PA – AA /R1 4092
Տպագրված՝Գ և Հ փաստ. 275 (կրճ.)

Կոստանդնուպոլսի դեսպանությանը՝ Դամասկոսի հյուպատոս Լոյթվեդ Հարդեգից

Մ № 384

Դամասկոս, 30 մայիսի 1916թ.

Պատճեն[77]

Ինչպես պատիվ ունեցա այս տարվա մարտին Ձեզ հեռագրով տեղեկացնելու, Ջեմալ փաշան այստեղ աքսորված հայերին օգնելու համար կազմակերպություն է ստեղծել, որը վեց շաբաթ է, ինչ գործում է: Այդ

77. Մետեռնիխը պատճենով հունիսի 19-ին (№311) ներկայացրել է ռայխսկանցլերին:

կազմակերպությունը ղեկավարում է Սալոնիկի և Հալեպի նախկին վալիի՝ Հուսեին Քասիմ բեյը, որն ամենուրեք հայտնի է որպես անբասիր և գործունյա անձնավորություն: Նրան աջակցում են երկու պաշտոնաթող բարձր պաշտոնյա և Դամասկոսի վալիի տեղակալը: Հանձնաժողովի այս երեք անդամն էլ լավ համբավ ունեն:

Հուսեին Քասիմ բեյն անցած ամսվանից շրջել է Հաուրանում և նրանից հարավ գտնվող տարածքներում, որտեղ հայերն են: Դերայում նա հայերին հաց է բաժանել և հիմնել է հիվանդանոց՝ ախտահանման և լողանալու հարմարություններով: Մաքրման այդ արարողությունից հետո շատ հայերի ուղարկել են տարբեր վայրեր, որտեղ նրանք կարող էին որևէ աշխատանք գտնել: Մոտ յոթ հարյուր այրիներ և որբեր եկան Համա, որտեղ աշխատում են մանածագործական ֆաբրիկայում:

Մեկ օր առաջ մի ճաշկերույթի առիթով, որը Ջեմալ փաշան էր կազմակերպել, հանդիպեցի Հուսեին Քասիմ բեյին: Երբ նա ինձ տեսավ, ասաց որ ուզում է ինձ հետ անհապաղ խոսել: Նա շատ հուզված տոնով հայտարարեց, որ ուզում է դադարեցնել իր ծառայությունը՝ որպես Հայկական հարցերով հանձնաժողովի նախագահ, որովհետև այլևս չի կարող աշխատել: Նրա հրահանգները ոչ միայն չեն կատարում, այլև պետական պաշտոնյաները գործում են դրանց հակառակ: Հայերը, որոնց նա ըստ ծրագրի Դերայից Դամասկոս է ուղարկում, այստեղի քաղաքային իշխանությունները կրկին հետ են ուղարկում: Կառավարությունը նրան չափազանց քիչ գումար է տրամադրում, հայերի մեծ կարիքները հոգալու համար: Նա շատ վհատված էր և այլևս չէր հավատում թուրքական կառավարությանը, որ այն իրոք, ուզում է օգնել տեղահանված հայերին: Նա նույնիսկ երկյուղում էր, թե ուզում են հայերին համակարգված բնաջնջել: Նա լսել է, որ Հալեպ ուղարկված հայերին կրկին դեպի արևելք՝ Մոսուլ և Դեր Զորի ուղղությամբ են տանելու, որտեղ նրանք, հավանաբար, բեդվիններին զոհ կդառնան: Բնաջնջման այս դաժան քաղաքականությունը Թուրքիայի համար խայտառակություն է և խաղաղությունից հետո շատ կվնասի ու Գերմանիային կդնի ծանր կացության մեջ, քանի որ ամբողջ աշխարհը կմեղադրի, որ բավականաչափ ակտիվ չի միջամտել հօգուտ հայերի: Նա այլ ելք չէր գտնում, քան այն, որ Գերմանիան միջամտի, որպեսզի հայերին շուտափույթ աքսորեն ինչ-որ մի երկիր, նա ի նկատի ուներ Հարավային Ամերիկան: Դա լավագույն ձևն է թե՛ Թուրքիային, և թե՛ հայերին օգնելու համար:

Ես նրան վկայակոչեցի Կոստանդնուպոլսի կոմիտեի անդամների հակահայկական տրամադրությունը, որի հետ, ըստ երևույթին, նույնիսկ Ջեմալ փաշան չի կարող համեմատվել: Ես նրա ուշադրությունը հրավիրեցի այն բանի վրա, որ Գերմանիան, որքանով կարելի է արդի վիճակում, հնարավորին չափ օգնում է հայերին և խնդրեցի նրան, հանուն գործի՝ իր ստեղծած ծառայությունը չդադարեցնել և շարունակել աշխատանքը՝ անտեսելով բոլոր հակառակ հոսանքները: Հենց որ մի քանի օրից Ջեմալ փաշան վերադառնա Հալեպից, նրա հետ կքննարկի այդ հարցը, և եթե նրան այլևս չեն տրվելու լիազորություններ և դրամական միջոցներ, ապա նա կհրաժարվի հասարակական իր աշխատանքից: Նրա գնահատմամբ Հալեպի և Հեջազի միջև 60.000 հայ կա: Եթե շվեյցարական օգնության միությունն ուզում է գումարներ տրամադրել այստեղի հայերին, ապա ես կերաշխավորեի Հուսեին Քասիմ բեյին, նրան ես լիովին վստահում եմ, որ նա գումարները նպատակին կծառայեցնի: Անհրաժեշտ է շտապել այդ հարցում, քանի որ թշվառությունը մեծ է:

Հուսեին Քասիմ բեյն ինձ խնդրեց իր բանակցությունը համարել **խիստ գաղտնի**:

Լոյթվեդ Հարդեգ

1916 – 06 – 30 – DE – 011

Սկզբնաղբյուրը՝ PA-AA/ Կոստ դեսպ.
Տպագրված՝ Գ և Հ փաստ.283 (խմբ. կրճ.)

Կոստանդնուպոլսի դեսպանությանը՝ Դամասկոսի հյուպատոս Լոյթվեդից

№ 93

Դամասկոս, 30 հունիսի 1916թ.

Բոլոր հայերին մի քիչ ավել կամ պակաս ստիպում են մահմեդական դառնալ: Դերայում, բացի մի ընտանիքից, մնացած 149 ընտանիքը գրավոր ընդունել է իսլամ: Քանի որ Ջեմալ փաշան Երուսաղեմում է և նրան գրավոր առարկություններ անելը կարծես թե հարմար չէ, ես ...այստեղի մահմեդական առաջնորդին, որը դեմ է բռնի դավանափոխություններին,

դրդել եմ վիլայեթի այստեղի պատասխանատուների ուշադրությունը հրավիրել այն բանի վրա, որ ես խիստ ցնցված եմ այս միջոցառումներով, որոնք Գերմանիայում սաստիկ դժգոհություն կառաջացնեն երիտթուրքական կառավարության դեմ:

Քաղաքական առավելությունները, որոնց փորձում են հասնել հայերին ապազգայնացնելով և նրանց կապերը քրիստոնյա տերությունների հետ խզելով, չեն կարող համեմատվել այն վնասների հետ, որոնք կարող են առաջանալ Եվրոպայում և Ամերիկայում Թուրքիայի դեմ հակառակ տրամադրություններով: Վիլայեթի պատասխանատուն հերքեց հայերի մահմեդականացման փորձերը: Նա պետք է որ այս քննարկման մասին հեռագրած լինի Ջեմալ փաշային:

[Լոյթվեղ]

1916 – 07 – 29 – DE – 001

Սկզբնաղբյուրը՝ PA – AA /R1 4093
Տպագրված՝ Գ և Հ փաստ. 290 (միայն նամակը և 7-րդ հավելվածը)

Ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին՝ Հալեպի հյուպատոս Ռյոսլերից

K № 79, № 2135

7 հավելված

Հալեպ, 29 հուլիսի 1916թ.

Բոլոր կողմերից հասնող լուրերը հաստատում են, որ հայերի հետապնդումները չեն նվազում և նույնքան անողոք են: Գերմանացիներից, ովքեր վերադառնում են Բաղդադի եփրատյան ճանապարհից, չկա մեկը, որ խորապես ցնցված չլինի այդ աղետի տպավորություններից:

1) Կայզերական ծառայության մի բարձրագույն պաշտոնյա հուլիսի 18-ին ինձ պատմեց, որ Սաբխայից Մեսքենե Համամով անցնող ճանապարհահատվածը ծածկված է հագուստի մնացորդներով: Այնպիսի տեսք ուներ, կարծես այդտեղով մի ամբողջ բանակ էր նահանջել:

Մեսքենեում թուրք զինվորական դեղագործը, որը վեց ամիս է, ինչ տեղափոխվել է այնտեղ, նրան պատմել է, որ միայն Մեսքենեում թաղված է 55.000 հայ: Անկախ դրանից՝ նրան այնտեղի համար նույն թիվն ասել է նաև թուրք սպայի տեղակալը:

2) Հուլիսի 16-ի ամսաթվով Դեր Զորից լուր ստացվեց, որ հայերը ճանապարհը շարունակելու հրաման են ստացել: Ամսի 17-ին ձերբակալել են բոլոր հոգևորականներին և ուղեկցող տղամարդկանց: Մինչև հուլիսի 22-ը, այդպիսին էր հրամանը, բոլոր հայերը կրկին պետք է վերցնեն ճամփորդական ցուպը: Ինչպես արդեն վաղօրոք կարգադրել էր կենտրոնական կառավարությունը, Դեր Զորում պետք է մնա այնքան հայ, որ համապատասխանի տեղի բնակչության 10%-ին, ուրեմն պետք է ոչնչացվեն վերջին մնացորդները, մի փոփոխություն, որը, հավանաբար, կապ ունի դրա հետ, այն է, որ մարդկային ու գթասիրտ մութասարիֆ Սուադ բեյին Բաղդադ են տեղափոխել և նշանակել են մի անգութ հետևորդի:

Մտրակով ու մահակով ծեծում են անպաշտպան, ուժասպառ կանանց և երեխաներին, մի դիտարկում, որ հաճախ է արվել և հաստատվել է այդ ճանապարհով եկած գերմանացի մի սպայի սեփական վկայությամբ:

Այդ հարաբերությունների վերաբերյալ Արաքսյա Ջիբեջյանի պատճենահանած նամակը՝ ուղղված քույր Բ. Ռոհներին, թվագրված հուլիսի 16/17-ով, պատիվ ունեմ կցել այստեղ: Մինչ բազմաթիվ հայեր ժողովրդի կործանման հետևանքով կորցրել են հոգեկան հավասարակշռությունը, կորցրել են հավատը և մատնվել են հուսահատության, այս նամակը տոկունության և զսպվածության հրաշալի նմուշ է՝ ի հանդիման հավաստի և դաժանագույն ձևով սպասվող կործանման: Նույն հեղինակի հաջորդ երկու նամակները՝ հունիսի 22-ին և հուլիսի 12-ին, նույնպես ներկայացնում եմ քարգմանաբար, այդպիսի ևս 2 նամակ Համամի և Սաբխայի քահանաներից:

3) Հունիսի վերջին հետևած աքսորի մասին, որը վերաբերում էր մինչ այդ կառավարության թույլտվությամբ Ամանուսի տարածքում Բաղդադի երկաթուղու կառուցմամբ զբաղված հայերին, տեղեկացնում է քույր Պաուլա Շեֆերի նամակի կցված պատճենը՝ ուղղված ամերիկացի միսիոներ պարոն Փիթին՝ Կոստանդնուպոլիս:

4) Դիարբեքիրից Ուրֆայով եկած գերմանացի մի սպա հուլիսի 24-ին ինձ պատմեց, որ որոշ ժամանակ առաջ արևելյան և հյուսիսային շրջաններից ևս 2000 հայ կանանց բերել են Ուրֆա: Այս դեպքում խոսքը այն մնացյալների հավաքման մասին է, ովքեր մինչ այդ կարողացել են թաքնված մնալ կամ նրանց տարել են մուսուլման ընտանիքները և որոնց միայն հիմա են հայտնաբերել:

Այդպիսի իրավիճակների մասին է տեղեկացնում խոնարհաբար իմ կցած նամակի պատճենը, որը հուլիսի 22-ին ստացել եմ Ուրֆայից՝ Քյունցլերից, ըստ որի՝ նրան հաջողվել է օգնել 150 որբ երեխաների:

5) Հուլիսի 12-ից ի վեր Հալեպում դադարեցվել է տեղահանումը, ըստ երևույթին, վերին ատյաններում կոնֆլիկտ է սկսվել այն պատճառով, որ առավել հարուստ հայերին հաջողվել է խնայել, մինչդեռ առավել խեղճերին հանձնել են ոստիկանությանը:

Մոտ 250 հայերի հաջողվել է Մեսքենեից, այնտեղի զինվորական կայմակամի անխոս համաձայնությամբ, վերադառնալ Հալեպ, որտեղ նրանք ժամանում են կարեկցանքի արժանի վիճակում: Ըստ այդմ՝ վալին հրաման է արձակել բոլոր գյուղերին՝ ոչ մի հայի չթողնել վերադառնալու Հալեպ: Եթե պաշտոնական կարգադրությունների կատարումը հանձնարարվում է բնակչությանը, ապա դրանով նրանք հայերին օրենքից դուրս են հայտարարում:

Նույն զեկուցագիրը կուղարկվի նաև կայզերական դեսպանություն:

Ռյոսլեր

Հավելված 6

Հարունյե, 13 հուլիսի, 1916թ.

Սիրելի պարոն Փիթ[78],

Կներեք, որ դեռևս ժամանակ ու հանգիստ չեմ գտել՝ տուժածներին օգնելու նպատակով նախատեսված գումարի հաշվետվությունը Ձեզ ուղարկելու համար: Վերջին 14 օրերի նոր մեծաթիվ տեղահանումները ինձ համար կրկին **շատ** գործ են ստեղծել, անշուշտ Դուք զարմացել եք հեռագրային իմ խնդրանքից՝ ինձ 1000 թուրքական ֆունտ ուղարկել: Բայց ԲԵԿ[79] ընկերության բանվորների աքսորը՝ **Մարաշում** և նրա շրջակայքում գտնվող **բոլոր** հարազատներով հանդերձ, այնքան հանկարծակի կատարվեց, որ ես իհարկե չէի կարող պահուստային գումար ունենալ: Արագ օգնության կարիք կար, և ես ամենուրեք երկաթուղու գերմանացի ինժեներներից պարտքով փող էի վերցրել և հիմա կարող եմ վերադարձնել, քանի որ այդ ընթացքում եկավ Ձեր փողը: Մերսինայից ես մեկ անգամ էլ կհեռագրեմ Ձեզ՝ մնացյալ 1000 ֆունտն ուղարկելու համար: Հավանաբար, այն շուտով կստացվի:

78. Նշում՝ նամակը չի հանձնվել պարոն Փիթին

79. Ձեռագրով ավելացված է՝ Բաղդադի երկաթուղու կառուցում:

Կրկին մի քանի **հարյուր** երեխա մնացել են սարերում, որոնց ես եմ հավաքել, մոտ 150-ը գտնվել են, նրանցից 50-ը Էնթիլիում են, ես իսկապես չգիտեմ, թե ինչ պետք է անեմ, **մեր** բոլոր տները լեփ-լեցուն են և այնքան քիչ օգնություն կարելի է ակնկալել կառավարությունից: Ես դեռ ուժասպառ եմ այն ուղևորությունից, երբ տարագիրների հետ անցա Բաղչեից Մարաշ: Ես սարերում հանդիպեցի մարդկային այդ թափորներին, չորս շաբաթական երեխաները պառկած էին թփերի տակ, 3-4 տարեկանները նստած էին դաշտերում, լքված, առանց մի կտոր հացի, մայրերն ստիպված էին թողնել նրանց, քանի որ իրենք էլ չէին կարողանում շարունակել ճամփան: Դիակների գարշահոտությունից դժվար էր առաջ շարժվել, մենք ժամեր շարունակ ձիերով գնացել ենք այդ ճամփով, որտեղ 100-150 դիակներ էին ընկած, դուք կարո՞ղ եք պատկերացնել, թե ինչպիսի տեսք ունի Մարաշ-Ուրֆա ճանապարհահատվածը: Ես սայլ ուղարկեցի այդ հատվածը՝ գետնին ընկած երեխաներին հավաքելու համար, հետ վերադարձավ, քանի որ ոչ մի երեխա էլ չէին գտել, թուրքերն էլ են հետամուտ դրան, և ասաց, որ ճանապարհները դիակների պատճառով անանցանելի էին:

Ուսուցիչներին, հոգևորականներին, մտավորականներին, բոլորին ուղարկեցին՝ կանանցից և երեխաներից առանձնացրած, ցավն ու տառապանքը սրտակեղեք են: **Մի կում ջուրը** խեղճերին նույնիսկ **1 ֆունտով** էլ չէին տալիս, Մարաշից եկող կոյուղու կեղտոտ ջրերի մոտ են տեղավորել հազարավոր մարդկանց, թեպետ Աքսուն 5 րոպեի ճանապարհ էր այդտեղից, և նրանց ստիպում էին խմել այդ ջուրը, որից նրանք մեռնում էին: 500-1000 հոգուց բաղկացած թափորը մի գիշերվա ընթացքում ստիպված էր 100-200 լիրա հավաքել, եթե ուզում էին մինչև հաջորդ առավոտ կենդանի մնալ, այդպես էին սպառնում բիրտ զինվորները: Ես իջնում էի դեպի ներքև՝ դաշտավայրերը, այցելում էի մարդկանց իրենց ճամբարներում, սարսափելի է լսել, թե ինչպես են ճանապարհին վերաբերվել նրանց: Դա ոստիկանների և զինվորների կողմից թալանի ու սպանդի փայլուն արշավ է եղել:

Այնուհետև ես գնացի կառավարություն, զեկուցեցի այդ ամենը, ապա փնտրում էին ուժեր՝ այդ գործն ավելի լավ կազմակերպելու համար: Բայց սակավաթիվ մարդիկ են դիմանալու այս երկրորդ, մեծամասամբ՝ արդեն երրորդ տեղահանմանը, նրանք բոլորը կկործանվեն: Ես Ձեզ հա-

կիրճ ներկայացրի վերջին իրադարձությունների մի պատկեր: Դուք կարող եք պատկերացնել, թե որքան դժվար է աշխատանքը, որովհետև չես կարող միջամտել այնպես, ինչպես կուզենայիր կամ պետք է անեիր: Բայց ինձ միշտ սփոփում է պաստոր Լոհմանի մի ասույթը, նա ասում էր. «Մենք չենք կարող ավելի գթասիրտ լինել, քան Աստված, որն այդքան երկար տեսնում է այս ժողովրդի տառապանքները»: Անշուշտ, կգա մի ժամանակ, երբ այս ամենի համար կհատուցվի: Թեպետ գերագույն հուսահատությունից և վհատությունից ես **հաճախ** թևաթափ եմ լինում, բայց ինձ ամեն դեպքում պարզ է, որ Աստված ինձ հիմա կրկին նոր խնդիրներ է առաջադրում է, որոնք ես հաճույքով կուզենամ լուծել:

Զինվորական հիվանդանոցում մուհաջիների խնամքի վերաբերյալ իմ ցանկության մասին. դրա հետ կապված ես հույս ունեմ Ձեզնից շուտափույթ պատասխան ստանալ:

Մալաթիայի համար ամսական 60 ֆունտի համար ես Ձեզ շատ շնորհակալ եմ: Պարոն Քրիստոֆելն անչափ կուրախանա:

Աստծո կամոք, ամենաջերմ բարեմաղթանքներով՝
Ձեզ միշտ հավատարիմ՝

[Պաուլա Շեֆեր]

Հավելված 7

Ուրֆա, 22 հուլիսի 1916թ.

...Շվեյցարիայից եկած օգնության շնորհիվ ինձ հաջողվեց քիչ-քիչ հավաքել հայ ժողովրդից մնացած մասին՝ որը երեխաների՝ 150 հոգու, նրանց օգնել և փրկել սպառնացող սովից: Դեռ ավելին կան, բայց ոչ բոլորին է հերիքում:

[Յակոբ Քյունցլեր]

Նորին բարեծնություն
կայզերական հյուպատոս պարոն Ռյոսլերին, Հալեպ

1916 – 08 – 02 – DE - 002

Սկզբնաղբյուրը՝ PA – AA /R1 4092/ Կոստ.դեսպ./ 173

Ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին՝ սոցիալ դեմոկրատների

ռայխսթագի ֆրակցիայի նախագահության անդամ Ֆիլիպ Շայդեմանից

Բեռլին, 2 օգոստոսի 1916թ.

Ձերդ գերազանցություն,

Ռայխսթագի բյուջետային հանձնաժողովում կրկին լսվեց հայկական ջարդերի մասին, առանց կառավարությունը ներկայացնող պարոնների բավարար բացատրությունների:

Վերջերս պարոն դ-ր Նիպագը զայրացուցիչ մանրամասներ է հայտնել հայերի կոտորածների վերաբերյալ:

Գերմանիան խիստ շահագրգռված է՝ ինչ էլ պատահի, ամեն ինչ անել, որպեսզի դժվարացնի Անտանտի ձգտումը՝ Գերմանիային, որպես Թուրքիայի դաշնակցի, պատասխանատու դարձնելու հնարավորությունը՝ այն գործողությունների համար, որոնք հիրավի երկինք են հասնում:

Այդ իսկ պատճառով, Ձերդ գերազանցություն, դրա համար մենք Ձեզնից խնդրում ենք բարեհաճեք տեղեկացնել, թե արդյոք դաշնակից պետությունները Թուրքիային դիմե՞լ են բողոքով՝ ապահովելու համար կոտորածների դադարեցումը կամ եթե դա չպետք է կատարվի, ի՞նչ են մտածում անել դաշնակից պետությունները, որպեսզի թուրքական կառավարությանը համոզեն վերջ տալ ջարդերին:

Խորին հարգանքներով՝
Սոցիալ դեմոկրատների ռայխսթագի ֆրակցիայի նախագահ՝

Շայդեման

[Կոստանդնուպոլսի դեսպանությանը՝ արտգործնախարարությունից (№ 819)11.8]

№ 783 հրամանի կապակցությամբ սույն պատճենը հավատարմորեն ուղարկում ենք Նորին մեծություն կայզերական դեսպան, պարոն կոմս Վոլֆ-Մետեռնիխին՝ **Կոստանդնուպոլիս** որպես ի գիտություն:

[Բեթման Հոլվեգի պատասխանը Շայդեմանին 9.8]

Սույնով Ձերդ գեր. և այլոց համար երախտագիտությամբ հաստատում եմ Հայկական հարցի վերաբերյալ վերոնշյալ նամակի ստանալը:

Կայզերական կառավարությունն ի սկզբանե հատուկ ուշադրություն է դարձրել Թուրքիայում բնակչության հայ տարրերի վերաբնակեցման հարցին: Այդ հարցի զարգացումների վերաբերյալ Թուրքիայում գտնվող ներկայացուցիչները շարունակ իրազեկում են կառավարությանը, իսկ այն ընձեռված յուրաքանչյուր առիթով ամեն կերպ օգտագործում է թուրքական կառավարության վրա իր ազդեցությունը՝ հօգուտ հայերի: Կայզերական կառավարությունը այսուհետ էլ իր ուժերի ներածին չափ թուրքական կառավարության առջև հանդես կգա հանուն հայկական ցեղի հանդեպ ավելի մեղմ վերաբերմունքի:

1916 - 08 - 29 - DE - 001

Սկզբնաղբյուրը՝ PA – AA /R1 4093
Տպագրված՝ Գ և Հ փաստ. 297 (կրճ.)

Կոստանդնուպոլսի դեսպանությանը՝ Հալեպի ռեգենտ Հոֆմանից

№ 2463

Հալեպ, 29 օգոստոսի 1916թ.

Պատճեն[80]

Եփրատի տարածքում **հայերի աքսորի** մանրամասների մասին՝ մի գերմանացի սպա, որը նոր է վերադարձել այնտեղից և նույն ճանապարհահատվածում իր նախորդ ուղևորություններից լավատեղյակ է իրավիճակին, հաղորդում է հետևյալը.

Հալեպ Դեր էլ Զոր հատվածը (որը ամիսներ շարունակ օգտագործում էին տարագիրների քարավանները) այժմ այլ պատկեր է ներկայացնում, այն համեմատաբար դատարկվել է: Այսինքն Հալեպի մերձակայքում ամենասկզբում հիմնված կայաններում դեռ կան բավականին մեծ հայկական ճամբարներ: Ավելի հեռու՝ Մեսքենեից դեպի հարավ, ճամբարներն զգալիորեն փոքրացել են: Մեծ կայաններից՝ Սաբխան ամբողջովին, Դեր էլ Զորը՝ ընդհուպ մի քանի հարյուր արհեստավոր, որ աշխատում էին զորքերի համար, դատարկվել են, մինչդեռ վերջին վայրում դեռ ուր շաբաթ առաջ գտնվում էին հազարավոր մարդիկ (այլ

80. Մետեոնիիսը պատճենով հանձնել է արտգործնախարարությանը 17.9. (№ 566):

տվյալներով հաշվել են ավելի քան 20.000): Հոգևոր առաջնորդներին, ինչպիսիք են ուսուցիչները, փաստաբանները, հոգևորականները, վերջին շրջանում հավաքել են ճամբարներից և փակել են կառավարական շենքերում (այսինքն՝ բանտերում): Մնացած բոլորը, նաև նրանք, ովքեր հյուսիսային կայաններում սկսել էին իսկապես բնակություն հաստատել, անհետացել են: Ըստ պաշտոնական տվյալների՝ նրանց քշել են Մոսուլի ուղղությամբ (այսինքն՝ մի ճանապարհով, ուր քչերին կհաջողվի կենդանի մնալ և տեղ հասնել), սակայն ըստ համընդհանուր ժողովրդական կարծիքի՝ Դեր էլ Զորից դեպի հարավ-արևելք, Եփրատ և Խաբուր գետերի տարաբաժանքում նրանց սպանել են: Հայերին ժամանակ առ ժամանակ մի քանի հարյուրանոց ջոկատներով տարել և հանձնել են սպանելու՝ հատուկ դրա համար նախատեսված չերքեզների հրոսակախմբերին: Այդ տվյալները սպային հաղորդել և հաստատել է մի արաբ ականատես, որը եկել է գործողության վայրից, ուր նրան մղել է հետաքրքրասիրությունը և վկա է եղել այդպիսի մի տեսարանի: Այդ մարդը սպայի վրա թողել է վստահելի տպավորություն: Նրա նկարագրության ժամանակ, որի մանրամասները ես բաց եմ թողնում, նշեց, որ նրա այցելած վայրում հիմա էլ դեռ երեք հարյուր հայեր սպասում են իրենց սպանդին: Այդ նույն օրը երեկոյան եկել է կեսի հերթը, իսկ մնացածին սպանել են գիշերը: Այդ տղամարդն ակնածանքով ավելացրել է՝ ախր Գերմանիան ուժեղ է: Նախկինում թուրքերը չէին համարձակվի այդպիսի ջարդ կազմակերպել:

Որոշ հայեր ապաստան են գտել արաբական տներում: Նրանց գտնելու համար կանչել են ժանդարմերիա, որը պետք է իսկական որս կազմակերպի: Ավարը Եփրատով տեղափոխում են Դեր էլ Զոր: Ըստ **իմ երաշխավորի**, քոչվորները Եփրատի և Խաբուր գետի այդ անկյունային հատվածը ըստ երևույթին, լքել են նկարագրված իրադարձությունների պատճառով:

Հալեպցիների տեղահանումը

Հալեպում ոչ «մշտաբնակ» հայերի տեղահանումը դեռ մեծ ընդգրկում չունի: Այնուամենայնիվ, նրանցից մոտ 800-ին է դա վերաբերել: Ընդ որում՝ նրանց վրա անխնա հարձակվել են հենց փողոցում: Այդ գերմանացի սպան հալեպցի իր մի ծանոթի, օրինակ, հանդիպել է 50 մարդուց բաղկացած մի ջոկատում՝ հողաթափերով և տնային բաճկոնով՝ առանց որևէ ուղեբեռի, նրան կալանել էին շուկայում գնումներ կա-

տարելիս, քշել էին հավաքական և աքսորել:

Որբանոցների լուծարումը

Այստեղի որբանոցների համար էլ, որոնցում հավաքել են տեղահանվածների որբերին, կարծես թե այսուհետ կրկին խփեց սպառնալի վերջին ժամը: Ինչպես հայտնի է, այդ որբանոցները պահել են եվրոպական (շվեյցարական ու գերմանական) և ամերիկյան օգնության գումարներով, ղեկավարել են հայ հոգևորականները (նրանցից մեկում եղել է ավելի քան 800 որբ) և ավետարանչական բարեսիրական գործունեության գերմանական օգնության միության քույրերը: Հիմա տեղական իշխանությունն այդ որբանոցների համար հատուկ կոմիսար է նշանակել, որը ղեկավարումը պետք է հանձնի թուրքական կողմին: Ըստ ձեռքի տակ եղած տվյալների՝ դա իրականացվում է հետևյալ սկզբունքներով:

13 տարեկանից բարձր տղաները պետք է աքսորվեն, 13 տարեկանից բարձր աղջիկները պետք է ամուսնացվեն (իհարկե մահմեդականների հետ), 10-ից 13 տարեկան երեխաները, քանի որ նրանք արդեն տպավորված են ապրվածից, պետք է բաժանվեն ավելի կրտսերներից և տեղավորվեն զուտ թուրքական որբանոցներում, որտեղ պետք է սովորեն որևէ արհեստ: 10-ից ցածր երեխաները պետք է դաստիարակվեն հատուկ որբանոցներում: Այլ կերպ ասած՝ դա կնշանակի 13 տարեկանից բարձր երեխաները կսպանվեն, այդ տարիքի աղջիկներին կխցկեն հարեմները. աչքի ընկնող 12 տարեկան մի գեղեցիկ աղջկա հյուպատոսարանի կողքին գտնվող որբանոցից տարան և ստիպողաբար ամուսնացրին քաղաքում հայտնի 70 տարեկան փաշայի հետ՝ այստեղ ապրող հարազատների հանդեպ ճնշամիջոցների սպառնալիքով: Ավելի կրտսեր երեխաները կմահմեդականացվեն, որքանով որ նրանք դիմանան որբանոցների թուրքական ղեկավարմանը:

Զանգվածային մահմեդականացումներ

Համայում, Հոմսում, Դամասկոսում և այլուր, համաձայն լուրերի, վերջին շաբաթների ընթացքում, հետագա տեղահանման սպառնալիքով տարագիրներին ստիպում են զանգվածաբար իսլամ ընդունել: Այն ընթանում է զուտ բյուրոկրատական ձևով. դիմում և դրան հաջորդող անվանափոխություն:

Այն, որ Թուրքիան այս թվացյալ դավանափոխությամբ իսկապես կարող է հասնել հայերի թուրքացման, պետք է համարվի պատրանք: Ըստ երևույթին, դրա հեղինակներին պատկերանում են օսմանյան տիրապետության ժամանակների օրինակները: Բայց նրանք երևի թե իրենց հաշվարկներն արել են՝ առանց նկատառելու այսօր բոլորովին այլ կերպ ուժեղացած ցեղային և ազգային զգացումը, ինչպես նաև այն խոր ատելությունը, որը բնականաբար կշարունակի ապրել նոր հայ մահմեդականների մեջ՝ ընդդեմ իսկական թրքության ու իրենց ժողովրդի դահիճների: Եթե մահմեդական հայերը, իրենց ամբողջ վերապրածից հետո, մտքով և զգացմունքով հայ մնան, և իհարկե ոչ միայն արդի սերնդի մեջ, ապա նրանց քողարկումը իսլամի մեջ ապագայում շատ ավելի վտանգավոր կդառնա թուրք ժողովրդի համար, քանի որ այն նվազ ճանաչելի կլինի: Գերմանական ժողովուրդը նույնպես՝ ի դեմս նրանց, ապագայում կունենա կրկնակի վտանգավոր թշնամիներ:

[փոխ. Հոֆման]

1916 – 09 – 05 – DE – 001

Սկզբնաղբյուրը՝ PA-AA/R14093
Տպագրված՝ Գ և Հ փաստ. 298

Կոստանդնուպոլսի դեսպանությանը՝ Հալեպի ռեգենտ Հոֆմանից

№ 2535

Հալեպ, 5 սեպտեմբերի 1916թ.

Պատճեն[81]

Անցած ամսվա սեպտեմբերի 29-ի BN 2463 զեկուցագրի կապակցությամբ[82]

Վերոնշյալ զեկուցագրի տվյալները՝ **Դեր էլ Զորի տարածք հայերի աքսորի** մանրամասների վերաբերյալ, այս ընթացքում այլ հավաստի աղբյուրների հիման վրա հիմնականում հաստատվել են: Ամերիկյան

81. Մետեոնիխը պատճենով ներկայացրել է արտգործնախարարությանը 21.9:
82. A 25739:

ինչ-որ ֆիրմայի գերմանացի մի ծառայող, որը գործնական ուղևորության առիթով այցելել է այնտեղի ճամբարների մեծ մասը, հենց նոր վերադարձել է այնտեղից և ինձ հայտնեց հետևյալը.

Եփրատի երկայնքով մինչև Դեր էլ Զոր դեռևս կան 1000-2000 հոգուց բաղկացած փոքր ճամբարներ: 20-30.000 հայերը, որոնց ես տեսա իմ վերջին ուղևորության ընթացքում Դեր էլ Զորում, սկսել էին շունչ քաշել մարդկայնորեն տրամադրված մութասարիֆի օրոք, մինչև մի քանի ամիս առաջ նրան փոխարինած այժմյան վայրագ մութասարիֆ Զեքի բեյով փոխարինելը (որը չերքեզ է), 1200 երեխաների և ընդհուպ մի քանի արհեստավորի քշել են ավելի հեռու, ընդ որում, ինչպես ես լսել եմ, Խաբուր գետի տարածք: Այնտեղ նրանց, ըստ համընդհանուր կարծիքի, մորթել են կամ այլ կերպ սպանել են: Հիշյալ 1200 երեխաներն ահավոր թշվառ վիճակում էին, ակնհայտ էր նրանց դեմքին դրոշմված սովը:

Ճամբարներում տեղավորված մարդկանց պահելու համար կառավարությունն ընդհանրապես ոչինչ չի անում: Ճամբարներն ամբողջովին կտրված են գյուղերից և քաղաքներից: Դրա համար մթերային ապահովումը չափազանց դժվար է նույնիսկ նրանց համար, ովքեր դեռ դրամ ունեն: Մատակարարումը սահմանափակվում է նրանով, ինչ օրական ճամբար են բերում արաբ գյուղացիները՝ հաց, սեխ և այլն, այսինքն՝ բոլորովին անբավարար քանակություն: Շատերն ապրում են միայն սեխով, որն այդ տարածքներում առատորեն աճում է, և դրանք ուտում են կլեպով ու կորիզներով հանդերձ: Երբ ես մի փոքրիկ ճամբարում փորձեցի հաց բաժանել, մարդիկ իրենց պահում էին վայրի կենդանիների պես և ես ստիպված փախա, բաժանելը հանձնարարեցի ժանդարմներին: Ով փող չունի, սովամահ է լինում: Մեկ թոքաղրամ ֆունտն համարժեք է 45 պիաստերին: Բայց դրամական օգնությունից հաճախ հրաժարվում են և «**հաց**» գոռում: Ես տեսա մարդկանց, ովքեր ուտելու համար ձիու թրիքի միջից գարու հատիկներ էին հանում:

Քանի դեռ տարագիրները փող ունեն, նրանց թողնում են իրենց ճամբարներում: Երբ այն սպառվում է, նրանց քշում են դեպի Դեր էլ Զոր: Ընդ որում՝ ընտանիքներին անխնա բաժանում են իրարից: Էլ Համամի մոտ 600-700 հայ տղամարդիկ աշխատում են պետական շինությունների վրա՝ առանց իրենց ընտանիքների: Նրանք նույնպես, ի դեպ, սովահար տեսք ունեին:

Ճամբարի բնակիչները բաղկացած էին հասարակական տարբեր

շերտերի ներկայացուցիչներից: Իմ այցելությունների ընթացքում ինձ բազմիցս դիմել են ֆրանսերեն, անգլերեն և գերմաներեն. գերմաներեն՝ գերմանական դպրոցների և որբանոցների սաները: Շատ փախստականներ փորձում են փախչել այլ ճամբարներ, որոնք մոտ են բնակավայրերին, քանզի սնունդ ճարելու հնարավորություններն ավելի շատ են: Այդպիսի փախստականներին ժանդարմներն անընդհատ հետապնդում են. ում բռնում են, նրան կարելի է կորած համարել:

Ձմեռային ցուրտը տարագիրների վերջը կտա:

Հիշյալ երաշխավորի ասածի համաձայն:

Ինչ վերաբերում է Դեր էլ Զորից քշված տարագիրների ճակատագրին, ովքեր ըստ պաշտոնական տվյալների դեպի Մոսուլ են գնում, ապա ես Մոսուլի հյուպատոսարանում տեղեկացել եմ, թե վերջին ամիսներին մոտավորապես քանի հոգի են ժամանել Դեր էլ Զորից: Դրան հաջորդած տեղեկանքի համաձայն՝ ապրիլի 15-ին Դեր էլ Զորից երկու ճանապարհներով դուրս են եկել չորս քարավան՝ 19.000 հոգի, և Խաբուր գետի ափին միավորվել են մի ճամբարում: Մայիսի 22-ին, այսինքն՝ 5 շաբաթանց, այդ քարավաններից մոտ 2500 հոգի, նրանց մեջ նաև մի քանի հարյուր տղամարդ, հասել են Մոսուլ: Կանանց և աղջիկների մի մասին ճանապարհին վաճառել են քոչվորներին, մնացածները ճանապարհին զոհվել են սովից ու ծարավից:

Երեք ու կես ամիս է, ինչ այլևս ոչ մի նոր քարավան չի ժամանել Մոսուլ: Այդ փաստը նույնպես կարող է հաստատել տեղի ժողովրդական կարծիքը Դեր էլ Զորի մասին և դրան համապատասխանող փաստացի տվյալները, որ Դեր էլ Զորի նոր չերքեզ մութասարիֆի ղեկավարությամբ Եփրատ-Խաբուր գետերի տարաբաժանքում տարագիրների հետ արագ հաշվեհարդար են տեսել:

Զոհված տարագիրների երեխաների համար նախատեսված այստեղի **որբանոցների** լուծարումը դեռ չի սկսվել: Տեղահանման կոմիսարի այստեղի ներկայացուցիչն ուղեկցող քույրերից մեկին պաշտոնապես հայտարարել է, որ այս որբերը կտեղափոխվեն Կոնիա՝ մի նոր մեծ ազգային որբանոց, այնտեղ նրանք, ինքնին հասկանալի է, կստանան թուրքական անուններ և կդաստիարակվեն որպես թուրքեր (այսինքն՝ որպես մահմեդականներ):

[փոխ. Հոֆման]

1916 – 09 – 20 – DE – 001

Սկզբնաղբյուր՝ PA – AA /R1 4094

Ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին՝ Հալեպի հյուպատոս Ռյոսլերից

K № 93 / № 2669

Հալեպ, 20 սեպտեմբերի 1916թ.

Մինչև այժմ քույր Բեատրիս Ռոհների՝ հայ միջնորդ անձանց միջոցով ամերիկյան գումարների բաժանումը Եփրատի տարածքում հանդիպել է դժվարությունների: Միջնորդներից մեկին իշխանությունները բռնել են և ծեծի միջոցով ստիպել են վկայություն տալ օգնության ակցիայի մասին: Որպեսզի չվտանգի այդ գործը, քույր Ռոհները նախապես հրաժարվել է ամերիկյան փողերի բաժանումից և այդ գործը թողել է ամերիկյան հյուպատոսին: Վերջինս ամերիկյան Vacuum Oil Company-ի մի ծառայողի՝ պարոն Բեռնաուին, իր ընկերության մուծումները հավաքելու պատրվակով ուղարկում է ուղևորության՝ օգնության գումարները բաժանելու: Այդ ուղևորությունը իրականացվել է օգոստոսի 24-ից մինչև սպտեմբերի 4-ը՝ Հալեպից Մեսքենեով մինչև Դեր Զոր: Թեպետ Բեռնաուն ունի գերմանական ծագում, բայց քանի որ նրա պապը և հայրը Արևելքում ամուսնացել են ոչ գերմանացի կանանց հետ, այլևս գերմաներեն չի իմացել: Այդ իսկ պատճառով ամերիկյան հյուպատոսին ուղղված նրա զեկուցագիրը գրված է վարժ ֆրանսերենով: Երբ նա ուղևորության համար պաշտոնական թույլտվություն ձեռք բերելու համար դիմել է գերմանական հյուպատոսին, նրան ուղարկել են ամերիկյան հյուպատոսի մոտ, քանի որ նրա ուղևորությունը ամերիկյան նպատակներին էր ծառայում, ի վերջո, թեպետ զգալի դժվարություններով, այդ թույլտվությունն ստացվել է: Քանի որ բացառված չէ, որ այդ զեկուցագիրը վաղ թե ուշ կհրապարակվի Ամերիկայում և կօգտագործվի Գերմանիայի դեմ, մեր հակառակորդները, այնուամենայնիվ, համառորեն ուզում են մեզ վերագրել հայերի բնաջնջման պատասխանատվությունը, ուստի ես չուզեցի բաց թողնել սույն պատճենը Ձերդ գերազանցությանն ուղարկելու առիթը: Ես ոչ մի միջոց չունեի կանխելու այդ զեկուցագրի հանձնումը ամերիկյան հյուպատոսին: Բացի այդ, ցավոք, ըստ իս այն համապատասխանում է ճշմարտությանը: Բեռնաուն պարզապես համապատասխան ձևով արտահայտել է այն զարհուրանքը, որը համակում է յուրաքանչյուրին, ով մոտիկից շփվում է սովահար, միտումնավոր սովի մատնված տարագիրների զանգվածների հետ:

Դեր Զորի տարածք ոտք դնելուց ի վեր Բեռնաուին ուղեկցել են գաղտնի ոստիկանները: Նա այն համոզմունքն ունի, որ քանի դեռ Դեր Զորում մնում է այժմյան մութասարիֆ Զեքի բեյը, բոլոր հայերը, ովքեր մտնում են այդ շրջանը, դատապարտված են մահվան: Նրա զեկուցագրում հիշատակված տեղանունները՝ Մեսքենե, Աբու Հրերա, Համման, Ռաքա և Ցիերաքը պատկանում են Հալեպի վիլայեթին, Սեբխան՝ Դեր Զորի մութասարիֆլիկին:

Նախորդ ամսվա 29-ին № 2463-ում նկարագրված փաստը, որ Եփրատ և Խաբուր գետերի տարաբաժանքում կրկին ջարդեր են կազմակերպվում, այս ընթացքում հաստատվեցին: Մյուքեի հրամանատար լեյտենանտը հետախուզական ուղևորության ժամանակ, Խաբուր գետի Եփրատ թափվելու գետաբերանից մեկ ժամվա ճամփա դեպի վերև, անցել է գետում լողացող դիակների կողքով:

Նույն զեկուցագիրը կուղարկվի նաև կայզերական դեսպանություն:

Այնուհետև ֆրանսերեն հավելվածը և ապա թարգմանությունը (Ա. Բեռնաու)

1916 – 09 – 25 – DE – 001

Սկզբնաղբյուրը՝ PA – AA /R1 4093
Տպագրված՝ Գ և Հ փաստ. 299

Արտաքին գործերի գերատեսչության ունքերշտատսքարտուղար Ցիմերմանի գրառումը

Բեռլին, 25 սեպտեմբերի 1916թ.

№ 566 զեկուցագրի բովանդակությունն այսօր հանգամանորեն քննարկեցի Հալիլ բեյի հետ և համառորեն նրա ուշադրությունը հրավիրեցի այն հանգամանքի վրա, որ եթե հայերի նախկին տեղահանումները ինչ-որ կերպ կարելի է արդարացնել՝ ըստ այն ժամանակվա ռազմական

իրավիճակի, ի շահ երկրի ապահովության, ապա այժմ ծրագրված միջոցառումները՝ ուղղված ընդդեմ կանանց ու երեխաների խղճուկ մնացորդների, ոչ մի կերպ չեն կարող արդարացվել կամ ներվել: Թուրքական կառավարության գործելակերպն ամբողջ քաղաքակիրթ աշխարհում զայրույթի փոթորիկ կառաջացնի, որը դեռ երկար ժամանակ չի հանդարտվի նաև պատերազմից հետո: Հատկապես որբանոցների ծրագրված լուծարումն ու զանգվածային բռնի դավանափոխությունները ոչ միայն Գերմանիայում, այլև բոլոր քրիստոնյա ժողովուրդների մոտ իրավամբ կհանդիպի ամենասուր քննադատության:

Ցիմերման

1916 – 10 – 04 – DE – 002

Սկզբնաղբյուրը՝ PA – AA/ R14093
Տպագրված՝ Գ և Հ փաստ. 302

Ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին՝ Կոստանդնուպոլսում գործերի հավատարմատար Ռադովիցից

II 7596

Թերապիա, 4 հոկտեմբերի 1916թ.

1 հավելված

Պատճեն

Հալեպի կայզերական հյուպատոսի այստեղ ուղարկած, «Արևելքում հանուն քրիստոնեական բարեսիրության» գերմանական օգնության միության քույր Բեատրիս Ռոհների հաղորդած վիճակագրական գրառումները՝ իրեն հանձնված 720 հայ որբերի մասին, բոլոր առումներով արժանի են ուշադրության: Այն որոշ չափով տալիս է առաջին հավաստի հիմքը՝ տեղահանման ընթացքում սպանված հայերի թիվը տոկոսային հարաբերությամբ գոնե մոտավորապես գնահատելու համար:

Քույր Ռոհների 720 խնամյալները 3336 հոգուց մնացածներն են: Եթե թուրքահայերի 2,5 միլիոն ընդհանուր թվից հաշվարկում է 2 միլիոն

տեղահանվածներ և նույն կերպ հաշվում են զոհվածների ու կենդանի մնացածների հարաբերությունը, ինչպես քույր Ռոհների որբերի մոտ է ստացվել, ապա հասնում է մի թվի, որը կազմում է ավելի քան 1,5 միլիոն զոհվածներ և 425.000 կենդանի մնացածներ: Մինչև այժմ եղած գնահատականներով զոհվածների թիվը տատանվում էր 800.-1.000.000-ը[83] և ըստ վերոհիշյալ տվյալների՝ չափազանցված չէ:

Մեկ այլ կետ, որը պետք է ընդգծվի, վերաբերում է բռնի մահ գտած մայրերի սարսափելի մեծ թվին (379), մինչդեռ հայրերից միայն 321-ն են մահացել անբնական մահով. ի վերջո ներկայացված վիճակագրությունը հաստատում է առանց այն էլ հաղորդած այն փաստը, որ կենտրոնական իշխանությունների կտրուկ ցուցումներին հակառակ, տեղահանել են նախ այն տղամարդկանց ընտանիքներին, ովքեր զորակոչված են եղել, վիճակագրությունը բացահայտում է ոչ պակաս, քան 246 այդպիսի դեպք:

Ռադովից

Հավելված 1

Կայզերական գերմանական հյուպատոսարան

K № 89 № 2605

Հալեպ, 15 սեպտեմբերի 116.

1 հավելված

Հաշվետվություն՝ 1916թ. օգոստոսին մեր որբանոցում գտնվող 720 երեխաների վերաբերյալ

Պատիվ ունեմ Ձերդ գերազանցությանը ներկայացնելու քույր Բեատրիս Ռոհների կազմած օգոստոս ամսվա վիճակագրությունը՝ հայերի տեղահանման հետևանքով իրեն հանձնված 720 որբ երեխաների մասին, որպես ի գիտություն:

Ռյոսլեր

83. Ձեռագիր բնագրում՝ 1.100.000

Հավելված 2

ԾՆՆԴԱՎԱՅՐԸ	ԹԻՎԸ
Սվազի վիլայեթ	142
Էրզրումի վիլայեթ	50
Հալեպի վիլայեթ	189
Ադանայի վիլայեթ	162
Անգորայի վիլայեթ	21
Խարպուտի վիլայեթ	34
Կոնիայի վիլայեթ	11
Բրուսսայի վիլայեթ	22
Դիարբեքիրի վիլայեթ	50
Կոստանդնուպոլսի վիլայեթ	3
Մեզերեհ	9
Ադիաման	3
Սմիռնա	1
Իզմիդ	2
Եգիպտոսից	1
Ծննդավայրն անհայտ է	40
Ընդամենը՝	720

1. Երեխաների հայրերը

Սպանվել են	152
Զրկանքներից ու կտտանքներից մահացել են ճանապարհին	85
Զոհ են դարձել Ադանայի ջարդերին	32
Զորակոչվել են	107
Աքսորավայրում են	52
Բանտում են	11
Դեռ կենդանի են	80
Ամերիկայում են	10
Մահացել են մինչև տեղահանումը	129
Անհետ կորած են	62
Ընդամենը՝	720

2. Երեխաների մայրերը

Մահացել են աքսորավայրում	282
Դեռ աքսորավայրում են	91
Իսլամ են ընդունել	4
Կենդանի են	97
Մինչև տեղահանումը մահացել են	53
Երեխաներ, ովքեր ոչ մի տեղեկություն չեն կարող տալ իրենց մայրերի մասին	193
Ընդամենը՝	720

3. Երեխաների կրոնական պատկանելությունը

Գրիգորյաններ	554
Բողոքականներ	106
Կաթոլիկներ	2
Սաբբատիստներ	1
Դավանանքը չի պարզված	39
Ընդամենը՝	720

4. Երեխաների միջին տարիքը՝ 917/36 (տարեկան)
Երեխաներ, ովքեր նախկինում եղել են որբանոցներում՝ 40

Հայրերի թիվը, ովքեր մահացել են ոչ բնական մահով	321
Հայրերի թիվը, ովքեր մահացել են բնական մահով	129
Հայրերի թիվը, որոնց կյանքը վտանգված է	170
Հայրերի թիվը, ովքեր երեխաներից հեռացել են զինծառայության	107
Հայրերի թիվը, որոնց երեխաները կորցրել են տեղահանման հետևանքով	394
Մայրերի թիվը, ովքեր մահացել են անբնական մահով	379
Մայրերի թիվը, ովքեր մահացել են բնական մահով	53
Մայրերի թիվը, որոնց կյանքը վտանգված է	91
Մայրերի թիվը, որոնց երեխաները կորցրել են տեղահանման հետևանքով	474
Մայրերի թիվը, որոնք տեղահանվել են ամուսնու բանակում ծառայելու ընթացքում	246
Երեխաների հարազատները, ովքեր զոհվել են տեղահանման ընթացքում	2616

Երեխաների հարազատները, ովքեր զոհվել են տեղահանման ընթացքում (միջինը)	33 / 5
1-ից 6 տարեկան երեխաներ, ովքեր ոչ մի տեղեկություն չեն կարող տալ	126
Երկկողմանի որբեր	258
Ամբողջ ընտանիքից մնացել են միայն երկուսը	144
Ամբողջ ընտանիքից մնացել է միայն մեկը	239

1916 – 10 – 09 – DE – 001

Սկզբնաղբյուրը՝ PA – AA/ R14093
Տպագրված՝ Գ և Հ փաստ. 303 (կրճ.)

№ 626

Պերա, 9 հոկտեմբերի 1916թ.

Ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին՝ Կոստանդնուպոլսում գործերի հավատարմատար Ռադովիցից

1 հավելված

Այստեղի թուրքական «Թասվիրի էֆքյար» թերթի առաջնորդող հոդվածը, որը կցվում է թարգմանաբար, քննարկում է «Միասնություն և առաջադիմություն» կոմիտեի՝ Հայկական հարցի մասին Ձերդ գերազանցությանը հայտնի դրվագը և վերջում եզրակացնում է, որ կոմիտեի որդեգրած՝ բնակչության տարբեր տարրերի միավորման և միաձուլման քաղաքականությունը, «սնանկացել է» և դրա փոխարեն աչքի առաջ ունեն կայսրությունը բոլոր ոչ մահմեդական տարրերից՝ այսինքն՝ քրիստոնյաներից մաքրազատելը: Հոդվածը բավականին հավաստի է վերարտադրում ծայրահեղ ազգայնամոլական շրջանակների համոզմուն-

քը: Այդ մտքերը մասամբ արդեն գործի են վերածվել՝ ի դեմս արևելյան սահմանամերձ շրջանների մշտաբնակ քրիստոնյա սիրիացիների և Փոքր Ասիայի ու Ռումելիայի առանձին շրջանների հույների արտաքսմամբ: Հեղինակը ի վերջո պահանջում է նաև Կոստանդնուպոլսի և Սմիռնայի մինչ այդ տեղահանումից զերծ մնացած հայերի արտաքսումը:

Ռադովից

Հավելված

«Թասֆիրի էֆքյար», 7 հոկտեմբերի 1916թ., № 1886

Սնանկացումը և մաքրազատումը

Ամբողջ աշխարհը գիտե, որ ռազմական գոտու ներսում և էտապային ուղում բնակվող հայերը հեռացվել են այդ տարածքներից և տեղափոխվել են վայրեր, որտեղ նրանք զրկված են պատերազմական գործողություններին ակտիվ կամ պասիվ մասնակցելու որևէ հնարավորությունից: Բացի Կոստանդնուպոլսից և Սմիռնայից ոչ մի այլ բնակավայր զերծ չի մնացել, որտեղ այդ միջոցառումները, կամ ինչպես հնչում է պաշտոնական ձևակերպումը՝ «տեղահանումը» (թուրքերեն՝ թեհջիր), իրականացված չլինեն: Այն հանգամանքը, որ, ինչպես մենք լսում ենք, տարբեր վայրերում այն անցկացվել է ոչ միասնական սկզբունքով, չի վրիպել մեզնից և անհանգստացնում է, դա բխում է նրանից, որ Հայկական հարցի մեր ընբռնումը զրկված է բացարձակ կայուն ու ամուր հիմքից: Դա մի փաստ է, որ մենք պետք է ընդունենք բացեիբաց: «Միասնություն և առաջադիմություն» կուսակցության կոնգրեսի ժամանակ, որը վերջերս գումարեց իր եզրափակիչ նիստը, այդ հարցը հիմնավորապես ներկայացվել և բացատրվել է, և մենք չենք կարող ավելին ասել, քան այն, որ հայերի դեմ գործողություններում այդ ուղղությունը որդեգրած կառավարությանն այլընտրանք չէր մնացել, և որ մենք այդ ձեռնարկումները համարում ենք բանական և անհրաժեշտ: Դա երկրորդ փաստն է, որը ժխտում է առաջին իրողությունը:

Քանի որ գերագույն ժողովի՝ կոնգրեսին ներկայացրած զեկույցը հարցը սկզբից մինչև վերջ ներկայացրել է պատմական տեսակետից, մենք ուզում ենք այդ զեկույցից մեջբերել մի քանի տող:

(Հետևում են մանրամասն հատվածներ վերոհիշյալ զեկույցից, ապա հոդվածը շարունակվում է):

Անհրաժեշտություն չկա այստեղ ևս մեկ անգամ ներկայացնել ապստամբության համար հայերի նախապատրաստական աշխատանքները և առանձին միջադեպերը, քանի որ յուրաքանչյուր ոք դրանց տեղյակ է վերը նշված զեկույցից: Հարցի լուծումը, թե ինչպես մի պետություն, որը խճճվել է կենաց ու մահու պայքարում, պետք է գործի այդ փաստերի հիման վրա, կարելի է թողնել մարդկության խղճին: Այդ գործը կարճելու համար, մենք նախընտրում ենք այդ մասին դատողությունները լսել հենց հայերի բերանից, ովքեր այլևս չեն խուսափում ճշմարտությունն ասել: Այդ իմաստով մեր տրամադրության տակ կա մեծածավալ անձնական նյութ, բայց մենք սահմանափակվում ենք որոշ դատողություններով, որոնք հրապարակվել են հայկական «Դաչար»[84] պարբերականում:

Հասկանալի է, որ տեղահանումը և վերաբնակեցումը, ինչը ներկայացված են կուսակցական զեկույցում և ստիպողական դրդապատճառներով են իրականացվել ընդդեմ հայերի, այդ ժողովրդի համար չէր կարող հաճելի իրադարձություն լինել: «Դաչարն» այդ ծանր տառապանքի համար, որ եկել է հայերի գլխին, մեղադրում է որոշ հայկական կուսակցությունների ու կոմիտեների և գրում է.

«Հայկական կուսակցությունների պատմությունը լի է հանցագործություններով: Իսկական հայերի և իսկական օսմանյան այրերի սպանությունը, ինչպիսիք են Թաուշանջյանը և Ունջյանը, հնչակների, դաշնակցության, ռեֆորմ-հնչակների և այլ կուսակցությունների հանցանքներն են, որոնք հայ անվան համար խայտառակություն են, որ իրենց սեփական միջավայրից սպանել տվին մեղավորների և անմեղների, դրանք միայն մի քանի օրինակ են բազմահարյուրներից:

Պարզ էր, որ հայկական կուսակցությունների գործողությունները, որոնք մտածում էին իրենց գրպաններն ու փորերը լցնելու և իրենց ագահությունը բավարարելու մասին, վնասում են թուրքահայությանը և ի վերջո կհասցնեն ինքնասպանության, ինչն այնուհետև փաստացի կատարվեց»:

Հայկական թերթը այնուհետև վկայակոչում է ցավալի իրադարձությունները, որոնց համար մեղավոր է ճանաչում հայկական կոմիտեներին և ավարտում է նրանով, որ ոչ մի առարկություն չունի այն միջոցառումների դեմ, որ թուրքական կառավարությունը ձեռնարկել է Ռուսաս-

84. Նկատի ունեն «Տաճար» ամսագիրը (ծան. թարգմ.):

տանի հետ դաշնակցած կոմիտեների դեմ: Ավելի ուշ՝ այս հարցին անդրադառնալու վերապահումով, մենք կուզենայինք այսօր մեկ այլ փաստ մատնանշել: Երբ 1324թ.[85] ստեղծվում էր նոր սահմանադրությունը, թուրքերն անկեղծորեն ձգտում էին հիմնել բնակչության տարրերի միասնության քաղաքականություն. նրանց ջանքերը ձախողվեցին ոչ մահմեդական տարրերի անջատողական նկրտումների հետևանքով: Այդ քաղաքականությունը բերեց արյունալի կռիվներ և մատնվեց անհաջողության, իսկ հայկական դեպքերով՝ ամբողջովին կրախի մատնվեց:

Մեզանից ոչ մեկը չի կասկածում, որ «Միավորման և միաձուլման» քաղաքականության մեջ հուսացել ենք, որ մենք ամենաշուտ հայերի հետ լեզու կգտնենք: Մինչդեռ հայկական կոմիտեներն այս ծանր ժամանակներում չկարողացան իրենց զսպել՝դառնալով մեր ամենավտանգավոր թշնամու գործիքը, որով մեզ ապացուցեցին, որ մենք սխալ ճանապարհի վրա ենք: Այդ իսկ պատճառով մենք պետք է փաստերի ճնշմամբ, հարկադրաբար նոր ուղիներ բացենք դեպի նոր նպատակ, այդ անհրաժեշտությունը հիմնվում է այն իմացության վրա, որ բնակչության տարրերի միավորման քաղաքականությունը սնանկացել է և մեր հայրենիքի համար վրա է հասել «մաքրման» դարագլուխը:

Յունուս Նաղի

1916 – 10 – 25 – DE – 001

Սկզբնաղբյուրը՝ PA – AA/ R14094

Ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին՝ ռազմածովային նավատորմի ադմիրալական շտաբի պետ Հոլցենդորֆից

Բեռլին, 25 հոկտեմբերի 1916թ.

Լրիվ գաղտնի

Ձերդ գերազանցություն, պատիվ ունեմ մեծագույն հավատարմությամբ Ձեզ առաքելու կից պատճենը՝ հուսալի աղբյուրներից ստացված հաղորդագրությամբ, քանի որ ես կարծում եմ, որ այն հետաքրքիր կլինի Ձերդ գերազանցության համար:

(Ֆոն Հոլցենդորֆ)

85. 1324թ. պետք է լինի 1824թ. (ծան. թարգմ.):

Հավելված

Պատճեն
01.10. Ամստերդամից

«Իմ ծանոթներից մեկին մի քանի օր առաջ այցելել է ոմն դ-ր Յոհաննես Լեփսիուս՝ գերմանական արևելյան միսիայի նախագահը, Պոտսդամ, Գրոսե-Վայնմայստերշտրասե 45: Այդ պարոնը փորձել է իմ ծանոթին հակել հետևյալ տեսակետներին և խնդրել է նրան՝ իր ազդեցությունը գործադրել ու շրջապատի մարդկանց պարզաբանել իր տեսակետը: Այս ամբողջը ես չէի հայտնի, եթե դ-ր Լեփսիուսը չհաստատեր, որ իր քարոզչական աշխատանքը արժանանում է արտգործնախարարության, ինչպես նաև հենց պարոն ռայխսկանցլերի հավանությանը, և իբր ռայխսկանցլերը տեղեկացրել է, թե կաջակցի նրա ջանքերին: Վատթարագույնը սակայն այն է, որ դ-ր Լեփսիուսը, առանց վերոնշյալ հավանության, իր գործելակերպով դրականորեն նպաստում է անգլիական խաղերին: Նա իր խիստ հակաթուրքական բրոշյուրները բազմաթիվ օրինակներով ուղարկում է Ամերիկա՝ դ-ր Ջոն Մոթին՝ ԱՄՆ-ում հայտնի միսիայի ղեկավարին, իսկ անգլիացիներն, իհարկե, այդ գրառումները չփոխանցելուց ոչ մի շահ չունեն:

Դ-ր Լեփսիուսն ինձ հայտնել է, որ ինքը (դ - ր Լեփ.) կապ ունի է Անգլիայի պետական այրերի հետ հաշտության մի նախագծի հասնելու համար: Նա պնդում է, որ այդ կապերը հաստատել է ռայխսկանցլերի ուղղակի հանձնարարությամբ: Նա արտահայտում է այն միտքը, որ ռայխսկանցլերի կուսակցությունը Գերմանիայում հիմա այդքան ուժեղացել է, քանզի միաժամանակ Հինդենբուրգի կուսակցությունն է, երկուսն էլ Արևելյան ռազմաճակատը համարում են գլխավորը, և դրա համար նախ այնտեղ պետք է հաշիվները փակել ռուսների հետ, ինչից հետո Անգլիայի հետ հնարավոր կլինի համաձայնության գալ, որի արդյունքում Անգլիայի պահանջները կբավարարվեն Փոքր Ասիայի թուրքական շրջանով: Ռայխսկանցլերի կուսակցությունը հիմա այնքան է ուժեղացել, որ իր կամքը կարող է թելադրել վերոհիշյալ իմաստով, և մեծ բանկերն ու Գերմանիայի ֆինանսավորողներն աշխուժորեն աջակցում են այդ կուսակցությանը, որը միջնորդում է Թուրքիայի հաշվին հնարավորին չափ շուտափույթ համաձայնության գալ Անգլիայի հետ:

Դ-ր Լեփսիուսն ասում է, որ ինքը թուրքերի մեծ թշնամին է, որովհետև տեսել է հայերի կոտորածները: Դրա համար էլ նա Հոլանդիայում դիմում է նաև կրոնական շրջանակներին և նույնն անում է նաև Անգլիայում և Ամերիկայում: Նա մի բրոշյուր է հրատարակել «Հայաստանում քրիստոնյաների կոտորածի մասին», ինչպես նա է ասում. այդ ամբողջ քարոզչությունը ջուր է լցնում Անգլիայի ջրաղացին, որի դիվանագետները չեն վարանի Կոստանդնուպոլսին զարտուղի ճանապարհով տեղյակ պահել, որ բարձրագույն գերմանական կողմն առաջարկում է Թուրքիայի հաշվին Անգլիայի հետ լեզու գտնել, մինչդեռ մյուս կոմից էլ դ-ր Լեփսիուսի բրոշյուրից կարելի է թուրքերի դեմ համընդհանուր քրիստոնեական վրդովմունքի քարոզչության հարուստ նյութ քաղել: Դ-ր Լեփսիուսն ասում է, որ մի հայի Շվեյցարիայից ուղարկել է լորդ Բրայսի մոտ՝ վերոհիշյալ նախագծի վերաբերյալ անգլիական ազդեցիկ շրջանակների կարծիքն իմանալու և պատասխան ստանալու ակնկալիքով, Անգլիայում նույնպես կա մի ուժեղ կուսակցություն, որը չի հրաժարվի այդ հիմունքով համաձայնության գալ Գերմանիայի հետ, և նույնիսկ լորդ Գրեյը հակված է այդ ծրագրին: Ինքը՝ դ-ր Լեփսիուսը, դրա վերաբերյալ հաղորդել է արտգործնախարարությանը և իբր պատասխան է ստացել, թե խրախուսում են շարունակել իր «հաշտարար ջանքերը» Հոլանդիայից մինչև այժմյան ուղղությամբ: Ռայխսկանցլերն էլ է հայտնել իր համակրանքը նրան՝ իր ջանքերի համար:

Ես դ-ր Լեփսիուսի այն հաղորդումը, թե ինքը գործում է արտգործնախարարության հանձնարարությամբ և դրա համար ունի նույնիսկ ռայխսկանցլերի թույլտվությունը, իհարկե, չեմ կարող լուրջ ընդունել: Ես այս մանրամասները հայտնում եմ միայն նրա համար, որ այդ մարդը «Հայաստանում թուրքերի իրականացրած քրիստոնյաների զարհուրելի կոտորածների մասին» իր քարոզչությամբ, ինչպես ինքն է ասում, վնասում է գերմանական շահերը և դրանով նպաստում է մեր թշնամիներին: Բացի այդ, այստեղ գերմանամետ կրոնական շրջանակներում որոշ մարդիկ հավատում են նրա անզգույշ պատմություններին: Այդ իսկ պատճառով ես իմ պարտքն եմ համարում Ձեր ուշադրությունը հրավիրել այդպիսի տարօրինակ «հաշտարար ձգտումների» վրա:

[Յագովի պատասխանը 6.11]

Գաղտնի

Դ - ր Լեփսիուսն իր հայկական քարոզչությամբ անընդհատ ծանր անհարմարություններ է ստեղծում կայզերական կառավարության համար: Նա գիտե, որ իր հակաթուրքական քարոզչությունն է արժանանում ռայխսկանցլերի և արտգործնախարարության ամենասուր քննադատությանը: Այդ առումով նա արդեն վաղուց բացահայտ հակամարտության մեջ է կառավարության հետ: Որպեսզի դժվարացնեն քարոզչական բնույթի նրա ուղևորությունները, կառավարության նախագահին այս տարվա օգոստոսի 8-ին Պոտսդամում առաջարկել են որոշում կայացնել՝ Շվեյցարիայի համար պահանջվող դ-ր Լեփսիուսի մուտքի վիզա տալու խնդրանքը մերժել: Սեպտեմբերի 20-ից այդ միջնորդությունը տարածվեց նրա անձնագրերի և այլ փաստաթղթերի վրա՝ ամբողջ արտասահմանի համար: Հոլանդիա կատարած ուղևորությունը հնարավոր եղավ միայն նրանով, որ նա նախապես ձեռք էր բերել մինչև 1917թ. հունվարի վերջը վավեր անձնագիր՝ արտասահմանի համար[86]:

Այն, որ պարոն Լեփսիուսն իր քարոզչության համար չի ունեցել ո՛չ ռայխսկանցլերի և ո՛չ էլ արտգործնախարարության հանձնարարությունը, բացահայտ է: Շատ ավելի գրոտեսկային է թվում այն մտահղացումը, որ իբր Լեփսիուսը գործում է քաղաքական կառույցների հանձնարարությամբ կամ համաձայնությամբ, երբ նա փորձում է Թուրքիայի հաշվին Անգլիայի հետ փոխըմբռնման ճամփա բացել:

Ես շնորհակալ եմ, որ ռազմածովային նավատորմի ծովակալական շտաբը, որն առանց այլևայլի կռահել է պարոն Լեփսիուսի կարծեցյալ պնդումների անմտությունը, գործակալության այս հաղորդմամբ ինձ այս գործին հետևելու հնարավորություն է ստեղծում:

[Յագով]

1916 – 11 – 09 – DE – 001

Սկզբնաղբյուրը՝ PA – AA/ R14094

Հաագայի դիվանագիտական ներկայացուցչությանը՝ արտգործնախարարության շտատսքարտուղար Յագովից

№ 216

Բեռլին, 9 նոյեմբերի 1916թ.

86. Տես 1916-09-16-DE-001:

Գաղտնի

Ըստ Հոլանդիայից ստացված կից նամակի քաղվածքի, դ-ր Լեփսիուսը կարծես թե հաստատում է, որ իր հակաթուրքական քարոզչությունը հովանավորում ու աջակցում են ռայխսկանցլերը և արտգործնախարարությունը: Ապա նաև հաստատում է, որ ռայխսկանցլերի և արտգործնախարարության ուղղակի հանձնարարությամբ կապեր է հաստատել Անգլիայի պետական այրերի հետ, որպեսզի Հայկական հարցի օգտագործմամբ Թուրքիայի հաշվին համաձայնության հասնի Անգլիայի հետ:

Հավելվածի բովանդակության բանավոր օգտագործմամբ Դուք և այլք հարցաքննեցեք պարոն Լեփսիուսին, թե իրոք արե՞լ է իրեն վերագրված և փաստերին հակասող ձևակերպումներ: Եթե նա ժխտում է այդ, ինչպես որ կարելի է ակնկալել, ապա խնդրում եմ նրա խոսքերն արձանագրել և նրա ստորագրությամբ ներկայացնել: Հակառակ դեպքում ես խնդրում եմ նախ զեկուցել:

Բացառապես Ձեր և մյ. անձնական և խիստ գաղտնի կողմնորոշման նպատակով նշում եմ, որ դ - ր Լեփսիուսն իր հայկական քարոզչությամբ շարունակ անհարմարություններ է ստեղծում կայզերական կառավարության համար: Կայզերական կառավարությունը պատերազմն սկսվելուն պես հոգացել է, որ համառ առարկություններով և այլ միջոցառումներով փորձի Բարձր Դռան վրա ազդել հայերի ճակատագիրը մեղմելու համար: Համենայնդեպս, այն հիմնվում է բազմաթիվ դեպքերով հաստատված այն տեսակետի վրա, որ հրապարակային քարոզչությունը, մանավանդ երբ ուղեկցվում է Թուրքիայի դեմ գրոհներով՝ հաշվի չառնելով դրանից մեզ համար բխող վնասները, նույնիսկ հայերին ոչ թե օգնում է, այլ վնասում: Պարոն Լեփսիուսը տեղյակ է այդ տեսակետին: Այդ իսկ պատճառով նա գիտե, որ իր քարոզչությունը ռայխսկանցլերի և արտգործնախարարության կողմից ամենասուր կերպով քննադատվում է և այդ իսկ պատճառով վաղուց ի վեր բացահայտ հակամարտության մեջ է կառավարության հետ: Որպեսզի դժվարացնեն քարոզչական նպատակով նրա ուղևորությունները, կառավարության նախագահն այս տարվա օգոստոսի 8-ին Պոտսդամում միջնորդել է՝ միջոցներ ձեռնարկել դ-ր Լեփսիուսի Շվեյցարիա մեկնելու թույլտվության դիմումը մերժելու համար: Սեպտեմբերի 20-ից այդ արգելքը տարածվել է նաև մյուս բոլոր երկրների վրա: Հոլանդիա կատարած ուղևորությունը հնարավոր է դարձել միայն նրանով, որ նա Պոտսդամում ոստիկանության վարչությունից նախապես ձեռք է բերել. մինչև 1917թ. հունվարի վերջը վավեր անձնագիր՝ արտասահման մեկնելու համար: Քանի որ նրա քարոզչությունը մեծապես վնասում է կայսրության շահերին, հարց է ծագում, թե ինչպես է հնարավոր Հոլանդիայի նրա ուղևորությունը ժամանակից շուտ ընդհատել: Որքանով այստեղ հայտնի է, դ-ր Լեփսիուսը հոլանդական ծովափի մի առողջարանում է: Քանի որ ծովափնյա շրջանում պաշարողական դրություն է, երևի թե հնարավոր է նիդեռլանդական կառավարությանը գաղտնի դրդել՝ Լեփսիուսին «ռազմական նկատառումներով» արտաքսել Գերմանիա: Այնուամենայիվ, չպետք է հրապարակել, թե այդ միջոցառման նախաձեռնությունը գալիս է կայզերական կառավարությունից: Խնդրում եմ այս առնչությամբ գրել Ձեր և մյ. կարծիքը:

Յ[ագով]

1916 – 11 – 10 – DE – 001

Սկզբնաղբյուրը՝ PA – AA /Կոստ.դեսպ./ 174

Կոստանդնուպոլսի դեսպանությանը՝ Սմիռնայի հյուպատոս Շպեից

№ 50

Սմիռնա, 10 նոյեմբերի 1916թ.

Մի քանի շաբաթ առաջ կաթոլիկական գերեզմանոցում հին ռումբեր ու նմանօրինակ բաներ են գտել, որոնց հայկական ծագումը կարծես թե հաստատ է: Վալին հայ եպիսկոպոսից պահանջել է արտաքսման նպատակով տալ համայնքի համապատասխան անհուսալի անձանց անունները: Միաժամանակ պահանջել է հայ եպիսկոպոսի միջնորդությամբ զենքի հանձնումը՝ պատժից ազատելու համաձայնությամբ: Վերջինս որոշ ժամանակ անց հայտնել է, որ այդպիսի անձինք, և թաքցրած զենքեր ու այդօրինակ բաներ չկան: Դրան հետևեց նոր միջամտություն: Համայնքից կրկին ապարդյուն պահանջեցին մասնակիցների անունները: Վալին մատնանշում է, որ այստեղի երիտթուրքական կոմիտեն գնալով ավելի դժգոհ է հայերին խնայելու քաղաքականությունից, այնպես որ նրա դիրքը Կոստանդնուպոլսում թուլանում է: Կոստանդնուպոլիսը պետք է որպահանջած լինի տեղահանում: Վալին հանձնարարել է այստեղի ոստիկանապետին, որին բնութագրում են որպես վատահամբավ մարդ, ձերբակալել կասկածելի հայերին և այլոց, ովքեր կարող էին

այդպիսի մարդկանց մասին տեղեկություններ հայտնել: Նոյեմբերի 8-ին հետևեցին ձերբակալությունները, հաջորդ գիշեր ընտանիքները՝ ծեր մարդկանցով և երեխաներով հանդերձ, առավոտյան մոտ 300 առանց իրավունքի[87]... ուղարկել են երկաթուղով: Վալին ոստիկանության պետին տվել է գործելու ազատություն: Պարզապես ներկայացնել տվյալը, թե օրական քանի վագոն է պետք տարագիրների համար:

Գերմանացիների վարկը լրջագույնս վտանգված է:

Այստեղ գտնվող բանակի առաջնորդը վալիին տեղեկացրել է, որ ձերբակալություններ ու տեղահանումներ ինքն այլևս չի հանդուրժի, քանի որ դրանք ազդում են ռազմական վիճակի վրա:

[Շպե]

[Դեսպանության պատասխանը № 59, 13.11]

Բարձր Դռան հանդեպ քայլերը, ցավոք, անհեռանկար են: Գործերի հետագա ընթացքի մասին խնդրում եմ հայտնել հեռագրային հաղորդագրությամբ:

1916 – 11 – 12 – DE – 001

Սկզբնաղբյուրը՝ PA – AA /Կոստ. դեսպ./ 174 / R 14094

Կոստանդնուպոլսի դեսպանության գործերի հավատարմատար Ռադովիցին՝ Մարշալ Լիման ֆոն Սանդերսից

Պանդերմա, 12 նոյեմբերի 1916թ.

Շատ հարգելի պարոն Ռադովից,

«Ես ինձ իրավունք եմ վերապահում հավելվածին կից ուղարկել ինժեներ Կ-ի ճշգրիտ զեկուցագրի պատճենը, որը պարունակում է ուշագրավ որոշ մանրամասներ[88]: Թե ինչ է կատարվել այս ընթացքում վատ հարաբերությունները փոխելու համար, որքանով ենք մենք ի զորու դա անելու, ես իրավունք վերապահեցի գրել Սմիռնայից: Այստեղի

87. Բառերի խումբը վերծանված չէ:

88. Զեկուցագիրը փաստաթղթերում չկա:

հատվածի այժմյան հրամանատարը, զեկուցագրում նշված գնդապետ Նուրեդին բեյը, ինձ այդ մասին բանավոր հայտնեց:

Այնուհետև ես կցում եմ կոմս Շպեի մի նամակը, որ նա երեկ ինձ հանձնեց Սմիռնայում: Այն վերաբերում է հայերի տեղահանումներին, որոնք մեծ հուզումներ են առաջացրել Սմիռնայում: «Քանի որ այդպիսի զանգվածային տեղահանումներն ընդգրկում են ռազմական շրջանը՝ զինապարտներին, երկաթուղու օգտագործումը, առողջապահական ձեռնարկներ, բնակչության հուզումները թշնամուն մոտ քաղաքում, ապա ես հայտնեցի վալիին, որ առանց իմ թույլտվության այլևս չպետք է լինեն զանգվածային ձերբակալություններ և տեղահանումներ: Ես հասկացրի վալիին, որ կրկնվելու դեպքում ես դրանք կարգելեմ զենքի ուժով:

Դրանից հետո վալին զիջեց և ասաց, որ դրանք կդադարեցվեն:

Բայց քանի որ նա նշում է, որ դրանք հրահանգված են Կոստանդնուպոլսից (Թալեաթ բեյը), ապա ես վստահ չեմ, որ գոնե այլ ուղիներ կընտրեն:

Որքանով ես կարողացա տեղեկանալ, Սմիռնայում ապրող հայերի թիվն անցնում է 6-7000-ից, նրանց մեջ՝ նաև քաղաքի ամենահարուստ մարդիկ, բայց նաև որոշ տհաճ անձինք»:

Ցավոք, հրատապ ծառայողական հանգամանքների բերումով հնարավոր չէ վաղը պարոն դեսպանի ժամանման առիթով ճիշտ ժամանակին լինել Կոստանդնուպոլսում: Բայց ես կգամ ամենաուշը հինգշաբթի օրը, որպեսզի հրաժեշտ տամ Ձեզ և Ձեր մեծարգո տիկնոջը ու ողջունեմ պարոն դեսպանին:

Այն, որ Դուք, մեծարգո պարոն Ռադովից, այլևս հնարավոր չեք համարում Սմիռնա գալը, ես ընդունեցի մեծագույն ափսոսանքով:

Միշտ Ձեզ անկեղծորեն հավատարիմ՝

Լիման ֆոն Սանդերս

Հավելված

Սմիռնա, 11 նոյեմբերի 1916թ.

Մի քանի շաբաթ առաջ այստեղի կաթոլիկական գերեզմանոցում հայտնաբերել են հին ռումբերի որոշ քանակություն: Վալին դրանից հետո այստեղի հայերից պահանջել է, որ նրանք, քանի որ դրանց հայկական ծագումը կարծես թե անհերքելի է, հանձնեն այդ գործի մասնակիցներին, ընդ որում՝ իրենց եպիսկոպոսի միջնորդությամբ:

Ըստ երևույթին, խոսքը շատ նման մի դեպքի մասին է, ինչպիսին այստեղ կատարվել է երեք տարի առաջ: Մի տեղաբնակ չորս տարի առաջ գնել է մի տուն, և երբ երեք տարի առաջ մատնել են, որ այդ տանը թաքցված են հայկական ռումբեր, գնորդին դրա համար ձերբակալել են, թեպետ նա անտեղյակ է եղել թաքցված իրերի մասին:

Երբ այստեղի հայկական կոմիտեն երիտթուրքական կոմիտեի հետ մշակում էր սահմանադրությունը, վերջիններիս հայտնի էր այն ամենը, ինչ կատարվում էր առաջինների մեջ: Երբ սկսեց գործել սահմանադրությունը, երիտթուրքական կոմիտեն շուտ եկավ և սկսեց հետապնդել հայերին: Ըստ ինձ հասած լուրերի, հայկական միության այն ժամանակվա կոմիտեի բոլոր անդամներին հետզհետե բռնել են: Ըստ ամենայն հավանականության՝ այս նոր գտնված ռումբերը պատկանում են սահմանադրությանը նախորդած ժամանակներին:

Այստեղի հայերը՝ եպիսկոպոսի հետ, հերքել են այլ մասնակիցների մասին որևէ բան իմանալը: Բայց վալին նրանց պատասխանել է, որ ինքը գիտե շարժման գոյության մասին, և նրանք պետք է հանձնեն մասնակիցներին, այլապես ինքն ստիպած կլինի հանգամանքների պարզաբանումը հանձնարարել ոստիկանությանը: Հայերը կրկին ժխտել են տվյալներ տալու հնարավորությունը և դրանից հետո ոստիկանությունն սկսել է գործել: Ձեռնարկվել են մի շարք ձերբակալություններ, իսկ նոյեմբերի 9-ին վաղ առավոտյան նաև կանանց ու երեխաներին չեն խնայել, Սմիռնայից և Կորդելիոյից մարդկանց այդ ամբողջ բազմությունը երկաթուղով ուղարկել են Աֆիոն Գարահիսարի ուղղությամբ: Լուրերից պարզվում է, որ ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց ու երեխաներին բաժանում են իրարից և խցկում են տարբեր վագոններ, վերաբերմունքն իսկապես դաժան է եղել: Հայերը հավաքվել և նոյեմբերի 9-ին երեկոյան գնացել են Բուռնաբաթ՝ վալիի մոտ և խնդրել են խնայել իրենց: Վալին նրանց պատասխանել է, որ ինքը գիտե, որ այստեղ դեռ կան հեղափոխական հայեր և ինքը չի կարող հանդուրժել, որ իրենք միշտ նստած լինեն վառոդի տակառի վրա, հայերը պետք է իրեն հանձնեին մասնակիցներին, դա կարող էր արվել առանց մատնիչի անունը նշելու, մի սովորական ծրարով, որը պետք է փոխանցեին եպիսկոպոսին: Դրա համար նրանց տալիս է ժամկետ՝ մինչև հաջորդ երեքշաբթի, և եթե մինչ այդ ցուցակը չներկայացվի, ապա բոլոր հայերն առանց բացառության կարտաքսվեն: Ես մի տեղից լսել եմ, որ պահանջվում է 15 հոգուց բաղկացած ցուցակ:

Այն առարկությանը, թե անուններ տալու պարագայում կարող են առաջնորդվել անձնական թշնամանքով, հայ եպիսկոպոսը պատասխանել է, որ կարելի է դրանից չվախենալ, քանի որ ինքը կստուգի դրանք:

Այս ամբողջ գործը, չխոսելով իրավական բռնությունների և զոհերի համար անկանխատեսելի հետևանքների մասին, մեծ կարևորություն ունի գերմանական շահերի կամ գերմանական վարկանիշի համար:

Կառավարության միջոցառումներն սկսվեցին մի ժամանակ, երբ բացի կորպուսի գերմանացի հրամանատարից, Սմիռնայում էր նաև գլխավոր հրամանատարը՝ Մարշալ Լիման ֆոն Սանդերսը: Քաղաքում ասեկոսեներ կային, թե ծրագրված գործողությունները նախապատրաստել են գերմանացիները, որպեսզի այս ձևով կարողանան ազատվել իրենց առևտրի համար աննպաստ հայ մրցակիցներից:

Նյութապես կարող է ուղղակի վնաս առաջանել, քանի որ փաստորեն հայ վաճառականները գնել են մեծ քանակությամբ գերմանական ապրանքներ, որոնք մասամբ դեռ վճարված չեն: Ունեցվածքի մասին նոր օրենքի գործադրմամբ անազնիվ թուրք տարրերին հնարավորություն կընձեռվի՝ առանց այլևայլի տիրանալ հայերի մոտ դեռևս պահվող ապրանքներին, ինչպես նաև նրանց զգալի կարողությանը: Եվ այդ ամենն այն էժան պատրվակով, թե դա արել են գերմանացիները:

Ընդհանուր առմամբ ֆրանսիական և անգլիական ազդեցությամբ աճած քրիստոնյա բնակչությունն այդ լուրերն ընդունում է ոչ տհաճորեն, էլ ընդհանրապես չխոսելով թշնամական պետությունների քաղաքացիների մասին, ովքեր մոտ են ամերիկյան հյուպատոսին և որի զեկուցագիրն իրեն սպասել չի տա:

Ձերդ գերազանցություն Մարշալ Լիման ֆոն Սանդերսին

Լ. Շպե

[Կոստանդնուպոլսի դեսպանությունը՝ ռայխսկանցլերին 14.11]

Նշված զեկուցագիրն ավարտելուց հետո մի նամակ ստացա Մարշալ Լիման ֆոն Սանդերսից այս ամսվա 12-ի թվագրմամբ որին կցված էր կոմս Շպեի այս ամսվա 11-ի գրառումը:

Մարշալը գրում է հետևյալը: < >

Կոմս Շպեի գրառումից լրացնում եմ հետևյալը: < >

[Գլխավոր շտաբկայան՝ Լոսովին, հեռագրով, 14.11]

Պատճեն

Կոստանդնուպոլսի գործերի հավատարմատարը ս.թ. 13-ին № 1191-ով հեռագրում է. Այս օրերին սկսվել է հայերի զանգվածային տեղահանումը: Մարշալ Լիման ֆոն Սանդերսը, ելնելով ռազմական շահերից, բողոքել է: Ռազմական ինչպիսի՞ հետևանքներից պետք է զգուշանալ: Վտանգված է Տավրոսի և Ամանոսի երկաթուղու հետագա կառուցո՞ւմը:

№ 15635 Ի. բ. - Լուդենդորֆ:

[Գերագույն շտաբկայան, գործող բանակի հրամանատարին՝ ռազմական լիազոր ներկայացուցիչ Լոսովից 16.11]

Էնվեր փաշան, ինչպես նաև (թուրքական) գլխավոր շտաբկայանի երկրորդ բաժանմունքի պետը, ով մշակում է այդ գործերը և ճշգրիտ տեղեկացված է, ոչինչ չգիտեն հայերի նոր տեղահանումների մասին: Խոսք կարող է լինել ծայրահեղ դեպքում միայն տեղային բնույթի, աննշան միջոցառումների մասին՝ ընդդեմ առանձին կասկածելի անձանց: Այդ իսկ պատճառով ես կարծում եմ, որ աննպաստ ռազմական հետևանքներ առայժմ չեն սպասվում:

[Կոստանդնուպոլսի դեսպանությանը՝ Ցիմերմանից (№ 1315) 18.11]

Այնտեղի № 1191 հեռագիրը հաղորդվել է բանակի գերագույն հրամանատարությանը:

Գեներալ Լուդենդորֆը դրանից հետո հարցում է արել Կոստանդնուպոլիս և գեներալ ֆոն Լոսովից ստացել է պատասխանը: [Տե՛ս վերևի հեռագիրը Լոսովից 16.11]

Այդ շարադրանքը այնտեղի № 703[89] զեկուցագրի հետ դժվար համատեղելի է: Խնդրում եմ արագացնել հեռագրային հաղորդագրությունը:

[Արտգործնախարարությանը՝ Քյուհլմանից (№ 1220) 21.11]

Սմիռնայի հյուպատոսն այս ամսվա 18-ին հեռագրել է: Հայկական համայնքը 30 անձանց նշել է որպես վտանգավոր, ում անունը բացակայում է, մնում են այստեղ կամ պետք է վերադառնան:

89. Փաստ. 1916-11-13-DE-001:

1916 – 11 – 13 – DE – 002

Սկզբնաղբյուրը՝ PA – AA/R1 4094 /Կոստ. դեսպ./ 174

Արտգործնախարարությանը՝ Կոստանդնուպոլսում գործերի հավատարմատար Ռադովիցից

№ 1191

Կոստանդնուպոլիս, 13 նոյեմբերի 1916թ.

Այս օրերին սկսվել են Սմիռնայից հայերի զանգվածային տեղահանումները: Մարշալ Լիման ֆոն Սանդերսը, ելնելով ռազմական շահերից, բողոքել է, հետևում է զեկուցագիրը:

[Ռադովից]

[Կոստանդնուպոլսի դեսպանությանը՝ արտգործնախարարությունից (Յագով) (№ 1301) 15.11]

Խնդրում եմ Ձեր հերթին նույնպես ազդել՝ Սմիռնայից հայերի տեղահանումը դադարեցնելու կամ գոնե հետաձգելու հնարավորություններ գտնելու համար: Քանի որ Գերմանիայում աշխատուժի պակաս կա, հարց է ծագում, թե մենք արդյոք կարո՞ղ ենք Բարձր Դռանն առաջարկել՝ հայերին արտաքսել Գերմանիա: Խնդրում եմ հեռագրային հաղորդագրություն, հատկապես Սմիռնայում հայերի մոտավոր թվի վերաբերյալ:

Ամերիկան այստեղ կրկին բողոքել է հայերի տեղահանման դեմ և մեզ խնդրել է հրատապորեն աջակցել:

1916 – 11 – 17 – DE – 001

Սկզբնաղբյուրը՝ PA-AA/R14094
Տպագրված՝ Գ և Հ փաստ. 307 (կրճ.)

Ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին՝ Կոստանդնուպոլսում արտակարգ միսիայի դեսպան Քյուհլմանից

№ 710

Պերա, 17 նոյեմբերի 1916թ.

Ի լրումն այս ամսվա 13-ի № 703 զեկուցագրի և զեկուցագրի այլ վերաշարադրանքը[90]:

1 Հավելված

Պատիվ ունեմ Ձերդ գերազանցությանը կից հավելվածով ներկայացնել մարշալ Լիման ֆոն Սանդերսի գրառումների պատճենը՝ Սմիռնայից հայերի տեղահանման վերաբերյալ: Ինչպես բխում է դրանից և վերոնշյալ զեկուցագրից, հայերի դեմ ուղղված միջոցառումներն իրականացվել են Կոստանդնուպոլսից եկած կարգադրությամբ: Տեղահանման համար պատրվակ ծառայած ռումբերի և զենքի կարծեցյալ հայտնաբերումը հայկական գերեզմանոցում, արդեն հայտնի հնարքների դասին է պատկանում, որոնք օգտագործում են թուրքական իշխանությունները: Մարշալի միջամտությունը ողջունելի է նաև նրա համար, որ Սմիռնայում, ինչպես նաև այլ վայրերում, որտեղ այդպիսի դեպքեր եղել են, լուրեր էին տարածում, թե իբր հայերի տեղահանումը պահանջել են Գերմանիայի ռազմական կառույցները: Ես չեմ հապաղի այս միջադեպի առիթով դիմել թուրքական կառավարությանը և խորհուրդ տամ հակական հարցում մեծագույն զգուշավորություն ցուցաբերել, բայց կարծում եմ, որ պետք է ձեռնպահ մնալ հայերին Գերմանիա տեղափոխելու առաջարկից, որպեսզի թուրքերի մեջ մեծ անվստահություն չառաջանա[91]:

Քյուիլման

Հավելված

Պատճեն

Ռազմական միսիա B № 1950. (գաղտնի)

Կոստանդնուպոլիս, 17 նոյեմբերի 1916թ.

90. A 31127 և A 313936:

91. Ցիմերմանի նշումը. ինքնին հասկանալի է՝ խոսք անգամ չի կարող լինել:

Զեկուցագիր

Նոյեմբերի 4-ից 11-ը ես Սմիռնայում էի՝ նոր ձևավորված 56-րդ դիվիզիայի և եվրոպական ռազմաթեմ ուղարկվող 16-րդ դիվիզիայի ստուգման նպատակով:

Հինգշաբթի օրը՝ նոյեմբերի 9-ին, երեկոյան կողմ, երբ ես վերադառնում էի Ֆոկիայի մերձակայքում գտնվող ավստրիական մարտկոցի ստուգումից, հյուպատոս կոմս ֆոն Շպեն ինձ հայտնեց, որ ամսի 8-ին և նախորդ գիշերը Սմիռնայում իրականացվել են բազմաթիվ հայերի ձերբակալություններ, և որ այդ հայերին երկաթուղով տեղափոխել են երկրի խորքը:

Ես տարբեր տեղերից հավաքեցի ավելի ճշգրիտ տեղեկություններ, ինձ համար հստակ դարձավ, որ ոստիկանության միջոցով, մասամբ ամենաբիրտ ձևերով, երբ բոլոր կանանց և հիվանդ երեխաներին գիշերը հանել են անկողնուց, մի քանի հարյուր հայերի ձերբակալել և ուղիղ երկաթուղու մոտ են տարել: Հայերով լցված երկու գնացք ուղարկվել են: Այդ գործողությունների առնչությամբ քաղաքում մեծ հուզումներ էին:

Նոյեմբերի 10-ի առավոտյան 5-րդ բանակի շտաբի պետ, գնդապետ Քյասիմ բեյին ուղարկեցի վալիի մոտ և հաղորդեցի, որ ես այլևս չեմ հանդուրժի այդօրինակ զանգվածային ձերբակալություններն ու տեղահանումները, ինչպիսիք տեղի են ունենում թշնամու սպառնալիքի ենթակա քաղաքում՝ տարբեր ուղղություններով թափանցելով ռազմական գործողությունների շրջան: Եթե ոստիկանությունը՝ չնայած դրան, կշարունակի այդ միջոցառումները, ապա ես զենքի ուժով, իմ տրամադրության տակ եղած զորաջոկատներով դա կարգելեմ: Ես վալիին մինչև այսօրվա կեսօրը ժամկետ եմ տվել որոշում կայացնելու համար:

Սմիռնայում հրամաններ արձակող գեներալի՝ Պրուսիայի թագ. գնդապետ Թրոմերի հետ, որն արդեն տեղյակ է գործողություններին, մայոր Փրիգեի միջոցով համաձայնության եկա վերոնշյալ հաղորդման և ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ:

Կեսօրին՝ ժամը 1.30-ի սահմաններում մայոր Քյասիմ բեյը վերադարձավ վալիի մոտից, որը Բուռնաբաղում էր, և ինձ հայտնեց, որ ձերբակալություններն ու տեղահանումները դադարեցվել են և չեն կրկնվի:

Նույն օրը կեսօրից հետո ինձ մոտ եկավ վալիի դեպարտամենտի առաջին ղեկավարը՝ Կարա Բիբեր բեյը, որի հետ մանրամասնորեն զրուցեցի տվյալ գործի մասին:

Նույն օրը երեկոյան Սմիռնայի մերձակայքում գտնվող Ուրլայից (մոտավորապես 25.000 հույն բնակիչ) խնդրանքով ինձ մոտ եկան երեք հույն և հայտնեցին, որ այնտեղ ուղարկված 30 ժանդարմ առանց հարցաքննության ձերբակալել և Սմիռնայի բանտն են տարել Ուրլայի ամենահարգելի և ամենահարուստ երևելիներին:

Նոյեմբերի 11-ին առավոտյան ստուգման նպատակով Ուրլայում էի, այդ փաստը հաստատվեց և զորամասի հրամանատարից ստացա ավելի մանրամասն տեղեկություններ:

Նոյեմբերի 11-ին կեսօրից հետո վալին անձամբ այցելեց ինձ: Երկար քննարկումների արդյունքում վալին ինձ բացատրեց հայերի զանգվածային ձերբակալությունների պատճառները: Ես չէի կարող հավանություն տալ նշված պատճառներին, որոնք հիմնված են լրիվ անբավարար հիմունքների վրա և շեշտեցի, որ ռազմական վիճակն անպայման պահանջում է մեծագույն հանգստություն՝ հիմնականում հույներով բնակեցված Սմիռնա քաղաքում:

Վալին ինձ **մտերմաբար** հայտնեց, որ նշված պատճառներից բխող միջոցառումները համաձայնեցրել է նախարար Թալեաթ բեյի և այլ ղեկավար անձանց (կոմիտեի անդամների) հետ:

Ես բացատրեցի վալիին, որ ես այստեղ, որպես գլխավոր հրամանատար, չեմ կարող հանդուրժել, որ վտանգվի իմ շրջանի հանգիստը: Նա կարող է վկայակոչել ինձ: Նա համաձայնեց դրան և խոստացավ ինձ գրավոր տեղեկացնել:

Նաև հորդորեցի անմիջապես հետազոտել Ուրլայի՝ ըստ երևույթին անմեղ ձերբակալված բնակիչների հարցը:

Երեկոյան ես մեկնեցի: Վալին երկաթուղային կայարանում էր:

Պանդերմա վերադառնալուց կարճ ժամանակ անց գերագույն հրամանատարությունն ստացավ վալիի նամակը, որտեղ ասված էր, թե ուր են տարել հայերին, նաև հայտնում էր, որ անմեղ ճանաչված անձանց հետ կուղարկեն Սմիռնա:

[Լիման ֆոն Սանդերս]
Պրուսիայի թագ. հեծելազորի գեներալ

1916 – 11 – 18 – DE – 003

Սկզբնաղբյուրը՝ PA – AA /R1 – 4049

Կոստանդնուպոլսում գործերի հավատարմատար Ռադովիցին՝ Սմիռնայի հյուպատոս Շպեից

S. № 108/2087

Սմիռնա, 18 նոյեմբերի 1916թ.

Ինչպես արդեն հայտնի է, նոյեմբերի 8-ին կայացել են հայերի, հաջորդ գիշեր՝ նաև նրանց ընտանիքների մի շարք ձերբակալություններ, որոնց բոլորին հաջորդ առավոտյան երկաթուղով տեղափոխել են երկրի խորքը: Սպառնալիքի տակ են մնացած հայերը:

Ամբողջի փոխադարձ կապի վերաբերյալ սպառիչ պատկերացում է տալիս նահանգապետի ճառը, որ նա ամսի 9-ի երեկոյան ասել է իր տանը՝ հայկական համայնքի 12 հեղինակավոր ներկայացուցիչների ներկայությամբ: Որպես այդ ճառի բովանդակություն՝ գաղտնի ինձ հայտնել են հետևյալը:

«Թուրքիայի պատերազմի մեջ մտնելու ժամանակ կառավարությունը երկյուղում էր, որ հատկապես հայկական գավառներում հայերը կանցնեն ռուսների կողմը, մինչդեռ մյուս վիլայեթներում կարող էին հույս դնել նրանց հավատարմության վրա: Վերջին ակնկալիքներում նա հուսախաբ եղավ: Գոյություն ուներ մի կազմակերպություն, որն ուզում էր ոչ միայն հեշտացնել ռուսների մուտքը, այլև պաշարման ժամանակ նրանց ծառայություններ մատուցել: Աղրիանուպոլսում և Անգորայում հայտնաբերել են հեղափոխական նախապատրաստություններ, և արևելյան ռազմաճակատում հայերի ոճրագործությունները կառավարությանն ստիպեցին ճնշումներ կիրառել ընդդեմ հայերի: Կառավարությունն այդ գավառներում պարբերաբար իրականացրել է հայերի էվակուացիա և հայտնի է, որ ես այս վիլայեթի համար ընդդիմացել եմ այդպիսի հրամաններ իրականացնել՝ այն հիմնավորմամբ, որ այստեղի բնակչությունը բաղկացած է հանգիստ մարդկանցից, ովքեր ունակ չեն

ընդդեմ կառավարության ինչ-որ բան անելու: Այստեղի հայերի համար օտար և անընդունելի են պետության հանդեպ թշնամական նկրտումները: Այդպես ինձ հաջողվեց այստեղ արգելել այդ հրահանգների կիրառումը: Ներկա պարոնները ճշգրիտ գիտեն, որ իրենք այստեղ առանց արգելքների զբաղվել են առևտրով և իրենց մեծ կարողությունների համար պարտական են այս երկրին: Երբ կենտրոնական կառավարությունը միջոցառումներ հրահանգեց ընդդեմ հայերի, ես հայտնեցի Ձեզ: Դուք պետք է ինձ բաց և ազնիվ հայտնեիք, թե արդյոք կա՞ն ինչ-որ տեղ դաշնակցականների կոմիտեի թաքցրած ռումբեր և այդպիսի այլ բաներ: Ինձ հավաստիացրին, որ ժամանակին բերված պայթուցիկ նյութերից այլևս ոչինչ չկա: Ես դա ճշմարտացի համարեցի և հաղորդեցի կենտրոնական ղեկավարությանը: Դրանից հետո կարճ ժամանակ անց դաշնակցության նախկին ակումբում գտնվեցին 5 արկղ պայթուցիկ նյութեր: Ներկաների պաշտպանության համար ես միջնորդել եմ, որպեսզի դեռևս այստեղ գտնվող առաջնորդները ոչ թե կանգնեն ռազմական դատարանի առջև, այլ ուղարկվեն երկրի խորքը: Որոշ ժամանակ անց քաղաքի մի քանի վայրերում գտան հայկական ծագումն ապացուցող հայտարարություններ, որոնք տեղեկացնում էին, թե իբր անգլիացիները նավահանգստի մոտ են և մոտակա օրերին կգրավեն քաղաքը, որ պետք է դիրք բռնել ընդդեմ այստեղի թուրքական կառավարության: Ներկա պարոնները գիտեն, որ ես այն ժամանակ իրենց կանչեցի ինձ մոտ և քննարկեցի, թե ձերբակալված մարդկանցից ում պետք է արտաքսել: Այդ անձանց հեռացումը կայացել է Ձեր համաձայնությամբ, և ես իրավունք ունեի ընդունելու և ընդունում էի, որ Հայկական հարց Սմիռնայում այլևս չի ծագի:

Արդեն հինգ ամիս առաջ ոստիկանությունը հայտնեց, որ հայկական գերեզմանոցում թաքցված են ռումբեր և ատրճանակներ: Այն ժամանակ ես արգելեցի գերեզմանները քանդելը, որովհետև չէի ցանկանա խաթարել դրանք, քանի դեռ կար այդ տեղեկատվության ճշմարտացիության կասկածը: Դուք գիտեք, որ այդ ընթացքում ռումբերն ի հայտ եկան և հետագա խուզարկումները հասցրին նրան, որ Քարատաշի հայկական եկեղեցու նախաբակում գտնվող ջրհորում գտան ատրճանակ՝ անջրաթափանց պատյանով կախված: Ես Ձեզ խնդրեցի՝ հայտնաբերել մեղավորներին կամ հեղինակներին, որպեսզի ինձ ազատեիք այդ բեռից և որպեսզի Դուք էլ ապահով լինեիք: Դուք հայտարարեցիք, որ չեք կարող անել, որ դա ոստիկանության խնդիրն է: Ես Ձեր ուշադրությունը հրավի-

բեցի այն բանի վրա, որ ոստիկանությանը այդ գործին խառնելը հարմար չէ, և եթե նրանք գործը իրենց ձեռքը վերցնեն, ապա շատ անմեղներ ստիպված կլինեն նույնպես մեղքը քավել: Դուք մնացիք Ձեր տեսակետին, այդ կերպ մենք սկսեցինք էվակուացնել, և ինձ ցավ կպատճառի այս գործը մինչև վերջ հասցնելը: Այսօր այստեղից հեռացվել են 250 հոգի՝ գրեթե բոլոր ընկերները և հարազատները, ինձ նոր թշնամիներ կդառնան նրանք, ում ես ստիպված կլինեմ էվակուացնել, որից հետո կգոյանա թշնամիների ավելի մեծ թիվ, որոնց նույնպես պետք կլինի հեռացնել և այլն, մինչև նույնիսկ ամենահարգելիները, ինչպիսիք են այստեղ ներկաները, ստիպված կլինեն հեռանալ: Ոչ միայն կենտրոնական կառավարությունն է ինձ շարունակ կշտամբում հայերի հանդեպ իմ ներողամտության համար, այլև վիլայեթի բնակիչների ոչ աննշան մասը դժգոհ է դրանից: Անշուշտ, այդ մարդկանց խոսքը ես հաճախ կտրում եմ, այնպես որ նրանք չեն համարձակվում պնդել իրենց ծրագրերը, բայց դրանով ես վաստակել եմ շատ թշնամիներ, ովքեր նույնիսկ հաստատում են՝ իբր հայերը 30-ից 40.000 ֆունտով ինձնից գնել են իրենց հանգիստը: Այդ լուրի անճշտությունը Դուք կարող եք լավագույնս դատել, բայց ես Ձեզ բացահայտ կասեմ, որ ես այժմ այդ գործից ձանձրացել եմ, ես չեմ կարող զբաղվել մանրամասներով, չափազանց շատ աշխատանք է ծանրացել ինձ վրա, և ես պետք է Ձեզանից պահանջեմ, որպեսզի Դուք ինքներդ Ձեր համայնքում այդ ամենի վերջը տաք: Խորհրդակցեք, թե արդյոք Դուք հոժարակամ ի վիճակի կլինե՞ք ինձ տալ դեռևս Սմիռնայում գտնվող մեղավորներին, այլապես դրանցից կտառապի նաև հանրությունը: Դուք ինձ ճանաչում եք և գիտեք, թե որքան դժբախտ եմ ինձ զգում, երբ մտածում եմ, որ կարող եմ դառնալ այսօրվա տեղահանվածների դահիճը, բայց անմեղ տեղահանվածների ամբողջ մեղքը ծանրանում է Ձեզ վրա: Եթե Դուք բարի կամք դրսևորեիք, ապա գործը էվակուացիային չէր հասնի, և եթե Դուք հիմա ջանք թափեք և հայտնեք մեղավորներին, կարող եք վստահ լինել, որ ոչ միայն նոր տեղահանումներ չեն լինի, այլև այսօր տեղահանված բոլոր անմեղները իմ կարգադրությամբ կվերադառնան»:

Տեղի են ունեցել հայկական համայնքի մի շարք խորհրդակցություններ, հայկական մայր տաճարի մոտ կախել են մի արկղ՝ անանուն երկտողներ ստանալու նպատակով, նաև կոչ են արել բոլոր հայերին՝ անանուն հայտնել այն մարդկանց անունները, ովքեր կարող են համայնքի համար վտանգ ներկայացնել և այդ անունների ցուցակը գցել այդ արկ-

ղը: Հայկական եպիսկոպոսը, որը կիրակի օրն այդ մասին հայտարարել է եկեղեցու բեմից, հայտնել է նաև, որ հյուսիս-ամերիկյան ներխուժման ասեկոսեների լուրը լրիվ կեղծ է: Եթե մինչև հինգշաբթի օրը պահանջված տվյալները ձեռքի տակ չլինեն, ապա ամբողջ համայնքը և ինքը՝ եպիսկոպոսը, պետք է հեռանան: Երկուշաբթի օրը նա հայտնել է, որ վալիին հայերի հանդեպ լավ է տրամադրված և բոլոր զիջողությունների համար, որ եղել են այդ գործի ընթացքում, պետք է շնորհակալ լինել բացառապես թուրքական կառավարությանը:

Երեքշաբթի օրը՝ նոյեմբերի 14-ին, վալիին փոխանցել են 30 անունից բաղկացած մի ցուցակ, ընդ որում նշելով, որ համայնքն այդ անուններն ստուգել է խնամքով և բարեխղճորեն, որ իրենք ներկայացված անձանց դիտարկում են կասկածելի և այդ անունները փոխանցում են ավելի մոտիկից քննելու և հետագա ստուգումների համար: Այդ պատասխանի վրա նահանգապետը զայրացել և ասել է, որ համայնքը պետք է կամ հայտարարի, որ այդ մարդկանց վտանգավոր է համարում կամ ասի, որ ի վիճակի չէ դա ասել, և որ առաջադրված պատասխանը չի համապատասխանում իր պահանջներին: Նույն օրը կեսօրից հետո այդ ցուցակը՝ բոլոր անուններով և նշումներով հանդերձ, հանձնել են վալիին, որ համայնքը բարեխիղճ ստուգումներից հետո անհրաժեշտ է համարում հայտնել վիլայեթի ղեկավարությանը, որ ներկայացված անձինք կասկածելի մարդիկ են և դրա համար իրենց պարտավորված են զգում տեղեկացնել վիլայեթի ղեկավարությանը, որ նշված անձինք համայնքի համար կարող են վտանգավոր լինել: Եպիսկոպոսը պետք է որ նաև ասած լինի հետևյալը. «Եթե Դուք ինձ հարցնեք, թե նշված մարդիկ հանցավոր են, ապա ես չեմ կարող հստակ բացատրություն տալ: Այդ մարդկանց անցյալը մաքուր չէ, բայց ես պետք է ավելացնեմ, որ նրանք բոլորը վերջին տարում ապրել են շատ խաղաղ»:

Վալին կարծես թե գոհ պիտի լինի այս արդյունքով: Իմ ներկայությամբ վալին այսօր հայտնեց, որ առաջին անգամ հասել է դրան, որ հայերն իրենք տան վտանգավոր անձանց անունները, նրանց կաքսորեն, իսկ արդեն տեղահանված անմեղներին հետ կբերեն:

Գաղտնի ես տեղեկացա, որ կենտրոնական կառավարությունը հրամայել է ամսի 9-ին տեղահանվածների հետագա փոխադրումը, բայց գեներալ-նահանգապետը հակառակ հրահանգեր է տվել և այդ մասին հայտնել է կենտրոնական կառավարությանը:

Հայկական հարցն այդքանով կարող է առայժմ լուծված համարվել:

Այս ամսվա սկզբին հարաբերություններն առանձնապես մտահոգիչ էին գերմանական վարկանիշի համար, որովհետև բարձրագույն ռազմական հրամանատարությունը, որ ղեկավարում է 5-րդ բանակը և 17-րդ կորպուսը, գտնվում է գերմանացիների ձեռքերում, և երկուսն էլ տեղահանումների ժամանակ գտնվում էին Սմիռնայում: Շատ շուտով լուր տարածվեց, որ գերմանացիներն այդ կերպ ուզում են ազատվել առնտրի ոլորտում հայերի մրցակցությունից: Նահանգապետին արդեն հայտնած բանակի առաջնորդ, մարշալ Լիման ֆոն Սանդերսի հաղորդագրությունը, թե այդօրինակ ձերբակալություններն ու տեղահանումներն ազդում են ռազմական վիճակի վրա և ռազմական հրամանատարությունը այդ իսկ պատճառով չի կարող հանդուրժել դրանք, լայն հրապարակայնություն չի ստացել, բայց այս օրերի հաճախակի հանդիպումները բնակչության մեջ, այնուամենայնիվ, ստեղծվեցին հստակ տպավորություն, որ գերմանական շրջանակները գործել են հայերի հանդեպ իրականացվող ձեռնարկումների դեմ:

Լ. Շպե

[Կոստանդնուպոլսի դեսպանության նշումը 20.11]

Բնագրով խոնարհաբար ներկայացված է Նորին մեծություն ռայխսկանցլեր պարոն ֆոն Բեթման Հոլվեգին:

1916 – 12 – 25 – DE – 001

Սկզբնաղբյուրը՝ PA – AA / Կոստ.դեսպ./174
Տպագրված՝ Գ և Հ փաստ. 310 (կրճ.)

Կոստանդնուպոլսում գործերի հավատարմատար Գյոտերտին՝ արտգործնախարարության շտատսքարտուղար Ցիմերմանից
№ 1410

Բեռլին, 25 դեկտեմբերի 1916թ.

Երուսաղեմում կայզերական գլխավոր հյուպատոսության կառավարչի պատճենով ներկայացրած, անցած ամսվա 14-ին № 177 գաղտ-

նի զեկուցագրում իմիջիայլոց խոսք կան այն մասին, որ ըստ հավաստի տվյալների և թուրքական բոլոր խաբուսիկ փորձերին հակառակ, շարունակվում են աքսորված հայերի բռնի իսլամացումները: Նույն տեղեկությունը այստեղ է հասել նաև այլ ուղիներով և գերմանական քրիստոնյաների լայն շրջանակներում առաջացրել է արդարացի վրդովմունք:

Առայժմ մեծ ջանքերով է մեզ հաջողվել խափանել բողոքարժան այդ գործողությունների հրապարակային քննարկումը: Պարոն ռայխսկանցլերին և արտգործնախարարությանն ուղղված դիմումներում պահանջվում են անհետաձգելի երաշխիքներ, որպեսզի բռնի դավանափոխներին խաղաղության հաստատումից հետո իրենց հին կրոնին վերադառնալու փաստացի հնարավորություն տրվի:

Ձերդ մեծությանը խնդրում եմ այս հանգամանքը կրկին բարեկամաբար, բայց նաև պատշաճ լրջությամբ քննարկել Բարձր Դռան հետ և նրանց պարզաբանել, որ բռնի իսլամացումը հանդուրժելով ոչ միայն իրենց դիրքն են դժվարացնում հաշտության բանակցություններում, այլև հնարավորություն են ընձեռում տերություններին՝ ապագայում խառնվելու Թուրքիայի ներքին գործերին: Որպես քրիստոնեական պետություն և որպես դաշնակից, որին մտահոգում է Թուրքիայի ներքին հզորությունն ու անկախությունը, մենք կարող ենք մեր թուրք բարեկամներին հրատապ խորհուրդ տալ՝ արագ և հիմնավոր լուծել այդ խնդիրը:

Ցիմերման

1917 – 01 – 05 – DE – 011

Սկզբնաղբյուրը՝ PA – AA / Կոստ. դեսպ. 174
Տպագրված՝ Գ և Հ փաստ. 311/312 (խմբ.կրճ.)

Արտգործնախարարությանը՝ Կոստանդնուպոլսում դեսպանության գործերի հավատարմատար Գյոփերտից

№ 17

Պերա, 5 հունվարի 1917թ.

№ 1410 հրամանի վերաբերյալ

Հանձնարարությունը կատարված է. Հալիլ բեյը խոստացավ իր ազդեցությունը գործադրել՝ բռնի դավանափոխություններին վերջ տալու

համար: Դավանափոխների արագ վերադարձը քրիստոնեության հնարավոր չէ: Խաղաղության հաստատումից հետո այդ խնդիրը հավանաբար, գոհացուցիչ լուծում կստանա:

Գ[յոփերտ]

[Գյոփերտի գրառումը 04.01]

Հալիլ բեյի հետ քննարկվել է.

Նա խնդրեց գրառումը կրկին հետը վերցնել, քանի որ կոմս Մետեռնիխի հետ պայմանավորվել է այդպիսի քննարկումների վերաբերյալ ոչ մի գրավոր նյութ չթողնել:

Նա խոստացավ Էնվեր փաշայի և Թալեաթ բեյի վրա ազդել, որպեսզի բռնի դավանափոխությունները դադարեցվեն: Արդեն դավանափոխների վերադարձը քրիստոնեական կրոնին հնարավոր դարձնել հիմա, իսկապես անթույլատրելի է և ոչ նպատակահարմար, քանի որ դրա հետևանքով կարող են նոր տեղահանումներ լինել: Պատերազմից հետո դա նույնպես հնարավոր կլինի, ինչպես Աբդուլ Համիդի օրոք հայերի հետապնդումներից հետո:

Հավելված (ֆրանսերեն)

1917 – 02 – 16 – DE – 003

Սկզբնաղբյուրը՝ PA – AA /R14095
Տպագրված՝ Գ և Հ փաստ. 317(խմբ.)

Ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին՝ Կոստանդնուպոլսում արտակարգ միսիայի դեսպան Քյուիլմանից

Պերա, 16 փետրվարի 1917թ.

Պատճեն
Գաղտնի տեղեկատվություն

Թալեաթ փաշայի աշխատակազմը երեկ պաշտոնապես ներկայացավ պատգամավորների պալատին: Նոր Մեծ վեզիրն այդ առիթով ներկայացրեց ծրագրային դրույթներ, որոնք ինձ թվում են չափազանց մեծ սկզբունքային նշանակություն ունեցող և Թուրքիայի ներքին պետության մեջ կկազմեն նոր շրջադարձային կետ:

Ինչպես որ ես որոշ ժամանակ առաջ պատիվ եմ ունեցել Ձեզ գերազանցությանը հայտնելու, ազդեցիկ շրջանակների ներսում տարածվում էր մի չափավոր ուղղություն, որը անխնա, նույնիսկ արյունահեղ բռնություններից չխորշող կոմիտեի հայտնի անդամներին հակառակ, Թուրքիայի համար պահանջում էր բանական ու հանդուրժող ներքին քաղաքականություն: Թուրքիան՝ իր ներառած օտար շատ տարրերով, յուրաքանչյուր այլ եվրոպական պետությունից էապես տարբերվող հասարակարգ է: Օտոմանյան պետական մարմնում օտար բաղադրամասերին հաշտվողական պատրաստակամությամբ իսկական օտոմանյան հայրենասիրություն և դրանով իսկ Թուրքիայի պետական կյանքի համար կամովին ու համոզված համագործակցություն դաստիարակելու փորձերին պարբերաբար հաջորդել են ժամանակահատվածներ, երբ պետությանն այնքան անհրաժեշտ կազմի միասնության համար հարկադրված են եղել դիմել ճնշումների ու բնաջնջման քայլերի:

Սուլթան **Աբդուլ Համիդն** իր կառավարման վերջին շրջանում հայերի տխրահռչակ կոտորածներով ու անխնա բնաջնջման քաղաքականության ուղղվածությամբ այնքան հեռուն էր գնացել, որ նույնիսկ արյունահեղության սովոր Արևելքում բոլոր մտածող մարդիկ սարսափահար եղան: Կոմիտեն, ամեն ինչով ջանալով սուլթանի քաղաքականությանը հակառակ դիրք գրավել, իր ազդեցության սկզբում Թուրքիայում ապրող բոլոր ազգություններին կոչ էր անում ազատ և կամովի համագործակցություն պետության մեջ և իր գործունեության սկզբում կարողացավ գրեթե բոլոր այլախոհ տարրերին՝ արաբներին, հայերին և հույներին, թեկուզ կարճ ժամանակով, համախմբել: Հայերի մեջ շարունակվող հեղափոխական-անջատողական տրամադրությունները և նույնը բալկանյան պատերազմի ժամանակ, երբ կարծես թե Թուրքիան մոտ էր փլուզմանը, նորովի հանդես եկող հայրենադավ տրամադրությունները նպաստեցին կոմիտեի ներսում թուրք-ազգայնական ուղղվածության շրջադարձին և լիակատար հաղթանակին:

Մեծ չափերով իրականացված հայերի բնաջնջումն ու առանձին ավելի փոքր ձեռնարկներում դրսևորվող միտումները՝ նույնքան անխնա վարվել նաև հույն տարրի հանդեպ, եղել են այդ քաղաքական ուղղվածության արդյունքը:

Ես կարծում եմ, որ բնաջնջման քաղաքականությունն, ընդհանուր արդյունքում վնասել է թուրքական կայսրությանը: Հայերի քարավան-

ների զարհուրանքները դեռ երկար կծանրանան թուրք անվան վրա և դեռ տևականորեն թունավոր զենք կմատակարարեն նրանց, ովքեր կհերքեն Թուրքիայի քաղաքակիրթ պետություն լինելու հատկանիշը և կպահանջեն թուրքերի արտաքսումը Եվրոպայից: Երկիրն ակնհայտորեն թուլացել է նաև ներքնապես՝ ֆիզիկապես ուժեղ, աշխատունակ և խնայող բնակչության կործանման ու տարագրման հետևանքով, քանի որ հատկապես մարդկային ռեսուրսների աղքատությունը մեծագույն արգելքներից մեկն է՝ Թուրքիայի բնական հարստությունների առավել արագ զարգացման գործում:

Այստեղ իմ պաշտոնավարության սկզբից ի վեր, Թալեաթ փաշայի հետ մտերմիկ զրույցի ժամանակ այդ հարցի վերաբերյալ իմ կարծիքը չեմ թաքցրել: Պետք է գոհունակությամբ ողջունել, որ նա հիմա՝ իշխանության հասնելուց հետո, իր առաջին ծրագրային հայտարարության մեջ օտոմանյան ազգությունների իրավահավասարությունը դարձնում է կառավարման իր ծրագրի կարևոր կետը: Ինչպես ինձ մտերմաբար ասել են, պետք է որոշակիորեն հուսալ, որ հայերի տեղահանումները և առանձին տեղերում նկատված հույների հետապնդումները կդադարեցվեն: Հայերին կթույլատրվի (թեպետ դա կլինի միայն որոշ ժամանակ անց) վերադառնալ բնակության իրենց հին վայրերը, հենց որ դրանք այլևս ռազմական գոտի չհամարվեն:

Իհարկե, այդ վայրենի ազգայնամոլական ուղղությունը դեռ մեռած չէ: Այդ ուղղությունը ներկայացնող ունակ ու անխնա գլուխները, իրենց ժամանակավոր պարտության ժամանակ չեն հանգստանա: Պետք է նաև հուսալ, որ հիմա էլ, ինչպես կախարդական փայտիկի հարվածով, ամբողջովին կդադարեն՝ առանձին պաշտոնյաների կազմակերպած ճնշումների և հալածանքների մասին տարբեր գավառներից եկող բողոքները: Բայց փորձը նաև վկայում է, որ Կոստանդնուպոլսում հնչած նշանաբանին ընդհանուր առմամբ գավառներում հետևում են, եթե հատկապես այդ նշանաբանը ոչ թե կենտրոնական կառավարության վրա օտար ճնշման արդյունք է, այլ այն համապատասխանում է թուրք իշխանավորների ազատ որոշմանը: Բարեբախտաբար, այս անգամ հենց այդ դեպքն է:

Անկասկած, Թալեաթ փաշայի երեկվա ճառում ասված դիրքորոշումը տևականորեն կմնա որպես ուղենիշ: Դա, ըստ իս, մեզ և թուրք-գերմանական դաշինքի համար մեծ հաղթանակ է: Քանի որ մեր բոլոր թշնամիները ձգտում էին մեզ պատասխանատու դարձնել թուրքական ազգայնամոլականության արյունահեղությունների ու օրինազանցությունները

ների համար: Մյուս կողմից՝ միջամտության մեր հաճախակի փորձերը, որոնց մեզ մղում էին այդ միջոցառումների հանդեպ հումանիտար նկատառումները, թուրքական կառավարության հետ մշտական տարաձայնությունների աղբյուր էին: Մեր հասարակության մեջ էլ շատ ավելի հեշտ կլինի պաշտպանել և անկեղծորեն պահպանել դաշինքը չափավոր, նաև ներսում արդի սկզբունքներով աշխատող Թուրքիայի հետ, քան բացարձակ օտոմանյան-ազգայնամոլական կազմավորման:

[Քյուհլմանից]

1917 – 02 – 24 – DE – 001

Սկզբնաղբյուրը՝ PA-AA/R14095
Տպագրված՝ Գ և Հ փաստ. 318

Ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին՝ Կոստանդնուպոլսում արտակարգ միսիայի դեսպան Քյուհլմանից
№ 129

Պերա, 24 փետրվարի 1917թ.

Պատճեն

Թալեաթ փաշան ինձ մոտ անձամբ հաստատեց, որ ինքն ազգային քաղաքականության հարցերում մտադիր է վարել ուղեգիծ: Նա իր մոտ է կանչել ինչպես կաթոլիկ, այնպես էլ առաքելական հայ պատրիարքներին և նրանց ասել՝ հայ բնակչությունը կարող է վստահ լինել, որ նրա սահմանադրական իրավունքները չեն խախտվի: Ինչ արել է նախորդ կառավարությունը՝ ելնելով ռազմական անհրաժեշտությունից, ըստ հնարավորին կրկին կկարգավորվի: Համապատասխան հրամաններն ուղարկվել են բոլոր գավառները:

[Քյուհլման]

1917 – 03 – 28 – DE – 001

Սկզբնաղբյուրը՝ /Կոստ.դեսպ./174

Ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին՝ Կոստանդնուպոլսում արտակարգ միսիայի դեսպան Քյուհլմանից

№ 206

Պերա, 28 մարտի 1917թ.

A 53 a, 947

Այս ամսվա 23-ի A N № 23 հրամանի վերաբերյալ

Հայերի հալածանքները Թուրքիայում փաստ են, որոնք անհնար է հերքել:Չափազանց շատ ոչ թուրքեր՝ դաշնակից և չեզոք երկրների քաղաքացիներ, դարձել են հայերի դեմ իրականացվող բնաջնջման քաղաքականության ականատեսներ, անկողմնակալ դիտորդների չափազանց շատ անկեղծ շարադրանքներ հասան արտասահման: Լավագույն լուծումը մեզ և մեր թուրք դաշնակիցների համար կլիներ այն նկատառումը, թե թուրքերի կազմակերպած հայկական կոտորածները, որպես քարոզչանյութ ավելի ու ավելի հալածասպան անելով, ինչպես նաև գերմանացիների կազմակերպած կարծեցյալ զարհուրանքները Բելգիայում, արտասահմանի համար աստիճանաբար կորցնում են ձգողական ուժը: Դրա համար էլ հիմա կա հատուկ տեսակետ. ինչպես ես արդեն պատիվ եմ ունեցել նշել իմ զեկուցագրում, թուրքական կառավարությունը կարծես թե վճռել է հայերի հանդեպ կիրառվող քաղաքականությունը տանել ավելի հասկանալի հունով, և դրանով հավանաբար ապագայում այլևս ոչ մի ուշագրավ նյութ չի մատակարարվի հին և առատորեն քամված սարսափների զեկուցագրերի համար:

Եթե փորձեն խանգարել Թուրքիայում հայերի տառապանքների իրենց վրա բևեռող ուժի թուլացման գործընթացին, ապա կարելի է հակահարձակում սկսել Ռուսաստանի դեմ՝ այնտեղի հայերի հալածանքների առնչությամբ: Բայց փոխադարձ կշտամբանքների բռնկված պայքարում, ցավոք, մեզ վնաս կհասցնենք, քանի որ մենք՝ նույնիսկ ռուսների դեմ լավագույնս օգտագործելով հայկական քաղաքականության իրոք մեղադրական նյութը, չենք կարող հուսալ, թե հնարավոր կլինի հաջողությամբ մրցակցել այն ամենի հետ, ինչ հակառակորդները կներկայացնեն Թուրքիայի հայկական քաղաքականության առումով:

Այդ իսկ պատճառով ես կցանկանայի հրաժարվել քարոզչական ակցիան որպես օրակարգային հարց այստեղի կառավարությանը առաջարկելուց:

[Քյուհլման]

1917 – 04 – 19 – DE – 001

Սկզբնաղբյուրը՝ PA – AA /Կոստ.դեսպ.. /174/MF 7268/81 - 85

Կոստանդնուպոլսի դեսպանության արտակարգ միսիայի դեսպան Քյուհլմանին՝ արտաստահմանյան ծառայության կենտրոնական վարչության ղեկավար Յեքից

19 ապրիլի 1917թ.

Ձերդ գերազանցություն,

1) Կցվում է «Հայերի մասին նամակը»՝ որպես ի գիտություն և հնարավոր քննարկման խնդրանքով:

2) Այնուհետև Թալեաթն այսօր ինձ մոտ հաստատեց, որ Ամերիկայի հետ կապերն այսօր խզելու է:

3) Խնդրում եմ Նազիմին հանել շքանշանի ներկայացվածների ցուցակից, քանի որ նա սկզբունքորեն ոչինչ չի ընդունում:

4) Վերջապես. Էնվեր փաշան՝ որպես Մեծ վեզիրի տեղակալ, ուզում է հիմնաքարը դնելիս մուրճի հարված հասցնել, թուրքական կողմը ենթադրում և ցանկանում է, որ Ձերդ գերազանցությունն էլ նույնը անի:

Ձեզ հավատարիմ՝ Յեք

Հավելված

Բեռլին, 11 ապրիլի 1917

Շատ հարգելի պարոն պրոֆեսոր,

Մեր բանավոր զրույցի հիման վրա, ինձ իրավունք եմ վերապահում Ձեզ ներկայացնել հետևյալը:

Տեղահանված հայերի վիճակը մեզ շարունակ հուզում է մարդկային և քրիստոնեական նկատառումներով: Մեծ վեզիր Թալեաթ փաշայի նորագույն բացահայտումներով մենք համոզվեցինք, որ այժմ հնարավոր է դառնում հայ ժողովրդի թշվառ անդամներին օգնություն ցուցաբերելը: Միացյալ Նահանգների պատերազմ հայտարարելը, Գերմանիային նախկինից առավել, պարտավորեցնում է հնարավորին չափ օգնություն

հասցնել կարիքավորներին: Մենք այն համոզմանն ենք, որ դա համապատասխանում է ինչպես Գերմանիայի քաղաքական շահերին, որոնք Հայաստանում կատարված իրադարձությունների պատճառով դառնում են հակառակորդների հարձակման ուղղակի թիրախ, այլև Օսմանյան կայսրության ճիշտ ընկալված շահերին, որը պատերազմական շրջանին հատուկ մեծ ֆինանսական պահանջների պայմաններում, հազիվ թե ի վիճակի լինի ճարել այս դեպքում անհրաժեշտ հսկա գումարները, և նրա համար պետք է ցանկալի լինի՝ Հայկական հարցի վերաբերյալ իր այժմյան դիրքորոշման համար կասկածից դուրս վկաներ ունենալ: Ես պետք է շեշտեմ, որ մենք հայերին օգնություն ցուցաբերելով պետք է աչքի առաջ ունենանք ներկայիս վիճակը և առկա հանգամանքների պարագայում մենք ո՛չ գրավոր և ո՛չ էլ բանավոր այլևս չենք հիշատակի անցած ժամանակները: Մենք ունենք օգնության մի ձեռնարկ, որ կիրականացվի հետևյալ կերպ. մեր անդամներից մեկը մի բժշկի և այլ անձանց ուղեկցությամբ, ովքեր բնակվում են տեղահանվածների տարածքում, այցելեն ճամբարները և բաժանեն դրամական միջոցներ ու մթերք: Ըստ մեզ հասած լուրերի ի նկատի ունեն հատկապես Բաղդադի երկու կողմում եղած ճամբարները, որոնցում գտնվում են բուն Հայաստանից տեղահանվածները: Ձեռնարկման ղեկավարը պետք է լինի ներքոստորագրյալը, Գերմանիայի համապատասխան բոլոր ատյաններում երկարատև խորհրդակցություններից հետո, այդ առաջադրանքի համար չգտնվեց մեկ այլ մարդ, և դ-ր Անդրեաս Վիշերը՝ Բազելից, ազգությամբ՝ շվեյցարացի, որը տարիներ շարունակ աշխատել է Ուրֆայում և պատրաստ է ճամփա ընկնել: Նշված պարոնին անձամբ ծանոթ եմ, ես նրա հետ անցյալ տարվա հոկտեմբերին հանգամանորեն խոսել եմ այդ գործի մասին և կարող եմ լիովին երաշխավորել, որ նա խնդիրն ընկալում է ճիշտ իմ նկարագրած իմաստով: Բացի այդ, մենք ակնկալում ենք նաև Հալեպում մեր հյուպատոս դ-ր Ռյոսլերի և Ուրֆայում որպես կազմակերպիչ բարձր գնահատված պարոն Էքարտի աջակցությունը:

Մեր խնդրանքն այն է, որ աջակցեք թուրքական կառավարության համապատասխան ատյաններից ինձ և պարոն Վիշերի համար ձեռք բերելու ուղևորության թույլտվություն՝ Կոստանդնուպոլիս, Հալեպ և տարագիրների ճամբարներ այցելելու նպատակով: Ձեզ պետք է հայտ-

նի լինի, որ Գերմանիայի արտաքին գործոց նախարարությունը և Կոստանդնուպոլսի գերմանական դեսպանությունը ջերմորեն աջակցում են մեր ծրագրերին: Մենք հավատում ենք, որ ի վիճակի կլինենք նշված նպատակի համար ձեռք բերել զգալի դրամական միջոցներ, որոնք կտրամադրեն հայերի գերմանացի և շվեյցարացի բարեկամները՝ վերջիններիս միջնորդությամբ, նաև այլ չեզոք երկրներից, բայց նախևառաջ՝ Գերմանիայից դուրս ապրող հայերը: Ճշգրիտ գումարն այս պահին դժվար է ասել, բայց մենք մեզ իրավունք կվերապահենք՝ այն հեռագրով Ձեզ հաղորդել Կոստանդնուպոլիս:

Խորին հարգանքով և ամենաջերմ

մաղթանքներով՝ Շքիր

[Մորդմանի նշումը 23.7]

Դեսպանությունն արդեն խառնվել է այդ գործին և **գերմանա-հայկական միության** ներկայացուցիչ ուղարկելու մտադրությունից **շտապ** հրաժարվել է (Հեռ. 16.03): Դեռ այն ժամանակ որպես ներկայացուցիչ եղել է քահանա պաստոր Շքիրի թեկնածությունը, դ-ր Վիշերը դեռ նախկինում՝ հայերի շվեյցարացի բարեկամների ծրագրած առաքելության առիթով, պատրաստակամություն էր հայտնել գնալ Միջագետք: Վերջին էքսպեդիցիայից, որքանով այստեղ հայտնի է, ոչինչ չի ստացվել: Այդ առիթով դ-ր Վիշերի անունն անընդհատ հիշատակվել է Շվեյցարական միության տպագիր նյութերում և այդ իսկ պատճառով հարմար չէր լինի:

Թե իրո՞ք Թալեաթ փաշան կիրականացնի նախկին վարչակազմի հակահայկական քաղաքականությանը վերջ տալու իր հայտնած մտադրությունը, դեռ հաստատ չէ, ինչպես դա բազմիցս նշել են, նաև պաստոր Շքիրը, գոնե առայժմ ոչ մի զգալի արդյունք չկա, դրան հակառակ՝ երկրի խորքից եկող տարբեր լուրեր հանգեցնում են այն եզրակացությանը, որ հալածանքները, թեկուզ ավելի փոքր չափերով, դեռևս շարունակվում են:

Բայց հազիվ թե հնարավոր լինի մեզ համար որևէ **քաղաքական** օգուտ ակնկալել հայերի համար նախատեսված գերմանական բարեգործությունից: Այդ առումով մեր մինչևայժմյան գործունեությունը մինչև պատերազմի սկիզբը ոչ մի կերպ չի ազդել հայերի՝ մեր հանդեպ համակրանքի զգալի փոփոխությանը: Նրանք ի սկզբանե համակրել

են, տարբեր բացառություններով հանդերձ, Ֆրանսիային, Անգլիային, Ամերիկային և Ռուսաստանին, և այդ համակրանքները հաստատապես ավելի ուժգնացել են վերջին տարիների իրադարձությունների հետևանքով:

Զուտ մարդկային տեսակետից էլ չի կարելի անտեսել, թե ինչու գերմանական փողը և գերմանական բարեգործությունը չի կարող գնալ ի շահ բացառապես պատերազմից տուժած մեր հայրենակիցներին և դրա համար պետք է մեկնել արտասահման:

Ինչպես արդեն սկզբում նկատեցիք, դեսպանությունն շտապ հրաժարվել է պաստոր Շքիրին ուղարկելու մտադրությունից:

Դա կատարվեց Հալեպի հյուպատոս Ռյոսլերի մանրամասն շարադրանքի հիման վրա, որն իրավացիորեն խոսում էր ընդդեմ ցանկացած հրապարակային բարեգործական ակցիայի: Բազմաթիվ անձանցից բաղկացած էքսպեդիցիան, ինչպիսին նախատեսել է պաստոր Շքիրը, որը պետք է այցելի տարագիրների առանձին կենտրոններ, սկզբիցևեթ ուղղակի բացառված է:

Անգլիացիների առաջխաղացումը Միջագետք այդ առումով կարծես թե թուրքերին դարձրել է ավելի չվստահող: Դա բխում է նրանից, որ գերմանական միսիան հիմնականում ամերիկյան փողերով է աշխատում: Ուրեմն մենք պարզապես կծառայենք մեր հանդեպ թշնամաբար տրամադրված հայերին և մեզ հետ պատերազմող ամերիկացիներին, առանց դրա համար նույնիսկ նվազագույն փոխադարձ ծառայություն ակնկալելու:

Մինչդեռ հովանավորելով այդ ամերիկա-հայկական բարեգործական ակցիան՝ այս պահին միայն կառաջացնենք դժգոհությունը դաշնակից թուրքական կառավարության:

[Քյուհլմանի նշումը]

Գրասենյակին. Այս մեկնաբանությունը լիովին համապատասխանում է իմ տեսակետին և խնդրում եմ այդ մասին տեղյակ պահել պրոֆեսոր Յեքին:

[Կոստանդնուպոլսի դեսպանության նշումը]

Պատճենը՝ գրասենյակի գնահատականի հետ միասին, ուղարկվել է պարոն Յեքին:

1917 – 05 – 09 – DE – 001

Սկզբնաղբյուրը՝ PA – AA /R14096
Տպագրված՝ Գ և Հ փաստ. 300 (մաս1, խմբ. կրճ.)

Արտգործնախարարության շտատսքարտուղար Ցիմերմանի գրառումը ռայխսթագի համար

Պատգամավոր Լեդեբուրը[92], ցավոք, այսօր այստեղ կրկին մեջտեղ բերեց Հայկական հարցը: Ձեզ բոլորիդ, հարգելի պարոնայք, հայտնի է, թե մեր թշնամիները խեղաթյուրման և չափազանցման ինչպիսի խորամանկ միջոցներով են այդ հարցը շահարկել՝ վարկաբեկման արշավանք սկսելով մեր և մեր դաշնակից Թուրքիայի դեմ: Նաև այն, ինչ այսօր այստեղ ասվեց այդ մասին, երկյուղում եմ, որ զրպարտություններ համար նոր նյութ կմատակարարի մեր թշնամիներին: Ինչ վերաբերում է նաև մեզ համար ցավալի իրադարձությունների դրդապատճառներին և ընթացքին, ապա ես չէի ցանկանա այստեղ ավելի մոտիկից անդրադառնալ: Անցյալ տարվա սեպտեմբերի վերջին մի հանձնաժողովի նիստի ժամանակ ես սպառիչ պարզաբանումներ եմ տվել, որոնց կարող եմ հղում անել: Իմ այն ժամանակվա ելույթից միայն մեկ կետ կուզենայի մեջբերել. հայ ժողովրդի դժբախտության մեջ առաջին հերթին մեղավոր են հենց մեր թշնամիները, որոնք պատերազմի սկզբից դեռ շատ առաջ անբարեխիղճ սադրիչ գործողություններով հայերին գրգռեցին թուրքական կառավարության դեմ և որպես գործիք օգտագործեցին իրենց սեփական քաղաքական ծրագրերի իրականացման համար: Ինչպես արդեն հաղորդել եմ սեպտեմբերին, Հայկական հարցը շարունակ եղել է թուրքական կառավարության հետ մանրամասն քննարկումների առարկա՝ ինչպես այստեղ, այնպես էլ Կոստանդնուպոլսում: Ես պատրաստ եմ այն պարոններին, ովքեր այդ մասին կուզենան ավելի մոտիկից տեղեկանալ, **նեղ շրջանակներում** տալ ցանկացած տեղեկություն:

92. Ռայխսթագի սոցիալ-դեմոկրատ պատգամավոր Գեորգի Լեդեբուրը:

[Ռայխի բյուջետային հանձնաժողովի 1916թ. սեպտեմբերի 29-ի 86-րդ նիստը[93]]

I.

Պարոն պատգամավորը այնուհետև առաջադրեց Հայկական հարցը: Դա բացառիկ ցավալի հարց է, և Դուք գիտեք, որ հանձնաժողովի նախկին բանակցությունների ժամանակ մենք դա հաճախ շեշտել և խոստովանել ենք: Երբ տապալվեց Համիդի վարչակարգը և իշխանության եկան երիտթուրքերը, հայերը հանդես եկան երիտթուրքերի կողմից: Նրանք երիտթուրքական իշխանության տրամադրությանը հանձնեցին իրենց հեղափոխական կազմակերպությունը և նունիսկ մի քանի նախարարի: Երբ պատերազմն սկսվեց, կրկին ի հայտ եկավ թուրքերի հին անվստահությունը հայերի հանդեպ: Նոր ռեժիմի հաստատումից հետո ինքնին հասկանալի է, որ հայերի վրա ուժեղ ազդեցություն կար Լոնդոնից, Փարիզից և հատկապես Ռուսաստանից: Ռուսահայերն իսկական կապող օղակ էին թուրքահայերի հետ: Փողով, լրտեսությամբ և այլ միջոցներով փորձում էին հայերին անհավատարիմ դարձնել: Երբ կարճ ժամանակ անց՝ 1914թ. հոկտեմբերին, Թուրքիան սկսեց մեր կողմից պատերազմել՝ մենք Հալեպի հյուպատոսից արդեն լուր ստացանք, որ հայերի զորակոչը մեծ դժվարություններ է հարուցում, և դա հայերի մեջ արտահայտվում էր գերմանացիների հանդեպ զգալի ատելությամբ: Նմանօրինակ լուրեր մեզ հասան նաև Էրզրումից և Տրապիզոնից: Արդեն 1914թ. դեկտեմբերին դրան հաջորդեցին թուրքերի օրինազանցությունները Էրզրումի հայերի դեմ: Մենք անմիջապես արձագանքեցինք դրան և մեր դեսպանին հանձնարարեցինք Բարձր Դռանն զգուշացնել և մատնացույց անել այն լրջագույն վտանգը, որը կարող է սպառնալ թուրքական կայսրությանը՝ այդպիսի իրադարձությունների կրկնվելու դեպքում: Մենք նրան հանձնարարեցինք միաժամանակ այցելել հայ պատրիարքին և նրան պատկերավոր ներկայացնել, թե որքան կարևոր է, որ հայերն ուղղամտորեն անցնեն Թուրքիայի կողմը և միասին պայքարեն ընդհանուր գործի համար: Բեռլինից, ի վերջո գերմանա-հայկական միությունից, մի հայ ուղարկվեց

93. Ռոզենբերգի նշումը. Ներդ. գերազ. ներկայացված հավելվածի 1-ին մասը հանձնաժողովի բացատրությունների արձանագրությունն է, երկրորդ հավելվածը մի գրառում է, որ օգտագործվել է մեծ հերցոգուհի ֆոն Բադենի մոտ: [Այդ գրառումը Ռոզենբերգը պատրաստել է 06.09.1916 (A 24118)՝ մեծ հերցոգուհի Լուիզա ֆոն Բադենի մի նամակին պատասխանելու համար]:

Թուրքիա, որին մենք էինք աջակցում և հանձնարարել էինք բանակցել պատրիարքի և հայկական շարժման առաջնորդների հետ, որպեսզի նրանք հավատարմորեն անցնեն թուրքերի կողմը և այդ կերպ շահեն թուրքերի երախտագիտությունը և երաշխիքներ ապահովեն իրենց ամբողջ ապագայի համար: Ոսկին և մեր թշնամիների սադրիչ գործողությունները են մեղավոր այն բանում, որ հայերը չընդունեցին մեր բարյացակամ խորհուրդները և իրենք սանձազերծեցին այն փոթորիկը, որի հետևանքով իրենց ժողովուրդը հարկադրված եղավ սարսափելի տառապանքներ կրել: Թուրքերը, որոնք մեր ներկայացուցիչների համաձայնեցված վճռից հետո պատերազմի առաջին ամիսների ընթացքում հայերի հանդեպ իրենց միանգամայն կոռեկտ էին պահում, շփոթության մատնվեցին հայերի գործողություններից: Չեզոք և թշնամաբար տրամադրված արտերկրում գտնվող հայերն ընդդեմ Թուրքիայի ջերմեռանդորեն քարոզում էին հեղափոխություն: Սկսվեցին ասպատամբություններ: Շատանում էին դասալքության և բազմաթիվ հայերի ռուսների կողմն անցնելու վերաբերյալ բողոքները: Չեյթունում լուրջ միջադեպ եղավ: Հայ դասալիքներն այստեղ ամրացրել էին դիրքերը և շատ երկար ու եռանդագին պաշտպանվում էին իրենց հետապնդող թուրք ժանդարմներից: Նմանօրինակ դեպքեր կրկնվեցին Բիթլիսում, Մարաշում և այլ վայրերում: Ի վերջո, ցավալիորեն, Վանում՝ Աղրբեջանի վրա արշավող թուրքական զորքերի թիկունքում, սկսվեց համընդհանուր հայկական ապստամբություն: Թուրքական զորաջոկատներն սկզբում չէին կարողանում հեղափոխությունը տապալել և գործն իսկապես հասավ այն բանին, որ Վանի մերձակայքում միավորվեցին ռուսական զորաջոկատները, ռուսահայերը և հայ դասալիքները: Այս բոլոր հանգամանքները Թուրքիային մղեցին՝ ռազմական տեսակետից լուրջ միջոցառումներ ձեռնարկելու: Յուրաքանչյուր ոք կարող է ըմբռնել, որ թուրքերը, այն ժամանակվա իրենց դժվար կացության հանդիման (Դարդանելի կռիվները հասել էին գագաթնակետին)՝ որոշեցին էվակուացնել հայկական հեղափոխությամբ բռնկված շրջանը: Կոշտ, բայց ռազմական տեսակետից հասկանալի հայերի տեղահանման ձեռնարկը ռազմական գործողությունների և թիկունքի շրջաններից սկսվեց 1915-ի մայիսին, ամռանը էվակուացիան տարածվեց ավելի հեռու և ի վերջո ընդգրկեց ամբողջ Անատոլիան՝ մինչև Ծովեզր և Սմիռնայի դարպասները: Մենք համոզված ենք, որ թուրքերն սկզբում գործում էին շատ օրինապահ և հայերին ոչնչացնելու մտադրություն չունեին: Այն, որ էվակուացիան այնպես

չընթացավ, ինչպես դա հնարավոր կլիներ այլ երկրներում, հասկանալի է: Չախողվեց ամբողջ ներքին կազմակերպվածությունը, ճանապարհների, փոխադրամիջոցների, փողի և առաջին հերթին՝ սննդամթերքի պակասի պատճառով: Իհարկե, դեր խաղացին նաև թուրքերի մոլեռանդությունն ու ատելությունը, որը որոշակի չափով հիմնված էր հայերի դավաճանությունների և անհավատարմության վրա: Ի սկզբանե վերաբնակեցումը պետք է կայանար Սիբիրյին առավել մոտ գտնվող վայրերում, ինչպիսիք են Հուման և Դամասկոսը, ապա ի հայտ եկան Եփրատի հովիտների վայրերը և ի վերջո Ռաս ուլ Այնը: Տեղահանումն ստացավ ողբալի ընթացք:

Ցավալի իրադարձությունները հայտնի են ամենուր: Անտանտը՝ Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանն են կրում, այնուամենայնիվ, դրա հիմնական մեղքը: Ես հիշում եմ «Daily Chronicle»-ի 1915թ. սեպտեմբերի մի հոդվածի այն հատվածը, որը դրվատանքով խոստովանում է, որ հայ ժողովուրդը պատերազմի սկզբից ի վեր Անտանտի գործը իրենն է համարում, ի սկզբանե, առանց սակարկություն անելու, մարտնչել է Անտանտի կողմում և իրավացիորեն պետք է համարվի յոթերորդ դաշնակից: Հոդվածը վերնագրված է «The seventh Ally»:

Բարձր Դռան առջև մենք ի սկզբանե եռանդուն ջանքեր ենք գործադրել հանուն Հայկական հարցի: Մենք, թերևս, ավելի ուշ՝ պատերազմից հետո, երբ մեր դիրքն այնքան խոցելի չի լինի, ինչպես այսօր, մեր ամբողջ բանակցությունները մի անգամ կշարադրենք մի Սպիտակ գրքում: Ես կարող եմ Ձեզ մտերմաբար պատմել, որ մեր դեսպանն այնքան առաջ է գնացել, որ ուղղակի շարժել է Մեծ վեզիրի և ներքին գործերի նախարարի դժգոհությունը: Իրենց գործունեության առաջին երեք ամիսներից հետո նշված նախարարներն ասել են, կարծես թե այս դեսպանն այլ բան չունի անելու, քան անընդհատ Հայկական հարցով ձանձրացնելը:

Նոր բողոքները, որ լուծարվել են հայկական որբանոցները, որ հայ աղջիկներին տարել են հարեմներ, իսկ տղաներին հավաքել են թուրքական որբանոցներում և ստիպում են մահմեդականություն ընդունել, ինձ առիթ տվեցին լուրջ բողոքներ ներկայացնել հիմա այստեղ գտնվող թուրք արտգործնախարարին: Ես նրան հասկացրի, որ այդ գործողությունները խիստ անախորժ են ոչ միայն Թուրքիայի, այլև մեզ համար,

և մենք ստիպված ենք հրատապ խնդրել՝ միջոցներ և ուղիներ գտնել այստեղ օգնություն ցուցաբերելու համար:

Ես միայն կարող եմ ասել, որ մենք արել ենք ամեն բան, ինչ կարող էինք: Միակ բանը, որ մեզ մնացել է, դա Թուրքիայի հետ դաշինքի խզումն էր: Դուք կհասկանաք, որ մենք դրան ոչ մի պարագայում չէինք կարող դիմել: Ավելի բարձր, քան հայերը, ինչքան էլ մենք զուտ մարդկային տեսակետից ցավենք նրանց բախտի համար, մեր որդիներն ու եղբայրներն են կանգնած, ովքեր իրենց թանկ արյունը պետք է թափեն ծանրագույն մարտերում և նրանք ապավինում են թուրքերի աջակցությանը: Քանի որ թուրքերը հարավ-արևելյան թևը ծածկելու առումով մեզ էական ու լավ ծառայություններ են մատուցում: Դուք ինձ կհամաձայնեք, որ մենք չենք կարող այնքան հեռու գնալ, որ թուրքերին, երբ, իրոք, Հայկական հարցի վերաբերյալ մեր տևական առարկություններով անընդհատ փչացրել ենք նրանց տրամադրությունը, հիմա էլ հայտնենք դաշինքը խզելու մասին:

II.

Երբ 1914թ. աշնանը Բարձր Դուռն սկսեց պատերազմել կենտրոնական տերությունների կողմում, հայ բնակչության վիճակը Թուրքիայում համեմատաբար բարենպաստ էր: Հայերը համիդյան ռեժիմի դեմ պայքարել էին երիտթուրքերի հետ: Այդ իսկ պատճառով երիտթուրքական կառավարությունը նրանց հանդեպ լավ էր տրամադրված: Մյուս կողմից մտահոգում էր փաստերով հաստատված տարիների փորձը, որ թուրքահայերի զգալի մասն իր համակրանքներով հակված է դեպի արևմտյան տերություններն ու Ռուսաստանը: Այդ մտահոգությունը արտգործնախարարությանը դրդեց Կոստանդնուպոլսում հայ պատիրարքի հետ, այն ժամանակվա կայզերական դեսպան բարոն ֆոն Վանգենհայմի միջամտությունից հետո, բազմաթիվ մտերմական զրույցներ վարել՝ համառորեն համոզելով, որ հիմա եկել է ժամը, երբ հայերը կարող են ապացուցել թուրքական պետության հանդեպ հաճախ երդմամբ հավաստած հավատարմությունը և ապահով ապագայի համար հիմք ստեղծել:Արտգործնախարարության համաձայնությամբ գերմանա-

հայկական միությունը, որի ղեկավարը Յոհաննես Լեփսիուսն է, այդ նույն ժամանակ Թուրքիա ուղարկեց վստահելի հայազգի մի մարդու՝ նրան հանձնարարելով, որ Կոստանդնուպոլսում փորձի ներազդել հայկական պատրիարքարանի և հայերի քաղաքական առաջնորդների վրա, «որպեսզի հայ ժողովուրդը՝ Թուրքիայի հետ սերտորեն համագործակցելով, իր ազգային ներուժը ներդնի օտոմանյան զենքի հաղթանակի համար և սեփական շահերի իմաստուն գիտակցությամբ իր ուժերի չափով աջակցի թուրքական կառավարությանը՝ իրականացնելու բոլոր միջոցառումներն ու ռազմական գործողությունները հայերով բնակեցած գավառներում»: Տվյալ հանձնարարության կատարման ընթացքում այդ վստահված մարդուն ամեն կերպ աջակցում էին արտգործնախարարությունը և Թուրքիայում կայզերական ներկայացուցչությունները: Ոսկին և մեր թշնամիների սադրիչ աշխատանքներն են մեղավոր, որ հայերը մեր բարեմիտ խորհուրդը քամուն տվին և հենց իրենք սանձազերծեցին այն փոթորիկը, որի հետևանքով իրենց ժողովուրդը հարկադրված եղավ կրել սարսափելի տառապանքներ:

Մեր ներկայացուցիչների համաձայնեցրած վճռից հետո թուրքական կառավարությունը պատերազմի առաջին ամիսներին հայերի հանդեպ միանգամայն կոռեկտ էր: Փոթորկի առաջին նշանը եղավ Զեյթունի միջադեպը: Գրեթե բացառապես հայերով բնակեցված, հարավային Հայաստանի ամրոցատիպ այս փոքրիկ քաղաքում 1915թ. մարտին հայ դասալիքների մի ջոկատ դիրքավորվել էր չորս կողմից և հուսահատ դիմադրություն էր ցուցաբերել իրենց հետապնդող թուրք զինվորականներին: Սկսվեց քաղաքի իսկական պաշարումն ու գրոհը, որի արդյունքում գտնվեցին ժամանակակից զենքի մեծ պաշարներ: Քանի որ բնակչության մի մասը՝ խռովարարների հետ, ընդհանուր գործն էին արել, ըստ պատերազմական շրջանի իրավունքի, քաղաքում կիրառվեցին պատժիչ միջոցառումներ: Զեյթունի դեպքը մեկուսի չմնաց: Այդ գավառի շատ քաղաքներում դրա կապակցությամբ սկսվեցին նմանատիպ օրինազանցություններ և կռիվներ, որոնք հասցրին նրան, որ սկսվեց դժվար համակերպվող հայ բնակչության տարհանումը:Այդ միջոցառումներն սկզբում սահմանափակվեցին համեմատաբար փոքր շրջանում և ունեին միայն տեղային բնույթ: Այնուամենայնիվ, արքնացավ կառավարու-

թյան անվստահությունը հայերի հանդեպ: Հաջորդ ամսին՝ 1915-ի ապրիլին, դեպքերն ստացան ճակատագրական ընթացք, երբ Բարձր Հայքում՝ հատկապես Վանի տարածքում, Աղրբեջանի վրա շարժվող թուրքական զորքերի թիկունքում սկիզբ առավ համընդհանուր հայկական ապստամբություն, որին մի քանի օրում զոհ գնացին հազարավոր մահմեդականներ: Հասկանալի պատճառներով հակաթուրքական և հակագերմանական մամուլում այդ արյունահեղության մասին հրապարակվեց քիչ կամ ոչինչ, որը հայերի համար պետք է այնքան տխուր հետևանքներ ունենար: Նոր ուժերի ընդգրկումով և զգալի կորուստներով թուրքերին հաջողվեց իր ռազմաճակատի թիկունքում տապալել ապստամբությունը: Կարելի է հասկանալ, երբ նրանք որոշեցին՝ անհնար դարձնել այդպիսի դեպքերի կրկնությունն ապագայում: Դրան հաջորդեց այն, որ մայրաքաղաքում բացահայտվեց թուրք իշխանավորների կյանքի դեմ ուղղված հայկական դավադրություն, բացի այդ կային նախանշաններ, որ հայերի մի մասը Թուրքիայի թշնամիների հետ գաղտնի կապեր ունի: Թուրքիայի այն ժամանակվա ծայրահեղ վիճակի հանդիման (Դարդանելի կռիվները հասել էին գագաթնակետին)՝ թուրքական կառավարությունը պետք է ամեն կերպ վերականգներ երկրի ներսում վտանգված ապահովությունը: Կոշտ, բայց ռազմական տեսակետից հասկանալի վճիռ կայացվեց՝ հայ բնակչությանը տարհանել ռազմական գործողությունների գոտու և էտապային ուղու շրջաններից: Միջագետքի հյուսիսային մասում՝ ռազմական տեսակետից վտանգված սահմաններից հեռու, հայերին տրամադրվելու էին նոր բնակավայրեր: Այն, որ վերաբնակեցման ձեռնարկները կհանգեցնեն հայ բնակչության մեծ մասի ոչնչացման, թուրք իշխանավորներն ի սկզբանե ո՛չ կամեցել են, ո՛չ էլ կանխատեսել: Ողբալի զարգացումը, որ ստացավ այդ գործը, մինչև որոշակի աստիճան ըմբռնելի է, երբ մի կողմից հաշվի ես առնում մահմեդական բնակչության արդարացի վրդովմունքը, մյուս կողմից՝ Թուրքիայի ներքին հարաբերությունների պարզունակությունն ու նվազագույն այն ազդեցությունը, որը Կոստանդնուպոլսի կենտրոնական ղեկավարությունը կարող էր գործադրել հեռավոր գավառներում: Բնակչության այդպիսի զանգվածային տեղաշարժի համար, որը նույնիսկ խաղաղ պայմաններում կպահանջեր տարիներ տևող նախապատրաստություն, իհարկե ոչինչ նախատեսված չէր: Կար ամեն ինչի պակաս, չկար հատուկ միասնական կազմակերպություն, ճանապարհներ, փոխադրամիջոցներ, փող և առաջին հերթին՝ սնունդ: Պատերազմի առիթով ազատություն ստացած ստորին բնազդները և հին ռասայական ու կրոնական հակասություններն արեցին մնացյալը: Անհավանական չէ, որ դեպքերի այլևս չարգելակվող ընթացքը որոշ թուրք իշխանավորների համար հետագայում, որպես Հայկական հարցի արմատական լուծում, ցավոք, ցանկալի էր:Գործը դրան չէր հասնի, եթե հայերն իրենք դրան չնպաստեին: Այդ իրադարձություններում բարոյական մեղքը հայերի հետ կրում են նրանց հրահրողները՝ Լոնդոնում, Պետերբուրգում և Փարիզում: Հատկանշական է «Daily Chronicle»-ի 1915թ. սեպտեմբերի 23-ի մի հոդված, որը վերնագրված է «Our seventh Ally» և գովելով խոստովանում է, որ հայ ժողովուրդը պատերազմի սկզբից ի վեր Անտանտի գործը իրենն է համարում, ի սկզբանե առանց սակարկելու մարտնչում է Անտանտի կողմից և դրանով վաստակել է յոթերորդ դաշնակից համարվելու իրավունքը:

Արտգործնախարարությունն ու Թուրքիայում կայզերական ներկայացուցչությունները՝ հայկական ճգնաժամի սկզբից ի վեր դիվանագիտական միջոցներով արել են ամեն բան, որպեսզի մեղմացնեն հայերին վիճակված տառապանքները: Կայզերական կառավարությունը, ինչը հասարակայնությանը հայտնի չէ և առայժմ չի կարող հրապարակվել, թուրքական կառավարության վրա ճնշումներ գործադրելով դիմել է ընդհուպ ծայրահեղ միջոցների: Հայկական հարցի պատճառով դաշինքի խզումը կայզերական կառավարությունն արդարացված չէր համարում և չի համարում: Քանի որ քրիստոնեական ու համամարդկային տեսակետից ցավալի է, որ Թուրքիայի գործողություններից մեղավորների հետ կործանվում են նաև հարյուր հազարավոր անմեղներ, գերմանական կառավարությանն ավելի մոտ, քան հայերը, կանգնած են Գերմանիայի որդիները, որոնց զոհառատ պայքարը էապես հեշտանում է՝ արևմուտքում, արևելքում և հարավում թուրք դաշնակիցների ռազմական աջակցության շնորհիվ: Պատասխանատվությունն այն բանի համար, որ Հայկական հարցի առիթով Թուրքիայի հետ խզումով համաշխարհային մեր պայքարը զրկվի հարավ-արևելյան թևից, ոչ մի գերմանական կառավարություն չէր կարողանա կրել, առավել ևս, երբ հայերը նույնիսկ այդպիսի քայլերից հետո պաշտպանված չէին լինի հետագա հալածանքներից, այլ իսկապես մատնված կլինեին թուրքերի վրեժխնդրությանը:

1917 – 05 – 14 – DE – 001

Սկզբնաղբյուրը՝ PA – AA /R14096
Տպագրված՝ Գ և Հ փաստ.345

Ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին՝ Հալեպի հյուպատոս Ռյոսլերից
K № 56 / № 923

Հալեպ, 14 մայիսի 1917թ.

Գաղտնի

Ձերդ գերազանցությանը կից հավելվածով խոնարհաբար ուղարկում եմ դիպլոմավորված ինժեներ Բյունքեի գրառումները ապրիլի 1-ից 6-ը Խաբուրի մոտակայքում կատարած ուղևորության դիտարկումների մասին: Կասկած չկա, որ այնտեղ սփռված մեծ քանակությամբ մարդկային գանգերն ու կմախքի մասերը մնացել են անցյալ տարվա հուլիս և օգոստոս ամիսներին կազմակերպված հայերի սպանդից, որի մասին ես ի վերջո զեկուցել եմ անցյալ տարվա նոյեմբերի 5-ին K № 104[94]-ով: Այդ զեկույցի I և II հավելվածների պատմություններն ունեն հայկական ծագում, դրանք հաստատում են այն վայրը, որի մոտ իրագործվել է հիմնական սպանդը, այն անվանել են Շեղադիե [Քալաթ Շեղդադ]:

Նույն զեկուցագիրը կուղարկվի նաև կայզերական դեսպանություն:

Ռյոսլեր

Հավելված

Պատճեն

Հալեպ, 11 մայիսի 1917

Ապրիլի 1-ից 6-ն ընկած ժամանակահատվածում ես պարոն կապիտան Լյոշեբրանդի և պարոն ենթասպա Լանգենեգերի հետ Եփրատի ափին գտնվող Բուզայրիից, Խաբուր գետով բարձրացանք Եփրատ և գետի ձախ ափին գտանք խունացած մարդկային գանգերի և կմախքի մնացորդների մեծ քանակություն, գանգերի մի մասի վրա կային կրակոցներից մնացած անցքեր: Մի քանի տեղերում գտանք խարույկների

94. A 31831 [1916-11-05-DE-001]:

հետքեր՝ նույնպես մարդկային ոսկորներով ու գանգերով: Քիշլա Շեղադիեի դիմաց հայտնաբերեցինք ամենամեծ կուտակումները: Տեղի բնակչությունը խոսում էր 12.000 հայերի մասին, որոնց մորթել, գնդակահարել կամ խեղդել են միայն այստեղ:

Այդտեղ մենք հեռացանք գետից և Զինջար տանող ճանապարհին այլևս ոչ մի հետք չգտանք:

[Բյունքե]

Դիպլոմավորված ինժեներ, ավագ լեյտենանտ

1917 – 08 – 10 – DE – 001

Սկզբնաղբյուրը՝ PA – AA /R14097

«Արևելքում հանուն քրիստոնեական բարեսիրության» գերմանական օգնության միության տնօրեն Ֆրիդրիխ Շուխարդին՝ արտգործնախարարության դեսպանական խորհրդական Գյոտերտից

Բեռլին, 10 օգոստոսի 1917թ.

Գաղտնի

Հարգելի պարոն տնօրեն,

Ձեզ պետք է որ հայտնի լինի, որ մեր թշնամիների եսասիրական քաղաքական նպատակներից սնված հայերին կոտորելու քարոզչությունը վերջին շրջանում մի քիչ հանդարտվել է: Այն դեպքի համար, որ այդ քարոզչությունը նորովի կրկին կուղղվի մեր դեմ, Բեռնի մեր դեսպանորդի համար շատ ցանկալի կլիներ, եթե նա ի վիճակի լինի նամակների կամ հոդվածների տեսքով անմիջապես հրապարակել հայերի համար բարեգործություն անող շվեյցարական միության մասնակից **շվեյցարացիների** և այլ օտարերկրացիների տպավորությունները, որոնցում նկարագրվում է գերմանացի ծառայողների և այլ գերմանացիների օգնության պատրաստակամությունն ու ջերմ կարեկցանքը տառապյալ հայերի հանդեպ՝ առանց կոտորածների մանրամասների: Այդպիսի հրապարակումների դեմ մեր հակառակորդները բավականին անզոր կլինեն: Վերջերս այդ մասին խոսել եմ պարոն տնօրեն Աքսենֆելդի հետ, որը ամենասիրալիր ձևով համաձայնեց տրամադրել իր ձեռքի տակ ունեցած այդ գործի հա-

մար պիտանի նյութը: Քանի որ «Օգնության միությունը», եթե չեմ սխալվում, իր կազմում ունի նաև շվեյցարացի և այլ չեզոք երկրների քաղաքացիներ, ապա ես չափազանց երախտապարտ կլինեի, եթե նաև Դուք՝ Ձեր տրամադրության տակ եղած նյութերը, ցանկանայիք հասանելի դարձնել այդ նպատակի համար: Թե ինչ է արվել գերմանական կողմից, ինչպես պաշտոնական, այնպես էլ անհատական առումով, հենց տեղում՝ դժբախտ հայերի համար, Ձեզ բավականաչափ հայտնի է: Այդ առնչությամբ ես կարող եմ հիշատակել միայն դ-ր Ռյոսլերի անունը:

Մեծագույն հարգանքներով և լավագույն բարեմաղթանքներով՝
Ձեզ շատ հավատարիմ

[Գյոփերտ]

1917 – 11 – 16 – DE – 001

Սկզբնաղբյուրը՝ PA –AA /R14097 Կոստ.դեսպ./ 174

Ռայխսկանցլեր Հերթլինգին՝ Կոստանդնուպոլսի դեսպան Բեռնշտորֆից

№ 563

Պերա, 16 նոյեմբերի 1917թ.

1 Հավելված

Թուրքական կառավարությունը Հայկական հարցի վերաբերյալ պաշտոնական նյութերը վերջերս բազմացրել է՝ հրատարակելով վավերագրերի մի ծավալուն ժողովածու՝ «Հայկական կոմիտեների հեղափոխական նպատակներն ու խարդավանքները սահմանադրությունից առաջ և հետո» վերնագրով: Ժողովածուի առաջին մասում (1-41 էջեր) հակիրճ նկարագրվում է տարբեր կոմիտեների հիմնումն ու գործունեությունը մինչև սահմանադրության վերստեղծումը, երկրորդ մասում (42-323 էջեր) սկզբում քննարկվում է կոմիտեների ազգայնական քարոզչությունը մամուլում և գրականության մեջ, դպրոցներում և հոգևորական դասի մեջ՝ սկսած 1908 թվականից, և զինված ապստամբության նախապատրաստությունը, ապա հետևում են մանրամասն զեկուցագրեր՝ հա-

մաշխարհային պատերազմի ժամանակ հայկական երկրամասերում իրադարձությունների մասին: Ի լրումն ամենի կցված են ճշգրիտ վերարտադրված 122 տեղեկանք (ֆակսիմիլիե)՝ որպես իրեղեն ապացույց, 73 թերթի վրա:

Չնայած միակողմանի մեկնաբանությանն ու միտումնավոր բնույթին, այդ ժողովածուն արժանի է ուշադրության: Թե որքանով կարելի է այդ վավերագրերն ու տեղեկանքները հավաստի համարել. առանձին դեպքերում պետք է ուսումնասիրել: Բայցևայնպես, այդ նյութերը թերթելիս, հնարավոր չէ խույս տալ այն մտքից, որ հայկական կոմիտեների խարդավանքները թուրքական կառավարությանն արդեն վաղուց խիստ գրգռել էին և հարմար էին պատերազմի ընթացքում նրանց դեմ ձեռնարկված ճնշման միջոցառումներն արդարացնելու համար: Ընդ որում՝ թե որքանով է կառավարությունն անցել անհրաժեշտ ինքնապաշտպանության սահմանները կամ որքանով է այն առաջնորդվել այլ մոտիվներով, հարցի երկրորդ կողմն է:

Խնդրո առակա ժողովածուն առայժմ լույս է տեսել միայն թուրքերեն, նախապատրաստվում է ֆրանսերեն հրատարակությունը, բացի այդ «Դաջար» («Տաճար») ամսագրի հրատարակիչը մի հատված հրապարակել է նաև հայերեն (հմ. այս տարվա սեպտեմբերի 4-ի №453 զեկուցագիրը):

Թուրքերեն հրատարակված մի օրինակ ուղարկվում է հավելվածի հետ[95]:

Բեռնշտորֆ

[Գյոփերտի նշումը 22.11]

Մամուլում օգտագործելու մասին տվյալ պարագայում առայժմ խոսք չի կարող լինել:

[Մորդմանի նշումը 15.11]

Թուրքերեն ժողովածուն լույս է տեսել և 2 օրինակ ձեռք է բերվել ծառայողական օգտագործման համար (ձրի, ինձ մոտ դրված է): Միաժամանակ լույս է տեսել **հայերեն հատված,** որը հոգացել է «Դաջար»-ի («Տաճար») հրատարակիչը (տե՛ս 2330 սյ. 3): Մեկ օրինակ ձեռք է բեր-

95. Փաստաթղթերում չկա:

վել Հայկ էֆենդուց 10 պեսոյով, ֆրանսերեն հրատարակությունը կարծես թե նախապատրաստվում է:

[Մորդմանի նշումը 20.12]

Ռեգիստր. 2941/17 A 4 a

Հայկ էֆենդի: est ce que la traduction francaise de l ouvrage a paru?

Ըստ Հայկ էֆենդու բանավոր հաղորդման, խնդրո առարկա բրոշյուրը տպագրվում է:

[Մորդմանի նշումը 16.1.1918]

Հայկ էֆենդի: Ou en est l impression de la traduction française?

Հայկ էֆենդու բանավոր հաղորդումից հետո տպագրությունը դադարեցվել է՝ SoLciété Générale-ի ղեկավար պաշտոնյաների բացակայության պատճառով:

1918 – 06 – 20 – DE – 001

Սկզբնաղբյուրը՝ PA –AA /R14102

Ռայխսկանցլեր կոմս ֆոն Հերթլինգին՝ Մաքենսենի զորախմբի քաղաքական բաժնի ղեկավար Հորսթմանից

№ 9825

Բուխարեստ, 20 հունիսի 1918թ.

Պատիվ ունեմ Ձերդ գերազանցությանը կից հավելվածով ներկայացնել պարոն Պաուլ Վայցի Հայաստան կատարած ուղևորության մասին զեկուցագրի առաջին մասը՝ հետագա կարգադրությունների համար:

Հորսթման

Հավելված

Բուխարեստ, 20 հունիսի 1918թ

«Գյուլ-Նիհալ» շոգենավով ապրիլի 14-ին սկսեցի կայզերական օտոմանյան կառավարության բազմիցս արտահայտած ցանկությամբ թելադրված ուղևորությունը: Այդ ուղևորությանը միաժամանակ մաս-

նակցում էին ավստրո-հունգարական մամուլի մեկ ներկայացուցիչ՝ դ-ր Շբայները: Ըստ իմ տեղեկությունների (աշխատում է)՝ Վիեննայի «Reichspost», «Pester Lloyd»-ի, բեռլինյան «Lokalenzeiger»-ի, Ամստերդամի «Algemeen Handelsblad»-ի և մեկ իսպանական թերթի համար, այնուհետև թուրք պատմաբան պրոֆեսոր Ռեֆիկ բեյը՝ «Թանինի» համար, կապիտան Ֆահրի բեյը՝ ռազմական դպրոցի լուսանկարչական բաժնից և փոխհյուպատոս Անդերսը, որը մտադրություն ուներ այցելել Էրզրում՝ իր նախկին աշխատավայրը:

Բարձր Դռան՝ ծրագրված «Հայկական էքսպեդիցիայի» կազմում **մեկ կամ երկու լրագրող չեզոք երկրներից** ընդգրկելու ջանքերը մնացին անպտուղ: Ինչպես Կոստանդնուպոլսի հոլանդական դեսպանորդը, այնպես էլ նրա շվեդացի գործընկերը մերժողական դիրք գրավեցին Բարձր Դռան ցանկության հանդեպ: Ըստ երկու դիվանագետների ինձ արած հավաստիացումների՝ նրանք չէին ուզում, որ իրենց երկրների հասարակական կարծիքի ներկայացուցիչները այս պահին **իրենց** մասնակցությունն ունենան Արևելյան Անատոլիայի գավառներ կազմակերպվող ուղևորությանը: Մտահոգությունը, հավանաբար, այն էր, որ օտոմանյան կառավարության ճնշումը իրենց հայրենակիցներին կխանգարի ճշմարտացի վերարտադրել հարաբերությունները: Կամ էլ այն, որ նրանց ցույց են տալու սահմանափակ թվով վայրեր և դեպքեր, որոնք միակողմանի կարտացոլեն այնտեղի վիճակը:

Այդպիսի խոհերից ես էլ զերծ չմնացի: Ավագ լեյտենանտ Զեֆի բեյը՝ թուրքական գլխավոր շտաբի 2-րդ բաժանմունքի (լուրերի բաժնի) պետը, ջանասիրաբար մշակեց ուղևորության ծրագիրը: Նա նաև այն անձն էր, որը հոգաց առանձին կարգադրությունների համար: Կարծում եմ՝ ես պետք է նրան ասեի, որ իմ ընտրության մեջ նկատեցի թուրքական կառավարության վստահության ապացույցը: Թեպետ մեծ դժվարությունները պատճառաբանելով՝ բազմիցս և եռանդագին փորձում էին ինձ հետ պահել ուղևորությունից, ես չուզեցի խուսափել առաջադրանքից: Ես իմ պարտքն էի համարում մասնակցել և իմ համեստ ուժերով օգնել ցրելու սարսափելի այն մեղադրանքները, որոնք ամբողջ քաղաքակիրթ աշխարհը հայկական կոտորածների առնչությամբ ներկայացնում է ընդդեմ Թուրքիայի: Բայց դա կարող էր ի կատար ածվել, եթե իմ վրա ոչ մի կողմից ճնշում չգործադրվեր և երաշխավորվեր օբյեկտիվ լրատվություն: Զեֆի բեյն ինձ տվեց այդ երաշխիքը՝ այն հաստատելով բազմակի ձեռքսեղմումներով:

Ուղևորությունը հենց սկզբում ենթարկվեց ծրագրային փոքրիկ փոփոխության: «Գյուլ-Նիհալը» պետք է ուղիղ Տրապիզոն գնար: Նավի վրա էր վիցեգեներալիսիմուս Էնվեր փաշան՝ գլխավոր շտաբի հետ: Ապրիլի 15-ի, լույս 16-ի գիշերը նա ռադիոհաղորդագրություն ստացավ Բաթումի անկման մասին: Այդ իսկ պատճառով Էնվեր փաշան որոշեց կարճ ժամանակով մտնել Տրապիզոն՝ այնտեղ գտնվող Կովկասյան բանակի գլխավոր հրամանատար Վեհիբ փաշային նավ վերցնելու և անմիջապես Բաթում ուղևորվելու համար: Մենք ընդունեցինք նրա՝ իրեն ուղեկցելու հրավերը: Գեղեցիկ նավահանգստային քաղաքում երեք օր մնալուց հետո մենք վերադարձանք Տրապիզոն:

Ամսի 20-ից 23-ը մենք մնացինք նույնանուն վիլայեթի մայրաքաղաքում՝ որպես Վեհիբ փաշայի հյուրեր: Տեղաշարժվելու մեր ազատությունը սահմանափակված չէր: Մենք կարող էինք այստեղ-այնտեղ տեղեկանալ: Գերմանացիներ այնտեղ, թերևս, չկային: Այնուամենայնիվ, կային մի քանի հավատարժան բալթեր, որոնք ռուսների նահանջից հետո մնացել էին այնտեղ: Այսպես, բալթյան գլխավոր շտաբի բժիշկ դ-ր Փիպերը, դեղագործ Բերթինգը և պատմաբան Գրոսեթը, ապա նաև հույն արքեպիսկոպոս մագիստրոս Քրիսանթոսը, մի չափազանց կիրթ ու նրբանկատ անձնավորություն: Քրիսանթոսը մի քանի տարի ուսանել էր գերմանական համալսարաններում: Նա լիովին տիրապետում է մեր լեզվին: Գերմանիայի հանդեպ նրա անկեղծ համակրանքն ինձ համար տարբեր կողմերով հաստատվեց: Նա հայերի բարեկամ չէր համարվում: Թուրքերը նրան գովազդում էին որպես թուրքերի բարեկամ: Համենայնդեպս, նա կարողացել էր վաստակել նրանց վստահությունը և լիակատար կործանումից փրկել Տրապիզոնի մեծ, ծաղկող թեմը, որը հիմնված է հին, պատմական անցյալի վրա: Նրա անունն անկեղծ ակնածանքով լսել եմ բոլոր ճամբարներում, բոլոր ազգությունների և դավանանքների ներկայացուցիչներից: Տրապիզոնն իր ծայրամասերով, որ տարածվում է մինչև պոնտական լեռնաշղթայի խոր բարձրավանդակները, ազգագրական տեսակետից բացարձակապես հունական բնույթ ունի: Հայերի թիվը վիլայեթի մայրաքաղաքում ռազմարշավի սկզբում գնահատվում էր ամենաշատը չորս հազար: Քաղաքը՝ որպես այդպիսին, չնայած ռուսների բազմակի ռմբակոծոթանը, քիչ էր տուժել: Լայնածավալ ու հիմնավոր կառուցված շուկայական թաղամասերը գրեթե լրիվ անվնաս են: Շուկայում աշխույժ եռուզեռ է, թեպետ այն թուրքերի վերագրավումից

հետո հազիվ չորս շաբաթ է անցել: Մի քանի հազար օտոմանյան հույներ վերադարձել էին: Խանութներում օճառի, թեյի, շաքարի, նավթի և այդպիսի այլ բաների, հատկապես ռուսների թողած ապրանքների աշխույժ առևտուր էր: **Հայեր այլևս չկային**: Հայկական թաղամասը միակն էր, որ գրեթե լիովին ամայացած էր: Հայերի մի փոքր մաս Բաթումի տարածք փախչելով կարողացել էր փրկվել մինչև Թուրքիայի պատերազմի մեջ մտնելը: Մյուս՝ ավելի մեծ մասին, քշել են երկրի խորքը, որտեղ նրանք զրկանքների արդյունքում գտել են իրենց մահը, մնացածին մորթել են Տրապիզոնում, երբ հասել են Վանի շրջանում հայերի դավաճանության մասին լուրերը:

Տրապիզոնում մնացած միայն մի հայուհի՝ մի բժշկի դուստր, կարողացել է խույս տալ սարսափելի մահից, որը բաժին էր հասել նրա ամբողջ ընտանիքին, միայն այն բանի շնորհիվ, որ նա վերջին պահին ամուսնացել էր Ֆլոյրի անունով մի շվեյցարացու հետ, որը Տրապիզոնում հյուրանոց ուներ:

Գրավումից անմիջապես հետո ռուսները մի հայի նշանակում են քաղաքի պարետ՝ իշխան Բեբուդովին[96]: Բեբուդովը վրեժ լուծեց թուրքերից: Նրանցից շատերին անհիմն ենթարկեցին մահապատժի:

Հույն արքեպիսկոպոս Քրիսանթոսը համառ բողոքներով բազմիցս դիմել է մեծ իշխան Նիկոլայ Նիկոլաևիչին՝ Բեբուդովի կատաղի գործողությունների դեմ: Հաջողությամբ, քանի որ Բեբուդովին ի վերջո պաշտոնանկ են արել: Քաղաքի պարետ են նշանակել գեներալ Շվարտցին: Տրապիզոնում դադարել են հետապնդումները: Մահմեդական զանգվածը նույնպես օգտվել է փոխված ռեժիմի ընձեռած մեծ հնարավորությունից: Այդ գեներալի մարդասիրական պահվածքը, որը վերադարձրել է կյանքի ու սեփականության ապահովությունը, սրտառուչ ընդգծել են հենց իրենք՝ մուսուլմանները: Միայն ռուսական հեղափոխությունից հետո մուսուլմանների համար սկսվեց նոր սարսափելի շրջան: **Հայկական՝ հիմնականում հրոսակախմբերից բաղկացած երկու գունդ** Տրապիզոնն ստացան որպես իջևանակայան: Կրկին օրակարգի հարց դարձան մուսուլմանների կամայական մահապատիժները: Քաջարի արքեպիսկոպոսը նաև այստեղ է կարողացել տեղին միջամտել: Որոշ ժամանակ անց հայկական գնդերի արյան ծարավը հանդարտվել է:

Ես բազմաթիվ զրույցներ եմ ունեցել հույն արքեպիսկոպոսի հետ: Սկզ-

96. Բնագրում Բեբուդոֆ է (ծանոթ. թարգմ.):

բում վարանելով, բայց հետո անկեղծորեն ինձ հավաստիացրեց, որ թուրքերի գործելակերպը Տրապիզոնում անհիմն էր: Այնտեղի հայկական բնակչությունը իրեն հեռու է պահել քաղաքական խարդավանքներից: Նրանք բացառիկ խաղաղասեր էին, զբաղվում էին առևտրով և հաճախ ավելի թուրքերեն էին մտածում, քան իրենք՝ թուրքերը:

Տրապիզոնի և Էրզինջանի հեռավորությունը 300 կմ է: Մեզ խոստացված մեքենաները չկային: Պահանջներիս պատասխանում էին. Emin olonus (հաստատ կլինի): Երկար ճանապարհորդության ընթացքում ականջս հաճախ էր լսում այդ թուրքական սիրված դարձվածքը: Դրա նշանակությունը միշտ նույնն էր մնում: Մենք պետք է ճանապարհն անցնեինք նեղլիկ ֆուրգոններով: Մինչև Էրզինջան հասնելու համար 7 օր պահանջվեց: Դանդաղ ընթացքն, այնուամենայնիվ, ուներ իր առավելությունը, որ մենք ավելի խոր տպավորություններ ստացանք կատարվածից: Առաջին օրը հասանք 35 կմ հեռու Ջիվիսլիկ վայրը: Լայն խճուղին, որի կառուցումը թուրքական կառավարության համար 1912թ. ձեռնարկել էին ֆրանսիացի ինժեներները, փայլուն կերպով ավարտել էին ռուսները: Այն թեթև կեռմաններով ձգվում է գետի հոսանքի ձախակողմյան ափով, պոնտական լեռնաշղթայի շատ բարեբեր դաշտավայրերով դեպի Ջիվիսլիկ: Գետի հոսանքի աջ ափի երկայնքով խճուղուն զուգահեռ, ռուսները կառուցել են 80 սմ լայնությամբ երկաթուղի: Այն անցնում ու դուրս է գալիս Ջիվիսլիկով ևս 6 կմ: Հիմնային կառույցները, կամուրջները, կայարանաշենքերը, որոնք իրար հաջորդում են կանոնավոր ամեն 5,5 կիլոմետրում, հուսալի ու ամուր շինություններ են: Այդ երկաթուղին գործել է ռուսների օրոք: **Այժմ այլևս չի գործում**: Կայարաններում միայն մի քանի լոկոմոտիվ ու վագոնների հետքեր են մնացել:

Վեց համեմատաբար մեծ բնակավայրերը, որոնցով մենք անցանք և որոնք բնակեցված են եղել բացառապես հույներով, ամբողջովին ավերված էին: Նաև հունական եկեղեցիները՝մինչև ռուսական օկուպացումը, ավերել են թուրքերը՝ ռազմավարական նկատառումներով: Բնակչությանն այդ բնակավայրերը դատարկելու ժամանակ են տվել: Ավելի բարձր տեղերում գտնվող հունական վանքերը, որոնք չեն եղել ռուսների առաջխաղացման գծում, անվնաս են մնացել: Բարձունքներում կարելի էր այստեղ-այնտեղ տեսնել բանող անասուններով աշխատող մարդկանց խմբեր, որոնք մշակում էին ծխախոտի ու հացահատիկի դաշտերը: Ուշադրություն էին գրավում ճանապարհաշինական գլանավոր մե-

քենաների մեծ քանակությունը: Հսկա մեքենաներ՝ ամերիկյան Օստին գործարաններից: Նախապես արժե նշել, որ Տրապիզոն-Էրզինջան 300 կմ երկարությամբ ճանապարհին հաշվեցի մոտ 80 այդպիսի գլան, և գրեթե նույնքան Էրզինջան-Էրզրում 180 կմ-ոց ճանապարհահատվածում էր: Թե արդյոք դրանք դեռևս գործարկման համար պիտանի են, ես չէի կարող դատել: Արտաքուստ այդպես էր թվում: Բայցևայնպես հնարավոր է, որ ռուսները՝ կարևոր պտուտակամասեր հանելով, կանգնեցրել են այդ հսկա գլանները: Համենայնդեպս, դրանցից ոչ մեկը չէր աշխատում: Ամբողջ ուղևորության ընթացքում տեսանք նաև իրար վրա դարսված արժեքավոր մեծաքանակ հեռագրալարեր և փշալարեր: Չէր նկատվում նույնիսկ նվազագույն ջանք՝ արդեն մասամբ ժանգոտած այդ ավարը փրկելու համար:

Ջիվիսլիկը՝ բավականին մեծ մի բնակավայր, որտեղ կառավարությունը մեր ժամանումից երեք օր առաջ նոր կայմակամ էր կարգել, նույնպես ավերված է: Մենք բնակվում էինք ղեկավարության կողմից յուրացրած, քիչ թե շատ պահպանված մի շենքում: Այնտեղ, բացի կայմակամից, տեղավորվել էին նաև (հեռագրեր առաքող և ստացող) մի կապավոր և 10 ժանդարմ: Առայժմ Ջիվիսլիկի միակ բնակիչները:

Հաջորդ օրը մենք շարունակեցինք դեպի 30 կմ հեռավորության վրա գտնվող **Համզիքենի**: Ամենուրեք ավերածությունների տխրեցնող հետքերն էին: Հովտում ամբողջովին ամայացած հունական գյուղերն են: Բարձունքների վրա, եթե նրանք ընկած չեն խճուղու անմիջական հարևանությամբ, կան նաև գյուղեր, որոնք մասամբ պահպանվել են: **Համզիքենին** էլ ներկայացնում է նույն անսփոփ պատկերը: Մենք գիշերեցինք այնտեղ և հաջորդ օրը առավոտյան ճամփա ընկանք դեպի **Արդասա**: Ճանապարհն անցնում է անչափ գեղատեսիլ Սիգանայի լեռնանցքով: Շքեղ տեղանքներ՝ այսօր դեռևս խիտ եղևնիների, սոճիների ու լաստենիների անտառներով: Ռուսները Համզիքենիից Արդասսա տանող կես ճանապարհին կառուցել են երկու հզոր սողոցարան: Դրանք չեն գործում: Ըստ երևույթին դրանք գործարկվել են հենց Հարշիդ գետի ջրից ստացված էլեկտրահոսանքով:

Արդասան փոքր, այժմ ավերված մի քաղաք է: Միայն երկու տուն էին մասամբ անվնաս: Մեկում էտապի հրամանատարությունն էր, մյուսն զբաղեցրել էր մի քանի օր առաջ ժամանած կայմակամը: Բայց կայմակամի տանը բնակվելու պիտանի միայն մի սենյակ կար: Այնտեղ էր տե-

դավորվել ամբողջ ղեկավար կազմը: Եվս **մի** սենյակ կայմակամի համար միաժամանակ ծառայում էր հյուրասենյակ և խոհանոց: Մենք այդտեղ 6 հոգով անցկացրինք գիշերն: Արդասայում կյանքը մի քիչ ավելի աշխույժ էր: Դա հիմնականում իր հետ բերեց էտապը: Բացի այդ այնտեղ հիմնված է մեքենաների նորոգման մի փոքրիկ արհեստանոց: Ամսի 26-ին առավոտյան մենք շարունակեցինք մեր ճանապարհը Արդասայից դեպի **Գյումուշհանե**: Ավտոշարասյան հրամանատարը՝ չերքեզական ծագումով մի կապիտան, որը Դայմլերի բեռնատար մեքենաներով ապահովել է էտապի ծառայությունը երկու բնակավայրերի միջև, մեզ առաջարկեց իր ծառայությունը: Մեքենաները տեղափոխում են 3'տ բեռ: Չնայած դժվար բնապայմաններին, այդ բեռնատարները իրենց գործն անքերի են անում: Դեպի Գյումուշհանե տանող ճանապարհին ավերածություններից բացի էլ ոչինչ չկա: Ամբողջ ուղևորության ընթացքում ոչ մի մարդ չենք տեսել: Հունական բնակչությունն սպառվում է Արդասայի հետևում: Մյուս գյուղերը խիտ բնակեցված են եղել հայերով՝ խառնված թուրքերի հետ: Այստեղ գործնականում առաջին անգամ գիտակցում ենք, որ հայերի ունակությունները չեն սահմանափակվում միայն առևտրի և ֆինանսների բնագավառով: Էրզինջանի ու Էրզրումի բարձրավանդակներում մինչև ներքև՝ դեպի Մուշ, Խարպուտ և Վանա լճի շրջակայքը, հայը առաջին հերթին առողջ և ուժեղ հողագործ է: Գյուղացի՝ բառիս բուն իմաստով: Մշտաբնակ հայ գյուղացիությունն առաջին հերթին նպաստել է թուրքական կայսրության Արևելյան Անատոլիայի գավառների առատ բնական հարստությունների զարգացմանը: Գյումուշհանե տանող ճանապարհին հաճախ կիլոմետրերով ձգվող մրգատու այգիները, որոնք այդ ժամանակ հիասքանչ ծաղկունքի մեջ էին, դրանց հարող ակներև խնամքով մշակված, բայց հիմա անտերության մատնված բարեբեր դաշտերն ու մարգագետինները, վկայում են կենցաղային կուլտուրայի համեմատաբար բարձր մակարդակի մասին, որ իշխել է այստեղ, մինչև նոր, խեղող հարաբերություններին տեղը զիջելը:

Հայ գյուղացիությունը եղել է **խաղաղասեր, աշխատունակ և պետական գանձարանի համար ծառայել է հարկերի կարևոր աղբյուր**: Չենք վերցնում էին ընդհանուր առմամբ միայն ինքնապաշտպանության համար, երբ ծույլ ու ավազակային քուրդ խառնամբոխը իջնում էր լեռներից՝ նրանց տքնաջան աշխատանքի պտուղները թալանելու համար:

Գյումուշհանեում հայերի այլևս ոչ մի հետք չկա: Հայկական թաղամասը, որը նախկին տերերի բարեկեցության վկայությունն է, բավական

լավ վիճակում է: Հայերին մասամբ քշել են դեպի արևմուտք՝ ասիական Թուրքիա, բայց մեծ մասին կոտորել են հենց Գյումուշհանեում: Մենք մի քանի ժամ մնացինք երբեմնի եռուզեռով լի քաղաքում: Մի սրճարանում՝ քուրդ հեղինակությունների հետ նստած, եզակի անկեղծությամբ մեզ պատմում էին հայերի սպանդի ամենադաժան մանրամասների մասին: Ընդ որում՝ անընդհատ շեշտում էին հատկապես այն փաստը, ինչը ուղևորության հետագա ընթացքում բազմիցս գրավեց մեր ուշադրությունը, որ տվյալ վայրում այլևս ոչ մի հայ չկա:

Մենք կանգ առանք **Փիր-Ախմեդում**՝ մի քանի տներից բաղկացած փոքրիկ մի գյուղում: Ռուսական հրամանատարությունը երկար ժամանակ եղել է այդտեղ: Փիր-Ախմեդից ճանապարհները ճյուղավորվում են, մեկը տանում է դեպի Էրզրում, մյուսը՝ դեպի Էրզինջան:

Հաջորդ օրը վաղ առավոտյան մենք կրկին ճամփա ընկանք: Մոտավորապես ցերեկվա ժամը երկուսին, մի քանի հրկիզված ու անմարդ գյուղերով անցնելուց հետո, հասանք **Քյոսե** անունով մի փոքրիկ քաղաք: Այստեղ ևս ակնհայտ էին ավերածությունների հետքերը: Հիմա քրդերն էին բնակվում: Մի քանի մուրացիկ էին թափառում: Միակ բարվոք տունը, որտեղ, այնուամենայնիվ, ոչ մի պատուհան այլևս չկար, գիշերելու համար մեզ տրամադրեց էտապի հրամանատարությունը: Ռուսները Քյոսեում ունեցել են պարենի մեծ պահեստ՝ ամբողջովին բարձր փշալարերով շրջափակված և հիմնել էին մի օդանավակայան: Թուրքական մի շարասյուն հսկում էր վրանների տակ պահեստավորված ու լքված պաշարները:

Հաջորդ օրը մենք հասանք մինչև **Սինբաղուր**՝ խճուղուց 3 կմ հեռավորության վրա գտնվող քրդական բնակատեղին, որը իրադարձություններից չէր տուժել: Այն բաղկացած է մոտ 50 քարե խրճիթներից: Դրանց բնակիչները քիզիլ-բուշիներն են, շիիթական կրոնի մի տարատեսակ, եզիդիզմի հակվածությամբ: Այդտեղի ավագանին մեզ տեղավորեց ընդունելության մի ընդարձակ սրահում: Շուտով հավաքվեցին գյուղի որոշ բնակիչներ, արական սեռի ներկայացուցիչներ, բայց այդ սրահից դուրս: Բերեցին մեծ քանակությամբ ձու, կաթ, մեղր և չէին զլանում անընդհատ արտահայտել Գերմանիայի հանդեպ իրենց համակրանքը: Այդ մարդիկ շատ սիրալիր էին և առաջարկում էին՝ հետադարձ ճանապարհին կրկին կանգ առնել իրենց մոտ: Հրաժարվեցին փողի տեսքով որևէ նվեր ստանալ: Միայն սարդինաձկան մի քանի պահածո ցանկացան վերցնել:

Հաջորդ առավոտյան մեր ուղևորությունը չափազանց դժվարացավ: Սիփիկ-Քորի լեռնանցքը չէինք կարողանում կարգին անցնել և պետք է կրկին Տրապիզոն վերադառնայինք: Մենք պարտական ենք միայն այն հանգամանքին, որ այդ ընթացքում մի հեռագիր եկավ, ըստ որի՝ Վեհիբ փաշան մոտ օրերին ուզում է ուղևորվել Էրզինջան, դա հնարավոր դարձրեց ճանապարհը շարունակել: Սիփիք-Քորի ստորոտում գտնվող մի քրդական գյուղից բերեցին մոտ 200 տղամարդ, ովքեր 30 ժամ շարունակ ձյունից մաքրեցին 2200 մետր բարձրությամբ լեռնանցքի ճանապարհները: Չնայած դրան անցումը խիստ դժվար էր: Ձիերը հրաժարվում էին առաջ շարժվել, թեպետ բեռները իջեցվել էին ֆուրգոններից, և քրդերը դրանք տարել էին մինչև լեռնանցքի ամենաբարձր կետը: Մենք ևս գերադասեցինք մի քանի ժամ մագլցել խոր ձյան միջով: Երեկոյան ժամը 9-ի սահմաններում հաղթահարեցինք այդ բարձունքը: Բարեբախտաբար լիալուսին էր, այլապես հազիվ թե հնարավոր լիներ ճամփան շարունակել: Սիփիք- Քորը դեկտեմբերի սկզբից մինչև մայիսի կեսը սովորաբար անանցանելի է լինում: Եվ այդտեղ ճամփաները ավարտվում են: Վայրէջքի ժամանակ տեսանք հրկիզված մի քանի փոքր գյուղ:

Ապրիլի 30-ին առավոտյան ժամը 3-ին մենք վերջապես հասանք Էրզինջան՝ նույնանուն ինքնավար մուքասարիֆաթի մայրաքաղաքը: Ոչինչ չէր նախապատրաստված մեզ տեղավորելու համար, չնայած բոլոր ենթադրվող հեռագրերին ու կարգադրություններին, որոնք պետք է որ հասած լինեին: Դողալով, ջերմաստիճանը 2° էր, հեռագրատանն սպասեցինք մինչև առավոտյան ժամը 6 ՝ -ը: Միայն այդ ժամանակ մեզ ուղեկցող երկու թուրք կապիտաններին հաջողվեց տեղ գտնել բելեդիջեում՝ քաղաքապետարանում:

Վերջին շաբաթների ճնշող տպավորություններից հետո Էրզինջանն սկզբում առաջացրեց տրամադրության ուրախ փոփոխություն: Քաղաքն ունի գեղեցիկ, բոլորովին ոչ թուրքական տեսք: Գլխավոր հրապարակ՝ կառուցապատված թուրքական մոնումենտալ ոճի վարչական ամենատարբեր շենքերով, կարող էր պատիվ բերել ամեն մի մեծ քաղաքի: Ճանապարհին տները շրջապատված էին գեղեցիկ այգիներով: Ժամանակակից Էրզինջանի հիմնադրումը վերագրվում է Մուշիր Զեքի փաշային: Գրեթե 20 տարի, մինչև 1908 թվականը, նա այնտեղ փոխարքայի դեր է կատարել: Նրա հրամանատարությանն են ենթարկվել բանակի Դիարբեքիրի, Խարպուտի ու Էրզրումի կորպուսները: Միաժամանակ

սուլթանը նրան նշանակել է 1897-ից կյանքի կոչված համիդիե 66 գնդերի ղեկավար: Նա շատ նախաձեռնություններ ուներ: Նա կառուցել է ոչ միայն աչքի ընկնող շքեղ զորանոցներ, այլև մահուդի երկու ֆաբրիկա և կաշվի մեկ ֆաբրիկա և էլի շատ այլ բաներ: Ձյունածածկ լեռներով պսակված գեղատեսիլ մերձակայքի տարբեր տեղերում Զեքի փաշան կառուցել է տվել հասարակական զբոսայգիներ: Բնակչության թվի վերաբերյալ տվյալները տարբեր են: Մոտավորապես ճիշտ կարող է լինել այն, որ մինչև պատերազմի սկիզբը Էրզինջանն ունեցել է մոտ 20.000 մուսուլման, որոնց մեջ 2000 քուրդ Դերսիմի շրջանից և 10.000 հայ բնակիչ: Ըստ այնտեղի պաշտոնական ծառայությունների տվյալների, քաղաքում հիմա ապրում էին 3000 մուսուլման: Նրանք, ովքեր մասամբ փախել էին քրդական շրջաններ, դանդաղ վերադառնում են: Երեք օր տևած մեր այցելության ժամանակ մենք այցելեցինք մուչարիֆին (տեղ. կառավարության նախագահին): Նա կիրթ մի արաբ էր, որը նույնպես նոր էր ժամանել և մինչ այդ տարբեր պաշտոններով աշխատել էր Սիրիայում: Վերջին երեք տարիների իրադարձությունների մասին նա չէր կարող սեփական տեսակետից որևէ բան ասել: Նա մեզ ներկայացրեց միայն մի ցուցակ՝ հայերի կատարած հանցագործությունների մասին: Ես այն վերցրի քաղաքավարությունից դրդված, բայց հրաժարվում եմ օգտվել այդ ցուցակից: Այն այնքան բացահայտ կողմնակալ է, որ դրանով ոչ մեկը չի գայթակղվի: Գրեթե նույն ցուցակը մենք ստացանք նաև զորքերի հրամանատարից: Իմ հարցին, թե քանի՞ հայ են դեռևս մնացել Էրզինջանում կամ վերադարձել մինչև հիմա, երկու պարոնների պատասխանը նույնն էր՝ **ոչ մի**: **Այդ** տեղեկության սարսափելի ճշմարտությա մեջ մենք համոզվեցինք նաև մեր սեփական դիտարկումներով:

Քաղաքի մուսուլմանական մասի կառույցները այդ իրադարձություններից համեմատաբար քիչ են տուժել: Մի քիչ կողքի ընկած հայկական քաղաքամասը ամբողջովին վերածվել է ավերակների և մարել է: Կարծես մի հսկա գերեզմանոց լինի: Միայն տները շրջապատող պարիսպները են մասամբ կանգուն: Դրանց բարձրությունն ու չափերը խոսում են այնտեղի հայերի բարեկեցության մասին: Մի անգամ կեսօրից հետո ժանդարմները մեզ ուղեկցեցին հայկական թաղամաս: Մենք զննեցինք աղբակույտերից բաղկացած մի շարք տների ներսը: Ժանդարմները տեղ-տեղ հեռացրին աղբի վերևի շերտերը: Ամենուրեք դուրս էին գալիս մարդկային մարմնի մասեր՝ գլուխներ, ձեռքեր, ոտքեր: Դեռ ուզում էին

մեզ ավելի շատ ներկայացնել մարդկային այդ ողբերգությունը, բայց ես կարգադրեցի վերադառնալ: Հայկական երեք եկեղեցիներից այդ թաղամասում երկուսի շենքերը պահպանվել էին, բայց ներսը՝ ներառյալ հատակները, ամբողջովին ավերված էին: Վայրի շներն այնտեղ հոգում էին իրենց կարիքները: Երրորդ եկեղեցին՝ եպիսկոպոսի շենքի հետ, վերածվել է աղբակույտի: Ինչպես մենք տեղում անառարկելիորեն պարզեցինք, Էրզինջանից ռուսների քաշվելուց հետո՝ 1918թ. հունվարի վերջին, հայկական ուժեղ հրոսկախմբերը՝ Մուրադ (Մրադ) փաշայի ղեկավարությամբ, գրավել են քաղաքն ու դաշտավայրը: Հայերը գործադրել են իսկական ահասփյուռ գունդ: Մուսուլման բնակչությանը 25-30 հոգանոց ջոկատներով՝ տղամարդ, կին ու երեխա, տարել են հայկական թաղամաս, որտեղ նրանք անհետացել են: Մի օր երեկոյան մենք մի էքսկուրսիա ձեռնարկեցինք դեպի Եփրատի կամրջի մոտերքում հիմնված զբոսայգիները: Ժանդարմները մեզ պատմում էին, թե ինչպես իրենք 1915թ. Էրզինջանի բնակչությանը՝ եպիսկոպոսի գլխավորությամբ, քշել են Եփրատ գետը և խեղդել այնտեղ: Ափի երկու կողմերում հսկել են քրդերը և կրակել են բոլոր նրանց, ովքեր համարձակվել են փրկվելու փորձ անել: Նրանք մեզ ցույց տվեցին այն տեղերը, որտեղից ձմռան ցրտին այդ սոսկալի անմարդկայնության զոհերին՝ գրեթե մերկ, դահիճները քշել են հոսանքի մեջ: Մենք դիտեցինք նաև մերձակայքի հսկա զորանոցները, որոնցում տառացիորեն 1500 հայի միաժամանակ մորթել են: Ժանդարմներից մեկն ասաց իր սեփական ձեռքերով սպանվածների թիվը՝ 50, մեկ ուրիշը՝ 27: Այդ մասին տվյալ մարդիկ պատմում էին՝ չսպասելով նույնիսկ դրա վերաբերյալ հարցերին, պարծենալով՝ որպես հերոսական արարք: Մենք ընդհանրապես ձգտում էինք հետազոտել գործն այնպես, որ կողմնապահության կասկած չհարուցենք:

Այնուամենայնիվ, անհերքելիորեն կարելի է հաստատել, որ հայկական Էրզինջան քաղաքը արդեն 1915թ. մատնվել է ոչնչացման: Ինչպես ես հետո հաստատապես իմացա, **ո՛չ Էրզինջանի մութասարիֆատի, ո՛չ էլ Էրզրումի վիլայեթի մուսուլմանական թուրք բնակչությունը չի մասնակցել հայերի կոտորածներին**: Որտեղ այդպիսի դեպք պատահել է, ապա խոսքն աննշան բացառությունների մասին է: Կոստանդնուպոլսում կազմակերպված հրոսակախմբերը՝ չերքեզ Հասանի գլխավորությամբ, ժանդարմները, բայց առաջին հերթին՝ քրդերի ջոկատները պետք է համարվեն կոտորածների իսկական հեղինակները: Այդտեղ և հետագա

ճամփորդության ընթացքում ես հաճախ լսել եմ հասարակ թուրքերի անկեղծ ափսոսանքը հայերի բնաջնջման համար: Քաղաքներում նրանք նաև բազմատեսակ անհրաժեշտ արհեստագործներ էին, որոնց առայժմ ոչ մի տեղ փոխարինողներ չէին գտնվել:

1915թ. Ստամբուլից եկած հարցումներին, թե արդյո՞ք փաստերը համապատասխանում են իրականությանը, որ Էրզինջանում իրականացվել է հայերի մեծ կոտորած, թուրք պաշտոնյաները պատասխանել են հստակ «bona fides»-ով. «Էրզինջանում իշխում է բացարձակ անդորը, այստեղ ոչ մի ջարդ չի եղել»: Իսկ արյունահեղությունը եղել է, ախր, Էրզինջանից 3-4 կմ հեռու:

Մի քանի հաճելի ժամ անցկացրինք ավստրո-հունգարական լեռնային հրետանու և հրաձգային գնդերի ընկերակցությամբ, որոնք կապիտան Հուսկայի հրամանատարությամբ 14 օրից ի վեր տեղավորվել են Էրզինջանից մի քանի կիլոմետր հեռու գտնվող հայկական մի գյուղում: Գյուղը հրկիզված էր ու անմարդ: Շթայրցիներից ու տիրոլցիներից բաղկացած թիմի ճարպիկ տղաները մեծ վարպետությամբ կարողացել էին նախկին ռազմական գլխավոր հրամանատար մուշիր Զեքի փաշային պատկանող տաղավարը վերածել բնակության համար պիտանի շենքի: Ինչպես կապիտան Հուսկան՝ շարասյան հրամանատարը, այնպես էլ նրա երեք սպաները, Էրզինջան էին եկել հակառակ կողմից՝ հարավից, Խարպուտով, մեզ պատմում էին, որ այնտեղ էլ ամենուրեք հայությունն արմատապես բնաջնջված է:

Մայիսի 3-ի առավոտյան մենք դուրս եկանք Էրզինջանից: Դաշտավայրի երեք հայկական բնակավայրերը նույն տեսքն ունեին, ինչպես նախորդները: Մենք օրական մոտ 70 կմ էինք անցնում, քանի որ մեր ձիերը հանգստացած էին: Զասան, որտեղով մենք անցանք, փլատակների դաշտ էր, ինչպես **նաև Բիջեն՝** մեր գիշերավայրը:

Ամսի 4-ին մենք շարժվեցինք դեպի Մամախաթուն (Թերջան): Համեմատաբար մեծ քաղաք է՝ թուրք ու հայ խառը բնակչությամբ: Նույնպես փլատակների է վերածված, քիչ թե շատ տանելի վիճակում միայն մի քանի տուն են պահպանվել: Մենք բնակվում ենք կայմակամի մոտ: Նա մի շաբաթ է, ինչ ժամանել է Կոստանդնուպոլսից: Նա ոչինչ չգիտեր տեղանքի մասին և նույնքան քիչ կարող էր պատմել նախորդած իրադարձությունների մասին:

Կարելի էր տեսնել միայն մի քանի հետ վերադարձած մուսուլման

ընտանիքների: Դեռևս սելջուկների ժամանակներին վերագրվող տեղի ճարտարապետական հուշարձանները մասամբ նույնպես զոհ են դարձել այդ իրադարձություններին: Քաղաքի մերձակայքում կան **ռուսական** երկու մեծ զինվորական գերեզմանոց՝ մի քանի հարյուր զինվորների գերեզմաններով: Դրանք դեռ պահպանված են: Դրանց մեջ կառուցված փայտե ռուսական կրկնակի խաչով երկու եկեղեցիները ներսից արդեն լրիվ դատարկված են:

Ամսի 5-ին, կեսօրվա ժամերին, մենք ուղևորվեցինք դեպի **Քարաբիջիկ**: Տեղանքն ամայի է և դժվարանցանելի: Փոքրիկ բնակավայրերը, որոնցով մենք անցանք, ավերված են ու դատարկ:Մամահաքունից մի քանի կիլոմետր հեռու երևում էր պատերազմի ժամանակ սկսած, ռուսների կառուցած՝ 80 սմ աղուրի լայնությամբ, երկաթուղային շենքի վերևի մասը: Գիշերվա ժամը 10^{00}-ին ժամանեցինք Քարաբիջիկ: Բաց դաշտում և ռուսների թողած վրանների տակ դարսած արտառոց մեծ պաշարների պահեստ կա: Շուրջը զորաջոկատների վրանների մի շարք է: Էտապի հրամանատարը՝ մի կապիտան, դրսևորեց աջակցելու նվազագույն չափը: Մենք հարկադրված էինք գիշերն անցկացնել պատերազմի ֆրանսիացի չորս գերիների հետ՝ մի վրանում, որոնք Վեհիբ փաշայի բանակում ծառայում էին որպես էլեկտրամեխանիկ: Այդ անհարգալիր առաջարկից հրաժարվեցինք: Մենք փնտրեցինք մի գյուղ, որտեղ, ալբանական ծագում ունեցող մի սպայի սիրալիրության շնորհիվ, կարողացանք տեղավորվել միակ՝ կիսով չափ պահպանված տանը:

Քարաբիջիկից մինչև Սարիղամիշ գործել է ռուսների կողմից երկրի մեկուկես տարվա բռնազավթման ընթացքում կառուցած 158 վերստ երկարությամբ երկաթուղին: Այժմ գործում է միայն Էրզրումից Սարիղամիշ (122 վերստ) հատվածը: Երկաթուղին դուրս է գալիս Քարաբիջիկից, որտեղից կողմնակի մի ուղի տանում է կայարանից դեպի արևելք՝ 900 մետր հեռավորության վրա գտնվող էտապային ճամբարը, Կարա Սուի կամ Էլեգիայի երկայնքով դեպի Էրզրում: Էրզրումից երկաթուղին անցնում է բազմաթիվ ոլորաններով Դեվե Բոյնու լեռան ստորոտով, որպեսզի հետո իջնի Փասին Օվայի դաշտավայրը: Անցնելով այդ դաշտավայրով, գրեթե միշտ խճուղուն զուգահեռ գնալով, երկաթուղին հատում է Հասան Քալե քաղաքը և Քյոռու Ռենին, այդտեղից բարձրանում Արազի հովիտը՝ մինչև գետաբերանը, անցնելով Խորասան բնակավայրով: Խորասանից մի քանի վերստ անցնելով այն կրկին բարձրանում է: Հաջորդը ամբողջ կառույցի ամենադժվարին մասն է: Արհեստական մեկ կառույցը անմիջապես հաջորդում է մյուսին: Դրանք անհրաժեշտ են եղել հողի ուժեղ սողքի պատճառով: Երկաթուղին անցնում է մինչև 1700 մ բարձրությամբ տեղանքով: Այն ձգվում է Ջիվին փաշայի ավերակներով, Փունար Վաշ Քերխենով, Ջիվին քաղաքով և Կարա Ուրգանով, որը մինչև այժմ ռուսական սահմանային քաղաք է: Այնուհետև հասնում է Ահիլվարշ, Ջակ, Սիրբազան, ապա Իսկենդեր Սու գետի երկայնքով և իջնում է ի վերջո 300 մ դեպի Սարիղամիշ: Երկաթուղին լավ է կառուցված: Բայց պահանջվում են մինչև 6 % բարձրացող և մինչև 30 մ ներքև գնացող ոլորաններ: Երկաթուղին ջրով ապահովելու դժվարագույն խնդիրը՝ բազմաթիվ զառիթափ լանջերով և ութ ամիս ձյունածածկույթով տարածքում, ռուսները փայլուն կերպով լուծել են: Թունելները, ուղեկամուրջները և այլ արհեստական կառույցները ինժեներական արվեստի տեսակետից փայլուն են կատարված: Ամեն մի կայանում կան պուլսոմետրով ջրավազաններ, քանի որ ջրի ծախսը շատ բարձր է: Կայանները դեռևս ապահովված են ռուսական ածուխով: Ռուսները թողել են մոտ 250 լոկոմոտիվ՝ ռուսական և ամերիկյան արտադրության, և մոտ 600 վագոն, որոնցից 100-ը ապրանքատար, 450-ը բեռնատար և 50-ը մարդատար: Երկաթուղային կայարանները 5 վերստը մեկ հաջորդում են իրար՝ մինչև նախկին ռուսական սահմանը: Էրզրումից մինչև Հասան Կալե ոչ ոք չգիտի այդ կայարանների անունները: Դրանք հիմնված չեն տեղանունների վրա և ռուսներն ստեղծել են սոսկ ռազմական անհրաժեշտությամբ: Կայարանաշենքերը մինչև Հասան Կալե կառուցված են փայտից՝ սիբիրյան կայարանների նման: Իսկ Հասան Կալեից մինչև Սարիղամիշ՝ դրան հակառակ, վայելչատես ոճով կառուցված քարե շինություններ են: Խորասանում կա ընդարձակ մի արհեստանոց (դեպո)՝ լոկոմոտիվների ու վագոնների նորոգման համար, որը հարյուր և ավելի աշխատատեղ է ապահովում: Մնացյալ մանրամասների մասին պատմելու առիթ կունենամ վերադառնալուց հետո:

Ամսի 7-ին առավոտյան մենք դուրս եկանք Քարաբիջիկից և ժամը 10-ի սահմաններում հասանք Իլիջա՝ մի քաղաք, որը գտնվում է Էրզրումի դաշտավայրի մուտքի մոտ: Մինչև ցերեկվա ժամը 2^{00}-ն մնացինք այնտեղ: Իլիջան 4000 բնակիչով մի փոքր բնակավայր է, որը Էրզրումի ունևորների համար ծառայում էր որպես ամառանոց: Ածխաթթվի 2 լոգարաններ՝ հսկա ջրավազաններով, պահպանվել են: Այլապես Իլիջան

հիմնովին ավերված է, իսկ հիմնականում հայերից բաղկացած բնակչությունը իսպառ վերացել է: Միայն այդտեղից անցնող ուղևորներն ու ռազմական ջոկատներն են կանգառ անում՝ թարմացնող լոգանք ընդունելու համար: Հինգ ժանդարմների հետ մեկ օր առաջ ժամանած մյուդիրն ստեղծում էր երբեմնի ծաղկող առողջարանի կենդանի կայքը:

Մեր առջև փռված Էրզրումի սարահարթի երկարությունը մոտ 24 կիլոմետր է, մինչդեռ լայնությունը տատանվում է 12-ից 15 կմ: Անզեն աչքով մենք տեսնում ենք ութ բնակավայր: Դրանք ամբողջովին բնակեցված են եղել հայ գյուղացիներով: Դրանցից երեքի միջով մենք անցնում ենք Էրզրում գնալու ճանապարհին: Դրանք մարած բնակավայրեր են, տներից մնացել են միայն դրսի պարիսպները: Կանգուն մնացած գյուղերն էլ, անշուշտ, նույն տեսքը կունենան, որպես կանոն այդ բարեբեր ու օրհնված դաշտավայրում: Ոչ մի տեղ չնկատվեց նույնիսկ ծխի քուլայի նշույլ:

Երեկոյան ժամը 6-ին հասանք **Էրզրում**: Այնտեղի ռազմական պարետը և վալիի տեղակալ Ռեջեբ բեյը, որը ալբանացի է, հոգացել էր մեզ լավ տեղավորելու համար: Էրզրումում մնացինք չորս օր: Այնտեղի պաշտոնյաները շատ սիրալիր ու պատրաստակամ էին:

Մինչև պատերազմի սկիզբը Էրզրումն ուներ 48.000 բնակիչ, նրանցից 12.000-ը հայեր էին: Քաղաքը որոշ մասերում տուժել է ռուսների գնդակոծություններից: Հայկական թաղամասը՝ խանութներով հանդերձ, որոնք ընկած են շուկայի գլխավոր մասում, ամբողջովին ավերված էին: Հայկական եկեղեցիներն արտաքուստ պահպանված են: Ներսում դատարկվել և վերածվել են սննդամթերքի և այլ պահեստների: Մեր այնտեղ եղած ժամանակ 1500 մուսուլման ընտանիք կարողացան վերադառնալ Էրզրում, այսինքն՝ մոտ 9000 հոգի:

Ոչ մի հատիկ հայ այլևս Էրզրումում չկա: Քրիստոնյա բնակիչներից միայն մեկ հույն՝ Գեորգիոսը, որին մեզ էին տրամադրել ծառայելու, բայց արդեն 24 ժամ անց այն մտահոգությամբ, որ նա կարող է մեզ ավելին պատմել, քան դա հաճո է իշխանություններին, նրան զրկեցին այդ ծառայությունից:

Իշխանության ներկայացուցիչները փորձում էին մեզ ներկայացնել հայերի կատարած հանցագործությունների մի ցուցակ: Բայց հայերի կոտորածներն սկսվել են նախքան 1915-ը: Ռուսական սահմանի մոտիկությունը նպաստել է մի շարք հայերի փախուստին: Մնացյալին քշել են երկրի խորքը, մոտ 6000-ին սպանել են: Հայերի խանութներից՝ քարե հիմնավոր կառույցներ, այսօր էլ՝ երեք տարի անց, դեռ նեխահոտ է գա-

լիս: Մեծ հայկական վանքում ապաստան փնտրող հայերին բոլորին սրախողխող են արել:

1916թ. հունվարի վերջից մինչև մարտի 9-ը, ռուսների նահանջից հետո, հայերն Էրզրումը պահել են իրենց ձեռքում՝ ֆրանսիացի սպաների ղեկավարությամբ, որոնց պարագլուխը գնդապետ Մորելն էր, նրանք անցել են դաժանությունների: Մի քարվանսարայում նրանք փակել են 750 մուսուլմանի՝ տղամարդ, կին, երեխա, իսկ դրա դիմացը գտնվող մեկ ուրիշում՝ 500 հոգու: Հետո երկու այդ շենքերը բենզինով հրկիզել են: Այդ տներն առայսօր բացված չեն: Մեր «պատվին» դա պետք է արվեր Ռեջեբ բեյի ներկայությամբ: Ես երբեք չեմ կարողանա հաղթահարել այն սարսափելի տպավորությունը, երբ հեռացված աղբից հետո մեկը մյուսի հետևից ի հայտ եկան ածխացած դիակները: Սարսափի ու զարհուրանքի վայրերը, ինչպես հրաբխային ընդերքը, մարդկանց մեջ նույնպես առաջացնում են անասելի կրքի ու վրեժխնդրությամբ լեցուն ատելության ժայթքումներ: Երբ մարտի 9-ին թուրքերն անսպասելի հարձակվեցին Էրզրումի վրա, դեռ այնտեղ մնացած հայերին, որոնք փորձում էին պաշտպանվել ամրոցատիպ մի շենքում, գնդակոծել, իսկ ավելի ուշ՝ հանձնման ժամանակ, բոլորին սպանել էին:

Դեռ մի շարք մանրամասներ կարելի է պատմել, բայց դրանց նկարագրությունը շատ հեռուն կտանի: Ընդհանուր պատկերը, որ հիմնված է վերոնշյալ փաստերի վրա, դրանք կարող են լրացնել, բայց ոչ՝ փոխել:

Ամսի 11-ին հրաժեշտ տվինք Էրզրումին: Երկաթուղին մեզ ամսի 12-ին ցերեկը պետք է հասցներ Սարիղամիշ (122 վերստ): Այդ ճանապարհահատվածն անցնելու համար մեզ պետք է եղավ մինչև 14-ի գիշերը, որի համար ռուսներին բավական էր 8 ժամը:

Թուրքերի տիրանալուց երկու ամիս անց 250 լոկոմոտիվից միայն 12-ն էին դեռևս պիտանի օգտագործման: Բայց դրանք էլ, մի քանի վերստ անցնելուց հետո, պետք է անընդհատ կանգնեցվեին, որպեսզի անհրաժեշտ նորոգման ենթարկվեին: Սարիղամիշ տանող ամբողջ ուղու վրա չկար կայարանների երկաթուղային տառացիորեն ոչ մի ծառայող կամ որևէ սլաքավար: Երկաթուղու հեռագրային ծառայությունը չէր գործում, առաջնակարգ ազդանշանային կայանները շարքից դուրս էին եկել: Յուրաքանչյուր կանգառից առաջ և հետո պետք է գնացքն արգելակեր, որպեսզի իրենք փոխեին ռելսերը: Չորս օրում տեսանք գնացքների մեկ բախում և երեք ռելսերից դուրս գալ: Եվ եթե մենք մի կերպ ողջ-առողջ ոտք դրինք Սարիղամիշ, դրա համար պարտական ենք համենայնդեպս ոչ եր-

կաթուղին շահագործողներին: Նրանք ոչ մի առիթ բաց չթողեցին մեզ որևէ տեղ վթարի ենթարկելու: Իմ գնահատմամբ, այդքան կարևոր երկաթուղին, եթե որևէ հրաշք չկատարվի, ապա պիտանի չէ գործարկման:

Համեմատաբար երկար, բայց ոչ հաճելի, 24-ժամյա կանգառ արեցինք միայն **Խորասանում**: Բնակավայրն ամբողջովին հրկիզված է: Շատ հայեր կարողացել են հասնել ռուսական սահմանը և անցնել Կովկասը: Մարդկության մշակույթը այս երկրներում ենթարկվել է մի աղետի, որը գրիչը հրաժարվում է նկարագրել: Ավելի քան երեք շաբաթների ընթացքում մենք անցել ենք մոտավորապես 600 կմ, մեռածների միջանցք, որպես միակը կարձանագրվի պատմության մեջ: Հենց այն բանի համար, որ այլ մակդիր չկա այդ ճանապարհին, որտեղ հարավում՝ Բիթլիսի ու Վանի կողմերը և արևելքում՝ Բայբուրդի կողմերը, շարունակվում են նույն բարբարոս ավերածություններն ու վայրագ սպանդը:

Ես ինձ հեռու եմ պահում բողոքի կամ պաշտպանության ձևակերպումից, դա իմ գործը չէ: Մոտիկ կամ հետագա մի պատմագրություն պետք է ստանձնի այդ խնդիրը: Մեկ առանձին մարդ ի զորու չէ, ինչքան էլ ցանկանա, խոր պատկերացում կազմել և այդպիսի հարաբերություններից գլուխ հանել: Այնուամենայնիվ, իմ տեսածը ողջախոհ և առանց չափազանցությունների, դեռ մի բան էլ մեղմ նկարագրելը համարում եմ իմ պարտքը:

1918 – 09 – 01 – DE – 001

Սկզբնաղբյուրը՝ PA –AA /R14104

Ռայխսկանցլեր Հերթլինգին՝ Տրապիզոնի հյուպատոս Բերգֆելդից

№ 44 / Մ. Գաղտնի № 81

Տրապիզոն, 1 սեպտեմբերի 1918թ.

Պատերազմի սկզբում՝ հայերի պահվածքի ու հայացքների պարագայում, նրանց տեղահանումը, ընդ որում ոչ միայն տղամարդկանց, այլև ամբողջ ընտանիքների, ըստ իս, ռազմական անհրաժեշտությունից բխող միջոցառում էր: Քանի որ Սև ծովի ափին հունական շարժումն ապացուցեց, որ հնարավոր չէ ոչնչացնել հրոսակախմբերի գործունեությունը, քանի դեռ այդ տարածքում ապրող ազգությունների մեջ նրանք գտնում են աջակցություն, օթևան ու սնունդ:

Արևելքի յուրաքանչյուր գիտակ կհամաձայնի ինձ այն բանում, որ հայերը հազիվ թե ունենան մարդկայնորեն համակրելի որևէ գիծ: Այնուհանդերձ նրանց տեղահանման ընթացքում եղած օրինազանցությունները, տղամարդկանց զանգվածային սպանությունները, կանանց ու աղջիկների բռնաբարությունները և նրանց ունեցվածքի թալանը ոչ բավականաչափ սուր են դատապարտվում: Դրանք նաև թշնամական կառավարություններին ընձեռում են ցանկալի առիթ՝ իրենց սեփական ժողովուրդների առջև և չեզոք երկրներում ներկայանալ որպես համընդհանուր մարդկայնության առաջամարտիկ: Արևելյան Անատոլիան գրավելու ընթացքում ռուսական ռազմական մարմինները բազմիցս արտահայտվել են, որ հաշտության բանակցությունների ժամանակ, մեր թշնամիները չեն շրջանցի Հայկական հարցը և առնվազն հատուցում կպահանջեն հայերի հանդեպ գործած անարդարությունների համար: Պետք է նաև ակնկալել, որ Անտանտի պետություններն արդեն զուտ տակտիկական պատճառներով բաց չեն թողնի ճնշված ժողովուրդների պաշտպան երևալու այդ առիթը: Դրանով նրանք ակնկալում են վաստակել ամբողջ քաղաքակիրթ աշխարհի համակրանքը:

Դրան հակառակ՝ Բարձր Դուռը կհայտնվի այնքան դժվարին կացության մեջ, որ հազիվ թե գտնի փաստացի եղած զանգվածային օրինազանցությունների համար բացատրություն տալու կամ ներողություն խնդրելու համար որևէ հավատարժան հիմք: Նաև այն տարբերակված վերաբերմունքը, որ նրանք դեռ այսօր էլ ցուցաբերում են ոչ միայն կենդանի մնացած քիչ տղամարդկանց, այլև նրանց կանանց ու երեխաների, ունեցվածքի հանդեպ, պետք է ուժգնացնի ճշմարտությանը մոտ այն ենթադրությունը, որ թուրքական կառավարությունը հայերի վրա հարձակումները, որոնք հասցրին Արևելյան Անատոլիայում նրանց գրեթե իսպառ բնաջնջմանը, դիտել է առնվազն ոչ առանց մեծ բավականության և դեռ այսօր էլ դիտում է: Այդ կեցվածքը կդժվարացնի նաև մեր դիրքը հաշտության բանակցություններում:

Այդ իսկ պատճառով, ըստ իս, մեր իսկ շահերի նկատառմամբ, շատ ցանկալի է, որ թուրքական կառավարությունը հայերի հանդեպ առավել արդարացի դիրք գրավելով՝ այսուհետ փորձի նրանց տեղահանումն ավելի շատ արդարացնել որպես անխուսափելի ռազմական միջոցառում,

որպեսզի հետևանքները հնարավորին չափ թուլացվեն, որքանով որ խոսքն անհատների մասին չէ, որոնց հակապետական խարդավանքները դատարանով կապացուցվեն: Այս առումով ամենակարևոր վճիռը կլիներ, եթե հայ հողատերերին կամ նրանց ժառանգներին տրվեր իրենց սեփականությունը տնօրինելու իրավունք: Եթե կարծում են, որ չի թույլատրվի նրանց վերջնական վերադարձը իրենց հին բնակավայրերը, ապա պետք է նրանց գոնե թույլատրվի իրենց անշարժ գույքը վաճառել կամ վարձով տալ և այդ նպատակով նրանց թույլատրել **ժամանակավորապես** վերադառնալ հայրենիք: Մեծ մասի պարագայում այդ իրավունքը չի գործի՝ միջոցների սղության կամ ուղևորության պատահարների հանդեպ վախից, այլ կսահմանափակվի սեփական ունեցվածքը գնահատելու լիազորություն տալով: Երևի, կարելի էր մտածել նաև այն մասին, որ հողակտորը տեղական իշխանությունները հրապարակայնորեն աճուրդով վաճառեին և հասույթը տրամադրեին սեփականատերերին կամ նրանց ժառանգներին: Իշխանությունների կողմից հայերի շարժական գույքի վաճառքի գործարքները խրախուսում են ոչ այս գործելակերպը: Այստեղ իրագործված կողոպուտն ու յուրացումները գերազանցում են պատկերացման ցանկացած չափ: Միայն մեկ օրինակ բերենք. Տրապիզոնում ապրում էին մի շարք հարուստ ու կայացած հայ ընտանիքներ: Տեղահանումից առաջ նրանց արգելված էր իրենց իրերի որևէ վաճառք, և այդ արգելքը խախտելու դեպքում անխնա պատիժ էր նախատեսված: Միաժամանակ այն չնչին հասույթը, որ նրանք ստացել էին մինչև իրենց ունեցվածքը աճուրդի համար իշխանություններին հանձնելը, հազիվ էր ծածկում բեռնակիրների վճարը:

Ապա պետք է նաև վերացվի հայերին վերաբերող այն որոշումը, ըստ որի՝ առանց ներքին գործերի նախարարության թույլտվության նրանք իրավունք չունեին տեղից տեղ տեղափոխվել, գոնե այնքանով, երբ խոսքը կանանց ու երեխաների մասին է: Նրանց հավասարեցումը մյուս թուրք հպատակներին, ովքեր, եթե որևէ կասկած չեն հարուցում, ճանապարհորդական անձնագիրն ստանում են զավառական իշխանությունից, ըստ իս, լիովին կծառայեր հասարակական ապահովության շահերին և կվերացներ տարբերակված վերաբերմունքը նաև հայ կանանց ու երեխաների հանդեպ:

Եթե Բարձր Դուռը ձգտի գոնե այս կերպ հայերին վերադարձնել իրենց իրավունքը, ապա հաշտության բանակցությունների ժամանակ

մեր թշնամիների ելույթներին կհակադրի թուրքահայերի շահերին ծառայող գոնե որոշ հիմնադրույթներ:

Նույնիմաստ զեկույց առաքել եմ նաև Կոստանդնուպոլսի կայզերական դեսպանությանը:

Դ-ր Բերգֆելդ

1918 – 11 – 01 – DE – 001

Սկզբնաղբյուրը՝ PA –AA /R14105

Ռայխսկանցլեր պրինց Մաքս ֆոն Բադենին՝ Կոստանդնուպոլսի դեսպանության գործերի հավատարմատար Վալդբուրգից

Պերա, 1 նոյեմբերի 1918թ.

№ 257

5 հավելված. 3 կապոց, 11 հատոր փաստաթղթերով

Նկատի ունենալով անցած ամսվա 30-ին[97] ինձ տրված ցուցումը՝ կից ուղարկում եմ № 490 հրամանը՝ տրված 1915թ. օգոստոսի 4-ին, դրա հետ նաև դրա վերաբերյալ մի զեկուցագրի նախագիծը: Ամբողջականության համար կցում եմ նաև հայերի վերաբերյալ այստեղի փաստաթղթերի 17-27 հատորները:

Հավելված 1

[Հրաման № 590[98], Ցիմերմանը՝ Կոստանդնուպոլսի դեսպանությանը, 04.08.1915]

Ինչպես բազմիցս նշվել է այնտեղի թղթակցության մեջ, մենք պետք է նկատի ունենանք, որ մեր հակառակորդները և մեր հանդեպ անբարյացակամ տրամադրված չեզոք երկրները կձգտեն կայզերական կառավարությանը մեղադրել Թուրքիայում հայերի ճնշման մեղսակցության համար: Քանի որ նմանօրինակ կշտամբանքներին կարող են արձագանքել նաև երկրի ներսում, հատկապես եկեղեցական և միսիոնե-

97. A 45880:
98. Այդ № 590 հրամանը տպագրված է որպես 1915-08-04-DE-001 փաստաթուղթ:

բական շրջանակներում, հավանաբար անհրաժեշտ կլինի մեր դիրքի արդարացման համար լույս ընծայել մի Սպիտակ գիրք կամ այդպիսի որևէ հրատարակություն:

Ես կխնդրեի Ձերդ պայծառափայլությանը՝ արդեն հիմիկվանից այդպիսի ժողովածուի համար նախապատրաստել պիտանի նյութեր: Հատկապես պետք է շեշտել այն, որ Թուրքիայում իսկապես եղել է լայն տարածված հակապետական շարժում, որի ճնշումը Բարձր Դռան համար ինքնապաշտպանության խնդիր էր, որ հայերին դավաճանական քայլերի հրահրել են հենց Անտանտի տերությունները, որոնք դրանով կրում են հետևանքների բարոյական պատասխանատվությունը: Այնուհետև պետք կլինի ապացուցել, որ մեր կողմից արվել է ամեն ինչ, որպեսզի կանխվի հայերի հանդեպ կոշտ վերաբերմունքը և մեղմացվեն տուժածների տառապանքները:

Հավելված 2

[Այս զեկույցի հեղինակը դեսպանության քարտուղար Հյոշն է, այն խմբագրել է դեսպանության խորհրդական Նոյռաթը և գրված է եղել գործող դեսպանի համար: Ավելի մանրամասն շարադրանքը գտնվում է ինտերնետային էջում՝ որպես 1916-09-18-DE-001 փաստաթղթի հավելված:]

Պերա, դեկտեմբեր 1915թ.

№ 590 հրամանի վերաբերյալ

Հայկական հարցի վերաբերյալ Սպիտակ գիրք հրատարակելու կապակցությամբ:

Հայերի տեղահանումների խնդրի վերաբերյալ մեր դիրքորոշման մասին գրքի հրատարակումը ես էլ եմ համարում որքան շատ ցանկալի, նույնքան էլ անհրաժեշտ: Այդ ճնշումներին մեղսակցելու համար մեզ կասկածել են ոչ միայն մեր բացահայտ հակառակորդները կամ չեզոք երկրներում թշնամաբար տրամադրված տարրերը, այլև երկրի ներսում տարբեր շրջանակներում մեղադրանքներ են հնչել մեր դեմ, որոնք առնվազն հանդիմանում են, թե մենք բավականաչափ հետևողական չենք եղել թուրքական կառավարության կոշտ միջոցառումները մեղմացնելու

մեր ջանքերում: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է հրապարակային արդարացում: Դա մենք պետք է անենք այն բանից հետո, երբ այս կողմի ջանքերը կդադարեն, որ թուրքական կողմից դրանք չեն սպասվում:

Կայզերական դեսպանության և մեր հյուպատոսությունների աշխատակիցների զեկուցագրերում Ձերդ գերազանցությանը ներկայացվում է ծավալուն նյութ, որը կարող է օգտագործվել այդ նպատակով: Դրանից բխում է անհերքելի այն փաստը, որ Թուրքիայում եղել է լայն ճյուղավորված և պետության դեմ ուղղված հայկական շարժում, որի ճնշումը պատերազմի խառնաշփոթում դարձավ անհրաժեշտություն: Այդ շարժումը լիովին ընդգրկել էր նաև այնպիսի շրջաններ, որոնք նախկինում դրսևորել են թուրքամետ տրամադրություններ: Նաև այդ տարրերին են տասնամյակներ շարունակ հրահրել՝ երիտասարդ սերնդին ներշնչել այն համոզմունքը, թե հայերի վիճակի բարելավման հնարավոր է հասնել միայն թուրքական կառավարության դեմ բռնի գործողությունների միջոցով: Ընդ որում՝ այդ ուսմունքի հեղինակները միշտ լռության են մատնել այն, որ հանդուրժողական Թուրքիայում հայերը նախկին ժամանակներում ապրել են հանգիստ ու գոհ և խռովարարական շարժումների համար երբեք առիթ չեն գտել:

Անկասկած, հստակ է նաև այն, որ հայերի դավաճանական տրամադրություններն ու արարքներն ի սկզբանե և վերջերս առաջացել են ոչ թե իրենից՝ այս աշխատասեր ցեղից, այլ ներմուծվել են դրսից: Շատ հայտնի է միայն Լոնդոնի, Մանչեստրի և այլ անգլիական քաղաքների, Փարիզի, Մարսելի և այլ հայկական «կոմիտեների» գործունեությունը, որոնք մոտ երեք տասնամյակ առաջ սկսեցին ավելի ինտենսիվ գործել: Նրանց գործունեությունն ամեն տեսակ խթան ու աջակցություն էր գտնում հաճախ հենց այն պետությունների կողմից, որոնք միշտ ներկայանում էին որպես Թուրքիայի բարեկամներ: Այդ «բարեկամները», որոնք Բարձր Դռան հետ կնքել են Հունքիար-Իսքելեսի և այդօրինակ այլ պայմանագրեր, կնքել են նաև Կիպրոսի հայտնի պայմանագիրը, որոնք Միջիլենում հավաքել են նավատորմ, որպեսզի անցկացնեն թուրքական կառավարության դեմ մի մերձավոր արևելյան անմաքուր պահանջները, և որոնք հաճախ «turkish atrocities» (թուրքական դաժանությունները) են գտել կամ ուռճացրել, որպեսզի մոռացության մատնեն, թե ինչպիսի օրինազանցություններ են եղել՝ հրահրված քրիստոնյա բնակչության կողմից, որոնք թուրքերին դրդել են վրիժառության: Այդ նույն բարեկամներն

արդեն 20 տարի առաջ գլուխ բերեցին հայտնի հայկական մահափորձերը, որոնց հետևեցին մեծ ջարդեր: Կասկած չի կարող հարուցել այն, որ այսօր էլ «Անտանտ» հավաքական բառի ներքո համախմբվածներն են հրահրել այն խարդավանքները, որոնք համաշխարհային պատերազմի ընթացքում հայերին մղեցին դավաճանական գործողությունների: Եթե թուրքերը ռազմական միջոցներ չձեռնարկեին, ապա ներքին հուզումները կցնցեին կառավարության հիմքերը: Հայտնի է, թե ինչպես էր ռուսական ռուբլին շրջանառվում ռուսական սահմանի մերձակա հայկական գավառներում, թե ինչպես էին թուրքական ռազմական ուժերի դեմ գնացող ռուսները ներգրավում ոչ միայն բազմաթիվ հայերի, այլև ռուսական զորաջոկատների ղեկավար էին նշանակում երևելի հայ անհատների (պատգամավորների), որպեսզի իրենց առաջնորդեն թուրքական հայրենիքի դեմ: Կայսրության բոլոր ծայրերում Թուրքիայի դեմ հզոր թշնամիներ էին, որոնք ակտիվորեն աջակցում էին աշխույժ լրտեսությանը և շատ պատրաստակամ հանցակիցներ հայտնվեցին մի երկրում, որտեղ վաղուց ի վեր ծաղկում էր լրտեսությունը: Որ այս հանգամանքներում ծովեզրը և սահմանամերձ գավառները պետք է դատարկվեին կասկածելի տարրերից, որ պետք է ռազմական օրենքի ամենայն խստությամբ վարվեին երկրի դավաճանության համար մեղադրվող քրիստոնյա բազում հպատակների հետ, այլ հիմնավորման կարիք չունի:

Անշուշտ, անչափ ցավալի է, որ օտար ազդեցությամբ հրահրված, «հրապուրված» սակավաթիվ ազգայնականների խարդավանքներից պետք է այդչափ տառապեր մի ամբողջ ժողովուրդ: Նրանց համար պետք է բարոյական պատասխանատվություն կրեն այդ «հուզումները» դրդողները: Ո՞ր մեկ այլ եվրոպական պետություն այդպիսի ծանր հանգամանքներում նույնպես ամենասուր միջոցներով չէր պայքարի սեփական երկրի դավաճանների դեմ:

Ցավոք պետք է համաձայնել, որ ինչքան էլ արդարացված լինեն բացառիկ կոշտ միջոցառումները, որոնց ստիպված էր դիմել թուրքական կառավարությունը, դրանց իրականացումն ընթացավ ցավալի օրինազանցություններով: Այդ առումով չպետք է ընդունել, որ տվյալ հրամաններն արձակել է կենտրոնական կառավարությունը, եթե նույնիսկ նրա առանձին անդամներ, ովքեր նպատակադրվել էին, ատելի հայերին բնաջնջել և դրա համար ամեն մի եղանակ արդարացված էին համարում: Ըստ այդմ էլ՝ հանդիմանությունն ավելի կոշտ վերաբերում է այն

բազմաթիվ գավառների ղեկավարներին և նրանց ենթակա մարմիններին, որոնք շատ դեպքերում մեղավորների դեմ կիրառվող անհրաժեշտ կոշտ միջոցառումները տարածել են նաև անմեղների վրա՝ ցուցաբերելով կամայականություն ու վայրագություն, ինչը պետք է ամբողջ աշխարհը դատապարտի ամենասուր կերպով:

Այդպիսի գործողությունների հենց սկզբում, երբ այդ ցավալի փաստերը հայտնի դարձան հյուպատոսական հաղորդագրություններից, կայզերական դեսպանությունը՝ առանց կայզերական կառավարության ցուցումներին սպասելու, լուրջ առարկություններ արեց Բարձր Դռանը՝ բանավոր ու գրավոր շարունակաբար ու համառորեն զգուշացնելով ձեռնպահ մնալ լայնածավալ միջոցառումներից և հատկապես պահանջեց դադարեցնել անմեղների հետապնդումը:

Կայզերական դեսպանությունն ընդ որում ընդունում էր այն տեսակետը, որ այդ ամենը չպետք է հակասի հանրահայտ դիվանագիտական այն հիմնադրույթին, ըստ որի՝ անթույլատրելի է խառնվել օտար պետության ներքին գործերին, երբ ինքը թուրքական կառավարությանը բարեկամական խորհուրդներ է տալիս, ինչին հատկապես պարտավորեցնում է գոյություն ունեցող իրենց ռազմական դաշինքը և հատկապես բարոյական պարտքը: Իրականում Թուրքիայի հետ մեր իսկական բարեկամությունը չէր կարող ավելի լավ ապացուցվել, քան այնպես, երբ որ մենք հաստատակամությամբ ու բացահայտորեն արտահայտեցինք մեր կարծիքը, առանց մտահոգվելու, որ դա տհաճ կլինի իշխող շրջանակների համար: Կայսրության հյուպատոսական ներկայացուցիչներն էլ թույլատրելի սահմաններում ձգտել են՝ ազդելով գավառների ղեկավարների վրա, կասեցնել բռնի միջոցառումները՝ նրանց համառորեն զգուշացնելով հնարավոր քաղաքական, բարոյական ու մշակութային հետևանքներից: Բացի այդ, դեսպանությունը և հյուպատոսությունները արել են ամեն հնարավոր բան՝ ստեղծված թշվառ վիճակը մեղմելու և, որտեղ հնարավոր է, դրամական միջոցներով միջամտելու, հաց բաժանելու համար և այլն: Հյուպատոսական տարբեր զեկուցագրեր, որոնք նկարագրում են տեղական ղեկավարությանը ենթակա մարմինների գերեռանդով ու անբարյացակամությամբ պայմանավորված թշվառությունը, այդ առումով արված քայլերի մասին ավելի ճշգրիտ տեղեկություն են տալիս: Եթե մեր հյուպատոսական ներկայացուցիչների այդ ձեռնարկները թշվառության այդպիսի չափերում, չկարողացան ապահովել ազդեցիկ օգնություն, ա-

պա կենտրոնական կառավարությանն ուղղված դրան վերաբերող դիվանագիտական քայլերը, որոնք արժանացան այլ օտար դիվանագետների աջակցությանը, հասան այն բանին, որ կասեցվեն անմեղների հետապնդումները: Ես ոչ մի տեղեկություն չունեմ նոր օրինազանցությունների մասին: Հասցված թշվառությունը դրանով չի վերացված:

Եթե մեր այս՝ շարունակ զգուշացնող ու օգնող գործունեության պարագայում, գերմանական շրջանակներում շարունակում են հանդիմանել կայզերական ներկայացուցչություններին, ապա դա կարելի է վերագրել տեղեկատվության պակասին: Այլևս զարմանալի չէ, որ թշնամական կողմը, ինչպես վերջերս անգլիական պառլամենտում, մեզ մեղադրում է իրականացված ջարդերին ոչ միայն աջակցելու, այլև նույնիսկ ակտիվորեն մասնակցելու համար:Մեր արժանապատվությունից ցածր կլիներ նաև անօգուտ՝ կարծեցյալ վկաների անորսալիության պարագայում հերքել այդպիսի պնդումները: Դրա վերաբերյալ պարզորոշ խոսում են հյուպատոսական մեր զեկուցագրերը: Դրանք՝ դեսպանության քայլերի հետ, պետք է ներկայացնել հայրենական շրջանակներին՝ ի գիտություն, որպեսզի նրանց համոզեն, որ Թուրքիայի կայզերական ներկայացուցչություններն ի սկզբանե չեն թերացել իրենց պարտականություններում: Եթե մեր ջանքերն ի սկզբանե հաջողություն չեն ունեցել, ապա դա պայմանավորված է պատերազմի ստեղծած հանգամանքներով և վաղուցվանից գոյություն ունեցող և օտար հրահրումներով կյանքի կոչված ու մուսուլմանական ժողովրդի մեջ խորությամբ արմատացած հայերի հանդեպ հակակրանքով:

Բայց չափազանց ցավալի է այն փաստը, որ գավառներում հենց բարձրագույն պետական պաշտոնյաներն ու սպաները ոչ միայն գոնե հանդես չեն եկել ընդդեմ լայնորեն տարածված այն տեսակետի, որ հայերի հետապնդումներն իբր հանձնարարել ենք մենք, այլ մինչևիսկ ակնհայտորեն տարածել են այդ տեսակետը: Զարմանալի չէ, որ ուղղամիտ թուրքը հավատացել է իր իշխանավորների առաջադրած տարբերակին, առավել ևս պետք է բողոքել, որ կենտրոնական կառավարությունն ինքնակամ չի ընդդիմացել դրան և այդպիսով նպաստել է մեղսակից լինելու այդ անհեթեթության տարածմանը: Ես կրկին եռանդագին հանդես եմ գալու դրա դեմ:

Եթե ես առաջիկայում կրկին անդրադառնամ այս գործին և աչքի անցկացնեմ սույն զեկուցագիրը, ապա կուզենայի տալ այդ ամենի համառոտ նկարագիրը, որը երևի թե կարող էր որպես նախաբան ծառայել այդպիսի հրապարակման համար: Անատոլիական երկաթուղային ընկերության տնօրինությունը հենց նոր ինձ է հանձնել հիմա էլ իրենց մոտ ծառայող, երկար տարիներ Թուրքիայում ապրող մի գերմանացու գրառումները, որն ընդհանուր առմամբ պարունակում է Հայկական հարցի վերաբերյալ ճշմարտացի դատողություններ և դրա ընտրովի օգտագործումը (առանց նշելու սկզբնաղբյուրը) թողնում եմ Ձեր հայեցողությանը:

Հավելված 3

[Կոստանդնուպոլսի դեսպանության խորհրդական Նոյոռաթին՝ Բաղդադի երկաթուղու գլխավոր տնօրեն Ֆրանց Յ. Գյունտերից, 10.08.1915]

Շատ հարգելի պարոն Նոյոռաթ, կից հավելվածով Ձեզ եմ ուղարկում ինձ հասած մի զեկուցագիր՝ հետագա օգտագործման համար, եթե այն իրենից որևէ արժեք է ներկայացնում:

Ողջույններով՝ շատ հավատարիմ Ձեր

Գյունտեր

Հավելված 4

Խիստ գաղտնի

...Ես օգտագործում եմ ինձ ընձեռված առիթը՝ Ձեզ մի վստահելի անձի միջոցով խիստ գաղտնի լուրեր հասցնելու համար, բերողն ի վիճակի է միաժամանակ Ձեզ հաղորդել գաղտնի տեղեկություններ, որոնց հրապարակումից պետք է ձեռնպահ մնալ:

Խոսքը օտոմանյան կայսրության արևելյան շրջաններում հայերի մեծ հալածանքների մասին է: Մինչև մանրամասներ հաղորդելը, կցանկանայի հայտարարել, որ ես՝ այդ ինձ համար շատ անհամակրելի ժողովրդի բարեկամը չեմ: Ես ճշգրիտ գիտեմ, որ հայերը՝ ռուսների դրդմամբ պատրաստ էին ելնել ընդդեմ Թուրքիայի: Ես տեղյակ եմ, որ շատ հայկական տներում գտել են ռումբեր, ռազմական հրացաններ, մեծ քանակությամբ փամփուշտներ: Ինձ հայտնի է, որ հայերը Սամսունում, Դյորթյոլում, թշնամու նավերին ազդանշան են տվել, որ իրենք մեղավոր են դարձել երկ-

րի դավաճանության համար, ես լսել եմ, որ նրանք Վանում և Բիթլիսում սպանել են թուրքերին, մի խոսքով ես գիտեմ, որ երկրի ապահովության համար կարիք է եղել խիստ ու արտակարգ միջոցառումներ:

Անշուշտ, ոչ ոք չէր զայրանա, եթե մեծաթիվ մեղավորների **հրապարակայնորեն** մահապատժի ենթարկեին, ցավոք, դրանք միայն առանձին դեպքեր են և, ցավոք կան հստակ փաստանշաններ, որ արևելքում հայերին համակարգված և ամբողջովին ոչնչացնում են՝ չնայած գերմանական թերթերի բոլոր հերքումներին: Մի խոսքով՝ մենք գործ ունենք ժողովրդի բնաջնջման հետ, ինչպիսին դա այդքան հիմնավոր եղել է միայն Հռոմի Bar Cochba (Բար Քոխբա) պատերազմի ժամանակ, որից տուժել է հրեա ժողովուրդը:

Այն, որ գերմանական կառավարությունն իր համաձայնությունը կարող էր տալ հոգուտ սահմանամերձ և ծովափնյա վայրերից ռուսամետ ժողովրդի հեռացման, ինձ համար պարզ է, բայց անհնար, **թե ինչպես են այստեղ թուրք ժողովրդին բացատրել**, որ կարելի է համաձայնել հայերի ջարդին և որքան հաճախ են ինձ, ցավոք, դա հավաստիացրել ժողովրդի միջից կամ զինվորականությունից: Մինչև իսկ ինձնից պահանջում են ընդունել, թե որքան լավ է կատարված «գործը»:

Ես ճամփորդել եմ Անգորայի վիլայեթի արևելքում, Կայզերիի մութասարիֆլիկում, Կիզիլ Իրմաքի հյուսիսի բնաշխարհում, ապա նաև Սվազի վիլայեթի մեծ մասում: Վերջինում բոլոր գյուղերը մասամբ լրիվ դատարկ էին, մասամբ էլ՝ զրկված արական սեռի բնակիչներից: Սեփական աչքերով եմ տեսել, թե ինչպես են թուրքերը քշում-տանում գեղեցիկ կանանց, տեսել եմ նրանց հայուհիների հետ թփուտներից ելնելիս և կանանց ու աղջիկների հեծեծանքն ու ճիչն եմ լսել կողպված տներից:Ես տեսել եմ, թե ինչպես են այդ մարդկանց խղճուկ ունեցվածքը տանում բեռնակիր անասուններով ու սայլերով: Իմ ներկայությունը բոլորովին չէր խանգարում թալանչիներին, ընդհակառակը, ուրախությամբ հավաստիացնում էին, որ **Գերմանիան է դա հրահանգել**, ինձ առաջարկում էին հետս հավերի մեծ քանակություն վերցնել, ինչը ինձ պետք կգար ճանապարհին:

Սարքիշլայի հյուսիսում, Կիզիլ Իրմաքի աջ ափին, այլոց շարքում ես հանդիպեցի վաղեմի ծանոթ մի զինվորի: Ինձ պատմեցին, որ քանի օր առաջ մի փոքրիկ կիրճում, տաք ջրերի առողջարանից ոչ հեռու գնդակահարել են մոտ 2000 հայի:

Երբ երեկոյան հասա Սարքիշլա, այնտեղ տեսա եզներով լծված մոտ 300 սայլ՝ բեռնված հայ կանանցով և երեխաներով, նրանք իրենց հետ ոչինչ չէին տանում, բացի քրքրված վերմակներից, հաճախ նաև առանց դրանց, ոչ մի տնային գույք, ոչ մի մթերք: Շատ ցավալի էր տեսնել այդ սովյալներին ու թշվառներին: Նրանց թիվը մոտավորապես 12-15.000 մարդ էր: Ըստ երևույթին նրանց ուզում էին ուղարկել Ուզունջայլա անապատը, որը ամայի մի տարածք է՝ Եփրատի ու Արգաուսից դեպի արևելք ընկած հրաբխային շրջանի միջակայքում: Այստեղ անհնար է կերակրել մարդկային հոծ բազմություն, ես այդ տարածքը գիտեմ նախկին ուղևորություններից ի վեր: Զինվորներն ի վերջո անթաքույց պատմում էին, որ այդ մարդկանց տանում են «գերեզմաններ» և այդ թշվառների ճակատագիրը հիմա մահն է: Այդ զրույցներից հետո դրանում կասկած չմնաց:

Սվազ քաղաքում այլևս ոչ մի հայի հնարավոր չէ տեսնել, կանանց ու երեխաներին, ծերունիներին քշել էին Ուզունջայլա: Հին սելջուկյան մեդրեսեները վերածվել էին բանտերի, որոնք լիքը լցված էին հայերով, «մենք նրանց բոլորին կսպանենք» ասաց ինձ ուղեկցող սպան: Սվազում բոլոր հայկական խանութները փակված էին և կնքված: Քաղաքն ունի 60-80.000 բնակիչ, որոնցից 30.000-ը՝ հայ, որոնց ձեռքում էր այդ քաղաքի հիմնական առևտուրը: Այն ոչնչացված է երկար ժամանակով:

Երբ ես կրկին վերադարձա Կայզերի, հանդիպեցի ավելի բարվոք վիճակում գտնվող հայերի, որոնց Սամսունից զարտուղի ճամփաներով Սիլլայով Սվազ էին տանում: Նրանց մեջ կային կաթոլիկ քահանաներ և հայազգի միանձնուհիներ: Ես զարմանում եմ՝ եթե ուզում են ռուսական սահմանի շրջաններն ազատել վտանգավոր տարրերից, կրկին նրանց դեպի Արևելք չե՞ն տանում[99]:

Սարիքիշլա էին հասել հայազգի կանանց ու երեխաների նոր քարավաններ, որոնց պետք է քշեին Ուզունջայլա: Ես այնտեղ հանդիպեցի պարոն կոմս Շուլենբուրգի գիտարշավի մասնակիցներին, որոնց հաղորդեցի իմ դիտարկումները: Հետո միայն իմացա, որ զինվորներն Էրզինջանի տարածքում կանանց ու երեխաներին սպանել են ամենասարսափելի ձևով, որ Կարմիր խաչի քույրերին, ովքեր այդ առիթով արտահայտել են իրենց զայրույթը, Էրզինջանի մութասարիֆն ամենաբիրտ

99. Մորդմանի նշումը. 11.8-ին տեղեկացվել է մոնս. Նազլյանին, որը վկայակոչել է այդ քահանաների և միանձնուհիների ճակատագրի մասին մատյանը (մատյանի համարը բաց է թողնված):

ձևով զափթիեի ուղեկցությամբ արտաքսել է երկրից՝ անտեսելով գերմանական սանիտարական կայանի ղեկավարի ազդեցիկ բողոքները[100]:

Ես արդեն 20 տարի է ապրում եմ այս երկրում և իրենց հետ ապրում եմ հայերի երրորդ հալածանքը և կարող եմ վստահորեն ասել, որ հիմիկվանը ամենահիմնավորն է, քանի որ ստեղծվում է գրեթե համոզմունք, թե Էրզրումի, Սվազի և սահմանամերձ գավառների ամբողջ բնակչությունը սպանված է կամ պետք է սպանվի:

Երբ ես մեկ ամսվա բացակայությունից հետո կրկին վերադարձա Կայզերի, հենց այն պահն էր, երբ տանում էին արական սեռի բնակչությանը և տարօրինակ է՝ կրկին դեպի արևելք՝ հայ ժողովրդի մեծ գերեզմանը: Կայզերին առևտրի համար չափազանց կարևոր վայր է, այն ամբողջովին հայերի ձեռքում է: Ես փակված տեսա բոլոր հայկական խանութները, շուկան՝ ամայացած, արտադրությունը, մանածագործարանները, գորգագործական ֆաբրիկաները՝ մեռած: Այդ ամենը կարող է ունենալ դառնագույն հետևանքներ:

«Դուք ապացույցներ ունե՞ք այն ամենի համար, ինչ ինձ ասում եք»,- ինձ հարցրեց պարոն ֆոն Շուլենբուրգը: Իհարկե, ծանրակշիռ հանցանշանների ապացույցներ, ես լավ եմ ճանաչում երկիրը և մարդկանց, շատ ավելի լավ, քան «Թուրքիայի իսկական գիտակներ» հորջորջված և գերմանական մամուլում հանդես եկող դ-ր Է. Յեքը և այն ընկերները, որը Ադանայի ջարդերի մասին գրել էր ճշմարտությանը հակասող նյութերից մեկը, ուր պնդում էր, թե անատոլիական ռեդիֆի[101] գունդն ավելի լավն է, քան գվարդիայի մեր առաջին հետիոտն գունդը: Այդ՝ մեր գվարդիայից բարձր դասված ռեդիֆը հիմա հերոսություններ է գործում՝ սպանելով կանանց ու երեխաներին:

Մեր գերմանական մամուլը դյուրահավատորեն հերքում է կոտորածները, նրանց խաբում են:

Մենք՝ գերմանացիներս, մեր կռիվը վարում ենք պատշաճ ձևով, մեր թշնամիները մեզ վարկաբեկում ու զրպարտում են, մենք կարող ենք այդ արհամարհել, քանի որ արյուն ենք թափել միայն այնտեղ, որտեղ մեղավորներ կային: Ով պետական դավաճան է, պետք է մեռնի, հայերից հազարներն են մեղավոր, թող նրանց դատեին հրապարակավ: Բայց սպանել կանանց ու երեխաների, բնաջնջել մի ժողովուրդ, որքան էլ նա անտանելի լինի, այնուամենայնիվ, նա անհրաժեշտ է առևտրի մեջ անտաղանդ թուրքերի համար, դա՝ անկախ անմարդկայնությունից, նաև մեծագույն հիմարություն է, քանի որ այն հանգեցնում է երկրի սնանկացմանն ու երկիրը դարձնում է ոչ կենսունակ:

Քանի որ մենք ամենուրեք թշնամիներ ունենք, պետք է զգուշանանք *(լրացում)*[102] այդ հիմքը ծառայեցնել արդար գրոհներին և պետք է մեր դաշնակիցներից պահանջենք, որպեսզի նրանք պատերազմը վարեն մարդկայնորեն՝ անհրաժեշտ խստությամբ, նաև հանուն մեր և իրենց պատվի: Մեր քաջարի բանակը՝ առանց դավանանքի տարբերակման, մրմնջում է հոլանդական երախտիքի աղոթքը, բայց մենք չենք կարող Աստծո առջև արդարություն հայցել, եթե ինքներս չենք հետևում արդարությանը: Գերմանական կողմից սխալ է, ինչպես դա ասացին սպանները, հավատալ, որ դա չի վերաբերի հազարավոր հայերի: Խաղաթղթի վրա է հարյուր հազարավորների գոյությունը, երևի թե միլիոնավոր մարդկանց: Առանց խնայելու պատժել մեղավորներին, բայց եթե սպանություններ լինեն, ապա դա կմղի վրեժխնդրության:

Իմ մտքով չի անցնում տեսածս ու լսածս հայտնել հրապարակման՝ իմ ընկալումներից հաղորդագրություններ սարքելու համար, թող խնայվի հայրենիքը, բայց դրանք հեշտությամբ ճամփա կգտնեն դեպի դեսպանություն, որի ականջին որոշ բաներ հասել են: Հայերին պատժելը պետք է դրվի օրինական հենքի վրա և այնպես իրականացվի, որպեսզի Աստծո և մեր բարեկամների առջև, մեր թշնամիների մոտ էլ կարողանանք պատասխան տալ, նաև՝ հենց գերմանական ժողովրդի առջև:

Ես կարծում եմ, որ լավ կլինի, եթե կայզերական դեսպանությունը դեպի Արևելք հատուկ առաքելությամբ հասնի ցավալի իրադարձությունների վերաբերյալ ճշմարտությանը և հրատապ բողոքներ ներկայացնի՝ դրա համար օգտագործելով ազնիվ մարդկանց, ովքեր կարող են և կուզենան այն տեսնել: Արևելքում մեր լազարեթի, որի անմիջական հարևանությամբ նողկալի բաներ են կատարվում, ղեկավարներին, ցավոք, թուրք պաշտոնյաները քթից բռնած ման են ածել ու խաբել:

Եթե կուզենաք ավելին իմանալ, ապա այս գաղտնի զեկուցագիրը բերողը հակված է Ձեզ գաղտնի տեղեկություններ տալ:

100. Մորդմանի նշումը. Դ-ր Քոլեյը, Ֆրոյլայն Էլվերսը, Ֆրոյլայն Թորա Վեդել-Յարլսբերգը, 5-րդ էջ, նախավերջին պարբերություն:

101. Ռեդիֆ՝ պահեստային զորամաս (ծանոթ. թարգմ.):

102. Այս հատվածը լրացվել է գերմ. գրքի լույս տեսնելուց հետո (ծանոթ. թարգմ.):

Հավելված 5

[Համապատասխանում է 1915 – 07 – 31 – DE – 002 փաստաթղթին]

1918 – 11 – 20 – DE – 001

Սկզբնաղբյուրը՝ PA–AA /R14105

Արտգործնախարարության շտաբսպարտուղար Զոլֆին՝ Յոհաննես Լեփսիուսից

Ներկայումս՝ Հաագա, 20 նոյեմբերի 1918թ.
Նասաու Յուիլենշթայնշտրասե 3

Ձերդ գերազանցություն,

Խնդրում եմ նկատի ունենալ, թե արդյոք հաշտության բանակցությունների ժամանակ կարո՞ղ է իմ թեկնածությունն առաջադրվել որպես Արևելքի հարցերով պատվիրակ՝ հատուկ Հայաստանի համար: Թուրքիայի քաղաքական, կրոնական և տնտեսական նոր կառուցվածքի հարցերը, արաբների, թուրքերի, քրդերի, հայերի, հույների, սիրիացիների և այլոց ազգային տարածքների սահմանազատումը՝ նկատի ունենալով կրոնների, եկեղեցիների, դպրոցների ու միսիոներական կառույցների ինքնատիպությունը, նաև Թուրքիայի ներսում Գերմանիայի տնտեսական ու մշակութային շահերի պաշտպանությունը, այդ ամենը պահանջում են մինչև պատերազմը եղած իրավիճակի և պատերազմի ընթացքում եղած փոփոխությունների ճշգրիտ իմացություն, ինչի հնարավորությունն ունեին միայն սակավաթիվ գերմանացիներ: Առայսօր Կոստանդնուպոլսում մեր դիվանագիտությունը ճանաչում էր Թուրքիայի միայն եվրոպական դեմքը, բայց ոչ՝ ասիականը: Իր քաղաքականության ու գործողությունների սխալները, ինչպես նաև իր բացթողումներն ուղղելը արդեն իսկ հաշտության բանակցությունների ժամանակ պետք է դառնա նոր Գերմանիայի լրջագույն կամքը: Քրիստոնյա և մահմեդական ազգերի կորցրած համակրանքը հնարավոր է կրկին վերագտնել միայն նրանց կենսական շահերն արդարամտորեն պաշտպանելով:

Քսան տարուց ի վեր ես ամենասերտ կապեր ունեմ և լավատեղյակ եմ համապատասխան հարցերին, ես ոչ միայն ճամփորդել եմ Թուրքիայի ամբողջ տարածքի բոլոր ուղղություններով, այլև Թուրքիայում և հյուսիսային Պարսկաստանում հումանիտար մեծ հաստատություններ ու տնտեսական հիմնարկներ հիմնելով՝ այդ ժողովուրդների ներկայացուցիչներին ճանաչել եմ նրանց մեջ աշխատելով: Կարծում եմ, որ չափազանցրած չեմ լինի, եթե ասեմ, որ ես երևի թե միակ գերմանացին եմ, որը հիմա էլ վայելում է ինչպես հայ ժողովրդի, այնպես էլ նրա առաջնորդների՝ թե՛ թուրքական, և թե՛ կովկասյան, լիակատար վստահությունը: Ես տարիներ ի վեր անձամբ ծանոթ եմ հայազգի այն պատվիրակներին, ովքեր հաշտության կոնգրեսում ներկայացնելու են նոր Հայաստանը, համատեղ աշխատանքից ճանաչում եմ նաև անգլիական պառլամենտական հայամետ կոմիտեների անդամներին և Թուրքիայի ու Պարսկաստանի՝ Վաշինգտոնում չափազանց ազդեցիկ ամերիկյան միսիաների ղեկավարներին: Չեզոք երկրների հայերի բարեկամներն էլ անձնական կապեր ունեն ինձ հետ: Այս հատուկ հանգամանքներն են ինձ մղել իմ խնդրանքին:

Ես հուսով եմ, որ մի քանի օր անց կլինեմ Բեռլինում, որպեսզի կառավարությանը ներկայացնեմ իմ առաջարկներն այն քայլերի մասին, որոնք պետք է ձեռնարկվեն հիմա կամ ավելի ուշ, բայց կուզենայի իմ խնդրանքն արդեն այսօր տեղյակ պահել կայզերական կառավարությանը:

Ձերդ գերազանցությանը միշտ հավատարիմ՝

Դ-ր Յոհաննես Լեփսիուս

[Զոլֆի նշումը]

Առաջարկը պետք է հիմնավորապես ստուգել: Լեփսիուսը համբավ ունի արտասահմանում:

[Յոհաննես Լեփսիուսը՝ արտգործնախարարությանը 20.11]

Ձերդ գերազանցություն,

Կխնդրեի սույն դիմումը ներկայացնել ժողովրդական լիազորների խորհրդին: Նույնի պատճենն ուղարկել եմ անձամբ ինձ ծանոթ ունքերշտաբսպարտուղար, դ-ր Դավիդին: Այն պահանջները, որը գերմանա-

կան քաղաքականությանն է ներկայացնում Արևելքի փոխված իրավիճակը, ոչ ոք այնպես չի ընկալի, ինչպես Ձերդ գերազանցությունը: Առաջին հերթին դա վերաբերում է նաև հայերի զանգվածային կոտորածներում Գերմանիայի մեղսակցության հարցում Անտանտի բարոյական հարձակումներին բոլոր ճշմարտացի միջոցներով դիմակայելուն և Գերմանիայի մեղքի բաժինը թեթևացնելուն:

Հատուկ ակնածանքով՝ Ձերդ գերազանցությանը հավատարիմ՝

Դ-ր Յոհաննես Լեփսիուս

[Գյոփերտի նշումը 14.12]

Դ-ր Լեփսիուսը պարոն շտատսքարտուղարից հանձնարարություն է ստացել հրապարակել Հայկական հարցի վերաբերյալ գերմանական կառավարության դիրքորոշման վերաբերյալ վավերագրերը: Նա ընդունել է այդ հանձնարարությունը և մտադիր է հայերի հետապնդումների վերաբերյալ իր աշխատության նախաբանում առայժմ տպել մի քանի փաստաթուղթ, որը հիմա կհրատարակվի գերմաներեն, ֆրանսերեն և անգլերեն: Ապա հնարավորին չափ շուտ կհետևի փաստաթղթերի մի ժողովածու՝ առանց ներածական տեքստի:

1918 – 11 – 25 – DE – 001

Սկզբնաղբյուրը՝ PA–AA /R14105

«Գերմանա - հայկական թղթակցություն» (25 նոյեմբերի 1918)

Գերմանական կառավարությունը և Հայկական հարցը

Անտանտի հանդիմանությունները

Անտանտի երկրների մամուլում անընդհատ հնչում են հանդիմանություններ ընդդեմ գերմանական կառավարության, որ այն կարող էր կասեցնել հայերի տեղահանումը, եթե ցանկանար: Ուստի, համաձայն է եղել թուրքական կառավարությանը: Այնքան հեռուն են գնացել, որ

հանձին նրա տեսնում են տեղահանման իսկական հեղինակներին՝ ամբողջ դաժանություններով հանդերձ: Հայաստանը՝ Բելգիայի հետ, ծանրացել է գերմանական բարբարոսությունների մեղքի հաշվին: Նրանք բերում են հետևյալ հիմնավորումները: Քառյակ միության մեջ Գերմանիան, անկասկած, առաջատար տերություն է: Թուրքիան ամեն ինչով կախյալ է նրանից: Նրան, առանց իր նախաձեռնության պատերազմի մեջ է ներքաշել Գերմանիան: Պատերազմի համար միջոցները՝ առաջին հերթին պատերազմ վարելու համար անհրաժեշտ գումարը, Գերմանիայից է ստացել: Գերմանական բանակի հրամանատարներն են կազմել պատերազմի ծրագրերը, գերմանական զորքերը որոշիչ դեր են խաղացել ինչպես Դարդանելում, այնպես էլ Քութ էլ-Ամարայի մոտ: Մինչև գերմանացիների գալը թուրքերը Կովկասյան ռազմաճակատում՝ Էնվերի հրամանատարությամբ միայն պարտություններ են կրել, հենց որ գերմանացիները հետ քաշվեցին կամ հետ ուղարկվեցին, Թուրքիան կորցրեց Էրզրումը: Թուրքիան ոչինչ չի կարող անել առանց Գերմանիայի օգնության, ուրեմն նա պետք է ամեն ինչում հետևի Գերմանիայի կամքին, ուստի թուրքերի նախաձեռնությունների համար՝ նախևառաջ այնպիսի վճռորոշ հարցում, ինչպիսին հայերի տեղահանումն է, պատասխանատու է դարձնում նաև Գերմանիային: Այս հետևությունը թվում է այնքան ազդեցիկ, որ նույնիսկ թուրքական կողմում էլ դրա գերին դարձան: Ավագ ուսուցիչ Նիպագն իր բրոշյուրում հայտնում է, որ քիչ թե շատ մարդկային թուրքերը տեղահանման ընթացքում իրենց հրեշավոր գործողությունները չեն կարողացել այլ կերպ մեկնաբանել, քան այն, որ իրենց կառավարությունն այստեղ ազատ չի գործում: Խոջաները մզկիթներում քարոզել են, որ դա գերմանացիների գործն է, նրանք են այդ հրամայել թուրքական կառավարությանը:

Գերմանացիների մեղքը

Այդ մեղադրանքի հիմքում ճշմարտության հատիկ կա: Տեղահանումն առաջին հերթին եղել է ռազմական միջոցառում և այդ իսկ պատճառով Թուրքիայում գտնվող գերմանական բանակի առաջնորդներից գաղտնի չէր կարող պահվել: Իսկապես ծրագիրը ներկայացվել է նաև ֆելդմարշալ ֆոն Գոլցին և արժանացել է նրա հավանությանը: Բայց դրա պաշտոնական ձևակերպումը բավականին անմեղ տեսք է ունեցել: Կառավարական հրամանի տեքստը եղել է այսպես.

«Հոդված 2. Բանակի անկախ կորպուսների և դիվիզիաների հրամանատարները ռազմական անհրաժեշտության դեպքում, նաև այն դեպքում, եթե ենթադրվում է լրտեսություն և դավաճանություն, իրավունք ունեն արտաքսել գյուղերի կամ քաղաքների բնակիչներին՝ առանձին կամ զանգվածաբար, և բնակեցնել այլ վայրերում»:

Հրամաններում նախատեսված էր, որ տեղահանվողների թողած սեփականությունը կցուցակագրվի և կհանձնվի պետական պահպանության, որ տեղահանվածներին կուղարկեն Բաղդադի երկաթուղու տարածքները և այնտեղ նրանց կհատկացվեն նոր տարածքներ: Այս ձևակերպումով, որը համահունչ է քաղաքակիրթ պետությունների անհրաժեշտ ռազմական միջոցառումներին, Գոլցը համաձայնություն է տվել: Բայց նրան կարելի է հանդիմանել, որ երկար տարիներ լինելով Թուրքիայում, չի կանխատեսել, թե թուրք պաշտոնյաները ինչպես կիրականացնեն այդպիսի միջոցառումը, որ թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից հետո և նկատի ունենալով անընդհատ ավելի լայն տարածում գտնող պանթյուրքիզմը, չի էլ կասկածել: Բայց Գոլցը թուրքի էությունը գնահատելիս սխալվել է այնպես, ինչպես բոլոր նրանք, ովքեր թուրքին ճանաչում են որպես զինվորի: Օսմաններն ի սկզբանե եղել են ռազմատենչ ժողովուրդ և որպես զինվոր հաճախ իրենց դրսևորել են լավագույն կողմերով, սրանից էլ այն խոսքը, թե թուրքն Արևելքի միակ ջենտլմենն է, որը ինչպես հայտնի է, վերագրվում է Բիսմարկին: Անընդհատ առնչվում ես այն տեսակետին, որ մեկուսի ապրելու հետևանքով, ինչպես Արևելքում ապրում են առանձին ժողովուրդները, նույնիսկ այն դեպքում, երբ նույն քաղաքում են, նույնիսկ երկար տարիներ Թուրքիայում ապրելուց հետո օտարերկրացիները դեմ են առնում առանձին ժողովուրդների խառնվածքին՝ ինչպես մի Terra incognita-ի: Վառ օրինակ է ներկայացնում Նաումանի «Ասիա»-ում գերմանացի բրուտագործը, մի օրինակ, որն ամեն մեկը, ով իսկապես Արևելքում իր շուրջն է նայել, կարող է հարյուրապատիկ անգամ բազմապատկել:

Գերմանա-թուրքական ուժերի հարաբերակցությունը

Գերմանական մեղքը հետևյալն է: Արևելքը չեն ճանաչում, այդ իսկ պատճառով արևելցուն վերաբերվում են սխալ: Դրանից Գերմանիայի ու Թուրքիայի միջև գոյանում է բոլորովին այլ ուժային հարաբերություն, քան հակված էր ընդունելու արտասահմանը: Այժմ բոլորի համար ակնհայտ դարձավ, որ Գերմանիան այս պատերազմում երբեք այնքան ուժեղ չեղավ, որքան կարծում էին մյուս կողմում: Գերմանիան միայն բոլոր ուժերի լարումով, այդ թվում՝ դաշնակիցների, նույնիսկ այնպիսի թույլ տերության ուժերը, ինչպիսին Թուրքիան է, ի վիճակի եղավ այդքան երկար դիմակայել այդ հզոր ուժային գերակշռությանը: Գերմանիան միշտ ստիպված է եղել նկատի առնել Թուրքիային, և դա թուրքական դիվանագիտությունն ամենուրեք շահարկել է, հատկապես ֆինանսական ոլորտում: Թուրքական դիվանագիտությունը ամենաճարպիկն է աշխարհում, դա պատմությունն է նրան սովորեցրել: Միայն իրենց դիվանագետների ճկունության շնորհիվ օսմանյան կառավարությանը հաջողվեց կասեցնել արդեն ավելի քան կես դար սպառնացող մասնատումը: Այն, որ նույն գովասանքին չի կարելի արժանացնել գերմանական դիվանագիտությանը, պետք է որ համարվի ընդունված փաստ: Թուրքիան իր ձեռքում ուներ մի միջոց, որով կարող էր միշտ ճնշում գործադրել Գերմանիայի վրա: Պատերազմի սկզբից ի վեր թուրքական ոչ պաշտոնական միջնորդները Լոզանում փորձում էին հարաբերություններ հաստատել Անտանտի հետ: Այդպիսով Գերմանիան պետք է շատ ուշադիր լիներ դաշնակցի հանդեպ, նա չէր կարող աղեղը չափազանց պիրկ ձգել, որպեսզի ամեն ինչ չվտանգի: Կար ժամանակ, դա այնքան էլ հեռու չէր հայերի հանդեպ կիրառվող թուրքական միջոցառումներից, երբ ամեն ինչ փորձեցին, որպեսզի Թուրքիային լայն հասարակայնության առջև ավելի հաստատուն պարտավորեցնեն: Դա արքայազնի այցելության և Կոստանդնուպոլիս կատարված պառլամենտական ուղևորությունների ժամանակ էր, մի շրջան, երբ շքանշանների տեղատարափ էր: Պետք է այդ ամենը նկատի ունենալ գերմանա-թուրքական ուժերի հարաբերակցությունը ճիշտ գնահատելու համար: Գերմանիան ամեն ինչում տվողն էր, բայց նա երբեք չկարողացավ դաշնային հարաբերություններում գերիշխող դիրք ունենալ:

Գերմանական օգնություն Հայաստանի համար

Այնուամենայնիվ հայերի օգտին գերմանական դիվանագիտության քայլեր միշտ եղել են: Մենք հուսով ենք, որ շուտով կբացվեն պետ. փաստաթղթերը, որոնք կվկայեն տեղահանության դեմ գերմանական կառավարության բազմաթիվ նոտաները: Առայժմ դրա մասին տեղյակ են պահվել միայն գերմանական ռայխսթագի գլխավոր հանձնաժողովում,

իսկ հասարակությանը միայն այնքանով է տեղեկացվել, որ գերմանական կառավարությունը հայության պահպանման հարցում ինչ-որ բան արել է: Այն ժամանակ մեր թուրքամետները, համենայնդեպս, դժգոհ էին արտգործնախարարության կեցվածքից: Այնուամենայնիվ, հայերի հանդեպ միշտ բարեհաճություն է եղել: Գերմանա-հայկական միությունն օգտվել է կառավարության աջակցությունից, երբ ջանացել է թեթևացնել թշնամական պետություններից եկած և Գերմանիայում գտնվող հայերի ծանր վիճակը: Տեղահանված հայերի համար չեն թույլատրվել բացահայտ դրամահավաքներ, այնպես որ դա իրականացվել է փոքր չափերով: Իրավունք չկար խոսելու Հայաստանում կատարվող իրադարձությունների մասին, մինչդեռ միայն դա կարող էր տալ մեծածավալ քարոզչության հնարավորություն: Բայց խաղաղ դրամահավաքները արժանացել են պետական ատյանների հավանությանը: Հանձնաժողով ուղարկելու թույլտվությունը, որը պետք է զգալի միջոցներ հասցներ տուժած հայերին, չի տրվել՝ նկատի ունենալով թուրքերի հակակրանքը, բայց այդ նպատակով վարվող բանակցություններում համապատասխան շրջանակները տարագիրների սարսափելի տառապանքները մեղմելու հարցում զգալի մասնակցություն են ունեցել: Համենայնդեպս, գերմանական կառավարության դիրքորոշումը հիմնովին տարբեր էր նրանից, ինչը ժամանակին ունեցել էր համիդյան ջարդերի ժամանակ, երբ արգելված էր կամավոր դրամահավաքը և հայ քարոզիչներին արտաքսում էին, իսկ գերմանական կայսրն այդ իրադարձություններից անմիջապես հետո Կարմիր սուլթանին ուղարկեց իր նկարը: Այն ժամանակ զուտ՝ այսպես կոչված «իրատեսական քաղաքականություն» էր, առանց մարդասիրական զգացմունքների, այս անգամ այն լի էր հումանանիտար մասնակցությամբ, որը՝ նկատի ունենալով պատերազմական վիճակը և տատանվող դաշնակիցներին, չէր կարող իրականացվել պատշաճ ձևով:

Գերմանական քաղաքականության սխալները

Լիովին ընդունելով այն դժվարին իրավիճակը, որում գտնվում էր գերմանական կառավարությունը՝ Հայկական հարցի առումով, այնուամենայնիվ կարելի անել այն հանդիմանությունը, որ այն վրիպել է օգտագործել մի միջոց, որով հավանաբար իրոք կարող էր ազդեցիկ ճնշում գործադրել Թուրքիայի վրա: Այն ամբողջովին հրաժարվեց իր դիրքորոշման աջակցելու համար օգտագործել հասարակական կարծիքը: Դեռ ընդհակառակը, գրաքննչության միջոցառումներով արեց ամեն բան, որպեսզի ուժեղացնի իր հանդեպ Թուրքիայի դիրքը և չեզոք ու թշնամական երկրներում արդարացնի Թուրքիայի բարբարոսություններում Գերմանիայի մասնակցության դատավճիռը: Գերմանական մամուլը մնաց ամբողջովին չկողմնորոշված: Հայկական հարցում տիրում էր ազատ կարծիք արտահայտելու վախկոտ ու խիստ սահմանափակում: Նույնիսկ արգելված էր չնչին տպաքանակով գաղտնի հաղորդագրությունների առաքումը ծրարով, եթե նույնիսկ դրանք պարունակում էին զուտ փաստեր և զերծ էին թուրքական կառավարության վրա որևէ հարձակումից: Սա գրաքննչության մեղքերի դեռ մի փոքր բաժինն է, որը հաստատապես ոչ ավելի քիչ ճակատամարտեր է տանուլ տվել, քան բանակը՝ հաղթանակներ: Բայց մեր հարցում պետք է ուղղակի ապացուցվի, թե դրանով ինչպիսի վնաս է իրեն հասցրել կառավարությունը:

Թուրքական կառավարությունը հայերի դեմ ձեռնարկվող միջոցառումները բացահայտեց աստիճանաբար և երկբայելով: Հունիսի 4-ին, Հայկական հարցի վերաբերյալ առաջին կոմյունիկեում, նա հայտարարում է, որ իրենց միջոցառումները «ոչ մի կերպ չեն ներկայացնում հայերի դեմ ուղղված շարժում»: Միայն հուլիսի 16-ի կոմյունիկեում է այն հայտնում է, որ հաստատված հեղափոխական շարժումների պատճառով «հայերին հեռացրել են սահմանամերձ գոտուց և շրջաններից, որտեղ հաստատված են էտապային ուղիները», որպեսզի նրանց զերծ պահեն ռուսների ազդեցությունից: Դեռ օգոստոսի 27-ին Ժենի թուրքական գլխավոր հյուպատոսը մամուլում հավաստիացնում է, որ «ամբողջ հայ բնակչությունը՝ տղամարդիկ, կանայք և երեխաները, գտնվում են պետական ատյանների հոգածության ներքո»: Միայն երբ ամբողջ գերմանական մամուլը Հայկական հարցում ամբողջովին անցավ Թուրքիայի կողմը, որը թուրքերի փաստարկներն ընդունում էր ոչ միայն չստուգված ու որպես հավաստի, այլ նույնիսկ մի բան էլ ինքն էր ավելացնում, բացահայտորեն սատարելով թուրքական կառավարությանը: Վանի գրավումից հետո «Սիլի» գործակալությունը հայտնում է, «Վանի վիլայեթում բնակվող 180.000 մուսուլմաններից հազիվ 30.000-ն են կարողացել փրկվել: Մնացածը զոհ են դարձել ռուսների ու հայերի հարձակումներին, որոնց ճակատագրի մասին առայսօր հնարավոր չի եղել որևէ բան պարզել»: Գերմանական մամուլը դրանից սարքում է հետևյալը.

«Ինչպես արդեն ապացուցված է, 150.000 մուսուլմաններ զոհ են դարձել հայերին», մինչդեռ իրականում հազիվ թե որևէ մահմեդականի որևէ բան պատահած լինի, և այդ մահմեդականների գերակշիռ մասը կազմում են քրդերը, որոնք ապահով նստած էին իրենց լեռներում: Զարմանալի չէ, որ թուրքերն այդպիսի կողմնապահությունից ավելի են քաջալերվել՝ գերմանական կառավարության նոտաներին պատասխանելով եռանդուն, գրեթե հեգնական հերքումով: Եթե գերմանական կառավարությունը զոնե մի քիչ տեղ թողներ հասարակական կարծիքին, ապա պարզ կդառնար, թե գերմանական ժողովրդի ամենալայն շրջանակներն ինչպիսի նողկանքով են վերաբերվում թուրքական միջոցառումներին, և դա կերևար, եթե մարդիկ կարողանային զոնե ինչ-որ բան իմանալ փաստերի մասին, և նույն Թուրքիան քաղաքակիրթ ամբողջ աշխարհի միահամուռ դատավճռին չէր կարողանա վերաբերվել այն ցինիզմով, ինչպես նա վարվեց Հայկական հարցում:

Քիչ չեն եղել գերմանական կառավարության երկչոտ փորձերն այդ ուղղությամբ: Երկու անգամ ընդհանրապես արգելվել են Հայկական հարցի քննարկումները Բեռլինի մամուլի ասուլիսներում: Բայց ամեն անգամ, դրանից անմիջապես հետո, եկել են թուրքական պաշտոնական հաղորդագրություններ, որոնց տարածելը Վոլֆի բյուրոյի միջոցով համարում եմ իրենց պարտքը: Մինչ մի կողմից առանց այդ հրահանգի էլ ամբողջովին արգելված էին հայամետ հոդվածները, մյուս կողմից մամուլում երբեք չզգացվեց հակահայկական խեղաթյուրված հոդվածների պակասություն, որոնք հերքվել են հայամետ ուժերի բողոքների հիման վրա, բայց առանց այնպիսի լուրջ հետևանքների, որպեսզի բացառեն այդօրինակ նյութերի կրկնությունը:

Քննարկումները հիմա ազատ են: Բայց մենք դրանից այլևս ոչ մի բերկրանք չենք զգում, քանզի կանգնած ենք բեկորների կույտի առջև: Միայն երբ կրկին հնարավոր դառնա անարգել կապը արտասահմանի հետ, գերմանական հասարակությունը անակնկալի կգա, թե որքան ուժգին է Գերմանիան իրեն վնասել գրաքննչության սխալ միջոցառումներով և թե ինչպես է աշխարհը հակադրվել Գերմանիային՝ Հայկական հարցում Գերմանիայի դիրքորոշման վերաբերյալ արտասահմանում ձևավորված ոչ ճիշտ կարծիքի պատճառով:

1919 – 06 – 28 – DE – 002

Սկզբնաղբյուրը՝ PA –AA /R14106

Յոհաննես Լեփսիուսին՝ արտգործնախարարությունից

Բեռլին, 28 հունիսի 1919թ.

Պատճեն

Հարգելի պարոն դոկտոր,

Ձեր «Գերմանիան և Հայաստանը» գիրքը մինչև այժմ դեռ լույս չի տեսել: Ես չգիտեմ, թե դա արդյոք պետք է վերագրել տպագրական դժվարությունների՞ն, թե՞ Ձեր կողմից հարցերի կարգավորմանը: Ես անձամբ ողջունում եմ այդ ձգձգումը և կխնդրեի Ձեզ կշռադատել, թե արդյոք հրատարակումն այժմյան հարաբերություններում չպետք է դեռ ավելի երկար հետաձգել:

Ինչպես գիտեք, Անտանտը «Միասնություն և առաջադիմություն» կոմիտեի անդամների դեմ ընթացող դատում վճռական միջոցներ է ձեռնարկել և մեղադրյալներին տեղափոխում են Մալթա: Հիմա արդեն հստակ է, որ դատավճիռը կկայացնի դաշնակից պետությունների կողմից կազմված դատարանը, որն իհարկե, կկայանա հազիվ մի քանի շաբաթից կամ ամսից: Եթե Ձեր գիրքը լույս տեսնի հիմա, ապա մենք պետք է նկատի ունենանք, որ այն մեր թշնամիները կօգտագործեն դատավարության համար: Հասարակական մեղադրողը, անշուշտ, բաց չի թողնի առիթը՝ իր ռեկվիզիտում օգտագործել գերմանական դեսպանների և հյուպատոսների այս կամ այն թունդ խոսքը: Սա անհաճո միտք է, որ մենք այս կերպ զենք տանք թշնամիներին՝ մեր նախկին բարեկամների դեմ օգտագործելու համար: Արդարության գործին դա չի ծառայի: Առանց այդ էլ բավականաչափ նյութ կա կատարվածը հաստատելու համար: Պարզապես հարց է ծագում, թե արդյո՞ք դա է պահանջում ամբողջ հրատարակման նպատակը, որ այդ գիրքը բոլորի ձեռքերում լինի այն ժամանակ, երբ դատականորեն հաստատվելու է հայերի ջարդի պատասխանատվության հարցը: Ես կարծում եմ, որ այդ հարցը պետք է հերքել: Դաշնակից պետությունների դատարանի խնդիրն է մեղադրյալների մեղքի կամ անմեղության հաստատումը: Չպետք է թույլատրվի այն միտքը, թե առկա է գերմանական կառավարության որևէ մեղսակցություն: Անշուշտ, պետական մեղադրողն ու դատավորը առիթը բաց

չեն թողնի Գերմանիայի, գերմանական դիվանագետների ու սպաների դեմ թշնամական ելույթներ ունենալու համար: Բայց մենք դրան կենթարկվենք նաև այն ժամանակ, երբ գիրքը նրանց հայտնի դառնա: Այս դեպքում, իհարկե, Գերմանիայի դիրքի վերաբերյալ նրանց կողմնակալ քննադատությունը, ինչպես դա բխում է գրքից, մեզ համար վտանգավոր կլինի, քանի որ այն հայտնի կդառնա ամբողջ աշխարհին, մինչդեռ մեր առարկությունը ավել կամ պակաս լռության կմատնվի: Մենք պետք է մեզ ասենք, որ մենք միայն մեկ անգամ հանդես կգանք հասարակության առջև: Դա կլինի Ձեր գրքի լույս տեսնելով: Ես լավ կհամարեի, եթե այդ հրապարակումը լիներ միաժամանակ պատասխանը այն քննադատության, որը դատավարության ժամանակ կլինի Գերմանիայի դիրքի վերաբերյալ:

Մամուլի և քարոզչական ազդեցության հանգամանքների մասին, հարգելի պարոն դոկտոր, Դուք մեծ փորձ ունեք, ինչպես և ես, բայց ես չուզեցա հրաժարվել այս հարցի վերաբերյալ, որն, իհարկե, պետք է Դուք միայնակ որոշեք, իմ տեսակետն արտահայտել:

[Գյոփերտ]

1919 – 08 – 21 – DE – 001

Սկզբնաղբյուրը՝ PA –AA /R14106

Արտգործնախարարությանը՝ Ստոկհոլմում դեսպանորդ Լուցիուս ֆոն Շտյոդրենից

№ 471/ A. Մ. № 1750

Ստոկհոլմ, 21օգոստոսի 1919թ.

Պատերազմի ընթացքում այսպես կոչված հայկական կոտորածների պատճառով Գերմանիայի դեմ ելույթներով հեղեղված է նաև այստեղի մամուլը, հատկապես ձախ լիբերալների և սոցիալիստական թերթերն են զբաղված դրանով: Այդ իսկ պատճառով խորհուրդ կտայի դ-ր Յոհաննես Լեփսիուսի «Գերմանիան և Հայաստանը» գիրքը (Պոտսդամի Tempelverlag), որը փաստաթղթերով պարզաբանում է Գերմանիայի դիրքը այդ հարցում, որոշակի ծավալով տարածել այստեղ՝ լուսաբանման համար և կխնդրեի այդ նպատակով ինձ համար այդ գրքից ուղարկել մոտ 30 օրինակ:

Լուցիուս

[Արտգործնախարարության պատասխանը (№ 231) 08.09]

Լեփսիուսի «Գերմանիան և Հայաստանը» գրքի Ձեր ցանկացած օրինակները շուտով կուղարկվեն (*տիտղոսը*):

Այդ գրքի առնչությամբ Ձերդ գեր. և այլոց կարող եմ ասել հետևյալը:

Հետևյալի իմաստով մինչև այժմ գրվել է դեպի Կոպենհագեն, Բեռն և Հաագա, A № 13677:

Ժողովածուի ստեղծման պատմությունը բխում է նախաբանից: Ըստ դրա՝ փաստաթղթերի ընտրության համար պատասխանատու է միմիայն դ-ր Լեփսիուսը: Ներածությունն էլ բացառապես նրա ստեղծագործությունն է և չի արտահայտում գերմանական կառավարության տեսակետը: Մեր խնդիրը այն է, որ պարզություն մտցնենք թուրքական կառավարության միջոցառումների հանդեպ Գերմանիայի դիրքորոշման մեջ: Այն հարցի վերաբերյալ, թե որ թուրքական ծառայություններն են կրում այդ իրադարձությունների պատասխանատվությունը, թե ինչ դրդապատճառներով են գործել այդ ծառայությունները և թե որքանով են թուրքական ատյանների միջոցառումները պատճառաբանված հայերի ռազմական դավաճանություններով, մենք չպետք է ասենք մեր կարծիքը:

Ցավոք այս գիրքը թշնամական և չեզոք երկրների մամուլում չգտավ սպասված ընդունելությունը: «Թայմս»-ը դրանում տեսնում է Գերմանիայի մեղսակցության հենց փաստագրական ապացույցը և դա օգտագործում է վերին շլեզվիգյան հարցում մեր արդի քաղաքականության դեմ գրգռելու համար: Դանիայում էլ ազդեցությունը թվում է չափազանց աննպաստ: Այս հանգամանքների առկայությամբ՝ մտադրված օգտագործման ժամանակ, պետք է ցուցաբերել զգուշավորություն:

Նաև պետք է նշեմ, որ Լեփսիուսը նախապատրաստում է գրքի նաև ֆրանսերեն և անգլերեն հրատարակությունը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Փաստաթղթերի վերևում նշված է տարին, ամիսը, օրը, իսկ վերջին եռանիշ թիվը տվյալ օրվա ընթացքում ստացված փաստաթղթերի հերթական համարն է (օր. 1914-01-15-DE-001) DE-երկիրն է (Deutschland-Գերմանիա)

PA-AA-արտգործնախարարության քաղաքական արխիվ

R և հնգանիշ թիվը նշանակել է Թուրքիայում Հայկական հարցերին վերաբերող փաստաթղթեր (ժամանակին եղել է «Թուրքիա 183»)

Անունները և տեղանունները պահպանված են ինչպես բնագրում, Վ.Գուստը ուղղել է միայն ուղղագրական և քերականական սխալները: Ուստի հանդիպում են նույն տեղանվան և անվան տարբեր գրություններ:

Գ և Հ, Յոն. Լեփսիուսի 1919թ. հրատարակած «Գերմանիան և Հայաստանը» գիրքը, ապա նրա գրքի փաստաթղթի համարն է և նշումը, եթե տվյալ փաստաթուղթը կրճատված կամ խմբագրված է եղել: Ի դեպ՝ ինտերնետում տրվում են կարևորագույն այն փաստաթղթերը, որոնք փոփոխված են եղել և նշվում է, թե որ հատվածները:

Ներքևի ստորագրությունները՝ փակագծերով կամ առանց փակագծի, ունեն իրենց նշանակությունը (օր. առանց փակագծերի դա անձամբ ստորագրությունն է, փակագծերով՝ փոխարինող անձը և այլն):

բեդել - հարկ՝ զինվորական ծառայությունից ազատվելու համար
cessat - պատրաստված, բայց չուղարկված փաստաթուղթ
դրագոման - դեսպանության կամ հյուպատոսության աշխատակից՝ արևելյան լեզուների իմացությամբ
դրան - կշռի չափ, մոտ երեք գրամ
դյոնմե - իսլամ ընդունած այլադավաններ, մասնավորապես՝ Սալոնիկի հրեաները
զափթիե - ոստիկան, հաճախ ժանդարմի հոմանիշը
թեզքերե (թեզքերե նուֆուս) - ուղևորության թույլտվություն
իմամ - մուսուլմանների հոգևոր առաջնորդը
Ltg - թուրքական ֆունտ կամ լիրա - (100 ղուրուշին համարժեք)
կազա - տարածքային միավոր, սանջակի մի շրջանը
կայմակամ - կազայի ղեկավարը (ղեկավարած տարածքը՝ կայմակամլիկ)
ղզլբաշ - թուրք շիիթների անվանումը (բացասական իմ.)
ղուրուշ - թուրքական լիրայի 1/100 մասը
մեդրեսե - իսլամական բարձրագույն դպրոց
մեջիդիե - նախկինում թուրքական ոսկեդրամ (6.61գ զուտ ոսկի), հետո սովորական արծաթադրամ մոտ՝ 20 պիաստր (20 ղուրուշ)
մուհաջիր - մահմեդական վտարանդի
մուրախազա - եպիսկոպոս
մուֆտի - բարձրագույն հոգևոր անձ
վիլայեթ - նահանգ
վալի - նահանգապետ
սանջակ (լիվա) - վիլայեթից հետո երկրորդ մեծ տարածքային միավորը
մութասարիֆ - սանջակի կամ լիվայի ղեկավարը, նրա ղեկավարած տարածքը՝ մութասարիֆլիկ
չաուշ - ենթասպա, սերժանտ
չեթե - կամավորականների հրոսակախմբեր՝ կազմավորված հայերին կոտորելու համար
պիաստր - օսմանյան արծաթադրամ, (1 պիաստրը՝ մոտ 9 պֆենիգ)
ռայա - ոչ մուսուլման հարկատու հպատակներ (նաև քուրդ գյուղացիներ)
ռեդիֆ - պահեստային զորամաս
վաթան - հայրենիք
վեզիկա - բնակության թույլտվություն
վեզիր - նախարարական տիտղոս մուսալմանական մի շարք երկրներում
փարա - մանրադրամ (պիաստրի կամ ղուրուշի 1/40 մասը)
օքքա - կշռի չափ, մոտ 1.34 կգ

ՎՈԼՖԳԱՆԳ ԳՈՒՍՏ

ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1915-1916

(Գերմանիայի արտաքին գործերի նախարարության քաղաքական
արխիվի փաստաթղթերից)

ВОЛЬФГАНГ ГУСТ

ГЕНОЦИД АРМЯН 1915-1916

(Документы из политического архива
министерства иностранных дел Германии)

На армянском языке
Ереван, “Гракан айреник” (“Айастан”) 2005

Թարգմանիչ՝ Ռ. Յորդանյան
Խմբագիր՝ Ա. Գրիգորյան
Սրբագրիչ՝ Ռ. Մարգարյան
Համակարգչային շարվածքը՝ Գ. Մանուկյանի
Տեխ. խմբագիր՝ Ա. Սահակյան
Կազմի ձևավորումը՝ Երանուհի Վանոյանի

Տպագրությունը՝ «Եգեա»
հրատարակչատան

Ստորագրված է տպագրության՝ 28.10.2005թ.
Ծավալը՝ 30.5 տպ. մամուլ: Չափսը՝ 60x84 1/16:
Տպաքանակը՝ 1000:
Գինը՝ պայմանագրային:

«Հայաստան» հրատարակչություն. Երևան 9, Իսահակյան